1356

22 1857
Q-76

2011

Printed in Turkey

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

22 ա.
Կ-76
Printed in Turkey

ԱՒԵՏԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի ՎԻԵՆՆԱ

Ի ՎԱՆՍ ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1857

15009-78

30301-Կ.2

Պետ. Հանրային Գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀԱՅ. ССР
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվ.

N17

420
39

13009-58

ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մատթէոսի գրեալ է. զի ինքն Մատթէոս աշակերտ Տեառն գրեաց զաւետարանս զայս: Եւ պատմէ մեզ ի սկզբանն զբան մարմնոյ ծնունդ փրկչին ի զաւակէ Դաւթի. վասն որոյ եւ զազգահամարն ժողովէ մինչեւ ի Քրիստոս ազգս քառասուն եւ երկու: Բերէ ըստ կարգի եւ զմկրտութիւնն Յովհաննու, եւ ի լերինն ի դիւաց զփորձութիւն, եւ նշանս եւ արուեստս մեծամեծս ի փրկչէն եղեալ, եւ զընտրութիւն աշակերտացն, եւ վասն խորհրդոյ մատնութեան. եւ զխաչափայտն, զի մատնեցաւ Պիղատոսի, եւ խաչեցաւ մարմնով. եւ մարմինն եդաւ ի գերեզմանի, եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. նոյն եւ զերրորդ աւուր յարութիւն, եւ զպատուէր աշակերտացն՝ աշակերտել զամենայն հեթանոսս եւ մկրտել զնոսա. պատուիրեաց լինել ընդ նոսա զամենայն աւուրս մինչեւ ի կատարած աշխարհի:

Մատթէոս գրեաց զաւետարանս իւր յԵրուսաղէմ քաղաքի ի լեզու Եբրայեցի զկնի ութ ամի համբառնալոյ փրկչին, ի խնդրոյ եկեղեցւոյն Երուսաղէմի:

Մատթէոս Թարգմանի՝ Երգ կենաց:

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

	Գլ.	Հմր.
Վասն մոգուցն	Բ.	1
Վասն կոտորածի մանկանց	Բ.	16
Վասն յառաջընթաց քարոզութեան Յովհաննու մկրտչին	Գ.	1
Վասն վարդապետութեան փրկչին . . .	Դ.	23
Վասն երանութեանց	Ե.	2
Վասն բորոտին	Ը.	1
Վասն հարիւրապետին	Ը.	5
Վասն զոքանչին Պետրոսի	Ը.	14
Վասն բժշկութեան ամենայն ցաւոց . . .	Ը.	16
Վասն որ ոչ ետ հրաման երթալ զկնի . .	Ը.	19
Վասն սաստելոյն ի վերայ ջուրցն . . .	Ը.	23
Վասն դիւահարացն	Ը.	28
Վասն անդամալուծին	Թ.	1
Վասն Մատթէի	Թ.	9
Վասն դստեր ժողովրդապետին	Թ.	18
Վասն տեղատուին	Թ.	20
Վասն երկուց կուրացն	Թ.	27
Վասն խուլ եւ համր դիւահարին . . .	Թ.	32
Վասն առաքելոցն ընտրութեան. . . .	Ժ.	1
Վասն առաքելոյն Յովհաննու զաշակերտսն .	ԺԱ.	2
Վասն որոյ ձեռն գօսացեալ էր	ԺԲ.	10
Վասն կոյր եւ համր դիւահարին	ԺԲ.	22
Վասն որ խնդրէին նշանս	ԺԲ.	38
Վասն առակացն	ԺԳ.	1
Վասն Յովհաննու, եւ Հերովդի . . .	ԺԴ.	1
Վասն հինգ հացիցն	ԺԴ.	15
Վասն երթալոյն ի վերայ ծովուն	ԺԴ.	22
Վասն անցանելոյն զպատուիրանաւն Աստուծոյ	ԺԵ.	1

Վասն կնոջն Քանանացւոյ	ԺԵ.	21
Վասն բժշկելոյ զժողովուրդն	ԺԵ.	29
Վասն եօթն հացիցն	ԺԵ.	32
Վասն խմորոյ փարիսեցւոցն	ԺԶ.	6
Վասն որ ի Կեսարիա հարցմանն	ԺԶ.	13
Վասն այլակերպութեան Տեառն	ԺԷ.	1
Վասն լուսնահարին	ԺԷ.	14
Վասն խնդրելոյն զերկդրամեանն	ԺԷ.	23
Վասն հարցանելոյն՝ թէ ո՛ է ի մէնջ մեծ	ԺԸ.	1
Վասն առակին հարիւր ոչխարին	ԺԸ.	12
Վասն թողլոյ զբիւր տաղանդն	ԺԸ.	23
Վասն հարցմանն արձակելոյ զկինն	ԺԹ.	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս	ԺԹ.	16
Վասն վարձկանութեան մշակացն	Ի.	1
Վասն որդւոյն Զեբեդեայ	Ի.	20
Վասն երկուց կուրացն	Ի.	29
Վասն իշոյն եւ յաւանակին	ԻԱ.	1
Վասն կուրացն եւ կաղացն	ԻԱ.	14
Վասն չորանալոյ թզենւոյն	ԻԱ.	18
Վասն հարցանելոյ զՏէրն քահանայապետացն եւ ծերոց	ԻԱ.	23
Վասն երկուց որդւոյն առակաց	ԻԱ.	28
Վասն այգւոյն առակին	ԻԱ.	33
Վասն կոչեցելոցն ի հարսանիսն	ԻԲ.	1
Վասն դահեկանին որով փորձեցին զՏէրն	ԻԲ.	15
Վասն սադուկեցւոցն	ԻԲ.	23
Վասն օրինականացն	ԻԲ.	34
Վասն Տեառն հարցանելոյն զփարիսեցիսն	ԻԲ.	41
Վասն վայ տալոյ դպրացն եւ փարիսեցւոցն	ԻԳ.	13
Վասն կատարածի	ԻԴ.	3
Վասն աւուրն եւ ժամուն	ԻԴ.	36
Վասն տասն կուսանացն	ԻԵ.	1
Վասն զտաղանդան տալոյ	ԻԵ.	14
Վասն գալստեանն Տեառն	ԻԵ.	31

Վասն օծելոյն զՏէրն իւղով . . . . . ԻԶ. 1
Վասն պատարագելոյ զպասեքն . . . . ԻԶ. 17
Վասն օրհնաւոր խորհրդոյն . . . . . ԻԶ. 26
Վասն մատնութեան Տեառն. . . . . ԻԶ. 41
Վասն ուրացութեանն Պետրոսի . . . . ԻԶ. 69
Վասն Յուդայի զղջմանն . . . . . ԻԷ. 3
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն . . ԻԷ. 57
Վասն իւղաբեր կանանցն . . . . . ԻԸ. 1

ՊԵՏ. Հ.Ն. ԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публ. Библ..отека
им. А Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ausführung u. Stich d. Mans' Kunst-Verlag.

Ս· ԱՒԵՏԱՐԱՆԻՉՔ

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԳԻՐՔ ծննդեան Յիսուսի Քրիստոսի որդւոյ
2 Դաւթի որդւոյ Աբրահամու։ Աբրահամ ծնաւ զԻ-
սահակ. Իսահակ ծնաւ զՅակոբ. Յակոբ ծնաւ
3 զՅուդա, եւ զեղբարս նորա։ Յուդա ծնաւ զՓարէս
եւ զԶարա ի Թամարայ. Փարէս ծնաւ զԵզրոմ.
4 Եզրոմ ծնաւ զԱրամ։ Արամ ծնաւ զԱմինադաբ.
Ամինադաբ ծնաւ զՆաասոն, Նաասոն ծնաւ զՍաղ-
5 մոն։ Սաղմոն ծնաւ զԲոոս ի Ռեքաբայ. Բոոս
ծնաւ զՈվբէթ ի Ռութայ. Ովբէթ ծնաւ զՅեսսէ.
6 Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքայ։ Դաւիթ ծնաւ զՍո-
7 ղոմոն ի կնոջէն Ուրիայ։ Սողոմոն ծնաւ զՌոբովամ.
8 Ռոբովամ ծնաւ զԱբիա. Աբիա ծնաւ զԱսափ։ Ասափ
ծնաւ զՅովսափատ. Յովսափատ ծնաւ զՅովրամ.
9 Յովրամ ծնաւ զՈզիա։ Ոզիա ծնաւ զՅովաթամ.
Յովաթամ ծնաւ զԱքազ. Աքազ ծնաւ զԵզեկիա։
10 Եզեկիա ծնաւ զՄանասէ. Մանասէ ծնաւ զԱմոն.
11 Ամոն ծնաւ զՅովսիա։ Յովսիա ծնաւ զՅեքոնիա,
եւ զեղբարս նորա առ գերութեամբն Բաբելացւոց։
12 Յետ գերութեանն Բաբելացւոց Յեքոնիա ծնաւ զՍա-
13 ղաթիէլ. Սաղաթիէլ ծնաւ զԶօրաբաբէլ։ Զօրա-
բաբէլ ծնաւ զԱբիուդ. Աբիուդ ծնաւ զԵղիակիմ.
14 Եղիակիմ ծնաւ զԱզովր։ Ազովր ծնաւ զՍադովկ.
15 Սադովկ ծնաւ զԱքին. Աքին ծնաւ զԵղիուդ։ Եղիուդ

ծնաւ զԵղիազար. Եղիազար ծնաւ զՄատթան. Մատ-
թան ծնաւ զՅակոբ: Յակոբ ծնաւ զՅովսէփ զայրն 16
Մարիամու՝ որում խօսեցեալ զՄարիամ կոյս. յորմէ
ծնաւն Յիսուս, որ անուանեցաւն Քրիստոս: Արդ՝ 17
ամենայն ազգք յԱբրահամէ մինչեւ ի Դաւիթ՝ ազգք
չորեքտասանք. եւ ի Դաւթէ մինչեւ ի գերութիւնն
Բաբելացւոց ազգք չորեքտասանք. եւ ի գերութենէն
Բաբելացւոց մինչեւ ի Քրիստոս՝ ազգք չորեքտասանք:
Եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր այսպէս: Խօ- 18
սեցեալ զմայրն նորա Մարիամ Յովսեփու, մինչ չեւ ե-
կեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն սրբոյ: Եւ 19
Յովսէփ այրն նորա, քանզի արդար էր՝ եւ ոչ կամէր
առակել զնա, խորհեցաւ լռելեայն արձակել զնա:
Եւ մինչ դեռ նա զայս ածէր զմտաւ, ահա հրեշտակ 20
Տեառն ի տեսլեան երեւեցաւ նմա՝ եւ ասէ. Յովսէփ
որդի Դաւթի՝ մի երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ
կին քո. քանզի որ ի նմայն ծնեալ է՝ ի Հոգւոյն սր-
բոյ է: Ծնցի որդի, եւ կոչեսցես զանուն նորա Յիսուս. 21
զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց:
Այլ այս ամենայն եղեւ, զի լցցի որ ասացաւն ի Տեառնէ 22
ի ձեռն Եսայեայ մարգարէի: Ահա կոյս յղասցի՝ եւ 23
ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ
թարգմանի՝ ընդ մեզ Աստուած: Եւ զարթուցեալ 24
Յովսէփ ի քնոյ անտի, արար որպէս հրամայեաց նմա
հրեշտակն Տեառն, եւ առ զկին իւր: Եւ ոչ 25
գիտէր զնա, մինչեւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ, եւ
կոչեաց զանուն նորա Յիսուս:

ԳԼՈՒԽ Բ.

Եւ ի ծնանելն Յիսուսի ի Բեթղեհէմ Հրէաս- 1
տանի յաւուրս Հերովդի արքայի, ահա մոգք յարեւե-
լից եկին յԵրուսաղէմ, Եւ ասեն. ո՞ւր է որ ծնաւ ար- 2
քայն Հրէից. զի տեսաք զաստղն նորա յարեւելս, եւ
եկաք երկիր պագանել նմա: Եւ իբրեւ լուաւ արքայ 3

Հերովդէս՝ խռովեցաւ, եւ ամենայն Երուսաղէմ ընդ
4 նմա: Եւ ժողովեալ զամենայն զքահանայապետսն
եւ զդպիրս ժողովրդեանն, հարցանէր ի նոցանէ՝ թէ
5 ուր ծնանիցի Քրիստոսն: Եւ նոքա ասեն ցնա. ի
Բեթղեհէմ Հրէաստանի. զի այսպէս գրեալ է ի ձեռն
6 մարգարէին. Եւ դու Բեթղեհէմ երկիր Յուդայ՝ ոչինչ
կրսեր ես յիշխանս Յուդայ. ի քէն ելցէ ինձ իշխան,
7 որ հովուեսցէ զժողովուրդ իմ զԻսրայէլ: Յայնժամ
Հերովդէս գաղտ կոչեաց զմոգսն, եւ ստուգեաց ի
8 նոցանէ զժամանակ աստեղն երեւելոյ: Եւ արձակեալ
զնոսա ի Բեթղեհէմ, ասէ. Գնացէք ստուգեցէք
վասն մանկանն. եւ յորժամ գտանիցէք՝ ազդ արաս-
ջիք ինձ, զի եւ ես եկեալ երկիր պագից նմա:
9 Եւ նոքա իբրեւ լուան ի թագաւորէն՝ գնացին. եւ
ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդէր նոցա,
10 մինչեւ եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն: Իբրեւ
տեսին զաստղն, խնդացին յոյժ ուրախութիւն մեծ:
11 Եւ իբրեւ մտին ի տուն, տեսին զմանուկն հանդերձ
Մարիամու մարբն իւրով, եւ անկեալ երկիր պագանէին
նմա. եւ բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա
12 պատարագս՝ ոսկի եւ կնդրուկ եւ զմուռս: Եւ հրա-
ման առեալ ի տեսլեան չդառնալ անդրէն առ Հերով-
դէս, ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւ-
13 րեանց: Եւ իբրեւ գնացին նոքա անտի, ահա հրեշտակ
Տեառն երեւէր ի տեսլեան Յովսեփու, եւ ասէր. արի
առ զմանուկդ եւ զմայր իւր՝ եւ փախիր յԵգիպտոս, եւ
անդ լինիջիր՝ ցորժամ ասացից քեզ. քանզի ի խնդիր
14 է Հերովդէս կորուսանել զմանուկդ: Եւ նա յարու-
ցեալ առ զմանուկն եւ զմայր իւր գիշերի՝ եւ գնաց
յԵգիպտոս, եւ անդ էր մինչեւ ցվախճան Հերովդի:
15 Զի լցցի ասացեալն ի Տեառնէ ի ձեռն մարգարէին որ
16 ասէ. յԵգիպտոսէ կոչեցի զորդի իմ: Յայնժամ
իբրեւ ետես Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց անտի,
բարկացաւ յոյժ. եւ առաքեաց կոտորեաց զամենայն

մանկունսն որ էին ի Բեթղեհէմ եւ յամենայն սահ-
մանս նորա՝ յերկեմենից եւ ի խոնարհ, ըստ ժամա-
նակին զոր ստուգեաց ի մոգուցն: Յայնժամ կատա- 17
րեցաւ ասացեալն ի ձեռն Երեմիայի մարգարէին որ
ասէ. Ձայն գուժեաց ի Ռամայ, ողբումն եւ լալումն 18
եւ աշխարումն յոյժ. Ռաքէլ լայր զորդիս իւր, եւ ոչ
կամէր մխիթարել՝ զի ոչ էին: Եւ ի վախճանել Հերով- 19
դի, ահա հրեշտակ Տեառն ի տեսլեան երեւէր Յովսեփայ
յԵգիպտոս, Եւ ասէր. արի առ զմանուկդ եւ զմայր իւր, 20
եւ գնա յերկիրն Իսրայէլի. զի մեռան որ խնդրէին զանձն
մանկանդ: Եւ նա յարուցեալ առ զմանուկն եւ զմայր 21
նորա, եւ եկն յերկիրն Իսրայէլի: Եւ իբրեւ լուա- 22
եթէ Արքեղայոս թագաւորեաց Հրէաստանի փոխա-
նակ Հերովդի հօրն իւրոյ, երկեաւ երթալ անդր.
եւ հրաման առեալ ի տեսլեան, գնաց ի կողմանս
Գալիլեացւոց: Եւ եկեալ բնակեցաւ ի քաղաքին՝ որ 23
կոչէր Նազարէթ. զի լցցի բան մարգարէին, թէ Նա-
զովրեցի կոչեսցի:

ԳԼՈՒԽ Գ.

Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս մկրտիչ 1
քարոզել յանապատին Հրէաստանի, եւ ասել. Ապաշ- 2
խարեցէք՝ զի մերձեալ է արքայութիւն երկնից. Զի սա 3
է՝ վասն որոյ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգարէի, որ
ասէ. Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք
զճանապարհ Տեառն, եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա:
Եւ ինքն Յովհաննէս ունէր հանդերձ ի ստեւոյ ուղտու, 4
եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. եւ կերակուր նորա
էր մարախ եւ մեղր վայրենի: Յայնժամ ելանէին առ 5
նա ամենայն Երուսաղէմացիք՝ եւ ամենայն Հրէաստան՝
եւ ամենայն կողմն Յորդանանու, Եւ մկրտէին ի նմանէ 6
ի Յորդանան գետ, եւ խոստովան լինէին զմեղս իւ-
րեանց: Եւ տեսեալ զբազումս ի Սադուկեցւոցն եւ ի 7
Փարիսեցւոցն եկեալս ի մկրտութիւն նորա, ասէ

ցնոսա. Ծնունդք իժից՝ ո՞ ցոյց ձեզ փախչել ի բարկու-
8 թենէն որ գալոցն է: Արարէք այսուհետեւ պտուղ
9 արժանի ապաշխարութեան: Եւ մի համարիցիք ասել
յանձինս՝ թէ ունիմք մեք հայր զԱբրահամ. ասեմ
ձեզ, զի կարող է Աստուած ի քարանցս յայսցանէ
10 յարուցանել որդիս Աբրահամու: Զի ահաւասիկ
տապար առ արմին ծառոց դնի. ամենայն ծառ որ ոչ
առնիցէ զպտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի:
11 Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն. բայց որ
զկնի իմ գայ՝ հզօրագոյն է քան զիս, եւ ես չեմ
բաւական բառնալ զկօշիկս նորա. նա մկրտեսցէ զձեզ
12 ի Հոգին սուրբ՝ եւ ի հուր: Որոյ հեծանոցն ի ձեռին
իւրում. եւ սրբեսցէ զկալ իւր, եւ զյարդն այրեսցէ
13 անշէջ հրով: Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի
14 Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ: Եւ
Յովհաննէս արգելու զնա՝ եւ ասէ. ինձ պիտոյ է ի քէն
15 մկրտել՝ եւ դու առ ի՞ս գաս: Պատասխանի ետ Յիսուս՝
եւ ասէ ցնա. Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ
լնուլ զամենայն արդարութիւն. եւ ապա թոյլ ետ
16 նմա: Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի
ջրոյ անտի. եւ ահա բացան նմա երկինք. եւ ետես
զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի, եւ
17 գայր ի վերայ նորա: Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր.
դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ:

ԳԼՈՒԽ Դ.

1 Յայնժամ վարեցաւ Յիսուս յանապատ ի Հոգ-
2 ւոյն՝ փորձել ի սատանայէ: Եւ պահեալ զքառասուն
3 տիւ եւ զքառասուն գիշեր՝ ապա քաղցեաւ: Եւ
մատուցեալ փորձիչն՝ ասէ ցնա. եթէ որդի ես Աստուծոյ՝
4 ասա զի քարինքս այսոքիկ հաց լինիցին: Նա պատաս-
խանի ետ եւ ասէ. գրեալ է՝ եթէ ոչ հացիւ միայն
կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ որ ելանէ ի բերանոյ
5 Աստուծոյ: Յայնժամ առեալ ածէ զնա սատանայ ի

քաղաքն սուրբ, եւ կացուցանէ զնա ի վերայ աշտա-
րակի տաճարին, Եւ ասէ ցնա. եթէ որդի ես Աստու- 6
ծոյ՝ արկ զքեզ աստի ի վայր. զի գրեալ է թէ՝ հրեշ-
տակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, եւ ի վերայ
ձեռաց բարձցեն զքեզ՝ զի մի երբեք հարցես զքարի
զոտն քո: Ասէ ցնա դարձեալ Յիսուս. գրեալ է՝ թէ ոչ 7
փորձեսցես զՏէր Աստուած քո: Դարձեալ առնու ածէ 8
զնա սատանայ ի լեառն մի բարձր յոյժ, եւ ցուցանէ նմա
զամենայն թագաւորութիւնս աշխարհի, եւ զփառս
նոցա. Եւ ասէ ցնա. զայս ամենայն քեզ տաց՝ եթէ 9
անկեալ երկիր պագանիցես ինձ: Յայնժամ ասէ ցնա 10
Յիսուս. երթ յետս իմ սատանայ. զի գրեալ է՝
Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, եւ զնա
միայն պաշտեսցես: Ապա եթող զնա սատանայ. եւ 15
ահա հրեշտակք մատեան՝ եւ պաշտէին զնա:

ԲԲ· Եւ իբրեւ լուաւ Յիսուս եթէ Յովհաննէս 12
մատնեցաւ, մեկնեցաւ գնաց ի Գալիլեա. Եւ թողեալ 13
զՆազարէթ, եկն բնակեցաւ ի Կափառնաում ի ծո-
վեզերին, ի սահմանս Զաբուղոնի եւ Նեփթաղիմայ.
Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայեայ մարգա- 14
րէի: Երկիր Զաբուղոնի եւ երկիր Նեփթաղիմայ՝ 15
ճանապարհ ծովու՝ յայնկոյս Յորդանանու, Գալիլեա
հեթանոսաց: Ժողովուրդ որ նստէր ի խաւարի՝ ետես 16
լոյս մեծ. եւ որոց նստէին յաշխարհին եւ ի ստուերս
մահու՝ լոյս ծագեաց նոցա: Յայնմ հետէ սկսաւ 17
քարոզել Յիսուս՝ եւ ասել. ապաշխարեցէք զի մեր-
ձեալ է արքայութիւն երկնից: Մինչ դեռ գնայր Յի- 18
սուս ընդ եզր ծովուն Գալիլեացւոց, ետես երկուս
եղբարս, զՍիմոն զկոչեցեալն Պետրոս, եւ զԱնդրէաս
եղբայր նորա՝ արկեալ ուռկանս ի ծով. քանզի ձկնորսք
էին: Եւ ասէ ցնոսա. եկայք զկնի իմ, եւ արարից 19
զձեզ որսորդս մարդկան: Եւ նոցա թողեալ վաղվա- 20
ղակի զգործիսն՝ գնացին զհետ նորա: Եւ մատուցեալ 21
անտի յառաջ՝ ետես այլ երկուս եղբարս, զՅակովբոս

Զեբեդեայ եւ զՅովհաննէս զեղբայր նորա ի նաւի՝
Զեբեդեաւ հանդերձ հայրն իւրեանց, մինչ դեռ կազ-
22 մէին զուռկանս իւրեանց, եւ կոչեաց զնոսա: Նոքա
թողեալ վաղվաղակի զնաւն եւ զհայրն իւրեանց,
23 գնացին զհետ նորա: Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն
կողմն Գալիլեացւոց. ուսուցանէր ի ժողովուրդսն նոցա՝
եւ քարոզէր զաւետարանն արքայութեան, եւ բժշկէր
զամենայն հիւանդութիւնս՝ եւ զամենայն ախտս ի ժո-
24 ղովրդեանն: Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն
Ասորւոց, եւ մատուցին առ նա զամենայն հիւանդս՝
որ նեղեալ էին ի պէսպէս ցաւս եւ ի տանջանս, եւ
զդիւահարս եւ զլուսնոտս եւ զանդամալոյծս. եւ
25 բժշկեաց զնոսա: Եւ երթային զհետ նորա ժողո-
վուրդք բազումք ի Գալիլեէ եւ ի Դեկապոլեայ եւ
յԵրուսաղեմէ եւ ի Հրէաստանէ, եւ յայնկոյս Յոր-
դանանու, եւ բժշկեաց զնոսա:

ԳԼՈՒԽ Ե.

1 ԲԳ. Եւ տեսեալ զժողովուրդսն՝ ել ի լեառն.
եւ իբրեւ նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն
2 նորա. Եւ բացեալ զբերան իւր ուսուցանէր զնոսա,
3 եւ ասէր: Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է ար-
4 քայութիւն երկնից: Երանի սգաւորաց, զի նոքա մխի-
5 թարեսցին: Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն
6 զերկիր: Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդա-
7 րութեան, զի նոքա յագեսցին: Երանի ողորմածաց, զի
8 նոքա ողորմութիւն գտցեն: Երանի այնոցիկ՝ որ սուրբ
9 են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Երանի
խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին:
10 Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան,
11 զի նոցա է արքայութիւն երկնից: Երանի է ձեզ՝ յոր-
ժամ նախատեսցեն զձեզ եւ հալածեսցեն, եւ ասիցեն
12 զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ: Ցնծացէք
եւ ուրախ լերուք, զի վարձք ձեր բազում են յեր-

կինս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յա-
ռաջ քան զձեզ էին: Դուք էք աղ երկրի. ապա 13
թէ աղն անհամի՝ ի՞ւ յաղեսցի. ոչ իմիք ազդիցէ այնու-
հետեւ, բայց եթէ ընկենուլ արտաքս՝ եւ կոխան
լինել ի մարդկանէ: Դուք էք լոյս աշխարհի. ոչ կարէ 14
քաղաք թաքչել՝ որ ի վերայ լերին կայցէ: Եւ ոչ լու- 15
ցանեն ճրագ՝ եւ դնեն ընդ գրուանաւ, այլ ի վերայ
աշտանակի. եւ լոյս տայ ամենեցուն՝ որ ի տանն իցեն:
Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, 16
որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, եւ փառաւորես-
ցեն զհայր ձեր որ յերկինս է:

ԲԹ. Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս 17
կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել՝ այլ լնուլ: Ամէն 18
ասեմ ձեզ՝ մինչեւ անցցեն երկինք եւ երկիր, յովտ
մի՝ որ նշանախեց մի է, ոչ անցցէ յօրինացն եւ ի
մարգարէից՝ մինչեւ ամենայն եղիցի: Որ ոք լուծցէ մի 19
ինչ ի պատուիրանացս յայսցանէ ի փոքունց, եւ
ուսուսցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայու-
թեան երկնից. իսկ որ արասցէ՝ եւ ուսուսցէ, նա մեծ
կոչեսցի յարքայութեան երկնից: Բայց ասեմ ձեզ. զի 20
եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր աւելի քան
զդպրացն եւ զփարիսեցւոցն, ոչ մտանիցէք յարքայ-
ութիւն երկնից: Լուարուք զի ասացաւ առաջնոցն, 21
թէ մի սպանաներ. զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի
դատաստանի: Այլ ես ասեմ ձեզ. թէ ամենայն որ 22
բարկանայ եղբօր իւրում տարապարտուց, պարտաւոր
լիցի դատաստանի. եւ որ ասիցէ ցեղբայր իւր յիմար,
պարտաւոր լիցի ատենի. եւ որ ասիցէ ցեղբայր իւր
մորոս, պարտաւոր լիցի ի գեհեն հրոյն: Եթէ մատու- 23
ցանիցես զպատարագ քո ի վերայ սեղանոյ, եւ անդ
յիշեսցես՝ եթէ եղբայր քո ունի ինչ խէթ զքէն, Թող 24
զպատարագն քո առաջի սեղանոյն. երթ նախ հաշ-
տեաց ընդ եղբօր քում, եւ ապա եկեալ մատուսջիր
զպատարագն քո: Եր իրաւախոհ ընդ ոսոխի քում 25

վաղագոյն, մինչդեռ իցես ընդ նմա ի ճանապարհի.
գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի, եւ դատա-
26 ւորն դահճի. եւ արկանիցիս ի բանտ: Ամէն ասեմ
քեզ. ոչ ելանիցես անտի, մինչեւ հատուցանիցես զյե-
27 տին նաքարակիտն: Լուարուք զի ասացաւ, մի շնար:
28 Բայց ես ասեմ ձեզ. թէ ամենայն որ հայի ի կին
մարդ առ ի ցանկանալոյ նմա, անդէն շնացաւ ընդ նմա
29 ի սրտի իւրում: Եթէ ակն քո աջ գայթակղեցու-
ցանէ զքեզ, խլեա զնա՝ եւ ընկեա ի քէն. զի լաւ
է քեզ եթէ մի յանդամոց քոց կորիցէ, եւ մի ամե-
30 նայն մարմինդ քո անկանիցի ի գեհեն: Եւ եթէ աջ
ձեռն քո գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ եւ
ընկեա ի քէն. զի լաւ է քեզ եթէ մի յանդամոց քոց
կորիցէ, եւ մի ամենայն մարմինդ քո անկանիցի ի
31 գեհեն: Ապաքէն ասացաւ, թէ որ արձակիցէ զկին
32 իւր՝ տացէ նմա զարձակմանն: Բայց ես ասեմ ձեզ,
եթէ ամենայն որ արձակէ զկին իւր առանց բանի
պոռնկութեան՝ նա տայ նմա շնալ. եւ որ զարձակեալն
33 առնէ՝ շնայ: Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջ-
նոցն. մի երդնուցուս սուտ, բայց հատուսցես Տեառն
34 զերդմունս քո: Այլ ես ասեմ ձեզ՝ ամենեւին մի
35 երդնուլ. մի յերկինս՝ զի աթոռ է Աստուծոյ, Եւ մի
յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա, եւ մի յԵ-
36 րուսաղէմ՝ զի քաղաք է մեծի արքայի. Եւ մի ի գլուխ
քո երդնուցուս, զի ոչ կարես մազ մի սպիտակ առ-
37 նել՝ կամ թուխ: Այլ եղիցի ձեր բան, այոն՝ այո, եւ
38 ոչն՝ ոչ. զի աւելին քան զայն ի չարէն է: Լուարուք
զի ասացաւ. ակն ընդական, եւ ատամն ընդ ատաման:
39 Այլ ես ասեմ ձեզ. մի կալ հակառակ չարին. այլ
եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո նմա
40 եւ զմիւսն: Եւ որ կամիցի ոք դատել եւ առնուլ
41 զշապիկս քո, թող ի նա եւ զբաճկոն քո: Եւ որ
տարապահակ վարիցէ զքեզ մղոն մի, երթ ընդ նմա
42 եւ երկուս: Որում խնդրէ ի քէն՝ տուր. եւ որ կամի

փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցանիցես զերեսս: Լուա- 43
րուք զի ասացաւ. սիրեսցես զընկեր քո, եւ
ատեսցես զթշնամին քո: Այլ ես ասեմ ձեզ. սիրե- 44
ցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց.
եւ աղօթս արարէք ի վերայ այնոցիկ՝ որ լլկեն
զձեզ եւ հալածեն. Զի եղիջիք որդիք Հօր ձերոյ 45
որ յերկինսն է. զի զարեգակն իւր ծագէ ի վերայ
չարաց եւ բարեաց, եւ ածէ անձրեւ ի վերայ արդա-
րոց եւ մեղաւորաց: Զի եթէ սիրիցէք զայնոսիկ որ 46
սիրեն զձեզ՝ զի՞նչ վարձք իցեն, ո՞չ ապաքէն եւ
մաքսաւորք զնոյն գործեն: Եւ եթէ տայցէք միայն 47
ողջոյն բարեկամաց ձերոց՝ զի՞նչ աւելի առնէք, ո՞չ
ապաքէն մաքսաւորք եւ մեղաւորք զնոյն գործեն:
Արդ՝ եղերուք դուք կատարեալք. որպէս եւ Հայրն 48
ձեր երկնաւոր կատարեալ է:

ԳԼՈՒԽ Զ.

ԲԵ. Զգոյշ լերուք ողորմութեան ձերում՝ մի 1
առնել առաջի մարդկան, որպէս թէ ի ցոյց ինչ նոցա.
դուցէ եւ վարձս ոչ ընդունիցիք ի Հօրէն ձերմէ՝ որ
յերկինսն է: Այլ յորժամ առնիցես ողորմութիւն, 2
մի հարկաներ փող առաջի քո, որպէս կեղծաւորքն
առնեն ի ժողովուրդս եւ ի հրապարակս, որպէս զի
փառաւորեսցին ի մարդկանէ. ամէն ասեմ ձեզ՝ այն
իսկ են վարձք նոցա: Այլ դու յորժամ ողորմութիւն 3
առնիցես, մի գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո.
Որպէս զի եղիցի ողորմութիւն քո ի ծածուկ. 4
եւ Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ՝ հատուսցէ քեզ
յայտնապէս: Եւ յորժամ յաղօթս կայցես, մի լինի- 5
ցիս որպէս կեղծաւորքն. զի սիրեն ի ժողովուրդս եւ
յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի
երեւեսցին մարդկան. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են
վարձք նոցա: Այլ դու յորժամ կայցես յաղօթս, 6
մուտ ի սենեակ քո՝ եւ փակեա զդուրս քո, եւ կաց

յաղօթս առ Հայր քո ի ծածուկ. եւ Հայրն քո որ
տեսանէ ի ծածուկ, հատուսցէ քեզ յայտնապէս:
7 Եւ յորժամ կայցէք յաղօթս, մի շատախօս լինիք իբրեւ
զհեթանոսսն. զի համարին թէ ի բազում խօսից
8 իւրեանց լսելի լինիցին: Արդ՝ մի նմանիցէք նոցա. զի
գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչ չեւ ձեր
9 խնդրեալ ինչ իցէ ի նմանէ: Եւ արդ՝ այսպէս կացէք
դուք յաղօթս. Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի
10 անուն քո. Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք
11 քո որպէս յերկինս՝ եւ յերկրի: Զհաց մեր հանապա-
12 զորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր,
13 որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի
տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի
չարէն. զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ
14 փառք յաւիտեանս. ամէն: Զի եթէ թողուցուք
մարդկան զյանցանս նոցա, թողցէ եւ ձեզ Հայրն ձեր
15 երկնաւոր: Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյան-
ցանս նոցա, եւ ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս
16 ձեր: Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրեւ զկեղծա-
ւորսն տրտմեալք. որ ապականեն զերեսս իւրեանց,
որպէս զի երեւեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն
17 ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա: Այլ դու յոր-
ժամ պահիցես, օծ զգլուխ քո՝ եւ լուա զերեսս քո,
18 Զի մի երեւեսցիս մարդկան իբրեւ զպահող. այլ Հօր
քում ի ծածուկ. եւ Հայրն քո որ տեսանէ ի ծածուկ,
19 հատուսցէ քեզ: Մի գանձէք ձեզ գանձս յերկրի.
ուր ցեց եւ ուտիճ ապականեն, եւ ուր գողք ական
20 հատանեն եւ գողանան: Այլ գանձեցէք ձեզ գանձս
յերկինս, ուր ոչ ցեց եւ ոչ ուտիճ ապականեն, եւ
21 ոչ գողք ական հատանեն, եւ գողանան: Զի ուր
գանձք ձեր են՝ անդ եւ սիրտք ձեր եղիցին:
22 ԲԶ. Ճրագ մարմնոյ ակն է. եթէ ակն քո առատ
23 է, ամենայն մարմինդ լուսաւոր եղիցի: Ապա թէ ակն
քո չար է՝ ամենայն մարմինդ խաւարին եղիցի. իսկ

արդ՝ եթէ լոյսդ որ ի քեզ է՝ խաւար է, խաւարն
որչափ եւս։ Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել. 24
կամ զմին ատիցէ, եւ զմիւսն սիրիցէ. կամ զմին
մեծարիցէ, եւ զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք
Աստուծոյ ծառայել եւ մամոնայի։ Վասն այդորիկ 25
ասեմ ձեզ. մի հոգայք վասն ոգւոց ձերոց՝ զինչ
ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք. եւ մի վասն մարմնոց
ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ո՞չ ապաքէն ոգի առա-
ւել է քան զկերակուր՝ եւ մարմին քան զհանդերձ։
Հայեցարուք ի թռչունս երկնից՝ զի ոչ վարեն եւ ոչ 26
հնձեն եւ ոչ ժողովեն ի շտեմարանս, եւ հայրն ձեր
երկնաւոր կերակրէ զնոսա. ո՞չ ապաքէն դուք առաւել
էք քան զնոսա։ Իսկ արդ՝ ո՞ ի ձէնջ առ հոգալ իւրում՝ 27
յաւելուլ կարիցէ ի հասակ իւր կանգուն մի։ Եւ վասն 28
հանդերձի զի՞ հոգայք. հայեցարուք ի շուշանն վայ-
րենի՝ որպէս աճէ. ոչ ջանայ եւ ոչ նիւթէ։ Ասեմ 29
ձեզ՝ զի եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառսն իւրում
զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ։ Իսկ եթէ զխոտն ի վայրի 30
որ այսօր է՝ եւ վաղիւ ի հնոց արկանի, Աստուած
այնպէս զգեցուցանէ. ո՞րչափ եւս առաւել զձեզ՝ թե-
րահաւատք։ Մի՛ այսուհետեւ հոգայցէք՝ եւ ասիցէք. 31
զի՞նչ կերիցուք կամ զի՞նչ արբցուք՝ կամ զի՞նչ զգեց-
ցուք։ Զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն. քանզի 32
գիտէ հայրն ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է ձեզ այդ
ամենայն։ Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ 33
եւ զարդարութիւն նորա. եւ այդ ամենայն յաւելցի
ձեզ։ Մի՛ այսուհետեւ հոգայցէք վասն վաղուի, զի 34
վաղիւն վասն իւր հոգասցի. շատ է աւուրն չար իւր։

ԳԼՈՒԽ Է.

Բի. Մի՛ դատիք՝ զի մի դատիցիք։ Զի որով 1
դատաստանաւ դատիք՝ դատելոց էք. եւ որով չա- 2
փով չափէք՝ չափեսցի ձեզ։ Զի՞ տեսանես զշիւղ յա- 3
կան եղբօր քո, եւ ի քում ական զգերանդ ոչ տեսա-

4 նես։ Կամ զիա՞րդ ասես ցեղբայր քո. Թող հանից
զշիւղդ յականէ քումմէ. եւ ահաւադիկ ի քում ական
5 գերան կայ։ Կեղծաւո՛ր՝ հան նախ զգերանդ յականէ
քումմէ, եւ ապա հայեսցես հանել զշիւղն յականէ
6 եղբօր քո։ Մի՛ տայք զսրբութիւն շանց. եւ մի՛ արկա-
նէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն
կոխիցեն զնոսա, եւ դարձեալ երգիծուցանիցեն զձեզ։
7 Խնդրեցէք՝ եւ տացի ձեզ, հայցեցէք՝ եւ գտջիք, բա-
8 խեցէք՝ եւ բացցի ձեզ։ Զի ամենայն որ խնդրէ՝ առ-
նու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա։
9 Ո՞ իցէ ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հաց,
10 միթէ քա՞ր տայցէ նմա. Եւ կամ խնդրիցէ ձուկն,
11 միթէ օ՞ձ տայցէ նմա։ Արդ՝ եթէ դուք որ չար էք՝
գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞րչափ
եւս առաւել հայրն ձեր որ յերկինս է՝ տացէ բարիս
12 այնոցիկ որ խնդրեն զնա։ Զամենայն որ միանգամ
կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ՝ այնպէս արարէք
եւ դուք նոցա. զի այս իսկ են օրէնք եւ մարգարէք։
13 Մտէք ընդ նեղ դուռն. քանզի ընդարձակ է դուռն՝
եւ համարձակ ճանապարհն՝ որ տանի ի կորուստ, եւ
14 բազումք են որ մտանեն ընդ նա։ Քանի՛ անձուկ է
դուռն՝ եւ նեղ ճանապարհն՝ որ տանի ի կեանս, եւ
15 սակաւք են որ գտանեն զնա։ Զգոյշ լերուք ի սուտ
մարգարէիցն՝ որ գան առ ձեզ հանդերձիւք ոչխարաց,
16 եւ ի ներքոյ են գայլք յափշտակողք։ Ի պտղոյ նոցա
ծանիջիք զնոսա. միթէ քաղիցե՞ն ի փշոց խաղող՝ կամ
17 ի տատասկէ թուզ։ Այսպէս ամենայն ծառ բարի՝
պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝ պտուղ չար առնէ։
18 Ոչ կարէ ծառ բարի՝ պտուղ չար առնել, եւ ոչ ծառ
19 չար՝ պտուղ բարի առնել։ Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ
20 պտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի։ Ապա ի
21 պտղոյ նոցա ծանիջիք զնոսա։ Ոչ ամենայն որ ասէ
ցիս՝ տէր տէր, մտցէ յարքայութիւն երկնից. այլ որ
22 առնէ զկամս հօր իմոյ որ յերկինսն է։ Բազումք ասի-

ցեն ցիս յաւուր յայնմիկ. տէր տէր՝ ո՞չ յա-
նուն քո մարգարէացաք, եւ յանուն քո դեւս հանաք,
եւ յանուն քո զօրութիւնս բազումս արարաք: Եւ 23
յայնժամ ասացից ցնոսա եթէ ոչ երբեք գիտէի
զձեզ. ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ որք գործէք
զանօրէնութիւն: Ամենայն որ լսէ զբանս իմ զայս- 24
սիկ՝ եւ առնէ զսոսա, նմանեսցի առն իմաստնոյ՝ որ
շինեաց զտուն իւր ի վերայ վիմի: Իջին անձրեւք՝ եւ 25
խաղացին գետք, շնչեցին հողմք՝ եւ բախեցին զտունն,
եւ ոչ կործանեցաւ. քանզի ի վերայ վիմի հաստա-
տեալ էր: Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ՝ 26
եւ ոչ առնէ զսոսա, նմանեսցի առն յիմարի՝ որ շինեաց
զտուն իւր ի վերայ աւազոյ: Իջին անձրեւք՝ յարեան 27
գետք, շնչեցին հողմք՝ հարին զտունն, եւ անկաւ. եւ
էր կործանումն նորա մեծ յոյժ: Եւ եղեւ իբրեւ 28
կատարեաց Յիսուս զամենայն զբանս զայսոսիկ, զար-
մանային ժողովուրդքն ընդ վարդապետութիւն նորա:
Զի իբրեւ իշխանութեամբ ուսուցանէր՝ եւ ոչ որ- 29
պէս դպիրքն:

ԳԼՈՒԽ Ը.

Այլ իբրեւ էջ ի լեռնէ անտի, գնացին զհետ 1
նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա մատուցեալ 2
բորոտ մի, երկիր պագանէր նմա, եւ ասէր. տէր՝ եթէ
կամիս՝ կարող ես զիս սրբել: Ձգեաց զձեռն իւր եւ 3
հասոյց ի նա Յիսուս՝ եւ ասէ. կամիմ սրբեաց. եւ
վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն: Եւ 4
ասէ ցնա Յիսուս, զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես. այլ
երթ ցոյց զանձն քո քահանային. եւ մատո զպա-
տարագն, զոր հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն
նոցա: Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ առ 5
նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, Եւ ասէր. տէր՝ 6
մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չարա-
չար տանջեալ: Ասէ ցնա Յիսուս. ես եկից՝ եւ բժշ- 7

8 կեցցէ զնա։ Պատասխանի ետ հարիւրապետն՝ եւ
ասէ. տէր չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով
մտանիցես. այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի մանուկս
9 իմ։ Քանզի եւ ես այր մի եմ ընդ իշխանութեամբ,
ունիմ ընդ ինեւ զինուորս. ասեմ սմա երթ՝ եւ
երթայ, եւ այլում թէ եկ՝ եւ գայ, եւ ծառայի
10 իմում թէ արա զայս՝ եւ առնէ։ Իբրեւ լուաւ Յի-
սուս՝ զարմացաւ, եւ ասէ ցայնոսիկ՝ որ զհետն երթային.
ամէն ասեմ ձեզ՝ եւ ոչ յԻսրայէլի այսպիսի հաւատս
11 գտի երբեք։ Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարե-
ւելից եւ յարեւմտից եկեսցեն՝ եւ բազմեսցին ընդ
Աբրահամու՝ եւ ընդ Իսահակայ եւ ընդ Յակոբու յար-
12 քայութեան երկնից։ Եւ որդիքն արքայութեան ելցեն
ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ եւ կրճել ատա-
13 մանց։ Եւ ասէ Յիսուս ցհարիւրապետն. երթ՝ եւ որպէս
հաւատացերդ՝ եղիցի քեզ. եւ ողջացաւ մանուկն
14 նորա յաւուր յայնմիկ։ Եւ եկեալ Յիսուս ի տուն
Պետրոսի, ետես զի զզօքանչ նորա անկեալ դնէր տա-
15 պացեալ։ Կալաւ զձեռանէ նորա՝ եւ եթող զնա
16 ջերմն. յոտն եկաց՝ եւ պաշտէր զնոսա։ Իբրեւ
երեկոյ եղեւ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս,
եւ եհան զայսսն բանիւ, եւ զամենայն հիւանդսն
17 բժշկեաց. Զի լցցի բանն՝ որ ասացաւ ի ձեռն Եսայ-
եայ մարգարէի. նա զհիւանդութիւնս մեր վերացոյց,
եւ զցաւս մեր եբարձ։

18 ԳԿ. Տեսեալ Յիսուսի ժողովուրդս բազումս
19 զիւրեւ, հրամայեաց երթալ յայնկոյս։ Եւ մատու-
ցեալ դպիր մի ասէ ցնա. վարդապետ՝ եկից եւ ես
20 զկնի քո յոր վայր եւ երթիցես։ Ասէ ցնա Յիսուս.
աղուեսուց որջք գոն՝ եւ թռչնոց երկնից բոյնք, այլ
21 որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ իւր։ Եւ մի
ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա. տէր՝ տուր ինձ
22 հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զհայր իմ։ Ասէ
ցնա Յիսուս. եկ զկնի իմ, եւ թող տուր մեռելոցն

թաղել զմեռեալս իւրեանց: Եւ իբրեւ եմուտ ի 23
նաւն, գնացին զհետ նորա աշակերտքն նորա: Եւ 24
ահա շարժումն մեծ եղեւ ի ծովուն՝ մինչ նաւին
ծածկել յալեաց անտի, եւ ինքն ննջէր: Եւ մատու- 25
ցեալ աշակերտքն յարուցին զնա եւ ասեն. Տէր՝
փրկեա զմեզ՝ զի կորնչիմք: Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր 26
վատասիրտք էք թերահաւատք. յայնժամ յարու-
ցեալ սաստեաց հողմոցն եւ ծովուն, եւ եղեւ խաղաղու-
թիւն մեծ: Եւ մարդիկն զարմացան՝ եւ ասեն. որպիսի՞ 27
ոք իցէ սա՝ զի եւ հողմք եւ ծով հնազանդին սմա: Եւ 28
իբրեւ անցին յայնկոյս յերկիրն Գերգեսացւոց, պատա-
հեցին նմա դիւահարք երկու՝ ելեալք ի գերեզմանացն,
չարաչարք յոյժ. որպէս զի չէր հնար անցանել ումեք
ընդ այն ճանապարհ: Եւ ահա աղաղակեցին եւ ասեն. 29
զի՞ կայ մեր եւ քո Յիսուս որդի Աստուծոյ, եկիր աստա-
ժամ տանջել զմեզ: Եւ էր հեռագոյն ի նոցանէ 30
երամակ մի խոզից արօտական: Եւ դեւքն աղաչէին 31
զնա եւ ասէին. եթէ հանես զմեզ աստի. հրաման
տուր մեզ երթալ յերամակ խոզից: Եւ ասէ ցնոսա. 32
երթայք. եւ նոքա ելեալ գնացին յերամակն խոզից.
եւ դիմեաց ամենայն երամակն ի դարէ անտի ի ծով,
եւ մեռան ի ջուրսն: Եւ խոզարածքն փախեան, եւ 33
երթեալ ի քաղաքն՝ պատմեցին զամենայն, եւ զիրս
դիւահարացն: Եւ ահա ամենայն քաղաքն ել ընդ 34
առաջ Յիսուսի. իբրեւ տեսին զնա՝ աղաչեցին զի
գնասցէ ի սահմանաց նոցա:

ԳԼՈՒԽ Թ.

Եւ մտեալ ի նաւ անց յայնկոյս, եւ եկն ի քա- 1
ղաք իւր: Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, 2
որ դնէր ի մահիճս. եւ տեսեալ Յիսուսի զհաւատս
նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք
քո: Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս՝ հայ- 3
հոյէ դա: Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ 4

ասէ ցնոսա. ընդէ՞ր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր:
5 Զի՞նչ դիւրին է. ասե՞լ՝ թողեալ լիցին քեզ մեղք
6 քո, թէ ասել՝ արի եւ շրջեաց: Այլ զի գիտասջի՛ք՝
եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ
զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի առ զմահ-
7 ճիճս քո՝ եւ երթ ի տուն քո: Եւ յարուցեալ գնաց
8 ի տուն իւր: Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան.
եւ փառաւոր առնէին զԱստուած զտուիչն այնպիսի
իշխանութեան՝ մարդկան:
9 ԳԲ. Եւ անցեալ ընդ այն Յիսուսի՝ ետես այր
մի, զի նստէր ի մաքսաւորութեան՝ Մատթէոս անուն.
եւ ասէ ցնա՝ եկ զկնի իմ. եւ յարուցեալ գնաց զկնի
10 նորա: Եւ եղեւ իբրեւ բազմեալ էր նա ի տանն. եւ
ահա մաքսաւորք եւ մեղաւորք եկեալ եւ բազմեալ էին
11 ընդ Յիսուսի՝ եւ ընդ աշակերտս նորա: Իբրեւ տեսին
փարիսեցիքն՝ ասեն ցաշակերտս նորա. ընդէ՞ր ընդ
մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր:
12 Իսկ Յիսուս իբրեւ լուաւ՝ ասէ ցնոսա. ո՛չ պիտոյ է
13 բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց: Երթայք՝ ուսարուք
զի՞նչ է. ողորմութիւն կամիմ, եւ ոչ զոհ. զի ոչ
14 եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս: Յայնժամ
մատեան առ նա աշակերտքն Յովհաննու՝ եւ ասեն.
ընդէ՞ր մեք եւ փարիսեցիքն պահեմք յաճախ, եւ քո
15 աշակերտքդ ոչ պահեն: Ասէ ցնոսա Յիսուս. միթէ
մարթ ի՞նչ իցէ մանկանց առագաստի սուգ առնուլ՝
մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեսցեն աւուրք՝
յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, եւ ապա պահես-
16 ցեն: Ոչ ոք արկանէ կապերտ անթափ ի վերայ հնա-
ցեալ ձորձոյ. զի առնու ելանէ զլրութիւն նորա ի
17 հանդերձէն, եւ եւս չար պատառումն լինի: Եւ ոչ
արկանեն գինի նոր ի տիկս հինս. ապա թէ ոչ՝ տիկքն
պատառին՝ եւ գինին հեղու, եւ տիկքն կորնչին. այլ
արկանեն զգինի նոր ի տիկս նորս, եւ երկոքին պահին:
18 ԳԳ. Մինչդեռ նա զայն խօսէր ընդ նոսա, ահա

իշխան մի մատուցեալ երկիր պագանէր նմա՝ եւ ասէր.
դուստր իմ արդ եւս վախճանեցաւ. այլ եկեալ դի-
ցես զձեռն քո ի վերայ նորա՝ եւ կեցցէ։ Յարեաւ 19
Յիսուս եւ գնաց զհետ նորա աշակերտօքն հանդերձ։
Եւ ահա կին մի տեռատես երկոտասանամեայ՝ մատու- 20
ցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի նորա։
Քանզի ասէր ի միտ իւրում. Թէ միայն մերձենամ 21
ի հանդերձս նորա՝ փրկիմ։ Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ 22
եւ ետես զնա՝ ասէ. քաջալերեաց դուստր՝ հաւատք
քո կեցուցին զքեզ. եւ փրկեցաւ կինն ի ժամէն յայն-
մանէ։ Իբրեւ եկն Յիսուս ի տուն իշխանին, եւ ետես 23
զփողահարսն եւ ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. ի բաց գնա-
ցէք. Զի ոչ եթէ մեռեալ է աղջիկն՝ այլ ննջէ։ Եւ 24
ծաղր առնէին զնա։ Եւ իբրեւ ել ամբոխն ի բաց, 25
եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, եւ յարեաւ աղջիկն։
Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն։ 26

ԳԴ. Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն Յիսուս, 27
զհետ եղեն նորա կոյրք երկու, աղաղակէին՝ եւ ասէին,
ողորմեաց մեզ որդի Դաւթի։ Եւ իբրեւ եկն ի տուն, 28
մատեան առ նա կոյրքն. եւ ասէ ցնոսա Յիսուս. հա-
ւատա՞յք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ. ասեն
ցնա՝ այո տէր։ Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ եւ 29
ասէ. ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ։ Եւ բացան 30
աչք նոցա. եւ սաստեաց նոցա Յիսուս եւ ասէ. զգոյշ
կացէք՝ մի՛ ոք գիտասցէ։ Եւ նոքա ելեալ համբաւեցին 31
զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն։ Եւ յելանելն նոցա 32
արտաքս, ահա մատուցին առ նա այր մի՝ համր դիւա-
հար։ Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն. եւ զար- 33
մացան ժողովուրդքն՝ եւ ասեն. Թէ եւ ոչ երբեք
երեւեցաւ այսպիսի ինչ յԻսրայէլի։ Իսկ փարիսեցիքն 34
ասէին, Թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս։

ԳԵ. Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս 35
եւ ընդ գեղս. ուսուցանէր ի ժողովուրդս նոցա, եւ
քարոզէր զաւետարանն արքայութեան. եւ բժշկէր

զամենայն ախտս եւ զամենայն հիւանդութիւնս ի ժո-
36 ղովրդեան: Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի
նոսա. զի էին աշխատեալք եւ ցրուեալք իբրեւ զոչ-
37 խարս, որոց ոչ իցէ հովիւ: Յայնժամ ասէ ցաշակերտ-
սըն իւր. Հունձք բազում են՝ եւ մշակք սակաւ:
38 Արդ՝ աղաչեցէք զտէր հնձոց՝ զի հանցէ մշակս ի
հունձս իւր:

ԳԼՈՒԽ Ժ.

1 Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանեսին աշա-
կերտսն իւր. ետ նոցա իշխանութիւն այսոց պղծոց
հանել զնոսա, եւ բժշկել զամենայն ցաւս եւ զամե-
2 նայն հիւանդութիւնս: Եւ առաքելոցն երկոտասանից
էին անուանք այսոքիկ. առաջին Սիմոն՝ անուանեալն
3 Պետրոս, եւ Անդրէաս եղբայր նորա: Յակոբոս Զեբե-
դեայ, եւ Յովհաննէս եղբայր նորա. Փիլիպպոս, եւ
Բարթողոմէոս. Թովմաս, եւ Մատթէոս մաքսաւոր.
Յակոբոս Ալփեայ, եւ Ղեբէոս՝ որ անուանեցաւն Թա-
4 դէոս: Սիմոն Կանանացի. եւ Յուդա Սկարիովտա-
5 ցի՝ որ եւ մատնեացն զնա: Զնոսա երկոտասանեսին
առաքեաց Յիսուս. պատուիրեաց նոցա՝ եւ ասէ. ի
ճանապարհս հեթանոսաց մի երթայցէք, եւ ի քա-
6 ղաքս Սամարացւոց մի մտանիցէք: Այլ երթայք
7 առաւել առ ոչխարսն կորուսեալս տանն Իսրայելի: Եւ
իբրեւ երթայցէք՝ քարոզեցէք եւ ասացէք, թէ մեր-
8 ձեալ է արքայութիւն երկնից: Զհիւանդս բժշկեցէք,
զբորոտս սրբեցէք, զդեւս հանէք, ձրի առէք՝ եւ ձրի
9 տուք: Մի՛ ստանայք ոսկի եւ մի՛ արծաթ՝ եւ մի՛
10 պղինձ ի գօտիս ձեր: Մի՛ պարկ ի ճանապարհ, եւ մի՛
երկուս հանդերձս, մի՛ կօշիկս, մի՛ ցուպ. զի արժանի
11 է մշակն կերակրոյ իւրոյ: Յոր քաղաք մտանիցէք կամ
ի դեօղ, հարցանիցէք՝ թէ ո՞ է ի նմա արժանի. եւ
12 անդ լինիջիք՝ մինչեւ ելանիցէք անտի: Եւ իբրեւ
մտանիցէք ի տունն, ողջոյն տայջիք նմա՝ եւ ասասջիք.

ողջոյն տանս այսմիկ։ Եթէ իցէ տունն արժանի, եկես- 13
ցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա. ապա թէ ոչ իցէ արժա-
նի, ողջոյնն ձեր առ ձեզ դարձցի։ Եւ որ ոչ ընկալցի 14
զձեզ՝ եւ ոչ լուիցէ բանից ձերոց, իբրեւ ելանիցէք
ի քաղաքէն յայնմանէ, թօթափեսջիք զփոշին յոտից
ձերոց։ Ամէն ասեմ ձեզ՝ դիւրագոյն լիցի երկրին 15
Սոդոմայեցւոց եւ Գոմորացւոց յաւուրն դատաստանի,
քան քաղաքին այնմիկ։

ԳԶ. Ահաւասիկ ես առաքեմ զձեզ իբրեւ զոչ- 16
խարս ի մէջ գայլոց. եղերուք այսուհետեւ խորա-
գէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս։
Զգոյշ լինիջիք ի մարդկանէ. զի մատնեսցեն զձեզ 17
յատեանս. եւ ի ժողովուրդս իւրեանց տանջեսցեն
զձեզ։ Եւ առաջի դատաւորաց եւ թագաւորաց տա- 18
նիցին զձեզ վասն իմ ի վկայութիւն նոցա, եւ հե-
թանոսաց։ Այլ յորժամ մատնիցեն զձեզ, մի հո- 19
գայցէք՝ թէ որպէս կամ զինչ խօսիցիք. զի տացի
ձեզ ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք։ Զի ոչ եթէ 20
դուք իցէք՝ որ խօսիցիքն, այլ Հոգին Հօր ձերոյ՝
խօսիցի ի ձեզ։ Մատնեսցէ եղբայր զեղբայր ի մահ, 21
եւ հայր զորդի. եւ յարիցեն որդիք ի վերայ հարց՝
եւ սպանանիցեն զնոսա։ Եւ եղիջիք ատեցեալք յա- 22
մենեցունց վասն անուան իմոյ. իսկ որ համբերեսցէ
իսպառ, նա կեցցէ։ Եւ յորժամ հալածիցեն զձեզ ի 23
քաղաքիս յայսմիկ՝ փախիջիք յայլ. եւ եթէ յայնմանէ
հալածիցեն զձեզ՝ փախիջիք ի միւս. ամէն ասեմ ձեզ՝
ոչ սպառեսջիք զքաղաքս Իսրայէլի՝ մինչեւ եկեսցէ
որդի մարդոյ։ Ոչ է աշակերտ առաւել քան զվար- 24
դապետ, եւ ոչ ծառայ մեծ քան զտէր իւր։ Շատ լիցի 25
աշակերտին՝ եթէ եղիցի իբրեւ զվարդապետ իւր, եւ
ծառային՝ իբրեւ զտէր իւր. եթէ զտանուտէրն Բէեղ-
զեբուղ կոչեցին, որչափ եւս առաւել զընտանիս նորա։
Մի այսուհետեւ երկնչիցիք ի նոցանէ. զի ոչ ինչ է 26
ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծա-

27 նիցի։ Զոր ասեմ ձեզ ի խաւարի՝ ասացէք ի լոյս.
եւ զոր լսէք յունկանէ՝ քարոզեցէք ի վերայ տանեաց։
28 Եւ մի երկնչիք յայնցանէ՝ որ սպանանեն զմարմին, եւ
զոգի ոչ կարեն սպանանել. այլ երկերուք դուք առա-
ւել յայնմանէ՝ որ կարող է զոգի եւ զմարմին կորու-
29 սանել ի գեհենի։ Ո՞չ ապաքէն երկու ճնճղուկք դանկի
միոջ վաճառին, եւ մի ի նոցանէ յերկիր ոչ անկցի
30 առանց Հօր ձերոյ։ Այլ ձեր եւ ամենայն իսկ Հեր
31 գլխոյ թուեալ է։ Եւ արդ՝ մի երկնչիցիք՝ զի լաւ էք
32 քան զբազում ճնճղուկս։ Ամենայն որ խոստովանեսցի
յիս առաջի մարդկան, խոստովանեցայց եւ ես զնմանէ
33 առաջի Հօր իմոյ որ յերկինս է։ Եւ որ ուրասցի զիս
առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի Հօր
34 իմոյ՝ որ յերկինս է։ Մի՛ Համարիք եթէ եկի արկա-
նել խաղաղութիւն յերկիր. ոչ եկի արկանել խաղա-
35 ղութիւն, այլ սուր։ Քանզի եկի քակել զայր ի Հօրէ
իւրմէ, եւ զդուստր ի մօրէ իւրմէ, եւ զՀարսն ի սկեսրէ
36 իւրմէ։ Եւ թշնամիք առն ընտանիք իւր։ Որ սիրէ
37 զՀայր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ ար-
ժանի. եւ որ սիրէ զուստր կամ զդուստր առաւել
38 քան զիս՝ չէ ինձ արժանի։ Եւ որ ոչ առնու զխաչ
39 իւր՝ եւ գայ զկնի իմ, չէ ինձ արժանի։ Որ գտանէ
զանձն իւր, կորուսցէ զնա՝ եւ որ կորոյս զանձն իւր
40 վասն իմ, գտցէ զնա։ Որ ընդունի զձեզ՝ զիս ընդու-
41 նի, եւ որ զիս ընդունի՝ ընդունի զառաքիչն իմ։ Որ
ընդունի զմարգարէ յանուն մարգարէի՝ զվարձս մար-
գարէի առցէ. եւ որ ընդունի զարդար յանուն արդա-
42 րոյ՝ զվարձս արդարոյ առցէ։ Եւ որ արբուսցէ միում
ի փոքրկանցս յայսցանէ բաժակ մի ջուր ցուրտ՝ միայն
յանուն աշակերտի, ամէն ասեմ ձեզ. ոչ կորուսցէ
զվարձս իւր։

ԳԼՈՒԽ ԺԱ·

Գի· Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զպա- 1
տուէր երկոտասանից աշակերտացն իւրոց, գնաց անտի
քարոզել եւ ուսուցանել ի քաղաքս նոցա։ Իսկ Յով- 2
հաննէս իբրեւ լուաւ ի բանտին զգործսն Քրիստոսի,
առաքեաց ի ձեռն աշակերտացն իւրոց, Եւ ասէ ցնա. 3
դո՞ւ ես՝ որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։
Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. գնացէք 4
պատմեցէք Յովհաննու, զոր լսէք եւ տեսանէք։ Կոյրք 5
տեսանեն, կաղք գնան, բորոտք սրբին, եւ խուլք
լսեն, եւ մեռեալք յառնեն, եւ աղքատք աւետա-
րանին։ Եւ երանեալ է՝ որ ոչ գայթակղեսցի յիս։ 6
Եւ իբրեւ նոքա գնացին, սկսաւ Յիսուս ասել ցժո- 7
ղովուրդն զՅովհաննէ. զի՞նչ ելէք տեսանել յանա-
պատին, եղէ՞գն շարժուն ի հողմոյ։ Այլ զի՞նչ ելէք 8
տեսանել, մա՞րդ ի հանդերձս փափկութեան զարդա-
րեալ. ահաւասիկ որ զփափուկսն զգեցեալ են՝ ի
տունս թագաւորաց են։ Այլ զի՞նչ ելէք տեսանել. 9
մարգարէ՞. այո՛ ասեմ ձեզ, եւ առաւել եւս քան
զմարգարէ։ Զի նա է վասն որոյ գրեալն է. ահա ես 10
առաքեցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց՝ որ
պատրաստեսցէ զճանապարհս քո առաջի քո։ Ամէն 11
ասեմ ձեզ՝ չէ յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ
քան զՅովհաննէս մկրտիչ. բայց փոքրիկն յարքայու-
թեան երկնից մեծ է քան զնա։ Բայց յաւուրցն 12
Յովհաննու մկրտչի մինչեւ ցայժմ՝ արքայութիւն
երկնից բռնադատի, եւ բռունք յափշտակեն զնա։
Քանզի ամենայն օրէնք եւ մարգարէք մինչեւ ցՅովհան- 13
նէս մարգարէացան. Եւ եթէ կամիք ընդունել՝ նա է 14
Եղիա՝ որ գալոցն է։ Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ։ 15
Ո՞ւմ նմանեցուցից զազգս զայս. նման է մանկտւոյ՝ որ 16
նստիցին ի հրապարակս, կարդայցեն զընկերս իւրեանց,
Եւ ասիցեն. փողս հարաք ձեզ՝ եւ ոչ կաքաւեցէք, 17

18 ողբացաք ձեզ՝ եւ ոչ կոծեցարուք: Եկն Յովհաննէս,
ոչ ուտէր եւ ոչ ըմպէր. եւ ասեն՝ դեւ գոյ ի նմա:
19 Եկն որդի մարդոյ՝ ուտէ եւ ըմպէ. եւ ասեն, ահա այր
կերող եւ արբեցող, բարեկամ մաքսաւորաց եւ մեղա-
ւորաց. եւ արդարացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց:
20 Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բա-
21 զում զօրութիւնք նորա, եւ ոչ ապաշխարեցին: Վայ
քեզ Քորազին, վայ քեզ Բեթսայիդա. զի եթէ ի Տիւ-
րոս եւ ի Սիդոն եղեալ էին զօրութիւնքն՝ որ ի ձեզ
եղեն, վաղու եւս արդեօք խորգով եւ մոխրով ապաշ-
22 խարեալ էր: Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի եր-
կրին Տիւրոսի եւ Սիդոնի յաւուրն դատաստանի՝ քան
ձեզ: Եւ դու Կափառնաում, մի՛ մինչեւ յերկինս
23 բարձրացիս. այլ մինչեւ ի դժոխս իջցես. զի եթէ ի
Սոդոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ ի քեզ եղեն, ա-
24 պաքէն կային եւս մինչեւ ցայսօր: Բայց ասեմ ձեզ՝
եթէ երկրին Սոդոմացւոց դիւրագոյն լիցի յաւուրն
դատաստանի՝ քան քեզ:
25 ԴԱ. Յայնմ ժամանակի պատասխանի ետ Յի-
սուս՝ եւ ասէ. գոհանամ զքէն հա՛յր՝ տէր երկնի եւ
երկրի. զի ծածկեցեր զայս յիմաստնոց եւ ի գիտ-
26 նոց, եւ յայտնեցեր տղայոց: Այո՛ հայր. զի այսպէս
27 հաճոյ եղեւ առաջի քո: Ամենայն ինչ տուաւ ինձ ի
հօրէ իմմէ. եւ ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր, եւ
ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, եւ ում որդին
28 կամիցի յայտնել: Եկայք առ իս ամենայն վաստա-
29 կեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ: Առէք
զլուծ իմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն զի հեզ եմ եւ
խոնարհ սրտիւ. եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց:
30 Զի լուծ իմ քաղցր է. եւ բեռն իմ փոքրոգի:

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 ԴԲ. Յայնժամ գնաց Յիսուս՝ ընդ արտորայսն
նոցա ի շաբաթու. եւ աշակերտքն նորա քաղցեան,

եւ սկսան հասկ կորզել եւ ուտել: Փարիսեցիքն իբրեւ 2
տեսին՝ ասեն ցնա. ահաւասիկ աշակերտքն քո գոր-
ծեն, զոր ոչ է արժան գործել ի շաբաթու: Եւ նա 3
ասէ ցնոսա. ո՞չ իցէ ընթերցեալ ձեր՝ զոր արար Դաւիթ,
յորժամ քաղցեաւն, եւ որ ընդ նմայն էին: Զիարդ 4
եմուտ ի տունն Աստուծոյ եւ եկեր զհաց զառաջաւո-
րութեանն զոր ոչ էր օրէն նմա ուտել, եւ ոչ՝ որոց
ընդ նմայն էին, բայց միայն քահանայից: Կամ թէ 5
չիցէ՞ ընթերցեալ յօրէնս՝ զի ի շաբաթս քահանայքն ի
տաճարին պղծեն զշաբաթն, եւ անմեղք են: Բայց 6
ասեմ ձեզ՝ զի մեծ քան զտաճարն է աստ: Եւ եթէ 7
գիտէիք զինչ է զողորմութիւն կամիմ՝ եւ ոչ զզոհ,
ապա ոչ դատապարտէիք դուք զանպարտսն: Զի տէր 8
է շաբաթու՝ որդին մարդոյ: Եւ գնացեալ անտի Յի- 9
սուս եկն ի ժողովուրդն նոցա: Եւ անդ էր այր մի՝ 10
որոյ ձեռն իւր գօսացեալ էր. հարցին զնա՝ եւ ասեն,
եթէ պա՞րտ իցէ ի շաբաթու բժշկել. զի չարախօսես-
ցեն զնմանէ: Եւ նա ասէ ցնոսա. ո՞վ է ի ձէնջ մարդ՝ 11
որոյ իցէ ոչխար մի, եւ անկանիցի այն ի խորխորատ ի
շաբաթու. միթէ ո՞չ ունիցի եւ յարուցանիցէ զնա:
Իսկ արդ՝ ո՞րչափ եւս առաւել է մարդ քան զոչխար. 12
ապա ուրեմն պարտ է ի շաբաթու բարիս գործել: Յայն- 13
ժամ ասէ ցայրն. ձգեա՛ զձեռն քո, եւ նա ձգեաց՝ եւ
եղեւ ողջ իբրեւ զմիւսն: Իսկ փարիսեցիքն ելեալ ար- 14
տաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ որպէս կորուսցեն
զնա: Եւ Յիսուս իբրեւ գիտաց, մեկնեցաւ անտի. եւ 15
գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք եւ բժշկեաց
զամենեսեան: Եւ սաստեաց նոցա զի մի յայտնեսցեն 16
զնմանէ ումեք: Զի լցցի, որ ասացաւն ի ձեռն Ե- 17
սայեայ մարգարէի: Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, եւ 18
սիրելի՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եդից զոգի իմ ի
վերայ նորա, եւ իրաւունս հեթանոսաց պատմեսցէ:
Ոչ հակառակեսցի՝ եւ ոչ աղաղակեսցէ, եւ ոչ ոք լուի- 19
ցէ ի հրապարակս զբարբառ նորա: Զեղէգն ջախջա- 20

խեալ ոչ փշրեսցէ, եւ զպատրոյգն առկայծեալ ոչ
շիջուսցէ. մինչեւ հանցէ ի յաղթութիւն զդատաս-
21 տանն։ Եւ յանուն նորա հեթանոսք յուսասցին։
22 ԳԳ. Յայնժամ մատուցան առ նա դիւահար մի
կոյր եւ համր, եւ բժշկեաց զնա. որպէս զի համրն եւ
23 կոյրն խօսիցի եւ տեսանիցէ։ Զարմացան ամենայն ժո-
ղովուրդքն՝ եւ ասէին. միթէ սա՞ իցէ Քրիստոսն որդի
24 Դաւթի։ Բայց փարիսեցիքն իբրեւ լուան՝ ասեն. ոչ
ինչ հանէ դա զդեւս՝ եթէ ոչ բէեղզեբուղաւ իշխանաւն
25 դիւաց։ Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա՝ ա-
սէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ
յանձն իւր՝ աւերի. եւ ամենայն քաղաք կամ տուն
26 բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ։ Եւ եթէ սատանայ
զսատանայ հանէ, յանձն իւր բաժանեցաւ. արդ՝
27 զիա՞րդ կացցէ թագաւորութիւն նորա։ Եւ եթէ ես
բէեղզեբուղաւ հանեմ զդեւս՝ որդիքն ձեր իւ հանի-
ցեն. վասն այնորիկ նոքա եղիցին ձեր դատաւորք։
28 Ապա թէ Հոգւով Աստուծոյ հանեմ ես զդեւս, ու-
րեմն հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ։
29 Կամ զիա՞րդ կարէ ոք մտանել ի տուն հզօրի՝ եւ զգոր-
ծիսն նորա յափշտակել. եթէ ոչ նախ կապիցէ
30 զհզօրն, եւ ապա զտունն նորա յափշտակիցէ։ Որ ոչ
ընդ իս է, հակառակ իմ է. եւ որ ոչ ժողովէ ընդ իս՝
31 ցրուէ։ Վասն այդորիկ ասեմ ձեզ. ամենայն մեղք
եւ հայհոյութիւնք թողցին մարդկան, բայց զՀոգւոյն
32 հայհոյութիւն մի թողցի։ Եւ որ ոք ասիցէ բան զորդ-
ւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգւոյն սրբոյ ասի-
ցէ՝ մի թողցի նմա, մի յայսմ աշխարհի եւ մի ի հան-
33 դերձելումն։ Կամ արարէք զծառն բարի՝ եւ զպտուղ
նորա բարի, կամ արարէք զծառն չար՝ եւ զպտուղ նո-
րա չար. քանզի ի պտղոյ անտի ծառն ճանաչի։
34 Ծնունդք իժից, զիա՞րդ կարիցէք բարիս խօսել՝ որ
չարքդ էք, քանզի ի յաւելուածոյ սրտի խօսի բերան։
35 Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ հանէ զբա-

րիս. եւ մարդ չար՝ ի չար գանձուց պատի խւրոյ հանէ
զչար: Բայց ասեմ ձեզ. թէ ընդ ամենայն դատարկ 36
բանի զոր խօսիցին մարդիկ, տացեն համար յաւուրն
դատաստանի: Զի ի բանից քոց արդարասցիս. եւ ի 37
բանից քոց պարտաւորեսցիս:

ԳՓ. Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ի 38
դպրացն եւ ի փարիսեցւոց՝ եւ ասեն. վարդապետ՝ կամիմք
նշան ինչ տեսանել ի քէն: Նա պատասխանի ետ՝ եւ 39
ասէ ցնոսա. ազգ չար եւ շնացող նշան խնդրէ, եւ նշան
մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի: Զի 40
որպէս էր Յովնան ի փոր կէտին զերիս տիւս եւ զերիս
գիշերս, նոյնպէս եղիցի որդի մարդոյ ի սիրտ երկրի զե-
րիս տիւս եւ զերիս գիշերս: Արք Նինուէացիք յարիցեն 41
ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ եւ դատապար-
տեսցեն զսա, զի զղջացան ի քարոզութեան Յովնա-
նու. եւ արդ աւասիկ մեծ քան զՅովնան է աստ: Դշխոյն 42
հարաւոյ յարիցէ ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝
եւ դատապարտեսցէ զսա. զի եկն ի ծագաց երկրի՝ լսել
զիմաստութիւն Սողոմոնի. եւ ահա մեծ քան զՍո-
ղոմոն է աստ: Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ ի 43
մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս. խնդրէ հանգիստ՝
եւ ոչ գտանէ: Յայնժամ ասէ. դարձայց անդրէն ի 44
տուն իմ՝ ուստի ելի, եւ եկեալ գտանէ պարա-
պորդ, մաքրեալ եւ յարդարեալ: Յայնժամ երթայ՝ 45
եւ առնու ընդ իւր եօթն այլ այս չարագոյն քան
զինքն, եւ մտեալ բնակէ անդ. եւ լինի յետինն մար-
դոյն այնորիկ չար քան զառաջինն. այնպէս եղիցի եւ
ազգիս այսմիկ չարի: Մինչդեռ նա ընդ ժողովուրդսն 46
խօսէր, ահա մայր նորա եւ եղբարք նորա կային արտա-
քոյ՝ եւ խնդրէին խօսել ընդ նմա: Եւ ասէ ոմն ցնա. 47
ահա մայր քո՝ եւ եղբարք քո կան արտաքոյ, եւ խնդ-
րեն խօսել ընդ քեզ: Նա պատասխանի ետ այնմիկ՝ 48
որ ասացն ցնա, եւ ասէ. ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ
են իմ եղբարք: Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտսն՝ 49

50 ասէ. ահաւասիկ մայր իմ եւ եղբարք: Զի որ առնիցէ
զկամս Հօր իմոյ որ յերկինսն է, նա է իմ եղբայր՝ եւ
քոյր՝ եւ մայր:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 ԵՒ Յաւուր յայնմիկ ելեալ Յիսուս ի տանէն՝
2 նստէր առ ծովեզերն, Եւ ժողովեցան առ նա ժողո-
վուրդք բազումք, մինչեւ մտանել նմա ի նաւն՝ եւ
նստել. եւ ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերբն,
3 Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք՝ եւ ասէր:
4 Ահա ել սերմանահան սերմանել. եւ ի սերմանելն
իւրում էր որ անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն
5 թռչունն երկնից՝ եւ եկեր զնա: Եւ այլն անկաւ յա-
պառաժի, ուր ոչ գոյր հող բազում. եւ վաղվաղակի
6 բուսաւ՝ առ ի չգոյէ հիւթոյ երկրին. Ի ծագել արե-
գու տապացաւ, եւ զի ոչ գոյին արմատք՝ չորացաւ:
7 Եւ այլն անկաւ ի մէջ փշոց, եւ ելին փուշքն եւ
8 հեղձուցին զնա: Եւ այլն անկաւ յերկիր բարի, եւ
տայր պտուղ. էր որ հարիւրաւոր, եւ էր որ վաթսնա-
9 ւոր, եւ էր որ երեսնաւոր: Որ ունիցի ականջս լսելոյ,
10 լուիցէ: Եւ մատուցեալ աշակերտքն ասեն ցնա. ընդ-
11 էր առակօք խօսիս ընդ նոսա: Նա պատասխանի ետ՝
եւ ասէ ցնոսա. քանզի ձեզ տուեալ է գիտել զխոր-
հուրդս արքայութեան երկնից, եւ նոցա չէ տուեալ:
12 Զի ոյր գուցէ՝ տացի նմա եւ յաւելցի. եւ ոյր ոչն
13 գուցէ, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ: Վասն այ-
նորիկ առակօք խօսիմ ընդ նոսա. զի տեսանեն՝ եւ ոչ
տեսանեն, եւ լսեն՝ եւ ոչ լսեն, եւ ոչ առնուն ի միտ:
14 Եւ կատարի առ նոսա մարգարէութիւն Եսայեայ՝ որ
ասէ. լսելով լուիջիք՝ եւ մի իմասջիք, եւ տեսանե-
15 լով տեսջիք՝ եւ մի տեսջիք: Զի թանձրացաւ սիրտ
ժողովրդեանս այսորիկ, եւ ականջօք իւրեանց ծա-
նուանս լուան. եւ զաչս իւրեանց կափուցին՝ զի մի եր-
բեք տեսցեն աչօք՝ եւ ականջօք լուիցեն՝ եւ սրտիւք

իմասցին, եւ դարձցին եւ բժշկեցից զնոսա : Բայց ձեր 16
երանի աչացդ՝ զի տեսանեն, եւ ականջաց ձերոց՝ զի
լսեն : Ամէն ասեմ ձեզ, զի բազում մարգարէք եւ ար- 17
դարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ եւ ոչ տե-
սին, եւ լսել զոր լսէքդ՝ եւ ոչ լուան : Եւ արդ՝ լուա- 18
րուք դուք զառակ սերմանացանին : Յամենայնէ՝ որ 19
լսէ զբանն արքայութեան եւ ոչ առնու ի միտ, գայ
չարն՝ եւ յափշտակէ զսերմանեալն ի սրտի նորա. այն
է՝ որ առ ճանապարհաւն սերմանեցաւ : Եւ որ յապա- 20
ռաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ
վաղվաղակի խնդութեամբ ընդունի զնա : Բայց քանզի 21
ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է,
ի լինել նեղութեան եւ հալածանաց վասն բանին՝
վաղվաղակի գայթագղի. Իսկ որ ի մէջ փշոցն սերմա- 22
նեցաւ՝ այն է, որ իբրեւ լսէ զբանն, եւ հոգք աշխար-
հիս եւ պատրանք մեծութեանն հեղձուցանեն զբանն,
եւ լինի անպտուղ : Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ՝ 23
այն է, որ իբրեւ լսէ զբանն՝ եւ ի միտ առնու, եւ
տայ պտուղ, է որ հարիւր, եւ է որ վաթսուն, եւ է
որ երեսուն : Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ :

ԺԳ. Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ. Նմանեցաւ 24
արքայութիւն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի
յագարակի իւրում : Եւ ի քուն լինելն մարդկան, եկն 25
թշնամի նորա եւ ցանեաց ի վերայ որոմն ի մէջ ցորե-
նոյն՝ եւ գնաց : Եւ իբրեւ բուսաւ խոտն՝ եւ արար 26
պտուղ, ապա երեւեցաւ եւ որոմն : Մատուցեալ 27
ծառայք տանուտեառն ասեն ցնա. տէր՝ ո՞չ սերմն բա-
րի սերմանեցեր յագարակին քում, արդ՝ ուստի՞ ու-
նիցի զորոմն : Եւ նա ասէ ցնոսա. այր թշնամի արար 28
զայն. ասեն ցնա ծառայքն. կամի՞ս՝ զի երթիցուք քա-
ղեսցուք զայն ի բաց : Եւ նա ասէ ցնոսա. մի՛, գուցէ 29
մինչ քաղիցէք զորոմն, եւ զցորեանն ընդ նմին ի բաց
խլիցէք : Թողուլ տուք երկոցունց աճել ի միասին մին- 30
չեւ ի հունձս, եւ ի ժամանակի հնձոց ասացից

ցհնձողսն. քաղեցէք նախ զորոմն եւ կապեցէք զայդ
ի խրձունս առ ի այրել, եւ զցորեանն ժողովեցէք ի
31 շտեմարանս իմ: Այլ առակ արկ առ նոսա եւ ասէ.
Նման է արքայութիւն երկնից հատոյ մանանխոյ. զոր
32 առեալ մարդոյ՝ սերմանեաց յագարակի իւրում: Որ
փոքր է քան զամենայն սերմանիս, եւ յորժամ աճի-
ցէ, մեծ է քան զամենայն բանջարս. եւ լինի ծառ՝
մինչեւ գալ թռչնոց երկնից եւ հանգչել յոստս նորա:
33 Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա եւ ասէ. նման է ար-
քայութիւն երկնից խմորոյ, զոր առեալ կնոջ թա-
գոյց ի գրիւս երիս ալեր՝ մինչեւ ամենայն խմորեցաւ:
34 Զայս ամենայն խօսեցաւ Յիսուս առակօք ընդ ժո-
ղովուրդսն. եւ առանց առակի ոչինչ խօսէր ընդ նոսա:
35 Զի լցցի ասացեալն ի մարգարէէն. բացից առակօք
զբերան իմ, բղխեցից զծածկեալն ի սկզբանէ աշխարհի:
36 Գէ· Յայնժամ թողեալ Յիսուսի զժողովուրդ-
սն՝ եկն ի տուն. մատեան առ նա աշակերտքն նորա
եւ ասեն. մեկնեա մեզ զառակ որոմանցն ագարակին:
37 Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցնոսա. որ սերմանէ
38 սերմն բարի՝ է որդի մարդոյ: Եւ ագարակն աշխարհս
է: Սերմն բարի նոքա են՝ որ որդիքն արքայութեան
39 են. իսկ որոմն որդիք չարին են: Եւ թշնամին որ վա-
րեաց զայն՝ սատանայ է. եւ հունձքն կատարած աշ-
40 խարհիս է, եւ հնձօղքն հրեշտակք են: Որպէս ժողո-
վի որոմն՝ եւ ի հուր այրի, այնպէս եղիցի ի կատա-
41 րածի աշխարհիս: Առաքեսցէ որդի մարդոյ զհրեշտա-
կս իւր, եւ ժողովեսցեն յարքայութենէ նորա զամե-
նայն գայթակղութիւնս, եւ զայնոսիկ որք գործեն
42 զանօրէնութիւն: Եւ արկցեն զնոսա ի հնոց հրոյ.
43 անդ եղիցի լալ՝ եւ կրճել ատամանց: Յայնժամ ար-
դարքն ծագեսցեն իբրեւ զարեգակն յարքայութեան
44 երկնից: Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Դարձեալ՝
Նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յագա-
րակի, զոր գտեալ մարդոյ՝ թագոյց. եւ ի խնդութենէ

անտի երթայ վաճառէ զամենայն ինչ զոր ունի, եւ
գնէ զագարակն զայն։ Դարձեալ՝ նման է արքայու- 45
թիւն երկնից առն վաճառականի՝ որ խնդրիցէ մարգա-
րիտս գեղեցիկս։ Եւ գտեալ մի պատուական մարգա- 46
րիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն զոր ինչ ունէր՝
եւ գնեաց զայն մարգարիտ։ Դարձեալ՝ նման է ար- 47
քայութիւն երկնից ուռկանի արկելոյ ի ծով՝ եւ յա-
մենայն ազգաց ժողովելոյ։ Զոր՝ իբրեւ լցաւ, հանեալ 48
ի ցամաք՝ եւ նստեալ ժողովեցին զբարի բարին յա-
մանս, եւ զխոտանն ի բաց ընկեցին։ Այնպէս եղիցի ի 49
կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ եւ մեկնես-
ցեն զչարս ի միջոյ արդարոց, Եւ արկցեն զնոսա ի հնոց 50
հրոյն. անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։ Ասէ 51
ցնոսա Յիսուս. իմացարո՞ւք զայս ամենայն. ասեն
ցնա. այո տէր։ Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ ա- 52
մենայն դպիր աշակերտեալ արքայութեան երկնից՝
նման է առն տանուտեառն, որ հանէ ի գանձէ իւրմէ
զնոր եւ զհին։

ԽԷ. Եւ իբրեւ կատարեաց Յիսուս զառակս զայ- 53
սոսիկ՝ փոխեցաւ անտի, Եւ եկեալ ի գաւառ իւր՝ 54
ուսուցանէր զնոսա ի ժողովրդեանն մինչեւ զարմանալ
նոցա եւ ասել, ուստի՞ իցէ սմա այս իմաստութիւն
եւ զօրութիւնք։ Ո՞չ սա է հիւսանն որդի. ո՞չ մայր 55
սորա կոչի Մարիամ. եւ եղբարք սորա Յակովբոս՝ եւ
Յովսէս՝ եւ Սիմոն՝ եւ Յուդա։ Եւ քորք սորա ո՞չ ա- 56
մենեքեան առ մեզ են, արդ ուստի՞ է սմա այս ամե-
նայն։ Եւ գայթագղէին ի նա։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. 57
չիք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի եւ
յիւրում տան։ Եւ ոչ արար անդ զօրութիւնս բա- 58
զումս վասն անհաւատութեան նոցա։

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԽԸ. Յայնմ ժամանակի լուաւ Հերովդէս չոր- 1
րորդապետ զլուր Յիսուսի։ Եւ ասէ ցծառայս իւր. 2

նա է Յովհաննէս մկրտիչ, նա յարեաւ ի մեռելոց, եւ
3 վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: Քանզի Հե-
րովդէս կալեալ զՅովհաննէս, կապեաց զնա եւ եդ ի
բանտի՝ վասն Հերովդիադայ կնոջ Փիլիպպոսի եղբօր
4 նորա: Զի ասէր ցնա Յովհաննէս. չէ արժան քեզ
5 ունել զդա: Եւ կամէր զնա սպանանել, բայց երկնչէր
ի ժողովրդենէ անտի. քանզի իբրեւ զմարգարէ ունէին
6 զնա: Եւ իբրեւ եղեն ծնունդք Հերովդէի կաքաւեաց
դուստրն Հերովդիադայ ի մէջ բազմականին. եւ հա-
7 ճոյ թուեցաւ Հերովդէի: Ուստի եւ երդմամբ խոս-
8 տացաւ նմա զինչ եւ խնդրեսցէ: Եւ նա յառաջագոյն
խրատեալ ի մօրէ իւրմէ, տուր ինձ ասէ այսր ի վերայ
9 սկտեղ զգլուխն Յովհաննու մկրտչի: Եւ տրտմեցաւ
թագաւորն. բայց վասն երդմանցն եւ բազմականացն՝
10 հրամայեաց տալ նմա: Եւ առաքեաց գլխատեաց
11 զՅովհաննէս ի բանտի: Եւ բերաւ գլուխ նորա սկտեղբ՝
12 եւ տուաւ աղջկանն, եւ տարաւ առ մայր իւր: Եւ
մատուցեալ աշակերտքն նորա՝ բարձին զմարմինն եւ
թաղեցին, եւ եկեալ պատմեցին Յիսուսի:
13 ԽԳ· Եւ իբրեւ լուաւ Յիսուս, գնաց անտի
նաւու յանապատ տեղի առանձինն. իբրեւ լուան ժո-
ղովուրդքն՝ գնացին զհետ նորա հետի ի քաղաքաց
14 անտի: Եւ իբրեւ ել՝ ետես ժողովուրդ բազում,
գթացաւ ի նոսա, եւ բժշկեաց զհիւանդս նոցա:
15 Իբրեւ ընդ երեկս եղեւ, մատեան առ նա աշակերտքն՝
եւ ասեն. տեղիս անապատ է եւ օրս տարաժամեալ,
արձակեա զժողովուրդդ, զի երթիցեն շուրջ ի շէնս՝
16 գնեսցեն իւրեանց կերակուրս: Եւ ասէ Յիսուս. ոչինչ
պիտոյ է դոցա երթալ. դուք տուք դոցա ուտել:
17 Եւ նոքա ասեն ցնա. ոչինչ ունիմք աստ, բայց հինգ
18 նկանակ եւ երկուս ձկունս: Եւ ասէ ցնոսա. բերէք
19 այսր զայն: Եւ հրամայեաց բազմեցուցանել զժողո-
վուրդն ի վերայ խոտոյ. եւ առեալ զհինգ նկանակն
եւ զերկուս ձկունսն՝ հայեցաւ յերկինս, օրհնեաց եւ

երեկ՝ եւ ետ ցաշակերտսն զնկանակսն, եւ աշակերտքն
ժողովրդոցն: Կերան ամենեքեան՝ եւ յագեցան, եւ 20
բարձին զնշխարս կոտորոցն երկոտասան սակառի լի:
Եւ որք կերանն՝ էին արք իբրեւ հինգ հազար. թող 21
զկանայս եւ զմանկտի: Եւ սաստիկ վաղվաղակի զա- 22
շակերտսն մտանել ի նաւ՝ եւ յառաջել յայնկոյս,
մինչ ինքն զժողովուրդսն արձակիցէ:

ԵՓ. Եւ իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել 23
ի լեառն առանձինն կալ յաղօթս. եւ իբրեւ ընդ
երեկս եղեւ, անդ էր միայն: Եւ նաւն մեկնեալ էր ի 24
ցամաքէն բազում ասպարիսօք ծփեալ յալեացն.
քանզի ընդդէմ էր հողմն: Եւ ի չորրորդում պահու 25
գիշերոյն եկն առ նոսա Յիսուս գնալով ի վերայ ծո-
վուն: Իբրեւ տեսին զնա աշակերտքն զի գնայր ի վերայ 26
ծովուն՝ խռովեցան, եւ ասեն թէ առաչօք իցէ. եւ
առ ահին աղաղակեցին: Եւ վաղվաղակի խօսեցաւ 27
ընդ նոսա Յիսուս՝ եւ ասէ. քաջալերեցարուք ես եմ,
մի՛ երկնչիք: Պատասխանի ետ նմա Պետրոս՝ եւ ասէ. 28
տէր՝ եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ի
վերայ ջրոցս: Եւ նա ասէ, եկ. եւ իջեալ ի նաւէն 29
Պետրոս՝ գնայր ի վերայ ջուրցն, եւ եկն առ Յիսուս:
Եւ տեսեալ զհողմն սաստիկ՝ երկեաւ. եւ իբրեւ 30
սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց՝ եւ ասէ. տէր փրկեա
զիս: Եւ վաղվաղակի Յիսուս ձգեաց զձեռն իւր՝ կա- 31
լաւ զնա եւ ասէ. թերահաւատ՝ ընդէ՞ր երկմտեցեր:
Եւ իբրեւ ելին ի նաւն՝ հանդարտեաց հողմն: Եւ որ 32
ի նաւին էին՝ մատեան երկիր պագին նմա՝ եւ ասեն. 33
արդարեւ որդի Աստուծոյ ես դու: Եւ անցեալ եկին 34
ի Գեննեսարէթ: Եւ իբրեւ ծանեան զնա արք տեղ- 35
ւոյն այնորիկ, առաքեցին ընդ ամենայն գաւառն՝ եւ
ածին առ նա զամենայն հիւանդս: Եւ աղաչէին զնա, 36
զի գոնէ միայն ի քղանցս հանդերձի նորա մերձե-
ցին. եւ որ միանգամ մերձեցանն փրկեցան:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 ԺԵ. Յայնժամ մատեան առ Յիսուս որ յԵ-
2 րուսաղեմէ փարիսեցիքն եւ դպիրք՝ եւ ասեն. Ընդէ՞ր
աշակերտքն քո անցանեն զաւանդութեամբ ծերոցն.
3 զի ոչ լուանան զձեռս յորժամ հաց ուտեն։ Նա
պատասխանի ետ՝ եւ ասէ ցնոսա. իսկ դուք ընդէ՞ր
անցանէք զպատուիրանաւն Աստուծոյ վասն ձերոյ
4 աւանդութեան։ Զի Աստուած ասաց. պատուեա
5 զհայր քո եւ զմայր։ Եւ որ բամբասէ զհայր կամ
6 զմայր՝ մահու վախճանեսցի։ Եւ դուք ասէք որ ասի-
ցէ ցհայր իւր կամ ցմայր իւր, թէ պատարագ է՝ զոր
յինէն օգտիցիս, եւ ոչ պատուիցէ զհայր իւր եւ
զմայր իւր. եւ խոտէք զբանն Աստուծոյ վասն ձերոյ
7 աւանդութեան։ Կեղծաւորք՝ բարւոք մարգարէացաւ
8 ի վերայ ձեր Եսայի՝ եւ ասէ. Ժողովուրդս այս շըր-
թամբք պատուէ զիս, եւ սիրտք իւրեանց հեռա-
9 ցեալ մեկուսի են յինէն։ Զուր պաշտեն զիս.
ուսուցանեն վարդապետութիւնս՝ զմարդկան պատուի-
10 րեալս։ Եւ կոչեցեալ առ ինքն զժողովուրդսն՝ ասէ
ցնոսա. լուարուք եւ ի միտ առէք։
11 Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ,
այլ որ ինչ ելանէ ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ։
12 Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասեն
ցնա. գիտե՞ս՝ զի փարիսեցիքն իբրեւ լուան զբանն՝
13 գայթագղեցին։ Նա պատասխանի ետ նոցա՝ եւ ասէ.
ամենայն տունկ զոր ոչ տնկեաց Հայր իմ երկնաւոր,
14 խլեսցի։ Թոյլ տուք զնոսա. կոյրք են՝ կուրաց առաջ-
նորդ. կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, եւ
15 երկոքին ի խորխորատ անկանին։ Պատասխանի ետ
նմա Պետրոս եւ ասէ. մեկնեա մեզ զառակս զայս։
16 Ասէ Յիսուս. տակաւին եւ դուք անմիտ էք։ Եւ
17 ո՞չ իմանայք թէ ամենայն որ մտանէ ի բերան, յոր-
18 վայն երթայ՝ եւ արտաքս ելանէ։ Իսկ որ ելանէ ի բե-
րանոյ՝ ի սրտէ անտի գայ. եւ այն պղծէ զմարդն։

Զի ի սրտէ ելանեն խորհուրդք չարք՝ սպանութիւնք 19
շնութիւնք պոռնկութիւնք գողութիւնք սուտ վկայու-
թիւնք հայհոյութիւնք: Այս ամենայն է որ պղծէ 20
զմարդ, այլ անլուայ ձեռօք ուտել՝ ոչ պղծէ զմարդ:

ԽԶ. Եւ ելեալ անտի Յիսուսի գնաց ի կողմանս 21
Տիւրոսի եւ Սիդոնի: Եւ ահա կին մի քանանացի ի 22
սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակէր եւ ասէր.
ողորմեաց ինձ տէր որդի Դաւթի, դուստր իմ չարա-
չար այսահարի: Եւ նա ոչ ետ նմա պատասխանի. 23
եւ մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա եւ
ասէին. արձակեա՛ զնա զի աղաղակէ զհետ մեր: Նա 24
պատասխանի ետ եւ ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝
եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի: Եւ 25
նա մատուցեալ երկիր պագանէր նմա եւ ասէր. տէր՝
օգնեա՛ ինձ: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. ոչ 26
է բարւոք առնուլ զհաց մանկանց՝ եւ արկանել շանց:
Եւ նա ասէ. այո՛ տէր, քանզի եւ շունք կերակրին ի 27
փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայն- 28
ժամ պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. ո՛վ
կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս
եւ կամիս. եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու:

ԽԷ. Եւ գնացեալ անտի Յիսուսի, եկն ի ծո- 29
վեզրն Գալիլեացւոց, եւ ելեալ ի լեառն նստէր անդ:
Մատեան առ նա ժողովուրդք բազումք որ ունէին 30
ընդ իւրեանս՝ կաղս կոյրս համերս միակողմանիս, եւ
այլս բազումս. եւ ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ եւ
բժշկեաց զնոսա: Մինչեւ զարմանալ ժողովրդոցն՝ որ 31
տեսանէին, զի համրքն խօսէին՝ կաղք գնային՝ միա-
կողմանիք բժշկէին՝ կոյրք տեսանէին, եւ փառաւոր
առնէին զԱստուած Իսրայէլի: Եւ կոչեցեալ առ 32
ինքն զաշակերտսն՝ ասէ. գթամ ի ժողովուրդդ, զի
այդ երեք աւուրք են զի կան առ իս, եւ ոչ ունին
զինչ ուտիցեն. եւ արձակել զդոսա նօթիս՝ չկամիմ,
գուցէ նքթիցեն զճանապարհայն: Ասեն ցնա աշա- 33

կերտքն. իսկ արդ՝ մեզ յանապատի աստ ուստի՞ իցէ
այնչափ հաց՝ մինչեւ յագեցուցանել զայսչափ ժողո-
34 վուրդ: Եւ ասէ ցնոսա Յիսուս. քանի՞ նկանակ ունիք.
եւ նոքա ասեն. եօթն, եւ սակաւ ձկունս: Եւ հրա-
35 մայեաց ժողովրդեանն բազմել ի վերայ գետնոյ:
36 Եւ առեալ զեօթն նկանակն եւ զձկունսն՝ գոհացաւ
եւ եբեկ եւ ետ ցաշակերտսն, եւ նոքա ժողովրդեանն:
37 Կերան ամենեքեան եւ յագեցան. եւ բարձին
38 զնշխարս կոտորոցն՝ եօթն զամբիղ լի: Եւ որք կե-
րանն՝ էին իբրեւ այր չորք հազարք. թող զկանայս
39 եւ զմանկտի: Իբրեւ արձակեաց զժողովուրդսն, ել ի
նաւ՝ եւ եկն ի սահմանս Մագդաղեայ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն եւ սադուկեցիք
փորձելով խնդրէին ի նմանէ՝ նշան յերկնից ցուցանել
2 նոցա: Նա պատասխանի ետ՝ եւ ասէ ցնոսա. (յոր-
ժամ երեկոյ լինի՝ ասէք, պարզ լինիցի՝ զի կարմրա-
3 ցեալ է երկին: Եւ առաւօտու՝ այսօր մրրիկ, զի շա-
ռագունի տրտմութեամբ երկին. արդ՝ զերեսս երկնի
կարէք քննել, իսկ զնշան ժամանակիս ոչ կարէք գի-
4 տել:) Ազգ չար եւ շնացող՝ նշան խնդրէ, եւ նշան
մի՛ տացի նմա, բայց նշանն Յովնանու մարգարէի. եւ
5 եթող զնոսա եւ գնաց: Գնացին եւ աշակերտքն
6 յայնկոյս, եւ մոռացան առնուլ հաց: Ասէ ցնոսա
Յիսուս. տեսէք եւ զգոյշ լերուք ի խմորոյ սադուկե-
7 ցւոցն եւ փարիսեցւոց: Նոքա խորհէին ընդ մի-
8 մեանս՝ եւ ասէին թէ հաց ոչ բարձաք: Գիտաց
Յիսուս եւ ասէ. զի՞ խորհիք ի միտս ձեր թերահա-
9 ւատք՝ եթէ հաց ոչ ունիք: Տակաւին չիմանայք՝ եւ
ոչ յիշէք զհինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ
10 քանի սակառի բարձէք: Եւ ոչ զեօթն նկանակն ի չորս
11 հազարսն, եւ քանի զամբիղս բարձէք: Արդ՝ զիա՞րդ
ոչ իմանայք՝ եթէ ոչ վասն հացի ասացի ձեզ՝ զգոյշ

լինել ի խմորոյ փարիսեցւոցն եւ սադուկեցւոց:
Յայնժամ ի միտ առին եթէ ոչ ասաց զգուշանալ ի 12
խմորոյ, այլ յաղանդոյ փարիսեցւոցն եւ սադու-
կեցւոց:

ՁԿ. Եւ եկեալ Յիսուս ի կողմանս Փիլիպպեայ 13
Կեսարեայն, հարցանէր ցաշակերտսն՝ եւ ասէր. զո՞ ոք
ասեն զինէն մարդիկն՝ թէ իցէ որդի մարդոյ: Եւ նո- 14
քա ասեն. ոմն զՅովհաննէս Մկրտիչ, եւ այլք զԵղիա,
եւ կէսք զԵրեմիա, կամ զմի ոք ի մարգարէից: Ասէ 15
ցնոսա. իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ իցեմ: Պա- 16
տասխանի ետ Նմա Սիմոն Պետրոս՝ եւ ասէ. դու ես
Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ: Պատասխանի 17
ետ Յիսուս եւ ասէ ցնա. երանի՜ է քեզ Սիմոն որդի
Յովնանու, զի մարմին եւ արիւն ոչ յայտնեաց քեզ՝
այլ Հայր իմ որ յերկինսն է: Եւ ես քեզ ասեմ. զի 18
դու ես վէմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղե-
ցի իմ, եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն:
Եւ տաց քեզ զփականս արքայութեան երկնից. եւ 19
զոր միանգամ կապեսցես յերկրի, եղիցի կապեալ
յերկինս. եւ զոր արձակեսցես յերկրի, եղիցի արձա-
կեալ յերկինս: Յայնժամ սաստեաց աշակերտացն, 20
զի մի՛ ումեք ասիցեն՝ թէ նա է Քրիստոսն: Յայնմ 21
հետէ սկսաւ ցուցանել աշակերտացն իւրոց՝ թէ
պարտ է Նմա երթալ յԵրուսաղէմ. բազում չարչա-
րանս չարչարել եւ անարգել ի քահանայապետից
եւ ի դպրաց եւ եւ ի ծերոց ժողովրդեանն՝ եւ սպա-
նանել, եւ յերիր աւուր յառնել: Եւ առեալ զնա 22
մեկուսի Պետրոսի, սկսաւ կագել ընդ Նմա եւ ասել.
քաւ լիցի քեզ տէր, մի՛ եղիցի այդ: Եւ նա դարձեալ 23
ի Պետրոս՝ ասէ. երթ յետս իմ սատանայ, գայ-
թակղութիւն իմ ես. զի ոչ խորհիս դու զԱստու-
ծոյսն, այլ զմարդկան: Յայնժամ Յիսուս ասէ ցա- 24
շակերտսն իւր. եթէ ոք կամի զկնի իմ գալ՝ ուրաս-
ցի զանձն, եւ առցէ զխաչ իւր՝ եւ եկեսցէ զկնի իմ:

25 Զի որ կամիցի զանձն իւր կեցուցանել՝ կորուսցէ զնա.
եւ որ կորուսցէ զանձն իւր վասն իմ՝ գտցէ զնա:
26 Զի՞նչ օգտիցի մարդ՝ եթէ զաշխարհս ամենայն շա-
հեսցի. եւ զանձն իւր տուժեսցի. կամ զի՞նչ տացէ
27 մարդ փրկանս ընդ անձին իւրում: Զի գալոց է որդի
մարդոյ փառօք Հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւ-
րովք, եւ յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ
28 գործս իւր: Ամէն ասեմ ձեզ. զի իցեն ոմանք ի սո-
ցանէ՝ որք աստ կան. որք ոչ ճաշակեսցեն զմահ մին-
չեւ տեսցեն զորդի մարդոյ եկեալ արքայութեամբ
իւրով:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս զՊետրոս
զՅակովբոս եւ զՅովհաննէս զեղբայր նորա, եւ հանէ
2 զնոսա ի լեառն մի բարձր առանձինն: Եւ այլակերպե-
ցաւ առաջի նոցա. եւ լուսաւորեցան երեսք նորա
իբրեւ զարեգակն, եւ հանդերձք նորա եղեն սպիտակ
3 իբրեւ զլոյս: Եւ ահա երեւեցաւ նոցա Մովսէս եւ
4 Եղիա՝ որ խօսէին ընդ նմա: Պատասխանի ետ Պետրոս
եւ ասէ ցՅիսուս Տէր՝ բարւոք է մեզ աստ լինել.
եթէ կամիս՝ արասցուք երիս տաղաւարս՝ մի քեզ եւ
5 մի Մովսէսի եւ մի Եղիայի: Եւ մինչ դեռ նա խօսէր,
ահա ամպ լուսաւոր հովանի եղեւ ի վերայ նոցա.
ձայն եղեւ յամպոյն՝ եւ ասէ. դա է որդի իմ սիրե-
6 լի՝ ընդ որ հաճեցայ, դմա լուարուք: Իբրեւ լուան
աշակերտքն, անկան ի վերայ երեսաց իւրեանց՝ եւ եր-
7 կեան յոյժ, Եւ մատուցեալ Յիսուս բուռն եհար
8 զնոցանէ՝ եւ ասէ. յոտն կացէք՝ եւ մի՛ երկնչիք: Ամ-
բարձին զաչս իւրեանց՝ եւ ոչ զոք տեսին՝ բայց միայն
9 զՅիսուս: Եւ մինչ դեռ իջանէին ի լեռնէ անտի, պա-
տուիրեաց նոցա Յիսուս՝ եւ ասէ. մի՛ ումեք ասիցէք
զտեսիլդ զայդ՝ մինչեւ որդի մարդոյ ի մեռելոց յա-
10 րիցէ: Հարցին ցնա աշակերտքն եւ ասեն, զի՞արդ

դպիրքն ասեն, եթէ Եղիայի նախ պարտ է գալ: Պա- 11
տասխանի ետ Յիսուս՝ և ասէ ցնոսա. Եղիա գայ՝ և
հաստատեսցէ զամենայն: Այլ ասեմ ձեզ՝ զի Եղիա 12
եկեալ իսկ է. և ոչ ծանեան զնա, այլ արարին
ընդ նա՝ զոր ինչ կամեցան. նոյնպէս և որդի մարդոյ
չարչարելոց է ի նոցանէ: Յայնժամ ի միտ առին ա- 13
շակերտքն՝ թէ վասն Յովհաննու մկրտչի ասաց ցնոսա:

ԺԲ. Եւ իբրև եկին ի ժողովուրդն, մատեաւ 14
այր մի՝ ի ծունր իջանէր և ասէր. Տէր ողորմեաց
որդւոյ իմում, զի լուսնոտի՝ և չարաչար հիւանդա-
նայ. բազում անգամ անկանի ի հուր՝ և երբեք ի
ջուր: Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ 15
կարացին բժշկել: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. 16
ո՜վ ազգ անհաւատ և թիւր, մինչև ցե՞րբ իցեմ
ընդ ձեզ՝ մինչև յե՞րբ անսայցեմ ձեզ. ած զնա առ
իս: Եւ սաստեաց ի նա Յիսուս և ել ի նմանէ 17
դևն, և բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ:
Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն 18
ցՅիսուս. մեք ընդէ՞ր ոչ կարացաք հանել զնա: Եւ 19
նա ասէ ցնոսա. վասն թերահաւատութեան ձերոյ.
ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատ
մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց աստի
անդր, և փոխեսցի. և ոչինչ անհնարին լինիցի
ձեզ: Բայց այս ազգ ոչ իւիք ելանէ՝ եթէ ոչ աղօ- 20
թիւք և պահօք:

ԺԳ. Եւ մինչ դեռ շրջէին նոքա ի Գալիլեա՝ ասէ 21
ցնոսա Յիսուս. մատնելոց է որդի մարդոյ ի ձեռս
մարդկան, և սպանցեն զնա, և յերիր աւուր յարի- 22
ցէ. և տրտմեցան յոյժ: Իբրև եկին նոքա ի Կա- 23
փառնաում, մատեան՝ որ զերկդրամեանն պահանջէին՝
առ Պետրոս, և ասեն. վարդապետն ձեր ո՞չ տայ
զերկդրամեանն, և նա ասէ՝ այո: Եւ իբրև եմուտ ի 24
տուն՝ յառաջեաց քան զնա Յիսուս և ասէ. զի՞արդ
թուի քեզ Սիմոն. թագաւորք ազգաց յումմէ՞ առ-

նուն զհարկս կամ զհաս, յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօ-
25 տարաց։ Եւ իբրեւ ասաց՝ թէ յօտարաց, ասէ ցնա
26 Յիսուս ապա ուրեմն ազատ են որդիքն։ Բայց զի մի՛
գայթակղեցուսցուք զնոսա, երթ ի ծով՝ եւ ընկեա
կարթ, եւ զառաջին ձուկն որ ելանիցէ՝ առ եւ բաց
զբերան նորա, եւ գտանիցես սատեր. եւ զայն առեալ
տացես նոցա ընդ իմ եւ ընդ քո։

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Յայնմ աւուր մատեան աշակերտքն առ Յիսուս
եւ ասեն. ո՞վ իցէ ի մէնջ մեծ յարքայութեան
2 երկնից. Եւ կոչեաց առ ինքն Յիսուս մանուկ մի,
3 կացոյց զնա ի մէջ նոցա, եւ ասէ. ամէն ասեմ ձեզ,
եթէ ոչ դարձջիք, եւ եղիջիք իբրեւ զմանկտի,
4 ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից։ Արդ՝ որ խո-
նարհեցուցանէ զանձն իբրեւ զմանուկս զայս, նա է
5 մեծ յարքայութեան երկնից։ Եւ որ ոք ընկալցի մա-
6 նուկ մի այսպիսի յանուն իմ, զիս ընդունի։ Եւ որ
ոք գայթակղեցուսցէ զմի ի փոքրկանցս յայսցանէ յիս
հաւատացելոց, լաւ է նմա եթէ կախիցի երկան իշոյ
ընդ պարանոց նորա՝ եւ ընկղմեսցի ի խորս ծովու։
7 Վա՜յ աշխարհի ի գայթակղութեանց, հարկ է գալ
գայթակղութեանց. բայց վա՜յ մարդոյն այնմիկ՝ յոյր
8 ձեռն գայցէ գայթակղութիւն։ Եթէ ձեռն քո կամ
ոտն գայթակղեցուցանէ զքեզ, հատ զնա՝ եւ ընկեա
ի քէն, լաւ իցէ քեզ միաձեռանի կամ կաղ մտանել
ի կեանս. քան թէ երկուս ձեռս եւ երկուս ոտս ու-
9 նիցիս, եւ անկանիցիս ի հուրն յաւիտենից։ Եւ եթէ
ակն քո գայթակղեցուցանէ զքեզ, խլեա զնա եւ ըն-
կեա ի քէն. լաւ իցէ քեզ միականի մտանել ի կեանս
քան երկուս աչս ունել՝ եւ անկանել ի գեհեն հրոյն։
10 Զգ. Զգոյշ լերուք՝ մի՛ արհամարհիցէք զմի ի
փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նո-
ցա յերկինս հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ՝

որ յերկինս է: Զի եկն որդի մարդոյ կեցուցանել 11
զկորուսեալն: Զինչ թուի ձեզ. եթէ լինիցի մար- 12
դոյ հարիւր ոչխար՝ եւ մոլորիցի մի ի նոցանէ, ոչ
թողուցու զիննսուն եւ զինն ոչխարն ի լերինս, եւ
երթիցէ խնդրիցէ զմոլորեալն: Եւ եթէ լինիցի 13
գտանել զնա. ամէն ասեմ ձեզ. զի ուրախ լինի ի
վերայ նորա առաւել՝ քան ի վերայ իննսուն եւ
իննունցն, որ չիցեն մոլորեալ: Այսպէս ոչ են կամք 14
առաջի հօր իմոյ որ յերկինս է՝ եթէ կորիցէ մի ի
փոքրկանցս յայսցանէ: Եթէ մեղիցէ քեզ եղբայր 15
քո, երթ յանդիմանեա զնա՝ յորժամ դու եւ նա
միայն իցէք. եթէ լուիցէ քեզ, շահեցար զեղբայր
քո: Ապա թէ ոչ լուիցէ քեզ, առ ընդ քեզ միւս 16
եւս՝ կամ երկուս. զի ի բերանոյ երկուց եւ երից
վկայից հաստատեսցի ամենայն բան: Իսկ եթէ նոցա 17
ոչ լուիցէ, ասասջիր յեկեղեցւոջ. ապա թէ եւ
եկեղեցւոյն ոչ լուիցէ, եղիցի քեզ իբրեւ զհեթա-
նոսն եւ զմաքսաւոր: Ամէն ասեմ ձեզ. զի զոր կապի- 18
ցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, եւ զոր ար-
ձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս: Դար- 19
ձեալ ասեմ ձեզ եթէ երկու ի ձէնջ միաբանիցեն
յերկրի վասն ամենայն իրաց, զինչ եւ խնդրիցեն՝
եղիցի նոցա ի հօրէ իմմէ որ յերկինս է: Զի ուր 20
իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ
եմ ես ի մէջ նոցա: Յայնժամ մատեաւ առ նա 21
Պետրոս՝ եւ ասէ. Տէր՝ քանի՞ցս անգամ եթէ մեղի-
ցէ ինձ եղբայր իմ, եւ թողից նմա. մինչեւ ցեօ՞թն
անգամ: Ասէ ցնա Յիսուս. ոչ ասեմ քեզ՝ թէ մին- 22
չեւ յեօթն անգամ, այլ մինչեւ յեօթանասնեկին
եօթն: Վասն այսորիկ նմանեցաւ արքայութիւն եր- 23
կնից՝ առն թագաւորի, որ կամեցաւ համար առնել
ի մէջ ծառայից իւրոց: Եւ իբրեւ սկսաւ առնուլ, 24
մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ:
Իբրեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա 25

վաճառել տէրն նորա, եւ զկին նորա՝ եւ զորդիս՝
եւ զամենայն որ ինչ եւ ունիցի՝ եւ հատուցանել:
26 Եւ անկեալ ծառայն երկիր պագանէր նմա՝ եւ
ասէր. երկայնամիտ լեր առ իս՝ եւ զամենայն հատու-
27 ցից քեզ: Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ ար-
28 ձակեաց զնա, եւ զփոխն եթող նմա: Եւ ելեալ
ծառայն այն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ
պարտէր նմա հարիւր դահեկան. եւ կալեալ զնա
29 խեղդէր՝ եւ ասէր. հատո ինձ զոր պարտիս: Արդ՝
անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր զնա
եւ ասէր. երկայնամիտ լեր առ իս՝ եւ հատուցից
30 քեզ: Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ արկ զնա ի
31 բանտ՝ մինչեւ հատուսցէ զպարտսն: Իբրեւ տեսին
ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն՝ տրտմեցան յոյժ,
եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն որ ինչ
32 եղեւն: Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ.
ծառայ չար՝ զամենայն զպարտսն թողի քեզ՝ վասն
33 զի աղաչեցեր զիս: Իսկ արդ՝ ո՞չ էր պարտ եւ քեզ
ողորմել ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ
34 ողորմեցայ: Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց
զնա դահճաց, մինչեւ հատուսցէ զամենայն զպարտ-
35 սն: Նոյնպէս եւ Հայր իմ որ յերկինս է՝ արասցէ
ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւ-
րում ի սրտից ձերոց զյանցանս նոցա:

ԳԼՈՒԽ ԺԹ.

1 **ԺԹ.** Եւ եղեւ՝ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս
զայսոսիկ, փոխեցաւ ի Գալիլեէ՝ եւ եկն ի սահմանս
2 Հրէաստանի յայնկոյս Յորդանանու: Եւ գնացին ըզ-
հետ նորա ժողովուրդք բազումք, եւ բժշկեաց զնոսա
3 անդ: Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն փորձէին
զնա եւ ասէին, եթէ արժա՞ն իցէ ումեք արձակել
4 զկին իւր ըստ ամենայն վնասու: Պատասխանի ետ
նոցա եւ ասէ, չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հա-

ստեղծողն ի սկզբանէ՝ արու եւ էգ արար զնոսա, եւ
ասէ: Վասն այսորիկ թողցէ այր զհայր եւ զմայր՝ եւ 5
երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի
մարմին մի: Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մար- 6
մին. արդ՝ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնես-
ցէ: Ասեն ցնա. իսկ Մովսէս ընդէ՞ր պատուիրեաց 7
մեզ տալ թուղթ մեկնելոյ՝ եւ արձակելոյ: Ասէ 8
ցնոսա. Մովսէս վասն խստասրտութեան ձերոյ հրա-
մայեաց ձեզ արձակել զկանայս ձեր. այլ ի սկզբանէ
ոչ եղեւ այնպէս: Բայց ասեմ ձեզ, զի ամենայն որ 9
արձակէ զկին իւր՝ եւ ոչ վասն պոռնկութեան, եւ
առնուցէ այլ՝ շնայ, եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ:
Ասեն ցնա աշակերտքն իւր. եթէ այդպէս ինչ վնաս 10
իցէ ընդ այր եւ ընդ կին. լաւ է չամուսնանալ: Եւ 11
նա ասէ ցնոսա. ոչ ամենեքեան բաւական են այդմ
բանի, այլ որոց տուեալ է: Զի են ներքինիք՝ որ 12
յորովայնէ մօր իւրեանց ծնան այնպէս. եւ են ներ-
քինիք՝ որ ի մարդկանէ եղեն ներքինիք. եւ են ներ-
քինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն
արքայութեան երկնից. որ կարողն է տանել՝ տարցի:
Յայնժամ մատուցան առ նա մանկտի, զի ձեռն դիցէ 13
ի վերայ նոցա՝ եւ աղօթս արասցէ. եւ աշակերտքն
նորա սաստէին նոցա: Ասէ Յիսուս, թոյլ տուք ման- 14
կտւոյդ՝ եւ մի արգելուք զդոսա գալ առ իս, զի այդ-
պիսեացդ է արքայութիւն երկնից: Եւ եդեալ ձեռն 15
ի վերայ նոցա՝ գնաց անտի: Եւ ահա մատուցեալ 16
ոմն առ նա՝ ասէ. վարդապետ բարի՛ զի՞նչ բարի
գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս:
Եւ նա ասէ ցնա. զի՞ հարցանես զիս զբարւոյ, մի է 17
բարի. եթէ կամիս ի կեանսն յաւիտենականս մտա-
նել՝ պահեա զպատուիրանսն: Ասէ ցնա. զո՞րս. ասէ 18
ցնա Յիսուս. զմի՛ սպանաներն՝ եւ մի՛ շնար՝ եւ մի՛
գողանար եւ մի՛ սուտ վկայեր, Պատուեա զհայր քո 19
եւ զմայր, եւ սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո:

20 Ասէ ցնա պատանին. զայդ ամենայն պահեցի ի ման-
21 կութենէ իմմէ. արդ՝ ի՞ւ իւիք պակաս իցեմ: Ասէ
ցնա Յիսուս. եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝
վաճառեա զինչ քո՝ և տուր աղքատաց, և ունի-
22 ցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ: Իբրև լուաւ
պատանին զբանն, գնաց տրտմեալ, զի ունէր ստա-
23 ցուածս բազումս: Ասէ Յիսուս ցաշակերտսն. ամէն
ասեմ ձեզ. զի դժուարաւ մտցէ մեծատուն յար-
24 քայութիւն երկնից: Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին
է մալխոյ մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատան
25 յարքայութիւն Աստուծոյ մտանել: Իբրև լուան
աշակերտքն՝ զարմացան յոյժ և ասեն. իսկ ո՞ կարի-
26 ցէ ապրել: Հայեցաւ ի նոսա Յիսուս՝ և ասէ. առ
ի մարդկանէ այդ անկար է, այլ առ ի յԱստուծոյ
27 ամենայն ինչ զօրաւոր: Յայնժամ պատասխանի ետ
Պետրոս և ասէ ցնա. ահաւասիկ մեք թողաք զամե-
նայն. և եկաք զկնի քո, արդ զի՞նչ լինիցի մեզ:
28 Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ. զի դուք որ
եկիք զկնի իմ, ի միւսանգամ գալստեան՝ յորժամ
նստցի որդի մարդոյ յաթոռ փառաց իւրոց, նստջիք
և դուք յերկոտասան աթոռ՝ դատել զերկոտասան
29 ազգն Իսրայէլի: Եւ ամենայն որ ոք եթող զտուն՝ կամ
զեղբարս կամ զքորս կամ զհայր կամ զմայր՝ կամ զկին
կամ զորդիս՝ կամ զագարակս վասն անուան իմոյ,
հարիւրապատիկ առցէ՝ և զկեանսն յաւիտենականս
30 ժառանգեսցէ: Բազումք եղիցին առաջինք յետինք՝
և յետինք առաջինք:

ԳԼՈՒԽ Ի.

1 Զի նման է արքայութիւն երկնից առն տա-
նուտեառն, որ ել ընդ առաւօտս ի վարձու ունել
2 մշակս յայգի իւր: Եւ արկ վարձս մշակացն աւուրն
3 դահեկան, և առաքեաց զնոսա յայգի իւր: Եւ ելեալ
զերրորդ ժամու՝ ետես այլս զի կային դատարկ ի հրա-

պարապս. Եւ ասէ ցնոսա. երթայք եւ դուք յայգի 4
իմ, եւ որ ինչ արժան իցէ՝ տաց ձեզ. Գնացին եւ 5
նոքա. եւ դարձեալ ելեալ զվեց ժամու եւ զինն
ժամու՝ արար նոյնպէս: Եւ զմետասաներորդ ժամու 6
ելեալ եգիտ այլս՝ զի կային դատարկ, ասէ ցնոսա.
ընդէ՞ր կայք աստ զօրս ցերեկ դատարկ: Ասեն ցնա. 7
զի ոչոք կալաւ զմեզ ի վարձու. ասէ ցնոսա. երթայք
եւ դուք յայգին, եւ որինչ արժան է՝ առնուցուք:
Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ ասէ տէր այգւոյն ցգաւա- 8
ռապետ իւր. կոչեա զմշակսն եւ տուր նոցա վարձս՝
սկսեալ ի յետնոցն մինչեւ ցառաջինսն: Իբրեւ եկին 9
որք զմետասաներորդ ժամուն, առին մէն մի դահե-
կան: Եկեալ եւ առաջինքն՝ համարէին թէ աւելի 10
առնուցուն, եւ առին մէն մի դահեկան եւ նոքա:
Իբրեւ առին, տրտնջէին զտանուտերանէն՝ եւ ասէ- 11
ին. Թէ դոքա յետինքդ մի ժամ գործեցին, եւ հա- 12
սարակորդս մեզ արարեր զդոսա, որ զծանրութիւն
աւուրն բարձաք եւ զտօթ: Նա պատասխանի ետ 13
միում ի նոցանէ՝ եւ ասէ. ընկեր՝ չզրկեմ զքեզ, ո՞չ
դահեկանի միոջ սակ արկեր ընդ իս: Առ զքոյդ՝ եւ 14
երթ, եթէ կամիմ յետնոյս տալ՝ որպէս եւ քեզ:
Եթէ չիցէ՞ ինձ իշխանութիւն յիմս առնել զինչ եւ 15
կամիմ. կամ թէ ակն քո չար է, զի ես առատ եմ: Այս- 16
պէս եղիցին յետինք առաջինք՝ եւ առաջինք յետինք.
զի բազումք են կոչեցեալք, եւ սակաւք են ընտրեալք:

Ձէ. Իբրեւ ելանէր Յիսուս յԵրուսաղէմ, առ- 17
զերկոտասանսն առանձինն, եւ ի ճանապարհին ասէ
ցնոսա: Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ. եւ որդի 18
մարդոյ մատնեսցի քահանայապետիցն՝ եւ դպ-
րաց. Եւ դատապարտեսցեն զնա ի մահ. եւ մատնես- 19
ցեն զնա հեթանոսաց՝ այպանել եւ հարկանել եւ ի
խաչ հանել, եւ յերիր աւուր յարիցէ: Յայնժամ 20
մատեաւ առ նա մայր որդւոցն Զեբեդեայ որդւովքն
իւրովք հանդերձ. երկիր պագանէր՝ եւ խնդրէր ինչ ի

21 նմանէ: Եւ նա ասէ ցնա. զի՞նչ կամիս. ասէ ցնա.
ասա զի նստցին սոքա երկու որդիքս իմ, մի ընդ աջ-
մէ քումմէ՝ եւ մի ընդ ահեկէ յարքայութեան քում:
22 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. ոչ գիտէք զինչ
խնդրէք. կարէ՞ք ըմպել զբաժակն՝ զոր ես ըմպելոցն
եմ, կամ զմկրտութիւն զոր ես մկրտելոցն եմ մկր-
23 տել. ասեն ցնա. կարօղ եմք: Ասէ ցնոսա Յիսուս.
զբաժակն իմ ըմպիցէք, եւ զմկրտութիւն զոր ես
մկրտելոց եմ՝ մկրտիցիք, բայց նստուցանել ընդ աջ-
մէ եւ ընդ ահեկէ իմմէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պա-
24 տրաստեալ է ի Հօրէ իմմէ: Եւ լուեալ տասանցն, բար-
25 կացան ի վերայ երկուցն եղբարց: Յիսուս կոչեաց
զնոսա առ ինքն՝ եւ ասէ. գիտէք՝ զի իշխանք ազգաց
26 տիրեն նոցա, եւ մեծամեծքն իշխեն նոցա: Ոչ այն-
պէս լիցի եւ ի ձերում միջի, այլ որ կամիցի ի ձէնջ
27 մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ: Եւ որ կամիցի ի
28 ձէնջ առաջին լինել եղիցի ձեր ծառայ: Որպէս որդի
մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ՝ այլ պաշտել. եւ
տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց:
29 ԻԸ. Եւ յելանելն նոցա յԵրիքովէ, գնացին զհետ
30 նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա կոյրք երկու նըս-
տէին առ ճանապարհաւն. իբրեւ լուան թէ Յիսուս
անցանէ՝ աղաղակեցին եւ ասեն. ողորմեաց մեզ որդի
31 Դաւթի: Եւ ամբոխն սաստեաց նոցա զի լռեսցեն. եւ
նոքա եւս առաւել աղաղակէին եւ ասէին, Տէր՝ ողոր-
32 մեաց մեզ որդի Դաւթի: Զտեղի առ Յիսուս, կոչեաց
33 եւ ասէ. զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ: Ասեն ցնա.
34 Տէր՝ զի բացցին աչք մեր: Եւ գթացեալ Յիսուս
մերձեցոյց յաչս նոցա, եւ վաղվաղակի տեսին. եւ
գնացին զհետ նորա:

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Իբրեւ մօտ եղեն յԵրուսաղէմ, եւ եկին ի Բեթ-
փագէ ի Բեթանիա մերձ ի լեառն ձիթենեաց. յայն-

ժամ Յիսուս առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց։
Եւ ասէ ցնոսա. Երթայք ի գեօղդ՝ որ առաջի ձեր է, եւ 2
անդէն գտանէք էշ կապեալ եւ յաւանակ ընդ նմին,
լուծէք ածէք ինձ։ Եւ եթէ ոք ասիցէ ինչ ձեզ, ա- 3
սասջիք, եթէ տեառն իւրեանց պիտոյ են. եւ վաղ-
վաղակի առաքեսցէ զնոսա։ Բայց այս ամենայն եղեւ՝ 4
զի լցցի բան մարգարէին՝ որ ասէ. Ասացէք դստեր 5
Սիոնի. ահա թագաւոր քո գայ քեզ հեզ, եւ
հեծեալ յէշ եւ ի յաւանակի իշոյ։ Գնացին աշա- 6
կերտքն, եւ արարին որպէս հրամայեաց նոցա Յիսուս։
Եւ ածին զէշն եւ զյաւանակն, եւ արկին զնոքօք 7
ձորձս եւ նստաւ ի վերայ նոցա։ Եւ բազում ժողո- 8
վուրդք տարածեցին զհանդերձս իւրեանց ի ճանա-
պարհին, եւ այլք հատանէին ոստս ի ծառոց՝ եւ
տարածէին ի ճանապարհին։ Եւ ժողովուրդքն՝ որ 9
առաջին եւ զկնի երթային՝ աղաղակէին եւ ասէին.
օրհնութիւն որդւոյ Դաւթի. օրհնեալ որ գաս յա-
նուն Տեառն, օրհնութիւն ի բարձունս։ Եւ ի մտա- 10
նելն նորա յԵրուսաղէմ՝ դղրդեցաւ քաղաքն ամե-
նայն, եւ ասէ՝ ո՞վ իցէ սա։ Եւ ժողովուրդքն ասեն. 11
սա է մարգարէն Յիսուս որ ի Նազարեթէ Գալիլեա-
ցւոց։ Եւ եմուտ Յիսուս ի տաճարն՝ եւ եհան ար- 12
տաքս զամենեսին, որ վաճառէինն եւ գնէին ի տաճա-
րի անդ. եւ զսեղանս հատավաճառացն կործանեաց՝
եւ զաթոռս աղաւնեվաճառացն։ Եւ ասէ ցնոսա. 13
գրեալ է. տուն իմ տուն աղօթից կոչեսցի. եւ դուք
արարէք զդա այրս աւազակաց։ Եւ մատեան առ նա 14
կոյրք եւ կաղք ի տաճարին, եւ բժշկեաց զնոսա։
Իբրեւ տեսին քահանայապետքն եւ դպիրք զսքանչե- 15
լիսն զոր արար, եւ զմանկունսն որ աղաղակէին ի տա-
ճարին եւ ասէին, օրհնութիւն որդւոյ Դաւթի, բարկա-
ցան. Եւ ասեն ցնա. լսե՞ս զինչ սոքա ասեն. ասէ 16
ցնոսա Յիսուս. այո՛ չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ եթէ ի
բերանոյ տղայոց եւ ստնդիացաց կատարեցեր զօրհնու-

17 թին։ Եւ թողեալ զնոսա ել արտաքոյ քաղաքին ի
Բեթանիա, եւ անդ ագաւ։
18 ԻԲ. Եւ այգուցն իբրեւ դարձաւ անդրէն ի քա-
19 ղաքն՝ քաղցեաւ։ Եւ տեսեալ թզենի մի ի վերայ
ճանապարհին՝ եկն ի նա, եւ ոչինչ եգիտ ի նմա՝
բայց միայն տերեւ. եւ ասէ ցնա. մի այսուհետեւ ի
քէն պտուղ եղիցի յաւիտեան. եւ առժամայն չորա-
20 ցաւ թզենին։ Իբրեւ տեսին աշակերտքն՝ զարմացան
եւ ասեն, թէ զիարդ վաղվաղակի ցամաքեցաւ թզե-
21 նին։ Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. ամէն
ասեմ ձեզ, եթէ ունիցիք հաւատս եւ ոչ երկմտի-
ցէք՝ ոչ միայն թզենւոյդ առնիցէք, այլ թէպէտ
եւ լերինդ ասիցէք. բարձիր եւ անկիր ի ծով, եղիցի։
22 Եւ զամենայն ինչ զոր խնդրիցէք յաղօթս հաւա-
23 տով՝ առնուցուք։ Եւ իբրեւ եկն ի տաճարն, մա-
տեան առ նա՝ մինչդեռ ուսուցանէր, քահանայա-
պետքն եւ ծերք ժողովրդեանն՝ եւ ասեն. որո՞վ իշ-
խանութեամբ առնես զայդ. եւ ո՞վ ետ քեզ զիշխա-
24 նութիւնդ զայդ։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ
ցնոսա. հարցից եւ ես զձեզ բան մի. զոր թէ ասի-
ցէք ինձ, եւ ես ձեզ ասացից՝ որով իշխանութեամբ
25 առնեմ զայս։ Մկրտութիւն Յովհաննու ուստի՞ էր՝
յերկնի՞ց, թէ ի մարդկանէ. եւ նոքա խորհէին ընդ
26 միմեանս եւ ասէին. Եթէ ասեմք յերկնից, ասէ
ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. եւ եթէ
ասեմք ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովրդենէն. զի
ամենեքին զՅովհաննէս իբրեւ զմարգարէ ունէին։
27 Պատասխանի ետուն Յիսուսի եւ ասեն. ոչ գիտեմք.
ասէ ցնոսա եւ նա. եւ ոչ ես ասեմ ձեզ՝ որով իշ-
28 խանութեամբ առնեմ զայս։ Բայց զիա՞րդ թուի
ձեզ. այր մի էին երկու որդիք, եւ մատուցեալ
առ առաջինն ասէ. որդեակ՝ երթ այսօր գործեա
29 յայգւոջ։ Նա պատասխանի ետ եւ ասէ. երթամ
30 տէր՝ եւ ոչ չոգաւ։ Մատուցեալ եւ առ միւսն, եւ

ասէ նոյնպէս. նա պատասխանի ետ եւ ասէ. ոչ կա-
միմ. բայց յետոյ զղջացաւ՝ եւ չոգաւ յայգին։ Արդ՝ 31
ո՞ յերկոցունց արար զկամս հօրն. ասեն՝ յետինն.
ասէ ցնոսա Յիսուս. ամէն ասեմ ձեզ, զի մաքսա-
ւորք եւ պոռնիկք յառաջեսցեն քան զձեզ յարքա-
յութիւն երկնից։ Զի եկն Յովհաննէս առ ձեզ ճա- 32
նապարհաւ արդարութեան եւ ոչ հաւատացէք նմա.
եւ մաքսաւորք եւ պոռնիկք հաւատացին նմա, եւ
դուք տեսէք՝ եւ ոչ զղջացարուք յետոյ հաւատալ նմա։

ԻԳ. Այլ առակ լուարուք. այր մի էր տանու- 33
տէր, որ տնկեաց այգի, եւ ցանգով պատեաց զնա,
եւ փորեաց ի նմա հնձան, եւ շինեաց աշտարակ.
եւ ետ զնա մշակս, եւ գնաց ի տար աշխարհ։
Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծա- 34
ռայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։ Եւ 35
կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին՝
զոմն սպանին՝ զոմն քարկոծեցին։ Դարձեալ առա- 36
քեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, եւ
արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա 37
զորդի իւր՝ եւ ասէ. թերեւս ամաչեսցեն յորդւոյ
աստի իմմէ։ Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն 38
ընդ միտս. սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա,
եւ կալցուք զժառանգութիւն սորա։ Եւ առեալ 39
հանին զնա արտաքոյ քան զայգին՝ եւ սպանին։ Արդ՝ 40
յորժամ եկեսցէ տէր այգւոյն, զի՞նչ արասցէ մշա-
կացն այնոցիկ։ Ասեն ցնա. զչարսն չարաչար կորուսցէ. 41
եւ զայգին տացէ այլոց մշակաց, որք տայցեն նմա
զպտուղս ի ժամու իւրեանց։ Ասէ ցնոսա Յիսուս. 42
չիցէ՞ երբեք ընթերցեալ ձեր ի գիրս. զվէմն՝ զոր
անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան. ի
Տեառնէ եղեւ այս, եւ է սքանչելի յաչս մեր։ Վասն 43
այսորիկ ասեմ ձեզ, զի բարձցի ի ձէնջ արքայու-
թիւն Աստուծոյ, եւ տացի ազգի՝ որ առնիցէ զպ-
տուղս նորա։ Եւ որ անկցի ի վերայ վիմիս այսորիկ՝ 44

45 փշրեսցի, եւ յոյր վերայ անկցի՝ հոսեսցէ զնա: Իբրեւ
լուան քահանայապետքն եւ դպիրք եւ փարիսեցիք
46 զառակս նորա, գիտացին թէ վասն նոցա ասաց: Եւ
խնդրէին զնա ունել, բայց երկեան ի ժողովրդոցն.
քանզի իբրեւ զմարգարէ ունէին զնա:

ԳԼՈՒԽ ԻԲ.

1 ԻԳ. Պատասխանի ետ Յիսուս, եւ
2 ասէ ցնոսա առակօք: Նմանեցաւ արքայութիւն երկ-
նից առն թագաւորի՝ որ արար հարսանիս որդւոյ իւ-
3 րում. Եւ առաքեաց զծառայս իւր կոչել զհրաւի-
4 րեալսն ի հարսանիս. եւ ոչ կամէին գալ: Դար-
ձեալ առաքեաց այլ ծառայս՝ եւ ասէ. ասացէք հրա-
ւիրելոցն. ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի. զուա-
րակք իմ եւ պարարակք զենեալ են, եւ ամենայն
5 ինչ պատրաստ է. եկայք ի հարսանիս: Եւ նոքա
յուլացեալ գնացին՝ ոմն յագարակ իւր, եւ ոմն ի
6 վաճառ իւր, Եւ այլքն կալան զծառայսն նորա, թշնամա-
7 նեցին, եւ սպանին: Իսկ թագաւորն իբրեւ լուաւ՝ բար-
կացաւ, եւ առաքեաց զզօրս իւր եւ սատակեաց զսպա-
8 նողսն զայնոսիկ, եւ զքաղաքն նոցա այրեաց: Յայն-
ժամ ասէ ցծառայս իւր. հարսանիքս պատրաստ են,
9 եւ հրաւիրեալքն չէին արժանի: Արդ՝ երթայք յանցս
ճանապարհաց, եւ զորս միանգամ գտանիցէք՝ կոչե-
10 ցէք ի հարսանիս: Եւ ելեալ ծառայքն ի ճանա-
պարհս ժողովեցին զամենեսեան զորս եւ գտին՝ զչարս
11 եւ զբարիս. եւ լցան հարսանիքն բազմականօք: Եւ
մտեալ թագաւորն հայել զբազմականօքն, ետես
անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց:
12 Եւ ասէ ցնա, ընկեր՝ զիա՞րդ մտեր այսր. զի ոչ ու-
նէիր հանդերձ հարսանեաց. եւ նա պապանձեցաւ:
13 Յայնժամ ասէ թագաւորն ցպասաւորսն. կապեցէք
զդորա զոտս եւ զձեռս՝ եւ հանէք զդա ի խաւարն
արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց:

Զի բազումք են կոչեցեալք եւ սակաւք ընտր- 14
եալք:
ԷԵ· Յայնժամ գնացեալ փարիսեցիքն, առին 15
խորհուրդ զնմանէ՝ թէ որպէս գնիցեն նմա որոգայթ
բանիւք: Եւ առաքեն առ նա զաշակերտս իւրեանց 16
հերովդիանոսօքն հանդերձ, եւ ասեն. վարդապետ՝
գիտեմք զի ճշմարիտ ես, եւ զճանապարհն Աստուծոյ
ճշմարտութեամբ ուսուցանես, եւ ոչ է քեզ փոյթ
զումեքէ, եւ ոչ հայիս յերեսս մարդոյ. Արդ՝ ասա 17
մեզ, զի՞րդ թուի քեզ. պա՞րտ է հարկս տալ կայ-
սեր՝ թէ ոչ: Գիտաց Յիսուս զխորամանկութիւն 18
նոցա, եւ ասէ. զի՞ փորձէք զիս կեղծաւորք. ցուցէք 19
ինձ զդահեկան հարկին. եւ նոքա մատուցին նմա
դահեկան մի: Եւ ասէ ցնոսա. ո՞յր է պատկերս այս՝ 20
կամ գիր: Ասեն՝ կայսեր. յայնժամ ասէ ցնոսա. եր- 21
թայք՝ տուք զկայսեր կայսեր, եւ զԱստուծոյ Աստուծոյ:
Իբրեւ լուան՝ զարմացան. եւ թողին զնա եւ գնացին: 22
Յայնմ աւուր մատեան առ նա սադուկեցիքն, որ ա- 23
սէին՝ թէ չիք յարութիւն: Հարցին ցնա, եւ ասեն. 24
վարդապետ՝ Մովսէս ասաց. եթէ ոք մեռցի անորդի՝
արասցէ զկին նորա եղբայր իւր, եւ յարուսցէ զաւակ
եղբօր իւրում: Էին առ մեզ եղբարք եւթն. առաջինն 25
արար կին եւ մեռաւ. եւ զի ոչ ունէր զաւակ, ե-
թող զկին իւր եղբօր իւրում: Նոյնպէս եւ երկրորդն 26
եւ երրորդն, մինչեւ ցեօթներորդն: Յետ ամենեցուն 27
մեռաւ եւ կինն: Արդ ի յարութեան ո՞յր յեօթանցն 28
եղիցի նա կին. զի ամենեքին կալան զնա կին: Պա- 29
տասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. մոլորեալք ոչ
գիտէք զգիրս եւ ոչ զզօրութիւն Աստուծոյ: Զի ի 30
յարութեան ոչ կանայս առնեն եւ ոչ արանց լինին,
այլ են իբրեւ զհրեշտակս յերկինս: Բայց վասն յա- 31
րութեան մեռելոց չէ՞ք ընթերցեալ զասացեալն ձեզ
յԱստուծոյ: Ես եմ Աստուած Աբրահամու, Աստու- 32
ած Սահակայ եւ Աստուած Յակոբայ. եւ չէ Աստու-

33 ած՝ Աստուած մեռելոց այլ կենդանեաց: Իբրեւ
լուան ժողովուրդքն զարմանային ընդ վարդապետու-
34 թիւն նորա: Իսկ փարիսեցիքն իբրեւ լուան եթէ
պապանձեցոյց զսադուկեցիսն, ժողովեցան ի միասին:
35 Եւ եհարց մի ոմն ի նոցանէ զնա փորձելով, եւ ասէ.
36 Վարդապետ՝ ո՞ր պատուիրան մեծ է յօրէնս: Եւ
37 Յիսուս ասէ ցնա. սիրեսցես զՏէր Աստուած քո
յամենայն սրտէ քումմէ եւ յամենայն անձնէ քու-
38 մմէ եւ յամենայն մտաց քոց: Այս է մեծն եւ առա-
39 ջին պատուիրան: Եւ երկրորդն նման սմին. սիրեսցես
40 զընկեր քո՝ իբրեւ զանձն քո: Յայս երկուս պատուի-
րանս ամենայն օրէնք եւ մարգարէք կախեալ կան:
41 Եւ ի ժողովել փարիսեցւոցն՝ եհարց ցնոսա Յիսուս
42 եւ ասէ: Զիա՞րդ թուի ձեզ վասն Քրիստոսի, ո՞յր
43 որդի է, ասեն ցնա. Դաւթի: Ասէ ցնոսա Յիսուս.
իսկ զիա՞րդ Դաւիթ հոգւովն կոչէ զնա Տէր՝ եւ ասէ:
44 Ասաց Տէր ցՏէր իմ. նիստ ընդ աջմէ իմմէ՝ մինչեւ ե-
45 դից զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Իսկ ե-
թէ Դաւիթ զնա Տէր կոչէ՝ զիա՞րդ որդի նորա իցէ:
46 Եւ ոչ ոք կարէր տալ նմա պատասխանի բան մի, եւ
ոչ իշխէր ոք յայնմ օրէ հարցանել զնա եւ ոչինչ:

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 ԻԳ. Յայնժամ խօսեցաւ Յիսուս ընդ ժողո-
2 վուրդսն՝ եւ ընդ աշակերտսն իւր, եւ ասէ: Յա-
3 թոռն Մովսէսի նստան դպիրքն եւ փարիսեցիք. Զա-
մենայն ինչ՝ զոր ասիցեն ձեզ՝ արարէք եւ պահե-
ցէք, բայց ըստ գործոցն նոցա մի առնէք. զի ասեն եւ
4 ոչ առնեն: Կապեն բեռինս ծանունս եւ դժուարա-
կիրս, եւ դնեն ի վերայ ուսոց մարդկան. եւ մատամբ
5 իւրեանց ոչ կամին շարժել զնոսա: Եւ զամենայն
զգործս իւրեանց առնեն ի ցոյցս մարդկան, լայնեն
զգրապանակս իւրեանց, եւ երկայնեն զքղանցս հան-
6 դերձից իւրեանց: Սիրեն զյառաջագահս յընթրիս,

եւ զնախաթոռս ի ժողովուրդս՝ եւ զողջոյնս ի հրա-
պարակս: Եւ կոչել ի մարդկանէ՝ ռաբբի ռաբբի: 7
Բայց դուք մի զոք կոչէք վարդապետ, զի մի է ձեր 8
ուսուցիչ· եւ ամենեքին դուք եղբարք էք: Եւ հայր 9
մի կոչէք ձեզ յերկրի, զի ձեր մի է Հայր՝ որ յերկին-
սըն է: Եւ մի կոչեցիք ուսուցիչք, զի ուսուցիչ ձեր 10
Քրիստոս է: Եւ մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր: 11
Որ բարձրացուցանէ զանձն խոնարհեսցի, եւ որ խո- 12
նարհեցուցանէ զանձն բարձրասցի: Վա՜յ ձեզ դպրաց 13
եւ փարիսեցւոց կեղծաւորաց· զի փակէք զարքայու-
թիւնն երկնից առաջի մարդկան· դուք ոչ մտանէք, եւ
որոց մտանենն՝ չտայք թոյլ մտանել: Վա՜յ ձեզ 14
դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց· զի ուտէք
զտունս այրեաց· պատճառանօք երկարէք զաղօթս,
վասն զի աւելի դատաստան ընդունիցիք: Վա՜յ ձեզ 15
դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց· զի յածիք ընդ
ծով եւ ընդ ցամաք առնել եկամուտ մի· եւ յորժամ
լինիցի, առնէք զնա որդի գեհենի կրկին եւս քան
զձեզ: Վա՜յ ձեզ առաջնորդք կոյրք, զի ասէք՝ որ 16
երդնու ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին
որ ի տաճարին է՝ արժան է: Մորոսք եւ կոյրք, զի՞նչ 17
մեծ է, ոսկի՞ն՝ եթէ տաճարն՝ որ սրբէ զոսկին: Եւ որ 18
երդնու ի սեղանն՝ չէ ինչ, բայց որ երդնու ի պատա-
րագն որ ի վերայ նորա է՝ արժան է: Յիմարք եւ կոյրք, 19
զի՞նչ մեծ է, պատարա՞գն, եթէ սեղանն՝ որ սրբէ
զպատարագն: Իսկ արդ՝ որ երդնու ի սեղանն, եր- 20
դնու ի նա՝ եւ յամենայն որ ի վերայ նորա է· եւ որ 21
երդնու ի տաճարն, երդնու ի նա՝ եւ ի բնակիչն նո-
րա· եւ որ երդնու յերկինս, երդնու յաթոռն Աս- 22
տուծոյ՝ եւ յայն որ նստի ի վերայ նորա: Վա՜յ ձեզ 23
դպրաց եւ փարիսեցւոց կեղծաւորաց· զի տասանոր-
դէք զանանուխ եւ զսամիթ եւ զչաման, եւ թողէք
զծանր ծանր օրինացն զդատաստան եւ զողորմութիւն
եւ զհաւատս· զայս արժան էր առնել՝ եւ զայն չթո-

24 ղուլ: Առաջնորդք կոյրք, որ զմժղուկս քամէք՝ եւ
25 զուղտս կլանէք: Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց
կեղծաւորաց, զի սրբէք զարտաքին զբաժակին եւ
զսկաւառակի, եւ ի ներքոյ լի են յափշտակութեամբ
26 եւ անիրաւութեամբ: Փարիսեցի կոյր՝ սրբեա նախ
զներքին բաժակին եւ զսկաւառակին, զի լինիցի եւ
27 արտաքինն նոցա սուրբ: Վայ ձեզ դպրաց եւ փարի-
սեցւոց կեղծաւորաց. զի նման էք գերեզմանաց բը-
ռելոց. որ արտաքոյ երեւին գեղեցիկք՝ եւ ի ներքոյ լի
են ոսկերօք մեռելոց եւ ամենայն պղծութեամբ:
28 Նոյնպէս եւ դուք արտաքոյ երեւիք մարդկան արդարք
եւ ի ներքոյ լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէնու-
29 թեամբ: Վայ ձեզ դպրաց եւ փարիսեցւոց կեղծա-
ւորաց, զի շինէք զշիրիմս մարգարէից եւ զարդարէք
30 զգերեզմանս արդարոց: Եւ ասէք, եթէ էաք յաւուրս
հարցն մերոց, ոչ հաղորդէաք արեան մարգարէիցն:
31 Ապա ուրեմն վկայէք զանձանց՝ եթէ որդիք էք այնո-
32 ցիկ որ կոտորէին զմարգարէսն: Եւ դուք լցէք զչափ
33 հարցն ձերոց: Օձք՝ ծնունդք իժից, զիա՞րդ փախնու-
34 ցուք ի դատաստանէ գեհենին: Վասն այդորիկ ահա-
ւասիկ ես առաքեմ առ ձեզ մարգարէս եւ իմաստունս
եւ դպիրս. ի նոցանէ սպանանիցէք եւ ի խաչ
հանիցէք. եւ ի նոցանէ տանջիցէք ի ժողովուրդս
35 ձեր, եւ հալածիցէք ի քաղաքէ ի քաղաք: Որպէս
զի եկեսցէ ի վերայ ձեր ամենայն արիւն արդար հե-
ղեալ յերկրի. յարենէն Աբելի արդարոյ մինչեւ ցա-
րիւնն Զաքարիայ որդւոյ Բարաքեայ՝ զոր սպանէք ընդ
36 մէջ տաճարին եւ սեղանոյ: Ամէն ասեմ ձեզ. եկեսցէ
37 այն ամենայն ի վերայ ազգիս այսորիկ: Երուսաղէմ,
Երուսաղէմ. որ կոտորէիր զմարգարէս՝ եւ քարկոծ
անէիր զառաքեալսն առ քեզ. քանի՜ցս անգամ կա-
մեցայ ժողովել զմանկունս քո՝ զոր օրինակ ժողովէ
հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցարուք:
38 Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր աւերակ: Բայց

ասեմ ձեզ՝ թէ ոչ եւս տեսանիցէք զիս, մինչեւ ասի- 39
ցէք, օրհնեալ եկեալն յանուն Տեառն:

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԻԴ. Եւ ելեալ արտաքս Յիսուս ի տաճարէն 1
գնայր. եւ մատեան աշակերտքն ցուցանել նմա զշի-
նուածս տաճարին: Եւ նա պատասխանի ետ եւ ասէ 2
ցնոսա. տեսանէք զայդ ամենայն, ամէն ասեմ ձեզ.
ոչ մնասցէ այդր քար ի քարի վերայ որ ոչ քակտես-
ցի: Եւ մինչ նստէր ի լերինն ձիթենեաց, մատեան 3
առ նա աշակերտքն առանձինն եւ ասեն. ասա մեզ՝
երբ լինիցի այդ, եւ կամ զի՞նչ նշան իցէ քոյոյ գա-
լստեանդ եւ վախճանի աշխարհիս: Պատասխանի ետ 4
Յիսուս եւ ասէ ցնոսա. զգոյշ լերուք՝ մի գուցէ ոք
զձեզ խաբիցէ: Զի բազումք գայցեն յանուն իմ, եւ 5
ասիցեն թէ ես եմ Քրիստոսն. եւ զբազումս մոլորե-
ցուցանիցեն: Լսելոց էք պատերազմունս՝ եւ զհամ- 6
բաւս պատերազմաց. զգոյշ լերուք մի խռովեսջիք, զի
պարտ է լինել այնմ ամենայնի այլ չեւ է կատարած:
Յարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն ի 7
թագաւորութեան. եւ եղիցին սովք եւ սրա-
ծութիւնք եւ սասանութիւնք ի տեղիս տեղիս: Ա- 8
կայն եւ այն ամենայն սկիզբն է երկանց: Յայնժամ 9
մատնեսցեն զձեզ ի նեղութիւնս, եւ սպանանիցեն
զձեզ. եւ եղիջիք ատեցեալք յամենայն ազգաց վասն
անուան իմոյ: Եւ յայնժամ գայթակղեսցին բազումք 10
եւ զմիմեանս մատնեսցեն եւ ատեսցեն զմիմեանս: Եւ 11
բազում սուտ մարգարէք յարիցեն, եւ զբազումս մո-
լորեցուսցեն: Եւ վասն բազմանալոյ անօրէնութեան, 12
ցամաքեսցի սէր բազմաց: Բայց որ համբերեսցէ իս- 13
պառ, նա կեցցէ: Եւ քարոզեսցի աւետարանս արքայ- 14
ութեան ընդ ամենայն տիեզերս ի վկայութիւն ամե-
նայն հեթանոսաց, եւ ապա եկեսցէ կատարած: Արդ- 15
յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերածոյն, որ

ասացեալն է ի ձեռն Դանիէլի մարգարէի, զի կայցէ ի
տեղւոջն սրբութեան, որ ընթեռնուն ի միտ առցէ:
16 Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փախիցեն ի լե-
17 ռինս, եւ որ ի տանիս կայցէ, մի իջցէ առնուլ ինչ ի
18 տանէ իւրմէ. եւ որ յանդի իցէ, մի դարձցի յետս
19 առնուլ զձորձս իւր: Բայց վայ իցէ յղեաց եւ սրն-
20 տուաց յաւուրսն յայնոսիկ: Յաղօթս կացէք՝ զի մի
լինիցի փախուստն ձեր ձմերանի, եւ մի ի շաբաթու.
21 Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ
եղեւ ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչեւ ցայժմ,
22 եւ ոչ այլ լիցի: Եւ եթէ ոչ կարճէին աւուրքն այ-
նոքիկ, ոչ ապրէր ամենայն մարմին. բայց վասն ըն-
23 տրելոցն կարճեսցին աւուրքն այնոքիկ: Յայնժամ թէ
ոք ասիցէ ձեզ՝ ահաւասիկ աստ է Քրիստոսն կամ
24 անդ, մի հաւատայցէք. Զի յարիցեն սուտ Քրիս-
տոսք եւ սուտ մարգարէք. եւ տայցեն նշանս մեծա-
մեծս եւ արուեստս, մինչեւ մոլորեցուցանել՝ թէ
25 հնար ինչ իցէ եւ զընտրեալսն: Ահա յառաջագոյն
26 ասացի ձեզ: Ապա թէ ասիցեն ձեզ. ահաւանիկ յա-
նապատի է, մի ելանիցէք, եւ թէ ահա յշտեմարանս
27 է, մի հաւատայցէք: Զի որպէս փայլակն որ ելանէ
յարեւելից եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս
28 եղիցի գալուստն որդւոյ մարդոյ: Զի ուր գէշն իցէ,
29 անդր ժողովեսցին արծուիք: Վաղվաղակի յետ նե-
ղութեան աւուրցն այնոցիկ արեգակն խաւարեսցի, եւ
լուսին ոչ տացէ զլոյս իւր, եւ աստեղք անկցին յերկ-
30 նից, եւ զօրութիւնք երկնից շարժեսցին: Եւ ապա
երեւեսցի նշան որդւոյ մարդոյ յերկինս, եւ յայնժամ
կոծեսցին ամենայն ազգք երկրի, եւ տեսցեն զորդի
մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ եւ
31 փառօք բազմօք: Եւ առաքեսցէ զհրեշտակս իւր փողով
մեծաւ, եւ ժողովեսցեն զընտրեալս նորա ի չորից հող-
32 մոց ի ծագաց երկնից մինչեւ ի ծագս նոցա: Ի թզե-
նւոյ անտի ուսարուք զառակն. զի յորժամ նորա ոստքն

կակղասցին եւ տերեւն ցուսցի, գիտէք թէ մերձ է
ամառն: Նոյնպէս եւ դուք յորժամ տեսանիցէք զայս 33
ամենայն, գիտասջիք թէ մերձ է ի դուրս: Ամէն ա- 34
սեմ ձեզ՝ եթէ ոչ անցցէ ազգս այս՝ մինչեւ այս ամե-
նայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք իմ 35
մի անցցեն: Բայց վասն աւուրն այնորիկ եւ ժամու, 36
ոչ ոք գիտէ, ոչ հրեշտակք երկնից՝ եւ ոչ որդի՝ բայց
միայն Հայր: Այլ որպէս աւուրքն Նոյի, այնպէս եղի- 37
ցի գալուստն որդւոյ մարդոյ: Զի որպէս էին յաւուր- 38
սն որ յառաջ քան զջրհեղեղն, ուտէին եւ ըմպէին՝
կանայս առնէին եւ արանց լինէին, մինչեւ յօրն՝ յո-
րում եմուտ Նոյ ի տապանն. Եւ ոչ գիտացին՝ մին- 39
չեւ եկն ջրհեղեղն եւ եբարձ զամենեսին, այնպէս եղի-
ցի եւ գալուստն որդւոյ մարդոյ: Յայնժամ թէ իցեն 40
երկու յագարակի, մին առնուցու եւ միւսն թողուցու:
Եւ եթէ երկու աղայցեն ի մի երկանս, մին առնուցու եւ 41
միւսն թողուցու: Արթուն կացէք՝ զի ոչ գիտէք յո- 42
րում ժամու Տէրն ձեր գայ: Զայն գիտասջիք, եթէ 43
գիտէր տանուտէր՝ յորում պահու գող գայ. սկէր՝ եւ
ոչ տայր ական հատանել զտանն իւրոյ: Վասն այ- 44
սորիկ եւ դուք եղերուք պատրաստք. զի յորում ժա-
մու ոչ ակն ունիցիք՝ գայ որդի մարդոյ: Իսկ ո՞վ իցէ 45
հաւատարիմ ծառայ եւ իմաստուն, զոր կացոյց տէր
իւր ի վերայ ծառայից իւրոց՝ տալ նոցա կերակուր ի
ժամու: Երանի՜ իցէ ծառային այնմիկ՝ զոր եկեալ 46
տէրն գտանիցէ այնպէս արարեալ: Ամէն ասեմ ձեզ, 47
զի ի վերայ ամենայն ընչից իւրոց կացուսցէ զնա: Ա- 48
պա թէ ասիցէ ծառայն չար ի սրտի իւրում, տէր իմ
յամէ գալ, Եւ սկսանիցի հարկանել զծառայակիցս 49
իւր ուտիցէ եւ ըմպիցէ ընդ արբեցողս: Գայցէ տէր 50
ծառային այնորիկ՝ յաւուր յորում ոչ ակն ունիցի,
եւ ի ժամու յորում ոչ գիտիցէ. Եւ կտրեսցէ զնա 51
ընդ մէջ, եւ զբաժին նորա ընդ կեղծաւորս դիցէ. անդ
եղիցի լալ եւ կրճել ատամանց:

ԳԼՈՒԽ ԻԵ.

1 Յայնժամ նմանեսցի արքայութիւնն երկնից
տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց
2 ելին ընդ առաջ փեսային եւ հարսին: Հինգն ի նո-
3 ցանէ յիմարք էին՝ եւ հինգն իմաստունք: Յիմարքն
առին զլապտերսն, եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին:
4 Իսկ իմաստունքն առին եւ ձէթ ամանօք ընդ լապտերս
5 իւրեանց: Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենե-
6 քեան եւ ի քուն մտին: Եւ ի մէջ գիշերի եղեւ
բարբառ, ահա փեսայ գայ ելէք ընդ առաջ նորա:
7 Յայնժամ յարեան ամենայն կուսանքն՝ եւ կազմեցին
8 զլապտերս իւրեանց: Ասեն յիմարքն ցիմաստունսն,
տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապ-
9 տերքս մեր: Պատասխանի ետուն իմաստունքն՝ եւ ա-
սեն. գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական, այլ եր-
10 թայք ի վաճառականս՝ եւ գնեսջիք ձեզ: Իբրեւ նո-
քա գնացին գնել՝ եւ եկն փեսայն, եւ պատրաստքն մտին
11 ընդ նմա ի հարսանիսն՝ եւ փակեցաւ դուռնն: Յետոյ
գան եւ այլ կուսանքն՝ եւ ասեն. տէր տէր՝ բաց մեզ:
12 Նա պատասխանի ետ եւ ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ
13 ոչ գիտեմ զձեզ: Արթուն կացէք զի ոչ գիտէք զօրն
14 եւ ոչ զժամն: Որպէս այր մի գնացեալ ի տար աշ-
խարհ, կոչեաց զծառայս իւր՝ եւ ետ նոցա զինչս իւր:
15 Ումեմն ետ հինգ քանքար՝ եւ ումեմն երկուս՝ եւ ու-
մեմն մի, իւրաքանչիւր ըստ իւրում կարի, եւ գնաց:
16 Չոգաւ վաղվաղակի՝ որ առ զհինգն՝ գործեաց նոքօք,
17 եւ շահեցաւ այլ եւս հինգ: Նոյնպէս եւ որ զերկուսն՝
18 շահեցաւ այլ եւս երկուս: Եւ որ զմին առ՝ գնաց փո-
րեաց զերկիր, եւ թաքոյց զարծաթ տեառն իւրոյ:
19 Յետ բազում ժամանակի գայ տէր ծառայիցն այնո-
20 ցիկ՝ եւ առնէ համարս ի մէջ նոցա: Եւ մատուցեալ
որ զհինգ քանքարն առ, մատոյց այլ եւս հինգ քան-
քար՝ եւ ասէ. տէր՝ հինգ քանքար ետուր ցիս, արդ՝

աւասիկ հինգ այլ եւս քանքար ի վերայ շահեցայ:
Ասէ ցնա տէրն իւր. ազնի՛ւ ծառայ բարի եւ հաւա- 21
տարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ
ես՝ ի վերայ բազմաց կացուցից զքեզ. մուտ
յուրախութիւն տեառն քո: Մատուցեալ եւ որ 22
զերկուս քանքարսն առեալ էր՝ եւ ասէ. տէր՝ երկուս
քանքարս ետուր ցիս, աւասիկ երկուս եւս այլ
քանքարս՝ զոր ի վերայ շահեցայ: Ասէ ցնա տէրն իւր. 23
ազնի՛ւ ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի
սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացու-
ցից զքեզ. մուտ յուրախութիւն տեառն քո: Մա- 24
տուցեալ եւ որ զմի քանքարն առեալ էր, ասէ.
տէր՝ գիտէի, զի այր մի խիստ ես, հնձես՝ զոր ոչ սեր-
մանեցեր, եւ ժողովես՝ ուստի ոչ սփռեցեր. երկեայ՝ 25
գնացի եւ թաքուցի զքանքարս քո յերկրի. արդ՝ ա-
ւասիկ քոյդ ցքեզ: Պատասխանի ետ տէրն՝ եւ ասէ 26
ցնա. ծառայ չար եւ վատ, գիտէիր թէ հնձեմ՝ ու-
տի ոչ սերմանեցի, եւ ժողովեմ՝ ուստի ոչ սփռեցի,
Պարտ էր քեզ արկանել զարծաթդ իմ ի սեղանա- 27
ւորս, եւ եկեալ ես տոկոսեօք պահանջէի զիմն: Արդ՝ 28
առէք ի դմանէ զքանքարդ՝ եւ տուք այնմ որ ունիցի
զտասն քանքարսն: Զի ամենայնի որ ունիցի՝ տացի եւ յա- 29
ւելցի, եւ որ ոչն ունիցի՝ եւ զոր ունիցին, բարձցի ի նմանէ:
Եւ զծառայդ անպիտան հանէք ի խաւարն արտաքին. 30
անդ եղիցի լալ եւ կրճտել ատամանց: Եւ յորժամ 31
եկեսցէ որդի մարդոյ փառօք իւրովք՝ եւ ամենայն
հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փա-
ռաց իւրոց: Եւ ժողովեսցին առաջի նորա ամենայն 32
ազգք, եւ մեկնեսցէ զնոսա ի միմեանց, որպէս հովիւ-
ղի մեկնէ զօդիս յայծեաց: Եւ կացուսցէ զօդիսն 33
ընդ աջմէ իւրմէ՝ եւ զայծիսն ի ձախմէ: Յայնժամ 34
ասասցէ թագաւորն ցայնոսիկ՝ որ ընդ աջմէն իցեն.
եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք զպատրաս-
տեալ ձեզ զարքայութիւն ի սկզբանէ աշխարհի:

35 Զի քաղցեայ՝ եւ ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ եւ
36 արբուցէք ինձ. օտար էի՝ եւ ժողովեցէք զիս. Մերկ՝
եւ զգեցուցէք զիս. հիւանդ էի եւ տեսէք զիս. ի
37 բանտի էի՝ եւ եկիք առ իս: Յայնժամ պատասխանի
տացեն նմա արդարքն եւ ասասցեն. տէր երբ տե-
սաք զքեզ քաղցեալ՝ եւ կերակրեցաք, կամ ծարաւի
38 եւ արբուցաք: Ե՞րբ տեսաք զքեզ օտար՝ եւ ժողո-
39 վեցաք, կամ մերկ՝ եւ զգեցուցաք: Ե՞րբ տեսաք
զքեզ հիւանդ՝ կամ ի բանտի, եւ եկաք առ քեզ:
40 Պատասխանի տացէ թագաւորն՝ եւ ասասցէ ցնոսա.
ամէն ասեմ ձեզ, որովհետեւ արարէք միում յեղ-
41 բարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք: Յայնժամ
ասասցէ եւ ցայնոսիկ՝ որ ընդ ահեկէն իցեն. երթայք
յինէն անիծեալք ի հուրն յաւիտենական, որ պա-
42 տրաստեալ է սատանայի եւ հրեշտակաց նորա: Զի
քաղցեայ՝ եւ ոչ ետուք ինձ ուտել, ծարաւեցի՝ եւ
43 ոչ արբուցէք զիս. օտար էի՝ եւ ոչ ժողովեցէք զիս,
մերկ էի՝ եւ ոչ զգեցուցէք զիս, հիւանդ եւ ի բան-
44 տի՝ եւ ոչ տեսէք զիս: Յայնժամ պատասխանի տա-
ցեն եւ նոքա՝ եւ ասասցեն. տէր՝ երբ տեսաք զքեզ
քաղցեալ՝ կամ ծարաւի կամ օտար կամ մերկ կամ
հիւանդ կամ ի բանտի, եւ ոչ պաշտեցաք զքեզ:
45 Յայնժամ պատասխանի տացէ նոցա՝ եւ ասասցէ.
ամէն ասեմ ձեզ, որովհետեւ ոչ արարէք միում ի
46 փոքրկանցս յայսցանէ՝ եւ ոչ ինձ արարէք: Եւ եր-
թիցեն նոքա ի տանջանս յաւիտենականս, եւ ար-
դարքն ի կեանս յաւիտենականս:

ԳԼՈՒԽ ԻԶ.

1 Եւ եղեւ իբրեւ կատարեաց Յիսուս զբանս զայ-
2 սոսիկ, ասէ ցաշակերտսն իւր: Գիտէ՞ք, զի յետ եր-
կուց աւուրց զատիկ լինի. եւ որդի մարդոյ մատնի ի
խաչ ելանել:
3 ՎԵՐՋ. Յայնժամ ժողովեցան քահանայապետքն

եւ դպիրքն եւ ծերք ժողովրդեանն ի սրահ քահա-
նայապետին՝ որում անուն էր Կայիափա. Եւ արարին 4
խորհուրդ՝ զի նենգութեամբ կալցին զՅիսուս եւ
սպանցեն: Բայց ասէին, թէ մի ի տօնի աստ՝ զի մի 5
խռովութիւն լինիցի ի ժողովրդեանն: Իբրեւ եղեն Յի- 6
սուս ի Բեթանիա ի տուն Սիմոնի բորոտի, Մատեաւ 7
առ նա կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ ծանրագնի, եւ
թափեաց ի գլուխ նորա ի բազմականին: Իբրեւ տե- 8
սին աշակերտքն՝ բարկացան՝ եւ ասեն. ընդէ՞ր է կո-
րուստ այդ իւղոյդ: Զի մարթ էր վաճառել զդա մե- 9
ծագնի՝ եւ տալ աղքատաց: Գիտաց Յիսուս եւ ասէ 10
ցնոսա. զի՞ աշխատ առնէք զկինդ, գործ մի բարի գոր-
ծեաց դա յիս: Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ 11
ունիք, բայց զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք: Ար- 12
կանել դորա զիւղդ ի մարմին իմ, առ ի թաղելոյ զիս
նշանակեաց: Բայց ամէն ասեմ ձեզ, զի ուր եւ քա- 13
րոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ՝ խօ-
սեսցի եւ զոր արար դա ի յիշատակ դորա: Յայնժամ 14
գնաց մի յերկոտասանիցն անուանեալ Յուդա Սկարի-
ովտացի՝ առ քահանայապետսն, եւ ասէ. Զի՞նչ 15
կամիք տալ ինձ, եւ ես մատնեցից զնա ձեզ. եւ նո-
քա կշռեցին նմա երեսուն արծաթի: Եւ յայնմ հե- 16
տէ խնդրէր պարապ՝ զի մատնեսցէ զնա նոցա:

Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն մա- 17
տեան աշակերտքն առ Յիսուս եւ ասեն. ո՞ւր կամիս
զի պատրաստեսցուք քեզ ուտել զպասեքն: Եւ նա 18
ասէ ցնոսա. երթայք ի քաղաքն առ այս անուն, եւ
ասացէք ցնա. վարդապետ ասէ, ժամանակ իմ մեր-
ձեալ է, առ քեզ առնեմ զպասեքս աշակերտօքս
հանդերձ: Եւ արարին աշակերտքն որպէս հրամայեաց 19
նոցա Յիսուս, եւ պատրաստեցին զպասեքն: Եւ ի- 20
րեւ երեկոյ եղեւ, կայր բազմեալ ընդ երկոտասան ա-
շակերտսն: Եւ մինչ դեռ ուտէին նոքա, ասէ. ամէն 21
ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց է զիս: Եւ 22

տրտմեցան յոյժ. սկսան ասել ցնա իւրաքանչիւր ոք
23 ի նոցանէ, միթէ ես իցեմ տէր: Նա պատասխանի
ետ եւ ասէ. որ մխեաց զձեռն իւր ընդ իս ի սկաւա-
24 ռակն՝ նա մատնելոց է զիս: Որդի մարդոյ երթայ՝ որ-
պէս եւ գրեալ է վասն նորա. բայց վայ մարդոյն այն-
միկ յոյր ձեռն որդի մարդոյ մատնեսցի. լաւ էր նմա
25 թէ չէր ծնեալ մարդն այն: Պատասխանի ետ Յուդա
որ մատնելոցն էր զնա եւ ասէ. միթէ ես իցեմ վար-
26 դապետ. ասէ ցնա, դու ասացեր: Եւ մինչդեռ ու-
տէին նոքա՝ առ Յիսուս հաց օրհնեաց եւ եբեկ, եւ
ետ աշակերտացն եւ ասէ. առէք կերայք, այս է
27 մարմին իմ: Եւ առեալ բաժակ գոհացաւ ետ նոցա
28 եւ ասէ. արբէք ի դմանէ ամենեքին, Զի այդ է ա-
րիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի
29 թողութիւն մեղաց: Բայց ասեմ ձեզ. ոչ եւս արբից
յայսմ հետէ ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն յայն, յոր-
ժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան հօր
30 իմոյ: Եւ օրհնեցին, եւ ելին ի լեառն ձիթենեաց:
31 Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. ամենեքին դուք
գայթագղելոց էք յինէն յայսմ գիշերի, զի գրեալ
է թէ հարից զհովիւն եւ ցրուեսցին ոչխարք հօտին:
32 Եւ յետ յառնելոյն իմոյ, յառաջեցից քան զձեզ ի
33 Գալիլեա: Պատասխանի ետ Պետրոս եւ ասէ ցնա.
թէպէտ եւ ամենեքեան գայթագղեսցին ի քէն, սա-
34 կայն ես ոչ գայթագղեցայց: Ասէ ցնա Յիսուս. ամէն
ասեմ քեզ, զի յայսմ գիշերի մինչչեւ հաւու խօ-
35 սեալ իցէ, երիցս ուրասցիս զիս: Ասէ ցնա Պետրոս.
թէ եւ մեռանել հասանիցէ ընդ քեզ, զքեզ ոչ ու-
րացայց. նոյնպէս եւ ամենայն աշակերտքն ասէին:
36 Յայնժամ գայ Յիսուս ընդ նոսա ի գիւղ մի որում անուն
էր Գեթսեմանի, եւ ասէ ցնոսա, նստարուք այդր, մին-
37 չեւ երթայց կացից յաղօթս: Եւ առեալ ընդ իւր
զՊետրոս եւ զերկուս որդիսն Զեբեդեայ, սկսաւ
38 տրտմել եւ հոգալ: Յայնժամ ասէ ցնոսա տրտում

է ոգի իմ մինչեւ ի մահ, կացէք աստ եւ սկեցէք ընդ
իս։ Եւ մատուցեալ յառաջ սակաւիկ մի՝ անկաւ 39
ի վերայ երեսաց իւրոց, կաց յաղօթս՝ եւ ասէ, Հայր
իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս յինէն. բայց
ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու։ Գայ առ ա- 40
շակերտսն, եւ գտանէ զնոսա ի քուն, եւ ասէ ցՊե-
տրոս. ա՞յդպէս ոչ կարացէք մի ժամ արթուն կալ
ընդ իս։ Արթուն կացէք եւ աղօթս արարէք՝ զի մի՛ 41
անկանիցիք ի փորձութիւն. հոգիս յօժար է՝ բայց
մարմինս տկար։ Դարձեալ երկրորդ անգամ չոքաւ՝ 42
եկաց յաղօթս Յիսուս եւ ասէ. Հայր իմ՝ եթէ հնար
իցէ անցանել յինէն բաժակիս այսմիկ, ապա թէ ոչ՝
արբից զսա, եղիցի կամք քո։ Եւ եկեալ միւսան- 43
գամ եգիտ զնոսա ի քուն, զի էին աչք իւրեանց
ծանրացեալք։ Եթող զնոսա՝ եւ գնաց, կաց յա- 44
ղօթս երրորդ անգամ, եւ դարձեալ զնոյն բանս. ա-
սաց։ Յայնժամ գայ առ աշակերտսն՝ եւ ասէ Ննջե- 45
ցէք այսուհետեւ՝ եւ հանգերուք. զի ահա հասեալ
է ժամ, եւ որդի մարդոյ մատնի ի ձեռս մեղաւորաց։
Արիք երթիցուք աստի, զի ահաւասիկ եհաս՝ որ մատ- 46
նելոց է զիս։ Եւ մինչդեռ նա զայն խօսէր, ահա 47
Յուդա մի յերկոտասանիցն եկն, եւ ընդ նմա ամբոխ
բազում սրովք եւ բրօք՝ ի քահանայապետիցն՝ եւ ի
ծերոց ժողովրդեանն։ Եւ որ մատնելոցն էր զնա, ետ 48
նոցա նշան՝ եւ ասէ. ընդ որում ես համբուրեցից՝ նա
է, զնա ունիցիք։ Եւ վաղվաղակի մատուցեալ առ 49
Յիսուս ասէ. ողջ եր վարդապետ. եւ համբուրեաց
ընդ նմա։ Եւ Յիսուս ասէ ցնա. ընկեր՝ վասն որո՞յ 50
եկիր. յայնժամ մատուցեալ արկին ձեռս ի Յի-
սուս, եւ կալան զնա։ Եւ ահա մի ոմն յայնցանէ՝ որ 51
ընդ Յիսուսի էին, ձգեաց զձեռն եւ եհան զսուր
իւր՝ եւ եհար զծառայ քահանայապետին, եւ ի բաց
եհան զունկն նորա։ Յայնժամ ասէ ցնա Յիսուս. 52
դարձո զսուր քո ի տեղի իւր. զի ամենեքեան՝ որ

53 սուր առնուցուն՝ սրով անկանիցին։ Թէ համարի-
ցիս՝ թէ ո՞չ կարիցեմ աղաչել զՀայր իմ, եւ հասու-
ցանիցէ ինձ այժմ՝ աւելի քան զերկոտասան գունդս
54 հրեշտակաց։ Այլ զիա՞րդ լնուցուն գիրք՝ թէ այսպէս
55 պարտ է լինել։ Յայնժամ ասաց Յիսուս ժամբոյն.
իբրեւ ի վերայ աւազակի ելէք սուսերօք եւ բրօք՝ ու-
նել զիս. հանապազ առ ձեզ ի տաճարին նստէի եւ
56 ուսուցանէի, եւ ոչ կալայք զիս։ Այլ այս ամենայն
եղեւ՝ զի լցցին գիրք մարգարէից. յայնժամ աշա-
57 կերտքն ամենեքին թողին զնա եւ փախեան։ Իսկ նո-
ցա կալեալ զՅիսուս՝ ածին առ Կայիափա քահա-
58 նայապետ՝ ուր դպիրքն եւ ծերք ժողովեալ էին։ Եւ
Պետրոս զհետ նորա երթայր բացագոյն մինչեւ ի սը-
րահ քահանայապետին. եւ մտեալ ի ներքս նստէր
59 ընդ սպասաւորսն տեսանել զկատարածն։ Իսկ քա-
հանայապետքն եւ ամենայն ատեանն խնդրէին սուտ
60 վկայութիւն զՅիսուսէ, զի սպանանիցեն զնա։ Եւ ոչ
գտանէին ի բազմաց սուտ վկայիցն մատուցելոց. յե-
61 տոյ մատուցեալ երկու սուտ վկայք, Ասէին՝ թէ սա
ասէր՝ կարող եմ քակել զտաճարն Աստուծոյ, եւ
62 զերիս աւուրս շինել։ Եւ յարուցեալ քահանայա-
պետն ասէ ցնա. չտա՞ս ինչ պատասխանի, զի՞նչ դո-
63 քա ամբաստանեն զքէն։ Եւ Յիսուս լուռ կայր, պա-
տասխանի ետ քահանայապետն եւ ասէ ցնա. եր-
դմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ա-
սասցես մեզ՝ թէ դո՞ւ ես Քրիստոսն որդի Աստուծոյ։
64 Ասէ ցնա Յիսուս. դու ասացեր. բայց ասեմ ձեզ,
յայսմ հետէ տեսանիցէք զՈրդի մարդոյ նստեալ ընդ
աջմէ զօրութեանն՝ եւ եկեալ ընդ ամպս երկնից։
65 Յայնժամ քահանայապետն պատառեաց զհանդերձս
իւր, եւ ասէ. հայհոյեաց, զի՞ եւս պիտոյ են մեզ
վկայք, ահա այժմ լուայք զհայհոյութիւն դորա.
66 զի՞նչ հաճոյ է ձեզ։ Նոքա պատասխանի ետուն եւ
67 ասեն. մահապարտ է։ Յայնժամ թքին ընդ երեսս

նորա, եւ կռփեցին զնա. եւ ոմանք ապտակեցին, եւ
ասեն: Մարգարէաց մեզ Քրիստոս, ո՞վ է որ ե- 68
հարն զքեզ: Իսկ Պետրոս նստէր արտաքոյ ի գա- 69
ւթին. մատեաւ առ նա աղախին մի, եւ ասէ. եւ դու
ընդ Յիսուսի Գալիլեացւոյ էիր: Նա ուրացաւ առա- 70
ջի ամենեցուն՝ եւ ասէ թէ ոչ գիտեմ զի՞նչ խօսիդ:
Եւ իբրեւ ել նա արտաքս քան զդուռնն՝ ետես զնա 71
այլ կին մի, եւ ասէ ցայնոսիկ՝ որ անդ կային. եւ սա
ընդ Յիսուսի Նազովրեցւոյ էր: Եւ դարձեալ ուրա- 72
ցաւ երդմամբ, թէ ոչ գիտեմ զայրն: Եւ յետ սա- 73
կաւ միոյ մատուցեալ որք կային անդ, ասեն ցՊե-
տրոս. արդարեւ եւ դու ի նոցանէ ես, քանզի եւ
խօսք քո յայտ առնեն զքեզ: Յայնժամ սկսաւ նզո- 74
վել եւ երդնուլ, թէ ոչ գիտեմ զայրն, եւ իսկոյն
հաւ խօսեցաւ: Եւ յիշեաց Պետրոս զբանն Յիսուսի 75
զոր ասաց, թէ մինչչեւ հաւու խօսեալ իցէ՝ երիցս
ուրասցիս զիս. եւ ելեալ արտաքս՝ ելաց դառ-
նապէս:

ԳԼՈՒԽ ԻԷ.

Իբրեւ այգ եղեւ, խորհուրդ արարին ամենայն 1
քահանայապետքն եւ ծերք ժողովրդեանն վասն Յի-
սուսի սպանանել զնա: Կապեցին զնա, եւ առին 2
գնացին. եւ ետուն ի ձեռս Պոնտացւոյ Պիղատոսի
դատաւորի: Յայնժամ տեսեալ Յուդայի՝ որ մատ- 3
նեաց զնա, թէ դատապարտեցաւ, զղջացաւ եւ դարձոյց
զարծաթն առ քահանայապետսն եւ ծերս ժողովր-
դեանն. Եւ ասէ. մեղայ, զի մատնեցի զարիւն արդար. 4
եւ նոքա ասեն. մեզ չէ փոյթ, դու գիտես: Եւ ըն- 5
կէց զարծաթն ի տաճարին՝ եւ գնաց, եւ չոգաւ խեղ-
դեցաւ: Իսկ քահանայապետքն առեալ զարծաթն 6
ասեն. ոչ է արժան ընդունել զայդ ի կորբանն, քան-
զի գինք արեան են: Խորհուրդ արարեալ գնեցին այ- 7
նու զագարակն բրտի ի գերեզման օտարաց: Վասն 8

այնորիկ կոչեցաւ ագարակն այն, ագարակ արեան՝ մին-
9 չեւ ցայսօր: Յայնժամ լցաւ՝ որ ասացաւն ի ձեռն
Երեմիայ մարգարէի. եւ առին զերեսուն արծաթին
զգինս վաճառելոյն, զոր արկին յորդւոցն Իսրայելի:
10 Եւ ետուն զնա յագարակն բրտի. որպէս հրամայեաց
11 ինձ տէր: Եւ Յիսուս եկաց առաջի դատաւորին. ե-
հարց ցնա դատաւորն՝ եւ ասէ. դո՞ւ ես թագաւորն
12 Հրէից. եւ Յիսուս ասէ. դու ասես: Եւ ի չարախօ-
սելն նորա ի քահանայապետից եւ ի ծերոց, ոչ ինչ
13 ետ պատասխանի: Յայնժամ ասէ Պիղատոս. ո՞չ լսես՝
14 որչափ դոքա հակառակ քո վկայեն: Եւ ոչ ետ նմա
պատասխանի՝ եւ ոչ բան մի, մինչեւ զարմանալ դա-
15 տաւորին յոյժ: Բայց ըստ տօնի սովոր էր դատաւորն
16 արձակել ժողովրդեան կապեալ մի՝ զոր կամէին: Ու-
նէին յայնժամ կապեալ մի նշանաւոր, որում ա-
17 նուն էր Յեսու Բարաբբա: Իբրեւ ժողովեցան, ասէ
ցնոսա Պիղատոս. զո՞ կամիք յերկուց աստի՝ զի ար-
ձակեցից ձեզ, զՅեսու Բարաբբա՞՝ եթէ զՅիսուս
18 զանուանեալն Քրիստոս: Քանզի գիտէր՝ թէ առ նա-
19 խանձու մատնեցին զնա: Եւ մինչ նստէր յատենին,
առաքեաց առ նա կին իւր՝ եւ ասէ. չկայ ինչ քո եւ
արդարոյն այնորիկ, զի բազում անցք անցին ընդ իս այ-
20 սօր յանուրջս վասն նորա: Իսկ քահանայապետքն եւ
ծերք հաւանեցուցին զժողովուրդն, զի խնդրեսցեն
21 զԲարաբբայն՝ եւ զՅիսուս կորուսցեն: Պատասխանի
ետ դատաւորն՝ եւ ասէ ցնոսա. զո՞ կամիք զի արձա-
կեցից ձեզ յերկուց աստի, եւ նոքա ասեն. զԲարաբ-
22 բա: Ասէ ցնոսա Պիղատոս. իսկ զի՞ արարից զՅիսուս
23 զանուանեալն Քրիստոս: Ասեն ամենեքեան՝ խաչես-
ցի. եւ նա ասէ, զի՞նչ չար արար. եւ նոքա առաւել
24 եւս աղաղակէին եւ ասէին, խաչեսցի: Եւ տեսեալ
Պիղատոսի թէ ոչ ինչ օգնէ՝ այլ առաւել խռովու-
թիւն լինի, առեալ ջուր՝ լուաց զձեռս առաջի ժո-
ղովրդեանն՝ եւ ասէ. քաւեալ եմ ես յարենէ ար-

դարոյդ այդորիկ. դուք գիտասջիք: Պատասխանի ետ 25
ամենայն ժողովուրդն՝ եւ ասէ. արիւն դորա ի վերայ
մեր եւ ի վերայ որդւոց մերոց: Յայնժամ արձակեաց 26
նոցա զԲարաբբայն, եւ զՅիսուս գան հարեալ՝ ետ ի
ձեռս՝ զի խաչեսցի: Յայնժամ զինուորք դատաւորին 27
առին զՅիսուս յապարանս. եւ ժողովեցին ի վերայ նո-
րա զամենայն զգունդն. Մերկացին զնա, եւ արկին 28
զնովաւ քղամիդ կարմիր: Եւ բոլորեալ պսակ ի փշոց՝ 29
եդին ի գլուխ նորա, եւ եղէգն յաջոյ ձեռին նորա.
ի ծունր իջեալ առաջի նորա՝ կատակէին եւ ասէին.
ողջ եր Թագաւոր հրէից: Եւ թքեալ ի նա՝ առնուին 30
զեղէգն եւ ծեծէին զգլուխ նորա: Եւ յորժամ ձա- 31
ղեցին զնա, մերկացուցին ի նմանէ զքղամիդն՝ ագու-
ցին նմա զիւր հանդերձն, եւ տարան զնա ի խաչ հա-
նել: Եւ ելեալ արտաքս՝ գտին այր մի կիւրենացի՝ ա- 32
նուն Սիմոն, զնա կալան պահակ՝ զի բարձցէ զխաչն
նորա: Եւ եկեալ ի տեղին անուանեալ Գողգոթա, 33
որ է տեղի կառափելոյ: Եւ ետուն նմա ըմպել գինի 34
ընդ լեղի խառնեալ. եւ իբրեւ ճաշակեաց, ոչ կա-
մէր ըմպել: Եւ հանեալ զնա ի խաչ՝ բաժանեցին 35
զհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն՝ որ ասա-
ցաւ ի մարգարէէն. բաժանեցին զհանդերձս իմ յիւ-
րեանս. եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկա-
նէին: Եւ նստեալ պահէին զնա: Եւ եդին ի վերայ 36
գլխոյ նորա՝ գրեալ զվնաս նորա. Թէ՝ այս է Յիսուս 37
Թագաւորն հրէից: Յայնժամ հանին ընդ նմա ի խաչ 38
երկուս աւազակս, մի յաջմէ նորա եւ մի յահեկէ:
Եւ որ անցանէինն՝ հայհոյէին զնա, շարժէին զգլուխս 39
իւրեանց, եւ ասէին. վա՜հ որ քակէիր զտաճարն, եւ 40
զերիս աւուրս շինէիր զնա. ապրեցո զքեզ, եթէ որ-
դի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ: Նոյնպէս եւ 41
քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն եւ
ասէին. Զայլս ապրեցոյց՝ զինքն ոչ կարէ ապրե- 42
ցուցանել. եթէ Թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ի

43 խաչէդ՝ եւ հաւատասցուք դմա. Եթէ յուսացաւ յԱս-
տուած, փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի զդա. քան-
44 զի ասաց՝ եթէ Աստուծոյ որդի եմ: Զնոյն եւ աւա-
զակքն՝ որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա:
45 Եւ ի վեց ժամէ աւուրն՝ խաւար եղեւ ի վերայ ամե-
46 նայն երկրի մինչեւ ցինն ժամ: Եւ զինն ժամաւն գո-
չեաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ. էլի՝ էլի՝ լամա
սաբաքթանի. այս ինքն է, Աստուած իմ Աստուած
47 իմ՝ ընդէ՞ր թողեր զիս: Ոմանք յայնցանէ որ անդն
կային, իբրեւ լուան՝ ասէին. զԵղիայ կարդայ դա:
48 Եւ վաղվաղակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ՝ առ ըս-
պունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել
49 նմա: Եւ կէսքն ասէին. թող տեսցուք եթէ գա՞յ Ե-
50 ղիա փրկել զդա: Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց
51 ի ձայն մեծ՝ եւ արձակեաց զոգին: Եւ ահա վարա-
գոյր տաճարին ցելաւ յերկուս՝ ի վերուստ մինչեւ ի
վայր, եւ երկիր շարժեցաւ, եւ վէմք պատառեցան:
52 Եւ գերեզմանք բացան, եւ բազում մարմինք ննջե-
53 ցելոց սրբոց յարեան: Եւ ելեալ ի գերեզմանաց յետ
յարութեան նորա, մտին ի քաղաքն սուրբ, եւ երե-
54 ւեցան բազմաց: Իսկ հարիւրապետն՝ եւ որ ընդ նմա
պահէին զՅիսուս, իբրեւ տեսին զշարժումն եւ զե-
ղեալսն, երկեան յոյժ եւ ասեն. արդարեւ Աստուծոյ
55 որդի էր սա: Էին անդ կանայք բազումք, կային ի
հեռաստանէ՝ եւ հայէին, որք եկին զհետ Յիսուսի ի
56 Գալիլեէ պաշտել զնա. Յորս էր Մարիամ Մագ-
դաղենացի՝ եւ Մարիամ Յակովբայ՝ եւ Յովսեայ
մայր, եւ մայր որդւոցն Զեբեդեայ:

57 Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն
յԱրիմաթեայ՝ որում անուն էր Յովսէփ. որ եւ ա-
58 շակերտեցաւ իսկ Յիսուսի: Սա մատուցեալ առ Պի-
ղատոս, խնդրեաց զմարմինն Յիսուսի. յայնժամ Պի-
59 ղատոս հրամայեաց տալ զմարմինն: Եւ առեալ
60 զմարմինն Յովսէփ՝ պատեաց սուրբ կտաւովք. Եւ եդ

ի նոր գերեզմանի՝ զոր փորեաց ի վիմի. եւ թաւալե-
ցուցեալ կափարիչ դրան գերեզմանին վէմ մի մեծ՝
գնաց: Անդ էր Մարիամ Մագդաղենացի՝ եւ միւս 61
Մարիամն, նստէին հանդէպ գերեզմանին: Եւ ի վա- 62
ղիւ անդր՝ որ է յետ ուրբաթուն, ժողովեցան քա-
հանայապետքն եւ փարիսեցիքն առ Պիղատոս, Եւ 63
ասեն՝ տէր, յիշեցաք զի մոլորեցուցիչն այն ասէր՝
մինչ կենդանին էր. թէ յետ երից աւուրց յառնեմ:
Արդ՝ հրամայեա զգուշանալ գերեզմանին մինչեւ ցե- 64
րիս աւուրս, գուցէ եկեալ աշակերտքն գիշերի՝ գո-
ղանայցեն զնա, եւ ասիցեն ժողովրդեանն, թէ յա-
րեաւ ի մեռելոց. եւ լինիցի յետին մոլորութիւնն չար
քան զառաջինն: Ասէ ցնոսա Պիղատոս. ունիք զզօ- 65
րականն. երթայք զգուշացարուք որպէս եւ գիտէք:
Եւ նոքա երթեալ զգուշացան գերեզմանին, եւ կնի- 66
քեցին զվէմն հանդերձ զօրականօք:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Եւ յերեկոյի շաբաթուն՝ յորում լուսանայր միա- 1
շաբաթին, եկն Մարիամ Մագդաղենացի, եւ միւս
Մարիամն՝ տեսանել զգերեզմանն: Եւ ահա շար- 2
ժումն մեծ եղեւ. զի հրեշտակ Տեառն իջեալ յերկ-
նից՝ մատուցեալ ի բաց թաւալեցոյց զվէմն ի դրաց
անտի, եւ նստէր ի վերայ նորա. Եւ էր տեսիլ նորա 3
իբրեւ զփայլակն, եւ հանդերձ նորա սպիտակ իբրեւ
զձիւն: Եւ յահէ անտի նորա խռովեցան պահա- 4
պանքն, եւ եղեն իբրեւ զմեռեալ: Պատասխանի ետ 5
հրեշտակն՝ եւ ասէ ցկանայսն, մի՛ երկնչիք դուք, գի-
տեմ զի զՅիսուս զխաչելեալն խնդրէք. Չէ աստ, 6
քանզի յարեաւ, որպէս ասացն. եկայք տեսէք զտե-
ղին ուր կայր: Եւ վաղվաղակի երթայք ասացէք ա- 7
շակերտացն նորա թէ յարեաւ. եւ ահա յառաջանայ
քան զձեզ ի Գալիլեա, անդ տեսանիցէք զնա. ահա
ասացի ձեզ: Եւ ելեալ վաղվաղակի ի գերեզմանէ 8

անտի ահիւ եւ խնդութեամբ բազմաւ՝ ընթանային
9 պատմել աշակերտացն։ Եւ ահա պատահեաց նոցա
Յիսուս եւ ասէ. ողջ էք, եւ նոքա մատուցեալ կա-
10 լան զոտս նորա եւ երկիրպագին նմա։ Յայնժամ ա-
սէ ցնոսա Յիսուս. մի՛ երկնչիք, երթայք ասացէք
եղբարցն իմոց՝ զի երթիցեն ի Գալիլեա, եւ անդ
11 տեսցեն զիս։ Իբրեւ նոքա գնացին, ահա ոմանք ի զօ-
րականացն եկին ի քաղաքն՝ եւ պատմեցին քահա-
12 նայապետիցն զամենայն որ ինչ եղեւն։ Եւ նոքա ժո-
ղովեալ հանդերձ ծերովքն խորհուրդ առեալ՝ ար-
13 ծաթ յոյժ ետուն զօրականացն, եւ ասեն. ասասջիք՝
եթէ աշակերտքն նորա եկեալ գիշերի գողացան զնա՝
14 մինչ մեք ի քուն էաք։ Եւ եթէ լուր լիցի այդ առ
դատաւորն, մեք հաճեսցուք զնա՝ եւ զձեզ անհոգս
15 արասցուք։ Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որ-
պէս ուսանն. եւ ել համբաւս այս ի հրէից մինչեւ
16 ցայսօր։ Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալի-
լեա ի լեառնն՝ ուր ժամադիր եղեւ նոցա Յիսուս։
17 Իբրեւ տեսին զնա, երկիր պագին նմա. եւ ոմանք յեր-
18 կուացան։ Եւ մատուցեալ Յիսուս խօսեցաւ ընդ
նոսա՝ եւ ասէ. տուաւ ինձ ամենայն իշխանութիւն
յերկինս եւ յերկրի, որպէս առաքեաց զիս Հայր, եւ
19 ես առաքեմ զձեզ։ Գնացէք այսուհետեւ՝ աշակեր-
տեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա
յանուն Հօր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյն սրբոյ։ Ուսու-
ցէք նոցա պահել զամենայն՝ որ ինչ պատուիրեցի
ձեզ. եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն ա-
ւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի։

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԿՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Մարկոսի գրեալ է. սոյն Մարկոս աշակերտ Պետրոսի, եւ ընկերակից Պօղոսի գրեաց զաւետարանս զայս: Նա դնէ սկիզբն եւ ասէ. Սկիզբն աւետարանի, ի Յովհաննու քարոզութենէն. եւ զմկրտութիւնն Յովհաննու. եւ առնու վկայութիւն յԷսայեայ մարգարէէ. Նշանակէ եւ զփորձութիւնն ի լերինն, եւ որ ասէ զփորձանքըն. պատմէ եւ զկոչումն ընտրութեան աշակերտացն, եւ նշանս եւ արուեստս զոր արար. եւ զխորհուրդ մարմնութեանն, եւ զչարչարանսն. որ եւ մատնեցաւ Պիղատոսի, եւ խաչեցաւ մարմնով. եւ զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. եւ զի մարմինն եդաւ ի գերեզմանի, եւ յարեաւ երեքօրեայ. եւ զձանել հրեշտակին, եւ երեւել կանանցն, եւ զնոյն պատմել աշակերտացն: Մարկոս հրամանաւ Պետրոսի ինքն գրեաց զաւետարանս եւ յԱղեքսանդր քաղաքի ի լեզու Եգիպտացւոց. զկնի ԺԱ, ամ համբառնալոյ Քրիստոսի:

Մարկոս՝ բարձր պատուար, կամ ի վերայ տանեաց:

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

	Գլ.	Համ.
Վասն դիւահարին	Ա.	23
Վասն Պետրոսի զոքանչն	Ա.	29
Վասն բժշկութեան զանազան հիւանդութեանց	Ա.	32
Վասն բորոտին	Ա.	40
Վասն անդամալուծին	Բ.	3
Վասն Ղեւեայ մաքսաւորին	Բ.	14

Վասն գօսացեալ ձեռինն	Գ.	1
Վասն առաքելոցն ընտրութեան	Գ.	13
Վասն սերմանեացն առակի	Դ.	2
Վասն սաստելոյ ծովուն	Դ.	35
Վասն լէգէոնայն	Ե.	1
Վասն դստեր ժողովրդապետին	Ե.	21
Վասն տեռատեսին	Ե.	25
Վասն համարոյ առաքելոցն	Զ.	7
Վասն Յովհաննու, եւ Հերովդէի	Զ.	14
Վասն հինգ հացիցն՝ եւ երկու ձկանցն	Զ.	35
Վասն ի վերայ ծովուն գնալոյ	Զ.	47
Վասն անցանելոյն զպատուիրանաւն	Է.	5
Վասն ասորւոյ կնոջն փիւնիկեցւոյ	Է.	24
Վասն համրին եւ խլին	Է.	31
Վասն եօթն հացիցն	Ը.	1
Վասն խմորոյ փարիսեցւոյն	Ը.	16
Վասն կուրին	Ը.	22
Վասն հարցանելոյն ի Կեսարեա	Ը.	27
Վասն այլակերպութեան Տեառն	Թ.	1
Վասն լուսնոտին	Թ.	16
Վասն խորհելոյն՝ թէ ո՞վ իցէ մեծ	Թ.	32
Վասն հարցանելոյն՝ թէ պա՞րտ է արձակել զկին	Ժ.	1
Վասն հարցանելոյ մեծատանն զՅիսուս	Ժ.	17
Վասն որդւոյն Զեբեդեայ	Ժ.	35
Վասն Բարտիմէոսի	Ժ.	46
Վասն յաւանակին	ԺԱ.	1
Վասն չորանալոյ թզենւոյն	ԺԱ.	12
Վասն անյիշաչարութեան	ԺԱ.	25
Վասն հարցանելոյ քահանայապետիցն զՏէրն	ԺԱ.	27
Վասն այգւոյն	ԺԲ.	1
Վասն հարցանելոյ զդահեկանէն	ԺԲ.	13
Վասն սադուկեցւոյն	ԺԲ.	18
Վասն դպրացն	ԺԲ.	28
Վասն Տեառն հարցանելոյ զփարիսեցին	ԺԲ.	35

Վասն երկու լումայիցն. . . . . . . ԺԲ. 41
Վասն կատարածին. . . . . ԺԳ. 3
Վասն աւուրն, եւ ժամուն. . . . . . ԺԳ. 32
Վասն օծանելոյ կնոջն զՏէր իւղով. . . ԺԴ. 3
Վասն զատկին. . . . . ԺԴ. 12
Վասն մատնութեանն մարգարէանալոյ . . ԺԴ. 18
Վասն Պետրոսի ուրացութեանն. . . . ԺԴ. 66
Վասն խնդրելոյ զտերունական մարմինն. . ԺԵ. 42
Վասն իւղաբեր կանանց. . . . . . . ԺԶ. 1

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ

ԳԼՈՒԽ Ա.

1 ՍԿԻԶԲՆ Աւետարանի Յիսուսի Քրիստոսի
2 որդւոյ Աստուծոյ։ Որպէս եւ գրեալ է ի մարգարէս.
Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի քո,
3 որ հանդերձեսցէ զճանապարհս քո առաջի քո։ Ձայն
բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանա-
պարհ Տեառն, եւ ուղիղս արարէք զշաւիղս նորա։
4 Եւ եղեւ՝ զի Յովհաննէս մկրտէր յանապատի, քա-
րոզէր մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն
5 մեղաց։ Եւ երթայր առ նա ամենայն աշխարհն Հրէ-
աստանի, եւ Երուսաղէմացիք ամենեքեան. եւ մկր-
տէին ի նմանէ ի Յորդանան գետ՝ խոստովանեալ
6 զմեղս իւրեանց։ Եւ էր Յովհաննէս զգեցեալ ստեւ
ուղտու եւ գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր, եւ կե-
7 րակուր նորա մարախ՝ եւ մեղր վայրենի։ Քարո-
զէր եւ ասէր. գայ զօրագոյնն քան զիս զկնի իմ,
որում չեմ բաւական խոնարհել լուծանել զխ-
8 րացս կօշկաց նորա։ Ես մկրտեցի զձեզ ջրով, եւ
9 նա մկրտեսցէ զձեզ Հոգւով սրբով։ Եւ եղեւ՝ յա-
ւուրսն յայնոսիկ եկն Յիսուս ի Նազարեթէ Գալի-
լեացւոց, եւ մկրտեցաւ ի Յովհաննէ ի Յորդանան։
10 Եւ նոյնժամայն ընդ վերանալն ի ջրոյն, ետես ցե-
լեալ զերկինս, եւ զՀոգին Աստուծոյ իբրեւ զաղաւնի
11 զի իջանէր ի վերայ նորա։ Ձայն եղեւ յերկնից՝ եւ
12 ասէ. դու ես որդի իմ սիրելի, ընդ քեզ հաճեցայ։

Եւ նոյնժամայն Հոգին հանէ զնա յանապատ: Եւ 13
էր նա անդ զաւուրս քառասուն փորձեալ ի սատա-
նայէ, եւ էր ընդ գազանս, եւ հրեշտակք պաշտէին զնա:

ԲԲ. Եւ յետ մատնելոյն Յովհաննու, եկն Յի- 14
սուս ի Գալիլեա. քարոզէր զաւետարանն Աստուծոյ եւ
ասէր. Թէ կատարեալ է ժամանակ, եւ հասեալ է ար- 15
քայութիւն Աստուծոյ, ապաշխարեցէք՝ եւ հաւատա-
ցէք յաւետարանն: Իբրեւ անցանէր առ ծովեզերբն 16
Գալիլեացւոց, ետես զՍիմոն եւ զԱնդրէաս եղ-
բայր Սիմոնի, զի արկեալ էր նոցա ուռկանս ի ծով,
քանզի ձկնորսք էին. եւ ասէ ցնոսա Յիսուս. Եկայք զկնի 17
իմ, եւ արարից զձեզ որսորդս մարդկան: Եւ վաղվա- 18
ղակի թողեալ զուռկանսն, գնացին զհետ նորա: Եւ 19
մատուցեալ անտի սակաւիկ մի յառաջ, ետես զՅա-
կոբոս Զեբեդեայ՝ եւ զՅովհաննէս եղբայր նորա,
եւ զնոսա ի նաւին մինչ կարգէին ուռկանս, եւ կոչեաց
զնոսա: Եւ վաղվաղակի թողեալ զհայրն իւրեանց 20
զԶեբեդէոս ի նաւին վարձկանօքն հանդերձ, գնացին
զհետ նորա:

ԲԳ. Եւ մտանեն ի Կափառնաում, եւ իսկ եւ 21
իսկ ի շաբաթու մտեալ ի ժողովուրդն, ուսուցանէր 22
զնոսա: Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա,
զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ եւ ոչ 23
որպէս դպիրքն: Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի,
յորում այս պիղծ դոյր ի նմա. որ աղաղակեաց՝ եւ ա- 24
սէ. Թո՛յլ տուր, զի՞ կայ մեր եւ քո՝ Յիսուս Նազովրե-
ցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՛վ ես 25
սուրբն Աստուծոյ: Սաստեաց ի նա Յիսուս եւ ասէ. 26
կարկեաց՝ եւ ել ի դմանէ: Եւ զարկոյց զնա այսն
պիղծ, եւ աղաղակեաց ի ձայն մեծ, եւ ել ի նմանէ: 27
Եւ զարմացան ամենեքին, մինչեւ հծծել ընդ միմեա-
նըս՝ եւ ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւնս,
զի իշխանութեամբ եւ այսոց պղծոց սաստէ՝ եւ հնա- 28
զանդին նմա: Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմն

29 Գալիլեացւոց: Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն,
եկն ի տուն Սիմոնի եւ Անդրեայ՝ Յակոբաւ եւ Յով-
30 հաննու հանդերձ: Եւ զոքանչ Սիմոնի դնէր ջերմա-
31 ցեալ, եւ վաղվաղակի ասեն ցնա վասն նորա: Եւ մատու-
ցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա եւ եթող զնա
32 տենդն՝ եւ պաշտէր զնոսա: Եւ իբրեւ երեկոյ եղեւ ի
մտանել արեգականն, բերին առ նա զամենայն հիւանդս
33 եւ զդիւահարս. եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ
34 առ դուրսն: Եւ բժշկեաց բազում հիւանդս ի պէս-
պէս ախտից, եւ դեւս բազումս եհան. եւ ոչ տայր
խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է:
35 ԲԳ. Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ
ել եւ գնաց յանապատ տեղի, եւ անդ կայր յաղօթս:
36 Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝ եւ որ ընդ նմայն էին:
37 Եւ իբրեւ գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքին խնդ-
38 րեն զքեզ: Եւ ասէ ցնոսա. եկայք երթիցուք եւ
յայլ մօտաւոր գիւղաքաղաքսն, զի եւ անդ քարոզե-
39 ցից. զի յայս իսկ եկեալ եմ: Եւ քարոզէր ի ժողո-
վուրդս նոցա ընդ ամենայն Գալիլեացիս, եւ դեւս
40 հանէր: Գայ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ի ծունր ի-
ջանէր՝ եւ ասէր. տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս
41 սրբել: Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մերձե-
42 ցաւ ի նա՝ եւ ասէ ցնա, կամիմ՝ սրբեաց: Եւ իբրեւ
ասացն ցնա վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն
43 եւ սրբեցաւ: Եւ սաստեաց նմա՝ եհան արտաքս վաղ-
44 վաղակի, եւ ասէ. Զգոյշ լեր՝ մի ումեք ինչ ասիցես.
այլ երթ ցոյց զքեզ քահանային. եւ մատո վասն սր-
բութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, ի
45 վկայութիւն նոցա: Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ
եւ հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս կարող
լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել, այլ ար-
տաքոյ յանապատ տեղիս էր. եւ գային առ նա յա-
մենայն կողմանց:

ԳԼՈՒԽ Բ.

ԲԵ. Եւ մտեալ դարձեալ ի Կափառնաում յետ 1
աւուրց, լուր եղեւ եթէ ի տան է, եւ ժողովեցան բա- 2
զումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել՝ եւ ոչ առ դրանն,
եւ խօսէր նոցա զբանն: Եւ գային առ նա՝ բերէին ան- 3
դամալոյծ մի բարձեալ ի չորից: Եւ իբրեւ ոչ կարէին 4
մերձենալ առ նա յամբոխէ անտի, քակեցին զյարկն՝
ուր էր Յիսուս, եւ բացեալ զառաստաղն իջուցին
զմահիճսն յորում կայր անդամալոյծն: Եւ տեսեալ 5
Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որ-
դեակ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո: Եւ էին ոմանք 6
ի դպրաց անտի՝ որ անդ նստէին, եւ խորհէին ի սիրտս 7
իւրեանց. զի՞նչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս,
ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի Աստուած: Եւ 8
գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհէին ի մի-
տս իւրեանց, եւ ասէ. զի՞ խորհիք զայդ ի սիրտս
ձեր: Զի՞նչ դիւրին է, ասե՞լ ցանդամալոյծն՝ թո- 9
ղեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի առ
զմահիճս քո եւ երթ ի տուն քո: Այլ զի գիտասջիք 10
եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ ի վերայ երկրի 11
թողուլ մեղս, — ասէ ցանդամալոյծն — քեզ ասեմ՝
արի առ զմահիճս քո եւ երթ ի տուն քո: Եւ 12
յարեաւ վաղվաղակի առեալ զմահիճսն, ել առաջի
ամենեցուն. մինչեւ զարմանալ ամենեցուն՝ եւ փա-
ռաւոր առնել զԱստուած՝ եւ ասել, թէ այսպիսի ինչ
երբեք ոչ տեսաք:

ԲԶ. Եւ ել դարձեալ ի ծովեզրն, եւ ամենայն 13
ժողովուրդն գայր առ նա. եւ ուսուցանէր զնոսա:
Եւ մինչ դեռ անցանէր, ետես զՂեւի Ալփեայ՝ զի 14
նստէր ի մաքսաւորութեան. եւ ասէ ցնա, եկ զկնի իմ.
եւ յարուցեալ գնաց զկնի նորա: Եւ եղեւ ի բազ- 15
մել նորա ի տան նորա, եւ բազում մաքսաւորք
եւ մեղաւորք բազմեալ էին ընդ Յիսուսի՝ եւ ընդ ա-

16 շակերտան նորա. քանզի էին բազումք՝ որ երթային
զհետ նորա: Իսկ դպիրքն եւ փարիսեցիք իբրեւ տեսին՝
թէ ուտէ ընդ մաքսաւորս՝ եւ ընդ մեղաւորս, ասեն ցա-
շակերտսն նորա. զի՞ է՝ զի ընդ մեղաւորս՝ եւ ընդ մաք-
17 սաւորս ուտէք եւ ըմպէք: Իբրեւ լուաւ Յիսուս ասէ
ցնոսա. ոչ ինչ է պիտոյ բժիշկ ողջոց՝ այլ հիւանդաց,
18 եւ ոչ եկի կոչել զարդարս՝ այլ զմեղաւորս: Եւ էին
աշակերտքն Յովհաննու՝ եւ փարիսեցիքն ի պահս,
գան եւ ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն Յովհաննու՝
եւ փարիսեցիքն պահեն, եւ քո աշակերտքդ ոչ պա-
19 հեն: Եւ ասէ ցնոսա Յիսուս. միթէ մարթ ինչ իցէ
որդւոց առագաստի մինչ ընդ նոսա իցէ փեսայն՝ պա-
հել. ցորքան ընդ իւրեանս ունիցին զփեսայն, ոչ է
20 մարթ պահել: Այլ եկեսցեն աւուրք՝ յորժամ վե-
րասցի ի նոցանէ փեսայն, եւ ապա պահեսցեն յա-
21 ւուրն յայնմիկ: Ոչ ոք կարկատ նոր անթափ արկանէ
ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝ առնու լրու-
թեամբն իւրով նորն ի հնոյ անտի, եւ չար եւս պա-
22 տառումն լինի: Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի տիկս
հինս. ապա թէ ոչ՝ պայթուցանէ գինին զտիկսն,
գինին հեղու, եւ տիկքն կորնչին. այլ գինի նոր ի
տիկս նորս արկանելի է:
23 ԲԻ. Եւ եղեւ նմա ի շաբաթու անցանել ընդ
արտորայս. եւ աշակերտքն ի գնալն իւրեանց՝ սկսան
24 հասկ կորզել եւ ուտել: Եւ փարիսեցիքն ասեն
ցնա. տես՝ զի՞նչ գործեն աշակերտքն քո ի շաբա-
թու՝ զոր չէ արժան: Եւ ասէ ցնոսա Յիսուս.
25 ո՞չ երբեք իցէ ընթերցեա՞լ ձեր զոր արարն Դաւիթ,
յորժամ պիտոյն եղեւ՝ եւ քաղցեաւ նա եւ որ ընդ
26 նմայն էին: Զիա՞րդ եմուտ ի տունն Աստուծոյ առ
Աբիաթարաւ քահանայապետիւ, եւ զհացն առա-
ջաւորութեան եկեր՝ եւ ետ այնոցիկ որ ընդ նմայն էին.
27 զոր ոչ էր օրէն ուտել, բայց միայն քահանայիցն: Եւ
ասէ ցնոսա. շաբաթ վասն մարդոյ եղեւ եւ ոչ եթէ

28 մարդ վասն շաբաթու։ Ապա ուրեմն տէր է որդի
մարդոյ եւ շաբաթու։

ԳԼՈՒԽ Գ.

Եւ եմուտ միւսանգամ ի ժողովուրդն, եւ էր 1
անդ այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր։ Եւ սպա- 2
սէին նմա՝ եթէ բժշկեսցէ զնա ի շաբաթու՝ զի չարա-
խօսեսցեն զնմանէ։ Եւ ասէ ցայրն որոյ ձեռն գօսա- 3
ցեալ էր. արի անց ի մէջ։ Եւ ասէ ցնոսա. զի՞նչ 4
արժան է ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար
առնել, ոգի մի ապրեցուցանե՞լ, եթէ կորուսանել.
եւ նոքա լռեցին։ Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի 5
ցասմամբ, տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա՝
ասէ ցայրն. ձգեա՛ զձեռն քո. եւ նա ձգեաց, եւ ող-
ջացաւ ձեռն նորա։

ԳԱ. Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն 6
հերովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն
նորա՝ թէ զիա՞րդ կորուսցեն զնա։ Իսկ Յիսուս աշա-
կերտօքն իւրովք գնաց ի ծովեզրն. եւ բազում ժողո- 7
վուրդ ի Գալիլեացւոց երթային զհետ նորա. եւ ի
Հրէաստանէ, եւ յԵրուսաղէմէ, եւ յայնկոյս Յորդա- 8
նանու, եւ որք ի Տիւրոսէ եւ ի Սիդոնէ. բազում
ժողովուրդ իբրեւ լսէին՝ որչափ ինչ առնէր, գային
առ նա։ Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ մի պա- 9
տրաստական կայցէ նմա վասն ամբոխին՝ զի մի՛ նեղես-
ցեն զնա։ Քանզի զբազումս բժշկեաց, մինչ գալ 10
խառնել զնովաւ՝ զի մերձեսցին առ նա, որք ունէին
ախտս ինչ։ Եւ այսք պղծք յորժամ տեսանէին զնա, 11
անկանէին առաջի նորա, աղաղակէին եւ ասէին, թէ
դու ես որդի Աստուծոյ. եւ նա յոյժ սաստէր նոցա, 12
զի մի՛ յայտնի առնիցեն զնա։

ԳԲ. Ելանէ ի լեառն եւ կոչէ առ ինքն զորս ինքն 13
կամեցաւ, եւ չոգան առ նա։ Եւ արար երկոտասանս՝ 14
զի իցեն զնովաւ, եւ զի առաքեսցէ զնոսա քարոզել.

15 եւ ունել իշխանութիւն բժշկելոյ զցաւս՝ եւ հանելոյ
16 զդեւս: Եւ եդ անուն Սիմոնի՝ Պետրոս. եւ Յա-
17 կովբու Զեբեդեայ՝ եւ Յովհաննու եղբօրն Յա-
կովբայ, եդ նոցա անուանս Բանէրեգէս, որ է որ-
18 դիքն որոտման, եւ զԱնդրէաս, եւ զՓիլիպպոս, եւ
զԲարթուղիմէոս, եւ զՄատթէոս զմաքսաւորն, եւ
զԹովմաս, եւ զՅակովբոս Ալփեայ, եւ զԹադէոս, եւ
19 զՍիմոն Կանանացի, եւ զՅուդա Իսկարիովտացի, որ
եւ մատնեացն զնա:
20 ԳԳ. Գան ի տուն, եւ գայ միւսանգամ ընդ նո-
սա ժողովուրդն, մինչ զի եւ հաց եւս ոչ ժամանել
21 ուտել նոցա: Եւ իբրեւ լուան որ իւրքն էին՝ ելին
ունել զնա, զի համարէին թէ մոլեգնեալ իցէ:
22 Եւ դպիրքն՝ որ յԵրուսաղէմէ իջեալ էին, ասէին թէ
Բէեղզեբուղ գոյ ի դմա, եւ իշխանաւ դիւացն հանէ
դա զդեւս: Եւ կոչեալ զնոսա առ ինքն, առակօք խօ-
սէր ընդ նոսա. զիա՞րդ կարէ սատանայ զսատանայ հա-
24 նել: Եւ արդ՝ եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժա-
25 նեսցի, ոչ կարէ կալ թագաւորութիւնն այն: Եւ եթէ
տուն յանձն իւր բաժանեսցի, ոչ կարէ կալ տունն:
26 Եւ եթէ սատանայ ի վերայ անձին իւրոյ յարեաւ եւ
բաժանեալ է, ոչ կարէ կալ, այլ վախճանեալ է:
Այլ ոչ ոք կարէ զկարասի հզօրի մտեալ ի տուն նո-
րա աւար հարկանել, եթէ ոչ նախ զհզօրն կապի-
28 ցէ, եւ ապա զտուն նորա աւար հարկանիցէ: Ամէն ա-
սեմ ձեզ, զի ամենայն թողցի որդւոց մարդկան մեղք
29 եւ հայհոյութիւնք՝ որչափ եւ հայհոյիցեն. բայց որ
հայհոյեսցէ զՀոգւոյն սրբոյ, ոչ ունիցի թողութիւն
յաւիտեան. այլ պարտական լիցի յաւիտենից մե-
ղաց: Զի ասէին՝ թէ այս պիղծ գոյ ի նմա:
31 Գան եղբարքն եւ մայր նորա, եւ արտաքոյ կա-
32 ցեալ՝ յղեցին եւ կոչէին զնա: Եւ անդ ժողովուրդն
շուրջ զնովաւ նստէր. եւ իբրեւ ասացին ցնա, ահաւա-
սիկ մայր քո եւ եղբարք քո կան արտաքոյ եւ խնդրեն

դքեզ: Պատասխանի ետ նոցա եւ ասէ. ո՞վ է իմ 33
մայր, կամ եղբարք: Հայեցաւ շուրջ զիւրեւ յաշա-
կերտսն զի նստէին, եւ ասէ. ահաւասիկ մայր իմ եւ
եղբարք իմ. Զի որ առնիցէ զկամս Աստուծոյ, նա է 35
իմ եղբայր եւ քոյր եւ մայր:

ԳԼՈՒԽ Դ.

ԻԵ. Դարձեալ սկսաւ ուսուցանել առ ծովե- 1
զերբն. եւ խռնեցան զնովաւ ժողովուրդք բազումք.
մինչեւ ի նաւ մտանել նմա, եւ նստել ի ծովուն. եւ
ամենայն ժողովուրդն զծովեզերբն զցամաքն ունէին:
Եւ ուսուցանէր զնոսա առակօք բազում ինչ. եւ ա- 2
սէր նոցա ի վարդապետութեան իւրում: Լսէք ահա 3
ել սերմանող սերմանել: Եւ եղեւ ի սերմանելն, ոմն 4
անկաւ առ ճանապարհաւ, եւ եկն թռչուն եւ եկեր
զնա: Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող 5
բազում. եւ վաղվաղակի բուսաւ, քանզի ոչ գոյր
հիւթ երկրին. եւ յորժամ ծագեաց արեւ՝ ջեռաւ,
եւ զի ոչ գոյին արմատք՝ ցամաքեցաւ: Եւ այլն ան- 7
կաւ ի մէջ փշոց. ելին փուշքն եւ հեղձուցին զնա, եւ
պտուղ ոչ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բարւոք. եւ 8
ելեալ աճեցեալ տայր պտուղ, եւ բերէր ընդ միոյ
երեսուն՝ եւ ընդ միոյ վաթսուն՝ եւ ընդ միոյ հարիւր:
Եւ ասէր. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: 9

ԻԶ. Եւ իբրեւ եղեւ առանձինն՝ հարցին ցնա, 10
որ զնովաւն էին աշակերտօքն հանդերձ՝ զառակսն.
Եւ ասէ ցնոսա. ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս 11
արքայութեան Աստուծոյ, բայց նոցա որ արտաքինքն
են՝ ամենայն ինչ առակօք լինի. զի տեսանելով տեսա- 12
ցեն՝ եւ մի՛ տեսցեն, եւ լսելով լուիցեն՝ եւ մի՛ իմանա-
ցեն, զի մի՛ երբեք դարձցին՝ եւ թողցի նոցա: Եւ ա- 13
սէ ցնոսա. ոչ գիտէք զառակս զայս, եւ զիա՞րդ զա-
մենայն առակսն գիտիցէք: Որ սերմանէն՝ զբանն սեր- 14
մանէ: Եւ նոքա են որ առ ճանապարհաւն, ուր բանն 15

սերմանի. եւ յորժամ լսեն զնա, գայ սատանայ՝ եւ
16 հանէ զբանն սերմանեալ ի սիրտս նոցա: Եւ
նոքա են որ յապառաժին սերմանեցան, որք յորժամ
լսիցեն զբանն, վաղվաղակի խնդութեամբ ընդունին.
17 եւ զի ոչ ունին արմատս յանձինս, այլ առ ժամա-
նակ մի են, ապա ի հասանել նեղութեան կամ հա-
18 լածման վասն բանին, վաղվաղակի գայթագղին: Իսկ
որ ի մէջ փշոցն սերմանեցան՝ նոքա են, որ իբրեւ
19 զբանն լսեն, եւ հոգք աշխարհիս եւ պատրանք մե-
ծութեան մտանեն, եւ հեղձուցանեն զբանն եւ ան-
20 պտուղ լինի: Եւ նոքա են որ յերկիրն բարւոք սերմա-
նեցան, որք լսեն զբանն՝ եւ ընդունին, եւ տան պտուղ՝
ընդ միոյ երեսուն՝ եւ ընդ միոյ վաթսուն՝ եւ ընդ միոյ
հարիւր:

21 ԳԼ. Եւ ասէ ցնոսա. միթէ գա՞յ ճրագ, զի ընդ
գրուանաւ դնիցի կամ ընդ մահճօք. ո՞չ ապաքէն ի
22 վերայ աշտանակի դնիցի: Զի չէ ինչ ի ծածուկ՝ որ թէ
ոչ յայտնեսցի. եւ ոչ եղեւ ինչ գաղտնի, եթէ ոչ ի
23 յայտ գայցէ: Եթէ ոք ունիցի ականջս լսելոյ, լուի-
24 ցէ: Եւ ասէ ցնոսա. տեսէք զինչ լսէքդ, եւ յաւելցի
ձեզ որոց լսէքդ. որով չափով չափէք՝ նովին չա-
25 փեսցի ձեզ: Որ ոք ունիցի՝ տացի նմա. եւ որ ոչն
ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ:

26 ԳԿ. Եւ ասէր. այսպէս է արքայութիւն Աստու-
ծոյ, որպէս զի այր մի արկանիցէ սերմանիս յեր-
27 կիր, եւ ննջիցէ եւ յառնիցէ զցայգ եւ զցերեկ. եւ
սերմանիքն բուսանիցեն եւ աճիցեն, եւ նա ոչ գիտէ՝
28 թէ երկիրն ինքնին բերէ զպտուղ. նախ զխոտն եւ ապա
29 զհասկն, ապա զցորեանն ատոք ի հասկին: Այլ յոր-
ժամ տայցէ զպտուղն, վաղվաղակի առաքէ մանգաղ,
30 զի հասեալ են հունձք: Եւ ասէր. ո՞ւմ նմանեցուս-
ցուք զարքայութիւն Աստուծոյ, կամ որո՞վ առա-
31 կաւ առակեսցուք զնա: Որպէս հատն մանանխոյ՝ որ
յորժամ սերմանիցի յերկրի, փոքրագոյն է քան զա-

մենայն սերմանիս՝ որ են յերկրի. Եւ յորժամ սեր- 32
մանիցի, բուսանի եւ լինի մեծ քան զամենայն բան-
ջար, եւ արձակէ ոստս մեծամեծս, մինչեւ բաւական
լինել ընդ հովանեաւ նորա թռչնոց երկնից բնակել:
Եւ այնպիսի առակօք խօսէր ընդ նոսա զբանն, որ- 33
պէս կարող լինէին լսել. Եւ առանց առակի ոչինչ 34
խօսէր ընդ նոսա, բայց առանձինն աշակերտաց իւրոց
մեկնէր զամենայն:

Գբ. Եւ ասէ ցնոսա յաւուրն յայնմիկ՝ իբրեւ 35
ընդ երեկս լինէր. եկայք անցցուք յայն կողմն: Թո- 36
ղուն զժողովուրդն, եւ առնուն զնա նաւաւն հան-
դերձ, եւ այլ եւս նաւս որ էին ընդ նմա: Եւ լինէր 37
մրրիկ մեծ հողմոյ, եւ զալիսն ի նաւն զեղոյր, մինչ
գրեթէ լի իսկ լինել: Եւ ինքն ննջէր ի խելս նաւին 38
ի վերայ բարձի. զարթուցանէին զնա եւ ասէին. վար-
դապետ՝ ոչինչ է քեզ փոյթ, զի կորնչիմք աւասիկ:
Եւ զարթուցեալ սաստեաց հողմոյն եւ ծովուն, 39
ասէ. դադարեա կարկեաց, եւ դադարեաց հողմն, եւ
եղեւ խաղաղութիւն մեծ: Եւ ասէ ցնոսա. ընդէ՞ր 40
այդպէս վատասիրտք էք, չեւ եւս ունիք հաւատս,
եւ երկեան երկիւղ մեծ, եւ ասէին ցմիմեանս. ո՞ ոք
արդեօք իցէ սա, զի եւ հողմ եւ ծով հնազան-
դին սմա:

ԳԼՈՒԽ Ե.

Եւ եկն յայնկոյս ծովուն յաշխարհն Գերգեսաց- 1
ւոց: Եւ ընդ ելանելն նորա ի նաւէ անտի, պատա-
հեաց նմա այր մի ի գերեզմանացն՝ զոր ունէր այս 2
պիղծ. որոյ եւ բնակութիւն իւր իսկ ի գերեզմանս 3
էր եւ ոչ շղթայիւք ոք կարէր կապել զնա. վասն
բազում անգամ ոտնակապօք եւ շղթայիւք կապելոյ, 4
եւ խզելոյ ի նմանէ զշղթայսն, եւ զոտնակապսն խոր-
տակելոյ. եւ ոչ ոք կարէր պարտել զնա. քանզի հանա- 5
պազ զցայգ եւ զցերեկ ի գերեզմանս եւ ի լերինս աղա-

6 ղակէր, եւ կոծէր զանձն իւր քարամբք։ Իբրեւ ետես
7 զՅիսուս ի հեռաստանէ, ընթացաւ եւ երկիր եպագ
նմա։ Աղաղակեաց ի ձայն մեծ՝ եւ ասէ, զի՞ կայ իմ
8 եւ քո՝ Յիսուս որդի Աստուծոյ բարձրելոյ. երդմնե-
9 ցուցանեմ զքեզ յԱստուած, մի տանջեր զիս։ Քան-
զի ասէր ցնա. ել այսդ պիղծ ի մարդոյ այտի։ Եւ
10 հարցանէր ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո, եւ ասէ ցնա.
լեգէոն անուն է իմ, քանզի բազումք եմք։ Եւ ա-
11 ղաչէին զնա յոյժ, զի մի արտաքսեսցէ զնոսա արտաքս քան
զաշխարհն։ Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց
արօտական մեծ։ Աղաչէին զնա ամենայն դեւքն եւ
ասեն, արձակեա զմեզ ի խոզսն, զի մտցուք ի նոսա։
12 Եւ հրամայեաց նոցա, եւ ելին այսքն պիղծք՝ եւ դի-
մեաց երամակն ի դարէ անտի ի ծովն. էին իբրեւ եր-
13 կու հազարք, եւ հեղձնուին ի ծովուն։ Եւ խոզա-
րածքն փախեան, եւ պատմեցին ի քաղաքին եւ յա-
14 գարակս, եւ ելին տեսանել զինչ իցէ՝ որ գործեցաւն։
15 Գան առ Յիսուս, եւ տեսանեն զդիւահարն զի նստէր
զգեցեալ եւ զգաստացեալ, որ ունէր զլեգէոնն, եւ
16 զահի հարան։ Եւ պատմեցին նոցա՝ որոց տեսեալն
էր, թէ զի՞նչ եղեւ այսահարին, եւ զի՞նչ վասն խո-
17 զիցն։ Եւ սկսան աղաչել զնա գնալ ի սահմանաց
18 նոցա։ Եւ իբրեւ ելանէր նա ի նաւն, աղաչէր զնա
19 դիւահարն՝ զի ընդ նմա իցէ. Եւ Յիսուս ոչ ետ նմա
թոյլ, այլ ասէ ցնա. երթ ի տուն քո առ ընտանիս
քո, եւ պատմեա նոցա, որ ինչ միանգամ Տէր արար
20 քեզ՝ եւ ողորմեցաւ քեզ։ Եւ չոգաւ՝ եւ սկսաւ քա-
րոզել ի Դեկապօլին, զոր ինչ արար նմա Յիսուս, եւ
ամենեքին զարմանային։
21 ԴԳ. Եւ իբրեւ անց Յիսուս միւսանգամ յայն
կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, եւ էր
22 առ ծովեզերբն։ Եւ ահա մի ի ժողովրդապետացն
գայր, որում անուն էր Յայրոս. իբրեւ ետես զնա՝
23 անկաւ առ ոտս նորա. Աղաչէր զնա յոյժ եւ ասէր,

թէ դուստր նորա մերձ է ի մահ, զի եկեալ դնիցէ
նմա ձեռն, որպէս զի ապրեսցի եւ կեցցէ: Եւ գնաց 24
ընդ նմա. երթայր եւ ժողովուրդ բազում զհետ նո-
րա, եւ նեղէին զնա: Եւ կին մի էր ի տեռատեսու- 25
թեան արեան զերկոտասան ամ. Եւ յոյժ վշտացեալ 26
ի բազում բժշկաց, եւ ծախեալ զինչս իւր զամենայն՝
եւ չէր ինչ օգտեալ, այլ եւս առաւել զայրացեալ:
Իբրեւ լուաւ զՅիսուսէ՝ եկն ի մէջ ամբոխին յետոյ՝ 27
եւ բուռն եհար զհանդերձէ նորա. Քանզի խորհէր 28
ի միտ, թէ միայն մերձեցայց ի հանդերձս նորա,
փրկեցայց. Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան 29
նորա՝ եւ գիտաց ի մարմին իւր թէ բժշկեցաւ ի տան- 30
ջանացն: Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս
յանձն իւր զզօրութիւնն որ ել ի նմանէ. դարձաւ
յամբոխն եւ ասէ, ո՞վ մերձեցաւ ի հանդերձս իմ:
Եւ ասեն ցնա աշակերտքն. տեսանես՝ զի ամբոխդ նե-
ղէ զքեզ, եւ ասես՝ թէ ո՞վ մերձեցաւ ի հանդերձս
իմ: Եւ շուրջ հայէր տեսանել՝ թէ ո՞ զայն արար: 32
Եւ կինն զարհուրեալ եւ դողացեալ վասն որոյ 33
գաղտն արար, քանզի գիտէր զինչ եղեւ նմա, եկն
անկաւ առաջի նորա, եւ ասաց զամենայն իրսն ստու-
գութեամբ: Եւ Յիսուս ասէ ցնա. դուստր՝ հաւատք 34
քո կեցուցին զքեզ. երթ ի խաղաղութիւն, եւ եղի-
ջիր ողջ ի տանջանաց քոց:

ՓՓ. Մինչ դեռ նա զայն խօսէր, գան ոմանք ի 35
տանէ ժողովրդապետին, եւ ասեն՝ թէ դուստրն քո
մեռաւ, զի՞ եւս աշխատ առնես զվարդապետդ: Իսկ 36
Յիսուս իբրեւ լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողո-
վրդապետն. մի երկնչիր, բայց միայն հաւատա: Եւ 37
ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետ-
րոս եւ զՅակոբոս եւ զՅովհաննէս՝ զեղբայրն Յա-
կոբայ: Գայ ի տուն ժողովրդապետին, եւ տեսանէ 38
ամբոխ յոյժ եւ լալականս, եւ աղաղակ յոյժ: Եւ 39
մտեալ ի ներքս՝ ասէ ցնոսա. զի՞ խռովեալ էք եւ

40 լայք, մանուկն ոչ է մեռեալ, այլ ննջէ։ Եւ ծաղր
առնէին զնա. եւ նորա հանեալ արտաքս զամենե-
սեան, առնու ընդ իւր զհայր մանկանն եւ զմայր, եւ
զնոսա որ ընդ նմայն էին, եւ մտանէ ուր դնէր մա-
41 նուկն. Եւ կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա.
տալիթա կումի, որ թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ա-
42 սեմ՝ արի։ Եւ վաղվաղակի յարեաւ աղջիկն եւ գնայր,
քանզի էր ամաց իբրեւ երկոտասանից. եւ զարմացան
43 մեծաւ զարմանալեօք։ Եւ պատուէր տայր նոցա յոյժ,
զի մի ոք գիտասցէ զայն. եւ ասաց տալ նմա ուտել։

ԳԼՈՒԽ Զ.

1 ԳԵ. Եւ ել անտի, եկն ի գաւառ իւր. եւ եր-
2 թային զհետ նորա աշակերտքն իւր։ Եւ եղեւ ի շա-
բաթուն՝ սկսաւ ուսուցանել ի ժողովրդեանն. եւ բա-
զումք իբրեւ լսէին՝ զարմանային ընդ վարդապետու-
թիւն նորա, եւ ասէին. ուստի՞ է սմա այս, կամ
զի՞նչ է իմաստութիւնս որ տուեալ է սմա. զի զօրու-
3 թիւնք այսպիսիք ի ձեռաց սորա Ո՞չ սա է մա-
նուկհիւսանն, եւ որդին Մարիամու, եղբայր Յա-
կովբայ եւ Յովսեայ եւ Յուդայի եւ Սիմոնի, եւ չի՞-
ցե՞ն քորքն դորա աստ առ մեզ. եւ գայթագղէին ի
4 նա։ Եւ ասէ ցնոսա. ոչ է մարգարէ անարգ, բայց ե-
թէ ի գաւառի իւրում եւ յազգատոհմի եւ ի տան
5 իւրում։ Եւ ոչ կարէր անդ եւ ոչ մի ինչ զօրութիւն
առնել, բայց սակաւ հիւանդաց ձեռն եդեալ՝ բժշկէր
զնոսա։ Եւ զարմանայր վասն անհաւատութեանն նոցա։
ԳԶ. Եւ շրջէր շուրջ զգաւառօքն եւ ուսուցա-
7 նէր։ Եւ կոչեաց առ ինքն զերկոտասանսն, եւ սկսաւ
առաքել զնոսա երկուս երկուս. եւ տայր նոցա իշխա-
8 նութիւն ի վերայ այսոց պղծոց։ Եւ պատուիրեաց
նոցա՝ զի մի ինչ բարձցեն ի ճանապարհ, բայց միայն
գաւազան. մի պարկ, մի հաց, մի պղինձ ի գօտիս։
9 Այլ ագանել հողաթափս, եւ մի զգենուցուք՝ ասէ,

երկուս պատմուճանս: Եւ ասէր ցնոսա. յոր տուն 10
մտանիցէք, անդէն օթեւանս կալջիք՝ մինչեւ ելանի-
ցէք անտի: Եւ որ ոչ ընկալցին զձեզ, եւ ոչ լուիցեն 11
ձեզ, յորժամ ելանիցէք անտի՝ թօթափեսջիք զփոշի
ոտից ձերոց ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ քարո- 12
զէին զի ապաշխարեսցեն: Եւ դեւս բազումս հանէին. 13
եւ օծանէին իւղով զբազում հիւանդս՝ եւ բժշկէին
զնոսա:

Գէ. Եւ լուաւ արքայ Հերովդէս. քանզի յայտ- 14
նի եղեւ անուն նորա. եւ ասէր, թէ Յովհաննէս
մկրտիչ յարեաւ ի մեռելոց, եւ վասն այնորիկ զօրու-
թիւնք լինին նովաւ: Այլք ասէին թէ Եղիա է, իսկ 15
այլքն՝ թէ մարգարէ է. կամ թէ իբրեւ զմի ի մար-
գարէից: Իբրեւ լուաւ Հերովդէս, ասէ. զորոյ ես 16
զգլուխն հատի զՅովհաննու, սա է նա, յարեաւ ի
մեռելոց: Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ 17
զՅովհաննէս, եւ կապեաց զնա եւ եդ ի բանտի վասն
Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա, զի նա կին
արար զնա: Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս՝ 18
թէ ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո: Եւ Հե- 19
րովդիա ոխացեալ էր ընդ նմա, եւ կամէր սպանանել
զնա, եւ ոչ կարէր: Զի Հերովդէս երկնչէր ի Յով- 20
հաննէ. քանզի գիտէր զնա այր արդար եւ սուրբ. եւ
սպասէր նմա. եւ լուեալ ի նմանէ՝ բազում ինչ առ-
նէր, եւ քաղցրութեամբ լսէր նմա: Իբրեւ օր մի լինէր 21
պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս յաւուր
ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց եւ հազարապետաց
եւ մեծամեծաց Գալիլեացւոց, Եւ ի մտանել դստերն 22
Հերովդիայ եւ ի կաքաւել ի մէջ բազմականին, հաճոյ
եղեւ Հերովդի եւ բազմականացն: Ասէ թագաւորն ցաղ-
ջիկն. խնդրեա յինէն զոր ինչ կամիս, եւ տաց քեզ: Եւ 23
երդուաւ նմա բազում անգամ թէ զոր ինչ եւ խնդրես- 24
ցես դու յինէն, տաց քեզ մինչեւ ցկէս թագաւորութեան
իմոյ: Նա ելեալ ասէ ցմայր իւր, զի՞նչ խնդրեցից.

25 եւ նա ասէ. զգլուխն Յովհաննու մկրտչի: Եւ մտեալ
անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ. կամիմ զի
այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկտեղ զգլուխն
26 Յովհաննու մկրտչի: Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն,
այլ վասն երդմանցն եւ կոչնականացն ոչ կամեցաւ
27 անարգել զնա. Եւ առաքեաց վաղվաղակի թա-
գաւորն դահիճ, եւ հրամայեաց բերել զգլուխն
28 նորա. եւ չոգաւ գլխատեաց զնա ի բանտին. Եւ եբեր
զգլուխն նորա սկտեղբ՝ եւ ետ ցաղջիկն. եւ աղջիկն
29 տարաւ ետ մօր իւրում: Իբրեւ լուան աշակերտքն
նորա, եկին բարձին զմարմինն նորա՝ եւ եդին ի
գերեզմանի:

30 ԵԿ. Ժողովեցան առաքեալքն առ Յիսուս, եւ
պատմեցին նմա զամենայն ինչ զոր արարին եւ զոր
31 ուսուցին: Եւ ասէ ցնոսա Յիսուս. եկայք դուք
առանձինն յանապատ տեղի, եւ հանգիջիք սակաւ
մի. զի էին բազումք որ երթային եւ գային, եւ հաց
32 անգամ չժամանէին ուտել: Եւ գնացին նաւու յա-
33 նապատ տեղի առանձինն: Եւ տեսին զնոսա զի երթայ-
ին, եւ զգացին բազումք. եւ հետի յամենայն քա-
ղաքաց խուռն ընթանային անդր, եւ մերձենային առ
34 նոսա: Եւ ելեալ ետես ամբոխ բազում, եւ գթա-
ցաւ ի նոսա, զի էին իբրեւ ոչխարք՝ որոց ոչ իցէ
35 հովիւ. եւ սկսաւ ուսուցանել զնոսա յոյժ: Եւ իբրեւ
բազում ժամ եղեւ, մատուցեալ աշակերտքն ասէին.
36 տեղիս անապատ է, մինչ դեռ աւուր կայ, Արձակեա
զժողովուրդդ, զի երթեալ շուրջ յագարակս եւ ի
գեղս՝ գնեսցեն իւրեանց զինչ ուտիցեն, զի աստ ինչ
37 ուտել ոչ ունին: Նա պատասխանի ետ եւ ասէ ցնո-
սա. դուք տուք դոցա ուտել. ասեն ցնա՝ երթիցուք
գնեսցուք երկերիւր դահեկանի հաց, եւ տացուք
38 դոցա ուտել: Ասէ ցնոսա. քանի՞ նկանակ ունիք՝ եր-
թայք տեսէք, իբրեւ գիտացին, ասեն ցնա՝ հինգ՝ եւ
երկուս ձկունս: Եւ հրամայեաց նոցա բազմել երա-

խանս երախանս ի վերայ դալար խոտոյ: Եւ բազմե- 40
ցան դասք դասք՝ ուր հարիւր եւ ուր յիսուն: Եւ 41
առեալ զհինգ նկանակն եւ զերկուս ձկունսն, հայե-
ցաւ յերկինս, օրհնեաց՝ մանրեաց զնկանակսն՝ եւ
ետ ցաշակերտսն զի արկցեն նոցա, եւ զերկուս ձկուն-
սըն բաշխեաց ամենեցուն: Կերան եւ յագեցան, եւ 42
բարձին զնշխարսն երկոտասան սակառի լի, եւ ի 43
ձկանց անտի: Եւ էին որ կերանն՝ իբրեւ արք հինգ 44
հազար:

ԽԲ. Եւ նոյն ժամայն ճեպեաց զաշակերտսն 45
մտանել ի նաւ եւ յառաջագոյն քան զնա երթալ
յայնկոյս ի Բեթսայիդա, մինչ ինքն զժողովուրդսն 46
արձակիցէ: Եւ հրաժարեալ ի նոցանէ՝ ել ի լեառն
կալ յաղօթս: Եւ իբրեւ երեկոյ եղեւ, էր նաւն ի մէջ 47
ծովուն, եւ ինքն ի ցամաքի: Եւ ետես զնոսա հող-
մակոծեալս ի վարելն, զի էր հողմն ընդդէմ նոցա. եւ
զչորրորդ պահու գիշերոյն գայ առ նոսա գնալով ի
վերայ ծովուն, եւ կամէր զանց առնել առ նոքօք: 49
Նոքա իբրեւ տեսին զի գնայր ի վերայ ծովուն, հա-
մարեցան թէ առ աչօք ինչ լինիցի, եւ զաղաղակ
բարձին: Քանզի ամենեքեան տեսին զնա՝ եւ խռովե- 50
ցան. եւ նա անդէն վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա
եւ ասէ. քաջալերեցարուք, ես եմ՝ մի երկնչիք: Եւ 51
ել ի նաւն առ նոսա, եւ դադարեաց հողմն: Եւ ա-
ռաւել եւս յիմարեալ էին ի միտս իւրեանց, եւ զար-
մանային յոյժ. քանզի եւ ի վերայ հացին ոչ իմացան, 52
զի էր սիրտ նոցա թմբրեալ: Եւ իբրեւ անցին յայն- 53
կոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ: Եւ իբրեւ ելին 54
ի նաւէ անտի՝ իսկ եւ իսկ ծանեան զնա արք տեղւոյն
այնորիկ. եւ ընթացեալ այսր անդր ընդ ամենայն 55
գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէ- 56
ին՝ թէ անդ իցէ: Եւ ուր եւ մտանէր ի գեղս կամ
ի քաղաքս կամ յագարակս, ի հրապարակս դնէին
զախտաժէտս, եւ աղաչէին զնա՝ զի գոնէ ի քղանցս

հանդերձի նորա մերձենայցեն. եւ որ միանգամ մեր-
ձեցանն՝ փրկեցան:

ԳԼՈՒԽ Է.

1 ԿԳ. Եւ ժողովեցան առ նա փարիսեցիքն՝ եւ ո-
2 մանք ի դպրացն՝ որ եկեալ էին յԵրուսաղէմէ: Եւ
տեսեալ զոմանս յաշակերտաց նորա, զի խառնակ
ձեռօք, այսինքն է՝ անլուայ ուտէին հաց, բամբասե-
3 ցին: Զի փարիսեցիքն եւ ամենայն հրէայք՝ եթէ ոչ
բռնալիր լուանան զձեռս, հաց ոչ ուտեն. քանզի ու-
4 նին զաւանդութիւն ծերոցն. եւ ի հրապարակէ մտեալ՝
եթէ ոչ նախ մկրտիցին, ոչ ուտեն. եւ այլ ինչ բա-
զում է՝ զոր ընկալան ունել, մկրտութիւնս բաժա-
5 կաց եւ ստամանաց եւ պղնձեաց եւ մահճաց: Ապա
հարցանեն զնա փարիսեցիքն եւ դպիրք՝ թէ ընդէ՞ր
աշակերտքն քո ոչ գնան ըստ աւանդութեան ծերոցն.
6 այլ խառնակ ձեռօք հաց ուտեն: Նա պատասխանի
ետ եւ ասէ ցնոսա՝ թէ բարւոք մարգարէացաւ Եսայի
վասն ձեր կեղծաւորաց, որպէս ասաց. Ժողովուրդս այս
շրթամբք մեծարէ զիս, եւ սիրտք նոցա հեռացեալ ի
7 բացեայ են յինէն: Զուր պաշտեն զիս. ուսուցանեն
8 վարդապետութիւնս զմարդկան պատուիրեալս: Թո-
ղեալ զպատուիրանն Աստուծոյ, ունիք զմարդկան ա-
ւանդութիւն. մկրտութիւնս ստամանաց եւ բաժա-
9 կաց, եւ այլոց նմանեաց սոցին առնէք բազումս: Եւ
ասէ ցնոսա. բարւոք խոտէք զպատուիրանն Աստու-
10 ծոյ, զի զձեր աւանդութիւն հաստատիցէք: Զի Մով-
սէս ասէ. պատուեա զհայր քո եւ զմայր, եւ որ չա-
րախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի:
11 Եւ դուք ասէք. եթէ ասիցէ ոք ցհայր կամ ցմայր՝
12 կորբան, որ է պատարագ, զոր յինէն օգտեսցիս. Եւ
ոչ եւս տայք թոյլ նմա առնել ինչ հօրն կամ մօր:
13 Եւ անարգէք զբանն Աստուծոյ ձերով աւանդու-
թեամբն, զոր աւանդեցէք. եւ բազում ինչ այլ

որ այսմ նման է՝ առնէք: Եւ կոչեալ առ ինքն զա- 14
մենայն ժողովուրդն, ասէ ցնոսա. լուարուք ինձ ամե-
նեքեան՝ և ի միտ առէք: Ոչինչ արտաքուստ ի մարդ 15
մտեալ՝ եթէ կարիցէ պղծել զնա, այլ որ ելանէ ի
նմանէ՝ այն է որ պղծէ զմարդն: Որ ունիցի ականջս լսե- 16
լոյ՝ լուիցէ:

ԻԳ. Եւ իբրև եմուտ ի տուն յամբոխէ անտի, 17
հարցանէին զնա աշակերտքն վասն առակին: Եւ ասէ 18
ցնոսա. այդպէս և դուք անմիտ էք, ոչ իմանայք՝
եթէ ամենայն որ արտաքուստ ի ներքս մտանէ ի մարդ,
ոչ կարէ զնա պղծել. Զի ոչ եթէ ի սիրտ նորա մտա- 19
նէ, այլ յորովայն՝ և արտաքս ելանէ. և սրբէ զա-
մենայն կերակուրսն: Եւ ասէր, թէ որ ինչ ի մարդոյն 20
ելանէ՝ այն պղծէ զմարդ: Զի ի ներքուստ ի սրտէ 21
մարդկան խորհուրդք չարութեան ելանեն. շնութիւնք,
պոռնկութիւնք, Գողութիւնք, սպանութիւնք, ա- 22
գահութիւնք, չարութիւնք, նենգութիւնք, գիջու-
թիւն, չարակնութիւնք, հայհոյութիւն, ամբարտա-
ւանութիւն, անզգամութիւն: Այս ամենայն չարիք ի 23
ներքուստ ելանեն, և պղծեն զմարդ:

ԻԴ. Եւ անտի յարուցեալ եկն ի սահմանս Տիւ- 24
րոսի և Սիդովնի. և մտեալ ի տուն՝ ոչ կամէր ու-
մեք յայտնել, և ոչ կարաց ծածկել: Լուաւ կին 25
մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսոց պղծոց.
եկն անկաւ առաջի նորա: Եւ կինն էր հեթանոս՝ 26
փիւնիկ Ասորի յազգէ. և աղաչէր զնա՝ զի զդեւն
հանցէ ի դստերէ նորա: Եւ Յիսուս ասէ ցնա. Թոյլ 27
տուր՝ նախ յագեսցին մանկունք. զի ոչ է բարւոք առ-
նուլ զհաց մանկանց և արկանել շանց: Նա պա- 28
տասխանի ետ և ասէ. տէր՝ և շունք ի փշրանաց սե-
ղանոյ մանկանցն կերակրին: Եւ ասէ ցնա. վասն այդր 29
բանի երթ, ել դեւն ի դստերէ քումէ: Գնաց ի 30
տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն. և զդուստրն, զի
անկեալ դնէր ի մահիճս: Եւ ելեալ միւսանգամ ի 31

սահմանացն Տիւրոսի եւ Սիդովնի, եւ եկն ի ծովեզ-
րըն Գալիլեացւոց ի մէջ սահմանացն ի Դեկապօլիս :
32 Եւ բերին առաջի նորա խուլ մի եւ համր. եւ ա-
33 ղաչէին՝ զի ձեռն դիցէ ի վերայ նորա : Եւ առեալ
զնա մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ
ականջս նորա՝ եւ եթուք անդր. եւ կալաւ զլեզուէ
34 նորա. Հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ եւ ասէ. Եփ-
35 փաթայ՝ որ է բացիր : Եւ նոյնժամայն բացան լսելիք
նորա, եւ լուծան կապանք լեզուի նորա. եւ խօսէր ու-
36 ղիղ : Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի՛ ումեք ասիցեն.
եւ որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել
37 քարոզէին. Եւ եւս քան զեւս զարմանային եւ ասէին.
զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել
տայ՝ եւ համերց խօսել :

ԳԼՈՒԽ Ը.

1 ԵՒ. Յաւուրսն յայնոսիկ դարձեալ ժողովուրդ
բազում էր, եւ ինչ ոչ ունէին ուտել. կոչեաց զա-
2 շակերտս իւր՝ եւ ասէ ցնոսա : Գթամ ես ի վերայ
ժողովրդեանդ. զի արդ երեք աւուրք են՝ մինչ առ իս
3 են, եւ ոչ ունին զինչ ուտիցեն : Եւ եթէ արձակեմ
զդոսա նօթիս ի տունս իւրեանց՝ նքթիցին ի ճանա-
պարհի. զի ոմանք ի դոցանէ ի հեռաստանէ եկեալ
4 են : Պատասխանի ետուն նմա աշակերտքն նորա. ու-
ստի՞ կարեն յագեցուցանել զդոսա հացիւ յանապատի
5 աստ : Եւ հարցանէր զնոսա. քանի՞ նկանակ հաց ու-
6 նիք. եւ նոքա ասեն՝ եօթն : Եւ հրամայեաց ժողովր-
դեանն բազմել ի վերայ երկրի. եւ առեալ զեօթն
նկանակն՝ գոհացաւ՝ եբեկ, եւ տայր ցաշակերտսն զի
7 արկցեն. եւ արկին առաջի ժողովրդեանն : Եւ ձկունս
սակաւ ունէին. եւ զայն եւս օրհնեաց, եւ հրամայեաց
8 արկանել : Կերան եւ յագեցան, եւ բարձին զնշխարս
9 կոտորոցն եօթն զամբիղ : Եւ էին որ կերանն՝ իբրեւ
չորք հազարք. եւ արձակեաց զնոսա :

ԵԼ. Եւ նոյն ժամայն մտեալ ի նաւ հանդերձ 10
աշակերտօքն՝ եկն ի կողմանս Դաղմանութեայ: Ելին 11
փարիսեցիքն՝ եւ սկսան վիճել ընդ նմա, եւ խնդրէին
ի նմանէ նշան յերկնից՝ փորձելով զնա: Եւ զայրա- 12
ցաւ յոգի իւր՝ եւ ասէ. զի՞ է՝ զի ազգս այս նշան
խնդրէ. ամէն ասեմ ձեզ, թէ տացի նշան ազգիս այս- 13
միկ: Եւ թող զնոսա. դարձեալ եմուտ ի նաւ՝ եւ գնաց
յայնկոյս: Եւ մոռացան հաց բառնալ. բայց մի նկա- 14
նակ ունէին ընդ իւրեանս ի նաւին: Եւ պատուիրէր 15
նոցա եւ ասէր. զգոյշ եղերուք ի խմորոյ անտի փա-
րիսեցւոց՝ եւ ի խմորոյ Հերովդիանոսաց: Եւ խորհէին 16
ընդ միմեանս եւ ասէին, թէ զի հաց ոչ ունիմք: Գի- 17
տաց Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. զի՞ խորհիք ի սիրտս
ձեր թերահաւատք՝ թէ հաց ոչ ունիք. տակաւին
ո՞չ իմանայք եւ ո՞չ յիշէք. ապշութիւն ունի զսիրտս
ձեր. Աչք գոն՝ եւ ոչ տեսանէք, ականջք են՝ եւ ոչ 18
լսէք, եւ ոչ իմանայք տակաւին, եւ ոչ յիշէք: Յոր- 19
ժամ զհինգ նկանակն ի հինգ հազարսն, եւ քանի՞
սակառի լի բարձէք զկոտորոցն: Եւ ասեն ցնա, եր-
կոտասան: Եւ յորժամ զեօթն նկանակն ի չորս հա- 20
զարսն, եւ քանի՞ զամբիղ լի բարձէք զկոտորոցն. եւ
նոքա ասեն, եօթն: Եւ ասէ ցնոսա. իսկ զիա՞րդ ոչ ի- 21
մանայք: Գան ի Բեթսայիդա. եւ ածին առաջի նորա 22
կոյր մի, եւ աղաչէին զնա՝ զի մերձեսցի ի նա: Եւ 23
առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, ե-
թուք յաչս նորա, եւ ձեռն եդ ի վերայ նորա. եւ
հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ ինչ: Բացաւ՝ եւ ա- 24
սէր. տեսանեմ զմարդիկս՝ զի շրջին իբրեւ զծառս:
Դարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նորա՝ երաց, եւ 25
տեսանէր. ողջացաւ՝ եւ տեսանէր համարձակ զամե-
նայն: Արձակեաց զնա ի տուն իւր՝ եւ ասէ. ի շէնդ մի 26
մտանիցես, այլ երթ ի տուն քո. եւ յորժամ ի շէնն
մտանիցես՝ մի ումեք ասիցես ի շէնին:

27 ՁԳ. Եւ ել Յիսուս աշակերտօքն հանդերձ ի
շէնս Կեսարեայ Փիլիպպեայ. եւ ի ճանապարհին հար-
ցանէր զաշակերտսն եւ ասէր. զո՞ ուստեք ասեն մար-
28 դիկ՝ թէ իցեմ: Նոքա ետուն պատասխանի՝ եւ
ասեն. զՅովհաննէս մկրտիչ, եւ այլք՝ զԵղիա եւ
29 այլք՝ զմի ոք ի մարգարէից անտի: Ասէ ցնոսա. իսկ
դուք զո՞ ուստեք ասէք զինէն թէ իցեմ. պատաս-
խանի ետ Պետրոս, եւ ասէ ցնա. դու ես Քրիստոսն:
30 Եւ սաստեաց ի նոսա՝ զի մի՛ ումեք ասիցեն ըզ-
31 նմանէ: Եւ սկսաւ ուսուցանել զնոսա, թէ պարտ
է որդւոյ մարդոյ բազում չարչարանս ընդունել,
եւ անարգել յերիցանց եւ ի քահանայապետից եւ
ի դպրաց, եւ մեռանել, եւ յերիր աւուր յառնել:
32 Եւ համարձակ զբանն խօսեցաւ. եւ առեալ զնա
33 մեկուսի Պետրոսի՝ սկսաւ սաստել նմա: Եւ նա դար-
ձաւ ետես զաշակերտսն, սաստեաց Պետրոսի եւ
ասէ. երթ յետս իմ սատանայ. զի ոչ խորհիս դու
34 զԱստուծոյն՝ այլ զմարդկան: Եւ կոչեցեալ առ
ինքն զժողովուրդն աշակերտօքն հանդերձ՝ ասէ ցնո-
սա. եթէ ոք կամի գալ զկնի իմ՝ ուրասցի զանձն իւր,
35 եւ բարձցէ զխաչ իւր՝ եւ եկեսցէ զկնի իմ: Զի որ
կամիցի ապրեցուցանել զանձն իւր՝ կորուսցէ զնա.
եւ որ կորուսցէ զանձն իւր վասն աւետարանին, ա-
36 պրեցուսցէ զնա: Զի՞նչ օգուտ է մարդոյ՝ եթէ զաշ-
խարհս ամենայն շահեսցի, եւ զանձն իւր տուժեսցէ:
37 Քանզի զի՞նչ տացէ մարդ՝ փոխանակ անձին իւրոյ:
38 Զի որ ոք ամօթ համարեսցի զիս եւ զբանս իմ ի
շնացող եւ ի մեղաւոր ազգիս այսմիկ, եւ որդի մար-
դոյ յամօթ արասցէ զնա՝ յորժամ եկեսցէ փառօք
39 հօր իւրոյ եւ հրեշտակաց սրբոց: Եւ ասէ ցնոսա.
ամէն ասեմ ձեզ, զի են ոմանք ի սոցանէ որ աստ
կան, որք մի՛ ճաշակեսցեն զմահ՝ մինչեւ տեսցեն զար-
քայութիւն Աստուծոյ եկեալ զօրութեամբ:

ԳԼՈՒԽ Թ.

Եւ յետ վեց աւուր առնու ընդ իւր Յիսուս ըզ- 1
Պետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ հանէ
զնոսա ի լեառն մի բարձր առանձինն. եւ յայլակեր-
պըս եղեւ առաջի նոցա: Եւ ձորձք նորա եղեն փայ- 2
լուն սպիտակ յոյժ, որպէս Թափիչք երկրի ոչ կարեն
այնպէս սպիտակացուցանել: Եւ երեւեցաւ նոցա 3
Եղիա Մովսիսիւ հանդերձ, եւ խօսէին ընդ Յի-
սուսի: Պատասխանի ետ Պետրոս՝ եւ ասէ ցՅիսուս. 4
Ռաբբի՝ բարւոք է մեզ աստ լինել. եւ արասցուք
երիս տաղաւարս՝ մի քեզ եւ մի Մովսիսի եւ մի
Եղիայի: Քանզի ոչ գիտէր զի՞նչ խօսէր, զի զար- 5
հուրեալ էին: Եւ եղեւ ամպ մի հովանի ի վերայ 6
նոցա. ձայն եղեւ յամպոյ անտի՝ եւ ասէ. դա՛ է
որդի իմ սիրելի, դմա լուարուք: Եւ յանկարծակի 7
հայեցեալ այսր անդր՝ ոչ եւս զոք ուրեք տեսին,
բայց միայն զՅիսուս ընդ իւրեանս: Եւ մինչդեռ 8
իջանէին ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա զի մի՛
ումեք պատմեսցեն զոր տեսինն, բայց յորժամ որդի
մարդոյ ի մեռելոց յարիցէ: Եւ նոքա զբանն ի միտ 9
ունէին, եւ խնդրէին ընդ միմեանս՝ թէ զինչ իցէ ի
մեռելոցն յառնել: Հարցին զնա եւ ասեն. զի՞նչ է 10
այն զոր դպիրքն ասեն՝ եթէ նախ Եղիայի պարտ է
գալ: Նա պատասխանի ետ նոցա եւ ասէ. Եղիա 11
նախ եկեալ յարդարեսցէ զամենայն. իսկ զիա՞րդ
գրեալ է զորդւոյ մարդոյ, զի բազում ինչ չարչա-
րեսցի եւ անարգեսցի: Այլ ես ասեմ ձեզ, եթէ 12
Եղիա եկն, եւ արարին ընդ նմա զինչ եւ կամեցան,
որպէս եւ գրեալ է վասն նորա:

ԺԲ. Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամբոխ 13
շուրջ զնոքօք, եւ զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա:
Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին 14
զնա՝ զարմացան, եւ ընդ առաջ ընթացեալ ողջոյն

15 տային նմա։ Եւ եհարց զնոսա՝ թէ զի՞նչ վիճէիք ընդ
16 նոսա։ Պատասխանի ետ մի ոմն ի ժողովրդենէն եւ
ասէ. վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի
17 այս համր. Եւ ուր հասանէ՝ զարկուցանէ զնա. եւ
փրփրէ՝ եւ կրճտէ զատամունս իւր եւ ցամաքի. եւ
ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, եւ ոչ կարացին
18 հանել զնա։ Պատասխանի ետ նոցա եւ ասէ. ո՞վ
ազգ անհաւատ՝ մինչեւ յե՞րբ իցեմ ընդ ձեզ, մին-
19 չեւ ցե՞րբ անսայցեմ ձեզ. ածէք զնա առ իս։ Եւ
ածին զնա առ նա. իբրեւ ետես զնա այսն, վաղվա-
ղակի շարժլեաց զնա, եւ անկեալ յերկիր թաւալէր
20 եւ փրփրէր։ Եհարց զհայր նորա եւ ասէ. քանի՞
ժամանակք են՝ յորմէհետէ այդ եղեւ դմա. եւ նա
21 ասէ. ի մանկութենէ։ Բազում անգամ ի հուր ար-
կանէ եւ ի ջուր՝ զի կորուսցէ զդա. արդ՝ եթէ կարող
ինչ ես, օգնեա մեզ տէր՝ գթացեալ ի վերայ մեր։
22 Եւ Յիսուս ասէ ցնա. ասացեր՝ թէ կարող ես. ամե-
23 նայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն։ Եւ
վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն՝ եւ ասէ.
24 հաւատամ, օգնեա անհաւատութեանս իմում։ Ի-
բրեւ ետես Յիսուս եթէ կուտի ժողովուրդն ի վե-
րայ, սաստեաց այսոյն պղծոյ եւ ասէ. համրդ եւ
խուլ այս՝ ես տամ քեզ հրաման, ել ի դմանէ, եւ
25 այլ եւս մի մտանիցես ի դա։ Եւ աղաղակեաց՝ եւ
յոյժ լլկեաց զնա, եւ ել. եւ եղեւ պատանեակն
իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմաց իսկ ասել թէ մե-
26 ռաւ։ Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց
27 զնա, եւ կանգնեցաւ։ Եւ իբրեւ եմուտ նա ի տուն,
աշակերտքն առանձինն հարցին ցնա. մեք ընդէ՞ր ոչ
28 կարացաք հանել զնա։ Եւ ասէ ցնոսա. այդ ազգ ոչ
իւիք ելանէ, եթէ ոչ պահովք եւ աղօթիւք։
29 ԶԳ. Եւ անտի ելեալ անցանէին առ Գալիլեաւ-
30 ուքն. եւ ոչ կամէր եթէ ոք գիտասցէ։ Քանզի ու-
սուցանէր զաշակերտսն իւր՝ եւ ասէր ցնոսա, թէ

որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան, եւ սպա-
նանիցեն զնա. եւ իբրեւ սպանցի՝ յերիր աւուր յառ-
նէ։ Եւ նոքա ոչ գիտէին զբանն, եւ երկնչէին հար- 31
ցանել զնա։ Եկն ի Կափառնաում. եւ իբրեւ եմուտ 32
ի տուն, հարցանէր զնոսա. զի՞նչ վիճէիք զճանա-
պարհայն ընդ միմեանս։ Եւ նոքա լուռ լինէին. քան- 33
զի ընդ միմեանս վիճէին ի ճանապարհին թէ ո՛վ մեծ
իցէ։ Եւ իբրեւ նստաւ՝ կոչեաց զերկոտասանսն եւ 34
ասէ ցնոսա. եթէ ոք կամի առաջին լինել՝ եղիցի ա-
մենեցուն կրտսեր՝ եւ ամենեցուն պաշտօնեայ։ Եւ 35
առեալ մանուկ մի կացոյց ի մէջ նոցա. եւ ընկալեալ
զնա ի գիրկս իւր, ասէ ցնոսա։ Որ միանգամ յայս- 36
պիսի մանկտւոյ ընկալցի յանուն իմ, զիս ընդունի.
եւ որ զիս ընդունի, ոչ զիս ընդունի՝ այլ զայն որ
առաքեացն զիս։ Պատասխանի ետ նմա Յովհաննէս 37
եւ ասէ. վարդապետ՝ տեսաք զոմն, զի յանուն քո
դեւս հանէր՝ եւ զմեր կնի ոչ շրջէր, եւ արգելաք
զնա։ Եւ նա ասէ. մի արգելուք զնա. զի ոչոք է՝ որ 38
առնէ զօրութիւնս յանուն իմ, եւ կարիցէ հայհոյել
զիս։ Զի որ ոչն է ընդ մեզ հակառակ, ի մեր կոյս է։ 39
Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանունս 40
յայս, թէ դուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ՝ մի
կորուսցէ զվարձս իւր։ Եւ որ ոք գայթագղեցուսցէ 41
զմի ի փոքրկանցս՝ որ հաւատան յիս, լաւ էր նմա ա-
ռաւել՝ եթէ արկեալ էր ընդ պարանոց նորա երկանս
իշոյ, եւ ընկեցեալ ի ծով։ Եւ եթէ գայթագղե- 42
ցուսցէ զքեզ ձեռն քո, հատ՝ ընկեա ի քէն. զի լաւ
իցէ քեզ խեղ մտանել ի կեանս յաւիտենից, քան
երկուս ձեռս ունել՝ եւ երթալ ի գեհեն ի հուրն
անշէջ։ Ուր որդն նոցա ոչ մեռանի՝ եւ հուրն ոչ 43
շիջանի։ Եւ եթէ ոտն քո գայթագղեցուսցէ զքեզ, 44
հատ՝ ընկեա զնա ի քէն. լաւ իցէ քեզ կաղ մտա-
նել ի կեանս յաւիտենից, քան երկուս ոտս ունել՝
եւ անկանել ի գեհեն ի հուրն անշէջ։ Ուր որդն 45

46 նոցա ոչ մեռանի՝ եւ հուրն ոչ շիջանի։ Եւ եթէ ակն
քո գայթագղեցուսցէ զքեզ, հան ի բաց. լաւ իցէ
քեզ միով ականբ մտանել յարքայութիւն Աստուծոյ
47 քան երկուս աչս ունել՝ եւ անկանել ի գեհեն։ Ուր
48 որդն նոցա ոչ մեռանի՝ եւ հուրն ոչ շիջանի։ Զի
ամենայն ինչ հրով յաղեսցի, եւ ամենայն ողջակէզ
49 աղիւ յաղեսցի։ Բարւոք է աղ. եւ եթէ աղն անհա-
մեսցի՝ ի՞ւ համեմեսցի. արդ՝ դուք կալարուք յանձինս
ձեր զաղն, եւ խաղաղութիւն արարէք ընդ միմեանս։

ԳԼՈՒԽ Ժ.

1 ԶԹ. Եւ անտի յարուցեալ գայ ի սահմանս
Հրէաստանի յայնկոյս Յորդանանու. եւ երթայր գու-
մարեալ խռնեալ ժողովուրդն առ նա, եւ որպէս սովոր
2 էր՝ միւսանգամ ուսուցանէր զնոսա։ Իսկ փարիսե-
ցիքն մատուցեալ փորձելով հարցանէին զնա՝ եւ ա-
3 սէին, եթէ արժա՞ն իցէ առն զկին իւր արձակել։ Նա
պատասխանի ետ նոցա եւ ասէ. զի՞նչ պատուիրեաց
4 ձեզ Մովսէս։ Եւ նոքա ասեն. Մովսէս հրաման ետ
5 գիր մեկնելոյ գրել, եւ արձակել։ Պատասխանի ետ
Յիսուս՝ եւ ասէ ցնոսա. վասն խստասրտութեան ձերոյ
6 գրեաց ձեզ զպատուիրանն զայն։ Այլ ի սկզբանէ
արարածոց, արու եւ էգ արար զնոսա Աստուած, եւ
7 ասէ. Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր,
8 եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ։ Եւ եղիցին երկոքեան ի
մարմին մի. եւ այնուհետեւ ոչ են երկու՝ այլ մար-
9 մին մի։ Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մե-
10 կնեսցէ։ Եւ ի տան դարձեալ աշակերտքն զնոյն հար-
11 ցին զնա։ Եւ ասէ ցնոսա. եթէ այր արձակեսցէ զկին
12 իւր՝ եւ առասցէ այլ, շնայ. Եւ կին եթէ ելցէ յառնէ
իւրմէ՝ եւ եղիցի առն այլում, շնայ։

13 ԶԺ. Եւ մատուցանէին առ նա մանկտի՝ զի ձեռն
դիցէ նոցա. իսկ աշակերտքն սաստէին այնոցիկ՝ որ մա-
14 տուցանէինն։ Իբրեւ ետես Յիսուս, բարկացեալ սաս-

տեսաց նոցա եւ ասէ. Թո՛յլ տուք մանկտւոյդ գալ առ
իս, եւ մի՛ արգելուք զդոսա. զի այդպիսեացդ է ար-
քայութիւն Աստուծոյ: Ամէն ասեմ ձեզ. որ ոչ ըն- 15
կալցի զարքայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ՝ ոչ
մտցէ ի նա: Եւ առեալ զնոսա ի գիրկս, ձեռն եդ ի 16
վերայ՝ եւ օրհնեաց զնոսա: Եւ ընդ ելանելն նորա 17
անտի ի ճանապարհ, ահաւասիկ ոմն մեծատուն ըն-
թացեալ ի ծունր իջանէր, եւ հարցանէր զնա՝ եւ
ասէր. վարդապետ բարի՝ զի՞նչ արարից՝ զի զկեանսն
յաւիտենականս ժառանգեցից: Եւ Յիսուս ասէ ցնա. 18
զի՞ ասես զիս բարի. չէք ոք բարի՝ բայց մի Աստուած:
Զպատուիրանս գիտես. մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ 19
գողանար, մի՛ սուտ վկայեր. պատուեա՛ զհայր քո եւ
զմայր: Նա պատասխանի ետ եւ ասէ ցնա. վարդա- 20
պետ՝ զայդ ամենայն արարի ի մանկութենէ իմմէ,
արդ՝ զի՞նչ եւս պակաս իցեմ: Եւ Յիսուս հայեցեալ 21
ի նա՝ սիրեաց զնա, եւ ասէ ցնա. մի ինչ պակաս է ի
քէն. եթէ կամիս կատարեալ լինել, երթ՝ զոր ինչ
ունիս վաճառեա՝ եւ տուր աղքատաց, եւ ունիցիս
գանձս յերկինս, եւ առ զխաչն՝ եւ եկ զկնի իմ: Եւ 22
նա խոժոռեալ ընդ բանն՝ գնաց տրտում, զի ունէր
ինչս բազումս: Եւ հայեցեալ յայսկոյս յայնկոյս Յի- 23
սուս, ասէ ցաշակերտսն. զիա՞րդ դժուարին է՝ որ զինչս
ունին, մտանել յարքայութիւն Աստուծոյ: Եւ ա- 24
շակերտքն զարմացեալ էին ի վերայ բանիցն նորա.
իսկ Յիսուս դարձեալ պատասխանի ետ նոցա եւ ասէ.
որդեակք ո՞րչափ դժուարին է յուսացելոց յինչս՝
մտանել յարքայութիւն Աստուծոյ: Դիւրին է մալ- 25
խոյ ընդ ծակ ասղան անցանել՝ քան մեծատան յար-
քայութիւն Աստուծոյ մտանել: Եւ նոքա առաւել 26
եւս զարմանային՝ եւ ասէին ընդ միմեանս. իսկ ո՞ կա-
րասցէ ապրել: Հայեցեալ ընդ նոսա Յիսուս՝ ասէ. 27
առ ի մարդկանէ այդ անհնարին է, այլ ոչ առ ի
յԱստուծոյ:

28 ՂԶ. Սկսաւ ասել ցնա Պետրոս. ահաւասիկ մեք
29 թողաք զամենայն, եւ եկաք զկնի քո: Պատասխանի
ետ Յիսուս եւ ասէ. ամէն ասեմ ձեզ՝ ոչ ոք է որ
եթող զտուն կամ զեղբարս կամ զքորս կամ զհայր
կամ զմայր կամ զորդիս կամ զագարակս վասն իմ
30 կամ վասն աւետարանին, Եթէ ոչ առնուցու հա-
րիւրապատիկ այժմ յայսմ ժամանակի տունս եւ
եղբարս եւ քորս եւ մայր եւ որդիս եւ ագարակս՝
հալածանօք հանդերձ, եւ յաշխարհին որ գալոց է
31 զկեանս յաւիտենականս: Զի բազումք եղիցին առա-
32 ջինք յետինք՝ եւ յետինք առաջինք: Եւ էին ի ճա-
նապարհի մինչ դեռ ելանէին յԵրուսաղէմ. եւ եր-
թայր Յիսուս առաջի քան զնոսա, եւ զարմացեալ
էին որ զհետն երթային՝ եւ երկնչէին:

ՂԷ. Եւ առեալ միւսանգամ զերկոտասանսն
առանձինն, սկսաւ ասել նոցա զինչ անցք անցանե-
33 լոց էին ընդ նա: Թէ ահաւասիկ ելանեմք յԵրու-
սաղէմ. եւ որդի մարդոյ մատնեսցի քահանայապե-
տիցն եւ դպրաց. եւ դատեսցեն զնա ի մահ, եւ մատ-
34 նեսցեն զնա հեթանոսաց. Եւ կատակեսցեն զնովաւ,
եւ հարկանիցեն զնա, եւ թքանիցեն ի նա, եւ սպան-
35 ցեն. եւ յերիր աւուր յարիցէ: Եւ երթային առ
նովաւ Յակովբոս եւ Յովհաննէս՝ որդիքն Զեբեդեայ.
եւ ասեն ցնա. վարդապետ՝ կամիմք զի զոր ինչ խնդրես-
36 ցուք ի քէն՝ արասցես մեզ: Եւ նա ասէ ցնոսա. զի՞նչ
37 կամիք յինէն՝ զի արարից ձեզ: Եւ նոքա ասեն ցնա.
տուր մեզ՝ զի նստցուք մի յաջմէ քումմէ եւ մի յա-
38 հեկէ՝ ի փառսն քում: Պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա. ոչ գիտէք զինչ խնդրէք. կարէք ըմպել
զբաժակն՝ զոր ես ըմպելոց եմ, կամ զմկրտութիւնն
39 մկրտել՝ զոր ես մկրտելոցն եմ: Եւ նոքա ասեն ցնա,
կարեմք. եւ Յիսուս ասէ ցնոսա. զբաժակն զոր ես ըմ-
պելոց եմ՝ ըմպիցէք, եւ զմկրտութիւնն՝ զոր ես մկր-
40 տելոց եմ՝ մկրտիցիք. Այլ նստուցանել ընդ աջմէ

իմմէ եւ ընդ ահեկէ՝ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաս-
տեալ իցէ: Եւ լուեալ զայն տասանցն, սկսան բար- 41
կանալ Յակովբայ եւ Յովհաննու: Եւ Յիսուս կո- 42
չեաց զնոսա առ ինքն, եւ ասէ. գիտէք՝ զի որ յա-
նուան իշխանքն են հեթանոսաց, տիրեն նոցա. եւ
մեծամեծք նոցա, իշխեն նոցա: Ոչ նոյնպէս իցէ եւ ի 43
ձերում միջի. այլ որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ ե-
ղիցի ձեր պաշտօնեայ. Եւ որ կամիցի ի ձէնջ առաջին 44
լինել՝ եղիցի ամենեցուն ծառայ: Քանզի եւ որդի 45
մարդոյ ոչ եկն առնուլ պաշտօն՝ այլ պաշտել, եւ
տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց:

ԽԿ. Եւ գան յԵրիքով. եւ ընդ ելանելն նորա յԵ- 46
րիքովէ աշակերտօքն՝ եւ բազում ժողովրդով, որդի
Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճա-
նապարհի: Իբրեւ լուաւ՝ թէ Յիսուս Նազովրեցի է, 47
սկսաւ աղաղակել եւ ասել. որդի Դաւթի Յիսուս՝
ողորմեաց ինձ: Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռես- 48
ցէ. եւ նա առաւել եւս աղաղակէր. որդի Դաւթի՝
ողորմեաց ինձ: Զտեղի առ Յիսուս եւ հրամայեաց 49
կոչել զնա: Կոչեն զկոյրն՝ եւ ասեն ցնա. քաջալե-
րեաց արի՝ կոչէ զքեզ: Եւ նորա ընկեցեալ զձորձս 50
իւր, յարեաւ եկն առ Յիսուս: Պատասխանի ետ նմա 51
Յիսուս եւ ասէ. զի՞նչ կամիս՝ թէ արարից քեզ.
ասէ ցնա կոյրն. ռաբբունի՝ զի բացայց: Եւ Յիսուս 52
ասէ ցնա, երթ՝ հաւատք քո կեցուցին զքեզ. եւ
վաղվաղակի բացաւ, եւ երթայր զհետ նորա ի ճա-
նապարհին:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Եւ յորժամ մերձ եղեն յԵրուսաղէմ ի Բեթ- 1
փագէ եւ ի Բեթանիա մօտ ի լեառն ձիթենեաց,
առաքէ երկուս յաշակերտաց անտի. Եւ ասէ ցնոսա. 2
երթայք դուք ի գեօղդ՝ որ ընդդէմ ձեր կայ. եւ նոյն
ժամայն իբրեւ մտանէք ի նա, գտանէք յաւանակ մի

կապեալ, յորոյ վերայ ոչ ոք ի մարդկանէ նստաւ,
3 լուծէք եւ ածէք։ Եւ եթէ ոք ասասցէ ձեզ՝ եթէ
զի՞ լուծանէք զյաւանակդ, ասասջիք՝ եթէ Տեառն
իւրում պիտոյ է· եւ վաղվաղակի առաքեսցէ զնա
4 այսր։ Չոգան, եւ գտին զյաւանակն կապեալ առ
5 դուրս արտաքոյ ի փողոցի անդ, եւ լուծին զնա։ Եւ
ոմանք յորոց անդն կային, ասեն ցնոսա· զի՞ գործէք,
6 զի՞ լուծանէք զյաւանակդ։ Եւ նոքա ասեն ցնոսա
7 որպէս ասացն Յիսուս· եւ թոյլ ետուն նոցա։ Ածին
զյաւանակն առ Յիսուս· եւ արկանեն ի վերայ նորա
8 զհանդերձս իւրեանց, եւ նստաւ ի վերայ նորա։ Եւ
բազումք զհանդերձս իւրեանց տարածանէին ի ճա-
նապարհին, եւ այլք ոստս ի ծառոց հատանէին՝ եւ
9 արկանէին զճանապարհաւն։ Եւ որ առաջին եւ զկնի
երթային, աղաղակէին, եւ ասէին· ովսաննայ բարձ-
10 րելոյն։ Օրհնեալ որ գայ յանուն Տեառն· օրհնեալ
թագաւորութիւնդ եկեալ հօր մերոյ Դաւթի· խա-
11 ղաղութիւն յերկինս՝ եւ փառք ի բարձունս։ Եւ
եմուտ Յիսուս յԵրուսաղէմ ի տաճարն, եւ հայե-
ցեալ շուրջ զամենեքումբք· եւ զի էր երեկոյացեալ
ժամն, ել ի Բեթանիա երկոտասանիւքն հանդերձ։
12 ԺԲ· Եւ ի վաղիւ անդր մինչ դեռ ելանէին ի
13 Բեթանիայ, քաղցեաւ։ Եւ տեսեալ թզենի մի ի բա-
ցուստ տերեւալից· եւ եկն՝ թէ գտանիցէ ինչ ի նմա·
եւ իբրեւ եկն ի նա՝ ոչինչ եգիտ, բայց միայն տերեւ·
14 զի ոչ եւս էր ժամանակ թզոյ։ Պատասխանի ետ եւ
ասէ ցնա· մի եւս ոք յաւիտեան ի քէն պտուղ կե-
15 րիցէ· եւ լսէին աշակերտքն նորա։ Գան յԵրուսա-
ղէմ· եւ մտեալ ի տաճարն՝ սկսաւ հանել զվաճա-
ռականսն եւ զգնողս՝ որ էին ի տաճարին· եւ զսեղանս
հատավաճառացն ցրուեաց, եւ զաթոռս աղաւնեվա-
16 ճառացն կործանեաց· Եւ ոչ թողոյր՝ եթէ ոք անօթ
17 ինչ անցուցանիցէ ընդ տաճարն։ Եւ ուսուցանէր զնո-
սա ասէր· գրեալ է, տուն իմ տուն աղօթից կո-

չեսցի ամենայն հեթանոսաց, եւ դուք արարէք զդա
այրս աւազակաց: Լուան քահանայապետքն եւ դպ- 18
պիրք. եւ խնդրէին՝ թէ որպէս կորուսցեն զնա, բայց
երկնչէին ի նմանէ. զի ամենայն ժողովուրդն զարմա-
ցեալ էր ընդ ուսումն նորա. Եւ իբրեւ երեկոյ լինէր՝ 19
արտաքոյ քան զքաղաքն ելանէին: Եւ մինչդեռ այ- 20
գուցն առ նովաւ անցանէին, տեսին զթզենին ցամա-
քեալ յարմատոց: Յիշեաց Պետրոս՝ եւ ասէ ցնա. 21
ռաբբի՝ ահաւասիկ թզենին զոր անիծեր, ցամաքե-
ցաւ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. եթէ 22
ունիցիք զհաւատոն Աստուծոյ, Ամէն ասեմ ձեզ, 23
որ ոք ասիցէ լերինս այսմիկ՝ բարձիր եւ անկիր ի ծով,
եւ ոչ երկմտիցէ ի սրտի իւրում, այլ հաւատայցէ՝
թէ զոր ասէն լինի, եղիցի նմա զոր ինչ եւ ասիցէ:
Վասն այսորիկ ասեմ ձեզ. զամենայն ինչ վասն որոյ 24
աղօթս արարեալ խնդրիցէք, եւ հաւատայցէք թէ
առնուցուք, եղիցի ձեզ: Եւ յորժամ յաղօթս կայ- 25
ցէք, թողուցուք՝ եթէ ունիցիք ինչ զումեքէ. զի եւ
հայրն ձեր՝ որ յերկինս է, թողցէ ձեզ զյանցանս
ձեր: Զի եթէ դուք ոչ թողուցուք, եւ ոչ հայրն 26
ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր:
ԻԳ. Գան միւսանգամ յԵրուսաղէմ. եւ մինչ 27
դեռ ի տաճարի անդ զգնայր, գան առ նա քահա-
նայապետքն եւ դպիրք եւ ծերք, Եւ ասեն ցնա. ո- 28
րո՞վ իշխանութեամբ առնես զայդ, եւ ո՞վ ետ քեզ
զիշխանութիւնդ զայդ: Պատասխանի ետ Յիսուս եւ 29
ասէ ցնոսա. Հարցից եւ ես զձեզ բան մի, տուք ինձ
պատասխանի, եւ ես ասացից ձեզ՝ որո՛վ իշխանութեամբ
առնեմ զայս: Մկրտութիւնն Յովհաննու յերկնի՞ց 30
էր՝ եթէ ի մարդկանէ, տուք ինձ պատասխանի: Խոր- 31
հէին ընդ միմեանս՝ եւ ասէին. եթէ ասեմք՝ եթէ
յերկնից, ասէ ցմեզ. իսկ ընդէ՞ր ոչ հաւատայցէք նմա:
Այլ եթէ ասեմք՝ ի մարդկանէ, երկնչիմք ի ժողովր- 32
դենէն. զի ամենեքին գիտէին զՅովհաննէս՝ թէ մար-

33 գարէ էր: Պատասխանի ետուն եւ ասեն ցՅիսուս.
չգիտեմք: Եւ Յիսուս ետ նոցա պատասխանի եւ ա-
սէ. եւ ոչ ես ասեմ ձեզ, որո՛վ իշխանութեամբ
առնեմ զայս:

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Եւ սկսաւ խօսել ընդ նոսա առակօք՝ եւ ասել.
Այր մի տնկեաց այգի, եւ ած շուրջ զնովաւ ցանգ,
եւ գուբ հնձան փորեաց, եւ շինեաց աշտարակ. եւ
2 ետ զնա ցմշակս, եւ գնաց ի տար աշխարհ: Եւ առա-
քեաց առ մշակսն ի ժամանակի ծառայ մի, զի ի
3 մշակաց անտի առցէ ի պտղոյ այգւոյն: Եւ նոքա կա-
4 լեալ՝ զան հարին զնա, եւ արձակեցին ունայն: Դար-
ձեալ առաքեաց այլ ծառայ, եւ զնա կառափնատե-
ցին՝ եւ արձակեցին անարգեալ: Եւ դարձեալ այլ
5 առաքեաց, եւ զնա սպանին. եւ զբազումս այլս զո-
6 մանս հարկանէին եւ զոմանս սպանանէին: Այլ որդի
մի էր իւր սիրելի, զնա առաքեաց առ նոսա յետոյ,
եւ ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ:
7 Իսկ մշակքն իբրեւ տեսին զնա զի գայր՝ ասեն ցմի-
մեանս. սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, եւ
8 մեր լիցի ժառանգութիւնն: Եւ կալեալ զնա սպա-
9 նին, եւ հանին արտաքոյ այգւոյն: Արդ՝ զի՞նչ արաս-
ցէ տէր այգւոյն. եկեսցէ եւ կորուսցէ զմշակսն, եւ
10 տացէ զայգին ի ձեռս այլոց: Եւ ո՞չ զգիրն զայն իցէ
ընթերցեալ ձեր, թէ զվէմն զոր անարգեցին շինողքն,
11 նա եղեւ գլուխ անկեան: Ի Տեառնէ եղեւ այս, եւ է
12 սքանչելի յաչս մեր: Եւ խնդրէին զնա ունել, եւ եր-
կեան ի ժողովրդենէ անտի, զի գիտացին թէ առ նո-
13 սա ասաց զառակն. եւ թողին զնա եւ գնացին: Եւ
առաքեն առ նա զոմանս ի փարիսեցւոց անտի՝ եւ ի
14 հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ: Եւ նոքա
եկեալ հարցանէին զնա նենգութեամբ՝ եւ ասէին.
վարդապետ՝ գիտեմք զի ճշմարիտ ես, եւ ոչ ինչ

փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդ-
կան, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ
ուսուցանես. արդ՝ ասա մեզ, արժա՞ն է հարկ տալ
կայսեր՝ թէ ոչ. տացո՞ւք՝ թէ ոչ տացուք: Եւ Յի- 15
սուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա.
զի՞ փորձէք զիս կեղծաւորք. բերէք ինձ դահեկան
մի՝ զի տեսից: Եւ նոքա բերին. եւ ասէ ցնոսա. ո՞յր 16
է պատկերս այս՝ կամ գիր. եւ նոքա ասեն. կայսեր:
Պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնոսա. երթայք 17
տուք զկայսեր՝ կայսեր, եւ զԱստուծոյ՝ Աստուծոյ. եւ
զարմացան ընդ նա:

ԻԹ. Գան առ նա սադուկեցիքն որ ասեն՝ թէ չիք 18
յարութիւն, հարցանէին ցնա եւ ասէին. Վարդա- 19
պետ՝ Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք եղբայր մե-
ռանիցի եւ թողուցու կին՝ եւ որդի ոչ թողուցու, զի
առցէ եղբայր նորա զկին նորա, եւ յարուսցէ զաւակ
եղբօր իւրում: Արդ՝ եղբարք եօթն էին առ մեզ. ա- 20
ռաջինն առ կին՝ եւ մեռաւ, եւ ոչ եթող զաւակ:
Եւ երկրորդն առ զնոյն՝ եւ մեռաւ, եւ ոչ նա եթող 21
զաւակ. նոյնպէս եւ երրորդն առ զնոյն: Եւ եօթնե- 22
քեան իսկ. եւ ոչ թողին զաւակ. յետ ամենեցուն
մեռաւ եւ կինն: Արդ՝ ի յարութեան յորժամ յառ- 23
նիցեն, ո՞յր ի նոցանէ լինիցի կինն. զի եօթներեան կա-
լան զնա կին: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնո- 24
սա. ո՞չ վասն այդորիկ իսկ մոլորեալ էք. զի ոչ գի-
տէք զգիրս՝ եւ ոչ զզօրութիւնն Աստուծոյ: Զի յոր- 25
ժամ ի մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնեն,
եւ ոչ կանայք արանց լինին. այլ իբրեւ զհրեշտակս
իցեն՝ որ յերկինս են: Այլ վասն յարութեան մեռե- 26
լոց զի յառնեն, չիցէ՞ ընթերցեալ ձեր ի գիրսն Մով-
սէսի ի մորենւոջն. որպէս ասաց ցնա Աստուած. ես եմ՝
ասէ՝ Աստուած Աբրահամու եւ Աստուած Իսա-
հակայ եւ Աստուած Յակոբայ: Եւ ոչ է Աստուած 27
մեռելոց՝ այլ կենդանեաց. եւ արդ՝ դուք յոյժ մո-

28 լուեալ էք։ Եւ մատուցեալ մի ոմն ի դպրացն՝ լսէր
նոցա մինչ վիճէին․ իբրեւ ետես եթէ բարւոք ետ
նոցա պատասխանի, եհարց ցնա եւ ասէ․ ո՞ր պատուի-
29 րան է առաջին։ Եւ Յիսուս ասէ ցնա․ առաջին քան
զամենայն՝ լուր Իսրայէլ՝ Տէր Աստուած մեր՝ Տէր մի է․
30 Եւ սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քու-
մէ, եւ յամենայն անձնէ քումէ, եւ յամենայն մտաց
քոց, եւ յամենայն զօրութենէ քումէ․ այս է առա-
31 ջին պատուիրան։ Եւ երկրորդն նման սմին․ սիրեսցես
զընկեր քո՝ իբրեւ զանձն քո․ մեծ քան զսոսա այլ
32 պատուիրան ոչ գոյ։ Եւ ասէ ցնա դպիրն․ բարւոք է
վարդապետ, ճշմարտութեամբ ասացեր՝ թէ մի է Ա-
33 ստուած, եւ ոչ գոյ այլ բաց ի նմանէ․ Եւ սիրել զնա
յամենայն սրտէ եւ յամենայն զօրութենէ եւ յամե-
նայն մտաց, եւ սիրել զընկերն իբրեւ զանձն, ա-
34 ռաւել է քան զողջակէզս եւ զզոհս։ Եւ տեսեալ
Յիսուսի թէ իմաստութեամբ ետ զպատասխանին՝ ա-
սէ ցնա․ չես հեռի յարքայութենէն Աստուծոյ․ եւ ոչ
եւս ոք իշխէր ինչ հարցանել զնա։
35 ԽԵ․ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ, մինչ ու-
սուցանէր ի տաճարին․ զիա՞րդ ասեն դպիրքն, թէ
36 Քրիստոսն որդի Դաւթի է; Եւ ինքն Դաւիթ հոգ-
ւովն սրբով ասէ․ ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ
աջմէ իմմէ՝ մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան
37 ոտից քոց։ Արդ՝ եթէ ինքն իսկ Դաւիթ զնա Տէր
կոչէ՝ զիա՞րդ իցէ որդի նորա․ եւ բազում ժողովուրդ
38 լսէր նմա քաղցրութեամբ։ Եւ ասէր ուսուցանելով
ի վարդապետութեան իւրում․ զգոյշ լերուք ի դպրաց
անտի, որ կամին ի հանդերձս երեւելիս շրջել, զնախ-
39 ողջոյնս խնդրել ի հրապարակս, Եւ զնախաթոռս ի
40 ժողովուրդս, եւ զգահագլուխս յընթրիս։ Որ ու-
տեն զտունս այրեաց, պատճառանօք յերկարեալ զա-
41 ղօթս, զի աւելի եւս դատաստանս ընկալցին։ Կայր
Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիա՞րդ

ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն. եւ բա-
զում մեծատունք արկին բազում ինչ: Եկն այրի մի 42
եւ արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի: Եւ 43
կոչեցեալ առ ինքն զաշակերտսն իւր՝ ասէ ցնոսա. ա-
մէն ասեմ ձեզ՝ զի այրին այն տառապեալ շատ արկ
քան զամենեսեան՝ որ արկին ի գանձանակն: Քանզի 44
ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա ի
չքաւորութենէ իւրմէ՝ զամենայն ինչ զոր ունէր՝ արկ
զոյս չափ զկեանս իւր:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԽԶ. Եւ յելանելն նորա ի տաճարէ անտի, ասէ 1
ցնա մի յաշակերտաց նորա. վարդապետ, տես որպի-
սի են քարինքս, եւ որպիսի շինուածք: Պատասխա- 2
նի ետ նմա Յիսուս եւ ասէ. տեսանե՞ս զայդ ամենայն
շինուածս, ամէն ասեմ ձեզ՝ եթէ ոչ թողցի այդր
քար ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի: Եւ մինչ նըս- 3
տէր նա ի լերինն ձիթենեաց յանդիման տաճարին,
հարցանէին ցնա առանձինն՝ Պետրոս եւ Յակոբոս
եւ Յովհաննէս եւ Անդրէաս: Ասա մեզ՝ ե՞րբ լինիցի 4
այդ. եւ զի՞նչ նշան է՝ յորժամ կատարելոց իցէ այդ
ամենայն: Պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնոսա. 5
զգոյշ կացէք, մի ոք զձեզ խաբեսցէ: Զի բազումք 6
եկեսցեն յանուն իմ, եւ ասիցեն՝ թէ ես եմ Քրիս-
տոսն. եւ զբազումս մոլորեցուսցեն: Այլ յորժամ 7
լսիցէք պատերազմունս եւ համբաւս պատերազմաց՝
մի խռովիցիք, զի պարտ է լինել. բայց չեւ է կատա-
րած: Զի յարիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւո- 8
րութիւն ի թագաւորութեան վերայ. եւ եղիցին
շարժմունք ի տեղիս տեղիս, սովք եւ սրածութիւնք
եւ խռովութիւնք. այլ այն ամենայն սկիզբն է եր-
կանց: Եւ զձեզ խիկ մատնեսցեն յատեանս, եւ ի ժո- 9
ղովուրդս տանջիցիք, եւ առաջի դատաւորաց եւ
թագաւորաց կայցէք վասն իմ ի վկայութիւն նո-

10 ցա, եւ ամենայն հեթանոսաց. Բայց նախ պարտ է
11 աւետարանին քարոզել: Եւ յորժամ տանիցեն
զձեզ մատնել, մի յառաջագոյն հոգայցէք՝ եւ մի
զմտաւ ածիցէք թէ զի՞նչ խօսիցիք. այլ որ ինչ
տացի ձեզ ի ժամուն յայնմիկ՝ զայն խօսիցիք. զի
12 ոչ դուք էք որ խօսիքն՝ այլ Հոգին սուրբ: Մատ-
նեսցէ եղբայր զեղբայր ի մահ՝ եւ հայր զորդի,
եւ յարիցեն որդիք ի վերայ հարց, եւ սպանանիցեն
13 զնոսա: Եւ եղիջիք ատեցեալք յամենեցունց վասն
անուան իմոյ. այլ որ համբերեսցէն իսպառ՝ նա կեց-
14 ցէ: Եւ յորժամ տեսանիցէք զպղծութիւն աւերա-
ծին, զի կայցէ ի տեղւոջ ուր չիցէ արժան. որ ըն-
15 թեռնուն ի միտ առցէ: Յայնժամ որ ի Հրէաստանի
16 իցեն՝ փախիցեն ի լերինս. Եւ որ ի վերայ տանեացն
իցէ՝ մի իջցէ ի տուն, եւ մի մտցէ բառնալ ինչ ի
17 տանէ իւրմէ. Եւ որ յագարակին իցէ՝ մի դարձցի
յետս առնուլ զձորձս իւր: Բայց վա՜յ իցէ յղեաց եւ
18 ստնտուաց յաւուրսն յայնոսիկ: Յաղօթս կացէք՝ զի
19 մի ձմերանի լինիցի այն: Եղիցին աւուրքն այնոքիկ
նեղութեանց՝ որպիսի ոչ եղեն երբեք այնպիսիք ի
սկզբանէ արարածոց մինչեւ ցայժմ, եւ մի այլ լիցի:
20 Եւ եթէ ոչ կարճեալ էր Աստուծոյ զաւուրսն զայ-
նոսիկ վասն ընտրելոց իւրոց, ոչ ապրէր ամենայն
մարմին. այլ վասն ընտրելոցն՝ զորս ընտրեաց՝ կար-
21 ճեաց զաւուրսն զայնոսիկ: Յայնժամ եթէ ոք ասիցէ
ձեզ, եթէ ահաւասիկ է Քրիստոսն կամ աւանիկ՝
22 մի հաւատայցէք: Զի յարիցեն սուտ Քրիստոսք
եւ սուտ մարգարէք, եւ տացեն նշանս եւ արուեստս՝
առ ի մոլորեցուցանելոյ եթէ հնար ինչ իցէ եւ զըն-
23 տրեալսն: Բայց դուք զգոյշ եղերուք՝ ահաւասիկ յա-
24 ռաջագոյն ասացի ձեզ զամենայն: Այլ յաւուրսն
յայնոսիկ յետ նեղութեանն այնորիկ արեգակն խաւա-
25 րեսցի, եւ լուսին ոչ տացէ զլոյս իւր: Եւ աստեղք
յերկնից թօթափեսցին, եւ զօրութիւնք յերկինս

շարժեսցին: Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ ե- 26
կեալ ամպովք՝ զօրութեամբ եւ փառօք բազմօք: Եւ 27
յայնժամ առաքեսցէ զհրեշտակս իւր, եւ ժողովես-
ցէ զընտրեալս իւր ի չորից հողմոց՝ ի ծագաց երկրի
մինչեւ ի ծագս երկնից: Բայց դուք ի թզենւոյ ան- 28
տի ուսջիք զառակն. յորժամ տակաւ ոստքն նորա
կակղանայցեն եւ տերեւ արձակիցի ի նմա, գիտէք
թէ մերձ է ամառն. Նոյնպէս եւ դուք՝ յորժամ տե- 29
սանիցէք զայս ամենայն եղեալ, գիտասջիք թէ մերձ
է առ դուրս: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ անցցէ ազգս 30
այս՝ մինչեւ այս ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր 31
անցցեն, եւ բանք իմ ոչ անցանիցեն: Այլ վասն ա- 32
ւուրն այնորիկ եւ ժամու՝ ոչ ոք գիտէ՝ ոչ հրեշտակք
յերկինս՝ եւ ոչ որդի, բայց միայն Հայր: Զգոյշ ե- 33
ղերուք. սկեցէք եւ կացէք յաղօթս. զի ոչ գիտէք
երբ ժամանակն իցէ: Որպէս այր մի գնացեալ ի տար 34
աշխարհ՝ թողուցու զտուն իւր. եւ տացէ ծառայից
իւրոց իշխանութիւն, եւ իւրաքանչիւր զգործս իւր.
եւ դռնապանին պատուէր տայցէ, զի արթուն լինիցի:
Արթուն կացէք, զի ոչ գիտէք երբ Տէր տանն գայցէ՝ 35
յերեկորեայ՝ եթէ ի մէջ գիշերի՝ եթէ ի հաւախօսի
եթէ ընդ առաւօտս: Գուցէ եկեալ յանկարծակի՝ 36
գտանիցէ զձեզ ի քուն: Բայց զոր ձեզդ ասեմ, ա- 37
մենեցուն ասեմ՝ արթուն կացէք:

ԳԼՈՒԽ ԺԴ.

ԽԻ. Եւ էր զատիկն եւ բաղարջակերք յետ եր- 1
կուց աւուրց. խնդրէին քահանայապետքն եւ դպիրք՝
թէ զիարդ զնա նենգաւ կալեալ սպանանիցեն: Բայց 2
ասէին՝ թէ մի ի տօնի աստ, զի մի՛ խռովութիւն լի-
նիցի ի ժողովրդեանն: Եւ մինչ էր ի Բեթանիայ՝ ի 3
տան Սիմոնի բորոտի բազմեալ, եկն կին մի՝ որ ունէր
շիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, եւ բեկեալ
զշիշն՝ եհեղ ի վերայ գլխոյ նորա: Եւ աշակերտքն 4

գչարէին եւ ասէին. ընդէ՞ր է կորուստ իւղոյդ այդո-
5 րիկ: Մարթ էր զայդ իւղ վաճառել աւելի քան ե-
րեքարիւր դահեկանի, եւ տալ աղքատաց. եւ զայրա-
6 նային նմա յոյժ: Եւ Յիսուս ասէ ցնոսա. Թոյլ տուք
դմա՝ զի՞ աշխատ առնէք, զի գործ մի բարի գործեաց
7 դա յիս: Յամենայն ժամ զաղքատս ընդ ձեզ ունիք,
եւ յորժամ կամիք՝ կարող էք առնել նոցա բարիս.
8 այլ զիս ոչ յամենայն ժամ ընդ ձեզ ունիք: Դա
զոր ունէրդ՝ արար. յառաջագոյն խնկեաց զմարմին
9 իմ ի նշան պատանաց: Ամէն ասեմ ձեզ. ուր եւ
քարոզեսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ,
եւ զոր արար դա՝ խօսեսցի վասն յիշատակի դորին:
10 Եւ Յուդա Սկարիովտացի մի յերկոտասանից անտի,
գնաց առ քահանայապետսն՝ զի մատնեսցէ զնա նո-
11 ցա: Նոքա իբրեւ լուան՝ խնդացին, եւ խոստացան
տալ նմա արծաթ. եւ խնդրէր՝ թէ զիա՞րդ պարա-
պով մատնեսցէ զնա:
12 Եւ յառաջնում աւուր բաղարջակերացն՝ յոր-
ժամ զզատիկն զենուին, ասեն ցնա աշակերտքն. ո՞ւր
կամիս՝ երթիցուք պատրաստեսցուք՝ զի կերիցես զզա-
13 տիկն: Եւ առաքէ երկուս յաշակերտաց անտի՝ եւ
ասէ ցնոսա. երթայք ի քաղաքն, եւ իբրեւ մտանի-
ցէք ի քաղաքն՝ պատահեսցէ ձեզ այր մի որ սափոր
14 ջրոյ յուս ունիցի, երթայք զհետ նորա: Եւ յոր
տուն մտանիցէ, ասասջիք ցտանուտէրն. վարդապետ
ասէ՝ ո՞ւր են իջավանքն, ուր աշակերտօքս ուտիցեմ
15 զզատիկն: Եւ նա ցուցցէ ձեզ վերնատուն մի մեծ
16 զարդարեալ. անդ պատրաստեսջիք մեզ: Եւ գնացին
պատրաստել աշակերտքն նորա. եկին ի քաղաքն՝ եւ
գտին որպէս ասացն նոցա. եւ պատրաստեցին զզա-
17 տիկն: Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ գայ երկոտասա-
18 նիւքն հանդերձ: Եւ իբրեւ բազմեցան եւ դեռ ու-
տէին, ասէ Յիսուս. ամէն ասեմ ձեզ՝ զի մի ոմն ի
19 ձէնջ մատնելոց է զիս, որ ուտէ հաց ընդ իս: Եւ նո-

քա սկսան տրտմել՝ եւ ասել մի ըստ միոջէ. մի՞թէ
ես իցեմ, եւ միւսն՝ մի՞թէ ես իցեմ: Նա պատաս- 20
խանի ետ եւ ասէ ցնոսա. մի յերկոտասանից այտի,
որ մխեաց ընդ իս ի սկաւառակդ: Այլ որդի մարդոյ 21
երթայ՝ որպէս եւ գրեալ է վասն նորա. բայց վայ
լիցի մարդոյն այնմիկ՝ յորոյ ձեռս որդի մարդոյ մատ-
նեսցի. լաւ էր նմա՝ եթէ չէր իսկ ծնեալ մարդն այն:
Եւ մինչդեռ ուտէին, առեալ Յիսուսի հաց՝ օր- 22
հնեաց եւ եբեկ՝ ետ նոցա, եւ ասէ. առէք՝ այդ է
մարմին իմ: Եւ առեալ բաժակ՝ գոհացաւ եւ ետ 23
նոցա, եւ արբին ի նմանէ ամենեքեան: Եւ ասէ ցնո- 24
սա. այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազ-
մաց հեղու: Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ եւս յաւե- 25
լից ըմպել ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն՝ յորժամ
արբից զնա նոր յարքայութեան Աստուծոյ: Եւ գո- 26
հացեալ՝ ելին ի լեառն ձիթենեաց:

ՎԵՐՋ. Եւ ասէ ցնոսա Յիսուս. ամենեքին գայ- 27
թագղելոց էք յինէն յայսմ գիշերի. զի գրեալ է,
թէ հարից զհովիւն՝ եւ ոչխարքն ցրուեսցին: Այլ 28
յետ յարութեան իմոյ յառաջագոյն երթայց քան
զձեզ ի Գալիլեա: Պատասխանի ետ Պետրոս՝ եւ ասէ 29
ցնա. թէպէտ եւ ամենեքեան գայթագղեսցին, այլ ես
ոչ: Եւ ասէ ցնա Յիսուս. ամէն ասեմ քեզ, թէ դու 30
իսկ յայսմ գիշերի մինչչեւ հաւու խօսեալ իցէ՝ ե-
րիցս ուրասցիս զիս: Իսկ Պետրոս՝ առաւել եւս պըն- 31
դէր եւ ասէր. եթէ մեռանել եւս հասանիցէ ընդ
քեզ, զքեզ ոչ ուրացայց. նոյնպէս եւ ամենեքեան
ասէին: Գան ի գեղն՝ որում անուն էր Գեթսեմանի. 32
եւ ասէ ցաշակերտսն. նստարուք աստ՝ մինչեւ ես
յաղօթս կացից: Եւ առնու ընդ իւր զՊետրոս եւ 33
զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ սկսաւ տխրել եւ
հոգալ: Յայնժամ ասէ ցնոսա. տրտում է անձն իմ 34
մինչեւ ի մահ, մնացէք աստ՝ եւ արթուն կացէք:
Եւ մատուցեալ սակաւիկ մի յառաջ, անկաւ ի վերայ 35

երեսաց ի վերայ երկրի. եւ կայր յաղօթս, զի եթէ
36 հնար ինչ է՝ անցցէ ի նմանէ ժամն: Եւ ասէ. աբբա
հայր՝ ամենայն ինչ քեզ հնարաւոր է, անցո զբա-
ժակս զայս յինէն. բայց ոչ որպէս ես կամիմ՝ այլ
37 որպէս դու կամիս: Եւ գայ՝ գտանէ զնոսա զի ննջէին,
եւ ասէ ցՊետրոս. Սիմոն ննջես. ո՞չ կարացեր ժամ
38 մի արթուն կալ: Արթուն կացէք եւ յաղօթս կա-
ցէք, զի մի՛ մտջիք ի փորձութիւն. ոգիս յօժար է՝
39 բայց մարմինս տկար: Եւ դարձեալ չոգաւ եկաց յա-
40 ղօթս, եւ զնոյն բանս ասաց: Դարձաւ միւսանգամ
անդրէն, եւ եգիտ զնոսա ի քուն. քանզի էին աչք
նոցա ծանրացեալ, եւ ոչ գիտէին թէ զինչ պատաս-
41 խանի տայցեն նմա: Գայ երրորդ անգամ, եւ ասէ
ցնոսա, ննջեցէք այսուհետեւ եւ հանգերուք, զի
հասեալ է վախճան, եկն ժամ՝ եւ ահա մատնի որդի
42 մարդոյ ի ձեռս մեղաւորաց: Ո՛ն արիք գնասցուք. զի
43 ահաւասիկ մերձեցաւ՝ որ մատնելոցն է զիս: Եւ մինչ
դեռ նա զայն խօսէր՝ գայ Յուդա Սկարիովտացի՝ մի
յերկոտասանից անտի, եւ ընդ նմա ամբոխ սուսերօք
եւ բրօք՝ ի քահանայապետիցն եւ ի դպրաց եւ ի
44 ծերոց: Տուեալ էր նշան մատնչին՝ եւ ասէր. ընդ
որում ես համբուրեցից՝ նա է. կալջիք զնա՝ եւ տար-
45 ջիք զգուշութեամբ: Եւ մատուցեալ վաղվաղակի՝ ասէ
46 ցնա. ռաբբի ռաբբի, եւ համբուրեաց զնա: Եւ նոքա
47 արկին ի նա ձեռս՝ եւ կալան զնա: Եւ մի ոմն յայն-
ցանէ՝ որ զնովաւն կային՝ ձգեաց սուր, եւ եհար զծա-
ռայ քահանայապետին, եւ ի բաց եհան զունկն նո-
48 րա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. իբրեւ
ի վերայ աւազակի ելէք սուսերօք եւ բրօք ունել
49 զիս: Հանապազ առ ձեզ էի՝ եւ ուսուցանէի ի տա-
ճարին, եւ ոչ կալարուք զիս. այլ զի լցցին գիրք
50 մարգարէիցն: Յայնժամ թողին զնա աշակերտքն ա-
51 մենեքին՝ եւ փախեան: Եւ ոմն երիտասարդ զհետ
երթայր նորա՝ արկեալ զիւրեւ կտաւ մի ի մերկաց.

ունէին զնա երիտասարդքն: Եւ նորա թողեալ զկըր- 52
տաւն՝ փախեաւ մերկ ի նոցանէ: Եւ տարան զՅի- 53
սուս առ քահանայապետն Կայիափա. եւ գային ընդ
նմա ամենայն քահանայապետքն՝ եւ դպիրք եւ ծերք:
Եւ Պետրոս երթայր ի հեռաստանէ զհետ նորա 54
մինչեւ ի ներքս ի գաւիթ քահանայապետին, եւ
նստէր ընդ սպասաւորսն՝ եւ ջեռնոյր առ լուսովն:
Իսկ քահանայապետքն՝ եւ ամենայն ատեանն խըն- 55
դրէին հակառակ Յիսուսի վկայութիւն ինչ, զի սպա-
նանիցեն զնա. եւ ոչ գտանէին: Զի բազումս սուտ 56
վկայութիւն վկայէին զնմանէ, եւ նման միմեանց ոչ
էին վկայութիւնքն: Այլք յարուցեալ վկայէին սուտ 57
զնմանէ, եւ ասէին. Թէ մեք լուաք ի դմանէ՝ զի ա- 58
սէր. ես քակեցից զտաճարդ զայդ ձեռագործ, եւ զե-
րիս աւուրս շինեցից այլ՝ առանց ձեռագործի: Ա- 59
կայն եւ այնպէս չէր նման վկայութիւնն նոցա: Ապա 60
յարուցեալ քահանայապետն ի մէջ՝ հարցանէր զՅի-
սուս, եւ ասէր. ոչի՞նչ տաս պատասխանի, զինչ դո-
քա զքէն վկայեն: Եւ նա լուռ եւ եթ կայր՝ եւ չտայր 61
ինչ պատասխանի: Դարձեալ քահանայապետն հար-
ցանէր զնա կրկին անգամ եւ ասէր. դո՞ւ ես Քրիստոս
որդի Աստուծոյ օրհնելոյն: Պատասխանի ետ Յիսուս 62
եւ ասէ ցնա. դու ասացեր՝ թէ ես եմ. բայց տեսա-
նիցէք զորդի մարդոյ նստեալ ընդ աջմէ զօրութեանն,
եւ եկեալ ընդ ամպս երկնից: Եւ քահանայապետն 63
պատառեաց փղփղակի զպատմուճան իւր՝ եւ ասէ.
զի՞նչ եւս պիտոյ են մեզ վկայք. Ահա լուայք ա- 64
մենեքին զհայհոյութիւն ի բերանոյ դորա, զիա՞րդ
թուի ձեզ. եւ ամենեքին դատապարտեցին զնա՝ թէ
մահապարտ է: Եւ ոմանք սկսան թքանել ընդ ե- 65
րեսս նորա, ձորձ զգլխով արկանել՝ կռփել եւ ասել,
մարգարեաց մեզ Քրիստոսդ՝ ո՞վ է այն որ եհարն
զքեզ. եւ սպասաւորքն ապտակս հանէին նմա: Եւ 66
Պետրոս մինչդեռ էր ի խոնարհ ի գաւթին, գայ ա-

67 ղախին մի քահանայապետին, Եւ տեսանէ զնա՝ զի
ջեռնոյր. հայեցաւ ընդ նա՝ եւ ասէ. եւ դու ընդ Յի-
68 սուսի Նազովրեցւոյ էիր: Նա ուրացաւ եւ ասէ. ոչ
ճանաչեմ եւ ոչ գիտեմ զինչ դուդ ասես: Եւ ելե-
69 ալ յարտաքին գաւիթն, եւ հաւ խօսեցաւ: Դար-
ձեալ եւեւս զնա աղախինն, եւ սկսաւ ասել ցայնո-
70 սիկ որ շուրջն կային, թէ եւ սա ի նոցանէ է: Եւ
նա դարձեալ ուրացաւ. եւ յետ սակաւ միոյ՝ դար-
ձեալ՝ որ շուրջն կային, ասեն ցՊետրոս. արդարեւ
եւ դու ի նոցանէ ես, քանզի Գալիլեացի ես՝ եւ խօս-
71 քդ իսկ քո նման են: Եւ նա սկսաւ նզովել երդ-
նուլ եւ ասել, թէ ոչ գիտեմ զայրն՝ զորմէ դուքդ
72 ասէք: Եւ նոյնժամայն կրկին հաւ խօսեցաւ: Եւ
յիշեաց Պետրոս զբանն՝ զոր ասաց ցնա Յիսուս, թէ
չեւ եցէ հաւու երկիցս խօսեալ՝ զի դու երիցս ուրա-
ցիս զիս. եւ սկսաւ լալ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Եւ վաղվաղակի ընդ առաւօտն խորհուրդ արա-
րեալ քահանայապետիցն հանդերձ ծերովքն եւ
դպրօք՝ եւ ամենայն ատեանն, կապեցին զՅիսուս՝ եւ
2 տարան մատնեցին Պիղատոսի: Եւ հարց զնա Պիղա-
տոս եւ ասէ. դո՞ւ ես թագաւորն Հրէից. Նա պատաս-
3 խանի ետ նմա եւ ասէ՝ դու ասես: Եւ չարախօսէին
զնմանէ յոյժ քահանայապետքն, եւ նա ոչինչ տայր
4 պատասխանի: Իսկ Պիղատոս դարձեալ հարցանէր
զնա. ոչի՞նչ տաս պատասխանի, տես՝ քանի՞ ամբաս-
5 տանեն զքէն: Եւ Յիսուս այնուհետեւ ոչինչ ետ պա-
6 տասխանի, մինչեւ զարմանալ յոյժ Պիղատոսի: Բայց
ըստ տօնի արձակէր նոցա զմի ոք զկապեալ, զոր ին-
7 քեանք խնդրէին: Եւ էր որում անուն էր Բարաբբաս՝
կապեալ ընդ խռովիչսն, որոց ի խռովելն՝ այր մի
8 սպանեալ էր: Ի ձայն բարձր սկսաւ աղաղակել ամ-
բոխն եւ խնդրել՝ որպէս սովոր էր, զի արձակեսցէ նո-

ցա զԲարաբբայն։ Պատասխանի ետ Պիղատոս եւ ասէ 9
ցնոսա. կամի՞ք՝ զի արձակեցից ձեզ զարքայն Հրէից։
Քանզի գիտէր թէ առ նախանձու մատնեցին զնա 10
քահանայապետքն։ Որք եւ զամբոխն հաւանեցուցին՝ 11
զի արձակեսցէ նոցա զԲարաբբայն։ Դարձեալ պա- 12
տասխանի ետ Պիղատոս եւ ասէ ցնոսա. իսկ զի՞նչ կա-
միք թէ արարից զարքայն Հրէից։ Եւ նոքա դարձեալ 13
աղաղակէին՝ յուշեալք ի քահանայապետիցն, ի խաչ
հան զդա։ Եւ ասէ ցնոսա Պիղատոս. զի՞նչ ինչ չար 14
արարեալ իցէ դորա. եւ նոքա առաւել եւս աղա-
ղակէին եւ ասէին, ի խաչ հան զդա։ Իսկ Պիղատոս 15
իբրեւ զմիտս կամեցաւ հաճել զամբոխին, արձակեաց
նոցա զԲարաբբայն. եւ զՅիսուս գան հարեալ ետ ի
ձեռս, զի ի խաչ ելանիցէ։ Եւ զինուորքն տարան զնա 16
ի ներքս ի գաւիթն՝ ուր հրապարակն էր. եւ կոչեն
միանգամայն զամենայն զգունդն, Եւ զգեցուցանեն 17
նմա քղամիդ կարմիր եւ ծիրանիս, եւ եդին ի գլուխ
նորա պսակ բոլորեալ ի փշոց։ Եւ սկսան ողջոյն տալ 18
նմա՝ եւ ասել. ողջ եր արքայդ Հրէից։ Եւ ծեծէին 19
զգլուխն եղեգամբ, եւ թքանէին ընդ երեսս, եւ ի
ծունր իջեալ երկիր պագանէին նմա։ Եւ իբրեւ կա- 20
տակեցին զնա՝ մերկացուցին զքղամիդն եւ զծիրանիս,
եւ զգեցուցին նմա զիւր հանդերձ, եւ ածին ար-
տաքս զի ի խաչ հանցեն զնա։ Եւ ունէին պահակ 21
զՍիմոն Կիւրենացի՝ որ ընդ այն անցանէր՝ եկեալ
յագարակէ, զհայրն Աղեքսանդրի եւ Ռուփայ. զի
բարձցէ զխաչափայտն նորա։ Եւ ածին զնա ի Գող- 22
գոթա՝ տեղի մի, որ թարգմանի՝ տեղի կառափելոյ։
Եւ տային նմա զինի զմուռսեալ, եւ նա ոչ առ. եւ 23
հանին զնա ի խաչ։ Եւ բաժանեցին զհանդերձս նո- 24
րա, արկեալ վիճակս ի վերայ՝ թէ ո զինչ առնուցու։ 25
Էր ժամ երրորդ՝ եւ հանին զնա ի խաչ։ Եւ էր գիր 26
վնասու նորա գրեալ՝ թէ թագաւոր է Հրէից։ Եւ 27
ընդ նմա հանին ի խաչ երկուս աւազակս. մի ընդ

28 աջմէ, եւ մի ընդ ահեկէ նորա: Եւ լցաւ գիրն որ
29 ասէ, Թէ ընդ անօրէնս համարեցաւ: Եւ որք անցա-
նէին՝ հայհոյէին զնա՝ շարժեալ զգլուխս իւրեանց
եւ ասէին. վա՜հ որ քակէիր զտաճարն՝ եւ զերիս ա-
30 ւուրս շինէիր. Ապրեցո զանձն քո եւ էջ ի խաչէդ:
31 Նոյնպէս եւ քահանայապետքն այպն արարեալ ընդ
միմեանս հանդերձ դպրօքն՝ ասէին. զայլս ապրեցոյց՝
32 զանձն ոչ կարէ ապրեցուցանել: Քրիստոսդ արքայդ
Իսրայէլի, իջցէ այժմ ի խաչէ այտի, զի տեսցուք եւ
հաւատասցուք դմա. եւ որ ընդ նմա ի խաչին ելեալ
33 էին՝ նախատէին զնա: Եւ իբրեւ վեց ժամ եղեւ՝ խա-
34 ւար կալաւ զամենայն երկիր մինչեւ ցինն ժամ: Եւ
յիններորդ ժամուն աղաղակեաց Յիսուս ի ձայն մեծ,
եւ ասէ. Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի. որ թարգմա-
նի. Աստուած իմ Աստուած իմ՝ ընդէ՞ր թողեր զիս:
35 Եւ ոմանք ի նոցանէ որ շուրջն կային զնովաւ՝ իբրեւ
36 լուան, ասէին Թէ զԵղիա կարդայ: Եւ ընթացեալ
մի ոմն՝ ելից սպունգ մի քացախով, եւ հարեալ յե-
ղեգան՝ տայր ըմպել նմա, եւ ասէ. Թոյլ տուր տես-
37 ցուք՝ գայ Եղիա իջուցանել զդա: Եւ Յիսուս ար-
38 ձակեաց ձայն մեծ՝ եւ եհան զոգի: Եւ վարագոյր տա-
ճարին պատառեցաւ յերկուս՝ ի վերուստ մինչեւ ի
39 խոնարհ: Եւ տեսեալ հարիւրապետին որ կայր անդ՝
եթէ աղաղակեաց եւ եհան զոգի, ասէ. արդարեւ
40 այրս այս որդի է Աստուծոյ: Էին եւ կանայք՝ որ
հայէին ի հեռաստանէ. յորս էր Մարիամ Մագդա-
ղենացի, եւ Մարիամ Յակովբու փոքրկան, եւ Յով-
41 սեայ մայրն, եւ Սողոմէ. Որք յորժամ էին ի Գա-
լիլեա՝ զհետ շրջէին նորա եւ պաշտէին զնա. եւ այլ
բազում կանայք՝ որք ընդ նմա խաղ ելեալ էին յԵ-
րուսաղէմ:

42 Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ քանզի ուրբաթ էր՝ որ
43 ի շաբաթն մտանէր, Եկեալ Յովսէփ որ յԱրիմա-
թեայ էր՝ այր պարկեշտ նախարար, որ եւ ինքն իսկ

ակն ունէր արքայութեանն Աստուծոյ. համարձակեցաւ՝
եմուտ առ Պիղատոս, եւ խնդրեաց զմարմինն Յիսու-
սի: Եւ Պիղատոս զարմացաւ թէ այնչափ վաղ մե- 44
ռաւ. եւ կոչեցեալ առ ինքն զհարիւրապետն, եհարց
զնա եւ ասէ՝ թէ արդարեւ այնչափ վա՞ղ մեռաւ: Եւ 45
իբրեւ ստուգեաց ի հարիւրապետէ անտի, շնորհեաց
զմարմինն Յովսեփայ: Եւ Յովսէփ գնեաց կտաւ՝ եւ 46
իջուցեալ զնա պատեաց կտաւոյն, եւ եդ ի գերեզ-
մանի, զոր էր փորեալ ի վիմէ. եւ թաւալեցոյց
վէմ մի ի դուռն գերեզմանին: Իսկ Մարիամ Մագ- 47
դաղենացի՝ եւ Մարիամ Յակոբեայ՝ եւ Յովսեայ
տեսին զտեղին ուր եդաւ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Եւ իբրեւ անց շաբաթն, Մարիամ Մագդա- 1
ղենացի՝ եւ Մարիամ Յակոբեայ եւ Սողոմէ՝ չոքան
պատրաստեցին խունկս, զի եկեսցեն օծցեն զնա: Եւ 2
ընդ առաւօտս միաշաբաթւոյն գան ի գերեզմանն ընդ
արեւագալն, Եւ ասէին ցմիմեանս, ո՞վ թաւալեսցու- 3
ցէ մեզ զվէմն ի դրաց գերեզմանին: Եւ հայեցեալ 4
տեսին՝ զի թաւալեցուցեալ էր զվէմն ի գերեզմանէն.
քանզի էր մեծ յոյժ: Եւ մտեալ ի ներքս ի գերեզ- 5
մանն՝ տեսին երիտասարդ մի զի նստէր ընդ աջմէ կող-
մանէ՝ զգեցեալ պատմուճան սպիտակ, եւ զարհուրե-
ցան: Եւ նա ասէ ցնոսա. մի՛ երկնչիք, զՅիսուս. խըն- 6
դրէք զնազովրեցի զխաչելեալն, յարեաւ՝ չէ աստ.
ահաւադիկ տեղին՝ ուր եդին զնա: Այլ երթայք ա- 7
սացէք ցաշակերտս նորա՝ եւ ցՊետրոս, եթէ ահա
յառաջագոյն երթայ քան զձեզ ի Գալիլեա, անդ
տեսանիցէք զնա՝ որպէս ասացն ձեզ: Եւ իբրեւ լուան՝ 8
ելին եւ փախեան ի գերեզմանէն, քանզի զահի հա-
րեալ էին. եւ ոչ ումեք ինչ ասացին, զի երկնչէին:
Յարուցեալ Յիսուս առաւօտուն առաջինն միա- 9
շաբաթուն՝ երեւեցաւ Մարիամու Մագդաղենացւոյ,

10 յորմէ հանեալ էր զեօթն դեւն: Եւ նա երթեալ
պատմեաց այնոցիկ՝ որ ընդ նմայն էին, մինչ դեռ
11 սգային եւ լային: Նոքա իբրեւ լուան թէ կենդանի է՝
12 եւ երեւեցաւ նմա, ոչ հաւատացին: Յետոյ երեւե-
ցաւ այլով կերպարանաւ՝ որք երթային յանդաստան:
13 Նոքա չոգան պատմեցին այլոց, եւ ոչ նոցա հա-
14 ւատացին: Յետոյ մինչդեռ բազմեալ էին մետասանքն
երեւեցաւ նոցա, եւ թշնամանեաց զանհաւատու-
թիւն նոցա եւ զխստասրտութիւն, զի որ երեւեցաւ
նոցա յարուցեալ ի մեռելոց՝ եւ նոքա ոչ հա-
15 ւատացին: Եւ ասէ ցնոսա, երթայք յաշխարհ ամե-
նայն, եւ քարոզեցէք զաւետարանն ամենայն արարա-
16 ծոց: Որ հաւատայ եւ մկրտեսցի՝ կեցցէ, եւ որ ոչն
17 հաւատայ՝ դատապարտեսցի: Նշանք այսոքիկ՝ որ հա-
ւատանն, երթիցեն զհետ այնոցիկ. յանուն իմ դեւս
18 հանցեն, լեզուս խօսեսցին, Ի ձեռս իւրեանց օձս
բարձցեն, եւ եթէ մահացու ինչ դեղ արբցեն՝ նոցա
ինչ ոչ վնասեսցէ. ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն՝
19 եւ բժշկեսցին: Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն
ընդ նոսա՝ համբարձաւ յերկինս, եւ նստաւ ընդ աջ-
20 մէ Ա̅յ: Եւ նոքա ելեալ քարոզէին ընդ ամենայն եր-
կիր՝ Տեառն գործակցութեամբ. եւ զբանն հաստատէին
ամենայն նշանօք՝ որ երթայր զհետ նոցա:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՂՈՒԿԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Աւետարանս որ ըստ Ղուկասու գրեալ է։ Սոյն ինքն Ղուկաս աշակերտ էր Պետրոսի, եւ յետ նորա եղեալ ընթացակից Պաւղոսի, եւ մնացեալ ի նմանէ. սա գրեաց զաւետարանս զայս։ Սկիզբն առնէ ի ծննդենէն Յովհաննու, եւ զոր ըստ նմին. պատմէ եւ զմարմնանալ Փրկչին. ազգաթիւ առնէ՝ եւ եկանէ ի Յովսեփայ ի Դաւիթ, եւ ի Դաւթայ մինչեւ յԱդամ։ Պատմէ սա եւ զմկրտութիւն Յովհաննու. եւ զնեղուլն ի լեառնն զփորձելն ի սատանայէ. եւ զընտրութիւն աշակերտացն, եւ այլ եօթանասունսն. եցոյց նշանս եւ արուեստս բազումս եղեալս. եւ զխորհուրդ մատնութեան եւ զկատարածն՝ որ մատնեցաւ Պիղատոսի Պոնտացւոյ, եւ խաչեցաւ մարմնով. զի զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա. եւ որք խաչեցան յերկուց աւազակացն՝ մին ապաշխարեաց խոստովանութեամբ։ Եւ զի մարմին նորա եդաւ ի գերեզմանի, եւ յարեաւ յերրորդ աւուրն. եւ յետ այսորիկ համբարձաւ յերկինս տեսանելով հրեշտակացն։ Ղուկաս արուեստիւ բժիշկ գոլով. սա աշակերտեցաւ Փրկչին, եւ համարեալ կոչեցաւ ի թիւս եօթանասնիցն։ Իսկ յետոյ աշակերտեցաւ Պաւղոսի. վասն որոյ ասէ գովութիւն սորա յաւետարանին։ Սա հրամանաւ Պաւղոսի գրեաց զաւետարանս իւր յԱնտիոք քաղաքի ի լեզու ասորի՝ զկնի ԺԱ ամի համբառնալոյ Փրկչին։

Ղուկաս՝ յարութիւն։

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՂՈՒԿԱՍ

	Գլ.	Համ.
Վասն աշխարհագրին	Բ.	1
Վասն քաջօրհնեայ հովուացն	Բ.	8
Վասն Սիմէովնի	Բ.	25
Վասն մարգարէին Աննայի	Բ.	36
Վասն լինելոյ բանին Աստուծոյ առ Յովհաննէս	Գ.	2
Վասն՝ որոց հարցանէինն զՅովհաննէս	Գ.	10
Վասն փորձութեանց փրկչին	Դ.	2
Վասն՝ որ ունէր զհոգին դիւական	Դ.	33
Վասն զոքանչին Պետրոսի	Դ.	38
Վասն՝ որոց բժշկէին ի զանազան հիւանդութեանց	Դ.	40
Վասն որսոյ ձկանցն	Ե.	4
Վասն բորոտին	Ե.	12
Վասն անդամալուծին	Ե.	15
Վասն Ղեւեայ մաքսաւորին	Ե.	27
Վասն գօսացեալ ձեռինն	Զ.	6
Վասն առաքելոցն համարոյ	Զ.	13
Վասն երանութեանցն	Զ.	33
Վասն հարիւրապետին	Է.	2
Վասն որդւոյ այրւոյն	Է.	12
Վասն որոց առաքեցանն ի Յովհաննէ	Է.	19
Վասն օծանելոյ զՏէրն մուռոնաւ	Է.	38
Վասն առակի սերմնացանին	Ը.	5
Վասն սաստելոյ ջուրցն	Ը.	24
Վասն՝ որ ունէր զլէգէոն	Ը.	27
Վասն դստեր ժողովրդապետին	Ը.	41
Վասն արեանահոսս կնոջն	Ը.	43
Վասն առաքելոյ զերկոտասանն	Թ.	2
Վասն հինգ հացիցն, եւ երկու ձկանցն	Թ.	13
Վասն զաշակերտսն հարցանելոյ	Թ.	18

Վասն այլակերպութեան Յիսուսի . . . Թ. 29
Վասն լուսնահարին . . . . Թ. 30
Վասն խորհելոյն՝ թէ ով մեծ իցէ . . . Թ. 46
Վասն չտալոյն հրաման զկնի երթալ . . . Թ. 57
Վասն երեւեցուցանելոյ զեօթանասունսն . Ժ. 1
Վասն հարցանելոյ օրինականին . . . . Ժ. 25
Վասն անկելոյն ի ձեռս աւազակաց . . . Ժ. 30
Վասն Մարիամու եւ Մարթայի . . . Ժ. 38
Վասն յաղօթս կալոյն . . . . . . ԺԱ. 1
Վասն խուլ դեւին . . . . ԺԱ. 14
Վասն՝ որ կինն ձայն եբարձ ի ժողովրդեանն . ԺԱ. 27
Վասն նշան խնդրելոյն . . . . . . ԺԱ. 29
Վասն՝ որ փարիսեցին կոչեաց զՏէր . . . ԺԱ. 37
Վասն վայ տալոյ օրինականացն . . . . ԺԱ. 46
Վասն խմորոյ փարիսեցւոցն . . . . . ԺԲ. 1
Վասն բաժանելոյ զինչն ընդ եղբօրն . . ԺԲ. 13
Վասն յորդաբերելոյ անդոյ մեծատանն . . ԺԲ. 16
Վասն գալիլեացւոցն՝ եւ որոց ի Սելովամ. եւ վասն թզենւոյն . . . . ԺԳ. 1
Վասն կարկամեալ կնոջն այսահարի . . . ԺԳ. 11
Վասն առակացն . . . . ԺԳ. 19
Վասն՝ թէ սակաւք իցեն որ ապրելոց իցեն . ԺԳ. 23
Վասն որք ասացին ցՅիսուս զՀերովդէէ . ԺԳ. 31
Վասն՝ որ ջրգողեալ էր . . . . . ԺԴ. 2
Վասն՝ որք ընտրէին զնախագահսն . . . ԺԴ. 7
Վասն կոչելոյն յընթրիսն . . . . . ԺԴ. 12
Վասն շինելոյ աշտարակին . . . . . ԺԴ. 28
Վասն հարիւր ոչխարացն . . . . . ԺԵ. 4
Վասն անառակ որդւոյն . . . . . . ԺԵ. 11
Վասն անիրաւ տնտեսին . . . . . . ԺԶ. 1
Վասն մեծատանն եւ Ղազարու . . . . ԺԶ. 19
Վասն տասն բորոտացն . . . . . . ԺԷ. 12
Վասն անիրաւ դատաւորին . . . . . ԺԸ. 2
Վասն փարիսեցւոյն եւ մաքսաւորին . . . ԺԸ. 10

Վասն հարցանելոյ Իշխանին զՅիսուս . . ԺԸ. 18
Վասն կուրին . . . . ԺԸ. 35
Վասն Զակքէոսի . . . . ԺԹ. 2
Վասն գնալոյ առնուլ իւր Թագաւորութիւն
եւ դառնալ . . . . ԺԹ. 12
Վասն առնլոյ զտասն մնասն. . . . . ԺԹ. 13
Վասն յաւանակին . . . . ԺԹ. 30
Վասն հարցանելոյ քահանայից զՏէր . . Ի. 1
Վասն առակի այգւոյն . . . . . . Ի. 9
Վասն դահեկանին . . . . Ի. 23
Վասն Սադուկեցւոցն . . . . . . Ի. 27
Վասն՝ թէ զիարդ է որդի Դաւթի Քրիստոս Ի. 41
Վասն երկու լումայի այրւոյն . . . . ԻԱ. 2
Վասն հարցման կատարածին. . . . . ԻԱ. 7
Վասն զատկին . . . . ԻԲ. 1
Վասն վիճելոյն՝ թէ ով մեծ իցէ . . . . ԻԲ. 24
Վասն խնդրելոյն Սատանայի փորձել զՍիմոն ԻԲ. 31
Վասն նախատանաց Հերովդի . . . . ԻԳ. 11
Վասն կոծելոյ կանանց . . . . . . ԻԳ. 27
Վասն աղաչաւորելոյ աւազակին . . . . ԻԳ. 40
Վասն խնդրելոյ զտէրունական մարմինն . . ԻԳ. 52
Վասն իւղաբեր կանանց . . . . . ԻԴ. 1
Վասն Կղէոպեանց . . . . ԻԴ. 13
Վասն համբառնալոյն Տեառն . . . . . ԻԴ. 51

Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 ՔԱՆԶԻ բազումք յօժարեցին վերստին կար-
գել զպատմութիւնն վասն իրացն հաստատելոց ի
2 մեզ, Որպէս աւանդեցին մեզ որ ի սկզբանէ ակա-
3 նատեսք եւ սպասաւորք եղեն բանին. Կամ եղեւ
եւ ինձ, որ ի սկզբանէ զհետ երթեալ էի ամենայնի,
ճշմարտութեամբ կարգաւ գրել քեզ՝ քաջդ Թէո-
4 փիլէ, Զի ծանիցես զբանիցն՝ որոց աշակերտեցար,
զճշմարտութիւն:

5 Եւ եղեւ յաւուրս Հերովդի արքայի Հրէաստա-
նի քահանայ ոմն անուն Զաքարիա ի դասակարգէ
Աբիայ. եւ կին նորա ի դստերաց Ահարոնի, եւ անուն
6 նորա Եղիսաբեթ: Եւ էին արդարք երկոքին առաջի
Աստուծոյ. գնային յամենայն պատուիրանս եւ յիրա-
7 ւունս Տեառն անարատք: Եւ ոչ գոյր նոցա որդեակ.
քանզի Եղիսաբեթ ամուլ էր, եւ երկոքեան անցեալ
8 էին զաւուրբք իւրեանց: Եւ եղեւ ի քահանայանալն
նորա ըստ կարգի աւուրցն հասանելոյ առաջի Աստու-
9 ծոյ, Ըստ օրինի քահանայութեանն՝ եհաս նմա խունկ
10 արկանել մտեալ ի տաճարն Տեառն. Եւ ամենայն
բազմութիւն ժողովրդեանն կային յաղօթս արտաքոյ՝
11 ի ժամ խնկոցն: Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն
12 զի կայր ընդ աջմէ սեղանոյ խնկոցն: Եւ խռովեցաւ
Զաքարիա՝ իբրեւ ետես, եւ անկաւ ահ ի վերայ նո-
13 րա: Ասէ ցնա հրեշտակն Տեառն. մի՛ երկնչիր Զա-

քարիա՝ զի լուեալ եղեն աղօթք քո, եւ կին քո Եղի-
սաբէթ ծնցի քեզ որդի եւ կոչեսցես զանուն նորա
Յովհաննէս: Եւ եղիցի քեզ ուրախութիւն եւ 14
ցնծութիւն. եւ բազումք ի ծննդեան նորա խըն-
դասցեն. Զի եղիցի մեծ առաջի Տեառն. եւ գինի եւ 15
օղի մի արբցէ. եւ Հոգւով սրբով լցցի անդստին
յորովայնէ մօր իւրոյ: Եւ զբազումս յորդւոցն Իսրայ- 16
ելի դարձուսցէ ի Տէր Աստուած իւրեանց: Եւ 17
ինքն եկեսցէ առաջի նորա Հոգւով զօրութեամբ
Եղիայի, դարձուցանել զսիրտս հարց յորդիս եւ
զանհաւանս յիմաստութիւն արդարոց. պատրաստել
Տեառն ժողովուրդ կազմեալ: Եւ ասէ Զաքարիա 18
ցհրեշտակն. եւ իւ գիտացից զայդ. զի ես ծեր եմ,
եւ կին իմ անցեալ զաւուրբք իւրովք: Պատասխանի 19
ետ հրեշտակն եւ ասէ ցնա. ես եմ Գաբրիէլ՝ որ կամ
առաջի Աստուծոյ, եւ առաքեցայ խօսել ընդ քեզ՝
եւ աւետարանել քեզ զայդ: Եւ ահա եղիցես համր, 20
եւ մի՛ կարասցես խօսել մինչեւ ցօրն՝ յորում այդ
լինիցի. փոխանակ զի ոչ հաւատացեր բանից իմոց՝
որք լցցին ի ժամանակի իւրեանց: Եւ ժողովուրդն 21
ակն ունէր Զաքարիայ, եւ զարմանային ընդ յամելն
նորա ի տաճարին: Եւ իբրեւ ել՝ ոչ կարէր խօսել ընդ 22
նոսա. եւ իմացան թէ տեսիլ ետես ի տաճարին:
Եւ նա նշանացի խօսէր ընդ նոսա, եւ կայր պապան-
ձեալ: Եւ եղեւ իբրեւ լցան աւուրք պաշտաման նորա, 23
գնաց ի տուն իւր. Եւ յետ աւուրցն այնոցիկ յղա- 24
ցաւ Եղիսաբէթ կին նորա, եւ թաքուցանէր
զանձն ամիսս հինգ, եւ ասէր. Զի՛նչ գործ գոր- 25
ծեաց ընդ իս Տէր յաւուրս՝ յորս հայեցաւ յիս
բառնալ զնախատինս իմ ի մարդկանէ:

Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբ- 26
րիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեա-
ցւոց, որում անուն էր Նազարեթ, Առ կոյս խօսեցեալ 27
առն, որում անուն էր Յովսէփ՝ ի տանէ Դաւթի,

28 եւ անուն կուսին Մարիամ: Եւ եկեալ առ նա ասէ.
29 ուրախ լեր բերկրեալդ՝ Տէր ընդ քեզ: Եւ նա ընդ
բանն խռովեցաւ եւ խորհէր ընդ միտ՝ թէ որպիսի ինչ
30 իցէ ողջոյնս այս: Եւ ասէ ցնա հրեշտակն. մի՛ երկնչիր
31 Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ: Եւ ահա
յղասջիր՝ եւ ծնցես որդի. եւ կոչեսցես զանուն նո-
32 րա Յիսուս: Նա եղիցի մեծ, եւ որդի բարձրելոյ կո-
չեսցի. եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւ-
թի հօր նորա. եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յա-
33 կովբայ ի յաւիտեանս. Եւ թագաւորութեան նո-
34 րա վախճան մի լիցի: Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն.
35 զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ: Պա-
տասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցնա. Հոգի սուրբ
եկեսցէ ի քեզ, եւ զօրութիւն բարձրելոյն հովանի
լիցի ի վերայ քո. քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն
36 սուրբ է, եւ որդի Աստուծոյ կոչեսցի: Եւ ահա Ե-
ղիսաբեթ ազգական քո՝ եւ նա յղի է ի ծերութեան
իւրում, եւ այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն
37 կոչեցեալ էր. Զի ոչ տկարասցի առ յԱստուծոյ ա-
38 մենայն բան: Եւ ասէ Մարիամ. ահաւասիկ կամ ա-
ղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում. եւ
գնաց ի նմանէ հրեշտակն:

39 Յարուցեալ Մարիամ յաւուրսն յայնոսիկ,
գնաց ի լեռնակողմն փութապէս ի քաղաքն Յուդայ:
40 Եւ եմուտ ի տուն Զաքարիայ, եւ ետ ողջոյն Եղի-
41 սաբեթի: Եւ եղեւ իբրեւ լուաւ զողջոյնն Մարիա-
մու Եղիսաբեթ, խաղաց մանուկն յորովայնի նորա.
42 եւ լցաւ Եղիսաբեթ Հոգւովն սրբով: Եւ ի ձայն
բարձր աղաղակեաց եւ ասէ. օրհնեալ ես դու ի
43 կանայս, եւ օրհնեալ է պտուղ որովայնի քո: Եւ
ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ
44 իս: Զի ահաւասիկ իբրեւ եղեւ ձայն ողջունի քո
յականջս իմ, խաղաց ցնծալով մանուկս յորովայ-
45 նի իմում: Եւ երանի որ հաւատայցէ՝ եթէ եղիցի

կատարումն ասացելոցս նմա ի Տեառնէ։ Եւ ասէ 46
Մարիամ. Մեծացուսցէ անձն իմ զՏէր. Եւ ցնծա- 47
ցաւ հոգի իմ յԱստուած փրկիչ իմ։ Զի հայեցաւ 48
ի խոնարհութիւն աղախնոյ իւրոյ. զի ահա յայսմհե-
տէ երանեսցեն ինձ ամենայն ազգք։ Զի արար ինձ 49
մեծամեծս հզօրն, եւ սուրբ է անուն նորա. Եւ ո- 50
ղորմութիւն նորա ազգաց յազգս երկիւղածաց իւ-
րոց։ Արար զօրութիւն բազկաւ իւրով. ցրուեաց 51
զամբարտաւանս մտօք սրտից իւրեանց։ Քակեաց 52
զհզօրս յաթոռոց, եւ բարձրացոյց զխոնարհս։
Զքաղցեալս լցոյց բարութեամբ, եւ զմեծատունս 53
արձակեաց ունայնս։ Պաշտպանեաց Իսրայէլի ծառայի 54
իւրում՝ յիշել զողորմութիւնս։ Որպէս խօսեցաւ առ 55
հարս մեր՝ Աբրահամու եւ զաւակի նորա յաւիտեան։
Եկաց Մարիամ առ նմա իբրեւ ամիսս երիս, եւ դար- 56
ձաւ ի տուն իւր։

Եւ Եղիսաբեթի լցան ժամանակք ծնանելոյ, 57
եւ ծնաւ որդի։ Եւ լուան որ շուրջ զնովաւ էին՝ եւ 58
ազգատոհմ նորա, զի մեծ արար Տէր զողորմութիւն
իւր ընդ նմա. եւ խնդային ընդ նմա։ Եւ եղեւ յա- 59
ւուրն ութերորդի եկին թլփատել զմանուկն, եւ կո-
չէին զնա յանուն հօր իւրոյ Զաքարիա։ Պատաս- 60
խանի ետ մայր նորա եւ ասէ. ո՛չ, այլ կոչեսցի Յով-
հաննէս։ Եւ ասեն ցնա. քանզի ոչ ոք է յազգի 61
քում, որոյ կոչի անուն Յովհաննէս։ Ակնարկէին 62
հօրն նորա թէ զի՞նչ կամիցի կոչել զնա։ Եւ 63
խնդրեաց տախտակ, գրեաց եւ ասէ. Յովհաննէս է
անուն դորա. եւ զարմացան ամենեքին։ Եւ բացաւ 64
բերան նորա վաղվաղակի՝ եւ լեզու նորա, եւ խօսէր՝
եւ օրհնէր զԱստուած։ Եւ եղեւ ահ ի վերայ ամե- 65
նեցուն որ լսէին զայս, եւ որ շուրջ բնակեալ էին զնո-
քօք. եւ ընդ ամենայն լեռնակողմն Հրէաստանի պատ-
մէին ամենայն բանքս այսոքիկ։ Եւ եդին ամենեքեան 66
որ լսէինն՝ ի սիրտս իւրեանց, եւ ասէին. զի՞նչ լի-

նիցի մանուկս այս. եւ ձեռն Տեառն էր ընդ նմա։
67 Եւ Զաքարիա հայր նորա լցաւ Հոգւով սրբով, մար-
68 գարէացաւ եւ ասէ. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայե-
լի, զի յայց ել մեզ, եւ արար փրկութիւն ժողո-
69 վրդեան իւրում։ Եւ յարոյց եղջիւր փրկութեան
70 մեզ ի տանէ Դաւթի ծառայի իւրոյ։ Որպէս խօ-
սեցաւ բերանով սրբոց՝ որ յաւիտենից մարգարէքն
71 նորա էին։ Փրկութիւն ի թշնամեաց մերոց, եւ ի
72 ձեռաց ամենայն ատելեաց մերոց։ Առնել ողորմու-
թիւն ընդ հարս մեր, եւ յիշել զուխտն իւր սուրբ։
73 Զերդումն զոր երդուաւ Աբրահամու հօր մերում՝
74 տալ մեզ, Առանց երկիւղի, ի ձեռաց թշնամեաց մե-
75 րոց փրկեալս։ Պաշտել զնա սրբութեամբ եւ արդա-
րութեամբ առաջի նորա զամենայն աւուրս կենաց
76 մերոց։ Եւ դու մանուկ՝ մարգարէ բարձրելոյն կոչես-
ցիր. զի երթիցես առաջի երեսաց Տեառն պատրաս-
77 տել զճանապարհս նորա։ Տալ գիտութիւն փրկու-
թեան ժողովրդեան նորա, ի թողութիւն մեղաց
78 նոցա։ Վասն գթութեանց ողորմութեան Աստուծոյ
մերոյ, որովք այց արասցէ մեզ արեգակն ի բարձանց։
79 Երեւել՝ որոց ի խաւարի եւ ի ստուերս մահու նստէ-
ին. ուղղել զոտս մեր ի ճանապարհս խաղաղու-
80 թեան։ Եւ մանուկն աճէր՝ եւ զօրանայր Հոգւով. եւ
էր յանապատ մինչեւ յօր երեւելոյ նորա Իսրայելի։

ԳԼՈՒԽ Բ.

1 Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրա-
ման յԱւգոստոս կայսերէ՝ աշխարհագիր առնել ընդ
2 ամենայն տիեզերս։ Այս առաջին աշխարհագիր
3 եղեւ ի դատաւորութեան Ասորւոց Կիւրենեայ։ Եւ
երթային ամենեքեան մտանել յաշխարհագիր յիւ-
4 րաքանչիւր քաղաքի։ Ել եւ Յովսէփ ի Գալիլեէ ի
քաղաքէ Նազարեթէ ի Հրէաստան ի քաղաք Դաւ-
թի, որ կոչի Բեթղեհէմ. վասն լինելոյ նորա ի տա-

նէ և յազգէ Դաւթի, Մտանել յաշխարհագիր 5
Մարեմաւ հանդերձ՝ զոր խօսեալն էր նմա, և էր
յղի։ Եւ եղև ի հասանելն նոցա անդր, լցան աւուրք 6
ծննդեան նորա։ Եւ ծնաւ զորդին իւր զանդրանիկ. 7
և պատեաց ի խանձարուրս՝ և եդ զնա ի մսուր.
զի ոչ գոյր նոցա տեղի յիջևանին։

Եւ հովիւք էին ի տեղւոջն յայնմիկ բաց- 8
օթեայք որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ
հօտից իւրեանց. Եւ հրեշտակ Տեառն երևեցաւ 9
նոցա, և փառք Տեառն ծագեցին առ նոսա. և
երկեան երկիւղ մեծ։ Եւ ասէ ցնոսա հրեշտակն. 10
Մի՛ երկնչիք՝ զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրա-
խութիւն մեծ, որ եղիցի ամենայն ժողովրդեանն.
Զի ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր ի 11
քաղաքի Դաւթի։ Եւ այս նշանակ ձեզ. գտանիցէք 12
մանուկ պատեալ ի խանձարուրս, և եդեալ ի
մսուր։ Եւ յանկարծակի եղև ընդ հրեշտակին 13
ընդ այնմիկ բազմութիւն զօրաց երկնաւորաց, որ
օրհնէին զԱստուած և ասէին. Փառք ի բարձունս 14
Աստուծոյ. և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ
հաճութիւն։ Եւ եղև իբրև վերացան ի նոցանէ 15
հրեշտակքն յերկինս, ասեն ցմիմեանս հովիւքն.
եկայք երթիցուք մինչև ցԲեթղեհէմ, և տեսցուք
զի՞նչ է բանս այս որ եղև, զոր Տէր եցոյց մեզ։ Եւ 16
եկին փութանակի, և գտին զՄարիամ և զՅովսէփ
և զմանուկն եդեալ ի մսուր։ Եւ ծանեան վասն 17
բանին՝ որ ասացաւ նոցա զմանկանէն։ Եւ ամենե- 18
քեան որ լսէին, զարմանային վասն բանիցն՝ զոր խօ-
սեցան ընդ նոսա հովիւքն։ Եւ Մարիամ զամենայն 19
զբանս զայսոսիկ պահէր, և խելամուտ լինէր ի
սրտի իւրում։ Եւ դարձան հովիւքն, փառաւոր 20
առնէին և օրհնէին զԱստուած վասն ամենայնի
զոր լուան և տեսին. որպէս պատմեցաւ նոցա։ Եւ 21
իբրև լցան աւուրք ութ թլփատել զնա, և կոչե-

ցաւ անուն նորա Յիսուս, որ կոչեցեալն էր ի հրեշ-
տակէն, մինչեւ յղացեալ էր զնա յորովայնի։
22 Եւ իբրեւ լցան աւուրք սրբութեան նորա ըստ
օրինացն Մովսիսի, ածին զնա յԵրուսաղէմ յանդի-
23 ման առնել Տեառն. Որպէս եւ գրեալ է յօրէնս
Տեառն, թէ ամենայն արու որ բանայ զարգանդ՝
24 սուրբ Տեառն կոչեսցի։ Եւ տալ պատարագս՝ ըստ
ասացելոյն յօրէնս Տեառն, զոյգս տատրակաց, կամ
25 երկուս ձագս աղաւնեաց։ Եւ ահա էր այր մի յԵ-
րուսաղէմ, որոյ անուն էր Սիմէովն. եւ էր այրն այն
արդար եւ երկիւղած, եւ ակն ունէր մխիթարու-
26 թեան Իսրայէլի, եւ Հոգի սուրբ էր ի նմա։ Եւ
էր նորա հրաման առեալ ի Հոգւոյն սրբոյ՝ մի
տեսանել զմահ, մինչեւ տեսցէ զօծեալն Տեառն։
27 Եւ եկն հոգւովն ի տաճարն, եւ իբրեւ ածին ծնող-
քըն զմանուկն Յիսուս՝ առնել նոցա ըստ սովորու-
28 թեան օրինացն ի վերայ նորա. Եւ նա առ ընկա-
լաւ զնա ի գիրկս իւր, եւ օրհնեաց զԱստուած,
29 եւ ասէ. Արդ՝ արձակես զծառայս քո Տէր ըստ
30 բանի քում ի խաղաղութիւն. Զի տեսին աչք իմ
31 զփրկութիւն քո. Զոր պատրաստեցեր առաջի ամե-
32 նայն ժողովրդոց. Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց,
33 եւ փառք ժողովրդեան քում Իսրայէլի։ Եւ էին հայրն
եւ մայրն նորա զարմացեալ ի վերայ բանիցն, որ խօ-
34 սէին զնմանէ։ Եւ օրհնեաց զնոսա Սիմէովն, եւ ասէ
ցՄարիամ մայր նորա. ահա սա կայ ի գլորումն եւ
ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայէլի, եւ ի նշան
35 հակառակութեան։ Եւ ընդ քո իսկ անձն անցցէ
սուր. զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք։
36 Եւ անդ էր Աննա մարգարէ՝ դուստր Փանուելի յազգէ
Ասերայ. սա ինքն անցեալ էր զաւուրբք բազմօք՝
կեցեալ ընդ առն ամս եօթն ի կուսութենէ իւրմէ։
37 Եւ էր այրի ամաց իբրեւ ութսուն եւ չորից. որ ոչ
մեկնէր ի տաճարէն, այլ պահօք եւ աղօթիւք

պաշտէր զցայգ եւ զցերեկ։ Եւ սա ի նմին ժամու 38
յարուցեալ գոհանայր զՏեառնէ, եւ խօսէր զնմանէ
ընդ ամենեսին՝ որ ակն ունէին փրկութեան Երուսա-
ղեմի։ Եւ իբրեւ կատարեցին զամենայն ըստ օրի- 39
նացն Տեառն, դարձան անդրէն ի Գալիլեա ի քաղաքն
Նազարէթ։ Եւ մանուկն աճէր եւ զօրանայր լի 40
իմաստութեամբ. եւ շնորհք Աստուծոյ էին ի վերայ
նորա։ Եւ երթային ծնօղք նորա ամի ամի յԵրուսա- 41
ղէմ ի տօն զատկին։ Եւ իբրեւ եղեն նորա ամք եր- 42
կոտասան, ելանել նոցա յԵրուսաղէմ ըստ սովորու-
թեան տօնին, Եւ կատարել զաւուրսն՝ եւ դառնալ 43
անդրէն. մնաց Յիսուս մանուկն յԵրուսաղէմ. եւ
ոչ գիտացին ծնօղքն նորա։ Կարծէին զնմանէ՝ թէ 44
ընդ ուղեկիցսն իցէ. եկին իբրեւ աւուր միոյ ճանա-
պարհ՝ եւ խնդրէին զնա ընդ դրացիսն եւ ընդ ծա-
նօթս։ Եւ իբրեւ ոչ գտին, դարձան անդրէն յԵրու- 45
սաղէմ խնդրել զնա։ Եւ եղեւ յետ երից աւուրց՝ 46
գտին զնա ի տաճարին, զի նստէր ընդ վարդապետսն.
լսէր ի նոցանէ, եւ հարցանէր զնոսա։ Զարմանային ամե- 47
նեքեան՝ որ լսէին ի նմանէ՝ ընդ իմաստութիւն եւ
ընդ պատասխանիսն նորա։ Եւ իբրեւ տեսին զնա՝ սքան- 48
չացան. եւ ասէ ցնա մայրն իւր. որդեակ՝ զի՞նչ գործ
գործեցեր դու ընդ մեզ. ահաւասիկ հայր քո եւ ես
տառապեալք խնդրեաք զքեզ։ Եւ ասէ ցնոսա. զի՞ 49
խնդրէիք զիս, ոչ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ
պարտ է ինձ լինել։ Եւ նոքա ոչ իմացան զբանն՝ զոր 50
խօսեցաւ ընդ նոսա։ Եւ էջ ընդ նոսա, եւ գնաց ի 51
Նազարէթ. եւ էր նոցա հնազանդ. եւ մայր նորա
պահէր զամենայն զբանսն ի սրտի իւրում։ Եւ Յի- 52
սուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ, եւ
շնորհօք յԱստուծոյ եւ ի մարդկանէ։

ԳԼՈՒԽ Գ.

1 Ի հնգետասաներորդի ամի տէրութեան Տիբե-
րեայ կայսեր, ի դատաւորութեան Հրէաստանի Պի-
ղատոսի պոնտացւոյ, եւ ի չորրորդապետութեան Գա-
լիլեացւոց Հերովդի, եւ Փիլիպպոսի եղբօր նորա
չորրորդապետութեան Իտուրացւոց եւ Տրաքոնացւոց
աշխարհին, եւ ի չորրորդապետութեան Լիւսանեայ
2 Աբիլենացւոյ, Եւ ի քահանայապետութեան Աննայի
եւ Կայիափայ. եղեւ բան Աստուծոյ ի վերայ Յով-
3 հաննու որդւոյ Զաքարեայ՝ յանապատի անդ: Եւ եկն
յամենայն կողմն Յորդանանու քարոզել մկրտութիւն
4 ապաշխարութեան ի թողութիւն մեղաց: Որպէս եւ
գրեալ է ի գիրս պատգամաց Եսայեայ մարգարէի.
Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստ արարէք զճա-
նապարհ Տեառն, եւ ուղիղ արարէք զշաւիղս նորա:
5 Ամենայն ձորք լցցին, եւ ամենայն լերինք եւ բլուրք
խոնարհեսցին. եւ եղիցին դժուարինքն ի դիւրինս, եւ
6 առապարքն ի հարթ ճանապարհս: Եւ տեսցէ ա-
7 մենայն մարմին զփրկութիւն Աստուծոյ: Եւ ասէ
ցժողովուրդսն ելեալս մկրտել ի նմանէ. Ծնունդք ի-
ժից՝ ո՞ ցոյց ձեզ փախչել ի բարկութենէն՝ որ գալոցն
8 է: Արարէք այսուհետեւ պտուղս արժանի ապաշխա-
րութեան. եւ մի սկսանիցէք ասել՝ թէ ունիմք հայր
զԱբրահամ. զայս ասեմ ձեզ, եթէ կարող է Ա-
ստուած ի քարանցս յայսցանէ յարուցանել որդիս
9 Աբրահամու: Բայց ահաւասիկ տապար առ արմին
ծառոց կայ. ամենայն ծառ՝ որ ոչ առնէ զպտուղ
10 բարւոք, հատանի եւ ի հուր արկանի: Հարցանէին
զնա ժողովուրդքն եւ ասէին. իսկ արդ՝ զի՞նչ գործես-
11 ցուք: Պատասխանի ետ եւ ասէ ցնոսա. որ իցեն եր-
կու հանդերձք՝ տացէ զմին այնմ որ ոչ գուցէ. եւ
12 որ կայցէ կերակուր՝ նոյնպէս արասցէ: Եկին եւ մաք-
սաւորք մկրտել, եւ ասեն ցնա. վարդապետ՝ զի՞նչ

գործեսցուք: Եւ նա ասէ ցնոսա. մի՛ ինչ աւելի քան 13
զհրամայեալն ձեզ առնիցէք: Հարցանէին զնա եւ 14
զինուորքն եւ ասէին. եւ մեք զի՞նչ գործեսցուք: Ասէ
ցնոսա. մի՛ զոք խռովիցէք եւ մի՛ զոք զրպարտիցէք. շատ
լիցին ձեզ թոշակքն ձեր: Մինչ ակն ունէր ժողո- 15
վուրդն՝ եւ խորհէին ամենեքեան ի սիրտս իւրեանց
վասն Յովհաննու՝ մի՞թէ սա իցէ Քրիստոսն, Պա- 16
տասխանի ետ ամենեցուն եւ ասէ. ես մկրտեմ զձեզ
ջրով, բայց գայ զօրագոյն քան զիս, զորոյ չեմ բա-
ւական բառնալ զկօշիկս. նա մկրտեսցէ զձեզ Հոգ-
ւով սրբով եւ հրով: Որոյ հեծանոցն ի ձեռին իւ- 17
րում սրբել զկալ իւր՝ եւ ժողովել զցորեանն ի շտե-
մարանս իւր, եւ զյարդն այրեսցէ անշէջ հրով: Բա- 18
զում եւ այլ ինչ մխիթարութեամբ աւետարանէր
ժողովրդեանն: Բայց Հերովդէս չորրորդապետ յան- 19
դիմանեալ ի նմանէ վասն Հերովդիայ կնոջ եղբօր իւ-
րոյ՝ եւ վասն ամենայն չարեացն զոր գործեաց Հե-
րովդէս, Յաւել եւ զայն եւս ի վերայ ամենայնի, եւ 20
եդ ի բանտի զՅովհաննէս: Եւ եղեւ ի մկրտել ամե- 21
նայն ժողովրդեանն, եւ ընդ Յիսուսի մկրտելն՝ եւ կալ
յաղօթս, բանալ երկնից, Եւ իջանել Հոգւոյն սրբոյ 22
մարմնաւոր տեսլեամբ իբրեւ զաղաւնի ի վերայ նորա.
եւ գալ ձայն յերկնից՝ որ ասէր. դու ես որդի իմ սի-
րելի՝ ընդ քեզ հաճեցայ: Եւ ինքն Յիսուս էր ամաց 23
իբրեւ երեսնից սկսեալ՝ որպէս կարծէր՝ որդի
Յովսեփայ: Որ Յակովբայն. որ Հեղեայն. որ Մա-
տաթեայն: Որ Ղեւեայն. որ Մելքեայն. որ Յան- 24
նեայն. որ Յովսեփայն: Որ Մատաթեայն. որ Ամով- 25
սայն. որ Նաւումայն. որ Եսղեայն. որ Նանգեայն:
Որ Մահաթայն. որ Մատաթայն. որ Սեմեայն. որ 26
Յովսեքեայն. որ Յովդայն. Որ Յովնանայն. որ Ռեսայն. 27
որ Զօրաբաբելին. որ Սաղաթիելին. որ Ներեայն:
Որ Մելքեայն. որ Ադդեայն. որ Կովսամայն. որ Եղ- 28
մովդադայն. որ Էրայն: Որ Յեսուայն. որ Եղիա- 29

զարայն. որ Յովրամայն. որ Մատթայն. որ Ղեւ-
30 եայն: Որ Սիմէոնին. որ Յուդային. որ Յովսեփայն.
31 որ Յովնանայն. որ Եղեկիմայն: Որ Մեղթայն. որ
Մեննայն. որ Մատաթայն. որ Նաթանայն. որ
32 Դաւթին, Որ Յեսսեայն, որ Ովբեդայն, որ Բոոսայն,
33 որ Սաղմոնայն, որ Նաասոնին, Որ Ամինադաբայն,
որ Արամայն. որ Ադմեայն. որ Առնեայն. որ Եսրով-
34 մայն. որ Փարեսին. որ Յուդային: Որ Յակովբայն.
որ Իսահակայն. որ Աբրահամու. Որ Թարային. որ
35 Նաքովրայն: Որ Սերուքայն. որ Ռագաւայն. որ
36 Փաղեկայն. որ Եբերայն. որ Սաղային: Որ Կայնա-
նայն. որ Արփաքսադայն. որ Սեմայն. որ Նոյին. որ
37 Ղամեքայն: Որ Մաթուսաղային. որ Ենովքայն. որ
38 Յարեդին. որ Մաղաղիելին. որ Կայնանայն: Որ
Ենովսայն. որ Սեթայն. որ Ադամայն. որ Աստուծոյն:

ԳԼՈՒԽ Դ.

1 Եւ Յիսուս լի Հոգւով սրբով դարձաւ ի Յոր-
2 դանանէ. եւ վարէր Հոգւովն յանապատ, Յաւուրս
քառասուն փորձեալ ի սատանայէ. եւ ոչ եկեր եւ
ոչ արբ յաւուրսն յայնոսիկ. եւ ի կատարելն նոցա՝
3 քաղցեաւ: Եւ ասէ ցնա սատանայ. եթէ որդի ես
4 Աստուծոյ, ասա քարիդ այդմիկ՝ զի հաց լիցի: Պա-
տասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. գրեալ է, եթէ
ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ
5 Աստուծոյ: Եւ հանեալ զնա ի լեառն մի բարձր՝ ե-
ցոյց նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի ի
6 վայրկեան ժամանակի: Եւ ասէ ցնա սատանայ. քեզ
տաց զայս ամենայն իշխանութիւն եւ զփառս սոցա
7 զի ինձ տուեալ է՝ եւ ում կամիմ՝ տամ զսա: Արդ՝
դու եթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ, քեզ
8 եղիցի ամենայն: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ
ասէ. գրեալ է, երկիր պագցես Տեառն Աստուծոյ քում,
9 եւ զնա միայն պաշտեսցես: Եւ ած զնա յԵրուսա-

զէմ, եւ կացոյց ի վերայ աշտարակի տաճարին, եւ ա-
սէ ցնա. եթէ որդի ես Աստուծոյ, արկ զքեզ աստի
ի վայր: Զի գրեալ է եթէ հրեշտակաց իւրոց 10
պատուիրեալ է վասն քո՝ պահել զքեզ: Զի ի վե- 11
րայ ձեռաց բարձցեն զքեզ, մի երբեք հարցես զքարի
զոտն քո: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ ա- 12
սացեալ է, թէ ոչ փորձեսցես զՏէր Աստուած քո:
Եւ կատարեալ զամենայն փորձութիւնս սատանայի, 13
ի բաց եկաց ի նմանէ առ ժամանակ մի:

ԲԿ. Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ Հոգւոյն ի 14
Գալիլեա. եւ ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կող-
մանս գաւառին: Եւ նա ուսուցանէր ի ժողովուրդս 15
նոցա փառաւորեալ յամենեցունց: Եւ եկն ի Նա- 16
զարեթ՝ ուր սնեալն էր. եւ եմուտ ըստ սովորութեան
իւրում յաւուր շաբաթու ի ժողովուրդն: Եւ ե- 17
տուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի, եւ յարեաւ
ընթեռնուլ. եւ իբրեւ եբաց զգիրսն՝ եգիտ զայն տեղի
յորում գրեալն էր. Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն 18
որոյ եւ օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առա-
քեաց զիս, բժշկել զբեկեալս սրտիւք. Քարոզել գե- 19
րեաց զթողութիւն, եւ կուրաց տեսանել. արձակել
զվիրաւորս ի թողութիւն, քարոզել զտարեկան Տեառն
ընդունելի: Եւ խփեալ զգիրսն՝ ետ ցպաշտօնեայն, 20
եւ նստաւ. եւ ամենեցուն որ ի ժողովրդեանն էին
աչք՝ ի նա հայէին: Եւ սկսաւ ասել ցնոսա. այսօր 21
լցան գիրքս այս յականջս ձեր: Եւ ամենքին վկայէին 22
նմա, եւ զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելա-
նէին ի բերանոյ նորա. եւ ասէին, ո՞չ սա է որդին Յով-
սեփայ: Եւ ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք առ իս զա- 23
ռակս զայս. բժիշկ՝ բժշկեա զանձն քո. որչափ լուաք
զոր արարեր ի Կափառնաում, արա եւ աստ ի քում
գաւառի: Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ չէ մարգա- 24
րէ ընդունելի ի քաղաքի իւրում: Արդարեւ ասեմ 25
ձեզ, զի բազում այրիք էին յաւուրս Եղիայի ի մէջ

Իսրայէլի՝ յորժամ փակեցանն երկինք զերիս ամս եւ
զվեց ամիս, եւ եղեւ սով մեծ ընդ ամենայն երկիր։
26 Եւ ոչ առ մի ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց
միայն ի Սարեփթայ Սիդոնացւոց՝ առ կին մի այրի։
27 Եւ բազում բորոտք էին յԻսրայէլի առ Եղիսէիւ
մարգարէիւ, եւ ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն
28 Նէեման Ասորի։ Եւ լցան ամենեքին բարկութեամբ
29 ի ժողովրդեանն՝ իբրեւ լուէին զայս։ Եւ յարուցեալ
հանին զնա արտաքոյ քաղաքին, եւ ածին զնա մին-
չեւ յարտեւան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շի-
30 նեալ էր՝ գահավէժ առնել զնա։ Եւ նա անցեալ
ընդ մէջ նոցա՝ գնայր։
31 ԲԲ. Եւ էջ ի Կափառնաում ի քաղաքն Գալի-
32 լեացւոց, եւ ուսուցանէր զնոսա ի շաբաթս։ Եւ
զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի իշխա-
33 նութեամբ էր բան նորա։ Եւ էր ի ժողովրդեանն այր
մի, որ ունէր այս դիւի պղծոյ, եւ աղաղակեաց ի
34 ձայն մեծ, Եւ ասէ. Թուլացո՝ զի՞ կայ մեր եւ քո՝
Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գի-
35 տեմք զքեզ՝ ո՛վ ես սուրբն Աստուծոյ։ Սաստեաց ի
նա Յիսուս եւ ասէ. պապանձեաց եւ ել ի նմանէ.
զգետնեաց զնա դեւն ի միջի անդ՝ եւ ել ի նմանէ,
36 եւ ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն զարմանալիք ի
վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեանս եւ ասէին.
զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ եւ զօրութեամբ
37 սաստէ այսոց պղծոց՝ եւ ելանեն։ Եւ երթայր հռչա-
չակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն։
38 Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի, եմուտ ի տուն
39 Սիմովնի։ Զոքանչ Սիմովնի տագնապէր ջերմամբ մե-
40 ծաւ, եւ աղաչեցին զնա վասն նորա։ Եկաց առ նմա՝
սաստեաց ջերմանն, եւ եթող զնա. եւ վաղվաղակի
41 յարեաւ՝ եւ պաշտէր զնոսա։ Եւ ընդ արեւուն մտա-
նել՝ ամենեքին որոց էին հիւանդք ի պէսպէս ցաւս՝
բերէին զնոսա առ նա։ Եւ նա իւրաքանչիւր ուրեք ի

նոցանէ դնէր ձեռս՝ եւ բժշկէր զնոսա։ Ելանէին դեւք 42
ի բազմաց, աղաղակէին եւ ասէին. եթէ դու ես որդի
Աստուծոյ. եւ նա սաստէր՝ եւ ոչ տայր նոցա թոյլ
խօսել, զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։
ԲԳ. Եւ իբրեւ տիւ եղեւ՝ ել գնաց յանապատ տե- 43
ղի. եւ ժողովուրդքն խնդրէին զնա. եկին մինչեւ առ
նա՝ եւ արգելուին զնա, զի մի գնասցէ ի նոցանէ։ Եւ 44
նա ասէ ցնոսա. եւ այլոց քաղաքաց պարտ է ինձ ա-
ւետարանել զարքայութիւն Աստուծոյ, զի յայն իսկ
առաքեցայ։ Եւ քարոզէր ի ժողովուրդսն Գալի- 45
լեացւոց։

ԳԼՈՒԽ Ե.

Եւ եղեւ ի խռնել զնովաւ ժողովրդեանն եւ 1
լսել զբանն Աստուծոյ, եւ ինքն կայր առ ծովա-
կին Գեննեսարեթայ։ Եւ ետես երկուս նաւս՝ զի 2
կային առ ծովակին, եւ ձկնորսքն ելեալ ի նոցանէ՝
լուանային զգործիսն։ Ել նա ի մի նաւուցն՝ որ էր 3
Սիմովնի, եւ աղաչեաց զնա սակաւիկ մի տանել ի
ներքս ի ցամաքէն. նստաւ՝ եւ ուսուցանէր ի նաւէ անտի
զժողովուրդսն։ Եւ իբրեւ լռեաց ի խօսիցն, ասէ ցՍի- 4
մովն. խաղացո ի խորն, եւ արկէք զգործիս ձեր յորս։
Պատասխանի ետ Սիմովն եւ ասէ ցնա. վարդապետ՝ 5
զամենայն գիշերս աշխատ եղեաք՝ եւ ոչինչ կալաք.
բայց վասն քո բանիդ արկցուք զգործիսս։ Զայս 6
իբրեւ արարին՝ փակեցին ի ներքս բազմութիւն
ձկանց յոյժ, մինչեւ պարպատէին ուռկանք նոցա։
Եւ ակնարկէին ուսակցացն ի միւս նաւն՝ գալ օգնել 7
նոցա. եւ եկին եւ լցան երկոքին նաւքն՝ մինչեւ մերձ
ընկղմել նոցա։ Իբրեւ ետես Սիմովն Պետրոս՝ անկաւ 8
առ ծունկս Յիսուսի եւ ասէ. ի բաց գնա յինէն
Տէր, զի այր մեղաւոր եմ ես։ Քանզի ահ պատեաց 9
զնա եւ զամենեսեան որ ընդ նմայն էին՝ վասն որսոյ
ձկանցն զոր ըմբռնեցին, Նոյնպէս եւ զՅակովբոս եւ 10

զՅովհաննէս՝ զորդիսն Զեբեդեայ, որ էին որսակիցք
Սիմովնի: Եւ ասէ ցՍիմովն Յիսուս. մի՛ երկնչիր՝
11 յայսմ հետէ զմարդիկ որսայցես ի կեանս: Եւ հա-
նեալ զնաւն ի ցամաք, թողին զամենայն, եւ գնացին
զհետ նորա:

12 ԲԳ. Եւ եղեւ ի հասանելն նորա ի մի ի քաղա-
քացն, ահա այր մի լի բորոտութեամբ իբրեւ ետես
զՅիսուս՝ անկեալ ի վերայ երեսաց աղաչեաց զնա՝ եւ
13 ասէ. Տէր՝ եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Ձգեաց
զձեռն իւր՝ հասոյց ի նա՝ եւ ասէ. կամիմ՝ սրբեաց.
14 եւ վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն: Եւ նա
պատուիրեաց նմա մի՛ ումեք ասել, այլ թէ երթ ցոյց
զանձն քո քահանային. եւ մատո պատարագ վասն
սրբութեան քո՝ որպէս եւ հրամայեաց Մովսէս, ի
15 վկայութիւն նոցա: Եւ յորդէր առաւել բանն զնմա-
նէ. եւ ժողովէին ժողովուրդք բազումք լսել՝ եւ բժշ-
16 կել ի հիւանդութենէ իւրեանց: Եւ նա խոյս տայր
յանապատ տեղիս, եւ կայր յաղօթս:

17 ԲԴ. Եւ եղեւ ի միում աւուրց՝ եւ ինքն ուսու-
ցանէր, եւ փարիսեցիքն եւ օրինաց վարդապետքն
նստէին. որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց Գա-
լիլեացւոց՝ եւ Հրէաստանի եւ Երուսաղէմի. եւ զօ-
18 րութիւն Տեառն էր ի բժշկել զնոսա: Եւ ահա արք
բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ, եւ խնդ-
րէին զնա մուծանել ի ներքս՝ եւ դնել առաջի նո-
19 րա: Եւ իբրեւ ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն
զնա ի ներքս վասն ամբոխին, ելին ի տանիս եւ ի
ցուոցն կախեցին զնա, եւ իջուցին մահճօքն հանդերձ
20 ի մէջ՝ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհաւատս
նոցա՝ ասէ ցնա. այր դու՝ թողեալ լիցին քեզ մեղք
21 քո: Սկսան խորհել դպիրքն եւ փարիսեցիքն, եւ ա-
սեն. ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս, ո՞ կարէ թո-
22 ղուլ զմեղս՝ բայց միայն Աստուած: Իբրեւ գիտաց
Յիսուս զխորհուրդս նոցա, պատասխանի ետ եւ ասէ

ցնոսա. զի՞ խորհիք ի սիրտս ձեր: Զի՞նչ դիւրագոյն 23
է, ասե՞լ՝ թողեալ լիցին քեզ մեղք քո, եթէ ասել՝
արի եւ գնա: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն 24
ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. — ասէ ցան-
դամալոյծն, — քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո՝ եւ
երթ ի տուն քո: Եւ առժամայն յարուցեալ առաջի 25
ամենեցուն՝ առ զիւրեւ յորոյ վերայ անկեալ դնէր,
գնաց ի տուն իւր, եւ փառաւոր առնէր զԱստուած:
Զարմանք կալան զամենեսեան, եւ փառաւոր առնէ- 26
ին զԱստուած. լի եղեն ահիւ, եւ ասեն, թէ տեսաք
այսօր նոր նշան:

ԲՁ. Եւ յետ այնորիկ ել անտի՝ եւ ետես մաք- 27
սաւոր մի՝ որում անուն էր Ղեւի, զի նստէր ի մաք-
սաւորութեան. եւ ասէ ցնա, եկ զկնի իմ: Եւ թո- 28
ղեալ զամենայն՝ յարեաւ գնաց զկնի նորա: Եւ արար 29
ընդունելութիւն մեծ նմա Ղեւի ի տան իւրում. եւ
էր ժողովուրդ բազում մաքսաւորաց եւ այլոց՝ որ էին
բազմեալ ընդ նոսա: Եւ տրտնջէին փարիսեցիքն եւ 30
դպիրքն նոցա զնմանէ առ աշակերտսն նորա եւ ասէ-
ին. ընդէ՞ր ընդ մաքսաւորս եւ ընդ մեղաւորս ուտէք
եւ ըմպէք: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա, 31
ոչինչ են պիտոյ բժիշկք ողջոց, այլ հիւանդաց. Եւ 32
ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխա-
րութիւն: Եւ նոքա ասեն ցնա. ընդէ՞ր աշակերտքն 33
Յովհաննու պահեն ստէպ՝ եւ խնդրուածս առնեն,
նոյնպէս եւ փարիսեցւոցն. եւ քոյդ ուտեն եւ ըմպեն:
Եւ նա ասէ ցնոսա. միթէ կարո՞ղ էք մանկանց առա- 34
գաստի, մինչ փեսայն ընդ նոսա իցէ, հրամանս տալ
պահել: Եկեսցեն աւուրք՝ յորժամ բարձցի ի նոցա- 35
նէ փեսայն, եւ ապա պահեսցեն յաւուրսն յայնոսիկ:
Ասաց առակ մի առ նոսա, եթէ ոչ ոք արկանէ ի նոր 36
հանդերձէ ի վերայ հնացեալ ձորձոյ. ապա թէ ոչ՝
եւ զնորն պատառէ, եւ ընդ հնոյն չմիաբանի կա-
պերտն որ ի նորոյն: Եւ ոչ ոք արկանէ գինի նոր ի 37

տիկս հինս. ապա թէ ոչ պայթուցանէ գինին նոր
38 զտիկս հինս. ինքն հեղու, եւ տիկքն կորնչին: Այլ
գինի նոր ի տիկս նորս արկանելի է, եւ երկոքին պա-
39 հին: Եւ ոչ ոք ըմպէ զհինն՝ եւ կամիցի զնորն. քան-
զի ասէ՝ եթէ հինն քաղցրագոյն է:

ԳԼՈՒԽ Զ.

1 ԲԻ. Եւ եղեւ ի շաբաթու յերկրորդում առաջ-
նոյն՝ անցանել նմա ընդ արտորայսն. եւ աշակերտքն
2 նորա կորզէին հասկ՝ շփէին ընդ ափ, եւ ուտէին: Եւ
ոմանք ի փարիսեցւոցն ասեն ցնոսա. զի՞նչ գործէք՝
3 զոր չէ օրէն ի շաբաթու: Պատասխանի ետ նոցա
Յիսուս եւ ասէ. չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ զոր արարն
Դաւիթ, յորժամ քաղցեաւ ինքն՝ եւ որ ընդ նմայն
4 էին: Զիա՞րդ եմուտ նա ի տունն Աստուծոյ, եւ ըզ-
հացն զառաջաւորութեան եկեր՝ եւ ետ այնոցիկ որ
ընդ նմայն էին. զոր ոչ էր օրէն ուտել, բայց
5 միայն քահանայիցն: Եւ ասէ ցնոսա. Տէր է որդի
6 մարդոյ եւ շաբաթու: Եւ եղեւ ի միւսում շաբաթուն,
մտանել նմա ի ժողովուրդն՝ եւ ուսուցանել. եւ էր անդ
7 այր մի՝ եւ ձեռն իւր աջ գօսացեալ էր: Եւ սպա-
սէին նմա դպիրք՝ թէ ի շաբաթուն բժշկիցէ, զի գտա-
8 նիցեն չարախօսութիւն զնմանէ: Եւ նա գիտէր ըզ-
խորհուրդս նոցա. ասէ ցայրն որոյ ձեռնն գօսացեալ
9 էր. արի անց ի մէջ: Եւ նա յարուցեալ եկաց: Ասէ
ցնոսա Յիսուս. հարցից ինչ զձեզ. զի՞նչ արժան է
ի շաբաթու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել.
10 ոգի մի ապրեցուցանե՞լ թէ կորուսանել: Եւ հայե-
ցեալ շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա.
ձգեա զձեռն քո. եւ նա ձգեաց, եւ հաստատեցաւ
11 ձեռն նորա իբրեւ զմիւսն: Նոքա լցան յիմարու-
թեամբ, եւ խնդրէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնի-
ցեն Յիսուսի:

12 ԳԿ. Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել ի

լեառն կալ յաղօթս, եւ հանէր զգիշերն ի գլուխ
յաղօթս Աստուծոյ: Եւ իբրեւ այգ եղեւ՝ կոչեաց 13
զաշակերտսն իւր, եւ ընտրեաց ի նոցանէ երկոտա-
սանս, զորս եւ առաքեալս անուանեաց. ԶՍիմովն՝ 14
զոր եւ Պետրոս անուանեաց, եւ զԱնդրէաս զեղբայր
նորին, եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ զՓիլիպպոս
եւ զԲարթողիմէոս, Եւ զՄատթէոս եւ զԹովմաս, 15
եւ զՅակովբոս Ալփեայ, եւ զՍիմովն զկոչեցեալն նա-
խանձայոյզ, Եւ զՅուդա Յակովբեայ, եւ զՅուդա Իս- 16
կարիովտացի՝ որ եղեւ իսկ մատնիչ: Եւ իջեալ նոքօք 17
հանդերձ ի տեղի մի տափարակ. եւ ժողով աշակեր-
տացն նորա՝ եւ բազմութիւն յոյժ ժողովրդեանն, յա-
մենայն Հրէաստանէ եւ յԵրուսաղեմէ՝ եւ յայնմ կող-
մանէ՝ եւ ի ծովեզերէն Տիւրոսի եւ Սիդովնի. Որ ե- 18
կին լսել ի նմանէ՝ եւ բժշկել ի հիւանդութենէ իւ-
րեանց. եւ նեղեալքն յայսոց պղծոց բժշկէին: Եւ 19
ամենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ի նա, զի
զօրութիւն բազում ելանէր ի նմանէ՝ եւ բժշկէր զա-
մենեսին: Եւ նա ամբարձ զաչս իւր յաշակերտսն իւր՝ 20
եւ ասէ. Երանի աղքատացդ հոգւով, զի ձեր է ար-
քայութիւնն Աստուծոյ: Երանի՝ որ քաղցեալ են 21
այժմ, զի յագեսցին: Երանի՝ որ լան այժմ, զի ծի-
ծաղեսցին: Երանի է ձեզ յորժամ ատիցեն զձեզ 22
մարդիկ, եւ յորժամ որոշիցեն զձեզ եւ նախատի-
ցեն, եւ հանիցեն անուն չար զձէնջ վասն Որդւոյ
մարդոյ: Ուրախ լիջիք յաւուր յայնմիկ եւ ցնծասջիք, 23
զի ահա վարձք ձեր բազում են յերկինս. ըստ դմին
օրինակի առնէին մարգարէիցն հարք իւրեանց: Բայց 24
վայ ձեզ մեծատանցդ՝ զի ընկալայք զմխիթարութիւն
ձեր: Վայ ձեզ որ յագեալդ էք այժմ՝ զի քաղցի- 25
ցէք. վայ ձեզ որ ծիծաղիքդ այժմ, զի սգայցէք եւ
լայցէք: Վայ ձեզ՝ յորժամ բարի ասիցեն զձէնջ ա- 26
մենայն մարդիկ, զի այդպէս առնէին սուտ մարգա-
րէիցն հարք նոցա: Այլ ձեզ ասեմ որ լսէքդ. սիրե- 27

ցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց:
28 Օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս արարէք ի վերայ
29 նեղչաց ձերոց: Որ հարկանէ զծնօտ քո՝ մատո նմա եւ
զմիւսն. եւ որ հանէ ի քէն զբաճկոն քո՝ մի արգե-
30 լուր ի նմանէ եւ զշապիկս: Ամենայնի որ խնդրէ ի քէն՝
տուր, եւ զոր ինչ հանէ ոք ի քէն՝ մի պահանջեր:
31 Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս
32 արասջիք եւ դուք նոցա: Եւ եթէ սիրէք դուք զսի-
րելիս ձեր՝ զի՞նչ շնորհ է ձեր, զի եւ մեղաւորք սիրեն
33 զսիրելիս իւրեանց: Եւ եթէ բարի առնէք բարերա-
րաց ձերոց՝ ո՞ր շնորհ է ձեր, զի եւ մեղաւորք զնոյն
34 գործեն: Եւ եթէ տայք փոխ այնոցիկ՝ յորոց ակն ու-
նիք առնուլ՝ ո՞ր շնորհ է ձեր. քանզի եւ մեղաւորք
մեղաւորաց փոխ տան, զի առցեն անդրէն զկշիռն:
35 Բայց սիրեցէք զթշնամիս ձեր, եւ բարի արարէք ա-
տելեաց ձերոց. եւ տուք փոխ՝ ուստի ոչ ակն ունիցիք
առնուլ. եւ եղիցին վարձք ձեր բազում, եւ եղիջիք
որդիք բարձրելոյ. զի նա քաղցր է ի վերայ չարաց եւ
36 ապաշնորհաց: Եղերուք գթածք՝ որպէս եւ Հայրն
37 ձեր երկնաւոր գթած է: Մի՛ դատիք՝ եւ ոչ դատի-
ցիք. մի՛ պատժէք՝ եւ ոչ պատժիցիք, արձակեցէք
38 եւ արձակիցիք: Տուք՝ եւ տացի ձեզ. չափ բարւոք՝
թաթաղուն շարժուն զեղուն՝ տացեն ի գոգս ձեր.
39 Նովին չափով որով չափէք՝ չափեսցի ձեզ: Ասաց եւ
առակ մի առ նոսա. միթէ կարիցէ՞ կոյր կուրի առաջ-
նորդել, ո՞չ ապաքէն երկոքին ի խորխորատ անկանին:
40 Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր. ամենայն
41 կատարեալն եղիցի իբրեւ զվարդապետ իւր: Զի՞ տե-
սանես զշիւղ յական եղբօր քո, եւ ի քում ական
42 զգերանդ ոչ նշմարես: Կամ զիա՞րդ կարես ասել
ցեղբայր քո, եղբայր՝ թող հանից զշիւղդ յականէ
քումմէ, եւ դու ի քում ականդ զգերանդ ոչ տեսա-
նես. կեղծաւոր՝ հան նախ զգերանդ յականէ քումմէ,
եւ ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր քո:

Զի ոչ է ծառ բարի՝ որ առնէ պտուղ չար, եւ ոչ 43
դարձեալ ծառ չար՝ որ առնէ պտուղ բարի. Զի իւ- 44
րաքանչիւր ծառ ի պտղոյ իւրմէ ճանաչի: Զի ոչ ե-
թէ ի փշոց քաղեն թուզ, եւ ոչ ի մորենւոյ կթեն
խաղող: Մարդ բարի՝ ի բարի գանձուց սրտի իւրոյ 45
բղխէ զբարիս, եւ մարդ չար՝ ի չարէն բղխէ զչար.
քանզի ի յաւելուածոյ սրտին խօսի բերան նորա: Զի՞ 46
կոչէք զիս՝ Տէր Տէր, եւ զոր ասեմն ոչ առնէք: Ամե- 47
նայն որ գայ առ իս, եւ լսէ զբանս իմ՝ եւ առնէ
զնոսա, ցուցից ձեզ ում նման է: Նման է առն, որ 48
շինիցէ տուն որ փորեաց եւ խորեաց, եւ եդ հիմն ի
վերայ վիմի. ի յառնել հեղեղաց՝ բախեաց գետ
զտունն, եւ ոչ կարաց շարժել զնա. զի հաստա-
տեալ էր հիմն ի վերայ վիմի: Իսկ որ լսէ զբանս իմ՝ 49
եւ ոչ առնէ, նման է առն՝ որ շինէ տուն ի վերայ
հողոյ առանց հիման. զոր բախեաց գետ, եւ վաղվա-
ղակի անկաւ. եւ եղեւ կործանումն տանն այնորիկ մեծ:

ԳԼՈՒԽ Է.

ԳԲ. Եւ իբրեւ կատարեաց զամենայն բանս իւր 1
ի լսելիս ժողովրդեանն, եմուտ ի Կափառնաում: Հա- 2
րիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝
մերձ էր ի վախճանել, որ էր նմա պատուական: Եւ 3
իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն ի Հրէից,
աղաչէր զնա՝ զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա:
Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ստէպ՝ 4
եւ ասէին, թէ արժանի է՝ որում զշնորհս զայս առ-
նես: Զի սիրէ զազգս մեր, եւ զժողովրդանոցն նա 5
շինեաց մեզ: Եւ Յիսուս գնաց ընդ նոսա. իբրեւ 6
ոչինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հա-
րիւրապետն բարեկամս, եւ ասէ ցնա. Տէր՝ մի՛ ինչ
աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ
իմով մտանիցես: Վասն որոյ եւ ոչ զանձն համարե- 7
ցայ արժանի՝ առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ՝ եւ

8 բժշկեսցի մանուկս իմ․ Քանզի եւ ես այր մի եմ կար-
գեալ ընդ իշխանութեամբ․ ունիմ ընդ ինեւ զի-
նուորս, եւ ասեմ սմա՝ երթ, եւ երթայ․ եւ այլում
թէ եկ, եւ գայ․ եւ ծառայի իմում թէ արա զայս, եւ
9 առնէ։ Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ,
դարձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա եւ
ասէ․ ամէն ասեմ ձեզ՝ թէ եւ ոչ յԻսրայէլի այսչափ
10 հաւատս գտի։ Եւ դարձան անդրէն պատգամաւորքն
ի տուն եւ գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ։
11 ԳԳ․ Եւ եղեւ ի վաղիւն երթայր ի քաղաք մի,
որում անուն էր Նային․ երթային ընդ նմա եւ
12 աշակերտքն նորա եւ ժողովուրդ բազում։ Իբրեւ
մերձ եղեն ի դուռն քաղաքին, եւ ահա հանէին մե-
ռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ, եւ նա էր այրի․
13 եւ ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա։ Իբրեւ
ետես զնա Տէր՝ գթացաւ ի նա եւ ասէ․ մի՛ լար։
14 Եւ յարուցեալ մերձեցաւ ի դագաղն․ եւ որք
բարձեալ տանէին՝ զտեղի առին․ եւ ասէ, պատանի
15 դու՝ քեզ ասեմ արի։ Կանգնեցաւ եւ նստաւ մե-
ռեալն, եւ սկսաւ խօսել․ եւ ետ զնա ցմայր իւր։
16 Եւ ահ կալաւ զամենեսեան, եւ փառաւոր առնէին
զԱստուած եւ ասէին, թէ մարգարէ մեծ յարու-
ցեալ է ի միջի մերում, եւ թէ այց արար Աստու-
17 ած ժողովրդեան իւրում ի բարութիւն։ Եւ ել զրոյց
այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա, եւ ընդ
18 ամենայն կողմանս աշխարհին։ Եւ պատմեցին Յով-
19 հաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ։ Եւ
կոչեաց առ ինքն երկուս ոմանս յաշակերտացն իւրոց
Յովհաննէս, առաքեաց առ Տէր եւ ասէ․ դո՞ւ ես որ
20 գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք։ Եւ եկեալ առ նա՝
արքն ասեն, Յովհաննէս մկրտիչ առաքեաց զմեզ առ
քեզ՝ եւ ասէ, դո՞ւ ես որ գալոցն ես՝ եթէ այլում
21 ակն կալցուք։ Եւ ի նմին ժամու բժշկեաց զբազումս
ի հիւանդութեանց եւ ի հարուածոց եւ յայսոց չարաց,

եւ կուրաց բազմաց շնորհեաց տեսանել: Պատաս- 22
խանի ետ նոցա եւ ասէ. երթայք պատմեցէք Յով-
հաննու՝ զոր տեսէքդ եւ լուայք. զի կոյրք տեսանեն,
եւ կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք
յառնեն, աղքատք աւետարանին, Եւ երանի իցէ՝ որ 23
ոչ գայթագղեսցի յիս: Եւ իբրեւ գնացին հրեշտակքն 24
Յովհաննու՝ սկսաւ խօսել ընդ ժողովուրդսն վասն
Յովհաննու. զի՞նչ ելէք յանապատն տեսանել, եղէ՞գն
շարժուն ի հողմոյ: Այլ զի՞նչ ելէք տեսանել, ա՞յր ի 25
հանդերձս փափկութեան զարդարեալ. ահաւասիկ
որ ի հանդերձս երեւելիս եւ ի փափկութեան են՝
յարքունիս են: Այլ զի՞նչ ելէք տեսանել, մարգարէ՞. 26
այո ասեմ ձեզ՝ եւ առաւել եւս քան զմարգարէ: Զի 27
սա է՝ վասն որոյ գրեալն է, թէ ահա առաքեմ զհրեշ-
տակ իմ առաջի քո՝ որ յարդարեսցէ զճանապարհս
քո առաջի քո: Ամէն ասեմ ձեզ. մեծ ի ծնունդս 28
կանանց մարգարէ քան զՅովհաննէս ոչ ոք է. բայց
փոքրիկն յարքայութեան Աստուծոյ մեծ է քան զնա:
Եւ ամենայն ժողովուրդն իբրեւ լուան՝ եւ մաքսա- 29
ւորքն, արդարացուցին զԱստուած. զի մկրտեցան ի
մկրտութիւն Յովհաննու: Իսկ փարիսեցիքն եւ օրի- 30
նականքն զխորհուրդն Աստուծոյ անարգեցին յանձինս
իւրեանց, զի ոչ մկրտեցան ի նմանէ: Արդ ո՞ւմ նմա- 31
նեցուցից զմարդիկ ազգիս այսորիկ, եւ ո՞ւմ իցեն
նմանողք: Նման են մանկտւոյ որ ի հրապարակս նըս- 32
տիցին, կարդայցեն զմիմեանս եւ ասիցեն. փողս հա-
րաք ձեզ եւ ոչ կաքաւեցէք, ողբացաք՝ եւ ոչ լացէք:
Եկն Յովհաննէս մկրտիչ՝ ոչ ուտէր եւ ոչ ըմպէր, 33
եւ ասէիք՝ դեւ գոյ ի նմա: Եկն որդի մարդոյ՝ ուտէ 34
եւ ըմպէ, եւ ասէք. ահա այր կերող եւ արբեցող՝
բարեկամ մաքսաւորաց եւ մեղաւորաց: Եւ արդա- 35
րացաւ իմաստութիւն յորդւոց իւրոց:

ԳԹ. Աղաչէր զնա ոմն ի փարիսեցւոցն զի կերիցէ 36
հաց ընդ նմա. եւ մտեալ ի տուն փարիսեցւոյն բազ-

37 մեցաւ: Եւ կին մի էր ի քաղաքին մեղաւոր. իբրեւ գի-
տաց թէ բազմեալ է ի տան փարիսեցւոյն, բերեալ
38 շիշ մի իւղոյ ազնուի. Կայր յետոյ առ ոտս նորա,
լայր եւ արտասուօքն սկսաւ թանալ զոտս նորա եւ
հերով գլխոյ իւրոյ ջնջէր, եւ համբուրէր զոտս նորա,
39 եւ օծանէր իւղովն: Եւ տեսեալ փարիսեցւոյն՝ որ
կոչեացն զնա, ասէր ընդ միտս իւր. սա թէ մարգարէ
ոք էր, ապա գիտէր թէ ով եւ որպիսի ոք կին մեր-
40 ձենայ ի սա. զի մեղաւոր է: Պատասխանի ետ Յի-
սուս եւ ասէ ցնա. Սիմովն՝ ունիմ ինչ ասել քեզ.
41 եւ նա ասէ, ասա վարդապետ. եւ ասէ. Երկու
պարտապանք էին ուրումն փոխատուի. միոյն պարտէր
42 հինգ հարիւր դահեկան, եւ միւսն յիսուն: Եւ
իբրեւ ոչ գոյր նոցա հատուցանել, երկոցունցն շնոր-
43 հեաց. արդ ասա՝ ո՞վ առաւել սիրեսցէ զնա: Ասէ
Սիմովն. ինձ այսպէս թուի՝ եթէ որում զբազումն
44 շնորհեաց: Եւ նա ասէ ցնա. ուղիղ դատեցար: Եւ
դարձեալ ի կինն կողմն, ասէ ցՍիմովն. տեսանե՞ս
զայս կին, մտի ի տուն քո՝ ջուր ոտից իմոց ոչ ետուր,
իսկ սա արտասուօք իւրովք եթաց զոտս իմ, եւ հե-
45 րով իւրով ջնջեաց: Համբոյր մի դու ոչ ետուր ինձ,
սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ՝ ոչ դադարեաց
46 ի համբուրելոյ զոտս իմ: Իւղով զգլուխ իմ ոչ օծեր,
47 սա իւղով անուշիւ օծ: Վասն որոյ ասեմ քեզ.
թողեալ լիցին սմա մեղք իւր բազում, զի յոյժ սի-
րեաց. զի որում շատ թողուցու՝ շատ սիրէ, եւ որում
48 սակաւ՝ սակաւ: Եւ ասէ ցնա. թողեալ լիցին քեզ
49 մեղք քո: Եւ սկսան՝ որ բազմեալն էին ընդ նմա,
ասել ընդ միտս իւրեանց. ո՞վ է սա՝ որ զմեղս թո-
50 ղու: Եւ նա ասէ ցկինն. հաւատք քո կեցուցին
զքեզ՝ երթ ի խաղաղութիւն:

ԳԼՈՒԽ Ը.

Գե. Եւ եղեւ յետ այնորիկ՝ եւ ինքն շրջէր ընդ 1
քաղաքս եւ ընդ գեօղս, քարոզէր եւ աւետարանէր զար-
քայութիւնն Աստուծոյ. եւ երկոտասանքն ընդ նմա.
Եւ կանայք ոմանք՝ որ բժշկեալ էին յայսոց չարաց 2
եւ ի հիւանդութենէ. Մարիամ՝ որ կոչէր Մագ-
դաղենացի, յորմէ եօթն դեւն ելեալ էր. Եւ Յով- 3
հաննա կին Քուզայ՝ հազարապետին Հերովդի. եւ
Շուշան՝ եւ այլք բազումք. որք պաշտէին զնա յըն-
չից իւրեանց: Եւ ի ժողովել բազում ժողովրդոց, եւ 4
ըստ քաղաքաց քաղաքաց եկելոց առ նա, ասէ առա-
կաւ. Ել սերմնացան սերմանել զսերմանիս իւր. եւ 5
ի սերմանելն իւրում՝ էր որ անկաւ առ ճանապարհաւ՝
եւ եղեւ կոխան, եւ թռչունք երկնից կերան զնա:
Եւ այլն՝ անկաւ յապառաժի. եւ ընդ բուսանելն՝ 6
չորացաւ, առ ի չգոյէ հիւթոյ: Եւ այլն անկաւ ի մէջ 7
փշոց, եւ ընդ նմին բուսեալ փշոցն՝ հեղձուցին զնա:
Եւ այլն անկաւ յերկիր բարի եւ պարարտ, եւ բու- 8
սեալ արար պտուղ հարիւրապատիկ. զայս իբրեւ խօ-
սեցաւ, ասէ. որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ: Հար- 9
ցանէին զնա աշակերտքն, թէ զի՞նչ իցէ առակն: Եւ 10
նա ասէ. ձեզ տուեալ է գիտել զխորհուրդս ար-
քայութեանն Աստուծոյ, բայց այլոցն առակօք. զի
տեսցեն՝ եւ մի՛ տեսցեն, եւ լուիցեն՝ եւ մի՛ իմասցեն:
Բայց առակն այս ինչ է. սերմն բանն Աստուծոյ է: 11
Եւ որք առ ճանապարհաւն, այնոքիկ են որ լսենն. 12
եւ ապա գայ սատանայ՝ հանէ զբանն ի սրտից նոցա,
զի մի՛ հաւատասցեն՝ եւ ապրեսցին: Եւ որք յապա- 13
ռաժին, որք յորժամ լսիցեն խնդութեամբ ընդունին
զբանն, եւ արմատս ոչ ունիցին. որք առ ժամանակ
մի հաւատան, եւ ի ժամանակի փորձութեան հե-
ռանան: Իսկ որ ի մէջ փշոցն անկաւ՝ նոքա են, որ ի- 14
բրեւ լսեն զբանն՝ եւ ի հոգս եւ ի մեծութիւն եւ ի

ցանկութիւն աշխարհիս զբաղեալ հեղձնուն՝ եւ ան-
15 պտուղ լինին։ Իսկ որ յերկիրն պարարտ, որոց բար-
ւոք եւ զուարթագին սրտիւ լուեալ զբանն՝ ընդու-
16 նին, եւ տան պտուղ համբերութեամբ։ Ոչ ոք լուցա-
նէ ճրագ եւ թաքուցանէ ընդ կարասաւ՝ կամ դնէ
ընդ մահճօք. այլ ի վերայ աշտանակի դնէ, զի որք
17 մտանեն՝ զլոյս տեսցեն։ Զի ոչ ինչ ի ծածուկ՝ որ ոչ
յայտ լիցի. եւ ոչ գաղտնի որ ոչ ծանիցի, եւ եկեսցէ
18 ի յայտ։ Տեսէք այսուհետեւ զիարդ լսէքդ. զի որ
գուցէ՝ տացի նմա, եւ որ ոչն գուցէ՝ եւ զոր կարծէն
19 թէ ունիցի՝ բարձցի ի նմանէ։ Եկին առ նա մայրն եւ
եղբարք իւր, եւ ոչ կարէին հասանել ի նա վասն բազ-
20 մութեանն։ Ազդ եղեւ նմա եւ ասեն. մայր քո եւ եղ-
բարք քո կան արտաքոյ՝ եւ կամին զքեզ տեսանել։
21 Եւ ասէ ցնոսա. մայր իմ եւ եղբարք իմ սոքա են,
որ զբանն Աստուծոյ լսեն եւ առնեն։
22 ԳԶ. Եւ եղեւ ի միում աւուրց ինքն ել ի նաւ՝
եւ աշակերտքն նորա, եւ ասէ ցնոսա. եկայք անցցուք
յայնկոյս ծովակիս. եւ գնացին։ Եւ մինչ դեռ նա-
23 ւէին՝ ի քուն եմուտ. եւ էջ մրրիկ հողմոյ ի ծովակն՝
եւ ուռնոյր, եւ տագնապէին։ Մատուցեալ զար-
24 թուցին զնա եւ ասեն. վարդապետ վարդապետ՝ կորն-
չիմք աւադիկ. եւ նա յարուցեալ սաստեաց հողմոյն
եւ խռովութեան ջրոյն՝ եւ հանդարտեցին, եւ եղեւ
25 խաղաղութիւն։ Ասէ ցնոսա. ո՞ւր են հաւատք ձեր.
եւ զահի հարեալ զարմացան, եւ ասէին ցմիմեանս.
ո՞վ արդեօք իցէ սա՝ զի եւ հողմոց եւ ջրոց հրաման
26 տայ, եւ հնազանդին սմա։ Եւ նաւեցին իջին յաշ-
խարհն Գերգեսացւոց. որ է յայնկոյս հանդէպ Գա-
27 լիլեայ։ Եւ ընդ ելանելն նորա ի ցամաք, պատահեաց
այր մի ի քաղաքէն՝ յորում էին դեւք. եւ բազում
ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ եւ ոչ ի տան
28 բնակեալ, այլ ի գերեզմանս։ Եւ տեսեալ զՅիսուս,
աղաղակեաց եւ անկաւ առաջի նորա, եւ ասէ մեծա-

ձայն. զի՞ կայ իմ եւ քո Յիսուս որդի Աստուծոյ
բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի՛ տանջեր զիս: Քանզի 29
հրաման տայր այսոյն պղծոյ ելանել ի մարդոյ անտի.
զի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, եւ
կապէր ի շղթայս, եւ պահէր յերկաթս, եւ խզէր
զկապանս, եւ վարէր ի դիւէն յանապատ: Եհարց 30
ցնա Յիսուս եւ ասէ. զի՞նչ անուն է քեզ. եւ նա
ասէ, լեգէովն. զի դեւք բազումք մտեալ էին ի նա: 31
Եւ աղաչէին զնա՝ զի մի՛ հրաման տացէ նոցա եր-
թալ յանդունդս: Եւ էր անդ երամակ մի խոզից 32
բազմաց արօտական ի լերինն, եւ աղաչեցին զնա զի
հրաման տացէ նոցա մտանել ի նոսա. եւ հրամայեաց
նոցա: Եւ ելեալ դեւքն յառնէն՝ մտին ի խոզեանն. 33
եւ դիմեաց երամակն ի դահէ անտի ի ծովակն՝ եւ
հեղձաւ: Իբրեւ տեսին խոզարածքն զիրսն որ եղեն՝ 34
փախեան, եւ պատմեցին ի քաղաքին եւ յագարակսն:
Եւ իբրեւ ելին տեսանել զգործսն, եւ եկին առ Յի- 35
սուս, եւ գտին զայրն՝ ուստի դեւքն ելեալ էին, զգե-
ցեալ եւ զգաստացեալ՝ նստէր առ ոտսն Յիսուսի,
եւ երկեան: Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ 36
զիա՞րդ փրկեցաւ դիւահարն: Եւ աղաչէր զնա ամե- 37
նայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն Գերգեսացւոց՝
գնալ ի սահմանաց նոցա, քանզի ահիւ մեծաւ տագ-
նապէին. եւ նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն:
Աղաչէր զնա այրն՝ ուստի դեւքն ելեալ էին՝ շրջել 38
ընդ նմա. արձակեաց զնա՝ եւ ասէ. Դարձ ի տուն 39
քո, եւ պատմեա՝ զոր միանգամ արար քեզ Աստուած.
գնաց ի քաղաքն՝ եւ քարոզէր զոր ինչ արար նմա Յի-
սուս: Եւ իբրեւ դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ 40
զնա ժողովուրդն. քանզի ամենեքին ակն ունէին նմա:
Եւ ահա եկն այր մի՝ որում անուն էր Յայրոս, եւ 41
նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտսն Յի-
սուսի՝ աղաչէր զնա մտանել ի տուն նորա. Զի 42
դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրեւ երկոտասանից,

եւ էր մերձ ի մահ. եւ ընդ երթալն նորա՝ ժողո-
43 վուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր ի տեռատե-
սութեան արեան ամաց իբրեւ երկոտասանից, որ ի
բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ
44 էր լեալ հնար յումեքէ բժշկել։ Մատուցեալ յե-
տոյ մերձեցաւ ի քղանցս հանդերձի նորա. եւ նոյն
45 ժամայն եկաց բղխումն արեան նորա։ Եւ ասէ Յի-
սուս. ո՞վ է՝ որ մերձեցաւ յիս. իբրեւ ամենեքեան
ուրանային, ասէ Պետրոս՝ եւ որ ընդ նմայն էին. վար-
46 դապետ՝ ժողովուրդքդ պնդեն եւ նեղեն զքեզ։ Եւ
ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝
47 եթէ զօրութիւն ել յինէն։ Իբրեւ ետես կինն՝ եթէ
ոչ ծածկեցաւ ի նմանէ, եկն դողալով՝ եւ անկաւ ա-
ռաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ի նա՝
պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն. եւ թէ
48 որպէս բժշկեցաւ առժամայն։ Եւ ասէ ցնա. քաջա-
լերեաց դուստր՝ հաւատք քո կեցուցին զքեզ, երթ
49 ի խաղաղութիւն։ Եւ մինչ դեռ նա խօսէր, գայ ոմն
ի տանէ ժողովրդապետին՝ եւ ասէ ցնա. մեռաւ դուս-
50 տրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա։ Իսկ Յիսուս
իբրեւ լուաւ, պատասխանի ետ նմա՝ եւ ասէ. մի՛
51 երկնչիր, միայն հաւատա՝ եւ կեցցէ։ Եւ մտեալ ի
տունն՝ ոչ զոք եթող մտանել, բայց միայն զՊետրոս
եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս, եւ զհայր մանկանն
52 եւ զմայր նորա։ Լային ամենեքեան՝ եւ կոծէին զնա.
53 եւ նա ասէ. մի՛ լայք՝ զի չէ մեռեալ՝ այլ ննջէ։ Եւ
նոքա ծաղր առնէին զնա, զի գիտէին թէ մեռաւ։
54 Եւ նորա հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձե-
55 ռանէ նորա՝ բարբառեցաւ եւ ասէ. արի կաց մանուկ
56 դու։ Եւ դարձաւ ոգի նորա, եւ կանգնեցաւ վաղվա-
57 ղակի. եւ հրամայեաց տալ նմա ուտել։ Եւ զար-
մացան ծնօղքն նորա. եւ նա պատուիրէր մի՛ ումեք
ասել՝ որ ինչ եղեւ։

ԳԼՈՒԽ Թ.

Գլ. Եւ կոչեցեալ զերկոտասան առաքեալսն, 1
ետ նոցա զօրութիւն եւ իշխանութիւն ի վերայ ա-
մենայն դիւաց, եւ բժշկել զհիւանդութիւնս: Եւ 2
առաքեաց զնոսա քարոզել զարքայութիւնն Աստուծոյ,
եւ բժշկել զախտաժէտս: Եւ ասէ ցնոսա. մի ինչ 3
բառնայք ի ճանապարհի. մի գաւազան, մի մա-
խաղ, մի հաց եւ մի արծաթ, մի երկուս հանդերձս
ունիցիք: Եւ յոր տուն մտանիցէք՝ անդ ագանիջիք, եւ 4
անտի գնայցէք: Եւ որք ոչ ընդունիցին զձեզ, յոր- 5
ժամ ելանիցէք ի քաղաքէն յայնմանէ, զփոշի ոտից
ձերոց թօթափեսջիք ի վկայութիւն նոցա: Եւ ելեալ 6
շրջէին ընդ քաղաքս եւ ընդ գեօղս՝ աւետարանէին,
եւ բժշկէին ընդ ամենայն տեղիս: Լուաւ Հերովդէս 7
չորրորդապետ զգործսն ամենայն. եւ զարմանայր վասն
ասելոյն յոմանց, թէ Յովհաննէս յարեաւ ի մեռե- 8
լոց, եւ յոմանց՝ թէ Եղիա յայտնեցաւ, եւ յայլոց՝
թէ մարգարէ ոմն յառաջնոցն յարեաւ: Ասէ Հերով- 9
դէս. զՅովհաննէս ես գլխատեցի, իսկ սա ո՞վ իցէ՝
զորմէ զայսպիսի իրս լսեմ. եւ խնդրէր տեսանել զնա: 10
Դարձան առաքեալքն, եւ պատմեցին նմա զամենայն
զոր արարին: Եւ առեալ զնոսա՝ խուսեաց առանձինն 11
ի տեղի անապատ քաղաքի միոյ, որում անուն էր
Բեթսայիդա: Եւ ժողովուրդքն իբրեւ գիտացին,
գնացին զհետ նորա. եւ ընկալեալ զնոսա՝ խօսէր ընդ
նոսա վասն արքայութեան Աստուծոյ, եւ որոց պէտք
էին բժշկութեան բժշկէր: Եւ օրն սկսաւ տարաժա- 12
մել. մատեան երկոտասանքն եւ ասեն ցնա. արձա-
կեա զժողովուրդդ, զի երթիցեն շուրջ ի գիւղսն եւ
յագարակս՝ հանգիցեն, եւ գտցեն կերակուր. զի՛ աստ
յանապատի տեղւոջ եմք: Ասէ ցնոսա. դուք տուք 13
դոցա ուտել. եւ նոքա ասեն. ոչ գոյ մեզ աւելի քան
զհինգ նկանակ եւ զերկուս ձկունս, բայց եթէ՛ երթի-

ցուք գնեսցուք բաւական ժողովրդեանդ կերակուր:
14 Քանզի էին արք իբրեւ հինգ հազար. ասէ ցաշա-
կերտսն. բազմեցուցէք զդոսա դասս դասս՝ յիսուն
15 յիսուն: Եւ արարին այնպէս, եւ բազմեցուցին զամե-
16 նեսեան: Եւ առեալ զհինգ նկանակն եւ զերկուս
ձկունսն՝ հայեցաւ յերկինս. օրհնեաց եւ եբեկ՝ եւ
17 տայր ցաշակերտսն արկանել ժողովրդեանն: Կերան
եւ յագեցան ամենեքեան. եւ բարձին զնշխարս կոտո-
րոցն երկոտասան սակառի:
18 ԳԿ. Եւ եղեւ ի կալն նորա յաղօթս առանձինն,
էին ընդ նմա եւ աշակերտքն նորա. եհարց զնոսա եւ
19 ասէ. զո՞ ոք ասեն զինէն ժողովուրդքն՝ թէ իցեմ: Եւ
նոցա պատասխանի տուեալ ասեն. զՅովհաննէս մկրտ-
տիչ, եւ այլք զԵղիա, իսկ այլք թէ մարգարէ ոք յա-
20 ռաջնոցն յարեաւ: Ասէ ցնոսա. դուք զո՞վ ոք ասէք
զինէն, թէ իցեմ. պատասխանի ետ Պետրոս եւ ասէ.
21 զՔրիստոսն Աստուծոյ: Նա սաստեաց ի նոսա, եւ
22 պատուիրեաց մի ումեք ասել զայն: Եւ ասէ, թէ
պարտ է որդւոյ մարդոյ բազում չարչարել եւ անար-
գել ի քահանայապետից եւ ի ծերոց եւ ի դպրաց,
23 եւ սպանանել՝ եւ յերիր աւուր յառնել: Եւ ասէր
առ ամենեսին. եթէ ոք կամիցի զինի իմ գալ, ու-
րասցի զանձն՝ եւ առցէ զխաչ իւր հանապազ՝ եւ ե-
24 կեսցէ զհետ իմ: Զի որ կամիցի զանձն իւր կեցու-
ցանել՝ կորուսցէ զնա, եւ որ կորուսցէ զանձն իւր
25 վասն իմ՝ կեցուսցէ զնա: Զի՞նչ օգուտ է մարդոյ
եթէ զաշխարհ շահեսցի, եւ զանձն իւր կորուսցէ
26 կամ տուժեսցի: Զի որ ամօթ համարեսցի զիս եւ
զբանս իմ, զնա եւ Որդի մարդոյ յամօթ արասցէ՝
յորժամ գայցէ փառօք իւրովք եւ հօր եւ հրեշ-
27 տակաց սրբոց: Բայց արդարեւ ասեմ ձեզ, եթէ
են ոմանք ի դոցանէ որ աստ կան՝ որք մի ճաշակես-
ցեն զմահ, մինչեւ տեսցեն զարքայութիւն Աստուծոյ:
28 Եւ եղեւ յետ այսց բանից իբրեւ աւուրք ութ, ա-

առեալ զՊետրոս եւ զՅակովբոս եւ զՅովհաննէս՝
ել ի լեառն կալ յաղօթս: Եւ ի կալ նմա 29
յաղօթս՝ եղեւ տեսիլ երեսաց նորա այլակերպ.
եւ փոխեցաւ հանդերձ նորա՝ եւ եղեւ սպի-
տակ փայլուն: Եւ ահա արք երկու խօսէին ընդ նմա, 30
որ էին Մովսէս եւ Եղիա, երեւեալ փառօք. Եւ ա- 31
սէին զելիցն նորա՝ զոր կատարելոց էր յԵրուսաղէմ:
Իսկ Պետրոս՝ եւ որ ընդ նմայն էին՝ ծանրացեալք ի 32
քնոյ՝ զարթեան, եւ տեսին զփառսն նորա՝ եւ զեր-
կուս արսն որ կային առ նմա: Եւ եղեւ ի մեկնելն նո- 33
ցա ի նմանէ, ասէ Պետրոս ցՅիսուս. վարդապետ՝
բարւոք է մեզ աստ լինել, եւ արասցուք երիս տա-
ղաւարս, մի քեզ եւ մի Մովսէսի եւ մի Եղիայի. եւ
ոչ գիտէր զինչ խօսէր: Եւ իբրեւ զայս ասաց, եկն 34
ամպ եւ հովանի եղեւ ի վերայ նոցա. եւ երկեան ի
մտանելն նոցա ընդ ամպովն: Ձայն եղեւ յամպոյն եւ 35
ասէ. դա է որդի իմ ընտրեալ, դմա լուարուք: Եւ 36
ընդ լինել բարբառոյն՝ գտաւ Յիսուս միայն. եւ ին-
քեանք լռեցին, եւ ոչ ումեք պատմեցին յաւուրսն
յայնոսիկ եւ ոչինչ՝ յորոց տեսինն:

ՊԲ. Եւ եղեւ ի վաղիւ մինչ իջանէին ի լեռնէ 37
անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում:
Եւ ահա այր մի ի ժողովրդենէ անտի աղաղակեաց 38
եւ ասէ. վարդապետ՝ աղաչեմ զքեզ հայեաց յորդի
իմ, զի միամօր է ինձ: Եւ ահա այս հարկանի ի նմա, 39
եւ յանկարծ գոչէ՝ եւ զարկուցանէ զնա եւ թաւալե-
ցուցանէ եւ փրփրեցուցանէ, եւ հազիւ մեկնի ի նմա-
նէ խորտակեալ զնա. Եւ աղաչեցի զաշակերտան քո զի 40
հանցեն զնա, եւ ոչ կարացին: Պատասխանի ետ Յի- 41
սուս եւ ասէ. ո՜վ ազգ անհաւատ եւ թիւր, մինչեւ
յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ եւ անսայցեմ ձեզ. մատո այսր
զորդին քո: Եւ մինչ դեռ մատչէր, զարկոյց զնա դեւն՝ 42
եւ շարժլեաց: Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, եւ 43
բժշկեաց զմանուկն. եւ ետ զնա ցհայր իւր: Եւ զար- 44

մնային ամենեքեան ի վերայ մեծամեծացն Աստու-
ծոյ. եւ ի զարմանալն ամենեցուն ի վերայ ամենայնի
զոր առնէր, ասէ ցաշակերտսն իւր. դիք դուք ի լսե-
լիս ձեր զբանս զայսոսիկ. զի որդի մարդոյ մատնելոց է
45 ի ձեռս մարդկան: Եւ նոքա ոչ գիտէին զբանն, եւ
էր ծածկեալ ի նոցանէ՝ զի մի՛ գիտասցեն. եւ երկըն-
46 չէին հարցանել ցնա վասն բանին այնորիկ: Եմուտ
խորհուրդ ի նոսա՝ թէ ո՞ արդեօք մեծ իցէ ի նոցանէ:
47 Յիսուս իբրեւ ծանեաւ զխորհուրդս սրտից նոցա,
48 առ մանուկ մի՝ կացոյց ի մէջ նոցա առ իւր, Եւ ասէ
ցնոսա. որ ոք ընկալցի զմանուկս զայս յանուն իմ՝ զիս
ընդունի, եւ որ զիս ընդունիցի՝ ընդունի զառաքիչն
իմ. զի որ փոքրիկն է յամենեսին ի ձեզ՝ նա եղիցի
49 մեծ: Պատասխանի ետ Յովհաննէս եւ ասէ. վարդա-
պետ՝ տեսաք զոմն որ յանուն քո դեւս հանէր՝ եւ
50 արգելաք զնա, զի ոչ շրջէր ընդ մեզ: Ասէ ցնոսա Յի-
սուս. մի՛ արգելուք, զի որ ոչն է ձեր թշնամի՝ ի ձեր
կողմն է:

51 ՂԳ. Եւ եղեւ ի կատարել աւուրց վերանալոյ
նորա՝ եւ ինքն զերեսս հաստատեաց երթալ յԵրու-
52 սաղէմ: Եւ առաքեաց հրեշտակս առաջի երեսաց
իւրոց. եւ իբրեւ չոգան՝ մտին ի գիւղ մի Սամարաց-
53 ւոց պատրաստել ինչ նմա: Եւ ոչ ընկալան զնա, զի
54 դէմ եդեալ էր նորա երթալ յԵրուսաղէմ: Իբրեւ
տեսին աշակերտքն Յակոբոս եւ Յովհաննէս, ասեն.
Տէր՝ կամի՞ս զի ասասցուք, եւ իջցէ հուր յերկնից՝
55 եւ սատակեսցէ զնոսա: Դարձաւ սաստեաց ի նոսա՝
56 եւ ասէ. ոչ գիտէք՝ որո՛յ հոգւոյ էք դուք: Զի Որդի
մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել՝ այլ կե-
57 ցուցանել. եւ գնացին յայլ գիւղ: Եւ մինչ դեռ
երթային նոքա ի ճանապարհի, ասէ ոմն ցնա. եկից
58 զկնի քո՝ յո՛ր վայր եւ երթայցես: Ասէ ցնա Յիսուս.
աղուեսուց որջք գոն, եւ թռչնոց երկնից դադարք.
59 այլ Որդւոյ մարդոյ ոչ գոյ՝ ուր դիցէ զգլուխ: Ասէ

ցմիւս եւս. եկ զկնի իմ. եւ նա ասէ. Տէր՝ հրաման
տուր ինձ՝ երթալ նախ թաղել զհայր իմ: Ասէ ցնա 60
Յիսուս. թող զմեռեալսն թաղել զմեռեալս իւրեանց,
եւ դու երթ պատմեա զարքայութիւն Աստուծոյ:
Ասէ եւ այլ ոմն. եկից զկնի քո Տէր, բայց նախ հրա- 61
ման տուր ինձ հրաժարել ի տանէ իմմէ: Ասէ ցնա 62
Յիսուս. ոչ ոք արկանէ ձեռն զմաճով եւ հայիցի յետս,
եթէ յաջողեալ իցէ արքայութեան Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Ժ.

ՊՓ. Յետ այսորիկ երեւեցոյց Տէր եւ այլ եւս 1
եօթանասուն եւ երկուս. եւ առաքեաց զնոսա եր-
կուս երկուս առաջի իւր յամենայն քաղաքս եւ ի
տեղիս, ուր ինքն երթալոց էր: Եւ ասէ ցնոսա. հունձք 2
բազում են՝ եւ մշակք սակաւ. արդ աղաչեցէք զտէր
հնձոց, զի հանիցէ մշակս ի հունձս իւր: Երթայք, ա- 3
հա առաքեմ զձեզ իբրեւ զգառինս ի մէջ գայլոց:
Մի բառնայք քսակ՝ մի մախաղ՝ մի կօշիկս, եւ ի ճա- 4
նապարհի ումեք ողջոյն մի տայցէք: Յոր տուն մտա- 5
նիցէք՝ նախ ասասջիք թէ ողջոյն տանս այսմիկ. Եւ եթէ 6
իցէ անդ որդի ողջունի, հանգիցէ ի վերայ նորա ողջոյն
ձեր. ապա թէ ոչ՝ ի ձեզ դարձցի: Եւ ի նմին տան 7
ագանիջիք, ուտիջիք եւ ըմպիջիք ի նոցանէ. զի ար-
ժանի է մշակն վարձու իւրոյ. մի փոխիցիք տանէ ի
տուն: Յոր քաղաք մտանիցէք՝ եւ ընդունիցին զձեզ, 8
ուտիջիք զինչ առաջի դնիցեն ձեր. Եւ բժշկեսջիք որ 9
ի նմա հիւանդք իցեն. եւ ասասջիք նոցա, մերձեալ
է ի վերայ ձեր արքայութիւն Աստուծոյ: Իսկ յոր 10
քաղաք մտանիցէք՝ եւ ոչ ընդունիցին զձեզ, իբրեւ ե-
լանիցէք ի հրապարակս նորա, ասասջիք. Եւ զփոշին 11
որ կռուեալ է յոտս մեր ի քաղաքէ ձերմէ՝ թօթա-
փեսցուք ի ձեզ. բայց զայս գիտասջիք՝ զի մերձեալ
է արքայութիւն Աստուծոյ: Ասեմ ձեզ, զի Սոդո- 12
մացւոց ընդարձակագոյն լիցի յաւուրն յայնմիկ՝ քան

13 քաղաքին այնմիկ։ Վա՜յ քեզ Քորազին. վա՜յ քեզ
Բեթսայիդա. զի եթէ ի Տիւրոս եւ ի Սիդոն եղեալ
էին զօրութիւնքն՝ որ եղեն ի ձեզ, վաղուց եւս ար-
դեօք ի խորգ եւ ի մոխիր նստեալ ապաշխարեալ էր։
14 Բայց Տիւրոսի եւ Սիդոնի ընդարձակագոյն լիցի ի
15 դատաստանին՝ քան ձեզ։ Եւ դու Կափառնաում, որ
մինչեւ յերկինս բարձրացեալ ես, մինչեւ ի դժոխս
16 իջցես։ Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ՝
զիս անարգէ. եւ որ զիս անարգէ՝ զառաքիչն իմ ան-
արգէ. եւ որ ինձ լսէ՝ լսէ այնմիկ որ զիսն առաքեաց։
17 Դարձան եօթանասուն եւ երկուքն խնդութեամբ եւ
ասեն. Տէր՝ եւ դեւք հնազանդին մեզ յանուն քո։
18 Եւ ասէ ցնոսա. տեսանէի զսատանայ անկեալ յերկնից
19 իբրեւ զփայլակն։ Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել
զօձս եւ զկարիճս եւ զամենայն զօրութիւն թշնամւոյն,
20 եւ ձեզ ոչինչ մեղանչիցեն։ Բայց ընդ այն մի խնդայք՝
եթէ այսք հնազանդին ձեզ, այլ խնդացէք զի անու-
21 անք ձեր գրեալ են յերկինս։ Ի նմին ժամու ցնծա-
ցաւ Յիսուս Հոգւովն սրբով եւ ասէ. գոհանամ
զքէն Հայր՝ Տէր երկնից եւ երկրի, զի ծածկեցեր
զայս յիմաստնոց եւ ի գիտնոց՝ եւ յայտնեցեր զայս
տղայոց. այո՛ Հայր, զի այսպէս հաճոյ եղեւ առաջի
22 քո։ Ամենայն ինչ տուաւ ինձ ի Հօրէ իմմէ. եւ ոչ ոք
գիտէ եթէ ո՛վ է Որդի, եթէ ոչ՝ Հայր, եւ ո՛ է
Հայր՝ եթէ ոչ՝ Որդի, եւ ում կամիցի Որդին յայտ-
23 նել։ Եւ դարձեալ առանձինն առ աշակերտսն ասէ.
24 երանի աչացն՝ որ տեսանիցեն զոր տեսանէքդ։ Ասեմ
ձեզ. զի բազում մարգարէք եւ թագաւորք կամե-
ցան տեսանել զոր դուքդ տեսանէք, եւ ոչ տեսին.
եւ լսել զոր լսէքդ, եւ ոչ լուան։
25 ՓԶ. Եւ ահա յարեաւ ոմն օրինական՝ փորձէր
զնա եւ ասէր. վարդապետ՝ զի՞նչ գործեցից՝ զի զկեանս
26 յաւիտենականս ժառանգեցից։ Եւ նա ասէ ցնա.
27 յօրէնս զի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթեռնուս։ Նա պա-

տասխանի ետ եւ ասէ. սիրեսցես զՏէր Աստուած քո
յամենայն սրտէ քումմէ, եւ յամենայն անձնէ քումմէ,
եւ յամենայն զօրութենէ քումմէ, եւ յամենայն մտաց
քոց. եւ զընկեր քո իբրեւ զանձն քո: Եւ ասէ ցնա՝ 28
ուղիղ ետուր զպատասխանիդ, զայդ արա՝ եւ
կեցցես: Նա իբրեւ կամեցաւ զանձն արդարացուցա- 29
նել՝ ասէ ցՅիսուս. եւ ո՞վ է իմ ընկեր: Պատասխանի 30
ետ Յիսուս եւ ասէ. այր մի իջանէր յԵրուսաղեմէ
յԵրիքով, եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մեր-
կացուցին զնա՝ եւ վէրս ի վերայ եդին, թողին կիսա-
մահ եւ գնացին: Դէպ եղեւ քահանայի միոջ իջա- 31
նել ընդ նոյն ճանապարհ, եւ տեսեալ զնա՝ զանց
արար: Նոյնպէս եւ Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն 32
տեղի՝ ետես եւ զանց արար: Սամարացի ոմն ճանա- 33
պարհորդեալ եկն ընդ նոյն առ նովաւ, եւ տեսեալ
զնա՝ գթացաւ: Եւ մատուցեալ պատեաց զվէրս նո- 34
րա, արկեալ ի վերայ ձէթ եւ գինի. եւ եդեալ ի
վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի, եւ
դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր իբրեւ ելանէր 35
անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահե-
կանս՝ եւ ասէ. դարմանս տար դմա, եւ զոր ինչ ծա-
խեսցես ի դա՝ ի միւսանգամ գալստեանն իմում հա-
տուցից քեզ: Արդ՝ ո՞ յերեցունց ի նոցանէ թուի 36
քեզ մերձաւոր լեալ անկելոյն ի ձեռս աւազակաց:
Եւ նա ասէ. որ արար զողորմութիւն ի վերայ նորա. 37
ասէ ցնա Յիսուս. երթ եւ դու արա նոյնպէս: Եւ 38
եղեւ ի գնալն նոցա, եւ ինքն եմուտ ի գեօղ մի. եւ
կին ոմն անուն Մարթա ընկալաւ զնա ի տան իւրում:
Եւ նորա էր քոյր մի, որում անուն էր Մարիամ. 39
որ եւ եկն նստաւ առ ոտսն Տեառն, եւ լսէր զբանս
նորա: Եւ Մարթա զբաղեալ էր ի բազում սպա- 40
սու. եկն եկաց առ նմա եւ ասէ. Տէր՝ ոչինչ է փոյթ
քեզ, զի քոյրդ իմ միայն եթող զիս ի սպասու. արդ՝
ասա դմա զի օգնեսցէ ինձ: Պատասխանի ետ նմա 41

Յիսուս եւ ասէ. Մարթա՛ Մարթա՛ դու հոգաս եւ
42 զբաղում իւիք զբաղեալ ես. Բայց աստ սակաւ ինչ
պիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ
բարձցի ի նմանէ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 ԴՁ. Եւ եղեւ ի տեղւոջ ուրեք կալ յաղօթս.
եւ իբրեւ դադարեաց՝ ասէ ցնա ոմն յաշակերտաց
իւրոց. Տէր՝ ուսո մեզ յաղօթս կալ, որպէս Յովհան-
2 նէս ուսոյց աշակերտաց իւրոց: Ասէ ցնոսա, յորժամ
կայցէք յաղօթս, ասասջիք. Հայր մեր՝ սուրբ եղիցի
3 անուն քո. եկեսցէ արքայութիւն քո: Զհաց մեր
4 հանապազորդ տուր մեզ զօրըստօրէն: Եւ թող մեզ
զմեղս մեր, զի եւ մեք թողումք ամենայնի՝ որ պար-
5 տիցին մեզ. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն: Եւ
ասէ ցնոսա. ո՞վ է ի ձէնջ որոյ իցէ բարեկամ, եւ
երթիցէ առ նա ի մէջ գիշերի, եւ ասիցէ ցնա. բա՛-
6 րեկամ՝ տո՛ւր ինձ փոխ երիս նկանակս. Զի բարե-
կամ իմ եկն առ իս յուղւոյ, եւ ոչինչ ունիմ դնել
7 առաջի նորա: Եւ նա ի ներքուստ տայցէ պատաս-
խանի եւ ասիցէ. մի՛ աշխատ առներ զիս, զի դուռքդ
փակեալ են, եւ մանկունքս ընդ ինեւ կան յանկողնի.
8 ոչ կարեմ յառնել եւ տալ քեզ: Ասեմ ձեզ, ե-
թէ ոչ յարուցեալ տայցէ նմա վասն բարեկամու-
թեանն, սակայն վասն ժտութեանն յարուցեալ տայցէ
9 նմա՝ զինչ եւ պիտոյ իցէ: Եւ ես ասեմ ձեզ, խնդրե-
ցէք եւ տացի ձեզ, հայցեցէք՝ եւ գտջիք, բախեցէք
10 եւ բացցի ձեզ: Զի ամենայն որ խնդրէ՝ առնու, եւ
11 որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա: Ո՞ ոք ի
ձէնջ հայր՝ խնդրիցէ որդի իւր ձուկն, միթէ փոխա-
12 նակ ձկան՝ օ՞ձ տայցէ նմա: Եւ կամ խնդրիցէ ձու,
13 միթէ կարի՞ճ տայցէ նմա: Իսկ եթէ դուք որ չարքդ
էք գիտէք պարգեւս բարիս տալ որդւոց ձերոց, ո՞ր-

չափ եւս առաւել Հայր ձեր յերկնից տացէ բարիս
այնոցիկ, որ խնդրեն ի նմանէ:
Գի. Եւ հանէր դեւ մի համր. եւ եղեւ յելա- 14
նել դիւին՝ խօսեցաւ համրն, եւ զարմացան ամենայն
ժողովուրդն: Եւ ոմանք ի նոցանէ ասեն. բէեղզեբու- 15
ղաւ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս: Եւ այլք 16
փորձէին՝ եւ նշան յերկնից խնդրէին ի նմանէ: Իսկ 17
նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ա-
մենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝
աւերի, եւ տուն բաժանեալ յանձն՝ կործանի: Ապա 18
եթէ եւ սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայ-
ցէ թագաւորութիւն նորա. զի ասէք զինէն եթէ
բէեղզեբուղաւ իշխանաւ դիւաց հանէ դա զդեւս:
Եթէ ես բէեղզեբուղաւ հանեմ զդեւս, որդիքն ձեր 19
ի՞ւ հանիցեն. վասն այդորիկ դոքա եղիցին ձեր դա-
տաւորք: Իսկ եթէ մատամբ Աստուծոյ հանեմ 20
զդեւս, ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն
Աստուծոյ: Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ զտուն 21
իւր, ի խաղաղութեան են ինչք նորա: Բայց եթէ 22
հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա,
զսպառազինութիւնն նորա հանէ՝ յոր յուսացեալ էր,
եւ զաւարն նորա բաշխեսցէ: Որ ոչ է ընդ իս՝ հակառակ 23
իմ է, եւ որ ոչ ժողովէ ընդ իս, ցրուէ: Յորժամ 24
այսն պիղծ ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տե-
ղիս, խնդրէ հանգիստ. եւ իբրեւ ոչ գտանէ, ասէ.
դարձայց անդրէն ի տուն իմ ուստի ելի: Եւ գայ գը- 25
տանէ մաքրեալ եւ յարդարեալ: Յայնժամ երթայ 26
եւ առնու եօթն այլ այսս չար եւս քան զինքն՝ եւ
մտանէ բնակէ անդ, եւ լինի յետինն մարդոյն այնորիկ
չար քան զառաջինն: Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս, 27
ձայն եբարձ կին մի ի ժողովրդենէ անտի եւ ասէ. ե-
րանի որովայնին՝ որ կրեաց զքեզ, եւ ստեանցն՝ որ
դիեցուցին զքեզ: Եւ նա ասէ. նա երանի այնոցիկ 28
է, որ լսեն զբանն Աստուծոյ, եւ պահիցեն: Եւ ի դի- 29

զանել ի վերայ նորա ժողովրդոցն՝ սկսաւ ասել. ազգս
այս՝ ազգ չար է. նշան խնդրէ, եւ նշան յերկնից ոչ
30 տացի նմա՝ բայց նշանն Յովնանու։ Զի որպէս եղեւ
Յովնան նշան Նինուէացւոցն, այնպէս եղիցի եւ Որդի
31 մարդոյ ազգիս այսմիկ։ Դշխոյն հարաւոյ յարիցէ ի
դատաստանի ընդ արս ազգիս այսորիկ՝ եւ դատա-
պարտեսցէ զսա, զի եկն ի ծագաց երկրի լսել զիմաս-
տութիւնն Սողոմոնի. եւ ահա առաւել քան զՍողո-
32 մոն է աստ։ Արք Նինուէացիք յարիցեն ի դատաստա-
նի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ եւ դատապարտեսցեն զսա,
զի ապաշխարեցին ի քարոզութեանն Յովնանու. եւ
ահա առաւել քան զՅովնան է աստ։
33 ԽԿ. Ոչ ուրուք լուցեալ ճրագ՝ դնէ ի թագըս-
տեան, եւ ոչ ընդ գրուանաւ. այլ ի վերայ աշտա-
34 նակի, զի որ մտանեն՝ լոյս տեսանիցեն։ Ճրագ մար-
մնոյ ակն է. յորժամ ակնն առատ է, ամենայն մար-
մինն լուսաւոր եղիցի. եւ երբ ակնն չար է, եւ մար-
35 մինն խաւարին եղիցի։ Արդ զգոյշ լեր՝ գուցէ լոյսդ որ
36 ի քեզ է՝ խաւար իցէ։ Եթէ մարմինդ քո ամենայն
լուսաւոր է՝ եւ չգուցէ մասն ինչ խաւարին, եղիցի
լուսաւոր ամենայն. որպէս յորժամ ճրագն նշողիւք
37 լուսաւորեսցէ զքեզ։ Եւ մինչ խօսէր զայս, աղաչէր
զնա ոմն փարիսեցի՝ զի ճաշ կերիցէ առ նմա. եւ նա
38 մտեալ բազմեցաւ։ Իբրեւ ետես փարիսեցին՝ զարմա-
39 ցաւ, զի նախ ոչ մկրտեցաւ յառաջ քան զճաշ։ Ասէ
ցնա Տէր. այժմ դուք փարիսեցիք զարտաքին բաժա-
կին եւ զպնակին սրբէք. եւ ներքինն ձեր լի է յա-
40 փշտակութեամբ։ Անմիտք՝ ո՞չ ապաքէն որ զարտա-
41 քինն արար՝ եւ զներքինն նոյն արար։ Բայց աղէ զոր-
ժամն իսկ՝ տուք ողորմութիւն, եւ ահա ամենայն
42 սուրբ է ձեր։ Այլ վայ ձեզ փարիսեցւոց. զի տա-
սանորդէք զանանուխ եւ զփեգենայ եւ զամենայն
բանջար, եւ անցանէք զիրաւամբք եւ զսիրովն Աս-
տուծոյ. զայս արժան էր առնել՝ եւ զայնու ոչ ան-

ցանել: Վայ ձեզ փարիսեցւոց. զի սիրէք զբարձրա- 43
գահս ի ժողովուրդս, եւ զնախողջոյնս ի հրապարակս:
Վայ ձեզ՝ զի էք դուք իբրեւ զգերեզմանս անյայտս, 44
եւ մարդիկ գնան ի վերայ՝ եւ ոչ գիտեն: Պատասխա- 45
նի ետ ոմն յօրինականացն՝ եւ ասէ ցնա. վարդապետ՝
զայդ բանս ասելով եւ զմեզ թշնամանես: Եւ նա 46
ասէ. եւ ձեզ վայ օրինականացդ, զի բառնայք
մարդկան բեռինս դժուարակիրս, եւ դուք մա-
տամբ միով ի բեռինսն ոչ մերձենայք: Վայ ձեզ՝ զի 47
շինէք զշիրիմս մարգարէիցն եւ հարքն ձեր սպանին
զնոսա: Ապա ուրեմն վկայէք՝ եթէ կամակից էք գոր- 48
ծոց հարցն ձերոց. զի նոքա կոտորեցին զնոսա, եւ
դուք զգերեզմանս նոցա շինէք: Վասն այնորիկ իմաս- 49
տութիւնն Աստուծոյ ասաց. առաքեցից ի նոսա մար-
գարէս եւ առաքեալս, եւ ի նոցանէ սպանանիցեն եւ
հալածիցեն: Զի խնդրեսցի արիւն ամենայն մարգա- 50
րէից՝ հեղեալ ի սկզբանէ աշխարհի՝ յազգէ յայդ-
մանէ, Յարենէն Աբելի մինչեւ յարիւնն Զաքարիայ 51
կորուսելոյ ընդ սեղանն եւ ընդ տաճարն. այո՛ ասեմ
ձեզ՝ խնդրեսցի յազգէ յայդմանէ: Վայ ձեզ օրինա- 52
կանացդ, զի թաքուցանէք զփականս գիտութեան.
դուք ոչ մտանէք, եւ որ մտանելոցն են՝ արգելուք:
Եւ ի խօսելն զայս ամենայն առ նոսա առաջի ամե- 53
նայն ժողովրդեանն, զամօթի հարկանէին. եւ սկսան
դպիրքն եւ փարիսեցիք զչարել՝ եւ զրգռել ընդ նմա
վասն բազում իրաց. Եւ սպասել որսալ ինչ բանս 54
ի բերանոյ նորա, զի չարախօսիցեն զնմանէ:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Որովք ի կուտել բիւրաւորաց ժողովրդեանն՝ 1
մինչեւ կոխել զմիմեանս, սկսաւ ասել ցաշակերտսն
իւր. նախ՝ զգոյշ լերուք անձանց ի խմորոյ փարիսեց-
ւոցն, որ է կեղծաւորութիւն: Զի ոչինչ է ի ծա- 2
ծուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի՝ որ ոչ ծանիցի:

3 Վասն զի զոր ինչ ասիցէք ի խաւարի, լուեալ լիցի ի
լոյս. եւ զոր յունկանէն խօսեցարուք ի շտեմարանս,
4 քարոզեսցի ի վերայ տանեաց: Բայց ձեզ ասեմ սի-
րելեաց իմոց. մի զարհուրիցիք յայնցանէ՝ որ սպանա-
նեն զմարմին, եւ յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին
5 առնել: Այլ ցուցից ձեզ յումմէ երկնչիցիք. երկն-
չիջիք յայնմանէ՝ որ յետ սպանանելոյ ունի իշխանու-
թիւն արկանել ի գեհեն. այո ասեմ ձեզ՝ յայնմանէ
6 երկնչիջիք: Ոչ ապաքէն հինգ ձագ երկուց դանգաց
վաճառի, եւ մի ի նոցանէ ոչ է մոռացեալ առաջի
7 Աստուծոյ: Այլ ձեր եւ ամենայն խոկ հեր գլխոյ
թուեալ է. մի երկնչիք՝ զի քան զբազում ձագս լաւ
8 էք դուք: Ասեմ ձեզ. զի ամենայն որ խոստովանեսցի
յիս առաջի մարդկան, եւ որդի մարդոյ խոստովանեսցի
9 զնմանէ առաջի հրեշտակաց Աստուծոյ: Եւ որ ուրաս-
ցի զիս առաջի մարդկան, ուրացեալ լիցի առաջի
10 հրեշտակաց Աստուծոյ: Եւ ամենայն որ ասէ բան
զՈրդւոյ մարդոյ՝ թողցի նմա. բայց որ զՀոգւոյն սուրբ
11 հայհոյեսցէ, մի թողցի նմա: Այլ յորժամ տանիցեն
զձեզ ի ժողովուրդս եւ ի պետութիւնս եւ յիշխա-
նութիւնս, մի հոգայցէք՝ որպէս թէ զինչ պատաս-
12 խանի տայցէք, կամ զինչ ասիցէք: Զի Հոգին սուրբ
ուսուսցէ ձեզ ի նմին ժամու՝ զինչ պարտ իցէ խօսել:
13 ԺԲ. Ասէ ոմն ի ժողովրդենէն ցնա. վարդապետ՝
ասա ցեղբայր իմ բաժանել ընդ իս զժառանգու-
14 թիւնն: Եւ նա ասէ ցնա. այր դու՝ ո՞ կացոյց զիս դա-
15 տաւոր կամ բաժանարար ի վերայ ձեր: Եւ ասէ ցնո-
սա. տեսէք եւ զգոյշ լերուք յամենայն ագահու-
թենէ, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն
16 կեանք նորա: Խօսեցաւ առակ մի առ նոսա եւ ասէ.
առն ուրումն մեծատան եռուն անդք տոհմականս.
17 Եւ խորհէր ի միտս իւր՝ եւ ասէր. զի՞ գործեցից՝ զի
18 ոչ գոյ տեղի ուր ժողովեցից զարդիւնս իմ: Եւ ասէ.
գիտեմ զինչ արարից. քակեցից զշտեմարանս իմ,

եւ եւս մեծամեծս շինեցից, եւ անդր ժողովեցից
զցորեան եւ զամենայն բարութիւնս իմ. Եւ ասացից 19
ցանձն իմ. անձն՝ ունիս բազում բարութիւնս համ-
բարեալ ամաց բազմաց. հանգի՛ր՝ կե՛ր արբ՝ եւ ուրախ
լե՛ր: Ասէ ցնա Աստուած. անմիտ յայսմ գիշերի զո- 20
գիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաս-
տեցերն՝ ո՞ւմ լինիցի: Նոյնպէս եւ որ գանձէ անձին, 21
եւ ոչ յԱստուած մեծանայցէ: Ասէ ցաշակերտսն 22
իւր. վասն այսորիկ ասեմ ձեզ. մի՛ հոգայք ընդ ոգ-
ւոյ՝ թէ զի՞նչ ուտիցէք, եւ մի՛ ընդ մարմնոյ՝ թէ զի՞նչ
զգենուցուք: Զի ոգի առաւել է քան զկերակուր՝ եւ 23
մարմին քան զհանդերձ: Հայեցարուք ընդ ագռաւս, 24
զի ոչ սերմանեն եւ ոչ հնձեն, որոց ոչ գոն շտեմա-
րանք՝ եւ ոչ համբարանոցք եւ Աստուած կերակրէ
զնոսա. ո՞րչափ եւս առաւել զձեզ՝ որ լաւ էք քան
զթռչունս: Ո՞վ ի ձէնջ առ ի հոգալ՝ կարիցէ յաւե- 25
լուլ ի հասակ իւր կանգուն մի: Իսկ արդ՝ թէ փոքուն 26
չէք բաւական՝ վասն այլոցն զի՞ հոգայցէք: Հայեցա- 27
րուք ընդ շուշանն՝ ո՛րպէս աճէ. ոչ ջանայ՝ եւ ոչ նիւ-
թէ. ասեմ ձեզ՝ եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառսն
իւր՝ զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ: Իսկ եթէ զխոտն՝ 28
որ այսօր ի բացի է՝ եւ վաղիւ ի հնոց արկանելի, Ա-
ստուած այնպէս զգեցուցանէ. ո՛րչափ եւս առաւել
զձեզ թերահաւատք: Եւ դուք մի՛ խնդրէք՝ զինչ 29
ուտիցէք կամ զինչ ըմպիցէք, եւ մի՛ զբաղնուք. Զի 30
զայն ամենայն հեթանոսք աշխարհի խնդրեն. այլ
ձեր Հայրն գիտէ՝ զի պիտոյ է այն ամենայն: Բայց 31
խնդրեցէք զարքայութիւն Աստուծոյ. եւ այն ամե-
նայն յաւելցի ձեզ:

ԽԳ. Մի՛ երկնչիր հօտ փոքրիկ. զի հաճեցաւ 32
Հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն: Վաճառեցէք 33
զինչս ձեր, եւ տուք ողորմութիւն. եւ արարէք ձեզ
քսակ առանց հնանալոյ, գանձ անպակաս յերկինս.
ուր ոչ գող մերձենայ, եւ ոչ ցեց ապականէ: Զի 34

35 ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին: Եղի-
ցին գօտիք ձեր պնդեալ ընդ մէջս եւ ճրագունք լու-
36 ցեալք: Եւ դուք նմանողք մարդկան՝ որ ակն ունի-
ցին տեառն իւրեանց՝ թէ երբ դառնայցէ ի հարսա-
նեաց. զի յորժամ գայցէ եւ բախիցէ, վաղվաղակի
37 բանայցեն նմա: Երանի իցէ ծառայիցն այնոցիկ՝ զորս
եկեալ տէրն գտցէ արթունս. ամէն ասեմ ձեզ՝ զի գօտի
ընդ մէջ ածցէ՝ եւ բազմեցուսցէ զնոսա, եւ անցեալ
38 պաշտիցէ զնոսա: Եւ եթէ յերկրորդ՝ կամ յերրորդ
պահու եկեսցէ եւ գտցէ այնպէս, երանելի են ծա-
39 ռայքն այնքիկ: Բայց զայն գիտասջիք, եթէ գիտէր
տանուտէրն յորում պահու գող գայ՝ հսկէր, չտայր
40 թոյլ ական հատանել ի տան իւրում: Եւ դուք ե-
ղերուք պատրաստք՝ զի յորում ժամու ոչ կարծիցէք,
41 գայ Որդի մարդոյ: Ասէ Պետրոս. Տէր՝ առ մե՞զ ասա-
42 ցեր զառակդ զայդ, եթէ առ ամենեսեան: Եւ ասէ Տէր.
ո՞վ իցէ հաւատարիմ տնտես եւ իմաստուն, զոր կա-
ցուսցէ տէր իւր ի վերայ գերդաստանի իւրոյ տալ ի
43 ժամու զկերակուրս: Երանի իցէ ծառային այնմիկ՝
զոր եկեալ տէր իւր գտանիցէ արարեալ այնպէս:
44 Արդարեւ ասեմ ձեզ՝ զի ի վերայ ամենայն ընչից իւ-
45 րոց կացուսցէ զնա: Ապա եթէ ասիցէ ծառայն այն ի
սրտի իւրում. յամէ տէր իմ ի գալ. եւ սկսանիցի
հարկանել զծառայսն եւ զաղախնայսն, ուտել եւ
46 ըմպել եւ արբենալ: Եկեսցէ տէր ծառային այնորիկ
յաւուր յորում ակն ոչ ունիցի, եւ ի ժամու յորում
ոչ գիտիցէ, ընդ մէջ կտրեսցէ զնա, եւ զբաժին նորա
47 ընդ անհաւատս դիցէ: Եւ ծառայ՝ որ գիտիցէ զկամս
տեառն իւրոյ՝ եւ ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա,
48 արբցէ գան բազում: Եւ որ ոչն գիտիցէ՝ եւ արժանի
գանի ինչ գործիցէ, արբցէ գան սակաւ. ամենայնի՝ ո-
րում շատ տուաւ, շատ խնդրեսցի ի նմանէ. եւ որում
բազում աւանդեցաւ, առաւել եւս պահանջեսցեն ի
նմանէ:

ԽԹ. Հուր եկի արկանել յերկիր. եւ զի՞նչ կա- 49
միմ՝ թէ արդէն իսկ բորբոքէր։ Այլ մկրտութիւն մի 50
ունիմ մկրտել, եւ զիա՞րդ փութամ մինչեւ կատա-
րեսցի։ Համարի՞ք եթէ խաղաղութիւն եկի տալ յեր- 51
կիր, ո՛չ ասեմ ձեզ, այլ բաժինս։ Զի եղիցին յայսմ- 52
հետէ հինգ ի տան միում բաժանեալք, երեքն յեր-
կուց, եւ երկուքն յերից։ Բաժանեսցի հայր յորդւոյ՝ 53
եւ որդի ի հօրէ, մայր ի դստերէ՝ եւ դուստր ի մօրէ,
սկեսուր ի հարսնէ՝ եւ հարսն ի սկեսրէ իւրմէ։ Ա- 54
սաց եւ ցժողովուրդսն. յորժամ տեսանիցէք ամպ
ծագեալ յարեւմտից, իսկոյն ասէք՝ թէ անձրեւ գայ,
եւ լինի այնպէս. Եւ յորժամ հարաւ շնչեալ, ասէք 55
թէ խորշակ լինի, եւ լինի այնպէս։ Կեղծաւորք՝ զե- 56
րեսս երկնի եւ երկրի գիտէք փորձել, իսկ զժամա-
նակս զայս զիա՞րդ ոչ փորձէք։ Ընդէ՞ր եւ յանձանց 57
իսկ ոչ ընտրէք զարժանն։ Յորժամ երթայցես ընդ 58
ոսոխի քում առ իշխան, ի ճանապարհի տուր զհա-
շիւն զերծանել ի նմանէ. զի դուցէ քարշիցէ զքեզ
առ դատաւորն, եւ դատաւորն մատնիցէ դահճի, եւ
դահիճն արկանիցէ ի բանտ։ Ասեմ քեզ, ոչ ելանի- 59
ցես անտի՝ մինչեւ հատուցանիցես զյետին բնիոնն։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Եկին ոմանք ի նմին ժամանակի, եւ պատմեցին 1
նմա վասն Գալիլեացւոցն, որոց զարիւնն Պիղատոս
խառնեաց ընդ զոհսն նոցա։ Պատասխանի ետ եւ ա- 2
սէ ցնոսա. համարի՞ք եթէ այն Գալիլեացիք եղեն մե-
ղաւորք քան զամենայն Գալիլեացիս, զի զայնպիսի
անցս կրեցին։ Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ ոչ ապաշ- 3
խարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք։ Կամ նոքա 4
ութուտասանքն, յորոց վերայ անկաւ աշտարակն ի
Սելովամ, եւ սպան զնոսա. համարի՞ք եթէ նոքա
պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ՝ որ բնա-
կեալ են յԵրուսաղէմ։ Ոչ, ասեմ ձեզ. այլ եթէ 5

6 ոչ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք: Ա-
սաց եւ զառակս զայս. Թզենի մի էր ուրումն տնկեալ
յայգւոջ իւրում. եւ եկն խնդրել պտուղ ի նմա՝
7 եւ ոչ եգիտ: Ասէ ցայգեգործն. ահա երեք ամք են՝
յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ՝ եւ
ոչ գտանեմ. արդ՝ կոտեա զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ
8 խափանէ: Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր՝ թող
զդա այս ամ եւս, մինչեւ շուրջ զդովաւ բրեցից՝ եւ
9 արկից աղբ. Թերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝
յամէ եւս հատցես զդա:
10 ԵԵ. Եւ ուսուցանէր ի միում ի ժողովրդանոցացն
11 ի շաբաթու: Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւան-
դութեան ամս ութուտասն. եւ էր կորկամեալ, եւ
12 ոչ կարէր ամենեւին ի վեր հայել: Եւ տեսեալ զնա
Յիսուսի՝ կոչեաց առ ինքն՝ եւ ասէ ցնա. կին դու՝
13 արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ: Եւ եդ ի
վերայ նորա ձեռն, եւ առժամայն ուղղեցաւ, եւ փա-
14 ռաւոր առնէր զԱստուած: Պատասխանի ետ ժողո-
վրդապետն ցասուցեալ՝ թէ ընդէ՞ր ի շաբաթու բժշ-
կեաց Յիսուս, եւ ասէ ցժողովուրդն. վեց օր է՝ յորս
արժան է գործել, յայնս եկայք բժշկեցարուք, եւ
15 մի յաւուր շաբաթու: Պատասխանի ետ նմա Տէր՝
եւ ասէ. կեղծաւորք՝ իւրաքանչիւր ոք ի ձէնջ ի շա-
բաթու ո՞չ արձակէ զեզն իւր կամ զէշ ի մսրոյ՝ եւ
16 տանի ջուր: Իսկ այս՝ դուստր Աբրահամու էր,
զո՞ր կապեաց սատանայ ահաւասիկ ութուտասն ամ,
ոչ էր արժան արձակել ի կապանաց անտի ի շաբա-
17 թու: Եւ զայս իբրեւ ասաց, յամօթ լինէին ամենե-
քեան որ հակառակն կային նմա. եւ ամենայն ժողո-
վուրդն ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորու-
18 թեանցն, որ գործէին ի նմանէ: Եւ ասէր. ո՞ւմ նման
է արքայութիւն Աստուծոյ, եւ ո՞ւմ նմանութեան
19 նմանեցուցից զնա: Նման է հատոյ մանանխոյ, զոր ա-
ռեալ մարդոյ՝ արկ ի պարտէզ իւր. աճեաց եւ եղեւ

ծառ, եւ թռչունք երկնից բնակէին յոստս նորա: Եւ 20
դարձեալ ասէ. Ո՞ւմ նմանեցուցից զարքայութիւն
Աստուծոյ. Նման է խմորոյ՝ զոր առեալ կնոջ թա- 21
քոյց յալեւր երից գրուից՝ մինչեւ խմորեցաւ ամենայն:

ԽԶ. Եւ շրջէր ընդ քաղաքս եւ ընդ գեօղս՝ ու- 22
սուցանէր. եւ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմ,
Ասէ ոմն ցնա. Տէր՝ եթէ սակա՞ւք իցեն, որ ապրելոց 23
իցեն. եւ նա ասէ ցնոսա. Ջանացարուք մտանել ընդ 24
դուռն նեղ. ասեմ ձեզ՝ զի բազումք խնդրեսցեն մտա-
նել՝ եւ ոչ կարասցեն: Յորմէ հետէ մտցէ տանուտէրն 25
եւ փակեսցէ զդուռնն, եւ սկսանիցիք կալ արտաքոյ՝
եւ բախել զդուռնն, եւ ասել. Տէր Տէր՝ բաց մեզ.
եւ պատասխանի տուեալ ասիցէ ձեզ. ոչ գիտեմ
զձեզ ուստի էք: Յայնժամ սկսանիցիք ասել. կերաք 26
եւ արբաք առաջի քո, եւ ի հրապարակս մեր ուսու-
ցեր: Եւ ասիցէ. ասեմ ձեզ, ոչ գիտեմ զձեզ ուստի 27
էք. ի բաց կացէք յինէն ամենայն մշակք անիրաւու-
թեան: Անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց, յոր- 28
ժամ տեսանիցէք զԱբրահամ եւ զԻսահակ եւ զՅա-
կոբ՝ եւ զամենայն մարգարէս յարքայութեան Ա-
ստուծոյ, եւ զձեզ հանեալ արտաքս: Եւ եկեսցեն 29
յարեւելից եւ յարեւմտից եւ ի հիւսիսոյ եւ ի հա-
րաւոյ, եւ բազմեսցին յարքայութեան Աստուծոյ:
Եւ ահա իցեն յետինք՝ որ եղիցին առաջինք, եւ իցեն 30
առաջինք՝ որ եղիցին յետինք: Ի նմին աւուր մատեան 31
ոմանք փարիսեցիք, եւ ասեն ցնա. ել եւ գնա աստի,
զի Հերովդէս կամի սպանանել զքեզ: Եւ ասէ ցնո- 32
սա. երթայք՝ ասացէք աղուեսուն այնմիկ. ահաւա-
սիկ հանեմ դեւս, եւ բժշկութիւնս կատարեմ այ-
սօր եւ վաղիւ. եւ յերիր աւուր կատարիմ: Բայց 33
պարտ է այսօր եւ վաղիւ եւ ի միւսում աւուր գնալ.
զի ոչ է մարթ մարգարէի կորնչել արտաքոյ քան զԵ-
րուսաղէմ: Երուսաղէմ Երուսաղէմ՝ որ կոտորէիր 34
զմարգարէսն, եւ քարկոծ առնէիր զառաքեալսն առ

քեզ . քանիցս անգամ կամեցայ ժողովել զորդիս քո,
որպէս հաւ զձագս իւր ընդ թեւովք, եւ ոչ կամեցա-
35 րուք : Ահա թողեալ լիցի ձեզ տունդ ձեր : Բայց ա-
սեմ ձեզ, թէ ոչ եւս տեսանիցէք զիս, մինչեւ ասի-
ցէք՝ օրհնեալ եկեալն յանուն Տեառն :

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Ել Եւ եղեւ ի մտանելն նորա ի տուն ուրումն
իշխանացն փարիսեցւոց ի շաբաթու ուտել հաց, եւ
2 նոքա սպասէին նմա : Եւ ահա այր ոմն էր անդ ջրգո-
3 ղեալ առաջի նորա : Պատասխանի ետ Յիսուս՝ եւ
ասէ ցօրինականսն եւ ցփարիսեցիս . եթէ արժա՞ն իցէ
4 ի շաբաթու բժշկել : Եւ նոքա լուռ եղեն . եւ բուռն
5 հարեալ զնմանէ՝ բժշկեաց զնա, եւ արձակեաց : Եւ
ասէ ցնոսա . ո՞յր ուրուք ի ձէնջ էշ կամ եզն՝ անկա-
նիցի ի ջրհոր, եւ ոչ վաղվաղակի հանիցէ զնա յա-
6 ւուր շաբաթու : Եւ ոչ կարացին տալ նմա պատաս-
7 խանի առ այն : Ասաց եւ առ կոչնականսն առակ մի,
հայեցեալ թէ զիարդ բարձրնտիր լինէին, ասէ ցնոսա .
8 Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս՝ կամ ի կո-
չունս, մի բազմիցիս յառաջին բարձին . գուցէ պա-
տուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ :
9 Եւ եկեալ՝ որ զքեզն եւ զնա կոչեաց՝ ասիցէ ցքեզ՝
տուր սմա տեղի . եւ ապա սկսանիցիս ամօթով զյե-
10 տին տեղին ունել : Այլ յորժամ կոչիցիս, երթ իջիր՝
բազմեսջիր ի յետին տեղւոջ . զի յորժամ գայցէ՝ որ
կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ . բարեկամ ի վեր մա-
տիր . յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձա-
11 կցացն քոց : Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն,
խոնարհեսցի . եւ որ խոնարհեցուցանէ զանձն, բար-
12 ձրասցի : Ասէ եւ ցկոչնատէրն . յորժամ առնիցես
ճաշ կամ ընթրիս, մի կոչեր զբարեկամս քո, եւ մի
զեղբարս քո, եւ մի զազգականս քո, եւ մի զդրացիս
քո, եւ մի զմեծամեծս . զի մի եւ նոքա փոխարէն

կոչեսցեն զքեզ, եւ լինիցի քեզ հատուցումն: Այլ 13
յորժամ առնիցես ընդունելութիւն, կոչեա զաղքատս
եւ զխեղս եւ զկաղս եւ զկոյրս, Եւ երանելի լինիցիս. 14
զի ոչ ունին փոխարէն հատուցանելոյ քեզ. եւ հա-
տուսցի քեզ փոխարէն ի յարութեան արդարոց:
Իբրեւ լուաւ զայս ոմն ի բազմականացն՝ ասէ ցնա. 15
երանի՛ որ կերիցէ հաց յարքայութեան Աստուծոյ:
Եւ նա ասէ. այր ոմն գործեաց ընթրիս, եւ հրաւի- 16
րեաց զբազումս: Եւ առաքեաց զծառայ իւր ի ժամու 17
ընթրեաց կոչել զհրաւիրեալսն՝ թէ եկայք, զի ա-
հաւասիկ պատրաստ է ամենայն ինչ: Եւ սկսան մի 18
ըստ միոջէ ամենեքեան հրաժարել. առաջինն ասէ.
ագարակ գնեցի, եւ հարկ է ելանել տեսանել զնա,
աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ: Եւ միւսն 19
ասէ. լուծս հինգ եզանց գնեցի, եւ երթամ փորձել
զնոսա, աղաչեմ զքեզ՝ կալ զիս հրաժարեալ: Եւ 20
միւսն ասէ. կին առի, եւ վասն այնորիկ ոչ կարեմ
գալ: Եւ եկեալ ծառայն պատմեաց զայն՝ Տեառն 21
իւրում: Յայնժամ բարկացեալ տանուտէրն՝ ասէ
ցծառայն իւր. ել վաղվաղակի ի հրապարակս եւ ի
փողոցս քաղաքիդ, եւ զաղքատս եւ զխեղս եւ զկաղս
եւ զկոյրս մոյծ այսր: Եւ ասէ ծառայն. տէր՝ եղեւ 22
զոր հրամայեցերն, եւ կայ եւս տեղի: Եւ ասէ Տէրն 23
ցծառայն, ել ի ճանապարհս եւ ի ցանգս, եւ արա
այսր մտանել, զի լցցի տունս իմ: Ասեմ ձեզ, զի 24
ոչ ոք յայնց կոչեցելոց ճաշակեսցէ յընթրեաց իմոց:

ՃԿ· Եւ երթային ընդ նմա ժողովուրդք բա- 25
զումք. դարձաւ եւ ասէ ցնոսա. Եթէ ոք գայ առ իս՝ 26
եւ ոչ ատեայ զհայր իւր եւ զմայր եւ զկին եւ զորդիս
եւ զեղբարս եւ զքորս, նա եւ զանձն իւր եւս, ոչ
կարէ իմ աշակերտ լինել: Զի որ ոչ բառնայ զխաչ 27
իւր՝ եւ գայ զկնի իմ, ոչ կարէ իմ աշակերտ լինել:
Ո՞վ ոք ի ձէնջ կամիցի շինել աշտարակ, եւ ոչ նախ 28
նստեալ համարիցի զծախսն՝ եթէ ունիցի բաւական

29 ի կատարումն: Զի գուցէ իբրեւ արկանիցէ հիմն՝ եւ
ոչ կարիցէ կատարել, ամենեքին որ տեսանիցեն,
30 սկսանիցին ծաղր առնել զնա, Եւ ասել. Թէ
այս այր սկսաւ շինել, եւ ոչ կարաց կատարել:
31 Կամ ո՞ր թագաւոր երթեալ տայցէ պատերազմ
ընդ այլում թագաւորի. եւ ոչ նստեալ նախ խոր-
հիցի. եթէ կարող իցէ տասն հազարաւ զդէմ ու-
նել զայնորիկ՝ որ գայցէ ի վերայ նորա քսան հա-
32 զարաւ: Ապա եթէ ոչ՝ մինչ դեռ հեռագոյն իցէ,
հրեշտակութիւն առաքեալ՝ աղաչեսցէ ի խաղաղու-
33 թիւն: Արդ՝ այսպէս ամենայն ոք ի ձէնջ՝ որ ոչ հրա-
ժարեսցէ յամենայն ընչից իւրոց, ոչ կարէ իմ աշա-
34 կերտ լինել: Բարուք է աղ. ապա եթէ աղն ան-
35 համեսցի, ի՞ւ համեմեսցի: Ոչ յերկիր՝ եւ ոչ յաղբ
է պիտանացու, այլ ընկենուլ զնա արտաքս. որ
ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Եւ էին մերձ առ նա ամենայն մաքսաւորք եւ
2 մեղաւորք՝ լսել ի նմանէ: Տրտնջէին փարիսեցիքն եւ
դպիրքն՝ եւ ասէին. ընդէ՞ր սա զմեղաւորս ընդունի՝
3 եւ ուտէ ընդ նոսա: Ասաց առ նոսա զառակս զայս:
4 Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար,
եւ կորուսանիցէ մի ի նոցանէ. ո՞չ թողուցու զիննսուն
եւ զինն յանապատին, եւ երթիցէ զհետ կորուսե-
5 լոյն՝ մինչեւ գտանիցէ զնա: Եւ իբրեւ գտանէ, դնէ
6 զնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով, Եւ երթեալ ի
տուն, կոչէ զբարեկամս եւ զդրացիս, եւ ասէ ցնոսա.
ուրախ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկո-
7 րուսեալ: Ասեմ ձեզ. զի այսպէս է ուրախութիւն
յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ՝ քան
վասն իննսուն եւ ինն արդարոց՝ որոց չիցէ պիտոյ
8 ապաշխարութիւն: Կամ ո՞ իցէ կին, որոյ իցեն դրամք
տասն. եւ եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանի-

ցէ ճրագ, եւ ածիցէ աւել ի տուն եւ խնդրիցէ ստէպ՝
մինչեւ գտանիցէ: Եւ իբրեւ գտանէ, կոչէ զբարեկամս 9
եւ զդրացիս՝ եւ ասէ. ուրախ լերուք ընդ իս, զի գտի
զդրամն իմ զոր կորուսի: Այնպէս՝ ասեմ ձեզ, ու- 10
րախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի
վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ: Եւ ասէ. 11
առն միոջ էին երկու որդիք. Ասէ կրտսերն ի նոցանէ 12
ցհայրն. հայր՝ տուր ինձ բաժին, որ անկանի յըն-
չիցդ. եւ նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ յետ ոչ 13
բազում աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսեր որդ-
ւոյն՝ գնաց յաշխարհ հեռի. եւ անդ վատնեաց զինչս
իւր, զի կեայր անառակութեամբ: Եւ իբրեւ սպա- 14
ռեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին
յայնմիկ, եւ սկսաւ ինքն չքաւորել: Եւ գնացեալ 15
յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնո-
րիկ. եւ յղեաց զնա յագարակ իւր արածել խոզս:
Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն 16
ուտէին, եւ ոչ ոք տայր նմա: Եկեալ ի միտս իւր՝ ա- 17
սէ. քանի վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք,
եւ ես աստ սովամահ կորնչիմ: Յարուցեալ գնացից 18
առ հայր իմ, եւ ասացից ցնա. հայր՝ մեղայ յեր-
կինս, եւ առաջի քո, Եւ ոչ եւս եմ արժանի կոչել 19
որդի քո, արա զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց: Եւ 20
յարուցեալ եկն առ հայր իւր. եւ մինչ դեռ հեռա-
գոյն էր, ետես զնա հայրն՝ եւ գթացաւ, յարեաւ եւ
ընթացաւ ընդ առաջ, անկեալ զպարանոցաւ նորա,
եւ համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին. հայր՝ 21
մեղայ յերկինս՝ եւ առաջի քո, ոչ եւս եմ արժանի
կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայս իւր. վաղվա- 22
ղակի հանէք զպատմուճանն առաջին, եւ ագուցէք
նմա, եւ տուք զմատանին ի ձեռն նորա, եւ կօշիկս
յոտս նորա, Եւ ածէք զեզն պարարակ զենէք, կե- 23
րիցուք եւ ուրախ լիցուք: Զի այս որդի իմ մեռեալ 24
էր՝ եւ եկեաց, կորուսեալ էր՝ եւ գտաւ. եւ սկսան

25 ուրախ լինել։ Եւ էր երէց որդին նորա յագարակի.
եւ մինչ դեռ գայր՝ եւ մերձ եղեւ ի տունն, լուաւ
26 զձայն երգոց եւ զպարուց. Եւ կոչեցեալ առ ինքն
27 զմի ի ծառայիցն՝ հարցանէր թէ զի՞նչ իցէ այն։ Եւ
նա ասէ ցնա. զի եղբայր քո եկեալ է, եւ եզեն հայր
28 քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա։ Բար-
կացաւ՝ եւ ոչ կամէր մտանել. եւ հայրն ելեալ ար-
29 տաքս՝ աղաչէր զնա։ Պատասխանի ետ եւ ասէ ցհայ-
րըն. այս քանի՞ ամք են՝ զի ծառայեմ քեզ, եւ եր-
բէք զպատուիրանաւ քով ոչ անցի. ուլ մի երբեք
ոչ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ։
30 Յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ
31 պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ։ Եւ ասէ ցնա.
որդեակ՝ դու հանապազ ընդ իս ես, եւ ամենայն որ
32 ինչ իմ է՝ քո է. Այլ ուրախ լինել եւ խնդալ պարտ
էր, զի եղբայր քո այս մեռեալ էր՝ եւ եկեաց, կորու-
սեալ էր՝ եւ գտաւ։

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 ՁԲ. Եւ ասէր առ աշակերտսն. այր մի էր մե-
ծատուն, որոյ էր տնտես. եւ եղեւ զնմանէ ամբաս-
2 տանութիւն՝ որպէս թէ վատնիցէ զինչս նորա։ Կո-
չեաց, եւ ասէ ցնա. զի՞նչ է այս զոր լսեմ զքէն,
տուր զհամար տնտեսութեան քո. զի ոչ եւս կարես
3 լինել տնտես։ Ասէ ընդ միտս իւր տնտեսն. զի՞նչ
գործեցից, զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս. գոր-
4 ծել ոչ կարեմ՝ մուրանալ ամաչեմ։ Գիտեմ զինչ
արարից. զի յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսութե-
5 նէս՝ ընկալցին զիս ի տունս իւրեանց։ Եւ կոչեցեալ
առ ինքն մի ըստ միոջէ ի պարտապանաց Տեառն իւ-
րոյ, ասէ ցառաջինն. քանի՞ ինչ պարտիս Տեառն
6 իմում։ Եւ նա ասէ. հարիւր մար ձիթոյ. ասէ ցնա.
կա զգիր քո, եւ նիստ գրեա վաղվաղակի յիսուն։
7 Դարձեալ ասէ ցմիւսն. դու քանի՞ ինչ պարտիս.

եւ նա ասէ. Հարիւր քոռ ցորենոյ. եւ ասէ ցնա.
կալ զգիր քո՝ եւ նիստ գրեա վաղվաղակի ութսուն: Եւ 8
գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաս-
տութեամբ արար. զի որդիք աշխարհիս այսորիկ ի-
մաստնագոյն են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց:
Եւ ես ձեզ ասեմ. արարէք ձեզ բարեկամս ի մամո- 9
նայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ այն՝
ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենականս: Որ ի 10
փոքուն հաւատարիմ է, եւ ի բազմին հաւատարիմ
է. եւ որ ի փոքուն անիրաւ է, եւ ի բազմին անիրաւ
է: Իսկ արդ՝ եթէ յանիրաւ մամոնային չեղէք հաւա- 11
տարիմք, զճշմարիտն ձեզ ո՞ հաւատասցէ: Եւ եթէ 12
յօտարին չեղէք հաւատարիմք, զձերն ո՞ տացէ ձեզ:
Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառայել. զի եթէ 13
զմին ատիցէ, եւ զմիւսն սիրիցէ. կամ զմին մեծարի-
ցէ, եւ զմիւսն արհամարհիցէ. ոչ կարէք Աստուծոյ
ծառայել եւ մամոնայի: Իբրեւ լուէին զայս ամենայն 14
փարիսեցիքն՝ քանզի արծաթասէրք էին, եւ անգոս-
նէին զնա: Եւ ասէ ցնոսա. դուք էք որ արդարա- 15
ցուցանէք զանձինս առաջի մարդկան, սակայն Աստու-
ած գիտէ զսիրտս ձեր. զի որ առաջի մարդկան բար-
ձր է, պիղծ է առաջի Աստուծոյ: Օրէնքն եւ մար- 16
գարէքն մինչեւ ցՅովհաննէս. յայնմ հետէ արքայ-
ութիւն Աստուծոյ աւետարանի, եւ ամենայն ոք զնա
բռնաբարէ: Դիւրին իցէ երկնից եւ երկրի անցանել, 17
քան յօրինացն միոյ նշանախեցի անկանել: Ամենայն 18
որ արձակէ զկին իւր՝ եւ առնէ այլ, շնայ. եւ որ զար-
ձակեալն առնէ, շնայ: Այր մի էր մեծատուն, եւ 19
ագանէր բեհեզս եւ ծիրանիս, եւ ուրախ լինէր հա-
նապազ առատապէս: Եւ աղքատ մի անուն Ղա- 20
զարոս անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ.
Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր ի փշրանաց՝ որ ան- 21
կանէին ի սեղանոյ մեծատանն. այլ եւ շունք եւս գայ-
ին, եւ լեզուին զվէրս նորա: Եւ եղեւ մեռանել աղ- 22

քատին. եւ տանել հրեշտակաց զնա ի գոգն Աբրա-
23 համու. մեռաւ եւ մեծատունն՝ եւ թաղեցաւ. Եւ
ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանս էր.
ետես զԱբրահամ ի հեռաստանէ, եւ զՂազարոս ի
24 գոգ նորա հանգուցեալ: Եւ նա աղաղակեաց եւ ասէ.
հայր Աբրահամ՝ ողորմեաց ինձ, եւ առաքեա զՂա-
զարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր, եւ զո-
վացուսցէ զլեզու իմ. զի պապակիմ ի տապոյ աստի:
25 Եւ ասէ ցնա Աբրահամ. որդեակ՝ յիշեա զի ընկալար
անդրէն զբարիս քո ի կեանս քում, եւ Ղազարոս
նոյնպէս զչարչարանսն. արդ՝ սա աստ մխիթարի, եւ
26 դու այդր պապակիս: Եւ ի վերայ այսր ամենայնի՝
վիհ մեծ է ընդ մեզ եւ ընդ ձեզ. եթէ կամիցին
աստի առ ձեզ անցանել՝ ոչ կարեն, եւ ոչ այտի ոք
27 առ մեզ անցանել: Եւ ասէ. արդ աղաչեմ զքեզ
28 հայր, զի արձակեսցես զդա ի տուն հօր իմոյ. Են իմ
անդ եղբարք հինգ, որպէս զի տացէ նոցա վկայու-
թիւն. զի մի եւ նոքա գայցեն յայս տեղի տանջա-
29 նաց: Եւ ասէ Աբրահամ. ունին զՄովսէս եւ զմար-
30 գարէսն, նոցա լուիցեն: Եւ նա ասէ, ոչ՝ հայր Ա-
բրահամ, բայց թէ ի մեռելոց ոք երթիցէ առ նոսա,
31 եւ ապաշխարիցեն: Եւ ասէ ցնա. եթէ Մովսէսի եւ
մարգարէիցն ոչ լսեն, եւ ոչ թէ ի մեռելոց ոք յառ-
նիցէ՝ հաւանեսցին:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 ԶԳ. Ասաց եւ առ աշակերտսն իւր. ոչ է մարթ
չգալ գայթագղութեան. բայց վայ այնմիկ յոյր ձեռն
2 գայցէ: Լաւ էր նմա՝ եթէ վէմ երկանաքար կախէր
զպարանոցէ նորա՝ եւ անկանէր ի ծով, քան թէ գայ-
թագղեցուցանիցէ զմի ոք ի փոքրկանցս յայսցանէ:
3 Զգոյշ կացէք անձանց: Եթէ մեղիցէ եղբայր քո,
4 սաստեա նմա. եւ եթէ ապաշխարիցէ, թող նմա: Եւ
եթէ եօթն անգամ մեղիցէ քեզ, եւ եօթն անգամ

դարձցի ի քեզ՝ եւ ասիցէ, ապաշխարեմ, թողցես
նմա: Եւ ասեն առաքեալքն ցՏէր. յաւել մեզ հա- 5
ւատս: Եւ ասէ Տէր. եթէ ունիցիք հաւատս քան 6
զհատ մանանխոյ, եւ ասիցէք թթենոյս այսմիկ.
խլեաց եւ տնկեաց ի ծովու, եւ հնազանդեսցի ձեզ:
Իսկ ո՞վ ոք ի ձէնջ, որ ունիցի ծառայ հողագործ 7
կամ հովիւ, որ իբրեւ մտանիցէ յագարակէ՝ ասիցէ
ցնա վաղվաղակի. թէ անց բազմեաց: Այլ ոչ ասի- 8
ցէ ցնա, թէ պատրաստեա զինչ ընթրելոյ իցեմ, եւ
գօտի ածեալ պաշտեա զիս մինչեւ կերայց եւ արբից,
եւ ապա կերիցես եւ արբցես դու: Միթէ շնորհ 9
ինչ ունիցի՞ ծառային այնմիկ, զի արար զամենայն
հրամանսն: Նոյնպէս եւ դուք՝ յորժամ առնիցէք 10
զամենայն հրամայեալսն ձեզ, ասասջիք՝ թէ ծա-
ռայք անպիտանք եմք, զոր պարտէաքն առնել, արա-
րաք: Եւ եղեւ մինչեւ երթայր նա յԵրուսաղէմ, 11
եւ ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ եւ Գալիլեաց-
ւոց: Եւ մինչդեռ մտանէր ի գեօղ ուրեմն, պատա- 12
հեցին նմա տասն այր բորոտ՝ որք կացին ի հեռաս-
տանէ, Բարձին զձայնս՝ եւ ասեն. Յիսուս վարդապետ՝ 13
ողորմեաց մեզ: Եւ իբրեւ ետես զնոսա, ասէ 14
ցնոսա. երթայք ցուցէք զանձինս քահանայից.
եւ եղեւ իբրեւ գնացին, առժամայն սրբեցան: Մի 15
ոմն ի նոցանէ՝ իբրեւ ետես եթէ բժշկեցաւ, դարձաւ
անդրէն՝ ի ձայն մեծ փառաւոր առնէր զԱստուած:
Անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա, եւ գո- 16
հանայր զնմանէ. եւ ինքն էր Սամարացի: Պատաս- 17
խանի ետ Յիսուս եւ ասէ. ո՞չ տասն ոքա սրբեցան,
իսկ արդ՝ ինունքն ո՞ւր են. Ո՞չ գտան դառնալ 18
տալ փառս Աստուծոյ, բայց միայն այլազգիս այս: Եւ 19
ասէ ցնա. արի գնա, զի հաւատք քո կեցուցին զքեզ:

ԶԹ. Իբրեւ հարցաւ ի փարիսեցւոցն՝ թէ ե՞րբ 20
գայցէ արքայութիւն Աստուծոյ. պատասխանի ետ
նոցա եւ ասէ. ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խտրա-

21 նոք. Եւ ոչ ասիցեն, թէ ահաւասիկ աստ է՝ կամ անդ.
զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է:
22 Ասաց եւ առ աշակերտսն. եկեսցեն աւուրք ցանկա-
նալոյ ձեզ մի յաւուրցն որդւոյ մարդոյ տեսանել՝ եւ
23 ոչ տեսանիցէք: Եւ եթէ ասիցեն ձեզ՝ եթէ ահաւա-
24 սիկ է՝ կամ անդ, մի երթայցէք զհետ: Զի որպէս
փայլակն փայլատակեալ ի ներքոյ երկնից՝ ընդ երկ-
նիւք ծագիցէ, նոյնպէս եւ Որդի մարդոյ յաւուրն
25 իւրում: Բայց նախ պարտ է նմա բազում չարչարել՝
26 եւ խոտել յազգէս յայսմանէ: Եւ որպէս եղեւ յա-
ւուրսն Նոյի, նոյնպէս եղիցի եւ յաւուրս որդւոյ մար-
27 դոյ: Ուտէին՝ ըմպէին՝ կանայս առնէին՝ արանց լինէին՝
մինչեւ յօրն՝ յորում եմուտ Նոյ ի տապանն, եւ եկն
28 ջրհեղեղն՝ եւ կորոյս զամենեսին: Նոյնպէս՝ եւ որպէս
յաւուրսն Ղովտայ եղեւ, ուտէին՝ ըմպէին՝ գնէին՝ վա-
29 ճառէին, տնկէին՝ շինէին. Եւ յորում աւուր ել
Ղովտ ի Սոդոմայ, տեղաց հուր եւ ծծումբ յերկ-
30 նից՝ եւ կորոյս զամենեսին. Ըստ նմին օրինակի եղիցի
եւ յաւուրն, յորում Որդի մարդոյ յայտնելոց է:
31 Յայնմ աւուր որ կայցէ ի տանիս՝ եւ կարասի իւր ի
32 տան, մի իջցէ առնուլ զայն. եւ որ յանդի իցէ, նոյն-
33 պէս մի դարձցի յետս: Յիշեցէք զկինն Ղովտայ: Որ
խնդրիցէ զանձն իւր ապրեցուցանել, կորուսցէ զնա.
34 եւ որ կորուսցէ, ապրեցուսցէ զնա: Ասեմ ձեզ. յայնմ
գիշերի՝ թէ եղիցին երկու ի մի մահճի, մին առցի՝
35 եւ միւսն թողցի. Եւ եթէ եղիցին երկու՝ աղալ ի
միասին, մին առցի՝ եւ միւսն թողցի. եւ եթէ իցեն
36 երկու յանդի, մին առցի՝ եւ միւսն թողցի: Պատաս-
37 խանի ետուն եւ ասեն ցնա. յո՞ Տէր: Եւ նա ասէ
ցնոսա. ուր մարմին է, անդր եւ արծուիք ժողո-
վեսցին:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ՁԵ. Ասաց եւ առակ մի նոցա՝ առ այն, թէ պարտ 1
է յամենայն ժամ կալ նոցա յաղօթս եւ մի ձան-
ձրանալ. Ասէ. դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, 2
յԱստուծոյ ոչ երկնչէր՝ եւ ի մարդկանէ ոչ ամաչէր:
Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա եւ 3
ասէր. դատ արա ինձ յոսոխէ իմմէ: Եւ ոչ կամէր ի 4
բազում ժամանակս. յետ այնորիկ ասէ ի մտի իւրում,
եթէ եւ յԱստուծոյ ոչ երկնչիմ, եւ ի մարդկանէ ոչ
ամաչեմ, Գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ 5
արարից նմա դատ, զի մի իսպառ եկեալ թախանձի-
ցէ զիս: Եւ ասէ Տէր. լուարուք զինչ դատաւորն 6
անիրաւութեան ասէր: Իսկ Աստուած ո՞չ առնիցէ 7
վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ
նա ի տուէ եւ ի գիշերի. եւ երկայնամիտ միայն լի-
ցի առ նոսա: Այո՛ ասեմ ձեզ. զի արասցէ վրէժ- 8
խնդրութիւն նոցա վաղվաղակի. իսկ Որդի մարդոյ
եկեալ գտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի: Ասաց 9
եւ առ ոմանս պանծացեալս յանձինս, թէ արդարք
իցեն՝ եւ խոտիցեն զբազումս, զառակս զայս: Արք 10
երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի՝
եւ միւսն մաքսաւոր: Փարիսեցին կայր մեկուսի, եւ 11
զայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ՝
գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ,
զյափշտակողս՝ եւ զանիրաւս՝ եւ զշունս, կամ ի-
բրեւ զայս մաքսաւոր: Այլ պահեմ երկիցս ի շա- 12
բաթու, եւ տամ տասանորդս յամենայն ստացուա-
ծոց իմոց: Եւ մաքսաւորն կայր մեկուսի, եւ ոչ 13
կամէր եւ ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ
կոծէր զկուրծս իւր՝ եւ ասէր. Աստուած՝ քաւեա
զիս զմեղաւորս: Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ 14
ի տուն իւր քան զնա. զի ամենայն որ բարձրացու-

ցանէ զանձն իւր, խոնարհեսցի. եւ որ խոնարհեցու-
ցանէ զանձն, բարձրասցի:
15 ՁԶ. Մատուցանէին առ նա եւ մանկտի՝ զի մեր-
ձեռնայցէ ի նոսա. իբրեւ տեսին աշակերտքն՝ սաս-
16 տէին նոցա: Իսկ Յիսուս կոչեցեալ զնոսա առ ինքն՝
ասէ. Թոյլ տուք մանկտւոյդ գալ առ իս, եւ մի ար-
գելուք զդոսա, զի այդպիսեացդ է արքայութիւն Աս-
17 տուծոյ: Ամէն ասեմ ձեզ. որ ոչ ընդունիցի զար-
քայութիւն Աստուծոյ իբրեւ զմանուկ, ոչ մտցէ ի
18 նա: Եւ եհարց զնա ոմն իշխան եւ ասէ. վարդապետ
բարի՝ զի՞նչ գործեցից, զի զկեանսն յաւիտենականս
19 ժառանգեցից: Ասէ ցնա Յիսուս. զի՞ ասես զիս բարի.
20 չէք ոք բարի՝ բայց մի Աստուած: Զպատուիրանս գի-
տես. մի՛ շնար, մի՛ սպանաներ, մի՛ գողանար, մի՛ սուտ
21 վկայեր, պատուեա զհայր քո եւ զմայր: Եւ նա ասէ.
22 զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ: Իբրեւ
լուաւ զայն Յիսուս՝ ասէ ցնա. միւս եւս պակաս
է քեզ. զամենայն ինչ զոր ունիս, վաճառեա եւ
տուր աղքատաց, եւ ունիցիս գանձս յերկինս. եւ եկ
23 զկնի իմ: Նա իբրեւ լուաւ զայս՝ տրտմեցաւ. քանզի
24 էր մեծատուն յոյժ: Իբրեւ ետես զնա Յիսուս տրտ-
մեալ, ասէ. ո՜րպէս դժուարաւ որ ինչս ունիցին՝ մտա-
25 նիցեն յարքայութիւն Աստուծոյ: Դիւրագոյն իցէ
մալխոյ ընդ ծակ ասղան անցանել, քան մեծատան
26 յարքայութիւն Աստուծոյ մտանել: Եւ որ լուանն՝
27 ասէին. եւ ո՞ կարիցէ ապրել: Եւ նա ասէ. անհնարինք
առ ի մարդկանէ, հնարաւորք են յԱստուծոյ: Եւ ասէ
28 Պետրոս. ահաւասիկ մեք թողաք զամենայն ինչ զմեր,
29 եւ եկաք զկնի քո: Եւ նա ասէ ցնոսա. ամէն ասեմ
30 ձեզ, Եթէ ոչ ոք է՝ որ եթող զտունս կամ զծնողս կամ
զեղբարս կամ զկին կամ զորդիս՝ վասն արքայութեան
Աստուծոյ, եթէ ոչ առնուցու բազմապատիկ ի ժա-
մանակի յայսմիկ. եւ յաշխարհին որ գալոց է՝ զկեան-
31 սըն յաւիտենականս ժառանգեսցէ: Եւ առեալ զեր-

կոտասանսն առանձինն՝ ասէ ցնոսա. աՀաւասիկ ելա-
նեմք յԵրուսաղէմ, եւ կատարեսցին ամենայն գրեալ-
քըն մարգարէիւք վասն Որդւոյ մարդոյ: Զի մատնեսցի 32
Հեթանոսաց եւ կատակեսցի. Եւ Հարկանիցեն զնա 33
եւ սպանանիցեն զնա, եւ յերիր աւուր յարիցէ: Եւ 34
նոքա ոչ ինչ իմացան յայնցանէ, այլ էր բանն ծած-
կեալ ի նոցանէ, եւ ոչ գիտէին զասացեալսն:

Ձի. Եւ եղեւ ի մօտենալ նորա յԵրիքով, կոյր ոմն 35
նստէր առ ճանապարՀաւն մուրացիկ: Իբրեւ լուաւ 36
զանցանել ժողովրդեանն, Հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ
այն: Եւ պատմեցին նմա, եթէ Յիսուս Նազովրեցի ան- 37
ցանէ: Աղաղակեաց եւ ասէ. Յիսուս որդի Դաւթի՝ 38
ողորմեաց ինձ: Եւ որ առաջին երթային՝ սաստէին 39
նմա զի լռեսցէ. եւ նա եւս առաւել աղաղակէր, որ-
դի Դաւթի ողորմեաց ինձ: Զտեղի առ Յիսուս, 40
եւ Հրամայեաց ածել զնա առ ինքն. եւ իբրեւ մերձ
եղեւ առ նա, եՀարց զնա եւ ասէ. Զի՞նչ կամիս դու՝ 41
զի արարից քեզ. եւ նա ասէ. տէր՝ զի բացցին աչք
իմ՝ եւ տեսից: Եւ Յիսուս ասէ ցնա. Հայեաց, Հաւ- 42
ատք քո կեցուցին զքեզ: Եւ առժամայն ետես, եւ 43
երթայր զՀետ նորա եւ փառաւոր առնէր զԱստուած.
եւ ամենայն ժողովրդեանն տեսեալ, տային օրՀնու-
թիւն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Եւ մտեալ շրջէր ընդ Երիքով: Եւ աՀա 1
այր մի անուն կոչեցեալ Զակքէոս, եւ նա էր մաք- 2
սապետ, եւ ինքն մեծատուն. Եւ խնդրէր տեսանել՝ 3
եթէ ո՞վ իցէ Յիսուս, եւ ոչ կարէր ի բազմու-
թենէն, զի կարճ էր Հասակաւ: Եւ ընթացեալ 4
յառաջս, ել ի ժանտաթզենին՝ զի տեսանիցէ զնա.
քանզի ընդ այն իսկ անցանելոց էր: Իբրեւ եկն ի տե- 5
ղին, Հայեցաւ ի վեր Յիսուս՝ եւ ասէ ցնա. Զակքէ՝
փութա էջ այտի, զի այսօր ի տան քում արժան է

6 ինձ ագանել : Փութացաւ եւ էջ՝ եւ ընկալաւ զնա
7 ուրախութեամբ : Իբրեւ տեսին ամենեքեան, տրտնջէին
եւ ասէին՝ թէ առ առն մեղաւորի եմուտ լուծանել :
8 Եկն՝ եկաց Զակքէոս՝ եւ ասէ ցՏէր. Տէ՛ր՝ ահա զկէս
ընչից իմոց տաց աղքատաց. եւ եթէ զոք զրկեցի,
9 հատուցից չորեքկին : Եւ ասէ ցնա Յիսուս. այսօր
եղեւ փրկութիւն տանս այսմիկ. քանզի եւ սա որդի
10 Աբրահամու է: Զի եկն Որդի մարդոյ խնդրել եւ կե-
11 ցուցանել զկորուսեալն: Եւ մինչդեռ նոքա զայն լսէին,
յաւել առակ մի եւ ասէ, վասն մերձենալոյ նորա յԵ-
րուսաղէմ, եւ համարելոյ նոցա եթէ առժամայն յայտ-
12 նելոց է արքայութիւն Աստուծոյ: Ասէ. այր ոմն ազնու-
ական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորու-
13 թիւն, եւ դառնալ: Եւ կոչեցեալ զծառայս իւր՝ ետ
նոցա տասն մնաս, եւ ասէ ցնոսա. յարդեցէք զայդ՝
14 մինչեւ եկից: Եւ քաղաքացիքն նորա ատէին զնա,
առաքեցին հրեշտակս զկնի նորա եւ ասեն, թէ ոչ
15 կամիմք թագաւորել դմա ի վերայ մեր: Եւ եղեւ
դառնալ նմա՝ առեալ զթագաւորութիւն, եւ կո-
չեալ զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գի-
16 տասցէ թէ ո՛ զինչ շահեցաւ: Եկն առաջինն եւ ասէ.
17 տէր մնասն քո՝ տասն մնաս արար: Եւ ասէ ցնա. ազ-
նիւ ծառայ եւ բարի, զի ի փոքու հաւատարիմ
եղեր, լեջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քա-
18 ղաքի: Եկն երկրորդն եւ ասէ. մնասն քո արար հինգ
19 մնաս: Ասէ եւ ցնա. եւ դու լեջիր ի վերայ հինգ քա-
20 ղաքաց: Եկն միւսն եւ ասէ. տէր՝ ահա մնասն քո՝
21 զոր ունէի ծրարեալ ի վարշամակի. Երկնչէի ի քէն,
զի այր ստամբակ ես. բառնաս՝ զոր ոչ եդիր, եւ հըն-
22 ձես՝ զոր ոչ սերմանեցեր: Եւ ասէ ցնա. ի բերանոյ
քումմէ դատեցայց զքեզ ծառայ անհաւատ. գիտէիր
զի ես այր մի ստամբակ եմ. բառնամ՝ զոր ոչ եդի,
23 եւ հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի. Եւ ընդէ՞ր ոչ ետուր
զարծաթն իմ ի սեղանաւորս, եւ եկեալ ես տոկո-

սեօք պահանջէի: Եւ ասէ ցպատաւորսն. առէք ի 24
դմանէ զմնասն. եւ տարայք տուք այնմ՝ որ ունիցի
զտասն մնասն: Եւ ասեն ցնա. տէր՝ ունի տասն մնաս: 25
Ասեմ ձեզ. եթէ ամենայնի որ ունիցի, տացի. եւ 26
յայնմանէ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի
նմանէ: Բայց զթշնամիսն իմ զայնոսիկ, որ ոչն կամէ- 27
ին զիս թագաւորել ի վերայ նոցա, ածէք այսր եւ
սպանէք առաջի իմ: Եւ իբրեւ զայս ասաց, գնաց 28
յառաջ ելանել յԵրուսաղէմ:

ԻԿ. Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ ի Բեթփագէ 29
եւ ի Բեթանիա մօտ ի լեառն՝ որ կոչի Ձիթենեաց,
առաքեաց երկուս յաշակերտացն իւրոց՝ եւ ասէ. Եր- 30
թայք դուք ի գեօղն՝ որ ընդդէմ մեր կայ, յոր իբրեւ
մտանէք՝ գտանիցէք յաւանակ կապեալ, յորում ոք
ի մարդկանէ երբէք ոչ նստաւ. լուծէք զնա եւ ածէք:
Եւ եթէ ոք հարցանիցէ զձեզ՝ թէ ընդէ՞ր լուծանէք, 31
այսպէս ասասջիք ցնա, թէ Տեառն իւրում պիտոյ է:
Իբրեւ չոգան որ առաքեցանն, գտին որպէս ասաց 32
ցնոսա, կայր յաւանակն: Եւ մինչդեռ լուծանէին 33
զյաւանակն, ասեն տեարքն նորա ցնոսա. զի՞ լուծա-
նէք զյաւանակդ: Եւ նոքա ասեն. Տեառն իւրում 34
պիտոյ է: Եւ ածին զնա առ Յիսուս. եւ արկին զնո- 35
վաւ հանդերձս, եւ հեծուցին զՅիսուս: Եւ մինչդեռ 36
երթայր, զհանդերձս իւրեանց տարածանէին զճանա-
պարհաւն: Եւ իբրեւ այն ինչ մերձ եղեւ ի զառ ի 37
վայր լերինն Ձիթենեաց, սկսաւ ամենայն բազմութիւն
աշակերտացն ուրախութեամբ օրհնել զԱստուած ի
ձայն մեծ վասն ամենայն զօրութեանցն եղելոց՝ զոր
տեսին: Եւ ասէին. օրհնեալ որ գայ թագաւորդ 38
յանուն Տեառն. խաղաղութիւն յերկինս, եւ փառք
ի բարձունս: Եւ ոմանք ի փարիսեցւոցն յամբոխէ 39
անտի ասեն ցնա. վարդապետ՝ սաստեա աշակերտացդ
քոց: Պատասխանի ետ եւ ասէ. ասեմ ձեզ՝ զի 40
եթէ դոքա լռեսցեն, քարինքդ աղաղակեսցեն: Եւ ի- 41

բրեւ մերձեցաւ, տեսեալ զքաղաքն՝ ելաց ի վերայ
42 նորա, եւ ասէ. Եթէ գիտէիր դու գոնէ յաւուրս
յայսմիկ զխաղաղութիւն քո. բայց այժմ ծածկեցաւ
43 յերեսաց քոց: Զի եկեսցեն աւուրք ի վերայ քո, եւ
պատեսցեն զքեւ թշնամիք քո պատնէշ. եւ պաշա-
րեսցեն զքեզ, եւ նեղեսցեն զքեզ յամենայն կող-
44 մանց. Եւ յատակեսցեն զքեզ, եւ զորդիս քո ի քեզ.
եւ ոչ թողուցուն քար ի քարի վերայ յամենայնի ի
քեզ. փոխանակ զի ոչ ծաներ զժամանակ այցելու-
45 թեան քո: Եւ մտեալ ի տաճարն սկսաւ հանել
զաղաւնեվաճառսն, եւ զգնօղս. եւ զսեղանս հատա-
46 վաճառացն ցրուեաց: Եւ ասէ ցնոսա. գրեալ է՝ եւ
եղիցի տուն իմ տուն աղօթից, եւ դուք արարէք զդա
47 այրս աւազակաց: Եւ ուսուցանէր զնոսա հանապազ
ի տաճարին. իսկ քահանայապետքն եւ դպիրք եւ
գլխաւորք ժողովրդեանն խնդրէին զնա կորուսանել,
48 Եւ ոչ գտանէին՝ թէ զինչ արասցեն. զի ժողովուրդն
ամենայն կախեալ կային զնմանէ ի լսել:

ԳԼՈՒԽ Ի.

1 ԷԲ. Եւ եղեւ ի միում աւուրցն յայնցանէ, մինչ
դեռ ուսուցանէր զժողովուրդն ի տաճարի անդ՝ եւ
աւետարանէր, հասին ի վերայ քահանայապետքն եւ
2 դպիրք ծերօքն հանդերձ, Եւ ասեն ցնա. ասա մեզ՝
որո՞վ իշխանութեամբ գործես դու զայդ, կամ ո՞վ
3 է՝ որ ետ քեզ զայդ իշխանութիւն: Պատասխանի
ետ եւ ասէ ցնոսա. հարցից եւ ես ցձեզ բան մի, եւ
4 ասացէք ինձ: Մկրտութիւնն Յովհաննու յերկնի՞ց
5 էր՝ եթէ ի մարդկանէ: Եւ նոքա խորհեցան ի միտս
6 իւրեանց եւ ասեն. Եթէ ասեմք յերկնից, ասէ. իսկ
ընդէ՞ր ոչ հաւատացէք նմա. եւ եթէ ասեմք ի մարդ-
կանէ, ամենայն ժողովուրդն քարկոծ առնեն զմեզ.
զի հաստատեալ է ի միտս զՅովհաննէ, թէ մարգա-
7 րէ է: Եւ պատասխանի ետուն չգիտել թէ ուստի ի-

ցէ: Եւ Յիսուս ասէ ցնոսա. եւ ոչ ես ասեմ ձեզ, 8
որով իշխանութեամբ առնեմ զայս:
ԷԳ. Սկսաւ ասել առ ժողովուրդն՝ զառակս զայս. 9
այր մի տնկեաց այգի, եւ ետ զնա մշակաց. եւ ինքն
գնաց ի ճանապարհ ժամանակս բազումս: Եւ ի ժամու՝ 10
առաքեաց առ մշակսն ծառայ, զի ի պտղոյ այգւոյն
տայցեն նմա. եւ մշակքն գան հարին զնա, եւ արձա-
կեցին ունայն: Եւ յաւել միւս եւս ծառայ յղել. 11
նոքա եւ զնա գան հարին՝ անարգեցին, եւ առա-
քեցին ունայն: Եւ յաւել զերրորդն առաքել. նոքա 12
եւ զնա վիրաւորեցին, եւ հանին արտաքս: Ասէ տէր 13
այգւոյն. զի՞նչ արարից, առաքեցից զորդի իմ սիրե-
լի, թերեւս ի սմանէ պատկառեսցեն: Իբրեւ տեսին 14
զնա մշակքն, խորհեցան ընդ միմեանս եւ ասեն. սա
է ժառանգն, սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառան-
գութիւն: Եւ հանին արտաքս քան զայգին եւ սպա- 15
նին: Արդ՝ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն. Ո՛չ 16
ապաքէն գայցէ եւ կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, եւ
տացէ զայգին այլոց. Իբրեւ լուան՝ ասեն. քաւ՝ մի լի-
ցի: Եւ նա հայեցեալ ընդ նոսա՝ ասէ. իսկ զի՞նչ 17
իցէ այն՝ որ գրեալն է. թէ զվէմն զոր անարգեցին շի-
նողքն, նա եղեւ գլուխ անկեան: Ամենայն՝ որ ընդ- 18
հարցի ընդ վէմն ընդ այս՝ խորտակեսցի, եւ յորոյ
վերայ անկցի՝ հոսեսցէ զնա: Եւ խնդրէին դպիրքն եւ 19
քահանայապետք արկանել ի նա ձեռս ի նմին ժամու,
եւ երկեան ի ժողովրդենէն. զի գիտացին՝ թէ առ նո-
սա ասաց զառակն զայն: Եւ ապա սպասեցին, եւ ա- 20
ռաքեցին դաւաճանս կեղծաւորեալս զանձինս առ
արդարս ունել. զի ըմբռնեսցեն զնա բանիւք. առ ի
մատնել զնա պետութեան եւ իշխանութեան դատա-
ւորի: Հարցին զնա եւ ասեն. վարդապետ՝ գիտեմք եթէ 21
ուղիղ խօսիս եւ ուսուցանես, եւ ոչ առնուս ակն՝ այլ
ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցա-
նես: Արժա՞ն է մեզ կայսեր հարկս տալ՝ թէ ոչ: 22

23 Եւ նայեցեալ ընդ խորամանկութիւն նոցա, ասէ
24 ցնոսա. Ցուցէք ինձ զդահեկանն. եւ նոքա ցուցին,
եւ ասէ. զո՞յր պատկեր եւ գիր ունի. պատասխանի
25 ետուն եւ ասեն՝ զկայսեր: Եւ նա ասէ ցնոսա. արդ
երթայք տուք զկայսերն կայսեր, եւ զԱստուծոյ Աստու-
26 ծոյ: Եւ ոչ կարացին զնա ըմբռնել բանիւք առաջի
ժողովրդեանն. եւ զարմացեալ ընդ պատասխանին
նորա՝ լռեցին:

27 ԻԴ. Մատուցեալ ոմանք ի սադուկեցւոցն, որք
28 հակառակէին չլինել յարութեան, հարցին զնա՝ Եւ
ասեն. վարդապետ՝ Մովսէս գրեաց մեզ, եթէ ուրուք
եղբայր մեռանիցի, որոյ իցէ կին եւ նա անորդի իցէ,
զի առնուցու եղբայր նորա զկինն, եւ յարուսցէ զաւակ
29 եղբօր իւրում: Արդ՝ եօթն եղբարք էին. եւ առաջնոյն
30 առեալ կին՝ մեռաւ անորդի: Առ զնա եւ երկրորդն՝ մե-
31 ռաւ եւ նա անորդի: Առ զնա եւ երրորդն. նոյնպէս եւ
32 եօթանեքին. եւ ոչ թողին որդիս: Մեռաւ եւ կինն:
33 Արդ՝ ի յարութեան ո՞ւմ ի նոցանէ լինիցի կին. զի եօ-
34 թանեքին կալան զնա կին: Պատասխանի ետ նոցա
Յիսուս եւ ասէ. որդիք աշխարհիս այսորիկ կանայս
35 առնեն՝ եւ արանց լինին: Իսկ որ արժանի լինիցին
այնմ աշխարհի հասանել՝ եւ յարութեան որ ի մե-
36 ռելոց, ոչ կանայս առնեն, եւ ոչ արանց լինին: Քան-
զի եւ ոչ մեռանել եւս կարեն, զի հաւասար հրեշ-
տակաց են՝ եւ որդիք Աստուծոյ, քանզի յարութեան
37 որդիք են: Այլ զի յառնեն մեռեալք, եւ Մովսէս
գուշակեաց ի մորենւոջն, որպէս ասէ զՏեառնէ Աս-
տուծոյ Աբրահամու եւ զԱստուծոյ Սահակայ եւ
38 զԱստուծոյ Յակոբայ: Եւ Աստուած չէ մեռելոց՝ այլ
39 կենդանեաց, զի ամենեքին նմա կենդանի են: Պատաս-
խանի ետուն ոմանք ի դպրացն եւ ասեն. վարդապետ՝
40 բարւոք ասացեր: Եւ ոչ եւս ոք իշխէր հարցանել
զնա՝ եւ ոչինչ:

41 ԻԵ. Ասէ եւ առ նոսա. զիա՞րդ ասեն զՔրիստո-

սէ թէ որդի է Դաւթի. Զի ինքն Դաւիթ ասէ ի 42
գիրս սաղմոսաց. ասաց Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջ-
մէ իմմէ, Մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան 43
ոտից քոց: Իսկ արդ՝ եթէ Դաւիթ զնա Տէր կոչէ, 44
զիա՞րդ որդի նորա իցէ: Եւ լու ի լու ամենայն ժողո- 45
վրդեանն ասէ ցաշակերտսն. Զգոյշ լերուք ի դպ- 46
րացն, որ կամին պատմուճանօք շրջել, եւ սիրեն ող-
ջոյնս ի հրապարակս եւ զնախաթոռս ի ժողովուրդս
եւ զգահերէցս յընթրիս: Որ ուտեն զտունս այրեաց, 47
եւ պատճառանօք յերկարեն զաղօթսն. նոքա ընկալ-
ցին աւելի դատաստանս:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Եւ հայեցեալ ետես զմեծատունսն՝ որ արկա- 1
նէին զտուրս իւրեանց ի գանձանակն: Ետես եւ զկին 2
ոմն այրի աղքատ, որ արկ անդր երկուս լումայս: Եւ 3
ասէ. արդարեւ ասեմ ձեզ. զի այրին այն աղքատ՝
աւելի արկ քան զամենեսին: Ամենեքին նոքա ի մը- 4
թերից իւրեանց արկին յընծայսն Աստուծոյ. բայց
նա ի կարօտութենէն իւրմէ զամենայն զկեանս իւր զոր
ունէր՝ արկ:

ԻՋ. Եւ յասել ոմանց զտաճարէն, թէ գեղե- 5
ցիկ վիմօք եւ աշտարակօք զարդարեալ է, ասէ. Զայդ 6
ամենայն զոր տեսանէք, եկեսցեն աւուրք՝ յորս ոչ
թողցի այդր քար ի քարի վերայ, որ ոչ քակտեսցի:
Հարցին ցնա եւ ասեն. վարդապետ՝ ե՞րբ լինիցի այդ, 7
եւ զի՞նչ նշան իցէ՝ յորժամ այդ լինելոց իցէ: Եւ նա 8
ասէ. զգոյշ կացէք, մի խաբիցիք. զի բազումք դայ-
ցեն յանուն իմ եւ ասիցեն՝ թէ ես եմ. եւ մերձե-
ցաւ ժամանակ, մի երթայցէք զկնի նոցա: Եւ յոր- 9
ժամ լսիցէք պատերազմունս եւ խռովութիւնս՝ մի
զարհուրիցիք. զի նախ պարտ է այնմ լինել. այլ ոչ
առժամայն կատարած: Յայնժամ ասէ ցնոսա, յա- 10
րիցէ ազգ յազգի վերայ, եւ թագաւորութիւն ի թա-

11 գաւորութեան վերայ։ Եւ շարժմունք մեծամեծք.
եւ ի տեղիս տեղիս սովք եւ սրածութիւնք, եւ եղիցին
12 արհաւիրք եւ նշանք մեծամեծք յերկնից։ Բայց յա-
ռաջ քան զայս ամենայն, մխեսցեն զձեռս իւրեանց
ի ձեզ՝ եւ հալածեսցեն. մատնեսցեն ի ժողովուրդս
եւ ի բանտս, եւ տանիցին առաջի դատաւորաց եւ
13 թագաւորաց վասն անուան իմոյ. Եւ լինիցի ձեզ այն
14 ի վկայութիւն։ Արդ՝ դիք ի սիրտս ձեր՝ մի յառաջա-
15 գոյն կրթել տալոյ պատասխանի։ Զի ես տաց ձեզ
բերան եւ իմաստութիւն, որում ոչ կարիցեն կալ
հակառակ՝ կամ տալ պատասխանի ամենայն հակա-
16 ռակորդքն ձեր։ Մատնեսջիք եւ ի ծնողաց եւ յեղ-
բարց եւ յազգականաց եւ ի բարեկամաց, եւ սպանա-
17 նիցեն ի ձէնջ։ Եւ եղիջիք ատեցեալ յամենեցունց
18 վասն անուան իմոյ. Եւ մազ մի ի գլխոյ ձերմէ ոչ
19 կորիցէ։ Եւ համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս
20 ձեր։ Այլ յորժամ տեսանիցէք շուրջ պատեալ զօ-
րօք զԵրուսաղէմ, յայնժամ գիտասջիք թէ մերձ է
21 աւեր նորա։ Յայնժամ որ ի Հրէաստանի իցեն՝ փա-
խիցեն ի լերինս, եւ որ ի միջի նորա իցեն՝ խուսես-
22 ցեն, եւ որ ի գաւառսն իցեն՝ մի մտցեն ի նա. Զի
աւուրք վրէժխնդրութեան են այնոքիկ՝ առ ի կատա-
23 րելոյ ամենայն գրելոց։ Բայց վայ իցէ յղեաց եւ
ստնտուաց յաւուրսն յայնոսիկ. զի եղիցի տագնապ
մեծ ի վերայ երկրի, եւ բարկութիւն ժողովրդեանն
24 այնմիկ։ Եւ անկցին ի սուր սուսերի, եւ գերեսցին
յամենայն հեթանոսս. եւ Երուսաղէմ եղիցի կոխան
յազգաց՝ մինչեւ կատարեսցին ժամանակք հեթանո-
25 սաց։ Եւ եղիցին նշանք յարեգական եւ ի լուսին եւ
յաստեղս. եւ յերկրի տագնապ հեթանոսաց՝ յահեղ
26 բարբառոյ իբրեւ ծովու եւ խռովութեան, Յելանե-
լոյ ոգւոց մարդկան յերկիւղէ եւ ի կարծեաց եկելոց
ի վերայ տիեզերաց. զի զօրութիւնք երկնից շարժես-
27 ցին։ Եւ յայնժամ տեսցեն զՈրդի մարդոյ եկեալ՝ ամ-

պովք զօրութեամբ եւ փառօք բազմօք: Եւ յորժամ 28
սկսանիցի այս լինել, ամբարձջիք եւ բարձրացուսջիք
զգլուխս ձեր. զի մերձ է փրկութիւն ձեր: Եւ ասաց 29
առակ մի նոցա. տեսէք զթզենին եւ զամենայն ծառ.
Յորժամ ցուցանիցեն զպտուղ իւրեանց, տեսանէք՝ 30
եւ ի նոցանէ ճանաչէք եթէ մերձ է ամառն: Նոյնպէս 31
եւ դուք՝ յորժամ տեսանիցէք զայս ամենայն եղեալ՝
գիտասջիք թէ մերձ է արքայութիւն Աստուծոյ: Ա- 32
մէն ասեմ ձեզ. թէ ոչ անցցէ ազգս այս, մինչեւ այս
ամենայն եղիցի: Երկինք եւ երկիր անցցեն, եւ բանք 33
իմ ոչ անցանիցեն: Զգոյշ լերուք անձանց, գուցէ 34
ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ եւ արբե-
ցութեամբ եւ հոգովք աշխարհականօք, եւ յանկար-
ծակի հասանիցէ ի վերայ ձեր օրն այն. Զի իբրեւ 35
զորոգայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն, որ բնա-
կեալ են ընդ ամենայն երեսս երկրի: Արթուն կացէք 36
այսուհետեւ, յամենայն ժամ աղօթս արարէք. զի
արժանի լինիջիք զերծանել յայնմ յամենայնէ որ լի-
նելոց է, եւ կալ առաջի Որդւոյ մարդոյ: Եւ ի տուէ 37
ի տաճարին ուսուցանէր, եւ զգիշերն ելեալ ագանէր
ի լերինն՝ որ կոչէր Ձիթենեաց: Եւ ամենայն ժողո- 38
վուրդն կանխէր ընդ առաւօտն առ նա ի տաճարն
լսել ի նմանէ:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ԻԲ. Մերձեցաւ տօն բաղարջակերացն՝ որ կոչէր 1
Պասքա. Եւ խնդրէին քահանայապետքն եւ դպիրք՝ 2
թէ որպէս սպանանիցեն զնա, բայց երկնչէին ի ժո-
ղովրդենէ անտի: Եմուտ սատանայ ի Յուդա 3
կոչեցեալն Իսկարիովտացի, որ էր ի թուոյ երկոտա-
սանիցն: Չոգաւ եդ բանս ընդ քահանայապետսն՝ 4
եւ ընդ դպիրս՝ եւ ընդ իշխանս ժողովրդեանն, զի
մատնեսցէ զնա նոցա: Եւ խնդացին եւ խոստացան 5
տալ նմա արծաթ: Եւ յանձն առ, եւ խնդրէր պա- 6

7 րապ մատնել զնա նոցա մեկուսի յամբոխէն: Եկն
օր բաղարջակերացն, յորում օրէն էր զենուլ զպա-
8 սեքն: Եւ առաքեաց զՊետրոս, եւ զՅովհաննէս՝
եւ ասէ. երթայք պատրաստեցէք մեզ զպասեքն՝ զի
9 կերիցուք: Եւ նոքա ասեն. ո՞ւր կամիս զի պատրաս-
10 տեսցուք: Եւ ասէ ցնոսա. ահա իբրեւ մտանիցէք
ի քաղաքն, պատահեսցէ ձեզ այր մի բարձեալ սա-
փոր ջրոյ. երթիջիք զհետ նորա ի տունն, յոր մտա-
11 նիցէ. Եւ ասասջիք ցտանուտէր տանն. վարդապետ ա-
սէ քեզ. ո՞ւր են վանքն իմ, յորում զպասեքն ուտի-
12 ցեմ աշակերտօքս հանդերձ: Եւ նա ցուցցէ ձեզ
վերնատուն մի մեծ զարդարեալ, եւ անդ պատրաստես-
13 ջիք: Եւ գնացեալ գտին որպէս եւ ասացն նոցա.
14 եւ պատրաստեցին զպասեքն: Եւ իբրեւ ժամ եղեւ՝
15 բազմեցաւ, եւ երկոտասան առաքեալքն ընդ նմա. Եւ
ասէ ցնոսա. ցանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել
16 ընդ ձեզ՝ մինչչեւ չարչարեալ իցեմ: Բայց ասեմ ձեզ,
թէ ոչ եւս կերայց ի սմանէ՝ մինչեւ լցցի յարքայու-
17 թեանն Աստուծոյ: Եւ ընկալեալ բաժակ՝ գոհացաւ եւ
18 ասէ. առէք զայդ՝ եւ բաժանեցէք ի ձեզ: Ասեմ ձեզ՝
թէ յայսմ հետէ ոչ արբից ի բերոյ որթոյ՝ մինչեւ
19 եկեսցէ արքայութիւն Աստուծոյ: Եւ առեալ հաց գո-
հացաւ՝ եբեկ եւ ետ նոցա եւ ասէ. այս է մարմին
իմ, որ վասն բազմաց տուեալ. զայս արասջիք առ
20 իմոյ յիշատակի: Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթ-
րեացն առ՝ եւ ասէ. այս բաժակ է նոր ուխտ իմով
21 արեամբ վասն ձեր հեղլոյ: Բայց ահաւասիկ ձեռն մատ-
22 նչի իմոյ ընդ իս ի սեղանս: Եւ որդի մարդոյ ըստ
սահմանելոյն երթայ, բայց վայ մարդոյն այնմիկ՝ յոյր
23 ձեռն մատնիցի: Եւ նոքա սկսան խնդրել ընդ միմեա-
24 նս թէ ո՞վ է ի նոցանէ՝ որ զայն գործելոց իցէ: Եւ եղեւ
հակառակութիւն ի մէջ նոցա թէ ո՛ ի նոցանէ հա-
25 մարիցի մեծ: Եւ նա ասէ ցնոսա. թագաւորք ազ-
գաց տիրեն նոցա, եւ որ իշխեն նոցա բարերարք կո-

չէն. Այլ դուք ոչ այնպէս. այլ որ մեծն է ի ձեզ՝ 26
եղիցի իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն իբրեւ զսպա-
սաւորն: Ո՞վ է մեծ, բազմակա՞նն՝ եթէ սպասաւորն. 27
ո՞չ ապաքէն բազմականն. բայց ես եմ ի միջի ձերում
իբրեւ զսպասաւոր: Եւ դուք էք՝ որ ցանգ կայիք ընդ 28
իս ի փորձութիւնս իմ. Եւ ես ուխտեմ ձեզ՝ որպէս 29
եւ Հայր իմ ուխտեաց ինձ՝ զարքայութիւն. Զի ու- 30
տիջէք եւ ըմպիջէք ի սեղան իմ յարքայութեան ի-
մում, եւ նստջիք յերկոտասան աթոռ՝ դատել զեր-
կոտասան ազգ Իսրայելի:

ՎԵՐՋ. Եւ ասէ Տէր. Սիմոն Սիմոն՝ ահա սատա- 31
նայ խնդրեաց զքեզ խարբալել իբրեւ զցորեան. Այլ 32
ես աղաչեցի վասն քո՝ զի մի պակասեսցէ հաւատք քո.
եւ դու երբեմն դարձցիս՝ եւ հաստատեսցես զեղբարս
քո: Եւ նա ասէ ցնա. Տէր՝ ընդ քեզ պատրաստ 33
եմ եւ ի բանտ եւ ի մահ երթալ: Եւ նա ասէ 34
ցնա, ասեմ քեզ. Պետրէ, չիցէ այսօր հաւու խօ-
սեալ՝ մինչեւ երիցս ուրասցիս զիս չգիտել: Եւ ասէ 35
ցնոսա. յորժամ առաքեցի զձեզ առանց քսակի եւ
մախաղի եւ կօշկաց, միթէ կարօտացա՞յք իմիք: Եւ 36
նոքա ասեն, եւ ոչ իմիք. ապա ասէ. այլ այժմ որ
ունիցի քսակ՝ բարձցէ, նոյնպէս եւ մախաղ. եւ որ
ոչն ունիցի, վաճառեսցէ զձորձս իւր՝ եւ գնեսցէ իւր
սուսեր: Բայց ասեմ ձեզ. զի այս եւս որ գրեալ է՝ 37
պարտ է զի կատարեսցի յիս, թէ ընդ անօրէնս համա-
մարեցաւ. զի որ վասն իմ ինչ է՝ վճարեալ է: Եւ 38
նոքա ասեն. Տէր՝ ահաւասիկ են աստ երկու սուրք.
եւ ասէ ցնոսա. բաւական են: Եւ ելեալ գնաց ըստ 39
սովորութեան ի լեառն ձիթենեաց. գնացին զհետ նո-
րա եւ աշակերտքն: Իբրեւ եհաս ի տեղին՝ ասէ ցնո- 40
սա յաղօթս կացէք չմտանել ի փորձութիւն: Եւ 41
ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ քարընկէց մի, եդ
ծունր՝ կայր յաղօթս, Եւ ասէր. Հայր՝ եթէ կամիս անցո 42
զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լի-

43 ցին։ Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից՝ եւ զօրացու-
ցանէր զնա. եւ էր ի տագնապի, եւ մտադիւրութեամբ
44 եւս կայր յաղօթս։ Եւ հոսէր ի նմանէ քրտունք
իբրեւ զկայլակս արեան՝ որոտն որոտն, հեղեալ յեր-
45 կիր։ Եւ յարուցեալ յաղօթից՝ եկն առ աշակերտ-
46 սն, եւ եգիտ զնոսա ի քուն ի տրտմութենէն. Եւ
ասէ ցնոսա. զի՞ ննջէք, արիք կացէք յաղօթս՝ զի մի
47 մտանիցէք ի փորձութիւն։ Եւ մինչ դեռ խօսէր,
ահաւասիկ ամբոխ. եւ որ կոչէրն Յուդա՝ մի յերկո-
տասանից՝ առաջնորդէր նոցա։ Իբրեւ մերձեցաւ առ
Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ
էր նոցա, թէ ընդ որում ես համբուրեցից, նա է՝
48 զնա ունիցիք։ Ասէ ցնա Յիսուս. Յուդա՝ համբու-
49 րելո՞վ մատնես զՈրդի մարդոյ։ Իբրեւ տեսին որ զնո-
վաւն էին՝ որ ինչ եղեւն, ասեն ցնա. Տէր՝ հարցուք
50 զնոսա սրով։ Եւ եհար մի ոմն ի նոցանէ զքահանայա-
պետին ծառայ, եւ ի բաց եհան զաջոյ ունկն նորա։
51 Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. թոյլ տուք մին-
չեւ ցայդ վայր. եւ մատուցեալ յունկնն՝ բժշկեաց
52 զնա։ Եւ ասէ ցեկեալսն ի վերայ նորա՝ ցքահանայա-
պետսն եւ ցիշխանս տաճարին եւ ցծերսն. իբրեւ ի
53 վերայ աւազակի ելէք սուսերօք եւ բրօք։ Հանապազ
ընդ ձեզ էի ի տաճարին, եւ ոչ ձգեցէք ձեռս յիս.
այլ այս է ձեր ժամ, եւ իշխանութիւն խաւարի։
54 Եւ կալեալ զնա՝ ածին եւ մուծին ի տուն քահա-
նայապետին. եւ Պետրոս երթայր զհետ նորա հեռա-
55 գոյն։ Իբրեւ լուցին կրակ ի մէջ գաւթին՝ եւ նստան
56 շուրջ, նստաւ եւ Պետրոս ի մէջ նոցա։ Ետես զնա
աղախին ոմն՝ զի նստէր առ լոյսն, հայեցաւ ընդ նոսա
57 եւ ասէ. եւ սա ընդ նոսա էր՝ որ ընդ նմայն էին։ Իսկ
Պետրոս ուրացաւ եւ ասէ. ոչ գիտեմ զնա՝ կին դու։
58 Եւ յետ սակաւ միոյ այլ ոմն ետես զնա, եւ ասէ. եւ
դու ի նոցանէ ես. եւ Պետրոս ասէ. այր դու՝ չեմ ի
59 նոցանէ։ Եւ իբրեւ ժամ մի անց ի վերայ, այլ ոմն

վիճէր եւ ասէր. ստոյգ եւ սա ընդ նմա էր, քանզի
Գալիլեացի է: Ասէ Պետրոս. այր դու՝ չգիտեմ զինչ 60
խօսիս. եւ առժամայն մինչ դեռ նա զայն ասէր,
խօսեցաւ հաւ: Դարձաւ Տէր՝ եւ հայեցաւ ի Պետ- 61
րոս. եւ յիշեաց Պետրոս զբանն Տեառն՝ զոր ասաց
ցնա. մինչչեւ հաւու խօսեալ իցէ, երիցս ուրասցիս՝
չգիտել զիս: Եւ ելեալ արտաքս՝ ելաց դառնապէս: 62
Եւ արքն, որ պահէին զնա, այպն առնէին զնովաւ, 63
եւ հարկանէին: Ծածկէին զերեսս նորա եւ տանջէին. 64
եւ հարցանէին ցնա եւ ասէին. մարգարէաց՝ ո՞վ է որ
եհարն զքեզ: Եւ այլ բազում ինչ հայհոյութեամբ 65
խօսէին ի նա:

Եւ իբրեւ այգ եղեւ, ժողովեցաւ ծերակոյտ ժո- 66
ղովրդեանն՝ քահանայապետքն եւ դպիրք, եւ հանին
ածին զնա յատեանն իւրեանց՝ եւ ասեն, եթէ դու
ես Քրիստոսն, ասա մեզ: Ասէ ցնոսա. եթէ ասացից 67
ձեզ, սակայն ոչ հաւատայք. Եւ եթէ հարցից ինչ 68
զձեզ, չտայք ինձ պատասխանի՝ կամ արձակիցէք:
Բայց յայսմ հետէ նստցի Որդի մարդոյ ընդ աջմէ 69
զօրութեան Աստուծոյ: Եւ ասեն ամենեքին. ուրեմն 70
դու ես որդին Աստուծոյ. եւ նա ասէ ցնոսա. դուք
ասէք, թէ ես եմ: Եւ նոքա ասեն. զի՞նչ եւս պի- 71
տոյ է մեզ վկայութիւն, զի մեզէն իսկ լուաք ի բերա-
նոյ դորա:

ԳԼՈՒԽ ԻԳ.

Եւ յարուցեալ ամենայն բազմութիւն նոցա, 1
ածին զնա առ Պիղատոս: Եւ սկսան չարախօս լինել 2
զնմանէ եւ ասել. գտաք զսա՝ զի թիւրէր զազգս մեր,
եւ արգելոյր ի տալոյ հարկս կայսեր, եւ ասէր զանձնէ՝
եթէ Քրիստոսն իցէ թագաւոր: Իսկ Պիղատոս եհարց 3
զնա եւ ասէ. դո՞ւ ես թագաւորն հրէից. Նա պա-
տասխանի ետ նմա եւ ասէ. դու ասացեր: Ասէ Պի- 4
ղատոս ցքահանայապետսն եւ ցժողովուրդսն. չգտա-

5 նեմ ինչ վնաս յառնս յայսմիկ։ Եւ նոքա պնդէին եւ
ասէին, եթէ խռովէ զժողովուրդս, ուսուցանէ ընդ
ամենայն Հրէաստան՝ սկսեալ ի Գալիլեէ մինչեւ
6 ցայսր։ Իսկ Պիղատոս իբրեւ լուաւ զԳալիլեէ, եհարց
7 եթէ Գալիլեացի՞ իցէ այրն։ Եւ իբրեւ գիտաց թէ
յիշխանութենէն Հերովդի է, ետ տանել զնա առ
Հերովդէս. քանզի եւ նա յԵրուսաղէմ էր յաւուր-
8 սըն յայնոսիկ։ Եւ Հերովդէս իբրեւ ետես զՅիսուս,
ուրախ եղեւ յոյժ, զի ցանկայր ի բազում ժամանա-
կաց տեսանել զնա. քանզի լսէր բազում անգամ
զնմանէ, եւ ակն ունէր նշան ինչ լեալ՝ տեսանել ի
9 նմանէ։ Հարցանէր զնա բանիւք բազմօք. եւ նա ոչինչ
10 ետ նմա պատասխանի։ Կային քահանայապետքն եւ
11 դպիրք՝ եւ պնդագոյնս չարախօսէին զնմանէ։ Արհա-
մարհեաց զնա եւ Հերովդէս հանդերձ իւրովք զօրա-
կանօքն, եւ այպն արարեալ, արկ զնովաւ հանդերձս
12 սպիտակս, եւ ետ տանել անդրէն առ Պիղատոս։ Եւ
եղեն բարեկամք Հերովդէս եւ Պիղատոս յաւուր
յայնմիկ. քանզի յառաջ թշնամիք էին միմեանց։
13 Կոչեաց Պիղատոս զքահանայապետսն եւ զիշխանս եւ
14 զժողովուրդն, Եւ ասէ ցնոսա. ածէք մատուցէք ինձ
զայրս զայս իբրեւ զխոտորեցուցիչ ժողովրդեանն.
եւ ահաւասիկ առաջի ձեր դատեցայ, եւ վնաս ինչ
ոչ գտի յառնս յայսմիկ՝ զորոյ դուք չարախօսէքդ
15 զդմանէ։ Այլ եւ ոչ Հերովդէս, քանզի ետու տանել
16 զդա առ նա. եւ արդ՝ ոչինչ մահու արժանի է գոր-
17 ծեալ դորա. խրատեցից զդա, եւ արձակեցից։ Զի
18 հարկ էր մի մի ըստ տօնի արձակել նոցա. Եւ նոքա ա-
ղաղակէին ամենայն բազմութեամբն՝ եւ ասէին. բարձ
19 զդա՝ եւ արձակեա մեզ զԲարաբբա. Որ էր վասն
խռովութեան իրիք եղելոյ ի քաղաքին եւ սպանու-
20 թեան մտեալ ի բանտ։ Դարձեալ Պիղատոս սկսաւ
21 խօսել. քանզի կամէր արձակել զՅիսուս։ Եւ նոքա
անդրէն աղաղակէին եւ ասէին. ի խաչ հան զդա։

Եւ նա երիցս ասէ ցնոսա. զի՞նչ չար արար սա. ոչ- 22
ինչ վնաս մահու գտի ի սմա. խրատեցից զսա եւ ար-
ձակեցից: Եւ նոքա տագնապէին մեծաձայն՝ եւ խըն- 23
դրէին զնա ի խաչ հանել. եւ զօրանային բարբառք
նոցա եւ քահանայապետացն: Եւ Պիղատոս հաւա- 24
նեցաւ առնել զհայցուածս նոցա: Արձակեաց նոցա 25
զԲարաբբայն՝ զոր վասն խռովութեան եւ սպանու-
թեան արկեալ էր ի բանդ, զոր եւ խնդրէինն իսկ.
եւ զՅիսուս մատնեաց կամաց նոցա: Իբրեւ առին 26
գնացին զնա, ըմբռնեցին զոմն Սիմոն Կիւրենացի՝ որ
գայր յանդէ. եդին ի վերայ նորա զխաչն բերել զկնի
Յիսուսի: Եւ երթայր զհետ նորա բազմութիւն ժո- 27
ղովրդեանն, եւ կանանց՝ որ կոծէին եւ աշխարէին զնա:
Դարձաւ Յիսուս եւ ասէ ցնոսա. դստերք Երուսա- 28
ղեմի՝ մի լայք ի վերայ իմ, այլ լացէք ի վերայ անձանց
եւ ի վերայ որդւոց ձերոց: Զի եկեսցեն աւուրք, յորս 29
ասիցեն՝ թէ երանի ամլոց եւ որովայնից՝ որ ոչ ծնան,
եւ ստեանց՝ որ ոչ դիեցուցին: Յայնժամ սկսանիցին 30
ասել լերանց՝ թէ անկերուք ի վերայ մեր, եւ բլրոց՝
թէ ծածկեցէք զմեզ: Զի եթէ ընդ փայտ դալար 31
զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի: Ածին եւ այլ 32
երկուս չարագործս՝ սպանանել ընդ նմա: Իբրեւ չո- 33
գան ի տեղին՝ անուանեալ գագաթն, անդ հանին
զնա ի խաչ. եւ զչարագործսն զոմն ընդ աջմէ եւ զոմն
ընդ ձախմէ խաչեցին: Եւ Յիսուս ասէ. Հայր՝ թող 34
դոցա, զի ոչ գիտեն՝ զինչ գործեն: Եւ ի բաժանել
զհանդերձս նորա, արկին վիճակս: Եւ կայր ժողո- 35
վուրդն հայեցեալ. անգոսնէին զնա եւ իշխանքն հան-
դերձ նոքօք՝ եւ ասէին. զայլս ապրեցոյց, ապրեցու-
ցէ եւ զանձն՝ եթէ դա է Քրիստոս որդի Աստուծոյ
ընտրեալն: Այպն առնէին զնա եւ զինուորքն, եկեալ 36
առաջի՝ մատուցանէին նմա քացախ, Եւ ասէին. ե- 37
թէ դու ես թագաւորն Հրէից՝ փրկեա զանձն քո: Եւ 38
էր գիր գրեալ ի վերայ նորա՝ յունարէն եւ դաղմա-

տերէն եւ եբրայեցերէն գրով, եթէ սա է արքայ Հրէից:
39 Իսկ մի ոմն ի կախելոց չարագործացն հայհոյէր զնա,
եւ ասէր. ո՞չ դու ես Քրիստոսն՝ փրկեա զանձն քո
40 եւ զմեզ: Պատասխանի ետ ընկերն սաստելով նմա եւ
ասէ. չերկնչի՞ս դու յԱստուծոյ՝ զի ի նմին պատժի
41 կաս: Եւ մեք յիրաւի, զի արժանի՝ որոց գործեցաքն՝
առնումք զհատուցումն. եւ սա ապիրատ ինչ ոչ
42 գործեաց: Եւ ասէ ցՅիսուս. յիշեա զիս Տէր՝
43 յորժամ գայցես արքայութեամբ քով: Եւ ասէ ցնա
Յիսուս. ամէն ասեմ քեզ. այսօր ընդ իս իցես ի
44 դրախտին: Եւ էր իբրեւ վեցերորդ ժամ. եւ խաւար
եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցիններորդ ժամ.
45 խաւարեցաւ արեգակն: Եւ հերձաւ վարագոյր տա-
46 ճարին ընդ մէջ: Եւ կարդաց Յիսուս ի ձայն մեծ՝ եւ
ասէ. Հա՛յր՝ ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. զայս
47 իբրեւ ասաց, եհան զոգի: Եւ տեսեալ հարիւրապե-
տին՝ զոր ինչ եղեւն, փառաւոր արար զԱստուած՝
48 եւ ասէ. արդարեւ այրս այս արդար էր: Եւ ամենայն
ժողովուրդքն որ եկեալ էին, եւ տեսանէին զտեսիլն
զայն՝ եւ զգործ, բախէին զկուրծս՝ եւ դառնային:
49 Կային եւ ամենայն ծանօթքն նորա ի հեռաստանէ.
եւ կանայք որ եկեալ էին զհետ նորա ի Գալիլեէ՝
տեսանէին զայն:
50 Եւ ահա այր մի անուն Յովսէփ, որ էր նախա-
51 րար՝ այր բարեգործ եւ արդար. Սա չէր միաբանեալ
ընդ խորհուրդս եւ ընդ գործս նոցա. յԱրիմաթեայ
քաղաքէ Հրէից, որ եւ ինքն իսկ ակն ունէր արքայու-
52 թեան Աստուծոյ: Սա մատուցեալ առ Պիղատոս՝
53 խնդրեաց զմարմինն Յիսուսի: Եւ իջուցեալ զնա՝ պա-
տեաց պաստառակալաւ, եւ եդ ի կոփածոյ գերեզմանին.
54 ուր չէր բնաւ զոք եդեալ: Եւ օրն էր ուրբաթ, եւ
55 շաբաթ լուսանայր: Եւ երթային զհետ նորա կա-
նայք՝ որ եկեալ էին ընդ նմա ի Գալիլեէ. տեսին
56 զգերեզմանն, եւ որպէս եդաւ մարմինն նորա: Դար-

ձան, եւ պատրաստեցին խունկս եւ իւղս. եւ ի շա-
բաթուն հանգարտեցին վասն պատուիրանին:

ԳԼՈՒԽ ԻԴ.

Բայց ի միաշաբաթուն վաղքաջ ընդ առաւօտն 1
եկին ի գերեզմանն. բերին զխունկսն զոր պատրաստե-
եւ այլ կանայք ընդ նոսա: Եւ գտին զվէմն թաւալե- 2
ցուցեալ ի գերեզմանէ անտի: Եւ մտեալ ի ներքս՝ 3
ոչ գտին զմարմինն Տեառն Յիսուսի: Եւ եղեւ ընդ 4
հիանալն նոցա վասն այնորիկ, եւ ահա արք երկու հա-
սին առ նոսա ի հանդերձս լուսաւորս: Եւ իբրեւ զահի 5
հարան. եւ խոնարհեցուցին զերեսս իւրեանց յերկիր,
ասեն ցնոսա. զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս:
Չէ աստ՝ այլ յարեաւ. յիշեցէք՝ որպէս խօսեցաւ 6
ընդ ձեզ մինչ էրն ի Գալիլեա, Եւ ասէր՝ թէ պարտ 7
է Որդւոյ մարդոյ մատնել ի ձեռս մարդոց մեղաւո-
րաց, եւ ի խաչ ելանել՝ եւ յերրորդ աւուր յառնել:
Եւ յիշեցին զբանսն նորա: Եւ դարձան պատմեցին 8
զայս ամենայն մետասանիցն, եւ այլոցն ամենեցուն: 9
Եւ էին Մարիամ Մագդաղենացի եւ Յովհաննա եւ 10
Մարիամ Յակոբեայ, եւ այլք ընդ նոսա՝ որ պատմե-
ցին զայս առաքելոցն: Եւ երեւեցան առաջի նոցա 11
շաղփաղփութիւն բանքն նոցա՝ եւ չհաւատային նոցա:
Բայց Պետրոս յարուցեալ ընթացաւ ի գերեզմանն, 12
եւ հայեցեալ տեսանէ զկտաւսն լոկ՝ զի կային, եւ
գնաց՝ ընդ միտս զարմացեալ, թէ զինչ եղեւ:
Եւ ահա երկուք ի նոցանէ երթային ի նմին 13
աւուր ի գեօղ մի, որ հեռի էր յԵրուսաղեմէ հարիւր
եւ վաթսուն ասպարիսաւ. եւ էր անուն նորա Եմ-
մաւուս: Եւ նոքա խօսէին ընդ միմեանս վասն ամե- 14
նայն անցիցն անցելոց: Եւ եղեւ ընդ խօսելն նոցա եւ 15
ընդ վիճելն՝ եւ ինքն իսկ Յիսուս մերձեցաւ՝ եւ եր-
թայր ընդ նոսա. Եւ նոցա աչք կալեալ էին առ ի 16
չճանաչելոյ զնա: Եւ ասէ ցնոսա. զի՞նչ են բանքդ՝ 17

վասն որոյ վիճիքդ ընդ միմեանս՝ մինչ դեռ գնայքդ,
18 եւ տրտմեալ էք: Պատասխանի ետ մի ոմն ի նոցանէ՝
որում անուն էր Կղէովպաս, եւ ասէ ցնա. դո՞ւ միայն
կաս յԵրուսաղէմ, որ ոչ գիտացեր զինչ գործեցաւ
19 ի նմա յաւուրսս յայսոսիկ: Եւ ասէ ցնոսա, զի՞նչ. եւ
նոքա ասեն. զՅիսուսէ Նազովրեցւոյ, որ եղեւ այր
մարգարէ՝ հզօր արդեամբք եւ բանիւք առաջի Աս-
20 տուծոյ, եւ ամենայն ժողովրդեանն. Որպէս մատնեցին
զնա քահանայապետքն՝ եւ իշխանքն մեր ի դատաս-
21 տան մահու՝ եւ հանին զնա ի խաչ: Մեք ակն ունէ-
աք՝ թէ նա է որ փրկելոցն իցէ զԻսրայէլ. այլեւ հան-
դերձ այսու ամենայնիւ, այս երրորդ օր է՝ յորմէ հե-
22 տէ այն գործեցաւ: Այլեւ կանայք ոմանք ի մէնջ
զարմացուցին զմեզ. որք կանխեալ ընդ առաւօտս չո-
23 գան ի գերեզմանն, Եւ ոչ գտին զմարմին նորա. եկին
եւ ասեն, եթէ եւ տեսիլ եւս հրեշտակաց տեսին,
24 որք ասէին զնմանէ՝ թէ կենդանի է: Եւ գնացին
ոմանք ի մէնջ ի գերեզմանն, եւ գտին նոյնպէս որ-
25 պէս եւ կանայքն ասացին. բայց զնա ոչ տեսին: Եւ
նա ասէ ցնոսա. ո՜վ անմիտք եւ հեղգամիտք ի հա-
26 ւատալ յամենայնի, զոր խօսեցան մարգարէքն: Ո՞չ
զնոյն պարտ էր չարչարիլ Քրիստոսի, եւ մտանել
27 ի փառս իւր: Եւ սկսեալ ի Մովսիսէ՝ եւ յամենայն
մարգարէից, մեկնէր նոցա՝ որ ինչ յամենայն գիրս
28 գրեալ է զնմանէ: Իբրեւ մերձեցան ի գեօղն յոր եր-
թային, եւ նա պատճառէր հեռագոյն եւս ուրեք
29 երթալ: Եւ բռնադատեցին զնա՝ եւ ասեն. առ մեզ
ագիր, զի ընդ երեկս է՝ եւ տարաժամեալ է օրս, եւ
30 եմուտ ագանել անդ ընդ նոսա: Եւ եղեւ ի բազ-
մելն նորա ընդ նոսա, առեալ Յիսուս զհացն օր-
31 հնեաց, եբեկ եւ ետ նոցա: Եւ նոցա բացան աչք՝
եւ ծանեան զնա. եւ նա եղեւ ի նոցանէ աներեւոյթ:
32 Եւ ասեն ցմիմեանս. ո՞չ իսկ եւ սիրտք մեր ճմլէին ի
մեզ՝ մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն. եւ որ-

պէս բանայր մեզ զգիրս։ Եւ յարուցեալ նոյնժա- 33
մայն՝ դարձան յԵրուսաղէմ, եւ գտին ժողովեալ
զմետասանսն՝ եւ զորս ընդ նոսայն էին։ Եւ ասեն՝ 34
թէ արդարեւ յարեաւ Տէր՝ եւ երեւեցաւ Սիմոնի.
Եւ նոքա պատմէին զայն որ զճանապարհայնն, եւ թէ 35
զիարդ ետ ծանօթս նոցա ի բեկանել հացին։

Եւ մինչ դեռ զայն խօսէին, ինքն իսկ Յիսուս 36
եկաց ի մէջ նոցա՝ եւ ասէ ցնոսա. խաղաղութիւն
ընդ ձեզ. ես եմ, մի՛ երկնչիք։ Եւ զահի հարեալ 37
երկնչէին. եւ համարէին ոգի ինչ տեսանել։ Եւ ասէ 38
ցնոսա. զի՞ խռովեալ էք՝ եւ ընդէ՞ր խորհուրդք ելա-
նեն ի սիրտս ձեր։ Տեսէք զձեռս իմ եւ զոտս, զի 39
ես նոյն եմ. շօշափեցէք զիս եւ տեսէք. զի ոգի՝ մար-
մին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէք զի
ունիմ։ Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռս եւ 40
զոտս։

Եւ մինչդեռ տակաւին չհաւատային ի խնդու- 41
թենէն՝ եւ զարմացեալ էին, ասէ ցնոսա. ունի՞ք ինչ
կերակուր աստ։ Եւ նոքա ետուն նմա ձկան խորովելոյ 42
մասն, եւ խորիսխ մեղու։ Եւ առ՝ եկեր առաջի նո- 43
ցա, եւ զմնացորդսն ետ նոցա։ Եւ ասէ ցնոսա. այս 44
բանք են՝ զոր խօսեցայ ընդ ձեզ, մինչ առ ձեզն էի,
թէ պարտ է լնուլ ամենայն գրելոցն յօրէնսն Մով-
սեսի եւ ի մարգարէս եւ ի սաղմոսսն վասն իմ։ Յայն- 45
ժամ եբաց զմիտս նոցա իմանալ զգիրս։ Եւ ասէ 46
ցնոսա, թէ այսպէս պարտ էր չարչարել Քրիստոսի,
եւ յառնել ի մեռելոց յաւուր երրորդի. Եւ քարո- 47
զել յանուն նորա ապաշխարութիւն եւ թողութիւն
մեղաց յամենայն ազգս՝ սկսեալ յԵրուսաղեմէ. Եւ 48
դուք էք վկայք այսոցիկ։ Եւ ահա ես առաքեմ 49
զաւետիս Հօր իմոյ ի ձեզ. եւ դուք նստարուք ի
քաղաքիս յԵրուսաղէմ, մինչեւ զգենուցուք զօրու-
թիւն ի բարձանց։ Եհան զնոսա մինչեւ ի Բեթա- 50
նիա, եւ ամբարձեալ զձեռս իւր՝ օրհնեաց զնոսա։

51 Եւ եղեւ յօրհնելն նորա զնոսա, մեկնեցաւ ի նոցա-
52 նէ, եւ վերանայր յերկինս: Եւ նոցա երկիր պագեալ
նմա՝ դարձան յԵրուսաղէմ ուրախութեամբ մեծաւ:
53 Եւ՝ էին հանապազ ի տաճարին, գովէին եւ օրհնէ-
ին զԱստուած:

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՆ

Յովհաննու Աւետարանն՝ գրեալ է Յովհաննու, որ եղբայր է Յակոբայ Զեբեդեայ, որ անկաւ ի վերայ լանջացն Տեառն. նոյն սա գրեաց զաւետարանս զայս։ Եւ սկիզբն առնէ յաստուածական Բանէն. եւ զլուր մարմնոյ ծնունդն յիշատակէ յաւելն, եւ Բանն մարմին եղեւ։ Եւ յիշատակէ զկուսութիւնն Յովհաննու՝ եւ զընտրութիւն աշակերտացն. այլ եւ զնշանս եւ զարուեստս որ եղեն. եւ զկատարածն, որ մատնեցաւ Պոնտացւոյ Պիղատոսի, եւ խաչեցաւ. յորում եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս նորա, եւ ի վերայ պատմուճանի նորա վիճակ արկին. եւ մարմին նորա եդաւ ի գերեզմանի, եւ յարեաւ յերրորդ աւուր. երեւեցաւ աշակերտացն ինքն։ Յովհաննէս՝ որ եւ որդի որոտման, զվերջինն որոտալով պատմեաց մեզ։ Սա զկնի՝ ԿԳ. ամի համբառնալոյ Փրկչին գրեաց զաւետարանս իւր յԵփեսոս քաղաքի, ի խնդրոյ եկեղեցւոյն Ասիոյ՝ ի լեզու յոյն։

Յովհաննէս՝ հնազանդութիւն։

ՍԿԻԶԲՆ ԳԼԽՈՑ

ԱՒԵՏԱՐԱՆԻՆ ՈՐ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

	Գլ.	Համ.
Վասն զի առաջինն է Բանն Աստուած . .	Ա.	1
Վասն Յովհաննու վկայելոյն Բանին Աստուծոյ	Ա.	15
Վասն գալոյն առ նա գառինն Աստուծոյ .	Ա.	29
Վասն աշակերտացն առ Յիսուս ագանելոյն	Ա.	39
Վասն գտանելոյն զՄեսիայն	Ա.	41
Վասն ի Կանա հարսանեացն	Բ.	1
Վասն արտաքս հանելոյ ի տաճարէն . .	Բ.	15
Վասն Նիկոդեմոսի	Գ.	1
Վասն ի Յայենոնի մկրտելոյն	Գ.	23
Վասն խնդիր լինելոյ վասն սրբութեան . .	Գ.	25
Վասն կնոջն Սամարացւոյ	Դ.	7
Վասն Թագաւորազնին	Դ.	46
Վասն երեսուն եւ ութամեայ հիւանդին .	Ե.	5
Վասն՝ զի Հայր սիրէ զՈրդի	Ե.	20
Վասն հինգ հացին, եւ երկու ձկանն . .	Զ.	9
Վասն գնալոյն ի վերայ ծովուն	Զ.	19
Վասն մարտնչելոյն ընդ միմեանս Հրէից . .	Զ.	41
Վասն շրջելոյն Յիսուսի ի Գալիլէ, եւ խրատու եղբարցն	Է.	1
Վասն խնդրելոյն Հրէից ունել զՅիսուս .	Է.	30
Վասն ի ծնէ կուրին	Թ.	1
Վասն դնելոյն Յիսուսի զանձն ի վերայ ոչխարացն	Ժ.	15
Վասն նաւակատեացն յԵրուսաղէմ . . .	Ժ.	22
Վասն Ղազարու յարութեան	ԺԱ.	1
Վասն օծանելոյն զՏէրն	ԺԲ.	3
Վասն՝ որ ասաց Յուդա զիւղոյն . . .	ԺԲ.	5
Վասն յովանակին	ԺԲ.	14
Վասն ելելոց հեթանոսացն առ Տէր . . .	ԺԲ.	21
Վասն հատին ցորենոյ	ԺԲ.	24

Վասն Յիսուսի լոյս գալոյն յաշխարհ . . ԺԲ. 46
Վասն ընտրելոցն, եւ լուանալոյ զոտս աշա-
կերտացն . . . . ԺԳ. 11
Վասն չարչարանաց Տեառն, եւ սփոփելոյ
զաշակերտսն . . . . ԺԳ. 15
Վասն գալոյ Յուդային՝ եւ մխիթարելոյ զա-
շակերտսն . . . . ԺԳ. 26
Վասն մարդութեան Յիսուսի . . . . ԺԸ. 5
Վասն ուրացութեան Պետրոսի, եւ հաւուն
խօսելոյ . . . . ԺԸ. 25
Վասն ածելոյն զՅիսուս ի վանաց Կայիափայ ԺԸ. 28
Վասն տանելոյն զՅիսուս ի Գողգոթա . . ԺԹ. 17
Վասն աւանդելոյն Յիսուսի զհոգին . . ԺԹ. 30
Վասն խնդրելոյն զՏէրունական մարմինն . ԺԹ. 38
Վասն բերելոյն Նիկոդեմոսի զմուռս . . ԺԹ. 39
Վասն գալոյ կանանցն ի գերեզմանն . . Ի. 1
Վասն դրօքն փակելովք մտանելոյն Յիսուսի
առ աշակերտսն . . . . . . Ի. 19
Վասն զԹովմաս հաստատելոյ Տեառն . . Ի. 27
Վասն ուտելոյն ընդ նոսա, եւ հարցանելոյն
զՊետրոս . . . . ԻԱ. 15
Վասն սիրելւոյ աշակերտին, եւ գրելոյ զա-
ւետարանն . . . . ԻԱ. 24

ԱՒԵՏԱՐԱՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԲԿ. Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աս-
2 տուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ
3 առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առ-
4 անց նորա եղեւ եւ ոչինչ՝ որ ինչ եղեւն: Նովաւ
5 կեանք էր, եւ կեանքն էր լոյս մարդկան. Եւ լոյսն
ի խաւարի անդ լուսաւոր էր, եւ խաւար նմա ոչ
6 եղեւ հասու: Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ,
7 անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի վկայութիւն՝ զի
վկայեսցէ վասն լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն
8 նովաւ: Ոչ էր նա լոյսն, այլ զի վկայեսցէ վասն
9 լուսոյն: Էր լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ
10 զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ: Յաշխար-
հի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա
11 ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկա-
12 լան: Իսկ որք ընկալանն զնա, ետ նոցա իշխանու-
թիւն որդիս Աստուծոյ լինել՝ որոց հաւատասցեն
13 յանուն նորա. Ոյք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց
մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստու-
14 ծոյ ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի
մեզ. եւ տեսաք զփառս նորա՝ զփառս իբրեւ զմիա-
ծնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:
15 Յովհաննէս վկայէ վասն նորա, աղաղակեաց եւ ասէ.
սա է զորմէ ասէի, որ զկնի իմ գալոցն էր՝ առա-
16 ջի իմ եղեւ. զի նախ քան զիս էր: Զի ի լրութե-

նէ անտի նորա՝ մեք ամենեքին առաք շնորհս փո-
խանակ շնորհաց։ Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի 17
տուան. շնորհքն եւ ճշմարտութիւն ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի եղեն։

ԺԸ. Զաստուած ոչ ոք ետես երբեք, բայց 18
միածինն Որդի որ է ի ծոց Հօր՝ նա պատմեաց։
Եւ այս է վկայութիւն Յովհաննու, յորժամ առա- 19
քեցին առ նա Հրեայքն յԵրուսաղեմէ քահա-
նայս եւ ղեւտացիս, զի հարցցեն ցնա՝ թէ դու ո՞ ես։
Եւ խոստովան եղեւ, եւ ոչ ուրացաւ. խոստովան 20
եղեւ, եթէ ես ոչ եմ Քրիստոսն։ Եւ հարցին ցնա. 21
իսկ ո՞վ ես դու, Եղիա՞ ես. եւ ասէ. ոչ եմ։ Իսկ
մարգարէ՞ն ես դու. պատասխանի ետ՝ թէ ոչ։ Իսկ 22
ասա մեզ՝ դու ո՞վ ես, զի պատասխանի տացուք՝
որոց առաքեցինն զմեզ. զի՞ ասես վասն քո։ Ասէ. 23
ես՝ ձայն բարբառոյ յանապատի. ուղիղ արարէք
զճանապարհս Տեառն, որպէս ասաց Եսայի մարգա-
րէ։ Եւ որք առաքեցանն՝ ի փարիսեցւոց անտի էին։ 24
Հարցին ցնա՝ եւ ասեն. իսկ զի՞ մկրտես՝ եթէ դու 25
չես Քրիստոսն, եւ ոչ Եղիա, եւ ոչ մարգարէն։
Պատասխանի ետ նոցա Յովհաննէս՝ եւ ասէ. ես 26
մկրտեմ զձեզ ջրով. ի միջի ձերում կայ, զոր դուքն
ոչ գիտէք։ Որ զկնի իմ գալոցն է, որում չեմ ար- 27
ժանի՝ եթէ լուծից զխրացս կօշկաց նորա։ Այս ի 28
Բեթաբրայ եղեւ յայնկոյս Յորդանանու, ուր էրն
Յովհաննէս՝ եւ մկրտէր։

ԺԹ. Ի վաղիւ անդր տեսանէ զՅիսուս՝ զի գայր 29
առ նա, եւ ասէ. Ահաւասիկ գառն Աստուծոյ՝ որ
բառնայ զմեղս աշխարհի։ Սա է՝ վասն որոյ ես ասէի, 30
զկնի իմ գայ այր՝ որ առաջի իմ եղեւ, զի յառաջ
իսկ էր քան զիս։ Եւ ես ոչ գիտէի զնա. այլ զի 31
յայտնի լիցի Իսրայէլի, վասն այնորիկ եկի ես ջրով
մկրտել։ Վկայեաց Յովհաննէս եւ ասէ, թէ տե- 32
սանէի զՀոգին՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի յերկնից,

33 եւ հանգչէր ի վերայ նորա: Եւ ես ոչ գիտէի զնա.
այլ որ առաքեացն զիս մկրտել ջրով՝ նա ասաց ցիս.
յոր վերայ տեսանիցես զՀոգին, զի իջանիցէ եւ
հանգչիցի ի վերայ նորա, նա է՝ որ մկրտէ Հոգւովն
34 սրբով: Եւ ես տեսի եւ վկայեցի՝ եթէ սա է որդին
Աստուծոյ:
35 Բդ. Ի վաղիւ անդր կայր Յովհաննէս, եւ յաշա-
36 կերտաց անտի նորա երկու: Եւ հայեցեալ ընդ Յի-
սուսի զի գնայր, ասէ. ահաւասիկ Քրիստոս գառն
37 Աստուծոյ: Լուան ի նմանէ երկու աշակերտքն՝ զի խօ-
38 սէր, եւ գնացին զհետ Յիսուսի: Իբրեւ դարձաւ Յի-
սուս՝ եւ ետես զնոսա՝ զի երթային զհետ նորա, ասէ
ցնոսա. զի՞նչ խնդրէք: Նոքա ասեն ցնա. ռաբբի,
որ թարգմանեալ կոչի՝ վարդապետ, ո՞ւր են օթե-
39 վանք քո: Ասէ ցնոսա. եկայք եւ տեսէք: Եկին եւ
տեսին՝ ուր էին օթեվանք նորա. եւ առ նմա ագան
40 այն օր, զի ժամ էր իբրեւ տասներորդ: Էր Անդրէաս
եղբայր Սիմովնի վիմի, մի յերկուց անտի, որ լուանն
41 ի Յովհաննէ՝ եւ գնացին զհետ նորա: Գտանէ սա նախ
զեղբայր իւր զՍիմոն, եւ ասէ ցնա. գտաք զՄեսիայ՝
42 որ թարգմանի Քրիստոս: Սա ած զնա առ Յիսուս.
հայեցեալ ընդ նա Յիսուսի՝ ասէ. դու ես Սիմոն որ-
դի Յովնանու, դու կոչեսցիս կեփաս, որ թարգմանի
Պետրոս:
43 Բե. Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել ի Գալի-
լեա. գտանէ զՓիլիպպոս, եւ ասէ ցնա Յիսուս. եկ
44 զկնի իմ: Եւ էր Փիլիպպոս ի Բեթսայիդայ, ի քա-
45 ղաքէ Անդրեայ եւ Պետրոսի: Գտանէ Փիլիպպոս
զՆաթանայէլ, եւ ասէ ցնա. զորմէ գրեաց Մովսէս
յօրէնսն եւ մարգարէքն, գտաք զՅիսուս՝ զորդի Յով-
46 սեփայ ի Նազարեթէ: Ասէ ցնա Նաթանայէլ. իսկ ի
Նազարեթէ մարթ ի՞նչ իցէ բարւոյ ինչ լինել: Ասէ
47 ցնա Փիլիպպոս. եկ եւ տես: Իբրեւ ետես Յիսուս զՆա-
թանայէլ զի գայր առ նա, ասէ վասն նորա. ահա

արդարեւ Իսրայելացի՝ յորում նենգութիւն ոչ գոյ:
Ասէ ցնա Նաթանայէլ. ուստի՞ ճանաչես զիս: Պա- 48
տասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. մինչչեւ էր Փի-
լիպպոսի կոչեցեալ զքեզ՝ զի էիր ի ներքոյ թզենւոյն,
տեսի զքեզ: Պատասխանի ետ նմա Նաթանայէլ 49
եւ ասէ. ռաբբի՝ դու ես որդի Աստուծոյ, դու ես
թագաւորն Իսրայելի: Պատասխանի ետ նմա Յիսուս 50
եւ ասէ. փոխանակ զի ասացի քեզ՝ թէ տեսի ի ներ-
քոյ թզենւոյն, հաւատաս. մեծամեծս եւս քան զայս
տեսցես: Եւ ասէ ցնա. ամէն ամէն ասեմ ձեզ, 51
տեսանիցէք զերկինս բացեալ՝ եւ զհրեշտակս Աս-
տուծոյ՝ զի ելանիցեն եւ իջանիցեն ի վերայ որ-
դւոյ մարդոյ:

ԳԼՈՒԽ Բ.

ԲԶ. Եւ յաւուրն երրորդի հարսանիք էին ի 1
Կանա Գալիլեացւոց. եւ անդ էր մայրն Յիսու-
սի: Կոչեցաւ եւ Յիսուս եւ աշակերտքն նորա ի 2
հարսանիսն: Եւ ի պակասել գինւոյն, ասէ մայրն 3
ցՅիսուս. գինի ոչ ունին: Եւ ասէ ցնա Յիսուս. Զի՞ 4
կայ իմ եւ քո՝ կին դու, չեւ է հասեալ ժամանակ
իմ: Ասէ մայրն նորա ցսպասաւորսն. որ զինչ ասասցէ 5
ձեզ՝ արասջիք: Անդ էին թակոյկք կճեայք վեց՝ ըստ 6
սրբութեան Հրէից. տանէին մի մի ի նոցանէ մարս
երկուս կամ երիս: Ասէ ցնոսա Յիսուս. լցէք զթա- 7
կոյկսդ ջրով. եւ լցին զնոսա մինչեւ ի վեր: Եւ 8
ասէ ցնոսա. արդ՝ առէք եւ բերէք տաճարապետին.
եւ նոքա բերին: Եւ իբրեւ ճաշակեաց տաճարա- 9
պետն զջուրն գինի եղեալ, եւ ոչ գիտէր ուստի՛
իցէ, բայց սպասաւորքն գիտէին՝ որք արկին զջուրն.
խօսի ընդ փեսային տաճարապետն: Եւ ասէ. ամենայն 10
մարդ զանոյշ գինին յառաջագոյն պաշտէ, եւ յոր-
ժամ արբենան, յայնժամ զյոռին. դու պահեցեր
զանոյշ գինիդ մինչեւ ցայժմ: Զայս արար սկիզբն 11

նշանաց Յիսուս ի Կանա Գալիլեացւոց, եւ յայտնեաց
զփառս իւր. եւ հաւատացին ի նա աշակերտքն նորա։
12 Բի. Յետ այսորիկ էջ Յիսուս ի Կափառնաում,
ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր. եւ անդ լինէր ոչ
13 բազում ինչ աւուրս։ Եւ էր մերձ զատիկն
14 Հրէից, եւ ել Յիսուս յԵրուսաղէմ։ Եւ եգիտ ի տա-
ճարին՝ զի վաճառէին զարջառս եւ զոչխարս եւ զա-
15 ղաւնիս, եւ զլումայափոխսն՝ որ նստէին։ Եւ արար
խարազան չուանեայ, եւ եհան զամենեսին ի տաճա-
րէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս հատավա-
16 ճառացն ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց։ Եւ որ
զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. առէք զայդ
աստի, եւ մի՛ առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճա-
17 ռի։ Ապա յիշեցին աշակերտքն նորա, թէ գրեալ է.
18 Նախանձ տան քո կերիցէ զիս։ Պատասխանի ետուն
Հրէայքն եւ ասեն ցնա. զի՞նչ նշան ցուցանես դու
19 մեզ՝ զի զայդ առնես։ Պատասխանի ետ Յիսուս՝ եւ
ասէ ցնոսա. քակեցէք զտաճարդ զայդ, եւ զերիս ա-
20 ւուրս կանգնեցից զդա։ Ասեն ցնա Հրեայքն, զքա-
ռասուն եւ զվեց ամ շինեցաւ տաճարս այս, եւ դու զե-
21 րիս աւուրս կանգնե՞ս զդա։ Բայց նա ասէր վասն տա-
22 ճարի մարմնոյ իւրոյ։ Իսկ յորժամ յարեաւն ի մե-
ռելոց, յիշեցին աշակերտքն նորա թէ այս է՝ զոր
ասացն. եւ հաւատացին գրոյն, եւ բանին՝ զոր ասաց
Յիսուս։

23 Գի. Եւ իբրեւ էր յԵրուսաղէմ ի զատկին ի տօնի,
բազումք հաւատացին յանուն նորա. զի տեսանէին
24 զնշանսն՝ զոր առնէր։ Բայց ինքն Յիսուս ոչ հաւա-
տայր զանձն նոցա, քանզի ինքն գիտէր զամենայն։
25 Եւ զի ոչ էր պիտոյ՝ եթէ ոք վկայեսցէ վասն մարդոյ.
զի ինքն իսկ գիտէր՝ զինչ կայր ի մարդն։

ԳԼՈՒԽ Գ.

Եւ էր այր մի ի փարիսեցւոց անուն՝ Նիկո- 1
դեմոս անուն նորա՝ իշխան Հրէից: Սա եկն առ նա 2
գիշերի՝ եւ ասէ ցնա. ռաբբի՝ գիտեմք եթէ յԱս-
տուծոյ եկեալ ես վարդապետ. զի ոչ ոք կարէ զայդ
նշանսդ առնել՝ զոր դուդ առնես, եթէ ոչ Աստուած
իցէ ընդ նմա: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ 3
ցնա. ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի վերըս-
տին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ:
Ասէ ցնա Նիկոդեմոս. զիա՞րդ կարէ մարդ ծնա- 4
նել՝ որ ծերն իցէ. միթէ մարթ ի՞նչ իցէ անդրէն
յորովայն մօր իւրոյ կրկին մտանել՝ եւ ծնանել:
Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. ամէն ամէն ասեմ 5
քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ,
ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ: Զի 6
ծնեալն ի մարմնոյ՝ մարմին է, եւ ծնեալն ի Հոգւոյ՝
հոգի է: Դու մի զարմանար, թէ ասացի քեզ՝ պարտ 7
է ձեզ ծնանել վերստին: Զի հողմն ուր կամի շնչէ, 8
եւ զձայն նորա լսես. այլ ոչ գիտես՝ ուստի գայ,
կամ յո երթայ. սոյնպէս եւ ամենայն ծնեալն ի
Հոգւոյն: Պատասխանի ետ Նիկոդեմոս եւ ասէ ցնա. 9
զիա՞րդ մարթի այդմ լինել: Պատասխանի ետ Յի- 10
սուս եւ ասէ ցնա. դու ես վարդապետ Իսրայէլի՝
եւ զայդ ո՞չ գիտես: Ամէն ամէն ասեմ քեզ. զի 11
զոր ինչ գիտեմք՝ խօսիմք, եւ զոր տեսաք՝ վկայեմք.
եւ զվկայութիւն մեր ոչ ընդունիք: Իսկ արդ՝ եթէ 12
զերկրաւորս ասացի ձեզ՝ եւ ոչ հաւատայք. զիա՞րդ
եթէ զերկնաւորսն ասացից՝ հաւատայցէք:

ԳԲ. Եւ ոչ ոք ել յերկինս, եթէ ո՛չ որ էջն յերկ- 13
նից՝ Որդին մարդոյ, որ էն յերկինս: Եւ որպէս Մովսէս 14
բարձրացոյց զօձն յանապատին, նոյնպէս բարձրանալ
պարտ է Որդւոյ մարդոյ: Զի ամենայն որ հաւատայ 15
ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յաւիտենա-

16 կանս: Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ՝
մինչեւ զորդին իւր միածին ետ. զի ամենայն որ
հաւատայ ի նա՝ մի՛ կորիցէ, այլ ընկալցի զկեանս
17 յաւիտենականս: Զի ոչ առաքեաց Աստուած զոր-
դի իւր յաշխարհ՝ թէ դատեսցի զաշխարհ, այլ զի
18 փրկեսցի աշխարհ նովաւ: Որ հաւատայ ի նա, ոչ
դատապարտեսցի. եւ որ ոչ հաւատայ ի նա՝ արդէն
իսկ դատապարտեալ է. զի ոչ հաւատաց յանուն
19 միածնի որդւոյն Աստուծոյ: Եւ այս իսկ է դատաս-
տան, զի լոյս եկն յաշխարհ՝ եւ սիրեցին մարդիկ
զխաւար առաւել քան զլոյս. զի էին գործք իւրեանց
20 չարութեան: Զի ամենայն որ զչար գործէ՝ ատեայ
զլոյս. եւ ոչ գայ առ լոյսն, զի մի՛ յանդիմանեսցին
21 գործք նորա: Իսկ որ առնէ զճշմարտութիւն՝ գայ
առ լոյսն, զի յայտնի լիցին գործք նորա, թէ Աս-
տուծով գործեցան:

22 ԳԳ. Յետ այսորիկ եկն Յիսուս եւ աշակերտքն
նորա յերկիրն Հրէաստանի, եւ անդ շրջէր նոքօք հան-
23 դերձ եւ մկրտէր: Մկրտէր եւ Յովհաննէս ի Յայենովն
մերձ առ Սաղեմ, զի ջուրք բազումք էին անդ, եւ
24 գային՝ եւ մկրտէին. Զի չեւ եւս էր արկեալ զՅովհան-
25 նէս ի բանտ: Եւ եղեւ խնդիր յաշակերտացն Յովհան-
26 նու ընդ Հրէից վասն սրբութեան: Եկին առ Յովհան-
նէս եւ ասեն ցնա. ռաբբի՝ որ էրն ընդ քեզ յայնկոյս
Յորդանանու, որում դուն վկայեցեր, ահաւանիկ
27 նա մկրտէ՝ եւ ամենեքին գան առ նա: Պատասխանի
ետ Յովհաննէս՝ եւ ասէ. ոչ կարէ մարդ առնուլ
յանձնէ եւ ոչինչ՝ եթէ ոչ իցէ տուեալ նմա յեր-
28 կնից ի վերուստ: Դուք ձեզէն վկայէք ինձ, զի ասացի
ձեզ՝ թէ չեմ ես Քրիստոսն, այլ թէ առաքեալ
29 եմ առաջի նորա: Որ ունի հարսն՝ նա է փեսայ.
իսկ բարեկամ փեսային՝ որ կայ եւ լսէ նմա, ուրա-
խութեամբ ուրախ լինի վասն ձայնի փեսային. արդ
30 այս ուրախութիւն որ իմս է, լցեալ է: Նմա պարտ

է աճել, եւ ինձ մեղմանալ: Որ ի վերուստն գայ՝ 31
ի վերոյ է քան զամենայն. որ յերկրէ աստի է, յեր-
կրէ է՝ եւ յերկրէ խօսի: Որ յերկնից գայ, զոր ինչ 32
ետես եւ զոր լուաւ՝ վկայէ. եւ զվկայութիւն նորա
ոչ ոք ընդունի: Որ ընդունի զվկայութիւն նորա՝ 33
կնքեաց, թէ Աստուած ճշմարիտ է: Զի զոր Աս- 34
տուածն առաքեաց՝ զբանս Աստուծոյ խօսի. զի ոչ
եթէ չափով տայ Աստուած զՀոգին: Հայր սիրէ 35
զՈրդի, եւ զամենայն ինչ ետ ի ձեռս նորա: Որ հաւ- 36
տայ յՈրդի, ընդունի զկեանսն յաւիտենականս.
եւ որ ոչ հնազանդի Որդւոյ, ոչ տեսցէ զկեանս.
այլ բարկութիւն Աստուծոյ մնայ ի վերայ նորա:

ԳԼՈՒԽ Դ.

ԳԳ. Իբրեւ գիտաց Յիսուս՝ եթէ լուան փարի- 1
սեցիքն եթէ Յիսուս բազում աշակերտս առնէ եւ
մկրտէ քան զՅովհաննէս. Քանզի ոչ եթէ Յիսուս 2
ինքնին մկրտէր՝ այլ աշակերտքն նորա: Եթող 3
զՀրէաստան երկիր, եւ եկն միւսանգամ ի Գալի- 4
լեա: Եւ էր նմա անցանել ընդ Սամարիա: Գայ նա 5
ի քաղաք մի Սամարացւոց՝ որում անուն էր Սիւ-
քար, մերձ ի գեօղն զոր ետ Յակոբ որդւոյ իւրում՝
Յովսեփայ: Եւ անդ էր աղբիւր մի Յակոբայ. եւ 6
Յիսուս վաստակեալ ի ճանապարհէն, նստէր ի
վերայ աղբերն. եւ էր ժամ իբրեւ վեցերորդ:
Գայ կին մի ի Սամարեայ հանել ջուր. ասէ 7
ցնա Յիսուս. տուր ինձ ըմպել: Զի աշակերտքն նո- 8
րա երթեալ էին ի քաղաք անդր՝ զի կերակուրս
գնեսցեն: Ասէ ցնա կինն Սամարացի. դու՝ որ Հրեայդ 9
ես, զիա՞րդ յինէն ըմպել խնդրես ի կնոջէ Սամարա-
ցւոյ: Զի ոչ երբեք խառնակին Հրեայք ընդ Սամա-
րացիս: Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. եթէ 10
գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ, եւ ո՞վ է՝ որ
ասէդ ցքեզ՝ թէ տուր ինձ ըմպել. դու արդեօք

խնդրէիր ի նմանէ՝ եւ տայր քեզ ջուր կենդանի։
11 Ասէ ցնա կինն. Տէր՝ դու քանզի եւ դոյլ իսկ ոչ
ունիս, եւ ջրհորս խոր է. իսկ արդ՝ ուստի՞ ունի-
12 ցիս զջուրն կենդանի։ Միթէ դու մե՞ծ ինչ ոք
իցես՝ քան զհայրն մեր Յակոբ՝ որ զայս ջրհոր ետ
մեզ, եւ ինքն աստի արբ՝ եւ որդիք նորա, եւ խաշինք
13 նորա։ Պատասխանի ետ նմա Յիսուս եւ ասէ. ամե-
նայն որ ըմպէ ի ջրոյ յայդմանէ՝ միւսանգամ ծա-
րաւէ, բայց որ ըմպէ ի ջրոյն, զոր ես տաց նմա՝
14 մի՛ ծարաւեսցէ յաւիտեան։ Այլ ջուրն զոր ես
տաց նմա, եղիցի նմա աղբիւր ջրոյ բղխելոյ ի կեանս
15 յաւիտենականս։ Ասէ ցնա կինն. Տէր՝ տուր ինձ զջուրն
զայն, զի մի՛ ծարաւեցից, եւ մի՛ եկից այսր՝ հանել
16 ջուր։ Ասէ ցնա Յիսուս. երթ կոչեա զայր քո՝ եւ
17 եկ այսր։ Պատասխանի ետ նմա կինն եւ ասէ. չիք
18 իմ այր։ Ասէ ցնա Յիսուս. բարւոք ասացեր՝ թէ
չիք իմ այր. զի հինգ այր փոխեալ է քո, եւ զոր
19 այժմ ունիս՝ չէ քո այր. զայդ արդար ասացեր։ Ասէ
ցնա կինն. Տէր, թուի ինձ թէ մարգարէ իցես դու։
20 Հարքն մեր ի լերինս յայսմիկ երկիր պագին. եւ դուք
ասէք՝ եթէ յԵրուսաղէմ է տեղի, ուր արժան
21 իցէ երկիր պագանել։ Ասէ ցնա Յիսուս. կին դու՝
հաւատա ինձ, զի եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ ի լե-
րինս յայսմիկ եւ ոչ յԵրուսաղէմ երկիր պագանիցեն
22 Հօր։ Դուք երկիր պագանէք՝ որում ոչն գիտէք.
մեք երկիր պագանեմք՝ որում գիտեմքն. զի փրկու-
23 թիւն ի Հրէից է։ Այլ եկեսցէ ժամանակ՝ եւ այժմ
իսկ է, յորժամ ճշմարիտքն երկրպագուք՝ երկիր պա-
գանիցեն Հօր հոգւով եւ ճշմարտութեամբ. քան-
զի եւ Հայր այնպիսի երկրպագուս խնդրէ։
24 Գե. Հոգի է Աստուած, եւ երկրպագուաց նորա՝
հոգւով եւ ճշմարտութեամբ պարտ է երկիր պագա-
25 նել։ Ասէ ցնա կինն, գիտեմ զի Մեսիայ գայ՝ անուա-
նեալն Քրիստոս. յորժամ եկեսցէ նա՝ պատմեսցէ մեզ

զամենայն: Ասէ ցնա Յիսուս. ես եմ՝ որ խօսիմս ընդ 26
քեզ: Եւ յայն բան եկին աշակերտքն նորա, եւ 27
զարմանային՝ զի ընդ կնոջն խօսէր. բայց ոչ ոք ասաց
ի նոցանէ, թէ զի՞նչ խնդրես, կամ զի՞նչ խօսիս
ընդ դմա: Եթող կինն զսափորն իւր՝ եւ չոգաւ ի 28
քաղաքն, եւ ասէ ցմարդիկն. Եկայք տեսէք զայր 29
մի, որ ասաց ինձ զամենայն՝ որ ինչ իմ գործեալ
է. միթէ նա՞ իցէ Քրիստոսն: Ելին ի քաղաքէն՝ եւ 30
գային առ նա: Եւ մինչեւ եկեալ էին նոքա, աղա- 31
չէին զնա աշակերտքն եւ ասէին. ռաբբի՝ հաց կեր:
Նա ասէ ցնոսա. ես կերակուր ունիմ ուտել, զոր 32
դուքն ոչ գիտէք: Ասէին աշակերտքն ընդ միմեանս. 33
միթէ եբե՞ր ինչ ոք դմա ուտել: Ասէ ցնոսա Յիսուս. 34
իմ կերակուր այն է՝ զի արարից զկամս այնորիկ՝ որ
առաքեացն զիս, եւ կատարեցից զգործն նորա: Ո՞չ 35
դուք ասէք՝ եթէ այլ եւս չորք ամիսք են, եւ
հունձք գան. ահաւասիկ ես ասեմ ձեզ, ամբար-
ձէք զաչս ձեր, եւ տեսէք զարտորայսն, զի սպիտա-
կացեալ են եւ ի հունձս հասեալ: Եւ որ հնձէն՝ 36
վարձս առնու, եւ ժողովէ զպտուղ ի կեանսն յա-
ւիտենականս. զի որ սերմանէն՝ եւ որ հնձէ՝
հասարակ ցնծասցեն: Յայսմ իսկ է բանն ճշմարիտ. 37
զի այլ է որ սերմանէ, եւ այլ է որ հնձէ. Ես ա- 38
ռաքեցի զձեզ հնձել՝ զոր ոչ դուք վաստակե-
ցէք. այլք վաստակեցին, եւ դուք ի վաստակս նոցա
մտէք: Եւ ի քաղաքէն յայնմանէ Սամարացւոց՝ 39
բազումք հաւատացին ի նա. վասն բանի կնոջն վկայե-
լոյ՝ եթէ ասաց ինձ զամենայն, որ ինչ իմ գործեալ
էր: Իսկ իբրեւ եկին առ նա Սամարացիքն՝ աղաչէ- 40
ին զնա լինել առ նոսա. եւ եղեւ անդ աւուրս երկուս:
Եւ եւս բազումք հաւատացին ի նա վասն բանին 41
նորա: Եւ ասէին ցկինն, թէ ոչ այսուհետեւ վասն 42
քո բանիցդ հաւատամք, զի մեզէն իսկ լուաք ի դմանէ,
եւ գիտեմք եթէ դա է ճշմարտիւ փրկիչ աշխարհաց:

43 ԳԶ. Եւ յետ երկուց աւուրց ել անտի եւ
44 գնաց ի Գալիլեա: Զի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝
եթէ մարգարէ յիւրում գաւառի պատիւ ոչ ունի:
45 Այլ յորժամ եկն նա ի Գալիլեա, ընկալան զնա գա-
լիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն, զոր
արար յԵրուսաղէմ ի տօնին, քանզի եւ նոքա եկեալ
46 էին ի տօնն: Եկն դարձեալ ի Կանա Գալիլեացւոց՝ ուր
արար զջուրն գինի. եւ անդ էր Թագաւորազն մի,
47 որոյ որդի նորա հիւանդ կայր ի Կափառնաում: Նա
իբրեւ լուաւ եթէ Յիսուս եկեալ է ի Հրէաստանէ
ի Գալիլեա, եկն առ նա՝ եւ աղաչէր, զի իջցէ եւ
բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ի մեռանել:
48 Ասէ ցնա. եթէ ոչ նշանս ինչ եւ արուեստս տե-
49 սանէք՝ ո՛չ հաւատայք: Ասէ ցնա Թագաւորազն.
50 Տէր՝ էջ, մինչեւ մեռեալ իցէ մանուկն իմ: Ա-
սէ ցնա Յիսուս. երթ՝ որդին քո կենդանի է: Եւ
հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա Յիսուս, եւ
51 գնաց: Եւ մինչդեռ իջանէր, ընդառաջ եղեն նմա
ծառայք նորա, աւետիս ետուն եւ ասեն. թէ մա-
52 նուկն նորա կենդանի է: Հարցանէր ցնոսա վասն
ժամուն՝ յորում ապաքինեցաւ, եւ ասեն ցնա. երէկ
53 յեօթներորդ ժամու եթող զնա ջերմն: Գիտաց
հայրն նորա եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա
Յիսուս թէ որդին քո կենդանի է, եւ հաւատաց
54 ինքն եւ ամենայն տունն իւր: Զայս դարձեալ երկրորդ
նշան արար Յիսուս եկեալ ի Հրէաստանէ ի Գալիլեա:

ԳԼՈՒԽ Ե.

1 ԳԷ. Յետ այսորիկ տօն էր Հրէից, եւ ել Յի-
2 սուս յԵրուսաղէմ: Եւ էր յԵրուսաղէմ ի Պրոպա-
տիկէ աւազանին, որ կոչէր եբրայեցերէն Բեթհեզդա,
3 հինգ սրահ, Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ
հիւանդաց կուրաց, կաղաց, գօսացելոց, որ ակն ու-
4 նէին ջրոյն յուզելոյ: Եւ հրեշտակ Տեառն իջանէր

ըստ ժամանակի յաւազանն՝ եւ յուզէր զջուրսն. եւ
որ նախ ի շարժումն ջուրցն իջանէր, բժշկէր՝ ոչ
ունելով նշան հիւանդութեան: Եւ անդ էր այր մի, 5
որոյ երեսուն եւ ութ ամ էր ի հիւանդութեան
իւրում: Զնա իբրեւ ետես Յիսուս՝ զի անկեալ 6
դնէր, եւ գիտաց եթէ բազում ժամանակք են այ-
նուհետեւ, ասէ ցնա. կամի՞ս ողջ լինել: Պատաս- 7
խանի ետ նմա հիւանդն. Տէր՝ ոչ զոք ունիմ, թէ
յորժամ ջուրքն յուզիցին՝ արկցէ զիս յաւազանն. եւ
մինչ ես դանդաղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն
իջանէ: Ասէ ցնա Յիսուս. արի առ զմահիճս քո՝ 8
եւ գնա: Եւ ողջացաւ այրն, եւ յարեաւ՝ առ զմա- 9
հիճս իւր եւ շրջէր. եւ էր շաբաթ յաւուրն յայն-
միկ: Ասեն Հրեայքն ցբժշկեալն. շաբաթ է՝ եւ 10
ոչ է արժան քեզ առնուլ զմահիճս քո: Պատաս- 11
խանի ետ նոցա եւ ասէ. որ բժշկեացն զիս՝ նա ասաց
ցիս. Առ զմահիճս քո՝ եւ գնա: Հարցին ցնա եւ
ասեն. ո՞վ է այրն այն՝ որ ասաց ցքեզ՝ առ զմահիճս 12
քո եւ շրջեաց: Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՞վ իցէ. 13
քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին ի տեղւո-
ջէ անտի: Յետ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի տա- 14
ճարին, եւ ասէ ցնա. ահաւասիկ ողջացար, մի՛ եւս
մեղանչեր, զի մի՛ չար եւս ինչ լինիցի քեզ: Գնաց այրն 15
եւ պատմեաց Հրէիցն, եթէ Յիսուս էր որ բժշկեացն
զիս: Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս Հրեայ-
քըն՝ զի զայն առնէր ի շաբաթու: Եւ Յիսուս պա- 16
տասխանի ետ նոցա. Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, 17
եւ ես գործեմ: Վասն այնորիկ առաւել խնդրէին 18
Հրեայքն սպանանել զնա, զի ոչ միայն լուծանէր
զշաբաթս, այլ եւ Հայր իւր կոչէր զԱստուած, եւ
հաւասար առնէր զանձն Աստուծոյ:

ԺԿ. Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. 19
ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ կարէ որդի մարդոյ առ-
նել յանձնէ եւ ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն

զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն եւ որդին նմին
20 նման գործէ: Զի Հայր սիրէ զորդի, եւ զամենայն
ինչ ցուցանէ նմա՝ զոր ինքն առնէ. եւ մեծամեծս եւս
քան զսոյնս ցուցանէ նմա զգործս, ընդ որ դուք
21 զարմանայք: Զի որպէս Հայր յարուցանէ զմեռեալս
եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ որդի զորս կամի
22 կենդանի առնէ: Եւ ոչ եթէ Հայր դատի զոք, այլ
23 զամենայն դատաստան ետ որդւոյ իւրոյ, Զի ամենե-
քեան պատուեսցեն զորդի որպէս պատուեն զՀայր:
Որ ոչ պատուէ զորդին, ոչ պատուէ զՀայր զառա-
24 քիչն նորա: Ամէն ամէն ասեմ ձեզ. զի որ զբանն իմ
լսէ, եւ հաւատայ այնմ որ առաքեացն զիս, ընդունի
զկեանս յաւիտենականս. եւ ի դատաստան ոչ մտա-
25 նէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս: Ամէն ամէն
ասեմ ձեզ. զի գայ ժամանակ՝ եւ արդէն իսկ է, յոր-
ժամ մեռեալք լսիցեն ձայնի որդւոյն Աստուծոյ. եւ
26 որք լսիցենն՝ կեցցեն: Զի որպէս Հայր ունի կեանս
յանձին իւրում, նոյնպէս ետ եւ որդւոյ ունել կեանս
27 յանձին իւրում: Եւ իշխանութիւն ետ նմա դատաս-
28 տան առնել: Եւ զի որդի մարդոյ է՝ Ընդ այն զի՞
զարմանայք. զի եկեսցէ ժամանակ յորում ամենեքին
29 որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, Եւ
եկեսցեն արտաքս. որոց բարիս գործեալ իցէ՝ ի յա-
րութիւն կենաց, եւ որոց զչար արարեալ՝ ի յարու-
30 թիւն դատաստանաց: Ոչ կարեմ ես յանձնէ առնել
եւ ոչինչ. այլ որպէս լսեմ՝ դատեմ, եւ դատաստանն
իմ արդար է. զի ոչ խնդրեմ զկամս իմ, այլ զկամս
այնորիկ՝ որ առաքեացն զիս:
31 ԳԲ. Եթէ ես վկայեմ վասն իմ, վկայութիւն
32 իմ չէ ճշմարիտ: Այլ է՝ որ վկայէ վասն իմ. եւ
դուք գիտէք, եթէ ճշմարիտ է վկայութիւնն զոր
33 վկայեաց վասն իմ: Դուք առաքեցէք առ Յով-
34 հաննէս՝ եւ վկայեաց ճշմարտութեանն: Այլ ես
ոչ եթէ ի մարդկանէ առնում վկայութիւն. այլ զայս

ասեմ զի դուք ապրեսջիք: Նա էր ճրագն՝ որ լու- 35
ցեալ էր եւ ծագէր. եւ դուք կամեցարուք ցնծալ
առ ժամանակ մի ի լոյս նորա: Այլ ես ունիմ վկայու- 36
թիւն մեծ եւս քան զՅովհաննու. զգործս՝ զորս ետ
ցիս Հայր՝ զի կատարեցից զնոսա, նոքին իսկ գործքն
զոր գործեմ, վկայեն վասն իմ, եթէ Հայր առաքեաց
զիս: Եւ որ առաքեացն զիս Հայր՝ նա վկայեաց վասն 37
իմ: Դուք՝ ոչ զձայն նորա երբեք լուարուք, եւ ոչ
զտեսիլ նորա տեսէք. Եւ ոչ զբան նորա ունիք ի 38
ձեզ բնակեալ. զի զոր նա առաքեաց՝ դուք նմա ոչ
հաւատայք: Քննեցէք զգիրս. զի դուք համարիք 39
նոքօք ունել զկեանսն յաւիտենականս. եւ նոքին իսկ
են՝ որ վկայեն վասն իմ, որովք համարիք ունել
կեանս: Եւ դուք ոչ կամիք գալ առ իս՝ զի զկեանսն 40
ունիցիք: Ես փառս ի մարդկանէ ոչ առնում: Այլ 41
գիտեմ զձեզ եթէ զսէրն Աստուծոյ ոչ ունիք յան- 42
ձինս: Ես եկի յանուն Հօր իմոյ՝ եւ ոչ ընդունիք 43
զիս. եթէ այլ ոք եկեսցէ յիւր անուն, զնա ընդու-
նիցիք: Զիա՞րդ կարէք դուք հաւատալ, զի փառս 44
ի միմեանց առնուք. եւ զփառս զառ ի միոյն Աստու-
ծոյ ոչ խնդրէք: Մի՛ համարիք՝ եթէ ես չարախօս 45
ինչ իցեմ զձէնջ առ Հօր. գոյ որ չարախօս կայ զձէնջ՝
Մովսէս, յոր դուքն յուսացեալ էք: Զի եթէ հա- 46
ւատայիք դուք Մովսիսի, հաւատայիք արդեօք եւ ինձ,
զի նա վասն իմ իսկ գրեաց: Զի եթէ նորա գրոցն 47
ոչ հաւատայք, զիա՞րդ իմոց բանից հաւատայցէք:

ԳԼՈՒԽ Զ.

ԳԳ. Յետ այսորիկ գնաց Յիսուս յայնկոյս ծո- 1
վուն Գալիլեացւոց Տիբերիայ: Եւ զհետ երթայր նո- 2
րա ժողովուրդ բազում. զի տեսանէին զնշանսն՝ զոր
առնէր ի վերայ հիւանդաց: Ել ի լեառն Յիսուս, եւ 3
անդ նստէր աշակերտօքն հանդերձ: Եւ էր մերձ զատիկ 4
տօնն Հրէից: Բարձ ի վեր զաչս իւր Յիսուս եւ ետես, 5

զի ժողովուրդ բազում գայր առ նա, ասէ ցՓիլիպպոս.
6 ուստի՞ գնեսցուք հաց՝ զի կերիցեն դոքա: Զայս ասէր
փորձելով զնա. այլ ինքն գիտէր զինչ առնելոցն էր:
7 Պատասխանի ետ նմա Փիլիպպոս. երկերիւր դահե-
կանի հաց չէ դոցա բաւական, թէպէտ եւ իւրաքան-
8 չիւր ոք սակաւ ինչ առնուցու: Ասէ ցնա մի յաշա-
9 կերտացն նորա՝ Անդրէաս, եղբայր Սիմովնի վիմի. Է
աստ պատանեակ մի՝ որ ունի հինգ նկանակ գարե-
գէն եւ երկուս ձկունս. այլ այն զի՞նչ է առ այդ-
10 չափ մարդիկ: Ասէ Յիսուս. բազմեցուցէք զմար-
դիկդ. եւ էր խոտ յոյժ ի տեղւոջն. եւ բազմե-
11 ցան մարդիկն թուով իբրեւ հինգ հազար: Եւ առ
զհացն Յիսուս եւ գոհացաւ՝ եւ բաշխեաց բազմա-
կանացն. նոյնպէս եւ ի ձկանցն որչափ եւ կամեցան:
12 Եւ իբրեւ յագեցան, ասէ ցաշակերտսն. ժողովե-
13 ցէք զնշխարեալ կոտորսդ՝ զի մի ինչ կորիցէ: Ժո-
ղովեցին, եւ լցին երկոտասան սակառի զկոտորոցն ի
հինգ գարեգէն նկանակէ անտի, որ յաւելաւ ի կերո-
14 ղացն: Իսկ մարդիկն իբրեւ տեսին զնշանսն զոր արար՝
ասէին, եթէ սա է ճշմարիտ մարգարէն, որ գալոց էր
յաշխարհ:

15 ԳԳ. Յիսուս իբրեւ գիտաց եթէ գալոց են յա-
փշտակել զնա՝ զի արասցեն զնա թագաւոր, գնաց
16 գաղձեալ ի լեառն միայն: Եւ իբրեւ երեկոյ եղեւ,
17 իջին աշակերտքն նորա ի ծովեզրն: Եւ մտեալ ի նաւ՝
գնացին յայնկոյս ծովուն ի Կափառնաում. եւ իբրեւ
նսեմացաւ, եւ չեւ եւս եկեալ էր առ նոսա Յիսուս:
18 Եւ ծովն ի սաստիկ հողմոյ շնչելոյ յուզէր: Եւ վա-
19 րեալ իբրեւ ասպարէզս քսան եւ հինգ՝ կամ երե-
սուն, տեսանէին զՅիսուս՝ զի գնայր ի վերայ ծովուն՝
20 եւ մերձ էր ի նաւն, զարհուրեցան յոյժ: Նա ասէ
21 ցնոսա. ես եմ՝ մի երկնչիք: Եւ կամէին զնա ընդու-
նել ի նաւն. եւ վաղվաղակի եհաս նաւն յերկիրն՝ յոր
երթային:

ԳԵ. Ի վաղիւ անդր ժողովուրդն՝ որ կայր յայն- 22
կոյս ծովուն, տեսանէր թէ այլ նաւ ոչ գոյր անդ
բայց միայն ի միոյն, յոր մտին աշակերտքն Յիսուսի.
եւ զի չէր մտեալ Յիսուս ընդ աշակերտսն իւր ի նաւն,
բայց միայն աշակերտքն նորա գնացին: Իբրեւ այլ 23
նաւք գային ի Տիբերեայ մօտ յայն տեղին՝ ուր զհացն
կերան: Իսկ իբրեւ ետես ժողովուրդն եթէ Յիսուս 24
ոչ է անդ՝ եւ ոչ աշակերտքն նորա, առին նոքա զնաւ-
սն, եւ եկին ի Կափառնաում խնդրել զՅիսուս:
Եւ իբրեւ գտին զնա յայնկոյս ծովուն, ասեն ցնա. 25
ռաբբի՝ ե՞րբ եկիր այսր: Պատասխանի ետ նոցա Յի- 26
սուս եւ ասէ. ամէն ամէն ասեմ ձեզ. խնդրէք զիս,
իբրեւ ոչ եթէ զի նշանս ինչ տեսէք, այլ զի կերայք
ի հացէ անտի՝ եւ յագեցարուք: Մի՛ թայք գործեցէք 27
մի զկորստական կերակուրն, այլ զկերակուրն, որ մնայ
ի կեանսն յաւիտենականս, զոր որդին մարդոյ տացէ
ձեզ. քանզի զնա Հայր կնքեաց Աստուած: Ասեն 28
ցնա. զի՞նչ առնիցեմք՝ զի զգործսն Աստուծոյ գոր-
ծեսցուք: Պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնոսա. 29
այս է գործն Աստուծոյ, զի հաւատասջիք յայն՝ որ
առաքեացն զիս: Ասեն ցնա. զի՞նչ նշան առնիցես՝ 30
զի տեսցուք եւ հաւատասցուք, զի՞նչ գործիցես:
Հարքն մեր կերան զմանանայն յանապատի անդ՝ որ- 31
պէս եւ գրեալ է. հաց յերկնից ետ նոցա ուտել:
Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ 32
Մովսէս ետ ձեզ զհացն յերկնից, այլ Հայրն իմ
տայ ձեզ զհացն յերկնից զճշմարիտ: Զի հաց յԱս- 33
տուծոյ է, որ իջանէ յերկնից՝ եւ կեանս տայ աշխարհի:
Ասեն ցնա. Տէր՝ յամենայն ժամ տուր մեզ զհացն 34
զայն: Ասէ ցնոսա Յիսուս. ես եմ հացն կենաց: որ 35
գայ առ իս՝ ոչ քաղցիցէ, եւ որ հաւատայ յիս՝ ոչ
երբեք ծարաւեսցի: Այլ ասացի ձեզ՝ թէ տեսէք 36
զիս, եւ ոչ հաւատայք: Զամենայն՝ զոր տայ ինձ 37
Հայր, առ իս եկեսցէ. եւ որ գայ առ իս, ոչ հանից

38 արտաքս: Զի իջի ես յերկնից՝ ոչ զի զկամս իմ
արարից, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զիս:
39 ԳԶ· Այս են կամք հօր իմոյ, որ առաքեացն զիս․
զի զամենայն զոր ետ ցիս հայր՝ ոչ կորուսից ի նմանէ,
40 այլ յարուցից զնա յաւուրն յետնում: Այս են կամք
հօր իմոյ, զի ամենայն որ տեսանիցէ զորդի՝ եւ
հաւատայցէ ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենա-
կանս, եւ ես յարուցից զնա յաւուրն յետնում:
41 Տրտնջէին զնմանէ Հրեայքն, զի ասաց թէ ես եմ
42 հացն իջեալ յերկնից: Եւ ասէին․ ո՞չ սա է Յի-
սուս որդին Յովսեփու, զորոյ մեք գիտեմք զհայրն եւ
զմայր․ իսկ արդ զիա՞րդ ասէ՝ թէ ես յերկնից իջի:
43 Պատասխանի ետ Յիսուս, եւ ասէ ցնոսա․ մի քրթ-
44 մնջէք ընդ միմեանս: Ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ
ոչ հայրն՝ որ զիս առաքեաց՝ ձգեսցէ զնա․ եւ ես
45 յարուցից զնա յաւուրն յետնում: Գրեալ է ի մար-
գարէս․ եւ եղիցին ամենեքեան ուսեալք յԱստուծոյ․
46 ամենայն որ լուէ ի հօրէ՝ եւ ուսանի, գայ առ իս: Ի-
բրեւ ոչ եթէ զհայր ուրուք տեսեալ իցէ․ եթէ ոչ՝
47 որ էն յԱստուծոյ, նա եւտես զհայր: Ամէն ամէն
ասեմ ձեզ․ զի որ հաւատայ յիս՝ ընդունի զկեանսն
48 յաւիտենականս: Ես եմ հացն կենաց: Հարքն ձեր
49 կերան զմանանայն յանապատին՝ եւ մեռան: Այս է
50 հացն, որ յերկնից իջեալ է․ զի որ ուտիցէ ոք ի սմա-
51 նէ՝ մի մեռանիցի: Ես եմ հացն կենդանի, որ յերկնից
52 իջեալ: Եթէ ոք ուտիցէ ի հացէ յայսմանէ՝ կեցցէ
ի յաւիտեան․ եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է,
53 զոր ես տաց վասն կենաց աշխարհի: Մարտնչէին ընդ
միմեանս Հրեայքն՝ եւ ասէին․ զիա՞րդ կարէ սա տալ
54 մեզ զմարմին իւր յուտել: Ասէ ցնոսա Յիսուս․ ա-
մէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ կերիջիք զմարմին որ-
դւոյ մարդոյ՝ եւ արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս
55 յանձինս: Որ ուտէ զմարմին իմ՝ եւ ըմպէ զարիւն
իմ, ունի զկեանսն յաւիտենականս․ եւ ես յարուցից

զնա յաւուրն յետնում։ Զի մարմին իմ ճշմարիտ 56
կերակուր է, եւ արիւն իմ ճշմարիտ ըմպելի է։ Որ 57
ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարիւն իմ, յիս բնա-
կեսցէ, եւ ես ի նմա։ Որպէս առաքեաց զիս կենդա- 58
նին Հայր, եւ ես կենդանի եմ վասն Հօր, եւ որ ու-
տէն զիս, եւ նա կեցցէ վասն իմ։ Այս է հացն՝ որ 59
յերկնից իջեալ. ոչ որպէս կերան հարքն ձեր զմանա-
նայն՝ եւ մեռան. որ ուտէ զհացս զայս՝ կեցցէ յաւի-
տեան։ Զայս ասաց ի ժողովրդեանն՝ յուսուցանելն ի 60
Կափառնաում։ Եւ բազումք յաշակերտացն իբրեւ 61
լուան՝ ասեն. խիստ է բանդ այդ, ո՞ կարէ լսել դմա։
Իբրեւ գիտաց Յիսուս յանձն իւր՝ եթէ տրանջեն 62
վասն այնորիկ աշակերտքն, ասէ ցնոսա. ա՞յդ գայ-
թագղեցուցանէ զձեզ։ Իսկ արդ՝ եթէ տեսանիցէք 63
զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն։ Հոգին 64
է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ. զբանն զոր ես
խօսեցայ ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք։ Այլ են ոմանք 65
ի ձէնջ՝ որ ոչ հաւատան, քանզի գիտէր Յիսուս ի
սկզբանէ, ո՞վ են այնոքիկ՝ որ ոչն հաւատան, եւ ո՞վ
է այն՝ որ մատնելոցն է զնա, եւ ասէր. Վասն այնորիկ 66
ասացի ձեզ՝ թէ ոչ ոք կարէ գալ առ իս, եթէ ոչ իցէ
տուեալ նմա ի Հօրէ իմմէ։ Յայսմանէ բազումք յաշա- 67
կերտացն նորա չոգան յետս. եւ ոչ եւս շրջէին ընդ
նմա։ Ասէ Յիսուս ցերկոտասան աշակերտսն, միթէ 68
եւ դո՞ւք կամիք երթալ։ Պատասխանի ետ նմա Սիմոն 69
Պետրոս. Տէր՝ առ ո՞վ երթիցուք. բանս կենաց
յաւիտենականս ունիս։ Եւ մեք հաւատացաք՝ եւ 70
ծանեաք՝ եթէ դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ։
Պատասխանի ետ նոցա Յիսուս. ո՞չ ես զձեզ զերկո- 71
տասանսդ ընտրեցի, եւ մինդ ի ձէնջ սատանայ է։ Եւ 72
ասէր զՍիմոնեան Յուդայէ սկարիովտացւոյ, զի նա
իսկ մատնելոց էր զնա. եւ մի էր յերկոտասանիցն։

ԳԼՈՒԽ Է.

1 ՁԷ. Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլեա.
քանզի ոչ կամէր ի Հրէաստանի շրջել. զի խնդրէին զնա
2 Հրեայքն սպանանել: Եւ էր մերձ տօնն Հրէից տաղա-
3 ւարահարաց: Ասեն ցնա եղբարքն նորա, գնա աստի
եւ երթ ի Հրէաստան, զի եւ աշակերտքն քո տեսցեն
4 զգործսդ քո՝ զոր գործես: Զի ոչ ոք է՝ որ ի ծածուկ ինչ
գործէ՝ եւ խնդրէ ինքն համարձակ լինել. եթէ զայդ
5 գործես, յայտնեա զանձն քո աշխարհի: Քանզի եւ
6 եղբարքն իսկ չէին հաւատացեալ ի նա: Ասէ ցնոսա
Յիսուս. ժամանակ իմ չեւ է հասեալ. բայց ձեր
7 ժամանակ յամենայն ժամու պատրաստ է: Ոչ կարէ
աշխարհս ատել զձեզ. բայց զիս ատեայ, զի ես վկայեմ
8 վասն նորա՝ եթէ գործքն իւր չարութեան են: Դուք
երթայք ի տօնն յայն, ես ոչ երթամ ի տօնն յայն.
9 զի իմ ժամանակ չեւ է լցեալ: Զայս իբրեւ ասաց՝
10 ինքն մնաց անդէն ի Գալիլեա: Իբրեւ ելին եղբարքն
նորա, ապա եւ ինքն ել ի տօնն, ոչ յայտնի՝ այլ
11 իբրեւ ի ծածուկ: Եւ Հրեայքն խնդրէին զնա ի
տօնի անդ՝ եւ ասէին ո՞ւր իցէ նա: Եւ քրթմնջիւն
12 էր զնմանէ ի ժողովուրդսն. կէսքն ասէին՝ թէ բար-
ւոք է. այլքն ասէին, ո՞չ՝ այլ մոլորեցուցանէ զժո-
13 ղովուրդն: Եւ ոչ ոք համարձակ խօսէր զնմանէ՝ վասն
երկիւղին Հրէից:

14 ՁԸ. Իբրեւ տօնն ընդ միջեցաւ, ել Յիսուս ի տա-
15 ճարն՝ եւ ուսուցանէր: Զարմանային Հրեայքն եւ ա-
սէին. զիա՞րդ զգիրս գիտէ սա, զի ուսեալ բնաւ չէք:
16 Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. իմ վարդապե-
տութիւնս չէ իմ, այլ այնորիկ՝ որ առաքեացն զիս:
17 Եթէ ոք կամի զկամս նորա առնել՝ գիտասցէ վասն
վարդապետութեանս, յԱստուծոյ իցէ արդեօք՝ եթէ
18 ես ինչ յանձնէ իմմէ խօսիմ: Որ յանձնէ իւրմէ խօ-
սի՝ փառս անձին իւրում խնդրէ, իսկ որ խնդրէ զփառս

այնորիկ որ առաքեացն զնա՝ նա ճշմարիտ է, եւ ան-
իրաւութիւն ոչ գոյ ի նմա: Ո՞չ Մովսէս ետ ձեզ 19
զօրէնսն, եւ ոչ ոք ի ձէնջ առնէ զօրէնսն: Զի՞ 20
խնդրէք զիս սպանանել: Պատասխանի ետ ժո-
ղովուրդն եւ ասէ. դեւ գոյ ի քեզ. ո՞վ խնդրէ
զքեզ սպանանել: Պատասխանի ետ նոցա Յիսուս եւ 21
ասէ. գործ մի գործեցի, եւ ամենեքին զարմացեալ
էք: Վասն այնորիկ Մովսէս ետ ձեզ թլփատութիւն, 22
զի ոչ եթէ ի Մովսիսէ էր, այլ ի հարց անտի, եւ ի
շաբաթու թլփատէք զմարդ: Իսկ արդ եթէ թլփա- 23
տութիւն առնու մարդ ի շաբաթու, զի մի օրէնքն
Մովսեսի լուծցին. ընդ իս ցասուցեալ էք՝ զի ողջոյն
իսկ մարդ բժշկեցի ի շաբաթու:

ԻԲ. Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դա- 24
տաստան արարէք: Ասէին ոմանք յԵրուսաղեմա- 25
ցւոց անտի. ո՞չ նա է սա՝ զոր խնդրէին սպանանել,
Եւ ահաւասիկ յայտնապէս խօսի, եւ չասեն ինչ ընդ 26
դմա. գուցէ արդեօք եւ իշխանքն գիտացին՝ թէ
սա իցէ Քրիստոսն: Այլ զսա գիտեմք ուստի է. 27
իսկ Քրիստոսն յորժամ գայցէ, ոչ ոք գիտէ ուստի է:
Աղաղակեաց Յիսուս ի տաճարին, ուսուցանէր՝ եւ ա- 28
սէր. եւ զիս գիտէք, եւ ուստի եմ գիտէք. եւ յան-
ձնէ իմմէ ոչ եմ եկեալ, այլ է ճշմարիտ որ առա-
քեացն զիս՝ զոր դուքն ոչ գիտէք: Ես գիտեմ զնա, 29
զի ի նմանէ իսկ եմ, եւ նա առաքեաց զիս: Խնդրէին 30
զնա ունել՝ եւ ել ի ձեռաց նոցա. եւ ոչ ոք արկ ի նա
ձեռն, զի չեւ էր հասեալ ժամ նորա: Եւ բազումք 31
ի ժողովրդենէն հաւատացին ի նա, եւ ասէին. Քրիս-
տոսն յորժամ գայցէ՝ միթէ աւելի՞ ինչ նշանս առ-
նիցէ՝ քան զոր սայս առնէ: Եւ լուան փարիսեցիքն 32
զտրտունջ ժողովրդեանն զնմանէ. եւ առաքեցին քա-
հանայապետքն եւ փարիսեցիք սպասաւորս՝ զի կալցին
զնա: Ասէ Յիսուս, փոքր մի եւս ժամանակ ընդ ձեզ 33
եմ. եւ երթամ առ այն՝ որ առաքեացն զիս: Խնդրի- 34

35 ցէք զիս՝ եւ ոչ գտանիցէք, եւ ուր ես երթամ, դուք
ոչ կարէք գալ։ Ասեն Հրեայքն ընդ միմեանս. իսկ
յո՞ երթայցէ դա՝ զի մեք ոչ գտանիցեմք զդա. մի-
թէ ի սփիւռս հեթանոսա՞ց երթայցէ՝ եւ ուսուցա-
36 նիցէ զհեթանոսս։ Զի՞նչ է բանն այն՝ զոր ասաց.
խնդրիցէք զիս՝ եւ ոչ գտանիցէք. եւ ուր ես երթամ,
դուք ոչ կարէք գալ։
37 ԵԳ. Ի վերջնում աւուր մեծի տօնին կայր
Յիսուս, աղաղակէր եւ ասէր. եթէ ոք ծարաւի
38 իցէ՝ եկեսցէ առ իս, եւ արբցէ։ Որ հաւատայ
յիս՝ որպէս եւ ասեն գիրք, գետք յորովայնէ նորա
39 բղխեսցեն ջրոյ կենդանութեան։ Զայս ասէր վասն
Հոգւոյն՝ զոր ընդունելոց էին՝ որ հաւատային ի նա,
զի չեւ էր Հոգի, քանզի Յիսուս չեւ էր փառաւո-
40 րեալ։ Ոմանք ի ժողովրդենէն իբրեւ լուէին զբանս զայս
41 ասէին. սա է ճշմարիտ մարգարէն։ Այլքն ասէին՝ սա՞
է Քրիստոս. իսկ կէսքն ասէին՝ միթէ ի Գալիլեէ՞
42 գալոց իցէ Քրիստոսն։ Ո՞չ գիրք ասեն, եթէ ի
զաւակէ Դաւթի, եւ ի Բեթղեհէմ գեղջէ՝ ուր
43 Դաւիթն էր, գալոց է Քրիստոսն։ Եւ եղեւ հերձու-
44 ած ի մէջ ժողովրդեանն վասն նորա։ Եւ ոմանք
ի նոցանէ կամէին ունել զնա. այլ ոչ ոք մխեաց ի
45 նա ձեռս։ Եւ եկին անդրէն սպասաւորքն առ քա-
հանայապետսն եւ փարիսեցիս, եւ ասեն ցնո-
46 սա. ընդէ՞ր ոչ ածէք զնա այսր։ Պատասխանի ետուն
սպասաւորքն՝ եւ ասեն. ոչ երբէք այնպէս խօսեցաւ
47 մարդ՝ որպէս այրն այն։ Պատասխանի ետուն փարի-
սեցիքն՝ եւ ասեն. միթէ եւ դո՞ւք մոլորեցայք։
48 Միթէ ոք յիշխանացն հաւատա՞ց ի նա՝ կամ ի փա-
49 րիսեցւոց։ Այլ այն խաժամուժ ամբոխ, որ ոչ գիտէ
50 զօրէնս, եւ նզովեալ են։ Ասէ Նիկոդեմոս ցնոսա՝ որ
եկեալն էր առ նա գիշերի յառաջագոյն՝ եւ մի էր ի
51 նոցանէ։ Միթէ օրէնքն մեր դատի՞ն զմարդ՝ եթէ ոչ
լուեն ինչ նախ ի նմանէ. կամ գիտեն զինչ գործէ։

Պատասխանի ետուն նմա եւ ասեն. միթէ եւ դու ես ի 52
Գալիլեէ՞ իցես. քննեա եւ տես, զի մարգարէ ի Գալիլեէ
ոչ յառնէ: Եւ գնացին իւրաքանչիւր ոք ի տեղի իւր: 53

ԳԼՈՒԽ Ը.

Իսկ Յիսուս գնաց ի լեառն ձիթենեաց. Եւ 1
ընդ առաւօտն դարձեալ եկն ի տաճարն. եւ գայր 2
առ նա ամենայն ժողովուրդն, եւ նստեալ ուսուցա-
նէր զնոսա: Ածին առ նա դպիրքն եւ քահանայա- 3
պետքն եւ փարիսեցիք կին մի ըմբռնեալ ի շնու-
թեան. եւ կացուցեալ զնա առաջի. Ասեն ցնա. վար- 4
դապետ, կինս այս ըմբռնեալ՝ ինքն յայտնապէս շնա-
ցեալ է: Եւ յօրէնս Մովսէս մեզ պատուիրեաց 5
զայսպիսիս քարկոծել. արդ՝ դու զի՞նչ ասես վասն
դորա: Զայս ասէին փորձելով զնա՝ զի ունիցին ամ- 6
բաստանութիւն զնմանէ: Իսկ Յիսուս ի խոնարհ նայե-
լով գրէր մատամբն յերկրի: Իսկ իբրեւ ստիպեցին 7
հարցանելով զնա, հայեցեալ ի վեր՝ ասէ ցնոսա.
անմեղն ի ձէնջ՝ նախ նա ընկեսցէ քար ի վերայ դորա:
Եւ դարձեալ ի խոնարհ նայելով գրէր յերկրի: Եւ 8
լուեալ ելանէին մի ըստ միոջէ՝ սկսեալ յառաջնոցն 9
մինչեւ ի վերջինս. եւ մնաց միայն Յիսուս, եւ կինն
կայր առաջի նորա: Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ 10
ցնա. կին դու՝ ո՞ւր են, ոչ ոք զքեզ դատապարտեաց:
Եւ ասէ. ոչ Տէր: Եւ ասէ Յիսուս. եւ ոչ ես դա- 11
տապարտեմ զքեզ. երթ՝ յայսմհետէ մի մեղանչեր:
ԵՓ. Դարձեալ խօսեցաւ ընդ նոսա Յիսուս, եւ 12
ասէ. ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ, ընդ
խաւար մի գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց: Ասեն 13
ցնա փարիսեցիքն. դու վասն անձին քո վկայես՝ եւ
վկայութիւն քո չէ ճշմարիտ: Պատասխանի ետ Յի- 14
սուս եւ ասէ ցնոսա. թէպէտ եւ ես վկայեմ վասն
անձին իմոյ՝ վկայութիւն իմ ճշմարիտ է, զի գիտեմ
ուստի եկի՝ եւ յո երթամ. բայց դուք ոչ գիտէք

15 ուստի գամ՝ կամ յո երթամ: Դուք ըստ մարմնոյ
16 դատիք. ես ոչ դատիմ եւ ոչ զոք: Թէպէտ եւ դա-
տիմ ես զոք՝ դատաստանն իմ ճշմարիտ է. զի չեմ
17 միայն, այլ ես՝ եւ որ առաքեացն զիս Հայր: Եւ յօ-
րէնսն ձեր գրեալ է՝ թէ երկուց մարդոց վկայու-
18 թիւն ճշմարիտ է: Ես եմ որ վկայեմ վասն իմ, եւ
19 վկայէ վասն իմ որ առաքեացն զիս Հայր: Ասէին
ցնա. ո՞ւր է Հայր քո. պատասխանի ետ Յիսուս եւ
ասէ ցնոսա. ոչ զիս գիտէք՝ եւ ոչ զՀայրն իմ. եթէ
20 զիս գիտէիք, եւ զՀայրն իմ թերեւս գիտէիք: Զայս
բան խօսեցաւ ի տան գանձին՝ յորժամ ուսուցանէր
ի տաճարի անդ. եւ ոչ ոք կալաւ զնա, զի չեւ եւս
հասեալ էր ժամ նորա:

21 ԽԲ. Ասէ դարձեալ ցնոսա Յիսուս. ես եր-
թամ, եւ խնդրիցէք զիս. եւ ի մեղս ձեր մեռա-
նիցիք. զի ուր եսն երթամ, դուք ոչ կարէք գալ:
22 Ասէին Հրեայքն. միթէ զիւրովի՞ն երթայցէ, զի
ասէ թէ ուր եսն երթամ՝ դուք ոչ կարէք գալ:
23 Եւ ասէ ցնոսա. դուք ի ներքուստ աստի էք, եւ ես
ի վերուստ անտի եմ. դուք յաշխարհէ աստի էք, ես
24 չեմ յայսմ աշխարհէ: Բայց ասացի ձեզ՝ թէ ի մեղս
ձեր մեռանիցիք. զի թէ ոչ հաւատայցէք թէ ես եմ,
25 մեռանիցիք ի մեղս ձեր: Ասեն ցնա. դու ո՞վ ես.
ասէ ցնոսա Յիսուս. նախ զի եւ խօսիմ իսկ ընդ ձեզ:
26 Բազում ինչ ունիմ վասն ձեր խօսել եւ դատել.
այլ որ առաքեացն զիս՝ ճշմարիտ է. եւ ես զոր լուայ
27 ի նմանէ, զայն խօսիմ յաշխարհի: Եւ ոչ գիտացին՝
28 թէ զՀօրէ ասէր ցնոսա: Ասէ ցնոսա Յիսուս. յոր-
ժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ՝ յայնժամ
գիտասջիք՝ թէ ես եմ. եւ յանձնէ իմմէ ինչ ոչ առ-
նեմ, այլ որպէս ուսոյց զիս Հայրն իմ, զայն խօսիմ:
29 Եւ որ առաքեացն զիս՝ ընդ իս է. ոչ եթող զիս մի-
30 այն, զի ես զհաճոյս նորա առնեմ հանապազ: Իբրեւ
զայս խօսեցաւ՝ բազումք հաւատացին ի նա:

ԽԶ. Եւ ասէր Յիսուս առ Հրէայսն հաւատացեալս. 31
եթէ դուք կայջիք ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք
իմ էք. Եւ ծանիջիք զճշմարտութիւնն, եւ ճշմարտու- 32
թիւնն ազատեսցէ զձեզ: Պատասխանի ետուն նմա եւ 33
ասեն. զաւակ Աբրահամու եմք, եւ ոչ ումեք երբէք
ծառայեցաք, զիա՞րդ ասես թէ ազատք լինիջիք: Պա- 34
տասխանի ետ նոցա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ,
եթէ ամենայն որ առնէ զմեղս, ծառայ է մեղաց. Եւ 35
ծառայն ոչ յաւիտեան կայ ի տան, իսկ որդին յաւի-
տեան կայ: Իսկ արդ՝ եթէ որդին զձեզ ազատեսցու- 36
ցէ, ճշմարիտ ազատք լինիջիք: Գիտեմ զի զաւակ 37
Աբրահամու էք. այլ խնդրէք սպանանել զիս, զի
բանին իմոյ չէք տեղի ի ձեզ: Ես՝ զոր տեսի առ Հօր 38
իմում՝ խօսիմ. եւ դուք՝ զոր լուարուք ի հօրէն ձեր-
մէ՝ առնէք: Պատասխանի ետուն նմա եւ ասեն. Հայր 39
մեր Աբրահամ է: Ասէ ցնոսա Յիսուս. եթէ որդիք
Աբրահամու էիք՝ զգործսն Աբրահամու գործէիք:
Այլ այժմիկ խնդրէք սպանանել զիս՝ զայր մի, որ 40
ձեզ զճշմարտութիւն խօսեցայ՝ զոր լուայ ի Հօրէ
իմմէ. զայդ Աբրահամ ոչ արար: Դուք առնէք ըզ- 41
գործս հօրն ձերոյ: Ասեն ցնա. մեք ի պոռնկութենէ 42
չեմք ծնեալ. մի է Հայր մեր Աստուած: Ասէ ցնոսա
Յիսուս. եթէ Աստուած էր Հայր ձեր, սիրէիք ար-
դեօք զիս, զի ես յԱստուծոյ ելի՝ եւ եկի. եւ ոչ եթէ
յանձնէ ինչ եկի, այլ նա առաքեաց զիս: Ընդէ՞ր 43
զխօսս իմ ոչ գիտէք դուք. վասն զի ոչ կարէք լսել
զբանն իմ: Դուք ի հօրէ ի սատանայէ էք, եւ զցան- 44
կութիւնս հօրն ձերոյ կամիք առնել. զի նա մարդա-
սպան էր ի սկզբանէ, եւ ի ճշմարտութեան ոչ եկաց,
զի ոչ գոյ ճշմարտութիւն ի նմա. յորժամ խօսիցի
սուտ՝ յիւրոց անտի խօսի. զի սուտ է եւ հայր նորա:
Իսկ ես զի զճշմարտութիւն խօսիմ, ոչ հաւատայք 45
ինձ: Ո՞ ի ձէնջ յանդիմանէ զիս վասն մեղաց. եթէ 46
զճշմարիտն ասեմ ձեզ՝ ընդէ՞ր ոչ հաւատայք ինձ:

47 Որ էն յԱստուծոյ՝ զբանս Աստուծոյ լսէ. եւ դուք
48 վասն այնորիկ ոչ լսէք, զի չէք յԱստուծոյ: Պատաս-
խանի ետուն Հրեայքն՝ եւ ասեն ցնա. ո՞չ բարւոք
ասեմք մեք՝ եթէ Սամարացի ես դու, եւ դեւ դոյ ի
49 քեզ: Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. յիս դեւ ոչ
դոյ՝ այլ պատուեմ զՀայր իմ, եւ դուք անարգէք
50 զիս: Ես ոչ խնդրեմ զփառս իմ. է որ խնդրէն՝ եւ
51 դատի: Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոք զբանն իմ
52 պահեսցէ՝ զմահ մի տեսցէ ի յաւիտեան: Ասեն ցնա
Հրեայքն. արդ՝ գիտացաք եթէ դեւ դոյ ի քեզ. Ա-
բրահամ մեռաւ՝ եւ մարգարէքն. եւ դու ասես՝ եթէ
ոք զբանն իմ պահեսցէ, մի ճաշակեսցէ զմահ ի յա-
53 ւիտեան: Միթէ դու մեծ ինչ ո՞ք իցես քան զհայր
մեր Աբրահամ, որ մեռաւ, եւ մարգարէքն մեռան.
54 արդ՝ դու զո՞ առնես զքեզ: Պատասխանի ետ Յի-
սուս. եթէ ես փառաւորեմ զանձն իմ, փառքն իմ
ոչինչ են. է Հայր՝ որ փառաւորէ զիս, զորմէ դուքն
55 ասէք՝ թէ Աստուած մեր է, Եւ ոչ ճանաչէք զնա.
բայց ես գիտեմ զնա. եւ թէ ասեմ, թէ ոչ գիտեմ
զնա՝ ձեզ նման սուտ լինիմ. այլ գիտեմ զնա, եւ
56 զբան նորա պահեմ: Աբրահամ հայր ձեր ցանկացաւ
57 տեսանել զօր իմ, ետես՝ եւ ուրախ եղեւ: Ասեն ցնա
Հրեայքն. յիսուն ամ չեւ եւս է քո, եւ զԱբրահա՞մ
58 տեսեր: Ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ասեմ ձեզ.
59 յառաջ քան զլինելն Աբրահամու եմ ես: Վէմն
առին Հրեայքն, զի արկցեն ի վերայ նորա. եւ Յի-
սուս խոյս ետ, եւ ել գնաց ի տաճարէ անտի:

ԳԼՈՒԽ Թ.

1 ԵՒ. Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ի
2 ծնէ: Եւ հարցին ցնա աշակերտքն նորա՝ եւ ասեն.
ռաբբի՝ ո՞յր վնաս է, սորա՞ թէ հօր եւ մօր իւրոյ, զի
3 կոյր ծնցի: Պատասխանի ետ Յիսուս. ոչ դորա վնաս
է, եւ ոչ հօր եւ մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին

գործքն Աստուծոյ ի դմա: Եւ ինձ պարտ է գործել 4
զգործս այնորիկ՝ որ առաքեացն զիս, մինչ աւուր կայ․
գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել: Մինչդեռ 5
յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի: Զայս իբրեւ 6
ասաց, եթուք ի գետին՝ եւ արար կաւ ի թքոյն, եւ
ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին: Եւ ասէ ցնա․ 7
երթ՝ լուա յաւազանին Սիլովմայ, որ թարգմանի ա-
ռաքեալ․ չոգաւ լուացաւ, եկն եւ տեսանէր: Իսկ 8
դրացիքն՝ եւ որոց տեսեալն էր զնա յառաջագոյն թէ
մուրացիկ էր, ասէին․ ո՞չ սա էր՝ որ նստէրն եւ մու-
րանայր․ կէսքն ասէին․ նա է: Այլքն ասէին․ ոչ՝ այլ 9
նման է նմա․ եւ ինքն ասէր՝ թէ ես եմ: Ասեն ցնա․ 10
իսկ զիա՞րդ բացան աչք քո: Նա ետ պատասխանի․ 11
այր մի՝ որում Յիսուսն ասեն, կաւ արար՝ եւ ծե-
փեաց զաչս իմ, եւ ասէ ցիս․ երթ ի Սիլովամ, եւ
լուա․ չոգայ լուացայ՝ եւ տեսանեմ: Ասեն ցնա․ ո՞ւր 12
է նա․ ասէ ցնոսա․ ոչ գիտեմ: Ածին առ փարիսե- 13
ցիսն զնա, որ երբեմն կոյրն էր: Եւ էր շաբաթ՝ յոր- 14
ժամ զկաւն արար Յիսուս, եւ եբաց զաչս կուրին:
Դարձեալ հարցանէին զնա փարիսեցիքն, թէ զիա՞րդ 15
տեսանես: Եւ նա ասէ ցնոսա․ կաւ եդ ի վերայ աչաց
իմոց, եւ լուացայ՝ եւ տեսանեմ: Ասեն ոմանք ի փա- 16
րիսեցւոցն․ ոչ է այրն այն յԱստուծոյ, զի զշաբաթս
ոչ պահէ: Կէսքն ասէին․ իսկ զիա՞րդ կարէ մարդ մե-
ղաւոր այսպիսի նշանս առնել: Եւ էին հերձուածք
ի մէջ նոցա: Ասեն դարձեալ ցկոյրն․ դու զի՞ ասես 17
վասն նորա՝ զի եբաց զաչս քո: Եւ նա ասէ թէ մար-
գարէ է: Եւ ոչ հաւատային Հրեայքն զնմանէ՝ թէ 18
կոյր էր՝ եւ բացաւ, մինչեւ կոչեցին զծնողս բացելոյն.
Հարցին ցնոսա եւ ասեն՝ սա՞ է որդին ձեր, զորմէ 19
դուքն ասէիք, եթէ կոյր ծնաւ․ արդ զիա՞րդ տեսանէ:
Պատասխանի ետուն նոցա ծնողքն նորա՝ եւ ասեն․ 20
գիտեմք զի սա է որդին մեր, եւ զի կոյր ծնաւ․ Բայց 21
զիա՞րդ այժմդ տեսանէ՝ ոչ գիտեմք․ կամ թէ ո՞ եբաց

զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք. զդա իսկ հարցէք, ին-
քնին ի չափ հասեալ է, ինքն իսկ խօսեսցի վասն իւր։
22 Զայս ասացին ծնողքն նորա, զի երկնչէին ի Հրէի-
ցըն. քանզի ուխտ եդեալ էր Հրէից, եթէ որ խոս-
տովանեսցէ զնա Քրիստոս՝ ի բաց կացցէ ի ժողովըր-
23 դենէն։ Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա, թէ
24 ինքնին ի չափ հասեալ է, զնա իսկ հարցէք։ Դար-
ձեալ կրկին անգամ կոչեցին զայրն՝ որ կոյրն էր, եւ
ասեն ցնա. տուր փառս Աստուծոյ, մեք գիտեմք՝ զի
25 այրն այն մեղաւոր է։ Եւ նա ասէ. թէ մեղաւոր իցէ՝
ես ոչ գիտեմ. բայց զայս գիտեմ, զի կոյր էի՝ եւ արդ
26 տեսանեմ։ Դարձեալ ասեն ցնա. զի՞նչ արար քեզ,
27 զիա՞րդ եբաց զաչս քո։ Պատասխանի ետ նոցա. այժմ
ասացի ձեզ՝ եւ ոչ լուարուք. զի՞ կամիք միւսանգամ
28 լսել. միթէ եւ դո՞ւք կամիք աշակերտել նմա։ Նոքա
հայհոյէին զնա՝ եւ ասէին. դու լիջիր նորա աշակերտ.
29 մեք Մովսեսի աշակերտք եմք։ Մեք գիտեմք՝ զի ընդ
Մովսեսի խօսեցաւ Աստուած. զսա ոչ գիտեմք ուստի՛
30 իցէ։ Պատասխանի ետ այրն եւ ասէ ցնոսա. այդ իսկ
են սքանչելիք. զի դուք ոչ գիտէք՝ ուստի իցէ, եւ
31 զիմ զաչս եբաց։ Գիտեմք՝ զի Աստուած մեղաւորաց
ոչ լսէ. բայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ եւ ըզ-
32 կամս նորա առնիցէ, նմա լսէ։ Ի յաւիտենից ոք ոչ
լուաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ի ծնէ կոյր ծնելոյ.
33 Եթէ ոչ յԱստուծոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել
34 ինչ։ Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. ի մեղս իսկ
ծնեալ ես ամենեւին, եւ դու վարդապետե՞ս լինիս մեր.
35 եւ հանին զնա արտաքս։ Լուաւ Յիսուս՝ եթէ հանին
զնա արտաքս. եւ իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա. դու
36 հաւատա՞ս յորդի Աստուծոյ։ Նա պատասխանի ետ
37 եւ ասէ. Տէր ո՞վ է՝ զի հաւատացից ի նա։ Ասէ ցնա
Յիսուս. եւ տեսեր զնա, եւ որ խօսիդ ընդ քեզ՝ նա
38 է։ Եւ նա ասէ. հաւատամ Տէր, եւ երկիր եպագ նմա։
39 ԶԹ. Եւ ասէ Յիսուս. ի դատաստան եկի յաշխարհս

յայս, զի որ ոչն տեսանեն՝ տեսցեն, եւ որք տեսա-
նենն՝ կուրասցին։ Լուան ոմանք ի փարիսեցւոցն՝ որք 40
ընդ նմա էին, եւ ասեն ցնա. միթէ եւ մեք կո՞յրք
իցեմք։ Ասէ ցնոսա Յիսուս. եթէ կոյրք էիք՝ ոչ էր 41
ձեր մեղ. բայց արդ ասէք՝ եթէ տեսանեմք, եւ մեղ-
քըն ձեր ի ձեզ հաստատեալ են։

ԳԼՈՒԽ Ժ.

Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ոչ մտանէ ընդ 1
դուռն ի գաւիթ ոչխարաց, այլ ընդ այլ ելանէ՝ նա
գող է, եւ աւազակ։ Իսկ որ մտանէ ընդ դուռն, հո- 2
վիւ է ոչխարաց։ Նմա դռնապանն բանայ, եւ ոչխարքն 3
ձայնի նորա լսեն. եւ զիւր ոչխարսն կոչէ յանուանէ,
եւ հանէ զնոսա։ Եւ յորժամ զիւրսն զամենայն հա- 4
նիցէ, առաջի նոցա երթայ՝ եւ ոչխարքն զհետ նորա
երթան, զի ճանաչեն զձայն նորա։ Զօտարի զհետ 5
ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանա-
չեն զձայն օտարաց։ Զայս առակ ասաց նոցա Յիսուս, 6
եւ նոքա ոչ գիտէին՝ եթէ զինչ էր որ խօսէրն ընդ
նոսա։ Դարձեալ ասէ ցնոսա Յիսուս. ամէն ամէն ա- 7
սեմ ձեզ, զի ես եմ դուռն ոչխարաց. Ամենեքեան 8
որ յառաջ քան զիս եկին, գողք էին եւ աւազակք.
այլ ոչ լուան նոցա ոչխարքն։ Ես եմ դուռն. ընդ իս 9
եթէ ոք մտանիցէ, կեցցէ. մտցէ եւ ելցէ եւ ճարակ
գտցէ։ Գող ոչ գայ՝ եթէ ոչ՝ զի գողասցի եւ սպան- 10
ցէ եւ կորուսցէ. ես եկի զի զկեանս ունիցին, եւ
առաւել եւս ունիցին։

ԶԲ. Ես եմ հովիւն քաջ. հովիւ քաջ զանձն 11
իւր դնէ ի վերայ ոչխարաց։ Իսկ վարձկանն՝ որ ոչ 12
է հովիւ, որոյ ոչ իւր են ոչխարքն, իբրեւ տեսա-
նէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն եւ փախչի.
եւ գայլն յափշտակէ զնոսա եւ ցրուէ. Քանզի 13
վարձկան է, եւ չէ փոյթ նմա վասն ոչխարացն։
Ես եմ հովիւն քաջ, եւ ճանաչեմ զիմսն՝ եւ ճանա- 14

15 չեմ՝ յիմոցն: Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ եւ ես
16 զՀայր. եւ զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց: Նաեւ
այլ եւս ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ.
եւ զայն եւս պարտ է ինձ ածել այսր, եւ ձայնի ի-
մում լուիցեն, եւ եղիցին մի հօտ՝ եւ մի հովիւ:
17 Վասն այնորիկ սիրէ զիս Հայր իմ, զի ես դնեմ զան-
18 ձըն իմ, զի միւսանգամ առից զնա: Ոչ ոք հանէ զնա
յինէն, այլ ես դնեմ զնա անձամբ իմով. իշխանու-
թիւն ունիմ դնել զնա, եւ իշխանութիւն ունիմ
միւսանգամ առնուլ զնա. զայս պատուէր առի ի
19 Հօրէ իմմէ: Դարձեալ հերձուած լինէր ի մէջ Հրէ-
20 ից վասն բանիցս այսոցիկ: Եւ ասէին բազումք ի նո-
ցանէ. դեւ գոյ ի նմա՝ եւ մոլեգնի, զի՞ բնաւ լսէք
21 նմա: Այլքն ասէին. այսպիսի բանք ոչ դիւահարի են.
միթէ դեւ կարէ՞ զաչս կուրի բանալ:
22 ԶԳ. Եղեն յայնժամ նաւակատիքն յԵրուսա-
23 ղէմ, եւ ձմեռն էր: Եւ շրջէր Յիսուս ի տաճարին՝ ի
24 ի սրահին Սողոմոնի: Շուրջ եղեն զնովաւ Հրեայքն
եւ ասեն. մինչեւ յե՞րբ թափես զոգիս մեր, եթէ
25 դու ես Քրիստոսն՝ ասա մեզ համարձակ: Պատաս-
խանի ետ նոցա Յիսուս եւ ասէ. ասացի ձեզ՝ եւ ոչ
հաւատայք ինձ. զգործսն զոր ես գործեմ յանուն
26 Հօր իմոյ՝ նոքին իսկ վկայեն վասն իմ: Այլ դուք
27 ոչ հաւատայք, զի չէք յոչխարաց անտի իմոց: Ոչ-
խարք իմ ձայնի իմում լսեն, եւ ես ճանաչեմ զնո-
28 սա, եւ զկնի իմ գան. Եւ ես տամ նոցա զկեանսն
յաւիտենականս, եւ մի կորիցեն ի յաւիտեան. եւ մի
29 ոք յափշտակեսցէ զնոսա ի ձեռաց իմոց: Հայրն իմ՝
որ ետ ինձ զնոսա, մեծ է քան զամենայն, եւ ոչ ոք
30 կարէ յափշտակել ի ձեռաց Հօր իմոյ: Ես եւ Հայր
31 իմ մի եմք: Վէմս առին Հրեայքն՝ զի քարկոծ ա-
32 րասցեն զնա: Պատասխանի ետ նոցա Յիսուս. բա-
զում գործս բարիս ցուցի ձեզ ի Հօրէ իմմէ. վասն
33 որո՞յ գործոյ ի նոցանէ քարկոծ առնէք զիս: Պատաս-

խանի ետուն նմա Հրեայքն. վասն բարւոյ գործոյ ոչ
առնումք զքեզ քարկոծ, այլ վասն հայհոյութեան.
եւ զի դու մարդ ես, եւ զանձն քո Աստուած առնես:
Պատասխանի ետ նոցա Յիսուս. ո՞չ յօրէնս ձեր 34
գրեալ է, ես ասացի թէ աստուածք իցէք: Իսկ եթէ 35
զնոսա աստուածս ասէ, առ որս բանն Աստուծոյ ե-
ղեւ, եւ ոչ է մարթ եղծանել զգրոյն. Իսկ զոր Հայր 36
սրբեաց՝ եւ առաքեաց յաշխարհ, դուք ասէք թէ
հայհոյես, զի ասացի՝ թէ որդի Աստուծոյ եմ: Եթէ 37
ոչ գործեմ զգործս Հօր իմոյ, մի՛ հաւատայք ինձ.
Ապա թէ գործեմ, թէ եւ ինձ ոչ հաւատայք, սա- 38
կայն գործոցն հաւատացէք. զի գիտասջիք եւ ծանի-
ջիք՝ եթէ Հայր յիս եւ ես ի Հայր: Դարձեալ խընդ- 39
րէին զնա ունել, եւ ել ի ձեռաց նոցա: Եւ գնաց 40
միւսանգամ յայնկոյս Յորդանանու՝ ի տեղին, ուր էր
Յովհաննէս զառաջինն՝ եւ մկրտէր. եւ անդ լինէր:
Եկին բազումք առ նա եւ ասէին. զի Յովհաննէս նշան ինչ 41
ոչ արար, Բայց զամենայն զոր ասաց Յովհաննէս վասն 42
նորա, ճշմարիտ էր. եւ բազումք հաւատացին ի նա անդ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ՁԹ. Եւ էր ոմն հիւանդ Ղազարոս ի Բեթա- 1
նիա, ի գեղջէ Մարեմայ, եւ Մարթայի քեռ նորա:
Այս այն Մարիամ է որ օծ զՏէրն իւղով եւ ջնջեաց 2
զոտս նորա հերով իւրով. որոյ եղբայրն Ղազարոս
հիւանդ էր: Առաքեցին առ նա քորքն նորա՝ եւ ա- 3
սեն. Տէր՝ ահաւասիկ զոր դուն սիրէիր՝ հիւանդա-
ցեալ է: Իբրեւ լուաւ Յիսուս, ասէ. այն հիւան- 4
դութիւն չէ ի մահ, այլ վասն փառացն Աստուծոյ.
զի փառաւոր լիցի որդի Աստուծոյ այնուիկ: Եւ սի- 5
րէր Յիսուս զՄարթա եւ զքոյր նորա զՄարի-
ամ, եւ զՂազար: Իբրեւ լուաւ թէ հիւանդացեալ 6
է, զտեղի կալաւ անդէն ուր էրն՝ աւուրս երկուս: Ա- 7
պա յետ այնորիկ ասէ ցնոսա. եկայք երթիցուք միւս-

8 անգամ ի Հրէաստան։ Ասեն ցնա աշակերտքն. ռաբ-
բի՛ այժմ եւս խնդրէին զքեզ Հրեայքն քարկոծ առ-
9 նել. եւ դարձեալ՝ երթաս անդրէն։ Պատասխանի ետ
Յիսուս. ո՞չ երկոտասան ժամ է աւուր. եթէ ոք
գնայ ի տուընջեան՝ ոչ գայթագղի, զի զլոյս աշխար-
10 հիս այսորիկ տեսանէ. Ապա թէ ոք գնայ ի գիշերի՝
11 գայթագղի, զի լոյս ոչ գոյ ընդ նմա։ Զայս իբրեւ ա-
սաց, յետ այնորիկ ասէ ցնոսա. Ղազարոս բարեկամ
12 մեր ննջեաց. այլ երթամ, զի զարթուցից զնա։ Ասեն
ցնա աշակերտքն. Տէր՝ եթէ ննջեաց՝ ապա ապրի։
13 Այլ Յիսուս վասն մահուն նորա ասէր. նոցա այս-
14 պէս թուեցաւ՝ թէ վասն ննջելոյ քնոյն ասէ։ Յայն-
ժամ ասէ ցնոսա Յիսուս յայտնապէս. Ղազարոս մե-
15 ռաւ. Եւ ես ուրախ եմ վասն ձեր, զի դուք հաւա-
տասջիք ինձ, զի ես չէի անդ. բայց արդ՝ եկայք եր-
16 թիցուք առ նա։ Ասէ Թովմաս՝ անուանեալն երկուո-
րեակ՝ ցաշակերտակիցսն. ո՛ն՝ եկայք եւ մեք՝ զի ընդ
17 նմա մեռցուք։ Եկն Յիսուս՝ եգիտ զնա չորեքօրեայ ի
18 գերեզմանի։ Եւ էր Բեթանիա մերձ յԵրուսաղէմ,
19 իբրեւ ասպարիսօք հնգետասան։ Բազումք ի Հրէից
անտի եկեալ էին առ Մարթա եւ Մարիամ, զի
20 մխիթարեսցեն զնոսա վասն եղբօրն։ Մարթա իբրեւ
լուաւ՝ թէ Յիսուս գայ, ընդառաջ գնաց նորա. բայց
21 Մարիամ նստէր անդէն ի տան։ Ասէ Մարթա ցՅի-
սուս. Տէր՝ եթէ աստ լեալ էիր, եղբայրն իմ չէր
22 մեռեալ. Այլ եւ արդ գիտեմ, եթէ զոր ինչ խնդրես-
23 ցես յԱստուծոյ՝ տացէ քեզ Աստուած։ Ասէ ցնա Յի-
24 սուս. յարիցէ եղբայրն քո։ Ասէ ցնա Մարթա. գի-
տեմ զի յարիցէ ի յարութեան՝ յաւուրն յետնում։
25 Ասէ ցնա Յիսուս. ես իսկ եմ յարութիւն եւ կեանք.
26 որ հաւատայ յիս, թէպէտ եւ մեռանի՝ կեցցէ. Եւ
ամենայն որ կենդանի է եւ հաւատայ յիս, մի մեռցի
27 ի յաւիտեան. հաւատա՞ս այսմիկ։ Ասէ ցնա. այո՛ Տէր
ես հաւատացի՝ եթէ դու ես Քրիստոսն որդի Աս-

տուծոյ, որ յաշխարհ գալոց էր: Եւ զայս իբրեւ ա- 28
սաց, գնաց եւ կոչեաց զՄարիամ զքոյր իւր լռելեայն՝
եւ ասէ. վարդապետ եկեալ է եւ կոչէ զքեզ: Նա 29
իբրեւ լուաւ՝ յարեաւ վաղվաղակի, եւ եկն առ Յիսուս:
Չեւ եւս էր եկեալ Յիսուս ի գեօղն. այլ էր անդէն 30
ի տեղւոջն՝ ուր ընդառաջ եղեւ նմա Մարթա: Իսկ 31
Հրեայքն՝ որ էին ընդ նմա ի տան անդ եւ մխիթա-
րէին զնա, իբրեւ տեսին զՄարիամ թէ յարեաւ
վաղվաղակի եւ գնաց, գնացին եւ նոքա զհետ նորա.
համարէին թէ ի գերեզմանն երթայ՝ զի լացցէ անդ:
Իսկ Մարիամ իբրեւ եկն ուր էրն Յիսուս եւ ետես 32
զնա, անկաւ առ ոտս նորա եւ ասէ. Տէր՝ եթէ աստ
էիր դիպեալ՝ ոչ էր մեռեալ եղբայրն իմ: Յիսուս 33
իբրեւ ետես զնա զի լայր, եւ որ ընդ նմա էին Հրեայ-
քըն՝ լային, խռովեցաւ յոգի իւր իբրեւ զայրացեալ
եւ ասէ. ո՞ւր եդիք զնա: Ասեն ցնա. Տէր՝ եկ եւ 34
տես: Եւ արտասուեաց Յիսուս: Ասէին Հրեայքն, 35
տեսէք՝ ո՞րչափ սիրէր զնա. կէսքն ի նոցանէ ասէին. 36
ո՞չ կարէր սա, որ եբաց զաչս կուրին, առնել՝ զի եւ 37
սա մի՛ մեռցի: Յիսուս դարձեալ զայրացեալ ընդ 38
միտս իւր, գայ ի գերեզմանն. եւ էր այր մի, եւ վէմ մի
եդեալ ի վերայ նորա: Եւ ասէ Յիսուս. ի բաց արարէք 39
զվէմդ: Ասէ ցնա Մարթա՝ քոյր մեռելոյն. Տէր՝ արդ
հոտեալ իցէ, քանզի չորեքօրեայ է: Ասէ ցնա Յի- 40
սուս. ո՞չ ասացի քեզ՝ եթէ հաւատասցես, տեսցես
զփառսն Աստուծոյ: Եւ իբրեւ ի վեր առին զվէմն, Յի- 41
սուս ամբարձ զաչս իւր ի վեր, եւ ասէ. Հա՛յր՝ գոհա-
նամ զքէն. զի լուար ինձ. Եւ ես գիտէի՝ զի յամենայն 42
ժամ լսես ինձ. այլ վասն ժողովրդեանս որ շուրջ
կան՝ առնեմ, զի հաւատասցեն՝ թէ դու առաքեցեր
զիս: Զայս իբրեւ ասաց, ի ձայն մեծ աղաղակեաց եւ 43
ասէ. Ղազարէ՝ արի եկ արտաքս: Եւ եել մեռեալն 44
ոտիւք կապեալովք, եւ ձեռօքն երիզապնդօք, եւ երե-
սօքն վարշամակապատօք: Եւ ասէ ցնոսա Յիսուս.

լուծէք զդա՝ եւ թողէք երթալ: Բազումք ի Հրէից՝ 45
որ եկեալ էին առ Մարեմանս, իբրեւ տեսին զոր ա-
46 րարն՝ հաւատացին ի նա: Եւ ոմանք ի նոցանէ գնա-
ցին առ փարիսեցիսն, եւ պատմեցին նոցա՝ զոր արարն
Յիսուս:

47 ԶԶ. Ժողովեցին քահանայապետքն եւ փարիսե-
ցիք ատեան, եւ ասեն. զի՞նչ արասցուք, զի այրն այն
48 բազում նշանս առնէ: Եթէ թողումք զնա այնպէս,
ամենեքին հաւատան ի նա. եւ գայցեն Հռոմք՝ եւ
49 բառնայցեն զազգս մեր՝ եւ զտեղի: Մի ոմն ի նոցանէ՝
անուն Կայիափա, որ քահանայապետ էր տարւոյն
50 այնորիկ, ասէ ցնոսա. դուք ոչ ինչ գիտէք, Եւ ոչ
բնաւ խորհել իսկ, թէ լաւ է մեզ՝ զի այր մի մե-
ռանիցի ի վերայ ժողովրդեանս, եւ մի՛ ամենայն ազգս
51 կորիցէ: Զայս ոչ յանձնէ ինչ ասաց. այլ զի քա-
հանայապետ էր տարւոյն այնորիկ, մարգարէացաւ՝ ե-
52 թէ մեռանելոց էր Յիսուս ի վերայ ազգին. Եւ ոչ ի
վերայ ազգին միայն, այլ զի եւ զորդիսն Աստուծոյ
53 զցրուեալսն ժողովեսցէ ի մի: Ապա յայնմ օրէ խոր-
54 հուրդ արարին՝ զի սպանցեն զնա: Եւ Յիսուս այնու-
հետեւ ոչ եթէ համարձակ շրջէր ի մէջ Հրէից. այլ
գնաց անտի յերկիր մի՝ որ մերձ էր յանապատ, ի
քաղաք մի՝ որում անուն էր Եփրայիմ, եւ անդ լի-
նէր աշակերտօքն հանդերձ:

55 ԶԷ. Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ բազումք ե-
լին յԵրուսաղէմ ի գաւառէ անտի յառաջագոյն քան
56 զզատիկն, զի սրբեսցեն զանձինս իւրեանց: Խնդրէին
զՅիսուս, եւ ասէին ընդ միմեանս՝ մինչ կային ի տա-
ճարին. զիա՞րդ թուի ձեզ՝ եթէ ոչ գայցէ ի տօն այս:
Պատուէր տուեալ էր քահանայապետիցն եւ փարի-
սեցւոց, զի թէ ոք գիտասցէ թէ ուր է, գուշակեսցէ
զնմանէ զի կալցին զնա:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Իսկ Յիսուս վեց աւուրբ յառաջ քան զզա- 1
տիկն եկն ի Բեթանիա, ուր էր Ղազար մեռեալն,
զոր յարոյց ի մեռելոց։ Եւ արարին անդ նմա ըն- 2
թրիս. եւ ի սպասու կայր Մարթա, եւ Ղազար մի
էր ի բազմելոց ընդ նմա։ Իսկ Մարեմայ առեալ լիտր 3
մի իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ, օծ զոտսն Յի-
սուսի, եւ հերով իւրով մաքրէր զոտս նորա. եւ
տունն լի եղեւ ի հոտոյ իւղոյն։ Ասէ մի ոմն յաշակերտաց 4
անտի՝ Յուդա Իսկարիովտացի, որ մատնելոցն էր զնա.
Ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դե- 5
նարի, եւ տուաւ աղքատաց։ Զայս ասաց՝ ոչ զի 6
զաղքատաց ինչ փոյթ էր նմա, այլ զի գող էր՝ եւ
զարկղն ինքն ունէր. եւ որ ինչ անկանէրն՝ նա կրէր։
Ասէ Յիսուս. Թոյլ տուր դմա, զի յօրն պատանաց 7
իմոց պահեսցէ զայդ։ Զաղքատս յամենայն ժամ ընդ 8
ձեզ ունիք. զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք։ Ի- 9
բրեւ գիտաց ժողովուրդ բազում ի Հրէից թէ անդ
է՝ եկին, ոչ միայն վասն Յիսուսի, այլ զի եւ զՂա-
զար տեսցեն, զոր յարոյց ի մեռելոց։ Խորհուրդ 10
արարին քահանայապետքն՝ զի եւ զՂազար սպան-
ցեն. Քանզի բազումք ի Հրէից երթային՝ եւ հա- 11
ւատային ի Յիսուս։

ԽԿ. Ի վաղիւ անդր ժողովուրդ բազում որ եկեալ 12
էր ի տօնն, իբրեւ լուան թէ գայ Յիսուս յԵրուսա-
ղէմ, Առին ոստս արմաւենեաց՝ եւ ելին ընդ առաջ 13
նորա, աղաղակէին եւ ասէին. Ովսաննայ, օրհնեալ որ
գաս յանուն Տեառն՝ Թագաւորդ Իսրայելի։ Եւ 14
գտեալ Յիսուսի էշ մի, նստաւ ի վերայ նորա. որպէս
եւ գրեալ է. Մի երկնչիր դուստր Սիոնի՝ ահաւասիկ 15
Թագաւոր քո գայ նստեալ ի վերայ յաւանակի իշոյ։
Եւ զայն ինչ ոչ գիտացին աշակերտքն նորա զառա- 16
ջինն, այլ յորժամ փառաւորեցաւ Յիսուս, յայն-

ժամ յիշեցին, եթէ այն էր՝ որ գրեալն էր վասն նո-
17 րա. եւ զայն արարին նմա: Եւ ժողովուրդն վկայէր՝
որ էր ընդ նմա, թէ զՂազար կոչեաց եւեթ ի գե-
18 րեզմանէն, եւ յարոյց զնա ի մեռելոց: Եւ վասն այ-
նորիկ ընդառաջ ելեւ նմա ժողովուրդն, զի լուան ե-
19 թէ զայն նշանս արարեալ էր նորա: Իսկ փարիսեցիքն
ասէին ընդ միմեանս. տեսանէ՞ք զի ոչինչ օգտիք. ա-
20 հաւասիկ աշխարհ ամենայն զկնի նորա գնաց: Էին
անդ ոմանք եւ հեթանոսք յելելոցն անդր, զի երկիր
21 պագանիցեն ի տօնին: Նոքա մատեան առ Փիլիպ-
պոս՝ որ ի Բեթսայիդա Գալիլեացւոցն էր, աղա-
չէին զնա եւ ասէին. Տէր՝ կամիմք զՅիսուս տեսա-
22 նել: Գայ Փիլիպպոս եւ ասէ ցԱնդրէաս. Անդրէաս
23 եւ Փիլիպպոս ասեն ցՅիսուս: Եւ Յիսուս պա-
տասխանի ետ նոցա եւ ասէ. եհաս ժամ զի փառա-
ւորեսցի Որդի մարդոյ:

24 ԻԲ. Ամէն ամէն ասեմ ձեզ. եթէ ոչ հատն ցորե-
25 նոյ անկեալ յերկիր մեռանիցի, Ինքն միայն կայ. ա-
պա եթէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ: Որ սիրէ
զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ ատեայ զանձն իւր յաշ-
խարհիս յայսմիկ, ի կեանս յաւիտենականս պահես-
26 ցէ զնա: Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ.
եւ ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի. ե-
թէ ոք զիս պաշտիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ:

27 ԻԳ. Բայց այժմ անձն իմ խռովեալ է. եւ
զի՞նչ ասացից, եթէ Հայր՝ ապրեցո զիս ի ժամա-
նակէ աստի յայսմանէ, այլ վասն այնորիկ եկի ի
28 ժամս յայս: Հայր՝ փառաւորեա զորդի քո: Եկն
բարբառ յերկնից. Եւ փառաւոր արարի, եւ դար-
29 ձեալ փառաւոր արարից: Եւ ժողովուրդն որ կայր
եւ լսէր՝ ասէին, որոտումն լինել: Կէսքն ասէին՝ հրեշ-
30 տակ խօսեցաւ ընդ նմա: Պատասխանի ետ Յիսուս
եւ ասէ. ոչ վասն իմ ինչ եկն բարբառս այս, այլ
31 վասն ձեր: Այժմիկ դատաստան է աշխարհիս այսորիկ,

այժմիկ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս։
Եւ ես յորժամ բարձրացայց յերկրէ, զամենեսին 32
ձգեցից առ իս։ Զայս ասէր, նշանակելով՝ թէ որով 33
մահու մեռանելոց իցէ։ Պատասխանի ետ նմա ժո- 34
ղովուրդն. մեք լուաք յօրինաց՝ եթէ Քրիստոսն
յաւիտեան կայ, եւ դու զիա՞րդ ասես՝ թէ պարտ է
բարձրանալ Որդւոյ մարդոյ. ո՞վ է այն որդին մարդոյ։
Ասէ ցնոսա Յիսուս. փոքր միւս եւս ժամանակ լոյս 35
ընդ ձեզ է. գնացէք՝ մինչդեռ զլոյսն ունիք, զի մի
խաւար ձեզ հասցէ. զի որ գնայ ի խաւարի՝ ոչ գիտէ
յո երթայ։ Մինչդեռ զլոյսն ընդ ձեզ ունիք՝ հաւա- 36
տացէք ի լոյսն, զի որդիք լուսոյ եղիջիք։ Զայս խօ-
սեցաւ Յիսուս եւ չոգաւ՝ թաքեաւ ի նոցանէ։ Եւ 37
այնչափ նշանս արարեալ էր առաջի նոցա, եւ նոքա
ոչ հաւատային ի նա. Զի լցցի բանն Եսայեայ մար- 38
գարէի՝ զոր ասացն. Տէր՝ ո՞ հաւատաց ի լուր մեր,
եւ բազուկ Տեառն ո՞ւմ յայտնեցաւ։ Վասն այնո- 39
րիկ ոչ կարէին հաւատալ, զի միւսանգամ ասէ
Եսայի. Թէ կուրացոյց զաչս նոցա, եւ ապշեցոյց 40
զսիրտս նոցա. զի մի տեսցեն աչօք, եւ իմասցին սըր-
տիւք, եւ դարձցին՝ եւ բժշկեցից զնոսա։ Զայս ա- 41
սաց Եսայի՝ զի եւտես զփառս նորա, եւ խօսեցաւ վասն
նորա։ Բայց սակայն եւ յիշխանաց անտի բազումք 42
հաւատացին ի նա. այլ վասն փարիսեցւոցն ոչ յայ-
տնէին, զի մի ի ժողովրդենէն ելանիցեն։ Քանզի սիրեցին 43
զփառս մարդկան առաւել քան զփառսն Աստուծոյ։

ԻԲ. Եւ Յիսուս աղաղակէր՝ եւ ասէր. որ 44
հաւատայ յիս՝ ոչ հաւատայ յիս, այլ յայն՝ որ
առաքեացն զիս։ Եւ որ տեսանէ զիս, զայն տեսանէ՝ 45
որ առաքեացն զիս։ Ես լոյս յաշխարհ եկի, զի ամե- 46
նայն որ հաւատայ յիս՝ ի խաւարի մի մնասցէ։ Եւ 47
եթէ ոք լուիցէ բանից իմոց, եւ ոչ պահեսցէ, ես ոչ
դատիմ զնա, քանզի ոչ եկի՝ թէ դատեցայց զաշ-
խարհ, այլ զի փրկեցից զաշխարհ։ Որ անարգէ զիս, 48

եւ ոչ ընդունի զբանս իմ, գոյ՝ որ դատի զնա. բանն
զոր ես խօսեցայ, նա դատի զնա յաւուրն յետնում:
49 Զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ. այլ որ առաքեացն
զիս Հայր, նա ետ ինձ պատուէր՝ զինչ ասացից եւ
50 զինչ խօսեցայց: Եւ գիտեմ՝ եթէ պատուէրն այն
կեանք են յաւիտենականք: Արդ՝ զոր ես խօսիմ,
որպէս ասաց ինձ Հայրն՝ այնպէս խօսիմ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 ԵՒ Յառաջագոյն քան զտօնն զատկի, գիտաց
Յիսուս, թէ հասեալ է ժամ նորա՝ զի փոխեսցի
յաշխարհէս աստի առ Հայր. սիրեաց զիւրսն՝ որ յաշ-
2 խարհի աստ են, ի սպառ սիրեաց զնոսա: Եւ ի լինել
ընթրեացն, սատանայի խոկ արկեալ էր ի սիրտ՝ զի
մատնեսցէ զնա Յուդա Սիմովնի Իսկարիովտացւոյ:
3 Գիտաց Յիսուս զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս
նորա, եւ թէ յԱստուծոյ ել՝ եւ առ Աստուած եր-
4 թայ, Յառնէ յընթրեաց անտի, եւ դնէ զհանդերձ-
5 սն, եւ առեալ զենջակ մի՝ սփածաւ: Եւ ապա
առեալ ջուր՝ արկ ի կոնք, եւ սկսաւ լուանալ զոտս
աշակերտացն, եւ սրբէր զենջակաւն՝ զոր սփածեալն
6 էր: Գայ առ Սիմովն Պետրոս, եւ նա ասէ ցնա.
7 Տէր՝ դու զիմ զոտս լուանաս: Պատասխանի ետ նմա
Յիսուս՝ եւ ասէ. զոր ինչ ես գործեմ, դու այժմ
8 ոչ գիտես. բայց ապա գիտասջիր: Ասէ ցնա Պետրոս.
ոչ լուասցես զոտս իմ յաւիտեան: Պատասխանի ետ
նմա Յիսուս. եթէ ոչ լուացից զքեզ՝ ոչ ունիս ընդ
9 իս մասն: Ասէ ցնա Սիմովն Պետրոս. Տէր՝ մի միայն
10 զոտս իմ, այլ եւ զձեռս եւ զգլուխ: Ասէ ցնա Յի-
սուս. լուացելոյն չէ ինչ պիտոյ՝ բայց զի զոտսն լուա-
նայցէ. քանզի ամենեւին սուրբ է. եւ դուք սուրբ
11 էք, այլ ոչ ամենեքին: Զի գիտէր զայն որ մատնե-
լոցն էր զնա, վասն այնորիկ ասաց՝ թէ ոչ ամենեքին
12 սուրբ էք: Եւ յորժամ լուաց զոտս նոցա, առ զհան-

դերձն իւր՝ եւ դարձեալ բազմեցաւ, եւ ասէ ցնոսա.
գիտէ՞ք զինչ արարի ձեզ։ Դուք կոչէք զիս վարդա- 13
պետ եւ Տէր. եւ բարւոք ասէք, քանզի եմ իսկ։
Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ Տէրս եւ վար- 14
դապետս, եւ դուք պարտիք զմիմեանց ոտս լուանալ։
Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, 15
եւ դուք առնիջիք։
ԺԶ. Ամէն ամէն ասեմ ձեզ. ոչ է ծառայ մեծ 16
քան զՏէր իւր, եւ ոչ առաքեալ՝ մեծ քան զայն՝ որ
առաքեացն զնա։ Եթէ զայս գիտէք, երանելի եւս 17
էք՝ եթէ առնիցէք զայս։ Ոչ վասն ամենեցուն ձեր 18
ասեմ. զի ես գիտեմ, զորս ընտրեցի. այլ զի լցցի
գիրն, թէ որ ուտէր ընդ իս հաց՝ արար ինձ խա-
բէութիւն։ Յայսմ հետէ իսկ ասեմ ձեզ մինչչեւ 19
եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւատասջիք թէ ես
եմ։ Ամէն ամէն ասեմ ձեզ. որ ընդունի՝ զոր ոք ես 20
առաքեցից, զիս ընդունի. եւ որ զիս ընդունի, ըն-
դունի զայն՝ որ առաքեացն զիս։ Զայս իբրեւ ասաց 21
Յիսուս, խռովեցաւ յոգի իւր՝ վկայեաց եւ ասէ. ա-
մէն ամէն ասեմ ձեզ, զի մի ոմն ի ձէնջ մատնելոց
է զիս։ Հայէին ընդ միմեանս աշակերտքն տարակու- 22
սեալք թէ զումէ ասիցէ։ Եւ էր մի ոմն յաշակերտացն 23
բազմեալ առ Յիսուսիւ, զոր սիրէրն Յիսուս. Ակնարկէ 24
նմա Սիմովն Պետրոս հարցանել՝ ո՞վ իցէ, վասն որոյ
ասէն։ Եւ նա անկեալ զլանջօքն Յիսուսի, ասէ ցնա. 25
Տէր ո՞վ է։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ. այն 26
է՝ որում ես թացից զպատառն՝ եւ տաց։ Եւ թա-
ցեալ զպատառն տայ Յուդայի սկարիովտացւոյ։ Եւ 27
յետ պատառոյն՝ ապա եմուտ ի նա սատանայ։ Եւ
ասէ ցնա Յիսուս. արդ՝ զոր ինչ առնելոց ես՝ արա
վաղվաղակի։ Եւ զայս ոչ ոք իմացաւ ի բազմականաց 28
անտի, թէ առ ինչ ասաց ցնա. Զի ոմանք համա- 29
րէին թէ զի զարկղն ունէր Յուդա, ասաց նմա Յիսուս՝
գնեա ինչ որ պիտոյ իցէ մեզ ի տօնիս. եւ կամ զի աղ-

30 քատաց ինչ տացէ: Իսկ նորա առեալ զպատառն,
եւ արտաքս վաղվաղակի. եւ էր գիշեր:
31 ԻԼ. Եւ իբրեւ ել, ասէ Յիսուս. այժմ փա-
ռաւորեցաւ Որդի մարդոյ, եւ Աստուած փառաւո-
32 րեցաւ ի նմա: Զի եթէ Աստուած փառաւորեցաւ ի
նմա, եւ Աստուած փառաւորեսցէ զնա յանձն իւր. եւ
33 վաղվաղակի փառաւորեսցէ զնա: Որդեակք իմ՝ փոքր
ինչ ժամանակ ընդ ձեզ եմ. խնդրիցէք զիս, եւ որ-
պէս ասացի ցՀրեայսն եթէ ուր եսն երթամ, դուք
34 ոչ կարէք գալ. եւ արդ ձեզ ասեմ: Պատուիրան
նոր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրե-
35 ցի ես զձեզ, զի եւ դուք սիրեսջիք զմիմեանս: Յայսմ
գիտասցեն ամենեքեան՝ եթէ իմ աշակերտք էք, եթէ
36 սիրիցէք զմիմեանս: Ասէ ցնա Սիմոն Պետրոս. Տէր՝
յո՞ երթաս: Պատասխանի ետ Յիսուս, ուր եսն եր-
թամ՝ դու ոչ կարես այժմ գալ զկնի իմ, բայց ապա
37 եկեսցես զկնի իմ: Ասէ ցնա Պետրոս. Տէր՝ ընդէ՞ր ոչ
կարիցեմ գալ այժմ զկնի քո. արդէն զանձն իմ իսկ
38 եդից ի վերայ քո: Պատասխանի ետ Յիսուս. զանձն
քո դիցես ի վերայ իմ. ամէն ամէն ասեմ քեզ, չեւ
իցէ հաւու խօսեալ, մինչ դու երիցս ուրասցիս զիս:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Մի՛ խռովեսցին սիրտք ձեր. այլ հաւատա-
2 ցէք յԱստուած, եւ յիս հաւատացէք: Ի տան Հօր
իմոյ օթեվանք բազում են. ապա թէ ոչ՝ ասացեալ
էր իմ ձեզ, թէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի:
3 Եւ եթէ երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դար-
ձեալ գամ, եւ առնում զձեզ առ իս. զի ուր եսն
4 իցեմ, եւ դուք անդ իցէք: Եւ ուր երթամն՝ գիտի-
5 ցէք, եւ զճանապարհն գիտիցէք: Ասէ ցնա Թովմաս.
Տէր՝ ոչ գիտեմք յո՞ երթաս, եւ զիա՞րդ զճանապարհն
6 կարասցուք գիտել: Ասէ ցնա Յիսուս. ես եմ ճանա-
պարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք. ոչ ոք գայ առ

Հայր՝ եթէ ոչ ինեւ։ Եթէ զիս գիտէիք՝ ապա և 7
զՀայրն իմ գիտէիք, և այսուհետեւ գիտասջիք զնա։
Ասէ ցնա Փիլիպպոս. Տէր՝ ցոյց մեզ զՀայր՝ և շատ 8
է մեզ։ Ասէ ցնա Յիսուս. այսչափ ժամանակս ընդ 9
ձեզ եմ, և ո՞չ ծանեար զիս Փիլիպպէ. որ ետես
զիս՝ ետես զՀայրն, և դու զիա՞րդ ասես՝ եթէ ցոյց
մեզ զՀայր։ Ո՞չ հաւատաս՝ եթէ ես ի Հայր, և 10
Հայր յիս է. զբանս զոր ես խօսիմ ընդ ձեզ, ոչ եթէ
յանձնէ ինչ խօսիմ, այլ Հայրն՝ որ յիս բնակեալ է,
նա գործէ զգործսն։ Հաւատա՞յք ինձ, եթէ ես ի 11
Հայր՝ և Հայր յիս։ Ապա թէ ոչ՝ գոնէ վասն գոր- 12
ծոցն հաւատացէք ինձ։ Ամէն ամէն ասեմ ձեզ, թէ
որ հաւատայն յիս, զգործսն զոր ես գործեմ՝ և նա
գործեսցէ, և մեծամեծս եւս քան զնոյնս գործեսցէ.
զի ես առ Հայր երթամ, Եւ զոր ինչ խնդրիցէք յանուն 13
իմ, արարից զայն. Զի փառաւորեսցի Հայր յՈրդի։ 14
ՎԵՐՋ· Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ պա- 15
հեսջիք։ Եւ ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ 16
տացէ ձեզ, զի ընդ ձեզ բնակեսցէ յաւիտեան, ԶՀո- 17
գին ճշմարտութեան, զոր աշխարհս ոչ կարէ ընդունել.
զի ոչ տեսանէ զնա, և ոչ ճանաչէ զնա. բայց դուք ճա-
նաչէք զնա, զի առ ձեզ բնակեսցէ՝ և ընդ ձեզ եղի-
ցի։ Ոչ թողից զձեզ որբս. գամ առ ձեզ։ Փոքր միւս 18
եւս՝ և աշխարհս ոչ եւս տեսանէ զիս, բայց դուք 19
տեսանիցէք զիս. զի ես կենդանի եմ, և դուք կեն-
դանի լինելոց էք։ Յայնմ աւուր գիտասջիք դուք, զի 20
ես ի Հօր իմում՝ և դուք յիս՝ և ես ի ձեզ։ Որ ու- 21
նի զպատուիրանս իմ և պահէ զնոսա, նա է որ սիրէ
զիս. և որ սիրէն զիս՝ սիրեսցի ի Հօրէ իմմէ. և ես
սիրեցից զնա, և երեւեցուցից նմա զիս։ Ասէ ցնա 22
Յուդա ոչ Սկարիովտացին. Տէր զի՞ եղեւ՝ զի մեզ
յայտնելոց ես զքեզ՝ և ոչ աշխարհի։ Պատասխանի 23
ետ Յիսուս և ասէ ցնա. Եթէ որ սիրէ զիս՝ զբանն
իմ պահեսցէ, և Հայր իմ սիրեսցէ զնա. և առ նա

24 եկեսցուք՝ եւ օթեւանս առ նմա արասցուք. Եւ որ
ոչն սիրէ զիս՝ զբանս իմ ոչ պահէ. եւ բանն իմ
զոր լուէք՝ ոչ է իմ, այլ Հօրն՝ որ առաքեացն զիս։
25 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ մինչ առ ձեզս եմ։ Իսկ
26 մխիթարիչն Հոգին սուրբ՝ զոր առաքեսցէ Հայր յա-
նուն իմ, նա ուսուսցէ ձեզ զամենայն, եւ յիշեցուս-
27 ցէ զամենայն՝ որ ինչ ասացի ձեզ։ Խաղաղութիւն
թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ. ոչ
որպէս աշխարհս տայ՝ տամ ես ձեզ. մի խռովեսցին
28 սիրտք ձեր, եւ մի զանգիտեսցեն։ Լուարուք, զի ասացի
ես ձեզ թէ երթամ, եւ գամ առ ձեզ. եթէ սիրէիք
զիս՝ ապա ուրախ լեալ էր ձեր՝ թէ ես առ Հայր եր-
29 թամ, զի Հայր իմ մեծ է քան զիս։ Եւ այժմ ասա-
ցի ձեզ մինչչեւ եղեալ, զի յորժամ լինիցի՝ հաւա-
30 տասջիք։ Ոչ եւս այլ շատ խօսեցայց ընդ ձեզ. գայ
իշխան աշխարհիս այսորիկ՝ եւ յիս ինչ ոչ գտանէ։
31 Այլ զի ծանիցէ աշխարհ, եթէ սիրեմ զՀայր, եւ
որպէս պատուիրեաց ինձ Հայր՝ այնպէս առնեմ. ո՛ն
արիք՝ գնասցուք աստի։

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 Ես եմ որթն ճշմարիտ, եւ Հայր իմ մշակ է։
2 Զամենայն ուռ որ յիս է՝ եւ ոչ բերէ պտուղ, կտրէ
զնա. եւ ամենայն որ բերէ պտուղ՝ սրբէ զնա, զի ա-
3 ռաւել եւս պտղաբեր լիցի։ Դուք արդէն իսկ սուրբ
4 էք վասն բանին՝ զոր խօսեցայ ընդ ձեզ։ Կացէք յիս՝
եւ ես ի ձեզ. որպէս ուռն ոչ կարէ պտուղ բերել
յանձնէ իւրմէ, եթէ ոչ իցէ հաստատեալ յորթն,
նոյնպէս եւ դուք՝ եթէ ոչ յիս հաստատեալ իցէք։
5 Ես եմ որթ՝ եւ դուք ուռ. որ հաստատեալ է յիս՝
եւ ես ի նմա, նա բերէ պտուղ յոյժ. զի առանց իմ
6 ոչ ինչ կարէք առնել։ Եթէ ոք ոչ է հաստատեալ
յիս, ել նա արտաքս իբրեւ զուռն եւ ցամաքեցաւ,
7 եւ ժողովեն զնա եւ ի հուր արկանեն՝ եւ այրի։ Եթէ

կայցէք յիս՝ եւ բանք իմ ի ձեզ կայցեն, որ ինչ կա-
միցիք՝ խնդրեսջիք, եւ լինիցի ձեզ: Յայսմիկ փառա- 8
ւորեցաւ Հայր իմ, զի պտուղ յոյժ բերիցէք. եւ ե-
ղիջիք իմ աշակերտք: Որպէս սիրեաց զիս Հայր, եւ 9
ես սիրեցի զձեզ. հաստատուն կացէք ի սէր իմ: Ե- 10
թէ պահիցէք զպատուիրանս իմ, կայջիք ի սէր իմ. որ-
պէս ես զպատուիրանս Հօր իմոյ պահեցի, եւ կամ ի
սէր նորա: Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ուրախութիւն 11
իմ ի ձեզ իցէ, եւ ձեր ուրախութիւնն լցեալ եղիցի:
Այս է պատուէր իմ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս եւ 12
ես զձեզ սիրեցի: Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, 13
եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց:
Դուք բարեկամք էք իմ, եթէ առնիցէք՝ զոր ես 14
պատուիրեմ ձեզ: Ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի 15
ծառայն ոչ գիտէ զինչ գործէ Տէրն նորա. այլ զձեզ
կոչեցի բարեկամս, զի զամենայն, զոր լուայ ի Հօրէ
իմմէ՝ ծանուցի ձեզ: Ոչ եթէ դուք ընտրեցէք զիս. 16
այլ ես ընտրեցի զձեզ, եւ եդի զձեզ. զի դուք երթայ-
ցէք՝ եւ պտղաբերք լինիցիք. եւ պտուղն ձեր կացցէ.
եւ զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տա-
ցէ ձեզ: Զայս պատուիրեմ, զի սիրեսջիք զմիմեանս: 17
Եթէ աշխարհ զձեզ ատեայ, գիտասջիք զի նախ զիս 18
ատեաց: Եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ զիւրն 19
սիրէր արդեօք. բայց զի չէք յաշխարհէ, այլ ես ըն-
տրեցի զձեզ յաշխարհէ, վասն այնորիկ ատեայ զձեզ
աշխարհ: Յիշեցէք զբանն զոր ասացի ձեզ, թէ ոչ 20
է ծառայ մեծ քան զՏէր իւր. եթէ զիս հալածեցին,
ապա եւ զձեզ հալածեսցեն. եթէ զբանն իմ պահե-
ցին, ապա եւ զձերն պահեսցեն: Այլ զնոյն արաս- 21
ցեն ընդ ձեզ վասն անուան իմոյ, զի ոչ ծանեան զայն՝
որ առաքեացն զիս: Իմ եթէ չէր եկեալ՝ եւ խօսե- 22
ցեալ ընդ նոսա, մեղ ինչ ոչ գոյր նոցա. բայց արդ
չիք պատճառք վասն մեղաց իւրեանց: Որ զիս ատեայ՝ 23
եւ զՀայրն իմ ատեայ: Եթէ զգործսն չէր գործեալ 24

ի նոսա, զոր ոչ այլ ոք գործեաց, մեղ ինչ ոչ գոյր
նոցա, բայց արդ տեսին եւ ատեցին եւ զիս եւ զՀայր
25 իմ: Այլ զի լցցի բանն, որ յօրէնս նոցա գրեալ է,
26 թէ ատեցին զիս տարապարտուց: Բայց յորժամ ե-
կեսցէ մխիթարիչն՝ զոր ես առաքեցից ձեզ ի Հօրէ՝
զՀոգին ճշմարտութեան, որ ի Հօրէ ելանէ, նա
27 վկայեսցէ վասն իմ. Եւ դուք վկայէք՝ զի ի սկզբանէ
ընդ իս էք:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի մի՛ գայթագղես-
2 ջիք: Ի ժողովրդոց իւրեանց հանիցեն զձեզ. այլ ե-
կեսցէ ժամանակ, զի ամենայն որ սպանանիցէ զձեզ,
3 համարիցի պաշտօն մատուցանել Աստուծոյ: Եւ զայն
արասցեն ընդ ձեզ, քանզի ոչ ծանեան զՀայր՝ եւ ոչ
4 զիս: Այլ եւ զայս խօսեցայ ընդ ձեզ՝ զի յորժամ եկես-
5 ցէ ժամանակ, յիշեսջիք թէ ես ասացի ձեզ: Զայս ի
սկզբանէ ոչ ասացի ձեզ, քանզի ընդ ձեզ էի: Բայց
արդ երթամ ես առ առաքիչն իմ, եւ ոչ ոք ի ձէնջ
6 հարցանէ ցիս թէ յո՞ երթաս: Այլ զի զայս խօսե-
7 ցայ ընդ ձեզ, տրտմութիւն ելից զսիրտս ձեր: Այլ
ես զճշմարիտն ասեմ ձեզ. լաւ է ձեզ եթէ ես եր-
թամ. զի եթէ ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկես-
ցէ առ ձեզ. ապա եթէ երթամ, առաքեցից զնա առ
8 ձեզ: Եւ նա եկեալ յանդիմանեսցէ զաշխարհ վասն
մեղաց եւ վասն արդարութեան եւ վասն դատաս-
9 տանի: Վասն մեղաց՝ զի ոչ հաւատան յիս. Վասն
10 արդարութեան՝ զի առ Հայր իմ երթամ, եւ ոչ եւս
11 տեսանէք զիս. Վասն դատաստանի՝ զի իշխան աշխար-
12 հիս այսորիկ դատապարտեալ է: Եւս բազում ինչ
ունիմ ասել ձեզ՝ այլ ոչ կարէք հանդարտել այժ-
13 միկ: Յորժամ եկեսցէ նա Հոգին ճշմարտութեան,
առաջնորդեսցէ ձեզ ամենայն ճշմարտութեամբ. զի
ոչ եթէ յանձնէ ինչ խօսիցի, այլ զոր լսիցէ՝ խօսիցի,

եւ զգալոցն պատմեսցէ ձեզ: Նա զիս փառաւորեսցէ, 14
զի յիմմէ անտի առնուցու՝ եւ պատմեսցէ ձեզ: Զա- 15
մենայն ինչ զոր ունի Հայր՝ իմ է. վասն այնորիկ ա-
սացի ձեզ, թէ յիմմէ անտի առնուցու՝ եւ պատմեսցէ
ձեզ: Փոքր մի, եւ ոչ եւս տեսանէք զիս, եւ ապա 16
սակաւիկ մի՝ եւ տեսանիցէք զիս. եւ ես երթամ առ
Հայր: Ասէին ոմանք յաշակերտաց անտի ցմիմեանս. 17
զի՞նչ է այս՝ զոր ասէ ցմեզ, թէ փոքր մի՝ եւ ոչ տե-
սանէք զիս, եւ դարձեալ սակաւիկ մի՝ եւ տեսանի-
ցէք զիս, եւ թէ ես առ Հայր երթամ: Եւ ասէին, 18
զի՞նչ իցէ այն փոքր միւս եւսն, չգիտեմք զինչ խօ-
սի: Գիտաց Յիսուս եթէ կամէին նմա հարցանել, եւ 19
ասէ ցնոսա. վասն այդորիկ խնդրէք ընդ միմեանս՝ զի
ասացի թէ փոքր մի՝ եւ ոչ տեսանէք զիս, եւ դար-
ձեալ սակաւիկ միւս եւս՝ եւ տեսանիցէք զիս: Ամէն 20
ամէն ասեմ ձեզ, զի լայջիք եւ ողբասջիք դուք, եւ
աշխարհ խնդասցէ. դուք տրտմեսջիք, այլ տրտմու-
թիւն ձեր յուրախութիւն եղիցի: Կին յորժամ ծնա- 21
նիցի՝ տրտմութիւն է նմա, զի հասեալ է ժամ նորա.
այլ յորժամ ծնցի զմանուկն, ոչ եւս յիշէ զնեղու-
թիւնն վասն խնդութեանն, զի ծնաւ մարդ յաշխարհ:
Եւ դուք այժմ տրտմութիւն ունիք. այլ դարձեալ 22
տեսից զձեզ, եւ ուրախ լիցին սիրտք ձեր. եւ զուրա-
խութիւն ձեր ոչ ոք հանիցէ ի ձէնջ: Եւ յայնմ աւ- 23
ուր զիս ինչ ոչ հարցանիցէք: Ամէն ամէն ասեմ ձեզ՝
զի զոր ինչ խնդրիցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ, տա-
ցէ ձեզ: Մինչեւ ցայժմ ոչ ինչ խնդրեցէք յանուն 24
իմ. խնդրեցէք, եւ առնուցուք. զի ուրախութիւն
ձեր լցեալ իցէ: Զայս առակօք խօսեցայ ընդ ձեզ. 25
եկեսցէ ժամանակ՝ յորժամ ոչ եւս առակօք խօսե-
ցայց ընդ ձեզ. այլ յայտնապէս զՀօրէ պատմեցից
ձեզ: Յայնմ աւուր խնդրեսջիք յանուն իմ. եւ ոչ 26
ասեմ ձեզ՝ եթէ ես աղաչեցից զՀայր վասն ձեր: Զի 27
ինքն իսկ Հայր սիրէ զձեզ՝ զի դուք զիս սիրեցէք, եւ

28 հաւատացէք՝ եթէ ես յԱստուծոյ ելի: Ելի ի Հօրէ
եւ եկի յաշխարհ. դարձեալ թողում զաշխարհ,
29 եւ երթամ առ Հայր: Ասեն ցնա աշակերտքն. ահա
արդ յայտնութեամբ խօսիս. եւ առակ եւ ոչ մի ինչ
30 ասես: Այժմիկ գիտեմք՝ եթէ գիտես զամենայն. եւ
ոչ ինչ պիտոյ է՝ եթէ ոք հարցանիցէ զքեզ. յայսմիկ
31 հաւատամք եթէ յԱստուծոյ ելեր: Պատասխանի ետ
32 նոցա Յիսուս, եւ ասէ. այժմ հաւատա՞յք: Ահա եկես-
ցէ ժամ, եւ եկեալ իսկ է, զի ցրուեսջիք յիւրաքան-
չիւր տեղիս, եւ զիս միայն թողուցուք. եւ չեմ միայն,
զի Հայր ընդ իս է:
33 Զայս խօսեցայ ընդ ձեզ, զի ընդ իս խաղաղու-
թիւն ունիցիք. յաշխարհի աստ նեղութիւն ունիցիք,
այլ քաջալերեցարուք, զի ես յաղթեցի աշխարհի:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 Զայս իբրեւ խօսեցաւ Յիսուս, ամբարձ
զաչս իւր յերկինս եւ ասէ. Հայր՝ հասեալ է ժամ,
փառաւորեա զՈրդի քո, զի եւ Որդի քո փառաւորես-
2 ցէ զքեզ: Որպէս ետուր նմա իշխանութիւն ամենայն
մարմնոյ, զի ամենայնի, զոր ետուր նմա, տացէ զկեան-
3 սըն յաւիտենականս: Այս են յաւիտենական կեանք,
զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած՝ եւ զոր
4 առաքեցեր զՅիսուս Քրիստոս: Ես զքեզ փառաւո-
րեցի յերկրի. զգործն կատարեցի, զոր ետուր ցիս՝
5 զի արարից. Եւ այժմ փառաւորեա զիս Հայր՝ առ ի
քէն փառօքն՝ զոր ունէի յառաջ քան զլինելն աշ-
խարհի առ ի քէն: Յայտնեցի զանուն քո մարդկան՝
6 զորս ետուր ինձ յաշխարհէ. քո էին, եւ ինձ ետուր
7 զնոսա, եւ զբանն քո պահեցին: Արդ գիտացին՝ եթէ
8 զամենայն ինչ զոր ետուր ինձ, առ ի քէն են. Զի
զամենայն զոր ետուր ինձ, ետու նոցա. եւ նոքա ընկա-
լան, եւ ծանեան ճշմարտութեամբ՝ թէ առ ի քէն
9 ելի. եւ հաւատացին՝ եթէ դու առաքեցեր զիս: Արդ՝

ես վասն նոցա աղաչեմ, եւ ոչ վասն աշխարհի աղա-
չեմ. այլ վասն նոցա՝ զորս ետուրն ինձ, զի քո են:
Եւ որ ինչ իմ է, ամենայն քո է. եւ որ ինչ քո է, 10
այն իմ է. եւ փառաւորեալ եմ ի նոսա: Եւ ես ոչ 11
եւս եմ յաշխարհի, եւ նոքա յաշխարհի են, եւ ես
առ քեզ գամ: Հայր սուրբ՝ պահեա զնոսա յանուն
քո, որով ետուրն ինձ. զի եղիցին մի, որպէս եւ մեք
մի եմք: Մինչ էի յաշխարհի ընդ նոսա, ես պահէի 12
զնոսա յանուն քո որով ետուրն ինձ, եւ պահեցի.
եւ ոչ ոք ի նոցանէ կորեաւ, բայց որդին կորստեան, զի
գիրն լցցի:
Բայց արդ առ քեզ գամ. եւ զայս խօսիմ յաշ- 13
խարհի, զի ունիցին զուրախութիւնն իմ լիով յան-
ձինս իւրեանց: Ես ետու նոցա զբանն քո. եւ աշ- 14
խարհ ատեաց զնոսա, զի չեն յաշխարհէ, որպէս եւ
ես չեմ յաշխարհէ: Ոչ զայս աղաչեմ, զի բարձցես 15
զնոսա յաշխարհէ. այլ զի պահեսցես զնոսա ի չարէ:
Յաշխարհէ աստի չեն, որպէս եւ ես չեմ յաշխարհէ: 16
Սուրբ արա զնոսա ճշմարտութեամբ քով. զի քո բանդ 17
ճշմարտութիւն է: Որպէս զիս առաքեցեր յաշխարհ. 18
եւ ես առաքեցի զնոսա յաշխարհ: Եւ ի վերայ նոցա 19
ես սուրբ առնեմ զանձն իմ, զի եղիցին եւ նոքա սր-
բեալք ճշմարտութեամբ: Այլ ոչ վասն նոցա միայն 20
աղաչեմ, այլ եւ վասն ամենայն հաւատացելոց բանիւն
նոցա յիս: Զի ամենեքին մի լիցին, որպէս դու Հայր 21
յիս՝ եւ ես ի քեզ, զի եւ նոքա ի մեզ լիցին. զի եւ
աշխարհ հաւատասցէ՝ եթէ դու առաքեցեր զիս: Եւ 22
ես՝ զփառսն զոր ետուր ինձ՝ ետու նոցա, զի լիցին մի՝
որպէս եւ մեք մի եմք: Ես ի նոսա՝ եւ դու յիս, զի ե- 23
ղիցին կատարեալք ի մի. եւ գիտասցէ աշխարհ՝ եթէ
դու առաքեցեր զիս. եւ սիրեցեր զնոսա որպէս դու զիս
սիրեցեր: Հայր՝ զորս ետուրն ինձ, կամիմ՝ զի ուր 24
ես իցեմ, եւ նոքա իցեն ընդ իս. զի տեսանիցեն
զփառսն իմ, զոր ետուրն ցիս. զի սիրեցեր զիս յա-

25 առաջ քան զլինելն աշխարհի։ Հայր արդար՝ եւ աշ-
խարհ զքեզ ոչ ծանեաւ. այլ ես զքեզ ծանեայ, եւ
26 նոքա ծանեան՝ եթէ դու առաքեցեր զիս։ Եւ ծանու-
ցի նոցա զանուն քո, եւ ծանուցից. զի սէրն՝ զոր սի-
րեցեր զիս՝ ի նոսա իցէ, եւ ես ի նոսա։

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Զայս իբրեւ ասաց Յիսուս, ել աշակերտօքն
հանդերձ յայնկոյս ձորոյն Կեդրոնի, ուր էր պարտէզ,
յոր եմուտ ինքն եւ աշակերտքն իւր։
2 Գիտէր եւ Յուդա, որ զնա մատնելոց էր՝ զտեղին.
զի բազում անգամ ժողովեալ էր անդ Յիսուսի ա-
3 շակերտօքն հանդերձ։ Եւ Յուդայի առեալ ընդ իւր
զգունդն, եւ ի քահանայապետից եւ ի փարիսեցւոց
սպասաւորս, գայ անդր ջահիւք եւ լապտերօք եւ զի-
4 նուք։ Իսկ իբրեւ եւտես զայն ամենայն եկեալ ի վերայ
5 նորա, ել եւ ասէ ցնոսա. զո՞ խնդրէք։ Պատասխանի
ետուն նմա. զՅիսուս Նազովրեցի։ Ասէ ցնոսա Յի-
սուս. ես եմ։ Կայր ընդ նոսա եւ Յուդա որ մատնէրն
6 զնա։ Իբրեւ ասաց թէ ես եմ, յետս յետս չոգան՝ եւ
7 զարկան զգետնի։ Դարձեալ եհարց զնոսա. զո՞ խնդրէք։
8 Եւ նոքա ասեն. զՅիսուս Նազովրեցի։ Պատասխանի
ետ նոցա Յիսուս. ասացի ձեզ թէ ես եմ. արդ՝ ե-
9 թէ զիս խնդրէք՝ թոյլ տուք դոցա երթալ։ Զի լցցի
բանն՝ զոր ասաց. թէ զոր ետուրն ցիս՝ ոչ կորուսից ի
10 նոցանէ՝ եւ ոչ զոք։ Իսկ Սիմոն Պետրոս՝ քանզի ու-
նէր սուր, ձգեաց զնա՝ եւ եհար զքահանայապետին
ծառայ, եւ ի բաց առ զունկն նորա զաջոյ. եւ էր ա-
11 նուն ծառային Մաղքոս։ Ասէ Յիսուս ցՊետրոս.
արկ զսուրդ անդրէն ի պատեանս իւր. զբաժակն զոր
12 ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա։ Իսկ գունդն եւ հա-
զարապետն եւ սպասաւորք Հրէից կալան զՅիսուս՝
13 եւ կապեցին. Եւ ածին զնա նախ առ Աննա՝ որ էր
աներ Կայիափայի, որ քահանայապետն էր տարւոյն

այնորիկ։ Այս այն Կայիափայ էր՝ որ խրատն ետ Հրէից, 14
եթէ լաւ է առն միում մեռանել ի վերայ ժողովր-
դեանն։ Եւ աշակերտն այն քանզի ծանօթ էր քահա- 15
նայապետին՝ եմուտ ընդ Յիսուսի ի գաւիթ քահա-
նայապետին։ Եւ Պետրոս կայր առ դրանն արտաքոյ։ 16
Ել միւս աշակերտն՝ որ էր ծանօթ քահանայապետին,
եւ ասաց ցդռնապանն՝ եւ եմոյծ ի ներքս զՊետրոս։
Ասէ աղջիկն որ դռնապանն էր՝ ցՊետրոս. միթէ եւ 17
դո՞ւ յաշակերտաց առնն այնորիկ իցես. եւ նա ասէ՝
ոչ եմ։ Կային անդ ծառայքն եւ սպասաւորքն խարոյկ 18
արկեալ՝ քանզի ցուրտ էր՝ եւ ջեռնուին. կայր ընդ նո-
սա եւ Պետրոս՝ եւ ջեռնոյր։ Եւ քահանայապետն 19
եհարց զՅիսուս վասն աշակերտացն եւ վասն վարդա-
պետութեան նորա։ Պատասխանի ետ նմա Յիսուս. 20
ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի, ես յամենայն
ժամ ուսուցի ի ժողովրդեանն, եւ ի տաճարի անդ՝
ուր ամենայն Հրեայք ժողովեալ էին, եւ ի ծածուկ
ինչ ոչ խօսեցայ. Զի՞ հարցանես զիս. հարց զայնո- 21
սիկ՝ որ լուանն, թէ զինչ խօսեցայ ընդ նոսա. ահա-
ւանիկ նոքա գիտեն զինչ ասացի ես։ Իբրեւ նա զայն 22
ասաց, մի ոմն ի սպասաւորացն որ անդ կայր, ած ապ-
տակ Յիսուսի՝ եւ ասէ. ա՞յդպէս պատասխանի տաս
քահանայապետիդ։ Եւ Յիսուս ասէ ցնա. եթէ չար 23
ինչ խօսեցայ՝ վկայեա վասն չարին, իսկ եթէ բարի՝
ընդէ՞ր հարկանես զիս։ Եւ առաքեաց զնա Աննա կա- 24
պեալ առ Կայիափա քահանայապետ։ Եւ Սիմոն 25
Պետրոս կայր անդ՝ եւ ջեռնոյր. ասեն ցնա՝ միթէ
եւ դո՞ւ յաշակերտաց անտի նորա իցես. նա ուրացաւ
եւ ասէ՝ թէ չեմ։ Եւ ասէ մի ոմն ի ծառայից քա- 26
հանայապետին՝ ազգական այնորիկ, զորոյ զունկն եհատ
Պետրոս. ո՞չ ես իսկ տեսի զքեզ ի պարտիզի անդ ընդ
նմա։ Դարձեալ ուրացաւ Պետրոս. եւ վաղվաղակի 27
հաւ խօսեցաւ։

Եւ ածեն զՅիսուս ի վանացն Կայիափայ յա- 28

պարանս դատաւորին. եւ էր այգուց. եւ նոքա ոչ
մտին յապարանսն, զի մի պղծեսցին, այլ զի ուտիցեն
29 զզատիկն: Ել առ նոսա Պիղատոս արտաքս՝ եւ ասէ.
զի՞նչ չարախօսութիւն մատուցանէք զառնէն զայն-
30 մանէ: Պատասխանի ետուն եւ ասեն ցնա. եթէ չէր
չարագործ այրն այն, ապա ոչ մատնէաք զնա քեզ:
31 Ասէ ցնոսա Պիղատոս. առէք զնա դուք, եւ ըստ ձե-
րոց օրինացն դատեցարուք: Ասեն ցնա Հրեայքն.
32 մեզ ոչ է արժան սպանանել զոք: Զի լցցի բանն
Յիսուսի՝ զոր ասաց, նշանակեալ՝ թէ որով մա-
33 հու մեռանելոց իցէ: Եմուտ միւսանգամ յապա-
րանսն Պիղատոս եւ կոչեաց զՅիսուս, եւ ասէ
34 ցնա. դո՞ւ ես թագաւորն Հրէից: Պատասխանի
ետ Յիսուս. ի քէ՞ն ասես զայդ՝ եթէ այլք ասացին
35 քեզ զինէն: Պատասխանի ետ Պիղատոս. միթէ եւ
ես Հրեա՞յ իցեմ. ազգն քո եւ քահանայապետք մատ-
36 նեցին զքեզ ինձ, զի՞նչ գործեալ է քո: Պատաս-
խանի ետ Յիսուս, իմ արքայութիւն չէ յայսմ աշ-
խարհէ. եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւն իմ,
սպասաւորքն իմ մարտնչէին արդեօք՝ զի մի մատնե-
ցայց Հրէից. բայց արդ՝ թագաւորութիւն իմ չէ աս-
37 տի: Ասէ ցնա Պիղատոս. ապա թէ այդպէս իցէ, թա-
գաւոր ո՞ն ես դու: Պատասխանի ետ Յիսուս. դու
ասես՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ
եմ, եւ ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայե-
ցից ճշմարտութեան. ամենայն որ ի ճշմարտութենէն
38 է՝ լսէ բարբառոյ իմոյ: Ասէ ցնա Պիղատոս. զի՞նչ է
ճշմարտութիւն: Զայս իբրեւ ասաց, դարձեալ ել
առ Հրեայսն եւ ասէ ցնոսա. ես՝ եւ ոչ մի ինչ պատ-
39 ճառս գտանեմ ի նմա: Բայց է ձեր սովորութիւն,
զի զմի ոք արձակեցից ձեզ ի զատկիս. արդ՝ կամի՞ք
40 զի արձակեցից ձեզ զթագաւորն հրէից: Աղաղակեցին
ամենեքեան՝ եւ ասէին. մի զդա, այլ զԲարաբբաս.
Եւ էր Բարաբբայն այն աւազակ:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Յայնժամ առ Պիղատոս զՅիսուս՝ եւ գան ե- 1
հար: Եւ զինուորացն արարեալ պսակ ի փշոց՝ եդին 2
ի գլուխ նորա, եւ զգեցուցին նմա հանդերձ ծիրանի: 3
Եւ գային առ նա, եւ ասէին. ողջ եր արքայ հրէից. եւ
հանէին նմա ապտակս: Եւ դարձեալ Պիղատոս արտաքս 4
եւ ասէ ցնոսա. ահա ածեմ զնա արտաքս առ ձեզ,
զի գիտասջիք թէ ես վնաս ինչ ի նմա ոչ գտանեմ:
Ել Յիսուս արտաքս. եւ ունէր պսակ ի փշոց՝ եւ 5
հանդերձ ծիրանի, եւ ասէ ցնոսա. Ահա այրդ ձեզ:
Իբրեւ տեսին զնա քահանայապետքն եւ սպասաւորք, 6
զաղաղակ բարձին՝ եւ ասեն. Ի խաչ հան զդա: Ասէ
ցնոսա Պիղատոս. առէք զդա ի ձեզ, եւ ձեզէն հանէք
ի խաչ. զի ես ի դմա վնաս ինչ ոչ գտանեմ: Պա- 7
տասխանի ետուն նմա Հրեայքն. մեք օրէնս ունիմք,
եւ ըստ օրինաց մերոց պարտի մեռանել. զի զանձն
իւր որդի Աստուծոյ արար: Իբրեւ լուաւ զբանս զայս 8
Պիղատոս, առաւել եւս երկեաւ: Եմուտ դարձեալ 9
անդրէն յապարանսն, եւ ասէ ցՅիսուս. ուստի՞ ես
դու. եւ Յիսուս ոչ ետ նմա պատասխանի: Ասէ ցնա 10
Պիղատոս. ընդ իս ո՞չ խօսիս, ո՞չ գիտես եթէ իշխա-
նութիւն ունիմ հանել զքեզ ի խաչ, եւ իշխանու-
թիւն ունիմ արձակել զքեզ: Պատասխանի ետ Յի- 11
սուս. ոչ ունէիր դու իշխանութիւն ի վերայ իմ եւ
ոչ մի, եթէ ոչ էր տուեալ քեզ ի վերուստ. վասն
այնորիկ որ մատնեացն զիս քեզ, նորա մեծ մեղք
են: Եւ յայնմանէ Պիղատոս խնդրէր արձակել զնա. 12
եւ Հրեայքն աղաղակէին եւ ասէին. եթէ զդա ար-
ձակես՝ չես բարեկամ կայսեր. ամենայն ոք որ թա-
գաւոր կոչէ զանձն իւր, հակառակ է կայսեր: Իսկ 13
Պիղատոս իբրեւ լուաւ զբանս զայսոսիկ, ած զՅիսուս
արտաքս եւ նստաւ ի վերայ բեմին, ի տեղւոջն որ
կոչէր քարայատակ, եւ եբրայեցերէն Կապպաթա:

14 Եւ էր ուրբաթն զատկի. եւ էր ժամ իբրեւ վեցերորդ.
15 եւ ասէ ցՀրէայսն, ահա թագաւորդ ձեր ցձեզ։ Եւ
նոքա աղաղակէին. բարձ ի մէնջ, բարձ ի մէնջ եւ հան
զդա ի խաչ։ Ասէ ցնոսա Պիղատոս. ես զթագաւորդ
ձեր ի խաչ հանիցեմ։ Պատասխանի ետուն քահա-
նայապետքն. չէք մեր թագաւոր բաց ի կայսերէ։
16 Յայնժամ ետ զնա ի ձեռս նոցա, զի ի խաչ ելանիցէ։
17 Եւ նոքա առեալ տանէին զնա. եւ բարձեալ
էր ինքնին զխաչափայտն, եւ ելանէր ի տեղին՝ որ ա-
նուանեալ էր Գագաթ, եւ կոչէր եբրայեցերէն Գող-
18 գոթա. Ուր եւ ի խաչն իսկ հանին զնա. եւ ընդ նմա
երկուս եւս այլս աստի եւ անտի, եւ ի միջի զՅիսուս։
19 Գրեաց եւ տախտակ մի Պիղատոս, եւ եդ ի վերայ
խաչին. եւ էր գրեալ. Յիսուս Նազովրեցի՝ Թագաւոր
20 Հրէից։ Զայն տախտակ ընթերցան բազումք ի Հրէից,
զի մօտ էր ի քաղաք անդր տեղին՝ ուր խաչեցաւն Յի-
սուս. եւ էր գրեալ եբրայեցերէն, դաղմատերէն եւ
21 յունարէն։ Ասեն ցՊիղատոս քահանայապետքն Հրէից.
մի գրեր թագաւոր Հրէից, այլ թէ նա ասաց՝ Թա-
22 գաւոր եմ Հրէից։ Պատասխանի ետ Պիղատոս. զոր ինչ
23 գրեցի՝ գրեցի։ Իսկ զինուորքն իբրեւ հանին ի խաչ զՅի-
սուս, առին զհանդերձս նորա՝ եւ արարին չորս մասունս,
իւրաքանչիւր զինուորի մասն։ Իսկ զպատմուճանն՝
քանզի էր առանց կարանի՝ ի վերուստ փորանկեալ
24 ամենեւին, Ասեն ցմիմեանս. մի պատառեսցուք զդա,
այլ արկցուք վիճակս ի վերայ դորա՝ ում եւ ելցէ։
Զի լցցի գիրն՝ որ ասէ. բաժանեցին զհանդերձս իմ
յիւրեանս, եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս
արկին։ Զինուորքն զայս ինչ գործեցին։
25 Եւ կային առ խաչին Յիսուսի մայրն նո-
րա, եւ քոյր մօր նորա Մարիամ Կղէովպայ, եւ
26 Մարիամ Մագդաղենացի։ Յիսուս իբրեւ ետես զմայրն
եւ զաշակերտն՝ զոր սիրէր, զի կայր մօտ. ասէ ցմայրն,
27 կին դու՝ ահա որդի քո։ Ապա ասէ ցաշակերտն՝ ահա

մայր քո: Եւ յայնմ ժամանակէ առ աշակերտն զնա
առ իւր: Յետ այսորիկ իբրեւ գիտաց Յիսուս, եթէ 28
ահա ամենայն ինչ կատարեալ է. զի կատարեսցի
գիրն, ասէ. Ծարաւի եմ: Եւ անդ կայր աման ինչ 29
լի քացախով. եւ նոցա սպունգ լցեալ քացախով
ընդ լեղւոյ՝ շուրջ եդեալ զմշտկաւ զոպայի՝ մատու-
ցին ի բերան նորա: Իբրեւ առ Յիսուս զքացախն 30
հանդերձ լեղւովն, ասէ. Ամենայն ինչ կատարեալ է:
Եւ խոնարհեցուցեալ զգլուխ՝ աւանդեաց զոգին: Իսկ 31
Հրեայքն՝ քանզի ուրբաթ էր, զի մի՛ անդէն ի խաչին
ագանիցին մարմինքն մինչեւ ցշաբաթն, զի էր օր
մեծ շաբաթուն այնորիկ. աղաչեցին զՊիղատոս՝ զի
խորտակեսցեն զբարձս նոցա՝ եւ բարձցին: Եկին զի- 32
նուորքն, եւ զառաջնոյն խորտակեցին զբարձս, նոյն-
պէս եւ զմիւսոյն՝ որ ընդ նմա ի խաչն ելեալ էր:
Բայց իբրեւ եկին առ Յիսուս՝ եւ տեսին զի այն 33
ինչ մեռեալ էր, ոչ խորտակեցին զբարձս նորա. Այլ 34
մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա. եւ
ել վաղվաղակի արիւն եւ ջուր: Եւ որ ետեսն՝ վկայեաց, 35
եւ ճշմարիտ է վկայութիւն նորա. եւ նա գիտէ թէ
ճշմարիտ ասէ, զի եւ դուք հաւատասջիք: Այս եղեւ՝ 36
զի լցցի գիրն, եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի. Եւ դար- 37
ձեալ միւս գիր ասէ, եթէ հայեսցին ի նա՝ յոր խո-
ցեցինն:

Յետ այսորիկ աղաչեաց զՊիղատոս Յովսէփ, 38
որ յԱրիմաթեայն էր աշակերտ Յիսուսի ի ծածուկ՝
վասն ահին Հրէից, զի բարձցէ զմարմին Յիսուսի. եւ 39
հրամայեաց Պիղատոս, եկին եւ բարձին զնա: Եկն եւ
Նիկոդեմոս՝ որ եկեալն էր առ Յիսուս ի գիշերի
զառաջինն. եւ եբեր զմուռս խառն ընդ հալուէս՝ ի- 40
բրեւ լտերս հարիւր: Առին զմարմինն Յիսուսի, եւ
պատեցին կտաւովք՝ խնկովք հանդերձ, որպէս օրէն
էր Հրէից պատել: Եւ էր ի տեղւոջն յորում խա- 41
չեցաւ՝ պարտէզ, եւ ի պարտիզի անդ գերեզման նոր,

42 յորում ոչ ոք երբեք էր եդեալ: Անդ վասն ուրբա-
թուն Հրէից՝ զի մօտ էր գերեզմանն՝ եդին զՅիսուս:

ԳԼՈՒԽ Ի.

1 Եւ ի միաշաբաթոջն Մարիամ Մագդաղենացի
գայ առաւօտուն ընդ արշալոյսն ի գերեզման անդր,
եւ տեսանէ զվէմն բարձեալ ի դրաց գերեզմանին: Ապա
2 ընթանայ եւ գայ առ Սիմոն Պետրոս եւ առ միւս աշա-
կերտն՝ զոր սիրէրն Յիսուս, եւ ասէ ցնոսա. բարձին ըզ-
3 Տէր ի գերեզմանէ անտի, եւ ոչ գիտեմ՝ ո՞ւր եդին զնա:
Ել Պետրոս եւ միւս աշակերտն՝ եւ գային ի գերեզմանն:
4 Ընթանային երկոքեան ի միասին. եւ միւս աշակերտն
յառաջեաց ընթացաւ վաղագոյն քան զՊետրոս՝ եւ
5 եկն նախ ի գերեզմանն: Եւ խոնարհեալ տեսանէ՝ զի
6 կային անդ կտաւքն, բայց ի ներքս ոչ եմուտ: Եկն
եւ Սիմոն Պետրոս՝ որ գայրն զհետ նորա. եւ եմուտ
ի գերեզմանն, եւ տեսանէ զկտաւսն՝ զի կային անդ.
7 Եւ վարշամակն որ էր ի գլուխ նորա՝ ոչ ընդ այլ
8 կտաւսն կայր. այլ ուրոյն ծալեալ ի մի կողմն: Յայն-
ժամ եմուտ եւ միւս աշակերտն, որ եկեալն էր յա-
9 ռաջագոյն ի գերեզմանն, ետես եւ հաւատաց. Զի
չեւ եւս գիտէին զգիրս՝ թէ պարտ է նմա ի մեռելոց
10 յառնել: Չոգան դարձեալ առ միմեանս աշակերտ-
11 քն: Բայց Մարիամ կայր արտաքոյ գերեզմանին՝
եւ լայր. եւ մինչդեռ լայր՝ խոնարհեցաւ ի գերեզ-
12 մանն, Եւ տեսանէ երկուս հրեշտակս ի սպիտակս,
զի նստէին մի ի սնարից եւ մի յանոտից՝ ուր կայր
13 մարմինն Յիսուսի: Եւ նոքա ասեն ցնա. կին դու
զի՞ լաս: Ասէ ցնոսա. զի բարձին զՏէրն իմ ի գե-
14 րեզմանէ անտի, եւ ոչ գիտեմ՝ ուր եդին զնա: Զայս
իբրեւ ասաց, դարձաւ ի թիկունս կոյս, եւ տեսա-
նէ զՅիսուս զի կայր. եւ ոչ գիտէր թէ Յիսուս իցէ:
15 Ասէ ցնա Յիսուս. կին դու՝ զի՞ լաս, զո՞ խնդրես:
Նմա այսպէս թուեցաւ՝ թէ պարտիզպանն իցէ, ասէ

ցնա. Տէ՛ր՝ եթէ դու բարձեր զնա՝ ասա ինձ ուր եդեր
զնա, զի ես առից զնա: Ասէ ցնա Յիսուս. Մարիամ: 16
Եւ նա դարձաւ, եւ ասէ ցնա եբրայեցերէն. ռաբբու-
նի, որ թարգմանի՝ վարդապետ: Ասէ ցնա Յիսուս. 17
մի մերձենար յիս, զի չեւ եւս ելեալ եմ առ Հայր
իմ. այլ երթ դու առ եղբարսն իմ, եւ ասա ցնոսա.
ելանեմ ես առ Հայրն իմ՝ եւ առ Հայր ձեր, եւ Ա-
տուածն իմ՝ եւ Աստուած ձեր: Գայ Մարիամ 18
Մագդաղենացի՝ եւ պատմէ աշակերտացն, եթէ ե-
տես նա զՏէր, եւ զայս ինչ ասաց ցնա:

Եւ էր երեկոյ ի միաշաբաթոջ աւուրն. եւ դրօք 19
փակելովք՝ ուր էին աշակերտքն ժողովեալ. վասն ա-
հին հրէից, եկն Յիսուս՝ եւ եկաց ի մէջ նոցա, եւ
ասէ ցնոսա, ողջոյն ընդ ձեզ: Իբրեւ զայս ասաց՝ եցոյց 20
նոցա զձեռս եւ զկողս իւր. եւ խնդացին աշակերտքն
իբրեւ տեսին զՏէր: Ասէ ցնոսա դարձեալ. ող- 21
ջոյն ընդ ձեզ, որպէս առաքեաց զիս Հայր իմ,
եւ ես առաքեմ զձեզ: Եւ զայս իբրեւ ասաց՝ 22
փչեաց ի նոսա եւ ասէ. առէք Հոգի սուրբ. Եթէ ու- 23
մեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա, եթէ
զուրուք ունիցիք՝ կալեալ լիցի: Իսկ Թովմաս մի 24
յերկոտասանիցն՝ անուանեալն երկուորեակ, ոչ էր
ընդ նոսա՝ յորժամ եկն Յիսուս: Ասէին ցնա այլ 25
աշակերտքն, եթէ տեսաք զՏէր: Եւ նա ասէ ցնոսա.
եթէ ոչ տեսից ի ձեռս նորա զնշան բեւեռացն եւ
արկից զմատունս իմ ի տեղիս բեւեռացն, եւ մխեցից
զձեռս իմ ի կողս նորա, ոչ հաւատամ:

Եւ յետ ութ աւուր դարձեալ էին ի ներքս աշա- 26
կերտքն, եւ Թովմաս ընդ նոսա. գայ Յիսուս դրօքն փա-
կելովք, եւ եկաց ի մէջ, եւ ասէ. ողջոյն ընդ ձեզ: Ապա 27
ասէ ցԹովմաս. բեր զմատունս քո եւ արկ այսր, եւ տես
զձեռս իմ, եւ բեր զձեռն քո՝ եւ մխեա ի կողս իմ, եւ
մի լինիր անհաւատ՝ այլ հաւատացեալ: Պատասխա- 28
նի ետ Թովմաս՝ եւ ասէ ցնա. Տէր իմ՝ եւ Աստուած

29 իմ: Ասէ ցնա Յիսուս. այդ զի տեսեր զիս՝ եւ հաւա-
տացեր, երանի որոց ոչ իցէ տեսեալ՝ եւ հաւատա-
30 ցեն: Բազում եւ այլ նշանս արար Յիսուս առաջի
աշակերտաց իւրոց որ ոչ է գրեալ ի գիրս յայսմիկ:
31 Այլ այս այնչափ ինչ գրեցաւ՝ զի հաւատայցէք, ե-
թէ Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ. եւ զի հա-
ւատայցէք, եւ զկեանսն յաւիտենականս ընդունիցիք
յանուն նորա:

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց զանձն
իւր Յիսուս աշակերտացն իւրոց առ ծովեզերբն Տի-
2 բերեայ. եւ յայտնեաց այսպէս: Էին ի միասին Սիմովն
Պետրոս, եւ Թովմաս անուանեալն երկուորեակ, եւ
Նաթանայէլ՝ որ ի Կանայ Գալիլեացւոց, եւ որդիքն
3 Զեբեդեայ, եւ այլք յաշակերտաց անտի երկու: Ա-
սէ ցնոսա Սիմովն Պետրոս. երթամ ձուկն որսալ.
ասեն ցնա. գամք եւ մեք ընդ քեզ: Գնացին եւ մտին
4 ի նաւ, եւ յայնմ գիշերի կալան եւ ոչինչ: Իբրեւ
այգ եղեւ՝ կայր Յիսուս յեզր ծովուն, բայց ոչ ծա-
5 նեան աշակերտքն թէ Յիսուս իցէ: Ասէ ցնոսա Յի-
սուս. մանկունք՝ միթէ ունիք ինչ ուտելոյ. պատաս-
6 խանի ետուն եւ ասեն ցնա, ոչ: Ասէ ցնոսա, արկէք
յաջակողմն նաւին զուռկանդ, եւ գտանիցէք: Արկին,
եւ ոչ կարէին ձգել ի բազմութենէ անտի ձկանցն:
7 Ասէ աշակերտն այն, զոր սիրէրն Յիսուս՝ ցՊետրոս.
Տէր է այն: Սիմոն Պետրոս իբրեւ լուաւ թէ Տէր է,
արկաւ զիւրեւ զփածանելին՝ քանզի մերկ էր, եւ
8 ընկէց զինքն ի ծովն: Եւ այլ աշակերտքն նաւաւն
իսկ գային, քանզի չէին հեռի ի ցամաքէն. այլ ի-
բրեւ երկերիւր կանգնաւ, քարշէին զգործին հանդերձ
9 ձկամբն: Իբրեւ ելին ի ցամաք, տեսանեն կրակետղ
10 կայծականց, եւ ձուկն մի ի վերայ, եւ հաց: Ասէ
ցնոսա Յիսուս. բերէք ի ձկանց այտի՝ զոր դուքդ կա-

լարուք այժմիկ: Ել մտաւ Սիմոն Պետրոս, եւ ձգեր 11
զգործին ի ցամաք՝ լի մեծամեծ ձկամբք, հարիւր յի-
սուն եւ երիւք. եւ այնչափ ինչ կայր, եւ ոչ պա-
տառեցաւ գործին: Ասէ ցնոսա Յիսուս. եկայք ճաշե- 12
ցէք: Եւ ոչ ոք յաշակերտացն իշխէր հարցանել՝ թէ
դու ո՞վ ես, զի գիտէին թէ Տէրն է: Գայ Յիսուս՝ 13
եւ առնու զհացն եւ տայ նոցա, նոյնպէս եւ զձուկնն:
Զայս երիցս անգամ երեւեցաւ Յիսուս աշակեր- 14
տացն յարուցեալ ի մեռելոց: Եւ իբրեւ ճաշեցին, 15
ասէ ցՍիմոն Պետրոս Յիսուս. Սիմոն Յովնանու սի-
րե՞ս զիս առաւել քան զդոսա: Ասէ ցնա. այո Տէր,
եւ դու գիտես՝ զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա. արածեա
զգառինս իմ: Դարձեալ ասէ ցնա, Սիմոն Յովնա- 16
նու սիրե՞ս զիս: Ասէ ցնա. այո Տէր եւ դու գիտես՝
զի սիրեմ զքեզ: Ասէ ցնա՝ արածեա զոչխարս իմ: 17
Ասէ, ցնա երիցս անգամ. Սիմոն Յովնանու սիրե՞ս զիս:
Տրտմեցաւ Պետրոս, զի ասացն ցնա երիցս՝ թէ սիրես
զիս, եւ ասէ ցնա. Տէր՝ դու զամենայն գիտես,
եւ դու իսկ զամենայն ճանաչես, եւ եթէ սիրեմ
զքեզ: Ասէ ցնա Յիսուս. արածեա զոչխարս իմ.
Ամէն ամէն ասեմ քեզ, զի մինչ մանուկն էիր, 18
անձամբ անձին գօտի ածէիր՝ եւ երթայիր յո եւ
կամէիր. եւ յորժամ ծերասցիս, ձեռս ի վեր կալ-
ցիս, եւ այլք ածցեն քեզ գօտի, եւ տարցին՝ ուր
ոչն կամիցիս: Զայս ասաց՝ նշանակեալ թէ որով 19
մահու փառաւոր առնիցէ զԱստուած. եւ զայս ի-
բրեւ ասաց, ասէ ցնա. եկ զկնի իմ: Դարձաւ Պե- 20
տրոս՝ եւ տեսանէ զաշակերտն՝ զոր սիրէր Յիսուս,
զի երթայր զկնի, որ եւ անկաւ զլանջօքն նորա՝ եւ
ասէ, Տէր ո՞վ է՝ որ մատնելոցն է զքեզ. Զնա 21
տեսեալ Պետրոսի, ասէ ցՅիսուս. Տէր՝ իսկ սա
զի՞: Ասէ ցնա Յիսուս. եթէ կամիմ, զի կացցէ 22
դա՝ մինչեւ ես գամ. քեզ զի՞ փոյթ է՝ դու եկ
զկնի իմ: Եւ ել բանս այս յեղբարս՝ եւ համա- 23

բեցան թէ աշակերտն այն ոչ մեռանիցի. եւ ոչ ա-
սաց նմա Յիսուս եթէ ոչ մեռանիցի, այլ թէ
կամիմ՛ ես՝ թէ կացցէ դա՝ մինչեւ ես գամ: Այս 24
աշակերտ է՝ որ վկայէ վասն այսորիկ որ եւ գրեացն
իսկ զայսոսիկ. եւ գիտեմք, եթէ ճշմարիտ է վկայ-
ութիւն նորա: Բայց է եւ այլ ինչ բազում զոր արար 25
Յիսուս, զոր եթէ գրեալ էր մի ըստ միոջէ, կար-
ծեմ թէ եւ ոչ աշխարհս բաւական էր տանել
զգիրսն՝ որ թէ գրեալ էին:

ՑՈՒՑԱԿ ԱՒԵՏԱՐԱՆԱՑ

Հանգստեան, Տաճարի, Խաչերից, Բժշկութեան եւ Անդաստանի. որ ընթերցեալ լինին ի կարգաւորութեան հասարակաց աղօթից՝ ըստ ձայնին:

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. ԺԱ. 25. Յայնմ ժամանակի: 30. իմ փոքրոգի:
— ԺԳ. 36. Յայնժամ թողեալ: 52. զնոր եւ զհին:
— ԻԱ. 18. Եւ այգուցն իբ: 32. հաւատալ նմա:
— ԻԵ. 31. Եւ յորժամ եկեսցէ: 46. յաւիտենականս:

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. Դ. 1. Դարձեալ սկսաւ: 9. լսելոյ՝ լուիցէ:
— Դ. 26. Եւ ասէր՝ այսպէս: 34. մեկնէր զամենայն:
— ԺԳ. 24. Այլ յաւուրսն յայն: 31. անցանիցեն:
— ԺԳ. 32. Այլ վասն աւուրն: 37. արթուն կացէք:

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. Թ. 10. Դարձան առաքեալքն: 17. սակառի:
— ԺԲ. 32. Մի երկնչիր: 48. պահանջեսցեն ի նմանէ:
— ԺԷ. 3. Զգոյշ կացէք: 10. առնել՝ արարաք:
— ԻԱ. 27. Եւ յայնժամ տեսցեն: 38. լսել ի նմանէ:

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. Բ. 13. Եւ էր մերձ զա: 22. զոր ասաց Յիսուս:
— Ե. 19. Պատասխանի ետ: 23. զառաքիչն նորա:
— Ե. 24. Ամէն ամէն ասեմ: 30. առաքեացն զիս:
— ԺԲ. 24. Ամէն ամէն ասեմ ձեզ: 26. հայրն իմ:

ԱՒԵՏԱՐԱՆՔ ՏԱՃԱՐԻ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. ԻԴ. 1. Եւ ելեալ էր։ 51. կրճել ատամանց։

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. ԺԳ. 1. Եւ յելանելն նորա։ 37. արթուն կացէք։

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. ԻԱ. 5. Եւ յասել ոմանց։ 38. լսել ի նմանէ։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. ԺԳ. 16. Ամէն ամէն։ ԺԴ. 13. հայր յորդի։

ԿԱՄ

Գլ. Ժ. 22. Եղեն յայնժամ նաւա—։ 42. և նա անդ։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԻՒՂԱԲԵՐԻՑ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. ԻԸ. 1. Եւ յերեկոյի շա։ 20. կատարած աշխարհի։

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. ԺԵ. 42. Եւ ընդերեկ եղեւ։ ԺԶ. 8. զի երկնչէին։

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ։ ԻԳ. 50. Եւ ահա այր մի։ ԻԴ. 12. զեղեալն եղե—։

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. ԺԹ. 38. Յետ այսորիկ։ Ի. 18. ինչ ասաց նմա։

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. Դ. 23. Եւ շրջէր Յիսուս։ 25. և յայնկոյս Յորդանանու։

— Ը. 1. Իջեալ նորա ի լեռնէ։ 17. զցաւս մեր։

— Ը. 28. Եւ եկեալ նորա։ 34. սահմանաց նոցա։

Գլ. Թ. 1. Եւ մտեալ ի նաւ՝ անց: 8. մարդկան:

— Թ. 18. Մինչդեռ նա: 26. երկիրն ընդ այն:

— Թ: 27. Եւ մինչդեռ: 34. հանէ դա դեւս:

— Թ. 35. Եւ շրջէր Յիսուս: Ժ. 1. հիւանդութիւնս:

— ԺԲ. 9. Եւ գնացեալ ան: 14. կորուսցեն զնա:

— ԺԲ. 22. Յայնժամ մա: 37. դատապարտեսցիս:

— ԺԴ. 22. Եւ ստիպեաց վաղվաղ: 36. փրկեցան:

— ԺԵ. 21. Եւ ելեալ ան: 31. առնէին զԱստուած Իսրայէլի:

— ԺԷ. 14. Եւ իբրեւ ե: 20. աղօթիւք եւ պահօք:

— Ի. 29. Եւ յելանելն նոցա: 34. զհետ նորա:

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. Ա. 21. Եւ մտանեն ի Կափ: 34. զնա թէ Քրիստոսն:

— Ա. 35. Եւ ընդ այգն ընդ: 45. յամենայն կողմանց:

— Բ. 1. Եւ մտեալ դար: 12. երբէք ոչ տեսաք:

— Գ. 1. Եւ եմուտ միւսանգամ: 5. ձեռն նորա:

— Գ. 7. Իսկ Յիսուս աշակեր: 12. առնիցեն զնա:

— Ե. 1. Եւ եկն յայնկոյս: 20. զարմանային:

— Ե. 21. Եւ իբրեւ անց Յիսուս: 43. նմա ուտել:

— Զ. 53. Եւ իբրեւ ան: 56. ձեռնեցանն՝ փրկեցան:

— Է. 24. Եւ անտի յար: 30. դնէր ի մահիճս:

— Է. 31. Եւ ելեալ միւս. 37. եւ համրոց խօսել:

— Ը. 22. Գան ի Բեթա: 26. ասիցես ի շինին:

— Թ. 13. Եւ եկեալ առ ա: 28. եւ աղօթիւք:

— Ժ. 46. Եւ գան յԵրիքով: 52. ի ճանապարհին:

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. Դ. 31. Եւ էջ ի Կափառնաում: 42. թէ Քրիստոսն է:

— Ե. 12. Եւ եղեւ ի հա: 16. կայր յաղօթս:

— Ե. 17. Եւ եղեւ ի միում: 26. նոր նշան:

— Զ. 1. Եւ եղեւ ի շա: 11. առնիցեն Յիսուսի:

— Է. 1. Եւ իբրեւ կա: 10. հիւանդն բժշկեալ:

— Է. 11. Եւ եղեւ ի: 23. գայթագղեսցի յիս:

— Ը. 22. Եւ եղեւ ի միում: 39. արար նմա Յիսուս:

Գլ. Ը. 40. Եւ իբրեւ դառ. 57. որ ինչ եղեւ:
— Թ. 37. Եւ եղեւ ի վա:44. մեծամեծացն Աստուծոյ:
— ԺԱ. 14. Եւ հանէր դեւ մի: 23. ընդ իս՝ ցրուէ:
— ԺԳ. 10. Եւ ուսուց: 17. գործէին ի նմանէ:
— ԺԴ. 1. Եւ եղեւ ի մտա: 6. պատասխանի առ այն:
— ԺԷ. 11. Եւ եղեւ մինչ: 19. կեցուցին զքեզ:
— ԺԸ. 35. Եւ եղեւ ի մօ: 43. օրհնութիւն Աստուծոյ:

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. Դ. 46. Եկն դարձեալ ի Կա: 54. ի Գալիլեա:
— Ե. 1. Յետ այսորիկ:18. առնէր զանձն Աստուծոյ:
— Թ. 1. Եւ մինչդեռ անց. 38. երկպագ նմա:
— ԺԱ. 1. Եւ էր ոմն հի: 46. զոր արար Յիսուս:

ԱՒԵՏԱՐԱՆՔ ԱՆԴԱՍՏԱՆԻ

Ի ՄԱՏԹԷՈՍ

Գլ. ԻԴ. 27. Որպէս փայ: 35. իմ մի անցցեն:
— ԻԷ. 35. Եւ հանեալ: 50. արձակեաց զոգին:
— ԻԷ. 50. Եւ Յիսուս դարձեալ: 61. գերեզմանին:

Ի ՄԱՐԿՈՍ

Գլ. ԺԵ. 22: Եւ ածեն զնա: 37. եւ եհան զոգի:

Ի ՂՈՒԿԱՍ

Գլ. ԻԳ. 32. Ածին եւ այլ երկ: 46. եհան զոգի:

Ի ՅՈՎՀԱՆՆԷՍ

Գլ. Գ. 13. Եւ ոչ ոք ել յերկ: 21. գործեցան:
— ԺԹ. 16. Յայնժամ ետ: 22. գրեցի՝ գրեցի:
— ԺԹ. 25. Եւ կային: 30. աւանդեաց զոգին:

ՆՈՐ

ԿՏԱԿԱՐԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Բ.

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԵՒ ԹՈՒՂԹՔ

Ի ՎԻԵՆՆԱ

Ի ՎԱՆՍ ՊԱՇՏՊԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

1857

ԳՈՐԾՔ
ԱՌԱՔԵԼՈՑ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԶԲԱՆՆ առաջին՝ զոր արարի վասն ամենայնի
ո՛ Թէոփիլէ, զոր սկսաւ Յիսուս առնել եւ ուսու-
2 ցանել, Մինչեւ յօրն պատուիրելոյ առաքելոցն ի
ձեռն Հոգւոյն սրբոյ, զորս ընտրեացն; եւ վերա-
3 ցաւ: Որոց յանդիման կացոյց զինքն կենդանի յետ
չարչարանացն իւրոց ի բազում արուեստս՝ յաւուրս
քառասուն երեւել նոցա եւ ասել վասն արքայու-
4 թեանն Աստուծոյ: Եւ ի հաղորդել ընդ նոսա հա-
ցի, պատուէր տայր նոցա՝ յԵրուսաղեմէ մի մեկ-
նել, այլ սպասել աւետեացն Հօր՝ զոր լուարուքն
յինէն: Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր. այլ դուք
մկրտիցիք ի Հոգին սուրբ, ոչ յետ բազում ինչ
6 աւուրցս այսոցիկ: Եւ նոքա մատուցեալ հարցանէին
զնա եւ ասէին. Տէր, եթէ ի ժամանակի աստ յայս-
միկ հաստատելո՞ց իցես զարքայութիւնն Իսրայելի:
7 Ասէ ցնոսա. ոչ է ձեր գիտել զժամս եւ զժամա-
նակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեան. Այլ
առջիք զօրութիւն ի հասանել Հոգւոյն սրբոյ ի
վերայ ձեր. եւ եղիջիք ինձ վկայք յԵրուսաղէմ եւ
յամենայն Հրէաստանի եւ ի Սամարիա եւ մինչեւ ի
9 ծագս երկրի: Եւ զայս իբրեւ ասաց՝ մինչ դեռ հայէ-
ին նոքա՝ վերացաւ. եւ ամպն կալաւ զնա յաչաց նո-
10 ցա: Եւ մինչ դեռ պշուցեալ էին ընդ երկինս եր-
թալոյ նորա, եւ ահաւասիկ արք երկու երեւեցան
նոցա ի հանդերձս սպիտակս, Որք եւ ասացին. արք

Գալիլեացիք, զի՞ կայք հայեցեալ ընդ երկինս: Այս
Յիսուս որ վերացաւ ի ձէնջ յերկինս, սոյնպէս ե-
կեսցէ' զոր օրինակ տեսէք զնա երթալ յերկինս:
Ապա դարձան յԵրուսաղէմ յանուանեալ լեռնէն 12
Ձիթենեաց. որ է մերձ յԵրուսաղէմ ըստ շաբա-
թուն ճանապարհի: Եւ իբրեւ մտին, ելին ի վերնա- 13
տունն' ուր վանքն իսկ էին. Պետրոս եւ Յակոբոս եւ
Յովհաննէս եւ Անդրէաս, Փիլիպպոս եւ Թովմաս,
Բարթողոմէոս եւ Մատթէոս, Յակովբոս Ալփեան
եւ Շմաւոն Նախանձայոյզ եւ Յուդա Յակովբեան:
Սոքա ամենեքեան էին հանապազորդեալ միաբան 14
յաղօթս հանդերձ կանամբք, եւ Մարեմաւ մարբն Յի-
սուսի եւ եղբարբք նորա:

ԱԱ· Եւ յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Պետ- 15
րոս ի մէջ եղբարցն' ասէ. եւ էր անդ բազմութիւն
անուանց իբրեւ հարիւր եւ քսանից. Արք եղբարք, 16
պարտ էր կատարել գրոյն, զոր յառաջագոյն ասաց
Հոգին սուրբ ի բերանոյ Դաւթի' վասն Յուդայի,
որ եղեւ առաջնորդ ունելեացն Յիսուսի: Զի ի 17
թիւս մեր էր' ընդ մեզ. եւ հասեալ էր նմա վիճակ
պաշտամանս այսորիկ: Սա ստացաւ գեօղ ի վարձուց 18
անիրաւութեան, եւ ուռուցեալ հերձաւ ընդ մէջ
եւ հեղաւ ամենայն փոր նորա: Եւ յայտնի եղեւ ա- 19
մենեցուն' որ բնակեալ են յԵրուսաղէմ. մինչեւ կո-
չել գեղջն այնմիկ բարբառովն իւրեանց Ակեղդամայ,
այսինքն է' գեօղ արեան: Զի գրեալ է ի գիրս սաղ- 20
մոսաց. եղիցի բնակութիւն նորա աւերակ, եւ մի ոք
իցէ որ բնակիցէ ի նմա, եւ զկարգ նորա առցէ այլ:
Արդ' պարտ է յարանցս յայսցանէ' եկելոցս ընդ մեզ 21
յամենայն ժամանակի, յորում մուտ եւ ել առ մեզ
Տէր Յիսուս, Սկսեալ ի մկրտութենէն Յովհաննու 22
մինչեւ յօրն' յորում վերացաւ ի մէնջ, վկայ յարու-
թեան նորա ընդ մեզ լինել միում ի սոցանէ: Եւ 23
կացուցին երկուս, զՅովսէփ որում Բարսաբայն կո-

չէին, որ անուանեցաւ Յուստոս, եւ զՄատաթիա:
24 Եւ կացեալ յաղօթս՝ ասեն. դու Տէր սրտագէտ ա-
մենայնի, յայտնեա զմի ոք՝ զոր ընտրեցեր ի սոցանէ
25 յերկոցունց, Առնուլ զվիճակ պաշտամանս այսորիկ
եւ զառաքելութեան, յորմէ անկաւ Յուդաս՝ գնալ
26 ի տեղի իւր: Եւ ետուն վիճակս նոցա, եւ ելանէր
վիճակն Մատաթեայ. եւ համարեցաւ ընդ մետասան
առաքեալսն:

ԳԼՈՒԽ Բ.

1 Եւ ի կատարել աւուրցն պենտեկոստէից՝ էին
2 ամենեքեան միաբան ի միասին: Եւ եղեւ յանկար-
ծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հող-
3 մոյ. եւ ելից զամենայն տունն յորում նստէին: Եւ
երեւեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հրոյ. եւ
4 նստաւ իւրաքանչիւր ի վերայ նոցա: Եւ լցան ամենե-
քեան Հոգւով սրբով, եւ սկսան խօսել յայլեւայլ
5 լեզուս՝ որպէս եւ Հոգին տայր բարբառել նոցա: Եւ
էին յԵրուսաղէմ բնակեալ Հրեայք՝ արք երկիւ-
6 ղածք յամենայն ազգաց՝ որ ի ներքոյ երկնից: Եւ ի-
բրեւ եղեւ բարբառս այս՝ եկն միաբան բազմութիւնն
եւ խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել
7 նոցա: Սքանչանային ամենեքեան, եւ զարմանային,
եւ ասէին ընդ միմեանս. ո՞չ աւասիկ ամենեքեան սոքա
8 որ խօսինս՝ Գալիլեացիք են. Եւ զիա՞րդ լսեմք մեք
յիւրաքանչիւր բարբառս մեր՝ յորում ծնեալ եմք.
9 Պարթեւք եւ Մարք եւ Իլամացիք եւ որ բնակեալ
են ի Միջագետս, ի Հրէաստանի եւ ի Գամիրս, ի Պոն-
10 տոս եւ յԱսիա, ի Փռիւգիա, եւ ի Պամփիլեայ, յԵ-
գիպտոս եւ ի կողմանս Լիբեացւոց, որ ընդ Կիւրենա-
11 ցիս եւ որ եկք Հռովմայեցիք. Հրեայք եւ եկք նո-
ցուն, Կրետացիք եւ Արաբացիք, լսեմք խօսից նոցա ի
12 մեր լեզուս զմեծամեծս Աստուծոյ: Սքանչանային ա-
մենեքեան զարմացեալք, եւ ասէին ցմիմեանս. զի՞նչ

կամիցի այս լինել ։ Եւ կիսոցն ընդ խաղ արկեալ ա- 13
սէին, եթէ քաղցուալից իցեն ։ Յարուցեալ Պետրոս 14
հանդերձ մետասանիւքն՝ ամբարձ զձայն իւր եւ խօ-
սեցաւ ընդ նոսա. Արք Հրէաստանեայք եւ որ բնա-
կեալ էք յԵրուսաղէմ ամենեքեան, այս ձեզ յայտնի
լիցի եւ ունկն դիք բանից իմոց ։ Ոչ որպէս դուք 15
կարծէք՝ թէ սոքա արբեալ իցեն, զի դեռ երեք ժամք
են աւուրս ։ Այլ այս է՝ որ ասացաւ ի ձեռն մարգա- 16
րէին Յովէլայ. Եւ եղիցի յետ այսորիկ յաւուրս յե- 17
տինս՝ ասէ Աստուած, հեղից յոգւոյ իմմէ ի վերայ
ամենայն մարմնոյ. եւ մարգարէասցին ուստերք ձեր
եւ դստերք ձեր. եւ երիտասարդք ձեր տեսիլս տեսա-
ցեն. եւ ծերք ձեր երազովք յերազեսցին ։ Եւ ի վերայ 18
ծառայից իմոց եւ ի վերայ աղախնաց իմոց՝ յաւուրսն
յայնոսիկ հեղից յոգւոյ իմմէ, եւ մարգարէասցին ։
Եւ տաց նշանս յերկինս ի վեր եւ նշանս յերկիր ի 19
խոնարհ, արիւն եւ հուր եւ մրրիկ ծխոյ. Արեգակն 20
դարձցի ի խաւար, եւ լուսին յարիւն՝ մինչ չեւ եկեալ
իցէ օր Տեառն մեծ եւ երեւելի ։ Եւ եղիցի ամենայն 21
որ կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ ։

ԱԲ. Արք Իսրայելացիք, լուարուք զբանս զայս- 22
սիկ, զՅիսուս Նազովրեցի, զայր ցուցեալ յԱստուծոյ
ի ձեզ զօրութեամբ եւ նշանօք եւ արուեստիւք, զոր
արար նովաւ Աստուած ի մէջ ձերում, որպէս եւ դուք
իսկ գիտէք. Զնա նկատեալ խորհրդով եւ կանխա- 23
գիտութեամբն Աստուծոյ՝ մատնեալ ի ձեռս անօրի-
նաց եւ բեւեռեալ ի փայտի՝ սպանէք. Զոր Աս- 24
տուած յարոյց՝ լուծեալ զերկունս մահու. քանզի ոչ
էր հնար ըմբռնել նմա ի նմանէ ։ Դաւիթ իսկ ասէ 25
զնմանէ. Յառաջագոյն տեսանէի զՏէր առաջի իմ յա-
մենայն ժամ, զի էր ընդ աջմէ իմմէ, զի մի սասանե-
ցայց. Վասն այսորիկ ուրախ եղեւ սիրտ իմ, եւ ցըն- 26
ծացաւ լեզու իմ. եւս եւ մարմին իմ բնակեսցէ յու-
սով ։ Զի ոչ թողցես զանձն իմ ի դժոխս եւ ոչ տա- 27

28 ցես սրբոյ քում տեսանել զապականութիւն: Ծա-
նուցեր ինձ զճանապարհս քո կենաց. լցուցեր զիս ու-
29 րախութեամբ երեսաց քոց ի քաղցրութենէ: Արք
եղբարք, պարտ է համարձակութեամբ ասել վասն
նահապետին Դաւթի, զի մեռաւ եւ թաղեցաւ, եւ
գերեզման նորա կայ ի միջի ձերում մինչեւ ցայսօր:
30 Զի մարգարէ էր, եւ գիտէր՝ եթէ երդմամբ երդուաւ
նմա Աստուած ի պտղոյ յորովայնէ նորա նստուցանել
31 յաթոռ նորա. Յառաջագոյն ծանուցեալ խօսեցաւ
վասն յարութեանն Քրիստոսի. զի ոչ թողաւ ոգի
նորա ի դժոխս, եւ ոչ մարմին նորա ետես զապակա-
32 նութիւն: Զայս Յիսուս յարոյց Աստուած, որում
33 ամենեքին մեք վկայեմք: Աջովն Աստուծոյ բարձրա-
ցեալ, զաւետիս Հոգւոյն սրբոյ ընկալեալ ի Հօրէ՝
34 սփռեաց զայս, զոր դուք իսկ տեսանէք եւ լսէք: Զի
ոչ եթէ Դաւիթ ել յերկինս, ասէ իսկ ինքն. Ասաց
35 Տէր ցՏէր իմ, նիստ ընդ աջմէ իմմէ՝ Մինչեւ եդից
36 զթշնամիս քո պատուանդան ոտից քոց: Արդ՝ ճշ-
մարտիւ գիտասցէ ամենայն տունդ Իսրայելի, զի եւ
Տէր զնա եւ օծեալ Աստուած արար. զայն Յիսուս՝
37 զոր դուքն խաչեցէք: Եւ լուեալ զայս՝ զղջացան ի
սիրտս իւրեանց. եւ ասեն ցՊետրոս եւ ցայլ առա-
38 քեալսն. զի՞նչ գործեսցուք արք եղբարք: Ասէ ցնոսա
Պետրոս. ապաշխարեցէք եւ մկրտեսցի իւրաքանչիւր
ոք ի ձէնջ յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի ի
թողութիւն մեղաց, եւ ընկալջիք զաւետիս Հոգւոյն
39 սրբոյ: Զի ձեզ են աւետիքս եւ որդւոց ձերոց, եւ
ամենայն հեռաւորաց՝ զորս կոչեսցէ Տէր Աստուած
40 մեր: Եւ այլովք բանիւք բազմօք վկայութիւն դնէր,
եւ մխիթարէր զնոսա եւ ասէր. ապրեցարուք յազգէ
41 աստի խոտորելոյ յայսմանէ: Ոմանք յօժարութեամբ
ընկալեալ զբան նորա մկրտեցան. եւ յաւելան յաւուր
յայնմիկ ոգիք իբրեւ երեք հազարք:
42 ԽԳ. Եւ էին հանապազորդեալք վարդապետու-

թեան առաքելոցն, եւ հաղորդութեան եւ բեկանե-
լոյ հացին, եւ աղօթից: Եւ լինէր ամենայն անձին՝ 43
ահ եւ երկիւղ. բազում նշանք եւ արուեստք ի ձեռս
առաքելոցն գործէին: Ամենայն հաւատացեալքն էին ի 44
միասին, եւ ունէին զամենայն ինչս հասարակաց: Եւ 45
զստացուածս եւ զինչս վաճառէին, եւ բաշխէին զայն
ամենեցուն՝ ում զիարդ պիտոյ ինչ լինէր: Զհանապա- 46
զօր կանխեալ միաբանութեամբ ի տաճարն, եւ առ-
տնին՝ բեկանէին զհացն, եւ առնուին կերակուր ու-
րախութեամբ եւ միամտութեամբ սրտի. Օրհնէին 47
զԱստուած, եւ ունէին շնորհս առ ամենայն ժողո-
վուրդն. եւ Տէր յաւելոյր ի փրկեալսն հանապազօր
ի նոյն:

ԳԼՈՒԽ Գ.

Պետրոս եւ Յովհաննէս ելանէին ի տաճար անդր 1
յիններորդ ժամու աղօթիցն: Եւ էր այր մի կաղ յո- 2
րովայնէ մօր իւրոյ՝ զոր բարձեալ դնէին հանա-
պազ առ դրան տաճարին, որ կոչէր Գեղեցիկ, խըն-
դրել ողորմութիւն յայնցանէ՝ որ մտանէին ի տաճարն:
Որոյ տեսեալ զՊետրոս եւ զՅովհաննէս՝ զի մտանէին 3
ի տաճարն, աղաչէր ողորմութիւն առնուլ: Հայեցաւ 4
ի նա Պետրոս Յովհաննու հանդերձ, եւ ասէ. հայեաց
ի մեզ: Նա դարձաւ ի նոսա, եւ ակն ունէր առնուլ 5
ինչ ի նոցանէ: Եւ ասէ Պետրոս. արծաթ եւ ոսկի 6
ոչ ունիմ. բայց զոր ունիմ՝ զայս տաց քեզ. յանուն
Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ արի եւ գնա: Եւ 7
կալեալ զաջոյ ձեռանէ նորա՝ յարոյց զնա. եւ անդէն
հաստատեցան բարձք նորա եւ սրունք: Ի վեր վա- 8
զեաց եւ սկսաւ գնալ, եւ եմուտ ընդ նոսա ի տաճարն.
գնայր եւ վազվազէր եւ օրհնէր զԱստուած: Եւ ետես 9
ամենայն ժողովուրդն զնա, զի գնայր եւ օրհնէր զԱս-
տուած. Եւ գիտէին զնա՝ զի սա էր, որ նստէր վասն 10
ողորմութեան առ գեղեցիկ դրան տաճարին, եւ լցան

11 զարմանալեօք ի վերայ նշանին՝ որ եղեւ։ Եւ մինչ դեռ
նա ունէր զՊետրոս եւ զՅովհաննէս, ընթացաւ ամե-
նայն ժողովուրդն առ նոսա ի սրահն՝ որ կոչէր Սո-
12 ղոմոնի՝ զարմացեալք։ Իբրեւ ետես Պետրոս, պա-
տասխանի ետ ժողովրդեանն. արք Իսրայելացիք, զի՞
զարմացեալ էք ի վերայ այսորիկ կամ ընդ մեզ զի
էք պշուցեալ, իբրեւ թէ անձին զօրութեամբ ինչ
13 կամ քաջութեամբ արարեալ իցէ զգնալդ դմա։ Աս-
տուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ Աս-
տուած Յակովբայ, Աստուած հարցն մերոց փառաւո-
րեաց զորդի իւր զՅիսուս, զոր դուքն մատնեցէք եւ
ուրացարուք առաջի Պիղատոսի, ի դատելն նորա ար-
14 ձակել։ Եւ դուք զսուրբն եւ զարդարն ուրացարուք,
15 եւ խնդրեցէք այր մի մահապարտ շնորհել ձեզ։ Եւ
զառաջնորդ կենացն սպանէք, զոր Աստուած յարոյց ի
16 մեռելոց. որում մեք իսկ վկայ եմք. Եւ հաւատովք
անուան նորա զսա՝ զոր տեսանէք եւ գիտէք, հաստա-
տեաց անունն նորա. եւ հաւատքն որ նովաւ, ետուն
դմա զառողջութիւնս զայս՝ յանդիման ձեր ամենեցուն։
17 Եւ արդ եղբարք՝ գիտեմ զի անգիտութեամբ արարէք՝
18 որպէս եւ իշխանքն ձեր։ Այլ Աստուած՝ որպէս յա-
ռաջագոյն պատմեաց ի բերանոյ ամենայն մարգարէից
զչարչարելն Քրիստոսի իւրոյ՝ նոյնպէս եւ կատարեաց։
19 Արդ՝ ապաշխարեցէք եւ դարձարուք ի ջնջել զմեղս
20 ձեր. Որպէս զի եկեսցեն ժամանակք հանգստեան յե-
րեսաց Տեառն. եւ առաքեսցէ զյառաջագոյն նկա-
21 տեալն ձեզ՝ զՅիսուս Քրիստոս. Զոր պարտ է երկնից
ընդունել մինչեւ ի ժամանակս ամենեցուն հաստա-
տելոյ, զորոց խօսեցաւ Աստուած ի բերանոյ սրբոց
իւրոց մարգարէից։
22 ԱՓ. Մովսէս ասաց ցհարսն մեր, թէ մարգարէ
յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց ձերոց ի-
բրեւ զիս, նմա լուիջիք՝ ըստ ամենայնի՝ որ զինչ եւ
23 խօսեսցի առ ձեզ։ Եւ եղիցի ամենայն անձն՝ որ ոչ

լուիցէ մարգարէին այնմիկ, սատակեսցի ի ժողովրդե-
նէն: Եւ ամենայն մարգարէք՝ որ ի Սամուելէ եւ այսր՝ 24
խօսեցան եւ պատմեցին զաւուրսս զայսոսիկ: Դուք 25
էք որդիք մարգարէիցն եւ ուխտին, զոր ուխտեաց
Աստուած ընդ հարսն մեր, եւ ասէ ցԱբրահամ. ի
զաւակի քում օրհնեսցին ամենայն ազգք երկրի:
Ձեզ նախ յարոյց Աստուած զՈրդին իւր, եւ առա- 26
քեաց զնա օրհնել զձեզ՝ ի դառնալ ձեզ իւրաքան-
չիւր ի չարեաց ձերոց:

ԳԼՈՒԽ Դ.

Եւ մինչդեռ խօսէին նոքա ընդ ժողովրդեանն, 1
հասին ի վերայ նոցա քահանայապետք եւ իշխանք
տաճարին եւ Սադուկեցիքն, Զայրագնեալք՝ վասն 2
ուսուցանելոյ նոցա զժողովուրդն եւ պատմելոյ Յի-
սուսիւ զյարութիւն մեռելոց: Արկին ի նոսա զձեռս 3
իւրեանց, եւ եդին զնոսա ի բանտի՝ մինչեւ ի վաղիւն,
զի էր ընդ երեկս: Իսկ բազումք ի լսողաց բանին՝ հա- 4
ւատացին. եւ եղեւ թիւ մարդկան իբրեւ հազարաց
հնգից: Եւ եղեւ ի վաղիւ անդր՝ ժողովել նոցա զիշ- 5
խանսն եւ զերիցունսն եւ զդպիրս յԵրուսաղէմ, Եւ 6
զԱննա քահանայապետ եւ զԿայիափա եւ զՅով-
հաննէս եւ զԱղէքսանդրոս, եւ որք միանգամ էին
յազգէ քահանայութեանն. Եւ կացուցեալ զնոսա ի 7
մէջ՝ հարցանէին. որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ ա-
նուամբ արարէք դուք զայս: Յայնժամ Պետրոս լցեալ 8
Հոգւով սրբով՝ ասէ ցնոսա. իշխանք ժողովրդեան
եւ երիցունք Իսրայելի. Եթէ արժա՞ն ինչ իցէ դա- 9
տել զմեզ այսօր վասն երախտեաց առն միոյ տկարի,
որով սա բժշկեցաւ: Յայտնի լիցի ամենեցուն ձեզ 10
եւ ամենայն ժողովրդեանդ Իսրայելի. զի յանուն Յի-
սուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք՝
զոր Աստուած յարոյց ի մեռելոց, նովաւ սա կայ աւա-
սիկ առաջի ձեր ողջացեալ: Նա է վէմն անարգեալ 11

12 ի ձէնջ շինողաց, որ եղեւ գլուխ անկեան. Եւ չիք այ-
լով ուրեք փրկութիւն. զի եւ ոչ անուն այլ գոյ ի
ներքոյ երկնից տուեալ ի մարդիկ՝ որով արժան իցէ
կեալ մեզ:
13 Եւ. Հայեցեալ ի համարձակութիւնն Պետրոսի
եւ Յովհաննու, եւ ի վերայ հասեալ՝ թէ արք տգէտք
եւ առանց դպրութեան են, զարմանային. զի ճանա-
14 չէին զնոսա թէ ընդ Յիսուսի էին. Եւ զայրն եւս
տեսանէին զբժշկեալն՝ զի կայր ընդ նոսա. եւ ոչինչ
15 կարէին տալ պատասխանի: Եւ հրամայեալ նոցա
արտաքս քան զատեանն ելանել, խորհեցան ընդ մի-
16 մեանս, Եւ ասեն. զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ՝
զի երեւելի նշան եղեւ ի ձեռս սոցա. ամենայն իսկ
բնակչաց Երուսաղէմի յայտ է, եւ ոչ կարեմք ուրա-
17 նալ: Այլ զի մի առաւել ճարակեսցի ի ժողովուրդն,
սպառնասցուք նոցա՝ մի եւս խօսել յանունն յայն՝ մի
18 ումեք ի մարդկանէ: Եւ կոչեցեալ զնոսա պատուի-
րեցին ամենեւին մի խօսել եւ մի ուսուցանել յա-
19 նունն Յիսուսի: Իսկ Պետրոս եւ Յովհաննէս պատաս-
խանի ետուն եւ ասեն ցնոսա. եթէ արժա՞ն իցէ ա-
ռաջի Աստուծոյ՝ ձեզ լսել առաւել քան Աստուծոյ,
20 ընտրեցէք: Այլ մեք ոչ կարեմք՝ զոր տեսաքն եւ
21 լուաք՝ չխօսել: Նոքա սպառնացեալ արձակեցին զնո-
սա, եւ ոչինչ գտեալ՝ թէ ո՛րպէս պատուհասեսցեն
զնոսա՝ վասն ժողովրդեանն. զի ամենեքեան փառաւոր
22 առնէին զԱստուած՝ վասն իրացն եղելոց. Զի ամաց
էր այրն՝ աւելի քան զքառասուն, յորոյ վերայ եղեւ
23 նշանս այս բժշկութեան: Եւ անտի արձակեալ՝ եկին
առ իւրեանսն, եւ պատմեցին՝ որչափ ինչ ասացին
24 ցնոսա քահանայապետքն եւ երիցունքն: Եւ նոցա
լուեալ ամբարձին զձայնս իւրեանց առ Աստուած եւ
ասեն. Դու Տէր Աստուած՝ որ արարեր զերկինս եւ
25 զերկիր եւ զծով եւ զամենայն որ ի նոսա. Որ ի բերա-
նոյ հօր մերոյ Դաւթի ծառայի քո՝ ի ձեռն Հոգւոյն

սրբոյ ասացեր. Զմէ՞ խռովեցան հեթանոսք եւ ժողո-
վուրդք խորհեցան ի սնոտիս. Յանդիման եղեն թա- 26
գաւորք երկրի, եւ իշխանք ժողովեցան ի միասին վասն
Տեառն եւ վասն օծելոյ նորա: Ժողովեցան արդարեւ 27
ի քաղաքիս յայսմիկ ի վերայ սրբոյ Որդւոյ քո Յի-
սուսի՝ զոր օծերն՝ Հերովդէս եւ Պոնտոս Պիղատոս՝
ազգօք եւ ժողովրդովք Իսրայելի, Առնել՝ որչափ ձեռն 28
քո եւ կամք յառաջագոյն սահմանեցին լինել: Եւ 29
արդ Տէր՝ հայեաց ի սպառնալիս նոցա, եւ տուր ծա-
ռայից քոց ամենայն համարձակութեամբ խօսել զբանն
քո. Ի ձգել զձեռն քո ի բժշկութիւն, եւ նշանս եւ 30
արուեստս՝ լինել անուամբ սրբոյ Որդւոյ քո Յիսուսի:
Եւ մինչ կային նոքա յաղօթս՝ շարժեցաւ տեղին՝ 31
յորում էին ժողովեալ, եւ լցան ամենեքին Հոգւով
սրբով. եւ խօսէին զբանն Աստուծոյ համարձա-
կութեամբ:

ԼԶ. Եւ բազմութեան հաւատացելոցն էր սիրտ 32
եւ անձն մի. եւ ոչ ոք ի նոցանէ ասէր զընչից իւրոց թէ
իւր իցէ. այլ էր նոցա ամենայն ինչ հասարակաց: Եւ 33
զօրութեամբ բազմաւ տային վկայութիւն առաքեալքն
զյարութեան Տեառն Յիսուսի Քրիստոսի. եւ շնորհք
մեծամեծք էին ի վերայ ամենեցուն նոցա: Եւ ոչ ոք 34
կարօտէր ի նոսա. զի որ միանգամ տեարքն էին գե-
ղեց կամ ապարանից՝ վաճառէին եւ բերէին զգինս
վաճառելոցն, Դնէին առ ոտս առաքելոցն. եւ բաշ- 35
խէին իւրաքանչիւր՝ որպէս ումեք պիտոյ ինչ լինէր:
Յովսէփ որ կոչեցաւն Բառնաբաս յառաքելոց ան- 36
տի, որ թարգմանի՝ որդի մխիթարութեան, Ղեւ-
տացի յազգէ՝ Կիպրացի. Էր նորա գիւղ, վաճառեաց 37
եւ եբեր զգինսն՝ եդ առ ոտս առաքելոցն:

ԳԼՈՒԽ Ե.

Իսկ այր ոմն Անանիա անուն, հանդերձ կնաւ 1
իւրով Սափիրաւ վաճառեաց ագարակ. Եւ խորեաց 2

ի գնոյ անտի՝ գիտելով եւ կնոջն. եւ եբեր մասն ինչ՝
3 եդ առ ոտս առաքելոցն: Ասէ Պետրոս. Անանիա, ըն-
դէ՞ր ելից սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն
4 սրբոյ, եւ խորել ի գնոց գեղջն. Ո՞չ ապաքէն մինչ
կայրն՝ քո էր, եւ ի վաճառելն՝ ընդ քո իշխանու-
թեամբ էր. զի՞ է՝ զի եդիր ի սրտի քում զիրս զայս.
5 ոչ ստեցեր մարդկան, այլ Աստուծոյ: Եւ լուեալ
Անանիա զբանս զայսոսիկ՝ անկաւ եւ եհան զոգի. եւ
եղեւ ահ մեծ ի վերայ ամենեցուն՝ որ լուան զայն:
6 Յառն կացին երիտասարդքն եւ ամփոփեցին զնա, եւ
7 տարան թաղեցին: Եւ եղեւ իբրեւ ժամք երեք ան-
ցին, եւ կին նորա ոչ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ
8 ի ներքս: Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ.
ասա դու ինձ՝ թէ ա՞յնչափ գնոյ զգեօղն վաճառեցէք.
9 եւ նա ասէ. այո՝ այնչափ: Եւ ասէ ցնա Պետրոս. զի՞
է՝ զի միաբանեցէք դուք փորձել զՀոգին Տեառն.
ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո ի դրանն, հանցեն
10 եւ զքեզ: Եւ անկաւ անդէն առ ոտս նորա եւ եհան
զոգի. մտին երիտասարդքն եւ գտին զնա մեռեալ,
11 եւ հանին թաղեցին զնա առ առն իւրում: Եւ եղեւ
երկիւղ մեծ ի վերայ ամենայն եկեղեցւոյն, եւ ի վե-
րայ ամենեցուն՝ որ լուան զայն:
12 ԱԺ. Եւ ի ձեռս առաքելոց լինէին նշանք եւ
արուեստք բազումք ի ժողովրդեանն. եւ էին միաբան
13 ամենեքեան ի սրահին Սողոմոնի: Եւ յայլոց անտի
ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա. այլ յարգէր զնո-
14 սա ժողովուրդն: Եւ առաւել եւս յաւելուին հաւա-
տացեալքն ի Տէր, բազմութիւն արանց եւ կանանց.
15 Մինչեւ ի հրապարակն հանել զհիւանդս, եւ դնել
պատգարակօք եւ մահճօք իւրեանց. զի ընդ անցանելն
Պետրոսի՝ գոնէ հովանի նորա հասցէ ումեք ի նոցա-
16 նէ: Եւ ժողովէր բազմութիւն շուրջ ի քաղաքաց
անտի Երուսաղէմ, բերէին զհիւանդս եւ զնեղեալս
17 յայսոց պղծոց. որք եւ բժշկէին ամենեքեան: Յա-

րուցեալ քահանայապետն, եւ ամենեքեան որ ընդ
նմա եւ աղանդ Սադուկեցւոց՝ լցան նախանձու: Եւ 18
արկին ձեռս յառաքեալսն, եւ եդին զնոսա հրա-
պարակաւ ի բանտի: Այլ հրեշտակ Տեառն գիշերի 19
եբաց զդուրս բանտին, եւ հանեալ զնոսա՝ ասէ.
Գնացէք՝ կացէք ի տաճարին, եւ խօսեցարուք ընդ 20
ժողովրդեանն զամենայն պատգամս կենացս այսոցիկ:
Եւ իբրեւ լուան, մտին ընդ առաւօտն ի տաճարն եւ 21
ուսուցանէին: Եկն քահանայապետն եւ որ ընդ նմա,
կոչեցին միաբան զատեանն եւ զամենայն ծերակոյտ
որդւոցն Իսրայելի, եւ առաքեցին ի բանտն ածել
զնոսա: Եւ իբրեւ եկին սպասաւորքն եւ ոչ գտին 22
զնոսա ի բանտին. դարձեալ անդրէն, պատմեցին Եւ 23
ասեն, Թէ զբանտն գտաք փակեալ ամենայն զգու-
շութեամբ, եւ զպահապանսն՝ զի կային առ դրանն.
բացաք եւ ի ներքս զոք ոչ եւս գտաք: Իբրեւ լուան 24
զբանս զայս իշխանք տաճարին եւ քահանայապետքն,
հիանային վասն նոցա, Թէ զի՞նչ արդեօք լինիցի այն:
Եւ եկն ոմն պատմեաց նոցա՝ Թէ ահա արքն՝ զորս 25
եդիք ի բանտի՝ կան ի տաճարին, եւ ուսուցանեն ըզ-
ժողովուրդն: Յայնժամ երթեալ իշխանն սպասաւո- 26
րօքն հանդերձ՝ ած զնոսա ոչ բռնութեամբ. քանզի
երկնչէին ի ժողովրդենէն՝ զի մի քարկոծեսցին: Եւ 27
ածեալ զնոսա՝ կացուցին յատենի. եհարց ցնոսա
քահանայապետն, Եւ ասէ. ո՞չ պատուիրելով պա- 28
տուիրեցաք ձեզ՝ մի ուսուցանել յանունն յայն. եւ
արդ՝ ահաւասիկ լցէք զԵրուսաղէմ ուսմամբ ձերով,
եւ կամիք ածել ի վերայ մեր զարիւն զառն զայնո-
րիկ: Պատասխանի ետ Պետրոս եւ այլ առաքեալքն 29
եւ ասեն. Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել՝
քան մարդկան: Աստուած հարցն մերոց յարոյց զՅի- 30
սուս՝ զոր դուքն սպանէք կախեալ զփայտէ: Զնա 31
Աստուած առաջնորդ եւ փրկիչ բարձրացոյց աջով
իւրով տալ ապաշխարութիւն Իսրայելի եւ Թողու-

32 Թիւն մեղաց։ Եւ մեք եմք նորա վկայք բանիցս այսոցիկ,
եւ Հոգին սուրբ՝ զոր ետ Աստուած հնազանդելոց
33 իւրոց։ Եւ նոքա իբրեւ լուան, առատանային եւ
խորհէին սպանանել զնոսա։
34 Բկ. Յարուցեալ ոմն ի մէջ ատենին փարիսեցի՝
որում անուն էր Գամաղիէլ, օրէնսուսոյց՝ պատուա-
կան ամենայն ժողովրդեանն. հրամայեաց սակաւիկ մի
35 զարսն արտաքս տանել։ Եւ ասէ ցնոսա. արք Իսրայե-
լացիք՝ հայեցարուք ի ձեզ վասն արանցս այսոցիկ՝
36 զինչ արժան իցէ գործել։ Յառաջ քան զաւուրս
զայսոսիկ յարեաւ Թեւդաս՝ ասել զանձնէ, թէ իցէ
ոմն. յոր անկան արք թուով իբրեւ չորեքհարիւր.
որ սպանաւ, եւ ամենեքեան որ միաբանեալ էին ընդ
37 նմա, քակտեցան եւ եղեն յոչինչ։ Յետ նորա յարեաւ
Յուդա Գալիլեացի՝ յաւուրս աշխարհագրին, եւ
ապստամբեցոյց ժողովուրդ բազում զհետ իւր. եւ նա
կորեաւ, եւ ամենեքեան որ նմայն հաւանեալ էին,
38 ցրուեցան։ Եւ զարդիս ասեմ ձեզ. ի բաց կացէք
յարանցդ յայդցանէ եւ թոյլ տուք դոցա, զի եթէ
ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործ, քակ-
39 տեսցի. Ապա եթէ յԱստուծոյ է՝ ոչ կարէք քակ-
տել զդոսա. գուցէ եւ աստուածամարտք գտանիցիք։
40 Հաւանեցան նմա. եւ կոչեցեալ զառաքեալսն՝ գան
հարին, եւ պատուիրեցին՝ մի եւս խօսել յանուն
41 Յիսուսի. եւ արձակեցին զնոսա։ Եւ նոքա գնացին
խնդալով յերեսաց ատենին, զի վասն անուանն Տեառն
42 արժանի եղեն անարգելոյ։ Եւ զամենայն օր ի տաճա-
րին եւ առտնին ոչ դադարէին ուսուցանել եւ աւե-
տարանել զՅիսուս Քրիստոս։

ԳԼՈՒԽ Զ.

1 Եւ յաւուրսն յայնոսիկ ի բազմանալ աշակեր-
տացն, եղեւ տրտունջ Յունացն Հեբրայեցիսն. զի
արհամարհեալ լինէին ի պաշտամանն հանապազորդի

այրիք նոցա։ Կոչեցին երկոտասանքն զբազմութիւն 2
աշակերտացն եւ ասեն. ոչ է հաճոյ մեզ թողուլ
զբանն Աստուծոյ եւ պաշտել զսեղանս։ Ընտրեցէք 3
եղբարք՝ վկայեալս ի ձէնջ արս եօթն, (լի Հոգւով
սրբով եւ իմաստութեամբ) զորս կացուսցուք ի վե-
րայ պիտոյիցս այսոցիկ. Եւ մեք աղօթից եւ պաշտա- 4
ման եւ բանին հպատակ լիցուք։ Եւ հաճոյ թուեցաւ 5
բանն առաջի ամենայն բազմութեանն. եւ ընտրեցին
զՍտեփանոս՝ այր լի հաւատովք եւ Հոգւով սրբով,
եւ զՓիլիպպոս եւ զՊրոքորոն եւ զՆիկանովրա եւ
զՏիմոնա եւ զՊարմենա, եւ զՆիկողայոս զեկն Ան-
տիոքացի. Զորս կացուցին առաջի առաքելոցն. եւ 6
աղօթս արարեալ՝ եդին ի վերայ նոցա զձեռս։ Եւ 7
բանն Աստուծոյ աճէր, եւ բազմանայր թիւ աշակեր-
տացն յոյժ յԵրուսաղէմ. եւ բազում ժողովք ի
քահանայիցն անսային հաւատոցն։

ԲԲ. Ստեփանոս՝ այր լի շնորհօք եւ զօրութեամբ, 8
առնէր նշանս եւ արուեստս մեծամեծս ի ժողովրդեանն։
Յարեան ոմանք ի ժողովրդենէն, որ կոչէր Լիբեացւոց 9
եւ Աղէքսանդրացւոց եւ Կիւրենացւոց եւ որ ի Կի-
լիկեցւոց եւ յԱսիայ, վիճել ընդ Ստեփանոսի. Եւ 10
ոչ կարէին զդէմ ունել զիմաստութեանն եւ զհոգւոյն,
որով խօսէր։ Յայնժամ հրապուրեցին արս ոմանս ա- 11
սել, թէ լուաք զդորա խօսել բանս հայհոյութեան ի
Մովսէս եւ յԱստուած։ Եւ խռովեցին զժողովուրդն 12
եւ զերիցունսն եւ զդպիրսն. եւ հասեալ ի վերայ՝
յափշտակեցին զնա եւ ածին յատեանն։ Եւ կացուցին 13
վկայս սուտս՝ որ ասէին. այրս այս ոչ դադարէ խօսել
բանս հայհոյութեան զտեղւոյն սրբոյ եւ զօրինացն։
Լուաք ի դմանէ զի ասէր՝ թէ Յիսուս Նազովրեցի՝ 14
նա քակեսցէ զտեղիս զայս, եւ փոխեսցէ զօրէնս՝ զոր
ետ մեզ Մովսէս։ Եւ հայեցեալ ի նա ամենեցուն՝ 15
որ նստէին յատենին, տեսին զերեսս նորա իբրեւ զե-
րեսս հրեշտակի։

ԳԼՈՒԽ Է.

1 Ասէ քահանայապետն՝ թէ արդարեւ այդ ա՞յդ-
2 պէս իցէ: Եւ նա ասէ. արք եղբարք եւ հարք՝ լուա-
րուք ինձ: Աստուած փառաց երեւեցաւ հօր մերում
Աբրահամու մինչ դեռ ի Միջագետս էր, մինչ չեւ
3 բնակեցուցեալ էր զնա ի Խառան, եւ ասէ ցնա. Ել
յերկրէ քումմէ եւ յազգէ քումմէ, եւ եկ յերկիր՝
4 զոր ցուցից քեզ: Յայնժամ ելեալ յերկրէն Քաղ-
դէացւոց բնակեցաւ ի Խառան. եւ անտի յետ մեռա-
նելոյ հօր նորա՝ փոխեաց, եւ պանդխտեցոյց զնա
յերկրիս յայսմիկ, յորում դուք այժմ բնակեալ էք:
5 Եւ ոչ ետ նմա ժառանգութիւն ի սմա, եւ ոչ քայլ
մի ոտին. եւ խոստացաւ տալ նմա զսա ի բնակու-
թիւն, եւ զաւակի նորա յետ նորա. եւ մինչ ոչ գոյր
6 նորա որդի, Խօսեցաւ Աստուած այսպէս, թէ եղիցի
զաւակ նորա պանդուխտ յօտար երկրի. եւ ծառայե-
7 ցուսցեն զնա եւ չարչարեսցեն ամս չորեքհարիւր: Եւ
զազգն՝ որում ծառայեսցեն, դատեցայց ես, ասէ Աս-
տուած. եւ յետ այսորիկ ելցեն եւ պաշտեսցեն զիս
8 ի տեղւոջս յայսմիկ: Եւ ետ նմա ուխտ թլփատու-
թեան. եւ ապա ծնաւ զԻսահակ, եւ թլփատեաց
զնա յաւուր ութերորդի. եւ Իսահակ զՅակովբ, եւ
9 Յակովբ զերկոտասան նահապետսն: Եւ նահապետքն
նախանձեալ ընդ Յովսէփայ՝ վաճառեցին յԵգիպ-
10 տոս. եւ էր Աստուած ընդ նմա: Եւ փրկեաց զնա
յամենայն նեղութեանց նորա. եւ ետ նմա շնորհս եւ
իմաստութիւն առաջի Փարաւոնի արքային Եգիպ-
տացւոց. եւ կացոյց զնա իշխան Եգիպտացւոցն եւ
11 ամենայն տան նորա: Եւ եկն սով յամենայն երկիրն
Եգիպտոսի եւ ի Քանան, նեղութիւն մեծ. եւ ոչ
12 գտանէին կերակուր հարքն մեր: Եւ լուեալ Յակով-
բայ թէ գտանի կերակուր յԵգիպտոս՝ առաքեաց
13 զհարսն մեր յառաջագոյն: Եւ յերկրորդումն ետ ծա-

նոթս Յովսէփ եղբարց իւրոց. եւ յայտնի եղեւ փա-
րաւոնի ազգն նորա: Առաքեաց Յովսէփ եւ կոչեաց 14
զՅակովբ զհայր իւր, եւ զամենայն ազգատոհմն՝ ոգիս
եօթանասուն եւ հինգ: Եւ էջ Յակովբ յԵգիպտոս, 15
եւ վախճանեցաւ ինքն եւ հարքն մեր: Եւ փոխեցան 16
ի Սիւքեմ, եւ եդան յայրին, զոր ստացաւ Աբրահամ
գնոց արծաթոյ յորդւոցն Եմովրայ՝ ի Սիւքեմ: Իբրեւ 17
մերձեցաւ ժամանակ աւետեացն՝ զոր խոստացաւ Աս-
տուած Աբրահամու, աճեաց ժողովուրդն եւ բազմա-
ցաւ յԵգիպտոս. Մինչեւ յարեաւ այլ թագաւոր 18
յԵգիպտոս՝ որ ոչ ճանաչէր զՅովսէփ: Նա հնարեցաւ 19
ազգին մերում, եւ չարչարեաց զհարսն մեր առնել
ընկեցիկ զմանկունս նոցա՝ զի մի ապրեսցին: Յորում 20
ժամանակի ծնաւ եւ Մովսէս եւ էր կայտառ առաջի
Աստուծոյ. որ եւ սնաւ ի տան հօր իւրոյ ամիս երիս:
Եւ յընկեցիկն առնել զնա՝ եբարձ զնա դուստրն փա- 21
րաւոնի, եւ սնոյց զնա իւր յորդեգիրս: Եւ վարժե- 22
ցաւ Մովսէս ամենայն իմաստութեամբ Եգիպտա-
ցւոցն. եւ էր զօրաւոր բանիւք եւ գործովք իւրովք:
Իբրեւ լցաւ նորա քառասնամեայ ժամանակ, անկաւ 23
ի սիրտ նորա շրջել զեղբարբք իւրովք՝ զորդւովքն
Իսրայելի: Եւ տեսեալ զոմն զրկեալ՝ զչարեցաւ, եւ 24
խնդրեաց զվրէժ զրկելոյն՝ սպանանել զԵգիպտացին:
Զմտաւ ածէր թէ իմասցին եղբարք նորա, զի Աս- 25
տուած ի ձեռն նորա տալոց էր զփրկութիւն նոցա.
եւ նոքա ոչ իմացան: Եւ ի վաղիւ անդր երեւեցաւ 26
նոցա մինչդեռ մարտնչէին, եւ վարեաց զնոսա ի խա-
ղաղութիւն, ասէ. արք եղբարք էք, ընդէ՞ր զրկէք
զմիմեանս: Իսկ որ զրկէր զընկերն, մերժեաց զնա եւ 27
ասէ. ո՞ կացոյց զքեզ իշխան եւ դատաւոր ի վերայ
մեր: Միթէ սպանանե՞լ կամիցիս զիս՝ զոր օրինակ 28
սպաներ երէկ զԵգիպտացին: Եւ փախեաւ Մովսէս 29
ի բանիցս յայսցանէ, եւ եղեւ պանդուխտ յերկրին
Մադիամու, ուր ծնաւ երկուս որդիս:

30 Բգ. Եւ ի կատարել ամացն քառասնից, երեւե-
ցաւ նմա յանապատին ի լերինն Սինայ հրեշտակ Տեառն
31 ի բոց հրոյ մորենւոյն: Եւ Մովսեսի տեսեալ՝ զարմա-
ցաւ ընդ տեսիլն, եւ ի մատչելն նորա նշմարել՝ եղեւ
32 ձայն Տեառն. Ես եմ Աստուած հարց քոց, Աստու-
ած Աբրահամու եւ Աստուած Իսահակայ եւ Աստուած
Յակովբայ. եւ դահի հարեալ Մովսէս՝ ոչ իշխէր հայ-
33 ել: Եւ ասէ ցնա Տէր. լոյծ զկօշիկս յոտից քոց, զի տե-
34 ղիդ յորում դու դ կայցես՝ երկիր սուրբ է: Տեսանելով
տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ որ յԵգիպտոս,
եւ լուայ հեծութեան նոցա, եւ իջի փրկել զնոսա.
35 եւ արդ՝ եկ առաքեցից զքեզ յԵգիպտոս: Զայն
Մովսէս՝ զոր ուրացան եւ ասեն. ո՞ կացոյց զքեզ իշ-
խան եւ դատաւոր ի վերայ մեր, զնա Աստուած իշ-
խան եւ փրկիչ առաքեաց ի ձեռն հրեշտակին, որ ե-
36 րեւեցաւ նմա ի մորենւոջն: Նա եհան զնոսա՝ արա-
րեալ նշանս եւ արուեստս յերկրին Եգիպտացւոց եւ
ի Կարմիր ծովուն եւ յանապատին, ամս քառասուն:
37 Այս Մովսէս է, որ ասաց ցորդիսն Իսրայելի. մար-
գարէ յարուսցէ ձեզ Տէր Աստուած ձեր յեղբարց
38 ձերոց իբրեւ զիս, նմա լուիջիք: Սա է՝ որ եղեւ յե-
կեղեցւոջն՝ յանապատին ընդ հրեշտակին որ խօսե-
ցաւ ընդ նմա ի լերինն Սինայ եւ ընդ հարսն մեր. որ
39 ընկալաւ զպատգամս կենդանիս՝ տալ մեզ: Որում
ոչ կամեցան հնազանդ լինել հարքն մեր. այլ մեր-
ժեցին եւ դարձան սրտիւք իւրեանց յԵգիպտոս:
40 Եւ ասեն ցԱհարոն. արա մեզ Աստուածս, որ եր-
թիցեն առաջի մեր. զի Մովսէսն այն՝ որ եհան
զմեզ յերկրէն Եգիպտացւոց, ոչ գիտեմք զի՞ եղեւ
41 նմա: Եւ արարին յաւուրսն յայնոսիկ որթ, եւ մա-
տուցին զոհս կռոց, եւ ուրախ լինէին ի գործս ձեռաց
42 իւրեանց: Դարձոյց Աստուած եւ մատնեաց զնոսա ի
պաշտօն զօրութեան երկնից. որպէս եւ գրեալ է ի
գիրս մարգարէից. միթէ զո՞հս եւ պատարագս մատու-

ցէք ինձ զամս քառասուն յանապատին՝ տունդ Իս-
րայելի։ Եւ առէք զխորանն Մողոքայ, եւ զաստղն աս- 43
տուածոյն Հռեմփայ, զպատկերսն՝ զոր արարէք երկիր
պագանել նոցա. եւ փոխեցից զձեզ յայն կողմն Բա-
բելացւոց։ Խորանն վկայութեան էր ընդ հարսն մեր 44
յանապատին. որպէս հրաման ետ՝ որ խօսէրն ընդ
Մովսէսի, առնել զայն ըստ օրինակին՝ զոր ետես։
Զոր եւ ընկալեալ բերէին հարքն մեր հանդերձ Յե- 45
սուաւ ի վիճակ ազգացն, զորս մերժեաց Աստուած
յերեսաց հարցն մերոց. մինչեւ յաւուրս Դաւթի,
Որ եգիտ շնորհս առաջի Աստուծոյ, եւ խնդրեաց 46
գտանել զյարկս Աստուծոյ Յակովբայ։ Նա եւ Սո- 47
ղոմոն շինեաց նմա տուն։ Այլ ոչ եթէ Բարձրեալն 48
ի ձեռագործ տաճարս բնակէ. այլ որպէս մարգարէն
ասէ. Երկինք աթոռ իմ են, եւ երկիրս պատուան- 49
դան ոտից իմոց. որպիսի՞ տուն շինեցէք ինձ ասէ Տէր,
կամ զի՞նչ տեղի հանգստեան իմոյ. Ո՞չ ձեռն իմ 50
արար զայս ամենայն։ Խստապարանոցք եւ անթլփատք 51
սրտիւք եւ ականջօք. դուք հանապազ Հոգւոյն սըր-
բոյ հակառակ կայք, որպէս եւ հարքն ձեր եւ դուք։
Զո՞ ի մարգարէիցն ոչ հալածեցին հարքն ձեր. եւ 52
սպանին զայնոսիկ՝ որ յառաջագոյն պատմեցին վասն
գալստեան Արդարոյն, որոյ դուք այժմ մատնիչք եւ
սպանողք եղերուք. Որք առէք զօրէնս ի հրամանս 53
հրեշտակաց, եւ ոչ պահեցէք։ Եւ լուեալ զայս՝ 54
զայրանային ի սիրտս իւրեանց, եւ կրճտէին զատա-
մունս ի վերայ նորա։ Եւ նա էր լի Հոգւով սրբով. 55
հայեցաւ յերկինս եւ ետես զփառս Աստուծոյ, եւ
զՅիսուս՝ զի կայր ընդ աջմէ Աստուծոյ. եւ ասէ՝ ահա
տեսանեմ զերկինս բացեալ եւ զՈրդի մարդոյ զի կայ
ընդ աջմէ Աստուծոյ։ Աղաղակեալ ի ձայն մեծ՝ խցին 56
զականջս իւրեանց, եւ դիմեցին առ հասարակ ի վերայ
նորա։ Եւ հանեալ արտաքոյ քաղաքին՝ քարկոծէին. 57
եւ վկայքն դնէին զձորձս իւրեանց առ ոտս երիտա-

58 սարգի միոջ՝ որ կոչէր Սաւուղ: Եւ քարկոծ առնէին
զՍտեփաննոս, որ կարդայր եւ ասէր. Տէր Յիսուս,
59 ընկալ զոգի իմ: Եդ ծունր՝ աղաղակեաց ի ձայն
բարձր. Տէր, մի համարիր դոցա զայս մեղս. եւ զայս
իբրեւ ասաց՝ ննջեաց. եւ Սաւղոս էր կամակից սպան-
ման նորա:

ԳԼՈՒԽ Ը·

1 Եւ եղեւ յաւուր յայնմիկ հալածումն մեծ ի
վերայ եկեղեցւոյն Երուսաղեմի. եւ ամենեքեան
ցրուեցան ի գեօղս Հրէաստանի եւ ի Սամարիա բաց
2 յառաքելոցն: Եւ բարձին զՍտեփաննոս արք երկիւ-
ղածք եւ արարին կոծ մեծ ի վերայ նորա:
3 Բֆ· Բայց Սաւղոս վնասակար էր եկեղեցւոյն. ի
տունս տունս մտանէր քարշէր զարս եւ զկանայս եւ մա-
4 տնէր ի բանտ: Եւ սփռեալքն շրջէին եւ աւետարանէին
5 զբանն: Իսկ Փիլիպպոս իջեալ ի քաղաքն Սամարա-
6 ցւոց՝ քարոզէր նոցա զՔրիստոս: Ունկն դնէին ժողո-
վուրդքն բանիցն Փիլիպպոսի միաբան՝ ի լսել նոցա եւ
7 ի տեսանել զնշանսն, զոր առնէր: Քանզի բազումք
որ ունէին զայսս պիղծս՝ աղաղակէին ի ձայն մեծ եւ
8 ելանէին: Եւ բազում անդամալոյծք եւ կաղք բժշ-
9 կէին: Եւ եղեւ ուրախութիւն մեծ ի քաղաքին յայն-
միկ: Այր ոմն Սիմոն անուն, յառաջագոյն էր ի քա-
ղաքին. մոգէր եւ ապշեցուցանէր զազգն Սամարա-
10 ցւոց, ասել զանձնէ՝ թէ իցէ մեծ ոմն: Յոր հայէին
ամենեքեան ի փոքուէ մինչեւ ի մեծամեծս. եւ ա-
սէին, սա է զօրութիւն Աստուծոյ, որ կոչի մեծ:
11 Հայէին ի նա վասն բազում ժամանակաց մոգու-
12 թեամբքն ապշեցուցանելոյ զնոսա: Բայց յորժամ
հաւատացին Փիլիպպոսի, որ աւետարանէր վասն ար-
քայութեանն Աստուծոյ եւ անուանն Յիսուսի Քրիս-
13 տոսի, մկրտէին ամենեքեան արք եւ կանայք: Այլ
եւ ինքն Սիմոն հաւատաց, եւ մկրտեալ կանխէր առ

Փիլիպպոս. տեսեալ զնշանսն եւ զմեծամեծ զօրու-
թիւնսն որ լինէին, զարմանայր: Իբրեւ լուան՝ որ 14
յԵրուսաղէմ առաքեալքն էին, թէ եւ ի Սամարիա
ընկալան զբանն Աստուծոյ, առաքեցին առ նոսա
զՊետրոս եւ զՅովհաննէս. Որք իջեալ կացին յաղօթս 15
ի վերայ նոցա, որպէս զի առցեն զՀոգին սուրբ. Զի 16
ցայնժամ չեւ եւս էր եւ ոչ ի վերայ միոյ նոցա հա-
սեալ. բայց միայն մկրտեալք էին յանուն Տեառն
Յիսուսի: Յայնժամ եդին ձեռս ի վերայ նոցա, եւ 17
առնուին Հոգի սուրբ: Տեսեալ Սիմոնի՝ թէ ձեռն 18
ի վերայ դնելով առաքելոցն՝ տուեալ լինի Հոգի
սուրբ, մատոյց նոցա ինչս եւ ասէ. Տուք եւ ինձ զիշ- 19
խանութիւնս զայս, զի յոյր վերայ դնիցեմ ձեռս՝
առցէ Հոգի սուրբ: Եւ Պետրոս ասէ ցնա. Արծաթ 20
քո ընդ քեզ լիցի ի կորուստ, զի զպարգեւսն Աստու-
ծոյ համարեցար ընչիւք ստանալ: Ոչ գոյ քեզ մասն 21
եւ վիճակ ի բանիդ յայդմիկ. քանզի սիրտ քո ոչ է
ուղիղ առաջի Աստուծոյ: Ապաշխարեա դու ի չա- 22
րեացդ քոց յայդցանէ, եւ աղաչեա զՏէր. թերեւս
թողութիւն լիցի քեզ ի մեղմէս խորհրդոց սրտի քո:
Քանզի ի դառնութիւն մաղձի եւ ի կնճիռն անի- 23
րաւութեան տեսանեմ զքեզ: Պատասխանի ետ Սի- 24
մոն եւ ասէ. աղաչեցէք դուք վասն իմ զՏէր, զի մի
ինչ եկեսցէ ի վերայ իմ՝ յորոց դուքդ ասացէք: Եւ 25
նոցա եդեալ վկայութիւն՝ խօսեցան զբանն Աստուծոյ,
եւ դարձան յԵրուսաղէմ. եւ ի բազում գեօղս Սա-
մարացւոցն աւետարանէին:

ԲՆ. Հրեշտակ Տեառն խօսեցաւ ընդ Փիլիպպոս 26
եւ ասէ. արի եւ գնա դու ի կողմն հարաւոյ՝ ընդ ճա-
նապարհ որ իջանէ յԵրուսաղէմէ ի Գազայ. զի այս
է անապատ: Եւ յարեաւ գնաց: Եւ ահաւասիկ այր 27
մի Եթովպացի, ներքինի հզօր՝ Կանդակայ անկնոջ
Եթովպացւոց, որ էր ի վերայ ամենայն գանձուց
նորա, որ եկեալ էր երկիր պագանել յԵրուսաղէմ.

28 Եւ էր անդրէն դարձեալ․ եւ նստեալ ի կառս իւ-
29 րում, ընթեռնոյր զմարգարէն զԵսայի։ Ասէ Հոգին
զՓիլիպպոս․ մատիր եւ յարեաց ի կառսդ յայդոսիկ։
30 Եւ ընթացեալ Փիլիպպոս՝ լսէր զի ընթեռնոյր զԵ-
սայի մարգարէ, եւ ասէ․ գիտիցե՞ս արդեօք՝ զոր ըն-
31 թեռնուցուս։ Եւ նա ասէ՝ զիա՞րդ կարիցեմ, թէ
ոք ոչ առաջնորդեսցէ ինձ․ եւ աղաչեաց զՓիլիպպոս
32 ելանել նստել ընդ նմա։ Եւ գլուխ գրոցն՝ զոր ըն-
թեռնոյր՝ էր այս․ Իբրեւ զոչխար ի սպանդ վարեցաւ,
եւ իբրեւ զորոջ առաջի կտրչի իւրոյ անմռունչ, այն-
33 պէս ոչ բանայ զբերան իւր։ Ի խոնարհութեան նորա
դատաստան նորա բարձաւ, եւ զազգատոհմն նորա ո՞
34 պատմեսցէ․ զի բառնան յերկրէ կեանք նորա։ Պա-
տասխանի ետ ներքինին Փիլիպպոսի, եւ ասէ․ աղա-
չեմ զքեզ՝ վասն ո՞յր ասէ մարգարէն զայս․ վասն ի՞ւր,
35 եթէ վասն այլոյ ուրուք։ Եբաց Փիլիպպոս զբերան
իւր, եւ սկսեալ ի գրոցս յայսցանէ՝ աւետարանեաց
36 նմա զՅիսուս։ Իբրեւ երթային զճանապարհայն, ե-
կին ի ջուր ինչ․ եւ ասէ ներքինին, ահաւասիկ ջուր՝
37 զի՞նչ արգելու զիս ի մկրտելոյ։ Եւ ասէ ցնա․ եթէ
հաւատաս բոլորով սրտիւ քով՝ մարթ է։ Պատաս-
խանի ետ եւ ասէ․ հաւատամ՝ եթէ Յիսուս Քրիս-
38 տոս է Որդի Աստուծոյ։ Եւ հրամայեաց կացուցանել
զկառսն․ եւ իջին երկոքին ի ջուրն՝ Փիլիպպոս եւ ներ-
39 քինին, եւ մկրտեաց զնա։ Եւ իբրեւ ելին ի ջրոյ ան-
տի՝ Հոգի սուրբ եկն ի վերայ ներքինւոյն․ եւ հրեշ-
տակ Տեառն յափշտակեաց զՓիլիպպոս, եւ ոչ եւս
ետես զնա ներքինին․ եւ դնայր զճանապարհս իւր
40 ուրախութեամբ։ Բայց Փիլիպպոս գտաւ յԱզովտոս․
եւ շրջեալ աւետարանէր ամենայն քաղաքացն մին-
չեւ ի գալ նորա ի Կեսարիա։

ԳԼՈՒԽ Թ.

ԹԶ. Իսկ Սաւղոս տակաւին լցեալ սպառնալեօք 1
եւ սպանմամբ աշակերտացն Տեառն, մատուցեալ առ
քահանայապետն, խնդրեաց ի նմանէ թուղթս ի 2
Դամասկոս առ ժողովուրդսն. որպէս թէ զոք գտցէ
զայնր ճանապարհի՝ արս կամ կանայս, կապեալս ած-
ցէ յԵրուսաղէմ: Եւ ընդ երթալն նորա՝ եղեւ մեր- 3
ձենալ ի Դամասկոս. յանկարծակի շուրջ զնովաւ
փայլատակեաց լոյս յերկնից: Եւ անկեալ յերկիր, 4
լուաւ բարբառ՝ որ ասէր ցնա. Սաւուղ Սաւուղ, զի՞
հալածես զիս: Եւ ասէ. ո՞վ ես Տէր: Եւ նա ասէ. 5
ես եմ Յիսուս՝ զոր դու հալածես. խիստ է քեզ
ընդդէմ խթանի աքացել: (Եւ դողահարեալ եւ ան- 6
շշունջ լեալ ասաց. Տէր զիս զի՞նչ կամիս առնել: Եւ
ասէ ցնա Տէր.) Այլ յոտն կաց եւ մուտ ի քաղաքդ, 7
եւ պատմեսցի քեզ՝ զինչ քեզ պարտ իցէ առնել.
Իսկ արքն՝ որ ընդ նմայն երթային, կային անշշունջ.
զձայնն միայն լսէին՝ բայց տեսանէին եւ ոչ ինչ: Յա- 8
րեաւ Սաւղոս յերկրէ անտի, եւ աչօք բացօք ոչ զոք
տեսանէր. զձեռանէ առեալ նորա՝ մուծին ի Դա-
մասկոս: Եւ էր անդ աւուրս երիս. եւ ոչ տեսանէր, 9
եւ ոչ եկեր եւ ոչ արբ: Եւ էր ոմն աշակերտ ի Դա- 10
մասկոս՝ Անանիա անուն. ասէ ցնա Տէր ի տեսլեան.
Անանիա. եւ նա ասէ. աւասիկ եմ Տէր: Եւ ասէ 11
ցնա Տէր. յոտն կաց եւ գնա ընդ փողոցն՝ որ կոչի
Ուղիղ, եւ խնդրեսցես յապարանս Յուդայ՝ Սաւղոս
անուն զՏարսոնացի՝ զի կայ դեռ յաղօթս: Եւ ետես 12
ի տեսլեան այր մի Անանիա անուն՝ մտեալ եւ եդեալ
ի վերայ նորա ձեռն, որպէս զի տեսցէ: Պատասխանի 13
ետ Անանիա. Տէր, լուայ ի բազմաց վասն առնն այնո-
րիկ՝ որչափ արար չարիս սրբոց քոց յԵրուսաղէմ. Եւ 14
աստ ունի իշխանութիւն ի քահանայապետացն կա-
պել զամենեսեան, որ կարդան զանուն քո: Ասէ ցնա 15

Տէր. երթ դու՝ զի անօթ ընտրութեան է ինձ նա,
կրել զանուն իմ առաջի հեթանոսաց եւ թագաւո-
16 րաց եւ որդւոցն Իսրայէլի: Զանզի ես իսկ ցուցից
նմա՝ որչափ պարտ իցէ նմա չարչարել վասն անուան
17 իմոյ: Եւ գնաց Անանիա եւ եմուտ յապարանսն. եւ
եդեալ ի վերայ նորա ձեռս, ասէ. Սաւուղ եղբայր,
ի վեր հայեաց. Տէր առաքեաց զիս, Յիսուս՝ որ երե-
ւեցաւ քեզ ի ճանապարհին՝ յորում գայիր. որպէս
18 զի տեսցես եւ լցցիս Հոգւով սրբով: Եւ վաղվա-
ղակի անկան յաչաց նորա իբրեւ կեղեւանք. ետես
19 եւ յարեաւ մկրտեցաւ. Եւ առեալ կերակուր՝ զօ-
րացաւ. եւ եղեւ ի Դամասկոս ընդ աշակերտսն
20 աւուրս ինչ: Եւ վաղվաղակի ի ժողովուրդսն քարո-
21 զեաց զՅիսուս, թէ սա է Որդին Աստուծոյ: Զար-
մացեալ էին ամենեքեան, որ լսէին, եւ ասէին. ո՞չ
սա էր՝ որ աւերն հարկանէր յԵրուսաղէմ զայնոսիկ,
որ կարդային զանուն Յիսուսի. եւ այսր նմին իրի
եկեալ է, զի կապեալ զնոսա տարցի առ քահա-
22 նայապետսն: Այլ Սաւղոս առաւել եւս զօրանայր եւ
յաղթահարէր զՀրեայսն, որ բնակեալ էին ի Դա-
մասկոս. եւ խելամտեցուցանէր թէ սա է Քրիստոսն:
23 Իբրեւ կատարէին աւուրք բազումք, խորհեցան Հրեայ-
24 քն սպանանել զնա: Յայտնեցաւ Սաւղոսի նենգու-
թիւնն նոցա. քանզի պահէին զդրունսն ի տուէ եւ ի
25 գիշերի՝ որպէս զի սպանցեն զնա: Եւ առեալ զնա
աշակերտացն ի գիշերի՝ ընդ պարիսպն կախեալ իջու-
26 ցին փանդակաւ: Իբրեւ եկն Սաւղոս յԵրուսաղէմ,
ընդելանէր յարել յաշակերտսն. եւ ամենեքեան եր-
կընչէին ի նմանէ, չհաւատային թէ իցէ աշակերտ:
27 Բայց Բառնաբաս առեալ զնա՝ ած առ առաքեալսն.
եւ պատմեաց նոցա՝ որպէս ի ճանապարհին ետես
զՏէր, եւ զի խօսեցաւ ընդ նմա, եւ զի ի Դամասկոս
28 համարձակեցաւ յանուն Յիսուսի: Եւ էր ընդ նոսա
մտանել եւ ելանել յԵրուսաղէմ, համարձակեալ

յանուն Տեառն։ Խօսէր եւ վիճէր ընդ Յոյնս. եւ 29
նոքա խորհէին սպանանել զնա։ Եւ իմացեալ եղբարց՝ 30
իջուցին զնա ի Կեսարիա, եւ առաքեցին զնա ի Տար-
սոն։ Բայց եկեղեցին ընդ ամենայն Հրէաստան եւ ի 31
Սամարիա եւ ի Գալիլեա ունէր խաղաղութիւն, շի-
նեալ եւ երթեալ զհետ երկիւղի Տեառն. եւ մխի-
թարութեամբ Հոգւոյն սրբոյ բազմանայր։
ԻԼ. Եւ եղեւ ի շրջելն Պետրոսի առ ամենե- 32
քումբք, իջանել նմա եւ առ սուրբսն՝ որ բնակեալ
էին ի Լիւդիա։ Եւ եգիտ անդ այր մի, որում անուն 33
էր Ենեա, ութամեան դնէր ի մահիճս անդամալոյծ։
Եւ ասէ ցնա Պետրոս. Ենեա, բժշկէ զքեզ Տէր Յի- 34
սուս Քրիստոս, արի եւ քեզէն թօթափեա զանկո-
ղինս քո. եւ վաղվաղակի յարեաւ։ Եւ տեսին զնա 35
ամենեքեան, որ բնակեալ էին ի Լիւդիա եւ ի Սարով-
նայ, որք եւ դարձան իսկ ի Տէր։ Եւ ի Յոպպէ էր 36
կին ոմն աշակերտեալ՝ անուն Տաբիթա, որ թարգմա-
նեալ կոչի Այծեմնիկ. սա էր լի գործովք բարեօք եւ
ողորմութեամբք զոր առնէր։ Եւ եղեւ յաւուրսն 37
յայնոսիկ հիւանդանալ նմա եւ մեռանել. լուացին
զնա եւ եդին ի դստիկոնի անդ։ Եւ մերձ էր Լիւդիա 38
ի Յոպպէ. աշակերտացն լուեալ եթէ Պետրոս անդ
է, առաքեցին երկուս արս առ նա՝ աղաչել, զի մի
դանդաղեսցի գալ առ նոսա։ Եւ յարուցեալ Պե- 39
տրոս՝ եկն ընդ նոսա. զոր՝ իբրեւ եկն՝ հանին ի վեր-
նատունն. եւ կային շուրջ զնովաւ այրիքն ամենայն.
լային եւ ցուցանէին զձորձս եւ զհանդերձս, որչափ
առնէր նոցա Այծեմնիկն։ Եւ հանեալ արտաքս զա- 40
մենեսեան Պետրոսի, եդ ծունր՝ եկաց յաղօթս. եւ
դարձաւ ի մարմինն եւ ասէ, Տաբիթա, արի կաց յա-
նուն Տեառն Յիսուսի Քրիստոսի. եւ նա եբաց զաչս
իւր. եւ տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն։ Ջեռն 41
ետ նմա եւ յարոյց զնա. կոչեաց զսուրբս եւ զայրիս,
առաջի կացոյց զնա կենդանի։ Եւ յայտնի եղեւ ընդ 42

ամենայն Յոպպէ. եւ հաւատացին բազումք ի Տէր:
43 Եւ եղեւ աւուրս բազումս լինել նմա ի Յոպպէ՝ առ
ումեմն Սիմովնի խաղախորդի:

ԳԼՈՒԽ Ժ.

1 ԳԺ. Այր մի էր ի Կեսարիա՝ անուն Կոռնելի-
2 ոս՝ հարիւրապետ, ի գնդէ որ կոչէր Իտալացի. Բա-
րեպաշտօն եւ երկիւղած յԱստուծոյ ամենայն տամբ
իւրով. առնէր ողորմութիւնս բազումս ի ժողովըր-
դեանն. եւ յաղօթս կայր առ Աստուած յամենայն
3 ժամ: Ետես ի տեսլեան յայտնապէս զիններորդ ժա-
մու աւուրն զհրեշտակ Աստուծոյ, զի մտանէր առ նա
4 եւ ասէր ցնա. Կոռնելիէ: Եւ նա հայեցեալ ընդ
նա՝ զարհուրեցաւ եւ ասէ. զի՞ է Տէր. եւ ասէ ցնա.
աղօթք քո եւ ողորմութիւնք քո ելին յիշատակս
5 առաջի Աստուծոյ: Եւ արդ՝ յղեա արս ի Յոպպէ եւ
6 կոչեա զՍիմոն զոմն որ կոչի Պետրոս. Նա մնեալ է
առ Սիմովնի ումեմն խաղախորդի, որոյ է տունն մերձ
7 ի ծով: Եւ իբրեւ գնաց հրեշտակն՝ որ խօսէր ընդ
նմա, կոչեաց երկուս ի ծառայից իւրոց եւ զինուոր
8 մի բարեպաշտօն ի սպասաւորացն իւրոց. Եւ պատ-
մեալ նոցա զամենայն՝ առաքեաց զնոսա ի Յոպպէ:
9 Եւ ի վաղիւ անդր ի ճանապարհ անկանել նոցա եւ
մօտ ի քաղաքն լինել, ել Պետրոս ի տանիսն կալ
10 յաղօթս զվեցերորդ ժամուն: Եւ քաղցեաւ եւ կա-
մէր ճաշակել. եւ ի պատրաստելն նոցա՝ եղեւ ի վե-
11 րայ նորա զարմացումն: Եւ տեսանէր զերկինս բա-
ցեալ. եւ զչորեցունց սանից կախեալ անօթ ինչ ի-
բրեւ զկտաւոյ մեծի, իջեալ նստեալ ի վերայ երկրի,
12 Յորում էին ամենայն չորքոտանիք եւ սողունք երկրի
13 եւ թռչունք երկնից: Եւ եղեւ ձայն առ նա. արի,
14 Պետրոս, զեն եւ կեր: Եւ Պետրոս ասէ. քաւ լիցի,
Տէր, զի ոչ երբեք կերայ խառնակ ինչ եւ անսուրբ:
15 Ձայն եղեւ առ նա կրկին անդամ. զոր Աստուած

որբեաց՝ դու մի պղծեր: Այս եղեւ երիցս եւ վերա- 16
ցաւ անօթն յերկինս: Եւ մինչդեռ զարմացեալ էր 17
ընդ միտս Պետրոս՝ թէ զինչ իցէ տեսիլն՝ զոր ետես,
եւ ահա արքն առաքեալք ի Կոռնելեայ՝ հարցին
զապարանիցն Սիմովնի, կացին առ դրանն. Եւ կոչե- 18
ցին եւ հարցանէին, եթէ Սիմոն՝ որ կոչին Պետրոս՝
ա՞ստ մնեալ իցէ: Եւ մինչդեռ Պետրոս զմտաւ ածէր 19
վասն տեսլեանն, ասէ Հոգին ցնա. ահաւասիկ արք
ոմանք խնդրեն զքեզ: Այլ արի էջ եւ երթ ընդ 20
նոսա առանց իրիք խղճելոյ, զի ես առաքեցի զնոսա:
Եւ իջեալ էջ Պետրոս առ նոսա, ասէ. ահաւասիկ 21
ես եմ՝ զոր խնդրէքն. զի՞նչ իրք են՝ վասն որոյ եկի-
քըդ: Եւ նոքա ասեն. Կոռնելիոս հարիւրապետ՝ այր 22
արդար եւ երկիւղած յԱստուծոյ, վկայեալ յամե-
նայն ազգէն Հրէից, հրաման առ ի հրեշտակէ սրբոյ՝
կոչել զքեզ ի տուն իւր եւ լսել բանս ի քէն: Կո- 23
չեաց զնոսա ի ներքս եւ առ իւր ագոյց. եւ ի վաղիւ
անդր յարուցեալ Պետրոս՝ գնաց ընդ նոսա. եւ
ոմանք յեղբարց անտի՝ որ ի Յոպպէ էին՝ եկին ընդ
նմա: Եւ ի վաղիւ անդր մտին ի Կեսարիա. եւ Կոռ- 24
նելիոս մնայր նոցա, կոչեցեալ զազգատոհմն իւր եւ
զկարեւոր բարեկամս:

ԳԲ. Եւ եղեւ ի մտանելն Պետրոսի՝ ընդ առաջ 25
եղեւ նմա Կոռնելիոս, անկեալ առ ոտսն՝ երկիր պա-
գանէր: Եւ Պետրոս կանգնեաց զնա եւ ասէ. յոտն 26
կաց, եւ ես ինքնին մարդ եմ: Եւ խօսելով ընդ նմա 27
եմուտ ի ներքս, եւ գտանէր անդ ժողովեալ զբա-
զումս: Եւ ասէ ցնոսա. դուք ինքնին գիտէք՝ որպէս 28
անմարթ է առն Հրէի հպել կամ մերձենալ առ
այլազգի. եւ ինձ Աստուած եցոյց մի զոք խառնակ
կամ անսուրբ ասել ի մարդկանէ: Վասն այսորիկ 29
եւ առանց ընդ բանս ինչ ածելոյ եկի կոչեցեալ. բայց
արդ հարցանեմ, յի՞նչ պէտս կոչեցէք զիս: Եւ 30
Կոռնելիոս ասէ. յառաջ քան զչորս աւուրս մինչ

ցայս ժամ կայի յաղօթս յինն ժամն ի տան իմում,
եւ ահա այր մի եկն եկաց առաջի իմ ի հանդերձս
31 սպիտակս, եւ ասէ. Կո՛ռնելիէ, լսելի եղեն աղօթք
քո. եւ ողորմութիւնք քո յիշեցան առաջի Աստու-
32 ծոյ: Եւ արդ՝ յղեա ի Յոպպէ եւ կոչեա զՍիմոն,
որ կոչեցեալն է Պետրոս. սա մնեալ է ի տուն Սիմո-
նի ուրումն խաղախորդի մերձ ի ծով. որ եկեսցէ եւ
33 խօսեսցի բանս ընդ քեզ: Եւ ես իսկեւիսկ յղեցի առ
քեզ. դու բարւոք արարեր՝ զի եկիր. արդ՝ ամենե-
քեան մեք առաջի Աստուծոյ կամք՝ լսել զամենայն,
34 որ հրամայեալ է քեզ ի Տեառնէ: Եբաց Պետրոս
զբերան իւր եւ ասէ. Ճշմարտութեամբ հասեալ եմ,
35 զի ոչ գոյ ակնառութիւն առ ի յԱստուծոյ. Այլ
յամենայն ազգս՝ որ երկնչին ի նմանէ եւ գործեն զար-
36 դարութիւն, ընդունելի է նմա: Զբանն առաքեաց
որդւոցն Իսրայելի՝ աւետարանել զխաղաղութիւն ի
ձեռն Յիսուսի Քրիստոսի. սա է ամենայնի Տէր:
37 Դուք ինքնին գիտէք զբանն, որ եղեւ ընդ ամենայն
Հրէաստան սկսեալ ի Գալիլեէ յետ մկրտութեանն՝
38 զոր քարոզեաց Յովհաննէս. ԶՅիսուս որ ի Նազա-
րեթէ՝ զոր օծ Աստուած Հոգւով սրբով եւ զօրու-
թեամբ. որ շրջեցաւ բարի առնել եւ բժշկել զամե-
նայն ըմբռնեալսն ի սատանայէ. զի Աստուած էր ընդ
39 նմա: Եւ մեք վկայ եմք ամենայնի՝ զոր արար յերկրին
Հրէաստանի եւ յԵրուսաղէմ. զոր եւ սպանին կա-
40 խեալ զփայտէ: Զնա Աստուած յարոյց յերրորդ
41 աւուր. եւ ետ նմա յայտնի լինել. Ոչ ամենայն ժո-
ղովրդեանն, այլ մեզ վկայիցս յառաջագոյն ընտրե-
լոցս յԱստուծոյ. որ եւ կերաք եւ արբաք ընդ նմա՝
42 յետ յարութեան նորա ի մեռելոց: Եւ պատուիրեաց
մեզ քարոզել ժողովրդեանն եւ վկայութիւն դնել,
թէ նա է սահմանեալն յԱստուծոյ՝ դատաւոր կեն-
43 դանեաց եւ մեռելոց: Նմա ամենայն մարգարէք վկայ-
են, թողութիւն մեղաց առնուլ անուամբ նորա՝ ա-

մենայն հաւատացելոց ի նա։ Եւ մինչ դեռ խօսէր 44
Պետրոս զբանս զայս, հանգեաւ Հոգին Սուրբ ի վերայ
ամենեցուն՝ որ լսէին զբանն։ Զարմացան՝ որք ի թլ֊ 45
փատութենէ անտի հաւատացեալք եկեալ էին ընդ
Պետրոսի. զի եւ ի հեթանոս պարգեւք Հոգւոյն Սր֊
բոյ զեղեալ էին։ Քանզի լսէին ի նոցանէ խօսել լեզուս 46
եւ մեծացուցանել զԱստուած։ Յայնժամ պատաս֊ 47
խանի ետ Պետրոս. միթէ զջո՞ւր ոք արգելուլ կարէ
առ ի չմկրտելոյ զսոսա, որք եւ զՀոգին Սուրբ ընկա֊
լան՝ որպէս եւ մեք։ Եւ հրամայեաց նոցա մկրտել 48
յանուն Յիսուսի Քրիստոսի. յայնժամ աղաչեցին
զնա լինել անդ աւուրս ինչ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԳԳ. Լուան առաքեալքն եւ եղբարք՝ որ էին ի 1
կողմանս Հրէաստանի, զի եւ ի հեթանոս ընկալան
զբանն Աստուծոյ։ Բայց յորժամ ել Պետրոս յԵ֊ 2
րուսաղէմ, խղծէին ի նմանէ՝ որ ի թլփատութենէ
անտի հաւատացեալքն. Եւ ասէին, եթէ եմուտ առ 3
արս անթլփատս եւ եկեր ընդ նոսա։ Եւ սկսաւ 4
Պետրոս պատմել նոցա կարգաւ եւ ասէ. Ես էի ի 5
քաղաքին ի Յոպպէ յաղօթս, եւ տեսի ի զարմաց֊
ման տեսիլ. իջանել անօթ ինչ իբրեւ կտաւոյ մեծի
զչորեցունց տանոյ կախեալ յերկնից, եւ եհաս մինչեւ
առ իս։ Զոր պշուցեալ հայէի. եւ տեսի զչորքոտա֊ 6
նիս երկրի եւ զգազանս եւ զսողունս եւ զթռչունս
երկնից։ Եւ լուայ բարբառ՝ որ ասէր ցիս. արի Պետ֊ 7
րոս՝ զեն եւ կեր։ Եւ ասեմ. քաւ լիցի Տէր, զի խառ֊ 8
նակ ինչ եւ անսուրբ ոչ երբեք եմուտ ի բերան իմ։
Պատասխանի ետ ինձ երկիցս անգամ բարբառն յեր֊ 9
կնից. զոր Աստուած սրբեաց՝ դու մի խառնակ հա֊
մարիր։ Այս եղեւ երիցս, եւ վերացաւ դարձեալ 10
ամենայն յերկինս։ Եւ ահա անդրէն երեք արք եկին 11
կացին առ ապարանիցն՝ ուր՝ եսն էի, առաքեալք ի

12 Կեսարիայ առ իս: Եւ ասէ ցիս Հոգին՝ երթալ ընդ
նոսա եւ մի՛ ինչ խղճել. եկին ընդ իս եւ սոքա վե-
13 ցեքին եղբարքս, եւ մտաք ի տուն առնն այնորիկ: Եւ
պատմեաց մեզ՝ որպէս ետես զհրեշտակն ի տան իւ-
րում, զի կայր եւ ասէր ցնա. առաքեա ի Յոպպէ,
14 եւ կոչեա զՍիմոն զկոչեցեալն Պետրոս, Որ խօսեսցի
բանս ընդ քեզ, որովք կեցցես դու եւ ամենայն տուն
15 քո: Եւ իբրեւ սկսայ խօսել՝ եկն Հոգին սուրբ ի վե-
16 րայ նոցա, որպէս եւ ի վերայ մեր ի սկզբանն: Յիշեցի
զբանն Տեառն զոր ասէրն. Յովհաննէս մկրտեաց ի
17 ջուր, բայց դուք մկրտիցիք ի Հոգին սուրբ: Իսկ արդ՝
եթէ զհաւասարակաց պարգեւն ետ Աստուած եւ նոցա՝
որպէս եւ մեզ՝ ի հաւատալն ի Տէր Յիսուս Քրիս-
18 տոս, ես զի՞նչ կարօղ էի արգելուլ զԱստուած: Եւ
լուեալ զայս՝ լռեցին եւ փառաւոր առնէին զԱս-
տուած եւ ասէին. ուրեմն եւ ի հեթանոսս ետ Աս-
տուած զապաշխարութիւն կենաց:
19 ԳՓ. Եւ ցրուեալքն ի նեղութենէն որ եղեւ ի
վերայ Ստեփանոսի՝ հասին մինչեւ ի Փիւնիկէ եւ ի
Կիպրոս եւ յԱնտիոքիա. ոչ ումեք խօսէին զբանն,
20 բայց միայն Հրէից: Եւ էին ոմանք ի նոցանէ արք
Կիպրացիք եւ Կիւրենացիք՝ որք մտեալ յԱնտիոք՝
խօսէին ընդ Յոյնս աւետարանեալ զՏէր Յիսուս:
21 Եւ էր ձեռն Տեառն ընդ նոսա. եւ բազմութիւն
22 հաւատացելոց դարձաւ ի Տէր: Լու եղեւ բանն
յականջս եկեղեցւոյն, որ էր յԵրուսաղէմ, վասն նո-
ցա. եւ առաքեցին զԲառնաբաս մինչեւ յԱնտիոք.
23 Որ իբրեւ եկն եւ ետես զշնորհսն Աստուծոյ՝ ուրախ
եղեւ, եւ մխիթարէր զամենեսեան՝ յօժարութեամբ
24 սրտիւ կալ նոցա ի Տէր: Զի էր այր զուարթամիտ
եւ լի Հոգւով սրբով եւ հաւատովք. եւ յաւելաւ
25 ժողովուրդ բազում Տեառն: Եւ ել ի Տարսոնս
խնդրել զՍաւղոս, եւ գտեալ զնա՝ ած յԱնտի-
26 ոք: Եւ եղեւ նոցա զամն ողջոյն ժողովել յեկե-

ղեցւոյն եւ ուսուցանել ժողովուրդ բազում, եւ ա-
նուանել նախ յԱնտիոք զաշակերտսն Քրիստոնեայս:
Ընդ աւուրսն ընդ այնոսիկ իջին յԵրուսաղեմէ մար- 27
գարէք՝ յԱնտիոք: Յարուցեալ մի ոմն ի նոցանէ ա- 28
նուն Ագաբոս՝ նշանակեաց Հոգւովն սով մեծ լինել
ընդ ամենայն աշխարհ՝ որ եղեւ առ Կղաւդեաւ: Իսկ 29
յաշակերտացն անտի, որպէս զիարդ կարող ոք էր՝ ի-
րաքանչիւր ոք ի նոցանէ որոշեցին առաքել ի պէտս
եղբարցն որ բնակեալ էին ի Հրէաստանի. Զոր եւ 30
արարին իսկ՝ առաքեալ առ երիցունսն ի ձեռն Բառ-
նաբայ եւ Սաւղոսի:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Գե. Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերով- 1
դէս արքայ ձեռն՝ չարչարել զոմանս յեկեղեցւոյն:
Եւ սպան զՅակովբոս զեղբայրն Յովհաննու սրով: 2
Եւ տես եթէ հաճոյ է Հրէիցն, յաւել եւս ունել 3
զՊետրոս. եւ էին աւուրք բաղարջակերաց: Զոր ի- 4
բրեւ կալաւ՝ եդ ի բանտի, եւ մատնեաց չորից չորրոր-
դաց զինուորաց պահել զնա. եւ կամէր յետ զատկին
ածել զնա ժողովրդեանն: Եւ Պետրոս ի պահեստի 5
էր ի բանտին. եւ աղօթք առէջ լինէին յեկեղեցւոյն
վասն նորա առ Աստուած: Իբրեւ կամեցաւ ածել 6
զնա Հերովդէս, ի գիշերին յայնմիկ էր Պետրոս ի
քուն ի մէջ երկուց զինուորաց՝ կապեալ կրկին շղ-
թայիւք. եւ պահապանքն առաջի դրանն պահէին
զբանտն: Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եկաց ի վե- 7
րայ, եւ լոյս ծագեաց ի տանն, եւ խթեաց զկողն
Պետրոսի, յարոյց զնա եւ ասէ. արի վաղվաղակի. եւ
անկան շղթայքն ի ձեռաց նորա: Եւ ասէ ցնա 8
հրեշտակն. ած զգօտի քո, եւ արկ զհողաթափս
յոտս քո. եւ արար այնպէս. եւ ասէ ցնա, արկ
զձորձս քո եւ եկ զհետ իմ: Եւ ելեալ երթայր զհետ, 9
եւ ոչ գիտէր եթէ ճշմարիտ իցէ որ ինչ եղեւն ի

10 հրեշտակէն. զի համարէր երազ տեսանել: Եւ իբրեւ
անցին նոքա ըստ մի պահ եւ ըստ երկուս, եկին մին-
չեւ ի դուռն երկաթի՝ որ հանէր ի քաղաքն, որ ին-
քնին բացաւ նոցա. եւ ելեալ անցին ընդ փողոց
մի. եւ վաղվաղակի ի բաց եկաց ի նմանէ հրեշտակն:
11 Եւ Պետրոս իբրեւ ի միտս եկեալ, ասէ. արդ գիտեմ
ճշմարիտ թէ առաքեաց Տէր զհրեշտակ իւր, եւ փըր-
կեաց զիս ի ձեռաց Հերովդի, եւ յամենայն ակնկա-
12 լութենէ ժողովրդեանն Հրէից: Եւ եկեալ ի միտս՝
եկն ի տուն Մարեմու մօր Յովհաննու, որ կոչեցաւն
Մարկոս, ուր էին բազումք ժողովեալ եւ աղօթս
13 առնէին: Եւ բախեալ զդուրս տանն, մատեաւ աղա-
խին մի՝ ունկն դնէր, որում անուն էր Հռովդէ:
14 Եւ ծանուցեալ զձայնն Պետրոսի՝ ի խնդալոյն ոչ
եբաց զդուռն. ի ներքս ընթացեալ պատմեաց, եթէ
15 Պետրոս առ դրանն կայ: Նոքա ասեն ցնա՝ մոլիս.
եւ նա եւս պնդէր՝ թէ այդպէս է. եւ նոքա ասեն՝
16 հրեշտակ նորա իցէ: Եւ Պետրոս ստէպ բախէր. ի-
17 բրեւ բացին, տեսին զնա եւ զարմացան: Եւ նա ձե-
ռամբ ցուցանէր նոցա լռել. եւ պատմեաց՝ որպէս եւ
Տէր եհան զնա ի բանտէն. եւ ասէ. պատմեցէք Յա-
կովբայ եւ եղբարց զայս. եւ ել գնաց յայլ տեղի:
18 Եւ իբրեւ եղեւ այգ՝ էր խռովութիւն մեծ ի մէջ
19 զինուորացն, զի՞ արդեօք Պետրոսն եղեւ: Իսկ Հե-
րովդէս իբրեւ խնդրեաց զնա եւ ոչ եգիտ, հարցեալ
զպահապանսն՝ հրամայեաց սպանանել. եւ իջեալ
20 ի Հրէաստանէ ի Կեսարիա, եւ անդ լինէր: Եւ էր
Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս եւ ընդ Սիդով-
նացիս. եւ նոքա առ հասարակ եկին առ նա. եւ ի
բանի արարեալ զԲղաստոս սենեկապետ արքայի,
խնդրէին զխաղաղութիւն վասն կերակրելոյ երկրին
21 նոցա յարքունուստ: Յաւուր միում յերեւելում Հե-
րովդէս զգեցեալ էր զհանդերձ թագաւորութեան եւ
նստէր յատենի, եւ խօսէր ընդ նոսա հրապարակաւ:

Եւ ամբոխն աղաղակէր՝ թէ Աստուծոյ բարբառ է, 22
եւ ոչ մարդոյ: Եւ անդէն եհար զնա հրեշտակ 23
Տեառն, փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ. եւ
եղեալ որդնալից՝ սատակեցաւ: Եւ բանն Աստուծոյ 24
աճէր եւ բազմանայր:

ԳՋ. Բառնաբաս եւ Սաւղոս դարձան յԵրուսա- 25
ղեմէ՝ իբրեւ կատարեցին զպաշտօնն. առեալ էր ընդ
իւրեանս եւ զՅովհաննէս՝ որ կոչեցեալն էր Մարկոս:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Էին ոմանք յԱնտիոք ըստ եկեղեցւոյն մարգարէք 1
եւ վարդապետք. Բառնաբաս, եւ Շմաւոն կոչե-
ցեալն Նիգէր, եւ Ղուկիոս Կիւրենացի, եւ Մա-
նայեն դայեկորդի Հերովդի չորրորդապետի, եւ Սաւ-
ղոս: Մինչ դեռ ի պաշտաման Տեառն կային եւ պա- 2
հէին, ասէ Հոգին սուրբ. որոշեցէք ինձ զԲառնաբաս
եւ զՍաւղոս ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա:
Յայնժամ պահեալ եւ աղօթս արարեալ, եդին ձեռն 3
ի վերայ նոցա եւ արձակեցին: Եւ նոքա առաքեալք 4
ի Հոգւոյն սրբոյ՝ իջին ի Սելեւկիա, եւ անտի նաւե-
ցին ի Կիպրոս: Եւ հասեալ ի Սաղամինա, պատմէին 5
զբանն Աստուծոյ ի ժողովուրդս Հրէից. ունէին եւ
զՅովհաննէս պաշտօնեայ: Շրջեալ ընդ ամենայն 6
կղզին մինչեւ ի Պափոս, գտին անդ այր զոմն մոգ
սուտ մարգարէ՝ Հրեայ, որում անուն էր Բարյեսու,
Որ էր ընդ փոխանակի բդեշխին Սերգեայ Պաւղոսի՝ 7
առն իմաստոյ. նորա աղաչեալ զԲառնաբաս եւ
զՍաւղոս՝ խնդրէր լսել զբանն Աստուծոյ: Ընդդէմ 8
եկաց նոցա Եղիմաս մոգ. քանզի այսպէս թարգմանի
անուն նորա. խնդրէր շրջել զփոխանակ բդեշխին ի
հաւատոց: Իսկ Սաւղոս, որ եւ Պաւղոսն՝ լցեալ Հո- 9
գւով սրբով հայեցաւ ի նա, Եւ ասէ. ո՜վ լի ամե- 10
նայն նենգութեամբ եւ խորամանկութեամբ, որդի
սատանայի, թշնամի ամենայն արդարութեան, ո՞չ

11 ռես ի թիւրելոյ զճանապարհս Տեառն զուղիղս: Եւ
արդ՝ ահա ձեռն Տեառն ի վերայ քո, եւ եղիցես կոյր՝
չտեսանել զարեւ մինչեւ ի ժամանակ մի. եւ անդէն
անկաւ ի վերայ նորա մէգ եւ խաւար, եւ շրջէր
12 խնդրէր առաջնորդս: Յայնժամ տեսեալ փոխանա-
կին բդեշխին զլինելն որ եղեն՝ հաւատաց, զարմացեալ
ընդ վարդապետութիւնն Տեառն:

13 ԳԻ. Եւ ամբարձեալ ի Պափէ Պաւղոսեանց՝
եկին ի Պերգէ Պամփիլեայ. Յովհաննէս մեկնեալ ի
14 նոցանէ՝ դարձաւ յԵրուսաղէմ: Եւ նոքա գնացեալ
ի Պերգեայ՝ եկին յԱնտիոք Պիսիդեայ. եւ մտեալ ի
15 ժողովուրդն յաւուր շաբաթուց՝ նստան: Եւ յետ
ընթեռնլոյ զօրէնսն եւ զմարգարէս, առաքեցին առ
նոսա ժողովրդապետքն եւ ասեն. արք եղբարք, եթէ
իցեն ի ձեզ բանք մխիթարութեան առ ժողովուրդդ՝
16 խօսեցարուք: Յոտն եկաց Պաւղոս՝ շարժեաց զձեռն
եւ ասէ. արք Իսրայելացիք եւ որք երկնչիք յԱստու-
17 ծոյ, լուարուք: Աստուած ժողովրդեանս այսորիկ Իս-
րայելի ընտրեաց զհարսն մեր, եւ զժողովուրդն բար-
ձրացոյց ի պանդխտութեան յերկրին Եգիպտացւոց,
18 եւ ի բազուկ բարձր եհան զնոսա անտի: Եւ իբրեւ
քառասնամեայ ժամանակ կերակրեաց զնոսա յանա-
19 պատի: Եւ քակեալ ազգս եօթն յերկրին Քանա-
20 նու՝ ժառանգեցոյց նոցա զերկիր նոցա իբրեւ ամս
չորեքհարիւր եւ յիսուն. եւ յետ այսորիկ ետ նոցա
21 դատաւորս մինչեւ ի Սամուէլ մարգարէ: Եւ անտի
յառաջ խնդրեցին թագաւոր. եւ ետ նոցա Աստու-
ած զՍաւուղ որդի Կիսեայ՝ այր յազգէ Բենիամինի,
22 ամս քառասուն: Եւ իբրեւ փոխեաց զնա, յարոյց
նոցա զԴաւիթ թագաւոր, որում եւ ասացաւ
վկայութեամբ. Գտի զԴաւիթ որդի Յեսսեայ այր
ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն զկամս իմ:
23 Ի սորա զաւակէ Աստուած ըստ աւետեացն յարոյց
24 Իսրայելի զփրկիչն Յիսուս. Ըստ յառաջագոյն քա-

բողութեան Յովհաննու առաջի երեսաց մտին նորա,
մկրտութիւն ապաշխարութեան՝ ամենայն ժողովր-
դեանն Իսրայելի: Եւ իբրեւ լնոյր Յովհաննէս զըն- 25
թացսն, ասէր. զո՞ ոք կարծէք զինէն՝ թէ իցեմ. չեմ
ես այն. այլ ահա գայ զկնի իմ, որում չեմ արժանի
զկօշիկս ոտիցն լուծանել: Արք եղբարք՝ որդիք Աբրա- 26
համեան տոհմին եւ որ ի ձեզ երկիւղածք իցեն յԱս-
տուծոյ, ձեզ բանս այս փրկութեան առաքեցաւ:
Բայց որ բնակեալ են յԵրուսաղէմ եւ իշխանք նո- 27
ցա՝ անծանօթ եղեն ի նմանէ. եւ ըստ բարբառոյ
մարգարէիցն, որ զամենայն շաբաթս ընթեռնուին,
դատեալ կատարեցին. Եւ ոչ մի ինչ պատճառս մա- 28
հու գտեալ՝ խնդրեցին ի Պիղատոսէ սպանանել զնա:
Եւ իբրեւ կատարեցին զամենայն՝ որ վասն նորա 29
գրեալ էր, իջուցեալ ի փայտէն՝ եդին ի գերեզմանի:
Այլ Աստուած յարոյց զնա ի մեռելոց. որ երեւե- 30
ցաւ աւուրբք բազմօք այնոցիկ, Որ ելեալ էին ընդ 31
նմա ի Գալիլեէ յԵրուսաղէմ, որք եւ արդ իսկ վկայք
են նորա առ ժողովուրդն: Եւ մեք ձեզ աւետարա- 32
նեմք զխոստումն՝ որ առ հարսն եղեալ էր: Զի 33
զնոյն Աստուած կատարեաց առ մեզ որդիս նոցա՝ յա-
րուցեալ զՅիսուս, որպէս եւ ի սաղմոսին գրեալ է
յերկրորդում. Որդի իմ ես դու, եւ ես այսօր ծնայ
զքեզ: Եւ զի յարոյց զնա ի մեռելոց, եւ ոչ եւս 34
դառնալոց է յապականութիւն, այսպէս ասէ, եթէ
Տաց ձեզ զսրբութիւնսն Դաւթի զհաւատարիմս:
Վասնզի եւ ի միւսումն ասէ. Ոչ տացես սրբոյ քում 35
տեսանել զապականութիւն: Այլ Դաւիթ յազգի 36
անդ իւրում պաշտեաց եւ ի կամս Աստուծոյ նըն-
ջեաց, եւ յաւելաւ առ հարս իւր եւ ետես զապա-
կանութիւն: Բայց զոր Աստուած յարոյց՝ ոչ ետես 37
զապականութիւն: Յայտնի լիցի ձեզ, արք եղբարք, 38
զի սովաւ ձեզ թողութիւն մեղաց աւետարանի. եւ
յամենայնէ՝ յորմէ ոչ կարացէք օրինօքն Մովսիսի

39 արդարանալ, Սովաւ ամենայն որ հաւատայ՝ արդա-
40 րանայ: Զգոյշ կացէք՝ գուցէ եկեսցէ ի վերայ ձեր
41 ասացեալն ի մարգարէսն. Տեսէք արհամարհոտք եւ
զարմացարուք եւ եղծարուք. զի գործ մի գործեմ ես
յաւուրս ձեր, գործ՝ որում ոչ հաւատայցէք՝ եթէ
42 ոք պատմեսցէ ձեզ: Եւ իբրեւ ելին անտի, աղաչէին
43 ի միւսում շաբաթու խօսել նոցա զնոյն բանս: Ի-
բրեւ արձակեցաւ ժողովուրդն, զհետ երթային բա-
զումք ի Հրէից անտի եւ ի պաշտօնէիցն եկամտից՝
զՊաւղոսի եւ զԲառնաբայ, որք խօսէին ընդ նոսա
եւ հաւանեցուցանէին զնոսա կալ մնալ ի շնորհսն
Աստուծոյ:

44 ԳԿ. Եւ ի գալ միւսոյ շաբաթուն, գրեթէ ա-
մենայն քաղաքն ժողովեցաւ լսել զբանն Աստուծոյ:
45 Իբրեւ տեսին Հրեայքն զամբոխն՝ լցան նախանձու,
եւ ընդդէմ դարձեալ ասացելոցն ի Պաւղոսէ՝ հայհոյէ-
46 ին: Համարձակեալ Պաւղոսի եւ Բառնաբայ՝ ասէին.
առ ձեզ նախ պարտ էր խօսել զբանն Աստուծոյ, եւ
քանզի դուք մերժեցէք զնա եւ ոչ արժանիս համա-
րիք զձեզ կենացն յաւիտենականաց, ահաւասիկ
47 դառնամք ի հեթանոսս: Զի այսպէս պատուիրեաց
մեզ Տէր. Եդի զքեզ ի լոյս հեթանոսաց՝ լինել քեզ
48 ի փրկութիւն մինչեւ ի ծագս երկրի: Զայս լուեալ
հեթանոսացն՝ ուրախ լինէին եւ փառաւոր առնէին
զբանն Տեառն. եւ հաւատացին՝ որք էին կարգեալ
49 ի կեանսն յաւիտենականս: Եւ շրջէր բանն Աստու-
50 ծոյ ընդ ամենայն գաւառն: Բայց Հրեայքն գրգռե-
ցին զպաշտօնեայ կանայս զգաստս եւ զգլխաւորս քա-
ղաքին, եւ յարուցեալ հալածանս ի վերայ Պաւղոսի
եւ Բառնաբայ՝ հանին զնոսա ի սահմանացն իւրեանց:
51 Եւ նոցա թօթափեալ զփոշի ոտից ի վերայ նոցա,
52 եկին յԻկոնիոն: Եւ աշակերտքն լնուին խնդու-
թեամբ եւ Հոգւով սրբով:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Եւ եղեւ յԻկոնիոն ի միասին մտանել նոցա ի 1
ժողովուրդ Հրէիցն, եւ խօսել նոյնպէս. մինչեւ հա-
ւատալ Հրէից եւ Յունաց բազմաց յոյժ: Բայց 2
անհաւան Հրեայքն յարուցին եւ չարացուցին զան-
ձինս հեթանոսացն ի վերայ եղբարց: Բազում ժա- 3
մանակս շրջէին համարձակեալք Տեառն վկայու-
թեամբ, բանիւ շնորհացն իւրոց. եւ տալ նշանս եւ
արուեստս լինելոյ ի ձեռս նոցա: Եւ եղեն հեր- 4
ձուածք ի բազմութեան քաղաքին. ոմանք էին ի
Հրէայսն, եւ ոմանք յառաքեալսն: Իբրեւ եղեւ դի- 5
մել հեթանոսացն եւ Հրէից իշխանօքն իւրեանց՝ ի
թշնամանել եւ ի քարկոծել զնոսա, Ազդ եղեալ 6
նոցա՝ փախեան ի քաղաքս Լիկոնացւոց, ի Լիւստրա
եւ ի Դերբէ եւ շուրջ զգաւառաւն, եւ անդ աւե-
տարանէին:

ԳԲ. Եւ այր ոմն Լիւստրացի տկար յոտից նըս- 7
տէր՝ կաղ յորովայնէ մօր իւրոյ, որոյ երբեք չէր գնա-
ցեալ: Սա լուաւ զխօսսն Պաւղոսի, որոյ հայեցեալ 8
ի նա եւ տեսեալ՝ թէ ունի հաւատս փրկութեան,
Ասէ մեծաձայն. քեզ ասեմ յանուն Տեառն մերոյ 9
Յիսուսի Քրիստոսի՝ յոտն կաց ի վերայ ոտից քոց
ուղիղ. եւ վազվազէր եւ գնայր: Եւ ժողովրդոցն 10
տեսեալ զոր արարն Պաւղոս, բարձին զձայնս իւրեանց
Լիկոնարէն եւ ասեն. աստուածք նմանեալ մարդ-
կան իջին առ մեզ: Եւ կոչէին զԲառնաբաս Դիոս, 11
եւ զՊաւղոս Հերմէս, քանզի նա էր առաջնորդ բանին: 12
Իսկ քուրմն Դիայ՝ որ կայր առաջի քաղաքին, ցուլս
եւ պսակս հասուցեալ ի դուռն՝ հանդերձ բազմու-
թեամբքն՝ կամէր զոհել: Եւ լուեալ առաքելոցն 13
Բառնաբայ եւ Պաւղոսի, պատառեալ զհանդերձս իւ-
րեանց՝ արտաքս վազեցին յամբոխէն, աղաղակէին
Եւ ասէին. արք, զի՞նչ գործէք զայդ. մեք ձեզ 14

նմանողք կարեօք մարդիկ եմք, աւետարանել ձեզ
յայդպիսի ունայնութեանց դառնալ յԱստուած կեն-
դանի, որ արար զերկինս եւ զերկիր եւ զծով եւ զա-
15 մենայն որ ի նոսա. Որ յանցեալ ազգսն թոյլ ետ
ամենայն հեթանոսաց գնալ ի ճանապարհս իւրեանց։
16 Եւ սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն ե-
թող, բարերարութեամբն տալ յերկնից ձեզ ան-
ձրեւս եւ ժամանակս պտղաբերս, լնուլ կերակրովք
17 եւ ուրախութեամբ զսիրտս ձեր։ Եւ զայս ասացեալ՝
հազիւ լռեցուցանէին զժողովուրդսն ի չզոհելոյ նոցա,
այլ գնալ յիւրաքանչիւր տեղիս։
18 ԺԴ. Եւ ի շրջելն նոցա եւ յուսուցանել՝ եկին
հասին յԱնտիոքէ եւ յԻկոնիէ Հրեայք. եւ ի վիճել
նոցա համարձակութեամբ՝ պատրեցին զժողովուրդսն
ի բաց կալ ի նոցանէ, եւ ասէին՝ թէ ոչ ինչ ճշմար-
տութիւն ասեն, այլ զամենայն ստեն. եւ քարկո-
ծեալ զՊաւղոս՝ քարշեցին արտաքս քան զքաղաքն,
19 եւ համարէին զնա մեռեալ։ Եւ ի պատել զնովաւ
աշակերտացն՝ յարեաւ եմուտ ի քաղաքն, եւ ի վա-
20 ղիւ անդր ել Բառնաբաւ հանդերձ ի Դերբէ։ Աւե-
տարանեալ ի քաղաքին յայնմիկ եւ աշակերտեալ
զբազումս, դարձան ի Լիւստրայ եւ յԻկոնիոն եւ
21 յԱնտիոքիա. Հաստատել զանձինս աշակերտելոցն
եւ մխիթարել կալ հաստատուն ի հաւատսն. եւ
թէ բազում նեղութեամբք պարտ է մեզ մտանել
22 յարքայութիւն Աստուծոյ։ Ձեռնադրեցին նոցա ըստ
եկեղեցւոյն երիցունս. աղօթս արարեալ հանդերձ
պահովք, յանձն արարին զնոսա Տեառն՝ յոր հաւա-
23 տացեալն էին։ Եւ շրջեալ ընդ Պիսիդեայ՝ եկին ի
24 Պամփիւլեայ։ Եւ խօսեցեալ ի Պերգէ զբանն Տեառն,
25 իջին յԱտալիա։ Եւ անտի նաւարկեալ՝ գնացին
յԱնտիոք, ուստի էին յանձն արարեալ շնորհացն
26 Աստուծոյ՝ ի գործն զոր կատարեցին։ Եկեալ եւ
ժողովեալ զեկեղեցին՝ պատմեցին որչափ արար Ա-

տուած ընդ նոսա, եւ զի եբաց հեթանոսաց դուռն
հաւատոց: Շրջէին ժամանակս ոչ սակաւս ընդ ա- 27
շակերտսն:

ԳԼՈՒԽ ԺԵ.

ԻԹ. Եւ ոմանք իջեալ ի Հրէաստանէ՝ ուսու- 1
ցանէին զեղբարս, եթէ ոչ թլփատիք ըստ օրինացն
Մովսիսի՝ ոչ կարէք ապրել: Եւ ի լինել ոչ սակաւ 2
հակառակութեան եւ խնդրոյ՝ Պաւղոսի եւ Բառնա-
բայ ընդ նոսա, եդին ելանել Պաւղոսի եւ Բառնա-
բայ եւ ոմանց ի նոցանէ՝ առ առաքեալսն եւ երիցունս
յԵրուսաղէմ վասն խնդրոյն այնորիկ: Նոքա յու- 3
ղարկեալք յեկեղեցւոյն, շրջեցան ընդ Փիւնիկէ եւ
ընդ Սամարիայ, պատմէին զդարձն հեթանոսաց, եւ
առնէին ուրախութիւն մեծ ամենայն եղբարց: Եւ 4
հասեալ յԵրուսաղէմ՝ ընկալեալք յեկեղեցւոյն եւ
յառաքելոցն եւ յերիցանց՝ պատմեցին որչափ ինչ
արար ընդ նոսա Աստուած: Յարեան ոմանք ի հեր- 5
ձուածոյն փարիսեցւոց հաւատացեալք, եւ ասեն
թէ պարտ է թլփատել զնոսա եւ պատուիրել պա-
հել զօրէնսն Մովսիսի: Եւ ժողովեցան առաքեալքն 6
եւ երիցունք տեսանել վասն բանիս այսորիկ: Եւ յետ 7
բազում խնդիր լինելոյ՝ յոտն եկաց Պետրոս եւ ասէ
ցնոսա. Արք եղբարք, դուք ինքնին գիտէք զի յա-
ւուրցն առաջնոց ի միջի ձերում ընտրեաց Աստու-
ած բերանով իմով լսել հեթանոսաց բանին աւե-
տարանի եւ հաւատալ. Եւ սրտագէտն Աստուած 8
վկայեաց նոցա, տալով նոցա զՀոգին սուրբ՝ որպէս
եւ մեզ. Եւ ոչ ինչ ընտրութիւն արար ի մէջ նոցա 9
եւ մեր, հաւատովք սրբեալ զսիրտս նոցա: Արդ՝ ընդ- 10
էր փորձէք զԱստուած, դնել լուծ ի վերայ պարա-
նոցի աշակերտացն, զոր ոչ հարքն մեր եւ ոչ մեք
կարացաք բառնալ: Այլ շնորհօքն Տեառն Յիսուսի 11
Քրիստոսի հաւատամք ապրել, զոր օրինակ եւ նո-

12 քա։ Լռեաց ամենայն ժողովուրդն, եւ լսէին Բառ-
նաբայ եւ Պաւղոսի պատմելոյն, որչափ արար
Աստուած նշանս եւ արուեստս ի հեթանոսս ի ձեռն
նոցա։

13 Պե. Եւ յետ լռելոյն նոցա՝ պատասխանի ետ
Յակոբոս եւ ասէ. արք եղբարք, լուարուք ինձ.
14 Շմաւոն պատմեաց՝ որպէս յառաջագոյն այց արար
Աստուած առնուլ ժողովուրդ ի հեթանոսաց՝ անու-
15 ան իւրոյ։ Եւ այնմ միաբանին բանք մարգարէիցն,
16 որպէս եւ գրեալ է. Յետ այսորիկ դարձայց եւ շի-
նեցից զյարկն Դաւթի զանկեալն, եւ զկործանեալն
17 նորա վերստին շինեցից եւ կանգնեցից զնա. Որպէս
զի խնդրեսցեն մնացորդք մարդկան զՏէր. եւ ամենայն
հեթանոսք՝ յորոց վերայ կոչեցեալ է անուն իմ, ասէ
18 Տէր, որ առնէ զայս ամենայն Յայտնի է ի յաւի-
19 տենից (Տեառն գործ իւր)։ Վասն որոյ եւ ես ի-
րաւունս համարիմ, մի նեղել զայնոսիկ՝ որք ի հե-
20 թանոսաց դառնան առ Աստուած։ Այլ տալ
թուղթ առ նոսա, խորշել ի կերակրոց կռոց եւ ի
21 պոռնկութենէ եւ ի մեռելոտւոյ եւ յարենէ։ Զի
Մովսէս յազգացն առաջնոց ըստ քաղաքաց զքարո-
զիչսն իւր ունի՝ ի ժողովսն ըստ ամենայն շաբա-
22 թու ընթերցեալ։ Յայնժամ հաճոյ թուեցաւ ա-
ռաքելոցն եւ երիցանցն եւ ամենայն եկեղեցւոյն, արս
ընտրեալս ի նոցանէ առաքել յԱնտիոք ընդ Պաւղո-
սի եւ ընդ Բառնաբայ, զՅուդա՝ զկոչեցեալն Բար-
23 սաբայ, եւ զՇիղա՝ արս գլխաւորս, Գրեալ առ եղ-
բարս ի ձեռն նոցա զայս ինչ. Առաքեալք եւ երի-
ցունք եւ եղբարք, յԱնտիոք եւ ի Սիւրիա եւ ի Կի-
24 լիկիա եղբարցդ՝ որ ի հեթանոսաց էք, ողջոյն։ Քան-
զի լուաք՝ թէ ոմանք իբրեւ ի մէնջ խռովեցուցին
զձեզ բանիւք, խախտել զանձինս ձեր. ասեն՝ թլփա-
տել եւ պահել զօրէնսն՝ որոց ոչ հրամայեցաք։
25 Հաճոյ թուեցաւ մեզ միաբան ժողովելոցս, արս

ընտրեալս յղել առ ձեզ ընդ սիրելիս մեր՝ ընդ Բառ-
նաբայ եւ ընդ Պաւղոսի. Արք որք մատնեցին զան- 26
ձինս իւրեանց վասն անուան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի: Արդ՝ առաքեցաք զՅուդա եւ զՇիղա, 27
եւ նոցա ի բանից նոյն պատմել: Զի հաճոյ թուե- 28
ցաւ Հոգւոյն սրբոյ եւ մեզ, մի ինչ աւելի բեռն դնել
ձեզ, բայց միայն ի կարեւորացս յայսցանէ: Ի բաց 29
կալ ի զոհելոյ կռոց եւ յարենէ եւ ի հեղձուցելոյ եւ
ի պոռնկութենէ. յորոց պահեալ զանձինս բարւոք
գործէք. ողջ լերուք: Եւ նոքա արձակեալք՝ իջին 30
յԱնտիոք, եւ ժողովեալ զժողովուրդն՝ ետուն զԹուղ-
թըն: Եւ ընթերցեալ՝ ուրախ եղեն ի վերայ մխի- 31
թարութեանն: Յուդա եւ Շիղա, զի եւ նոքա մար- 32
գարէք էին՝ բանիւք բազմօք մխիթարեցին զեղբարս
եւ հաստատեցին: Եւ եղեալ անդ ժամանակս՝ ար- 33
ձակեցան խաղաղութեամբ յեղբարց առ առաքեալ-
սըն: Եւ հաճոյ թուեցաւ Շիղայի մնալ անդէն: 34
Բայց Պաւղոս եւ Բառնաբաս շրջէին յԱնտիոք, ու- 35
սուցանել եւ աւետարանել եւ այլովք բազմօք
զբանն Տեառն:

ԴԶ. Իսկ յետ աւուրց ինչ ասէ Պաւղոս ցԲառ- 36
նաբաս. դարձցուք եւ շրջեսցուք զեղբարսք՝ ըստ ա-
մենայն քաղաքաց՝ յորս քարոզեցաք զբանն Տեառն,
թէ որպէս ունիցին: Բառնաբաս կամէր առնուլ եւ 37
զՅովհաննէս զկոչեցեալն Մարկոս. Բայց Պաւղոս ա- 38
ղաչէր՝ թէ զմեկնեալն ի նոցանէ ի Պամփիւլիա եւ
զչեկեալն ընդ նոսա ի գործն, մի առնուլ ընդ ին-
քեանս. Եւ եղեւ գժտութիւն՝ մինչեւ մեկնել նոցա 39
ի միմեանց, Բառնաբայ առնուլ զՄարկոս՝ նաւել ի
Կիպրոս: Եւ Պաւղոսի ընտրեալ զՇիղա՝ ել, յանձն 40
արարեալ շնորհացն Աստուծոյ՝ յեղբարց անտի: Եւ 41
շրջէր ի կողմանս Ասորւոց եւ Կիլիկեցւոց, եւ հաստա-
տէր զեկեղեցիսն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Էջն եհաս ի Դերբէ եւ ի Լիւստրա. եւ ահա
աշակերտ ոմն էր անդ՝ անուն Տիմոթէոս, որդի կնոջ
2 հրէի հաւատացելոյ եւ հօր հեթանոսի, Որ վկայ-
եալ էր ի Լիւստրացւոց եւ յԻկոնացւոց եղբարց։
3 Զսա կամեցաւ Պաւղոս ընդ իւր տանել. եւ առեալ
թլփատեաց զնա վասն Հրէիցն՝ որ էին ի տեղիսն յայ-
նոսիկ. քանզի գիտէին ամենեքին զհայր նորա՝ թէ
4 հեթանոս էր։ Իբրեւ անցանէին ընդ քաղաքսն՝ ա-
ւանդէին նոցա պահել զհրամանսն պատուիրեալս
5 յառաքելոցն եւ յերիցանցն՝ որք յԵրուսաղէմ։ Եւ
եկեղեցիքն հաստատէին ի հաւատս եւ յաւելուին ի
թիւն հանապազօր։

6 Գի. Եւ շրջեցան ընդ Փռիւգիա եւ ընդ կող-
մանս Գաղատացւոց, արգելեալք ի Հոգւոյն սրբոյ
7 խօսել զբանն յԱսիա։ Բայց եկեալ առ Միւսեաւ՝
թեւակոխէին երթալ ի Բիւթանիա, եւ ոչ համար-
8 ձակեաց նոցա Հոգին Յիսուսի։ Եւ անցեալ ըստ
9 Միւսիա՝ իջին ի Տրովադա։ Եւ տեսիլ երեւեցաւ
ի գիշերին Պաւղոսի. այր ոմն Մակեդոնացի կայր,
աղաչէր զնա եւ ասէր. անցեալ ի Մակեդոնիա՝ օգ-
10 նեցես մեզ։ Եւ իբրեւ զտեսիլն ետես, վաղվաղակի
խնդրեցաք ելանել ի Մակեդոնիա, տեղեկացեալք՝
11 թէ հրաւիրեաց զմեզ Տէր աւետարանել նոցա։ Եւ
ելեալ ի Տրովադայ՝ դէպ ուղիղ գնացաք ի Սամո-
12 թրակէ, եւ ի վաղիւ անդր ի՛Նոր քաղաքն, Եւ ան-
տի ի Փիլիպպուս, որ է առաջին վիճակ Մակեդո-
նացւոց՝ քաղաք Կողոնիա. եւ անդ ի քաղաքին դա-
13 դարեալ մեր աւուրս ինչ, Յաւուրն շաբաթու ելաք
արտաքոյ քաղաքին առ գետափնն՝ ուր համարէին ա-
ղօթս մատուցանել. եւ նստեալ խօսէաք ընդ ժողո-
14 վեալ կանայսն։ Եւ կին ոմն անուն Լիդիա ծիրա-
նավաճառ՝ ի Թիւատիր քաղաքէ՝ երկիւղած յԱս-

տուծոյ՝ լուաւ, զորոյ Տէր իսկ եբաց զսիրտն անսալ
խօսիցն Պաւղոսի: Եւ իբրեւ մկրտեցաւ ինքն եւ 15
տուն իւր, աղաչէր եւ ասէր. եթէ համարիցիք զիս
հաւատացեալ Տեառն, մտեալ ի տուն իմ ագե-
րուք. եւ բռնադատեաց տարաւ զմեզ: Եւ եղեւ 16
մինչ երթայաք մեք յաղօթս, պատահեաց մեզ ա-
ղախին ոմն՝ զոր ունէր այս հարցուկ, որ շահս բա-
զումս տայր տերանց իւրոց մոլելովն: Նա զհետ ե- 17
ղեալ Պաւղոսի եւ մեր՝ աղաղակէր եւ ասէր. արքս
այս՝ ծառայք Աստուծոյ բարձրելոյ են, որ պատմեն
ձեզ զճանապարհս փրկութեան: Եւ զայս առնէր ի 18
բազում աւուրս: Զայրացեալ Պաւղոս՝ դարձաւ եւ
ասէ ցայսն. պատուիրեմ քեզ յանուն Յիսուսի
Քրիստոսի, ել ի դմանէ. եւ ել ի նմին ժամու: 19
Իբրեւ տեսին տեարք նորա՝ եթէ հատաւ յոյս շահի
նոցա, առեալ զՊաւղոս եւ զՇիղա՝ ձգեցին ի հրա-
պարակ առ իշխանսն: Եւ ածեալ զնոսա առ զօրա- 20
գլուխսն՝ ասեն. արքս այս խռովեցուցանեն զքաղաքս
մեր. ինքեանք հրեայք են, Եւ պատմեն մեզ օրէնս՝ 21
զոր ոչ է արժան մեզ ընդունել եւ ոչ առնել. զի
Հռովմայեցիք եմք: Եւ կուտեցաւ ամբոխն ի վերայ 22
նոցա. եւ զօրագլուխքն պատառեցին զհանդերձս իւ-
րեանց եւ հրամայեցին գան հարկանել. Եւ բազում 23
վէրս եդեալ ի վերայ նոցա՝ արկին ի բանտ, պատուի-
րեցին բանտապետին զգուշութեամբ պահել զնոսա:
Որոյ առեալ զայսպիսի պատուէր՝ արկ զնոսա ի ներ- 24
քին բանտն եւ զոտս նոցա պնդեաց ի կոճեղ: Եւ ի 25
մէջ գիշերին Պաւղոս եւ Շիղա կային յաղօթս եւ
օրհնէին զԱստուած. ունկն դնէին նոցա կալանա-
ւորքն: Եւ եղեւ յանկարծակի շարժումն մեծ՝ մինչեւ 26
շարժել հիմանց բանտին. եւ բացան անդէն դրուն-
քն ամենայն, եւ ամենեցուն կապանք լուծան: Ի- 27
բրեւ զարթեաւ բանտապետն եւ ետես բացեալ
զդրունս բանտին, ձգեաց զսուսեր եւ կամէր երթալ

28 զնուրովն, կարծէր փախուցեալ զկապեալսն: Եւ կո-
չեաց ի ձայն մեծ Պաւղոս եւ ասէ. մի ինչ գործեր
ընդ անձն քո չար, քանզի ամենեքեան աստ եմք:
29 Խնդրեաց լոյս եւ դիմեաց ի ներքս. եւ զահի հա-
30 րեալ անկաւ առաջի Պաւղոսի եւ Շիղայի, Եւ ա-
ծեալ զնոսա արտաքս՝ ասէ. տեա՛րք, զի՞նչ պարտ է
31 ինձ առնել՝ զի ապրեցայց: Եւ նոքա ասեն. հաւատա
ի Տէր Յիսուս Քրիստոս, եւ ապրեսցիս դու եւ ա-
32 մենայն տուն քո: Եւ խօսեցան նմա զբանն Տեառն
33 եւ ամենեցուն որ էին ի տան նորա: Եւ առեալ զնո-
սա ի նմին ժամու գիշերոյն՝ լուաց ի վերաց անտի,
եւ մկրտեցաւ ինքն եւ իւրքն ամենեքեան անդէն վաղ-
34 վաղակի: Եւ ածեալ զնոսա ի տուն իւր, եդ առաջի
նոցա սեղան, եւ ուրախ եղեւ ամենայն տամբն հա-
35 ւատացեալ յԱստուած: Եւ իբրեւ այգ եղեւ՝ առա-
քեցին զօրագլուխքն զնուիրակսն եւ ասեն. արձակեա
36 զարս զայդոսիկ: Եւ պատմեաց բանտապետն զբանն՝
Պաւղոսի, եթէ առաքեցին զօրագլուխքն զի արձա-
37 կեսցիք. արդ ելէք եւ երթայք խաղաղութեամբ: Իսկ
Պաւղոս ասէ ցնոսա. գան հարեալ զմեզ հրապա-
րակաւ՝ արս անմեղս Հռոմայեցիս՝ արկին ի բանտ,
եւ արդ լռելեա՞յն հանեն զմեզ. ոչ այդպէս, այլ
38 եկեսցեն ինքեանք իսկ հանցեն զմեզ: Եւ պատ-
մեցին զօրագլխացն նուիրակքն զբանսն. զահի հարան
իբրեւ լուան՝ թէ Հռոմայեցիք են. եւ եկեալ աղա-
39 չեցին զնոսա: Եւ իբրեւ հանին, աղաչէին գնալ ի
40 քաղաքէն: Եւ ելեալ ի բանտէն՝ մտին ի Լիդիա. եւ
տեսեալ զեղբարս՝ մխիթարեցին զնոսա, եւ գնացին:

ԳԼՈՒԽ ԺԷ.

1 ԽԱ. Եւ շրջեալ ընդ Ամփիպոլիս եւ ընդ Ապո-
ղոնիա, եկին ի Թեսաղոնիկէ, ուր էր ժողովուրդ
2 Հրէից: Եւ ըստ սովորութեանն Պաւղոս եմուտ առ

նոսա, եւ ի շաբաթս երիս խօսեցաւ ընդ նոսա ի
գրոց: Բանայր եւ դնէր առաջի, թէ պարտէր Քրիս- 3
տոսի չարչարել եւ յառնել ի մեռելոց. եւ թէ նա
է Քրիստոսն Յիսուս՝ զոր ես պատմեմ ձեզ: Եւ ո- 4
մանք ի նոցանէ հաւանեցան եւ վիճակեցան Պաւղոսի
եւ Շիղայի. բայց պաշտօնէիցն հեթանոսաց էր բազ-
մութիւն յոյժ, եւ ի կանանց գլխաւորաց ոչ սա-
կաւք: Եւ նախանձեցան Հրեայքն, եւ առեալ այս 5
ոմանս զռեհիկս անօրէնս՝ ամբոխ արարեալ խռովե-
ցին զքաղաքն. եւ կուտեալ առ ապարանսն Յա-
սոնի, խնդրէին զնոսա ածել ի հրապարակ: Եւ 6
իբրեւ ոչ գտին զնոսա՝ քարշէին զՅասոն եւ զոմանս
եղբարս առ քաղաքապետսն, բողոք բարձեալ՝ թէ որք
զաշխարհս խռովեցուցին՝ սոքա եւ այսր հասին, Զորս 7
ընկալեալ է Յասոնի, եւ սոքա ամենեքեան հակա-
ռակ հրամանացն կայսեր գործեն. թագաւոր զոմն ա-
սեն զՅիսուս: Եւ խռովեցուցին զժողովն եւ զքա- 8
ղաքապետսն՝ որ լսէին զայս: Եւ առեալ երաշխա- 9
ւորութիւն առ ի Յասոնայ եւ յայլոցն՝ արձակեցին
զնոսա: Բայց եղբարք վաղվաղակի գիշերայն յուղար- 10
կեցին զՊաւղոս եւ զՇիղայ ի Բերիա. որք իբրեւ
հասին անդր՝ ի ժողովուրդն Հրէից գնացին: Զի սո- 11
քա էին ազնուականագոյնք՝ քան որ ի Թեսաղոնիկն
էին. որք ընկալան զբանն ամենայն յօժարութեամբ.
հանապազ քննէին զգիրս, եթէ իցէ այս այսպէս:
Եւ բազումք ի նոցանէ հաւատացին, եւ ի Յունաց 12
կանանց զգաստից եւ յարանց՝ ոչ սակաւք: Բայց 13
իբրեւ գիտացին՝ որ ի Թեսաղոնիկէ Հրեայքն էին, եթէ
եւ ի Բերիայ պատմեցաւ ի Պաւղոսէ բանն Աս-
տուծոյ, եկին եւ անդր՝ շարժել եւ խռովեցուցանել
զժողովսն: Յայնժամ վաղվաղակի զՊաւղոս առա- 14
քեցին եղբարք գնալ մինչեւ ի ծովեզրն. եւ մնացին
Շիղա եւ Տիմոթէոս անդէն: Եւ որք ածէին զՊաւ- 15
ղոս, ածին զնա մինչեւ յԱթէնս. եւ առեալ պա-

տուէր ի նմանէ առ Շիղա եւ Տիմոթէոս, զի վաղվա-
ղակի եկեսցեն առ նա. եւ գնացին:
16 ԽԲ. Եւ յԱթէնս ի մնալն նոցա Պաւղոսի, զայ-
րանայր հոգի նորա ի նմա, զի տեսանէր ի կռապաշ-
17 տութեան զքաղաքն: Եւ խօսէր ի ժողովրդեանն
ընդ Հրէայսն եւ ընդ պաշտօնեայսն, եւ ի հրապա-
18 րակն զամենայն օր՝ որոց եւ պատահէին: Ոմանք
յԵպիկուրեանցն եւ ի Ստոյիկեանց փիլիսոփայից հա-
կառակէին ընդ նմա, եւ ոմանք ասէին. զի՞նչ կամի-
ցի սերմանաքաղս այս խօսել. իսկ այլք, թէ օտարո-
տի իմն դից թուի պատմիչ լինելոյ, քանզի զՅիսուս
19 եւ զյարութիւն աւետարանէր: Եւ առեալ զնա
ածին յԱրիսպագոսն, եւ ասէին. կարասցուք իմանալ՝
թէ զի՞նչ է նոր վարդապետութիւնդ՝ որ ի քէն
20 պատմի. Օտարացուցիչս իմն բերես ի լսելիս մեր. կա-
21 միմք գիտել՝ թէ զի՞նչ կամիցի այս լինել: Զի Աթե-
նացիք ամենեքեան եւ եկքն օտարք ոչ յայլ ինչ
պարապէին, բայց ասել ինչ կամ լսել նորագոյն:
22 Եկաց Պաւղոս ի մէջ Արիսպագին եւ ասէ. արք
Աթենացիք, ըստ ամենայնի իբրեւ պաշտօնասէրս տե-
23 սանեմ զձեզ: Քանզի շրջեալ եւ տեսեալ զպաշ-
տամունս ձեր, գտի բագին մի՝ յորում գրեալ էր,
անծանօթի Աստուծոյ. զոր դուքն յանծանօթս պաշ-
24 տէք, ես զնոյն պատմեմ ձեզ: Աստուած՝ որ արար
զաշխարհս եւ զամենայն՝ որ ի նմա, նա երկնից եւ
25 երկրի է Տէր. ոչ ի ձեռագործ տաճարս բնակէ, Եւ
ոչ ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ իմիք. նա
տայ ամենայնի կեանս եւ շունչ եւ զամենայն ինչ:
26 Արար ի միոջէ արենէ զամենայն ազգս մարդկան՝ բնա-
կել ի վերայ ամենայն երեսաց երկրի. հաստատեալ
կարգեալ ժամանակս եւ սահմանադրութիւնս բնա-
27 կութեան նոցա՝ խնդրել զԱստուած. Զի թերեւս
զննիցեն զնա եւ գտանիցեն. նա եւ ոչ հեռի իսկ է
28 յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ: Զի նովաւ կեամք

եւ շարժիմք եւ եմք, որպէս եւ ոմանք ի ձերոց ճար-
տարաց ասացին, Թէ նորա եւ ազգ իսկ եմք: Եւ արդ՝ 29
որովհետեւ ազգք եմք Աստուծոյ, ոչ պարտիմք հա-
մարել ոսկւոյ կամ արծաթոյ կամ քարի, որ ի
ճարտարութենէ եւ ի մտաց մարդոյ քանդակեալ
իցէ, զաստուածականն լինել նմանող: Բայց զժա- 30
մանակս անգիտութեանն անտես արարեալ Աստուծոյ,
արդ զայս պատուիրէ մարդկան՝ ամենայն ուրեք ա-
պաշխարել: Քանզի հաստատեաց օր՝ յորում պարտ 31
է դատել զաշխարհս արդարութեամբ, ի ձեռն առն՝
որով սահմանեաց տալ հաւատս ամենեցուն՝ յարու-
ցեալ զնա ի մեռելոց: Իբրեւ լուան զյարութիւն 32
մեռելոց՝ ոմանք ծաղր առնէին, կէսքն ասէին՝ լուի-
ցուք ի քէն վասն այդորիկ միւսանգամ: Եւ ապա 33
Պաւղոս ել գնաց ի միջոյ նոցա: Եւ ոմանք արք ան- 34
կեալք ի նա՝ հաւատացին, ընդ որս էր եւ Դիոնե-
սիոս Արիսպագացի, եւ կին մի անուն Դամարիս, եւ
այլք ընդ նոսա:

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԽԳ. Յետ այսորիկ մեկնեալ Պաւղոսի յԱթե- 1
նացւոց անտի՝ եկն ի Կորնթոս. Եւ եգիտ Հրեայ զոմն 2
անուն Ակիւղաս՝ յազգէ Պոնտացի, այն ինչ եկեալ
յԻտալիայ, եւ Պրիսկիղա կին նորա, վասն հրամանին
Կղաւդեայ՝ որոշել զամենայն Հրեայս ի Հռոմայ, եւ
յարեցաւ ի նոսա: Եւ վասն զի համարուեստ էր, 3
եղեւ առ նոսա եւ գործէր, քանզի էին խորանակարք
արուեստիւ: Եւ խօսէր ի ժողովրդեանն ըստ ամե- 4
նայն շաբաթուց, եւ հաւանեցուցանէր զՀրեայս եւ
զհեթանոսս: Իբրեւ իջին ի Մակեդոնիայ՝ Շիղա եւ 5
Տիմոթէոս, տռփէր հոգւոյն Պաւղոս դնել վկայու-
թիւն Հրէից՝ Թէ Յիսուս է Քրիստոս: Եւ յընդդէմ 6
դառնալ նոցա եւ ի հայհոյել, թօթափեաց զձորձս
եւ ասէ ցնոսա. արիւն ձեր ի գլուխս ձեր, քաւեալ

7 եմ ես. յայսմ հետէ ի հեթանոսս երթամ։ Եւ
գնացեալ անտի՝ եմուտ ի տուն ուրումն, որոյ անուն
էր Տիտոս Յուստոս՝ պաշտօնեայ Աստուծոյ, որոյ ա-
8 պարանքն էին մերձ ի ժողովետղն։ Կրիսպոս ժողովր-
դապետ հաւատաց ի Տէր ամենայն տամբ իւրով.
եւ բազմաց ի Կորնթացւոցն լուեալ՝ հաւատացին եւ
9 մկրտեցան։ Եւ ասէ Տէր ի գիշերին տեսլեամբ ցՊաւ-
10 ղոս. մի՛ երկնչիր, այլ խօսեաց եւ մի՛ լռեր. Քանզի
ես ընդ քեզ եմ, եւ ոչ ոք ընդդէմ դարձցի քո՝ ի
չարչարել զքեզ. քանզի ժողովուրդ է իմ բազում ի
11 քաղաքիս յայսմիկ։ Եւ նստաւ անդ տարի մի եւ ա-
միս վեց՝ ուսուցանել նոցա զբանն Աստուծոյ։
12 ԵԹ. Առ Գաղղիոնաւ փոխանակաւ բդեշխին Ա-
քայեցւոց յարեան միաբան Հրեայքն ի վերայ Պաւ-
13 ղոսի, եւ ածին զնա յատեան. Եւ ասէին, եթէ ար-
տաքոյ օրինաց պատրէ սա զմարդիկ՝ պաշտել զԱս-
14 տուած։ Եւ իբրեւ մերձ էր Պաւղոս բանալ զբերան
իւր, ասէ Գաղղիոն ցՀրեայսն. եթէ էր ինչ անիրաւ-
ութիւն կամ խարդախութիւն չարեաց, ով Հրեայք,
15 ի դէպ էր ինձ անսալ ձեզ. Ապա եթէ խնդիրք ինչ
են վասն բանի եւ անուանց եւ օրինաց ձերոց՝ տեսէք
ձեզէն. քանզի դատաւոր այդպիսի իրաց չկամիմ լի-
16 նել։ Եւ մերժեաց զնոսա յատենէ անտի։ Եւ ա-
17 ռեալ ամենեցուն Յունացն զՍոսթենէս ժողովրդա-
պետն՝ հարկանէին առաջի ատենին. եւ ոչ ինչ զայն-
18 մանէ Գաղղիոնի փոյթ լինէր։ Բայց Պաւղոսի տակաւ-
ին մնացեալ աւուրս բազումս, յեղբարցն հրաժա-
րեալ՝ նաւէր յԱսորիս. եւ ընդ նմա Պրիսկիղա եւ
Ակիւղաս, փոքրել զգլուխ ի Կենքրեայ, քանզի ուխ-
19 տադիր էր։ Եւ հասեալ յԵփեսոս՝ զնոսա եթող
անդ. եւ ինքն մտեալ ի ժողովուրդն խօսէր ընդ Հրեայ-
20 սըն։ Եւ աղաչեցին զնա՝ բազում ժամանակս լինել
21 անդ. եւ ոչ առ յանձն. Այլ հրաժարեաց ի նոցանէ
եւ ասէ. դարձեալ շրջեցայց առ ձեզ Աստուծոյ կա-

մօք. ամբարձաւ յԵփեսոսայ. Եւ իջեալ ի Կեսարիա՝ 22
ել եւ ետ ողջոյն եկեղեցւոյն. էջ յԱնտիոք։ Եւ ե- 23
ղեալ անդ ժամանակ ինչ, ել շրջել կարգաւ ընդ
Գաղատացւոց աշխարհն եւ ընդ Փռիւգիա, հաս-
տատել զամենայն աշակերտեալսն։ Հրեայ ոմն Ապե- 24
ղէս անուն՝ Աղեքսանդրացի յազգէ, այր ճարտարա-
բան, եկն եհաս յԵփեսոս. զօրաւոր էր գրովք։ Սա էր 25
տեղեկացեալ ճանապարհին Տեառն եւ եռայր հո-
գւով. խօսէր եւ ուսուցանէր ճշմարտութեամբ վասն
Յիսուսի. գիտէր միայն զմկրտութիւնն Յովհաննու։
Սա սկսաւ համարձակել ի ժողովրդեանն. եւ լուեալ 26
ի նմանէ Ակիւղեայ եւ Պրիսկղեայ, առին զնա առ
իւրեանս, եւ ճշմարտագոյնս պատմեցին նմա զճանա-
պարհն Աստուծոյ։ Իբրեւ կամեցաւ նա գնալ յԱ- 27
քայիա, յօժարեալ եղբարք՝ գրեցին առ աշակերտա-
սն ընդունել զնա. որ իբրեւ եհաս անդր՝ բա-
զում նպաստ լինէր հաւատացելոցն ի ձեռն շնոր-
հացն։ Քանզի պնդագոյն զՀրեայսն յանդիմանէր 28
հրապարակաւ, ցուցանել գրովք՝ եթէ Քրիստոսն
է Յիսուս։

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԽԶ. Եւ եղեւ մինչ դեռ Ապողոսն ի Կորնթոս էր, 1
Պաւղոսի շրջեալ զվերին կողմամբքն եւ իջանել յԵ-
փեսոս եւ գտանել զոմանս զաշակերտս. Ասէ ցնո- 2
սա. եթէ Հոգի սուրբ ընկալարո՞ւք ի հաւատալն.
Նոքա ասեն ցնա. այլ եւ ոչ թէ Հոգի սուրբ գուցէ՝
լուեալ է մեր։ Եւ ասէ. իսկ յի՞նչ մկրտեցարուք. 3
Նոքա ասեն. ի Յովհաննու մկրտութիւն։ Եւ ասէ 4
Պաւղոս. Յովհաննէս մկրտեաց մկրտութիւն ապաշ-
խարութեան ամենայն ժողովրդեանն. եւ ասէր, զի
որ գալոցն է յետ նորա՝ ի նա հաւատասցեն, այս ին-
քըն է՝ ի Յիսուս Քրիստոս։ Եւ իբրեւ լուան, մկրտե- 5
ցան յանուն Տեառն Յիսուսի։ Եւ ի դնել ի վերայ 6

նոցա Պաւղոսի զձեռն, եկն Հոգին սուրբ ի վերայ
7 նոցա. խօսէին լեզուս եւ մարգարէանային: Եւ էին
8 ամենեքեան արք իբրեւ երկոտասան: Եւ մտեալ ի
ժողովուրդն՝ համարձակէր ամիսս երիս. խօսէր եւ
հաւանեցուցանէր վասն արքայութեանն Աստուծոյ:
9 Իբրեւ ոմանք խստանային եւ ընդդէմ դառնային
բամբասել զճանապարհն առաջի բազմութեանն, մեկ-
նեալ ի նոցանէ՝ որոշեաց զաշակերտսն. հանապազօր
10 խօսէր ի դպրանին Տիւրաննեայ ուրումն: Եւ այս եղեւ
զերկեամ մի, մինչեւ ամենայն բնակչացն Ասիացւոց
11 լսել զբանն Տեառն՝ Հրէից եւ հեթանոսաց: Եւ զօ-
րութիւնս ոչ սակաւս առնէր Աստուած ի ձեռն Պաւ-
12 ղոսի, Մինչ զի եւ ի հիւանդս տանել ի քրտանէ նորա
թաշկինակս կամ վարշամակս, եւ մերժել ի նոցանէ
13 ախտիցն, եւ այսոց չարաց ելանել: Յանդգնեցան
ոմանք եւ ի շրջող Հրէիցն՝ որ երդմնեցուցիչքն էին,
անուանել ի վերայ այնոցիկ՝ որ ունէին այսս չարս,
զանուն Տեառն Յիսուսի եւ ասէին. երդմնեցուցա-
14 նեմ զձեզ ի Յիսուս՝ զոր Պաւղոսն քարոզէ: Էին
ուրումն Սկեւեայ Հրէի քահանայապետի եօթն որ-
15 դիք, որ զայս առնէին: Պատասխանի ետ այսն չար
եւ ասէ ցնոսա. զՅիսուս գիտեմ եւ զՊաւղոս ճա-
16 նաչեմ, բայց դուք ո՞վ էք: Եւ վազեաց այրն՝ յո-
րում էր այսն չար, ըմբռնեալ զերկոսին յաղթահա-
րեաց զնոսա, մինչեւ մերկս եւ վիրաւորս փախչել ի
17 տանէ անտի: Եւ այս յայտնի եղեւ ամենայն Հրէից
եւ հեթանոսաց՝ որ բնակեալ էին յԵփեսոս, եւ ան-
կաւ երկիւղ յամենեսեան ի նոսա, եւ մեծանայր անուն
18 Տեառն Յիսուսի: Եւ բազումք ի հաւատացե-
լոցն գային եւ խոստովան լինէին եւ պատմէին
19 զգործս իւրեանց: Եւ բազումք ի կախարդասարացն
բերէին զգիրսն, այրէին առաջի ամենեցուն. եւ հա-
մարեցան զգինս նոցա, եւ գտանէին արծաթոյ բիւրս
20 հինգ: Եւ այսպէս բանն Աստուծոյ աճէր եւ զօրանայր:

ԽԶ․ Եւ իբրեւ կատարեցաւ այս, եդ Պաւղոս ի 21
մտի շրջել ընդ Մակեդոնիա եւ ընդ Աքայիա եւ
գալ յԵրուսաղէմ․ ասէր եթէ յետ երթալոյն իմ
անդր, պարտ է ինձ եւ զՀռովմ տեսանել: Առա- 22
քեաց ի Մակեդոնիա երկուս ի պաշտօնէից իւրոց
զՏիմոթէոս եւ զԵրաստոս, եւ ինքն մնաց ժամանակս
ինչ յԱսիա: Եւ եղեւ ի ժամանակին յայնմիկ խռո- 23
վութիւն ոչ սակաւ վասն ճանապարհին: Իսկ Դե- 24
մետրիոս ոմն անուն՝ արծաթագործ, գործէր մե-
հեանս արծաթիս Արտեմի դիցն․ եւ տայր ճարտա-
րացն լինել ոչ սակաւ շահ․ Որ ժողովեացն իսկ զձե- 25
ռագէտս արուեստին եւ ասէ․ արք, դուք ձեզէն իսկ
գիտէք, զի յայսմ գործոյ է շահ մեզ: Եւ տեսանէք 26
եւ լսէք՝ եթէ ոչ միայն զԵփեսացւոց, այլ գրեթէ
զամենայն իսկ Ասիացւոց՝ Պաւղոսս այս հաւանեցու-
ցեալ շրջեաց բազում ժողովս, ասել՝ թէ ոչ են աս-
տուածք՝ ձեռագործք: Եւ ոչ միայն այս ճգնէ զմեր 27
կողմնս գալ ի յանդիմանութիւն, այլ եւ զմեծին
աստուածոյ Արտեմեայ զմեհեանն յոչինչ համարել․
նաեւ քակելոց եւս իցէ մեծութիւն նորա, զոր ամե-
նայն Ասիա եւ տիեզերք պաշտեն: Եւ զայս իբրեւ 28
լուան, լի եղեն բարկութեամբ․ աղաղակէին եւ ասէին․
մեծ է Արտեմիս Եփեսացւոց: Եւ լցաւ քաղաքն 29
խռովութեամբ․ դիմեցին առ հասարակ ի թէատրոնն,
յափշտակեցին զԳայիոս եւ զԱրիստաքոս Մակեդո-
նացի՝ զուղեկիցսն Պաւղոսի: Բայց Պաւղոս իբրեւ 30
կամեցաւ մտանել յամբոխն, ոչ թողին զնա աշա-
կերտքն: Ոմանք եւ յասիապետացն՝ որ էին նորա 31
բարեկամք, յղէին առ նա եւ աղաչէին, մի տալ
զանձն ի թէատրոնն: Այլք այլ ինչ աղաղակէին, զի 32
էր ժողովն նոցա խռովեալ, եւ բազումք ի նոցանէ
ոչ գիտէին եթէ վասն որոյ ժողովեալ իցեն: Եւ 33
յամբոխէն բազմութենէ յառաջ կոչեն զԱղեքսան-
դրոս․ եւ իբրեւ ածին զնա յառաջ Հրեայքն, Աղե-

քանդրոս շարժեաց զձեռն եւ կամէր պատասխանի
34 տանել ամբոխին: Իբրեւ գիտացին՝ թէ այրն Հրեայ
է, միաբարբառ եղեւ յամենեցունց՝ իբրեւ ժամս
երկուս աղաղակել, թէ մեծ է Արտեմիս Եփեսա-
35 ցւոց: Լռեցոյց դպրապետն զամբոխն եւ ասէ. ա՛րք
Եփեսացիք, իսկ ո՞ է ի մարդկանէ՝ որ ոչ գիտէ զԵ-
փեսացւոց քաղաքս մեհենազարդ՝ մեծին Արտեմեայ
36 դիցն եւ Դիոպետեայ: Եւ զի այդ այդպէս է ան-
շուշտ՝ պարտ է ձեզ հանդարտել, եւ մի ինչ յանդգ-
37 նութեամբ գործել: Ածէք զարդ զայդոսիկ այր,
ոչ մեհենակապուտս եւ ոչ հայհոյիչս աստուածոցն
38 մերոց: Զի եթէ Դեմետրիոս եւ որք ընդ նմա ճար-
տարք՝ ունիցին ինչ ընդ ումեք բանս, յատեան երթի-
ցեն, եւ դատաւորք գոն, եւ ամբաստան լիցին զմի-
39 մեանց: Ապա եթէ վասն այլ իրիք խնդիր իցէ՝ յօրի-
40 նաւոր ժողովն վճարեսցեն: Քանզի եւ մեզ վիշտս
վտանգի է ընդ կռուոյս այսր աւուր՝ առանց իրիք
յանցանաց լինելոյ, զորմէ ոչ կարասցուք պատասխա-
նի տալ վասն ժողովոյս այսորիկ: Եւ զայս ասացեալ
արձակեաց զժողովն:

ԳԼՈՒԽ Ի.

1 ԵՒ. Եւ յետ դադարելոյ ամբոխին՝ կոչեաց Պաւ-
ղոս զաշակերտսն եւ մխիթարեաց. ողջոյն ետ եւ
2 ել գնաց ի Մակեդոնիա: Եւ շրջեալ ընդ կողմանսն
ընդ այնոսիկ եւ մխիթարեալ զնոսա բանիւք բազ-
3 մօք, եկն յԵլլադայ: Իբրեւ արար անդ ամիսս երիս,
եղեւ նմա դաւ ի Հրէից, մինչդեռ կամէր ելանել յԱսո-
րիս. խորհուրդ կալաւ դառնալ ընդ Մակեդոնիա:
4 Եւ երթայր ընդ նմա մինչեւ յԱսիա՝ Սոսիպատրոս
Պիւռեայ Բերիացի, եւ ի Թեսաղոնիկեցւոց՝ Արիստար-
քոս եւ Սեկունդոս եւ Գայիոս Դերբեացի եւ Տիմո-
5 թէոս, եւ Ասիացիք՝ Տիւքիկոս եւ Տրոփիմոս: Սոքա
6 յառաջ երթեալ՝ մնային մեզ ի Տրովադայ: Եւ մեք

նաւեցաք յետ աւուրցն բաղարջակերաց ի Փիլիպ-
պեայ եւ եկաք առ նոսա ի Տրովադա՝ մինչեւ յաւուրս
հինգ. անդ դադարեցաք աւուրս եօթն: Եւ յաւուրն 7
շաբաթուց՝ մինչդեռ ժողովեալ էաք բեկանել զհաց,
Պաւղոս խօսէր ընդ նոսա՝ զի գնալոց էր ի վաղիւ-
անդր. եւ երկայնեաց զբանն մինչեւ ի մէջ գիշերոյն:
Էին լապտերք բազումք ի վերնատանն, ուր էաքն 8
ժողովեալ: Եւ նստէր ոմն երիտասարդ՝ անուն Եւ- 9
տիքոս՝ ի վերայ պատուհանին, նիրհէր ի քուն թան-
ձրութեան՝ ի խօսելն Պաւղոսի յաճախ, ընկղմեալ ի
քնոյ անտի՝ անկաւ յերրորդ դստիկոնէն ի վայր, եւ
բարձաւ մեռեալ: Եւ իջեալ Պաւղոս անկանէր զնո- 10
վաւ. առնոյր զնա ընդ գիրկս եւ ասէր. մի խռովիք,
քանզի հոգի սորա ի սմին է: Եւ ել երեկ զհացն եւ 11
ճաշակեաց, եւ բազում եւս խօսեցաւ մինչեւ յա-
ռաւօտն, եւ ապա ել գնաց: Եւ ածին զպատանին 12
կենդանի, եւ մխիթարեցան ոչ սակաւ: Եւ մեք 13
մտեալ ի նաւն՝ ամբարձաք յԱսոն. անտի ակն ունէաք
միւսանգամ առնուլ զՊաւղոս. զի այնպէս պատուի-
րեալ էր՝ մինչ ինքն զցամաքաւն երթալոց էր:
Եւ իբրեւ դիպեցաւ մեզ ի Յասոն, առեալ զնա 14
եկաք ի Միտիլինէ: Եւ անտի նաւեալ՝ ի վաղիւ անդր 15
հասաք հանդէպ Քիեայ. եւ ի միւս օրն հասաք ի Սա-
մոս. եւ ի վաղիւ անդր եկաք ի Միլիտոն: Զի ի մտի 16
եդեալ էր Պաւղոսի նաւել առ Եփեսաւ, որպէս
զի մի լիցի նմա ժամանակ ինչ յամել յԱսիա. քան-
զի փութայր՝ եթէ հնար ինչ իցէ նմա՝ զօրն պենտէ-
կոստէից երթալ յԵրուսաղէմ:

ԶԱ. Եւ ի Միլիտեայ յղեալ յԵփեսոս՝ կոչեաց 17
զերիցունս եկեղեցւոյն: Եւ իբրեւ եկին առ նա, ասէ 18
ցնոսա. դուք ձեզէն գիտէք յօրէ յառաջնմէ՝ յորմէ
եկի յԱսիա, որպէս ընդ ձեզ զամենայն ժամանակսն
եղէ. Ծառայել Տեառն ամենայն խոնարհութեամբ 19
եւ բազում արտասուօք եւ փորձութեամբք՝ որ դի-

20 պեցան ինձ ի նենգութեանցն Հրէից: Որպէս ոչ ինչ
զանգիտեցի յօգտակարացն չպատմել ձեզ եւ ուսու-
21 ցանել զձեզ հրապարակաւ եւ առտնին: Տալ վկայու-
թիւն Հրէից եւ հեթանոսաց զապաշխարութեանն՝ որ
առ Աստուած, եւ զհաւատոցն՝ որ ի Տէր մեր Յիսուս
22 Քրիստոս: Եւ արդ՝ ահաւասիկ ես կապեալ հո-
գւովն երթամ յԵրուսաղէմ, եւ որ ինչ անդ ընդ իս
23 անցանելոց է՝ չգիտեմ: Բայց զի Հոգին սուրբ ըստ
քաղաքաց վկայէ ինձ եւ ասէ, եթէ կապանք եւ նե-
24 ղութիւնք մնան քեզ: Այլ եւ ոչ իւիք համարիմ
զանձն իմ պատուական՝ որպէս զկատարել զընթացս
իմ ուրախութեամբ, եւ զպաշտօնն՝ զոր առի ի
Տեառնէ Յիսուսէ՝ վկայ լինել աւետարանի շնորհացն
25 Աստուծոյ: Եւ արդ՝ ահաւասիկ գիտեմ ես, եթէ ոչ
եւս տեսանէք զերեսս իմ դուք ամենեքեան, յորս
26 շրջեցայ քարոզել զարքայութիւնն: Վասն որոյ եւ
վկայութիւն դնեմ ձեզ յաւուրս յայսմիկ՝ զի սուրբ
27 եմ ես յարենէ ամենեցուն: Քանզի ոչ խորշեցայ ի
28 չպատմելոյ ձեզ զամենայն կամս Աստուծոյ: Զգոյշ
կացէք անձանց եւ ամենայն հօտին, յորում եդ զձեզ
Հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ Տեառն,
29 զոր ապրեցոյց արեամբ իւրով: Քանզի գիտեմ ես՝
եթէ յետ իմոյ մեկնելոյ՝ գայցեն գայլք յափշտակողք
30 ի ձեզ, որ ոչ խնայեսցեն հօտին: Եւ ի ձէնջ յարի-
ցեն արք՝ որք խօսեսցին թիւրս, ձգել զաշակերտսն
31 զկնի իւրեանց: Վասն այսորիկ արթուն կացէք եւ
յիշեցէք զի զերկեամ մի զցայգ եւ զցերեկ ոչ դա-
դարեցի արտասուօք խրատել զմի մի իւրաքանչիւր:
32 Եւ արդ՝ յանձն առնեմ զձեզ Աստուծոյ եւ բանի
շնորհաց նորա, որ կարողն է շինել եւ տալ ձեզ ժա-
33 ռանգութիւն ընդ սուրբսն ամենեսեան: Արծաթոյ
կամ ոսկւոյ կամ հանդերձից ոչ ուրուք ի ձէնջ ցան-
34 կացայ: Դուք ինքնին գիտէք զի զպէտսն իմ եւ որոց
35 ընդ իմն էին՝ պաշտեցին ձեռքս այս: Եւ զամենայն

ինչ ցուցի ձեզ. զի այսպէս պարտ է վաստակել եւ
դարմանել զհիւանդս եւ յիշել զբանն Տեառն Յի-
սուսի, զոր ինքն իսկ ասաց. երանելի է մանաւանդ
տալ քան առնուլ: Եւ զայս իբրեւ ասաց, եդեալ 36
ծունր ամենեքումբք՝ եկաց յաղօթս: Բազում լա- 37
լիւն եղեւ ամենեցուն. եւ անկեալ զպարանոցաւն
Պաւղոսի՝ համբուրէին զնա: Մորմոքէին մանաւանդ 38
ի վերայ բանին՝ զոր ասէր, թէ ոչ եւս տեսանելոց են
զերեսս նորա. եւ յուղարկեցին զնա ի նաւ անդր:

ԳԼՈՒԽ ԻԱ.

ԶԲ. Եւ իբրեւ եղեւ ելանել մեզ եւ մեկնել ի 1
նոցանէ, հանդէպ գնացեալ եկաք ի Կով. եւ ի վաղիւ-
անդր ի Հռոդոն, եւ անտի ի Պատարայ: Եւ գտեալ 2
նաւ մի՝ զի երթայր ի Փիւնիկէ, եւ ելեալ ի նա
գնացաք: Եւ յայտ եղեալ Կիպրեայ՝ թողաք զնա ի 3
ձախակողմն, նաւեցաք յԱսորիս եւ իջաք ի Տիւրոս,
քանզի անդ էր նաւն թափելոց զբեռինսն: Եւ գտեալ 4
զաշակերտսն՝ կացաք անդ աւուրս եօթն, որք ասէին
ցՊաւղոս ի ձեռն Հոգւոյն՝ մի ելանել յԵրուսաղէմ:
Եւ իբրեւ եղեւ մեզ կատարել զաւուրսն՝ ելեալ 5
գնացաք, յուղարկեալ զմեզ ամենեցուն հանդերձ
կանամբք եւ որդւովք մինչեւ արտաքոյ քաղաքին.
եւ եդեալ ծունր առ ծովեզերբն՝ կացաք յաղօթս:
Եւ հրաժարեցաք ի միմեանց եւ ելաք ի նաւն, եւ 6
նոքա դարձան յիւրեանց տեղիս: Եւ մեր զնաւն առ- 7
խթեալ ի Տիւրոսէ՝ հասաք ի Պտղոմիդա. եւ ող-
ջոյն տուեալ եղբարցն՝ եղաք օր մի առ նոսա. Եւ ի 8
վաղիւ անդր ելեալ անտի՝ եկաք ի Կեսարիա. եւ
մտեալ յապարանսն Փիլիպպոսի աւետարանչի՝ որ էր
յեօթանց անտի, ագաք առ նմա: Նորա էին դստերք 9
չորք՝ կոյսք մարգարէք: Եւ ի լինելն մեր անդ աւուրս 10
բազումս, էջ ոմն ի Հրէաստանէ մարգարէ՝ անուն
Ագաբոս: Եւ եկեալ առ մեզ, առեալ զգօտին Պաւ- 11

ղոսի՝ կապեաց զոտս եւ զձեռս իւր, եւ ասէ. այսպէս
ասէ Հոգին սուրբ. Զայրն՝ որոյ գօտիս այս է, այսպէս
կապեսցեն յԵրուսաղէմ Հրեայք, եւ մատնեսցեն ի
12 ձեռս հեթանոսաց: Եւ իբրեւ լուաք զայն՝ աղաչէաք
մեք եւ որ ի տեղւոջն էին՝ չելանել նմա յԵրուսա-
13 ղէմ: Յայնժամ պատասխանի ետ Պաւղոս. զի՞նչ
գործէք, զի՞ լայք եւ ճմլեցուցանէք զսիրտ իմ.
քանզի ես ոչ միայն կապելոյ, այլ եւ մեռանելոյ յԵ-
րուսաղէմ պատրաստ եմ վասն անուանն Տեառն
14 Յիսուսի Քրիստոսի: Եւ ի չհաւանելն նորա՝ լռեցաք,
ասեմք. Տեառն կամք լիցին:
15 ԶԳ. Եւ յետ աւուրցն այնոցիկ՝ հանդերձեալ
16 ելանէաք յԵրուսաղէմ: Եկին ընդ մեզ եւ յաշա-
կերտաց անտի Կեսարացւոց, եւ տանէին զմեզ առ
որում վանս ունելոց էաք՝ Մնասովնի ուրեմն Կի-
17 պրացւոյ՝ առաջին աշակերտի: Եւ ի մտանելն մեր յԵ-
րուսաղէմ, խնդութեամբ ընկալան զմեզ եղբարք:
18 Ի վաղիւ անդր եմուտ Պաւղոս ընդ մեզ առ Յակով-
19 բոս. եւ եկին ամենայն երիցունքն: Եւ ողջոյն տուեալ
նոցա՝ պատմէր մի ըստ միոջէ զոր արար Աստուած ի
20 հեթանոսս ի ձեռն պաշտաման նորա: Եւ նոցա
լուեալ՝ փառաւոր առնէին զԱստուած, եւ ասեն ցնա.
տեսանե՞ս, եղբայր, քանի բիւրք ՚ն հաւատացելոցն
Հրէից, եւ ամենեքեան նախանձաւոր օրինացն են:
21 Բայց իրազեկ եղեն վասն քո՝ թէ ապստամբութիւն
ուսուցանես ի Մովսիսէ՝ որոց ի հեթանոսս ամենայն
Հրեայք են. ասես՝ մի թլփատել զորդիս նոցա եւ
22 մի ըստ կրօնիցն գնալ: Արդ՝ զի՞նչ լինիցի, ապաքէն
23 լսեն եթէ եկեալ ես: Արդ զայս արա զոր ասեմք
քեզ. են ի մեզ արք չորք ուխտաւորք յանձինս իւ-
24 րեանց. Զնոսա առեալ՝ սրբեսցիս ընդ նոսա, եւ ծա-
խեա ինչ ի նոսա՝ զի գերծցեն զգլուխս. եւ գիտաս-
ցեն ամենեքեան, թէ զորոց իրազեկն եղեն զքէն՝ ոչ
25 ինչ է. այլ միաբանիս եւ դու պահել զօրէնսն: Բայց

վասն հաւատացելոցն հեթանոսաց, մեք առաքեցաք՝
որպէս ընտրեցաք, մի՛ ինչ այնպիսի պահել նոցա.
բայց միայն զգուշանալ ի կռոց զոհելոց եւ յարենէ,
եւ ի հեղձուցելոյ եւ ի պոռնկութենէ։ Յայնժամ 26
Պաւղոսի առեալ զարսն՝ ի վաղիւ անդր ընդ նոսա
սրբեալ եմուտ ի տաճարն, յայտ առնել զկատարումն
աւուրցն սրբութեան, մինչեւ մատեաւ ի վերայ իւ-
րաքանչիւր ուրուք ի նոցանէ պատարագ։

ԶԹ · Եւ իբրեւ մերձ էին եօթն աւուրքն ի կա- 27
տարել, տեսեալ զնա ի տաճարին Ասիացւոց Հրէ-
իցն՝ զեղուին զնովաւ զամենայն ամբոխն. եւ արկեալ
ի նա ձեռս՝ աղաղակէին. Արք Իսրայելացիք, օգնե- 28
ցէք. այս այր է՝ որ հակառակ ժողովրդեանն եւ օրէ-
նացն եւ տեղւոյս այսորիկ՝ ամենեցուն ամենայն ու-
րեք ուսուցանէ. մինչեւ հեթանոսս եւս եմոյծ ի տա-
ճարն եւ պղծեաց զսուրբ տեղին։ Քանզի էր յառա- 29
ջագոյն տեսեալ զՏրոփիմոս զԵփեսացի ի քաղաքին
ընդ նմա, զոր կարծէին եթէ ի տաճար անդր եմոյծ
Պաւղոս։ Շարժեցաւ քաղաքն ամենայն, եւ կուտե- 30
ցաւ ժողովուրդն, եւ առեալ զՊաւղոս՝ ձգէին ար-
տաքոյ տաճարին. եւ վաղվաղակի փակեցան դրունքն։
Եւ խնդրէին զնա սպանանել. եհաս զրոյց ի հազա- 31
րապետ գնդին, եթէ խռովեալ է ամենայն Երուսա-
ղէմ։ Որոյ անդէն առեալ զօրականս եւ հարիւրա- 32
պետս՝ դիմեաց ի վերայ նոցա. եւ նոքա տեսեալ
զհազարապետն եւ զզօրականսն, դադարեցին ի հար-
կանելոյ զՊաւղոս։ Յայնժամ մատուցեալ հազարա- 33
պետն՝ կալաւ զնա եւ հրամայեաց կապել կրկին
շղթայիւք, եւ հարցանէր թէ ո՞ իցէ եւ զի՞նչ իցէ
արարեալ։ Այլք այլ ինչ աղաղակէին զնմանէ յամ- 34
բոխէն. իբրեւ ոչ կարաց գիտել զստոյգն վասն ամ-
բոխին, հրամայեաց ածել զնա ի բանակն։ Եւ իբրեւ 35
եհաս յաստիճանսն, դէպ եղեւ բառնալ բերել զնա
ի զօրականացն՝ վասն բռնութեան ամբոխին։ Քանզի 36

զհետ երթայր բազմութիւն ժողովրդեանն, եւ ասէին՝
37 բարձ զդա։ Մինչ դեռ մտանելոց էր Պաւղոս ի բա-
նակն, ասէ ցհազարապետն՝ եթէ արժա՞ն իցէ ինձ
խօսել ընդ քեզ։ Եւ նա ասէ. յունարէն գիտե՞ս.
38 Մի՞ արդեօք դու իցես Եգիպտացին, որ յառաջ
քան զայս աւուրս ապստամբեցուցեր եւ հաներ յա-
39 նապատ չորս հազարս արս սիկարեանս։ Եւ ասէ Պաւ-
ղոս. Ես եմ այր Հրեայ ի Տարսոնէ Կիլիկեցւոց, ոչ
աննշան քաղաքի քաղաքացի. աղաչեմ զքեզ հրա-
40 մայեա ինձ խօսել առ ժողովուրդդ։ Եւ ի հրամայելն
նորա, Պաւղոս կացեալ ի վերայ աստիճանացն՝ շար-
ժեաց զձեռն՝ ժողովրդեանն. իբրեւ բազում լռու-
թիւն լինէր, սկսաւ բարբառել Եբրայեցւոց բար-
բառովն եւ ասէ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

1 Արք եղբարք եւ հարք, լուարուք ինձ այժմ առ
2 ձեզ պատասխանատուութեանս։ Իբրեւ լուան՝ թէ
Եբրայեցւոց լեզուաւն բարբառեցաւ նոցա՝ առաւել
3 եւս դադարեցին ի լռութիւն։ Եւ ասէ. Ես եմ այր
Հրեայ ծնեալ ի Տարսոն Կիլիկեցւոց՝ սնեալ ի քա-
ղաքիս յայսմիկ, առ ոտս Գամաղիէլի, խրատեալ ըստ
ճշմարտութեան հայրենի օրինացն. նախանձայոյզ էի
4 Աստուծոյ, որպէս ամենեքին դուք այսօր. Որ զայն
ճանապարհ փարեցի մինչեւ ի մահ, կապել եւ մատնել
5 ի բանտ արս եւ կանայս. Որպէս եւ քահանայապետդ
վկայէ ինձ եւ ամենայն ծերակոյտդ. յորոց եւ թուղ-
թս առեալ առ եղբարս ի Դամասկոս երթայի,
ածել եւ անտի կապեալս յԵրուսաղէմ, զի պատ-
6 ժեսցին։ Եւ եղեւ ինձ ի գնալն եւ ի մերձենալ ի
Դամասկոս, զմիջաւուրբն յանկարծակի յերկնից փայ-
7 լատակեաց լոյս սաստիկ զինեւ. Եւ անկայ յերկիր,
եւ լուայ բարբառ՝ որ ասէր ցիս. Սաւուղ Սաւուղ,
8 զի՞ հալածես զիս։ Եւ ես ետու պատասխանի՝ թէ

ո՞վ ես Տէր: Եւ ասէ ցիս. Ես եմ Յիսուս Նազովրա-
ցի՝ զոր դու հալածես: Բայց որ ընդ իս էին՝ զլոյսն 9
տեսին, այլ զձայնն ոչ լսէին՝ որ խօսէր ընդ իս: Եւ 10
ասեմ. Զի՞նչ արարից Տէր: Եւ ասէ ցիս Տէր, յա-
րուցեալ երթիցես ի Դամասկոս, եւ անդ պատմեսցի
քեզ վասն ամենայնի՝ որ հրաման է քեզ առնել:
Իբրեւ ոչ տեսանէի ի փառաց լուսոյն այնորիկ, զձե- 11
ռանէ ձգեալ ի նոցանէ՝ որ ընդ իս էին, մտի ի Դա-
մասկոս: Անանիա ոմն՝ այր երկիւղած ըստ օրինացն, 12
վկայեալ յամենայն բնակչաց՝ որ ի Դամասկոս Հրեայքն
էին, Եկն եկաց առ իս եւ ասէ. Սաւուղ եղբայր, ի 13
վեր հայեաց: Եւ ես նոյնժամայն ի վեր հայեցայ ի 14
նա. եւ նա ասէ ցիս. Աստուած հարցն մերոց յառա-
ջագոյն ընտրեաց զքեզ ճանաչել զկամս նորա, եւ
տեսանել զարդարն, եւ լսել բարբառ ի բերանոյ նո-
րա. Զի եղիցես վկայ նորա առ ամենայն մարդիկ 15
որոց տեսերն եւ լուար: Եւ արդ՝ զի՞ հեղգաս, արի 16
մկրտեաց եւ լուա զմեղս քո ի կարդալ զանուն նորա:
Եւ եղեւ ինձ ի դառնալն յԵրուսաղէմ եւ կալ յա- 17
ղօթս ի տաճարին, լինել ի զարմացման. Եւ տեսանել 18
զնա՝ զի ասէր ցիս. փութա ել յԵրուսաղեմէ վաղ-
վաղակի, քանզի չեն ընդունելոց զքո վկայութիւնդ
վասն իմ: Եւ ես ասեմ. Տէր, ինքեանք իսկ գիտեն՝ 19
զի ես էի որ ի բանտս տայի եւ գան հարկանէի ըստ
ժողովրդոցն զհաւատացեալսն ի քեզ: Եւ յորժամ 20
հեղոյր արիւնն Ստեփանոսի վկայի քո, ես ինքն էի՝
որ ի վերայ կայի, եւ կամակից լինէի սպանման նորա,
եւ պահէի զհանդերձս սպանողացն նորա: Եւ ասէ 21
ցիս. գնա, զի ես ի հեթանոսս հեռաւորս առաքեցից
զքեզ: Եւ ունկն դնէին նմա մինչեւ ցայս բան. ապա 22
բարձին զձայնս իւրեանց եւ ասեն. բարձ յերկրէ
զայդպիսին, զի չէ պարտ այդպիսւոյդ կեալ: Եւ յա- 23
ղաղակելն նոցա եւ ընկենուլ զհանդերձս եւ զփոշին
ցանել յօդս, Հրամայեաց հազարապետն մուծանել 24

զնա ի բանակն. ասէր գանիւ հարցանել զնա, զի
գիտասցէ վասն որոյ յանցման այնպէս աղաղակէին
25 զնմանէ: Եւ իբրեւ պրկեցին զնա փոկովք, ասէ
Պաւղոս ցհարիւրապետն՝ որ ի վերայ կայր. եթէ զայր
Հռովմայեցի եւ անպարտ պա՞րտ իցէ ձեզ գան հար-
26 կանել: Իբրեւ լուաւ հարիւրապետն, մատուցեալ առ
հազարապետն պատմեաց եւ ասէ. զի՞նչ կամիս առ-
27 նել՝ քանզի այրն այն Հռովմայեցի է: Եւ մատու-
ցեալ հազարապետն՝ ասէ ցնա. ասա դու ցիս՝ Հռով-
28 մայեցի՞ ես. եւ նա ասէ, այո: Պատասխանի ետ հա-
զարապետն. ես բազում գլխոց զզինուորութիւնս
զայս ստացայ. ասէ Պաւղոս. ես ծնեալ իսկ ի դմին
29 եմ: Եւ վաղվաղակի ի բաց կացին ի նմանէ՝ որ հար-
կանելոցն էին զնա. եւ հազարապետն իսկ երկեաւ,
իբրեւ գիտաց եթէ Հռովմայեցի է. եւ զի կապեալն
եւս էր զնա:
30 ԶԶ. Եւ ի վաղիւ անդր կամէր գիտել զճշմա-
րիտն, թէ զի՞նչ չարախօսութիւն իցէ Հրէիցն. ար-
ձակեաց զնա, եւ հրամայեաց կոչել զքահանայա-
պետսն եւ զամենայն ատեանն. եւ իջուցեալ զՊաւ-
ղոս կացոյց ի մէջ նոցա:

ԳԼՈՒԽ ԻԳ.

1 Եւ հայեցեալ Պաւղոսի յատեանն՝ ասէ. արք
եղբարք, ես ամենայն ուղիղ մտօք գնացեալ եմ ա-
2 ռաջի Աստուծոյ մինչեւ ցայսօր: Եւ քահանայա-
պետն Անանիա հրամայեաց սպասաւորացն հարկանել
3 զբերան նորա: Յայնժամ Պաւղոս ասէ ցնա. հար-
կանելոց է զքեզ Աստուած, որմ բռեալ. եւ դու
նստիս դատել զիս ըստ օրինացն, եւ առանց օրինաց
4 հրամայես զիս հարկանել: Եւ որ շուրջն կային՝ ասեն.
5 զքահանայապետ Աստուծոյ հայհոյես: Եւ ասէ Պաւ-
ղոս. ոչ գիտէի, եղբարք, եթէ իցէ քահանայապետ.
գրեալ իսկ է՝ Զիշխան ժողովրդեան քո ոչ հայհոյես-

ցես։ Իբրեւ գիտաց Պաւղոս՝ եթէ մի կողմն սադու- 6
կեցւոց է, եւ միւսն՝ փարիսեցւոց, աղաղակէր ի մէջ
ատենին. արք եղբարք, ես փարիսեցի եմ, որդի փա-
րիսեցւոյ. վասն յուսոյ եւ յարութեան մեռելոց ես
աւասիկ դատիմ։ Եւ զայս իբրեւ ասաց՝ եղեն հեր- 7
ձուածք փարիսեցւոցն եւ սադուկեցւոց. եւ պատա-
ռեցաւ բազմութիւնն։ Քանզի սադուկեցիքն ասեն. 8
չիք յարութիւն եւ ոչ հրեշտակ եւ ոչ հոգի. բայց
փարիսեցիքն խոստովանին զերկոսեան։ Եւ եղեւ ա- 9
ղաղակ մեծ. յոտն կացին ոմանք ի դպրաց անտի ի
կողմանէ փարիսեցւոց, հակառակէին եւ ասէին. ոչ
ինչ չարութիւն գտանեմք յառնս յայսմիկ, բայց եթէ
հոգի խօսեցաւ ի դմա կամ հրեշտակ։ Եւ ի բազ- 10
մանալ ամբոխին՝ երկուցեալ հազարապետն թէ գու-
ցէ ճեղքիցի Պաւղոս ի նոցանէ, հրամայեաց զօրա-
կանին իջանել յափշտակել զնա ի միջոյ նոցա եւ
ածել ի բանակն։ Եւ ի վաղուեան գիշերին եկաց առ 11
նմա Տէր եւ ասէ. քաջալերեաց, Պաւղէ, զի որպէս
վկայեցեր վասն իմ յԵրուսաղէմ, սոյնպէս պարտ է
քեզ եւ ի Հռոմ վկայել։

ՁԻ. Եւ իբրեւ այգ եղեւ՝ արարեալ ժողով 12
Հրէիցն, նզովեցին զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել՝
մինչեւ սպանցեն զՊաւղոս։ Եւ էին աւելի քան զքա- 13
ռասուն՝ որոց զայս ընդ միմեանս երդմունս արարեալ
էր. Որք մատեան առ քահանայապետսն եւ երիցունս 14
եւ ասեն. նզովիւք նզովեցաք զանձինս ոչ ինչ ճաշա-
կել՝ մինչեւ սպանցուք զՊաւղոս։ Բայց դուք զգա- 15
ցուցէք հազարապետին հանդերձ ատենիւն, զի իջու-
ցէ զնա առ ձեզ, որպէս թէ կամիցիք ճշմարտա-
գոյնս ինչ գիտել զնմանէ. եւ մեք յառաջ քան զմօ-
տել նորա՝ պատրաստեմք ի սպանանել զնա։ Եւ 16
լուեալ քեռորդւոյն Պաւղոսի զդաւաճանութիւնն,
եկն եմուտ ի բանակ անդր, պատմեաց Պաւղոսի։ Եւ 17
կոչեցեալ Պաւղոսի առ իւր զմի ի հարիւրապետաց

անտի՝ ասէ. զպատանիս զայս տար առ հազարապետն,
18 զի ունի ինչ պատմել նմա: Եւ նորա առեալ զնա
տարաւ առ հազարապետն եւ ասէ. կապեալն Պաւ-
ղոս կոչեաց զիս եւ աղաչեաց զպատանիս զայս ածել
19 առ քեզ, ունի ինչ խօսել ընդ քեզ: Առեալ զձե-
ռանէ նորա հազարապետին՝ գնաց մեկուսի, հարցա-
20 նէր՝ թէ զի՞նչ ունիս խօսել ընդ իս: Եւ նա ասէ.
Հրեայք միաբանեցին աղաչել զքեզ, զի վաղիւ
զՊաւղոս իջուսցես յատեան, իբրեւ թէ կամիցին ինչ
21 ճշմարտագոյնս հարցանել վասն նորա: Արդ՝ դու մի
անսայցես նոցա. քանզի դարան գործեալ է նմա ի
նոցանէ արանց աւելի քան զքառասուն, որ նզովեցին
զանձինս ոչ ուտել եւ ոչ ըմպել՝ մինչեւ սպանցեն
զնա. արդ պատրաստ են եւ սպասեն քում հրա-
22 մանի: Ապա հազարապետն արձակեաց զպատանին՝
պատուիրեալ մի ումեք ասել, թէ զայս զգա-
23 ցուցեր ինձ: Եւ կոչեաց երկուս ի հարիւրապետացն
եւ ասէ. պատրաստեցէք զօրականս երկերիւր, որպէս
զի երթիցեն մինչեւ ի Կեսարիա, եւ հեծեալս եօ-
թանասուն եւ տիգաւորս երկերիւր, յերից ժամու
24 գիշերւոյն. Եւ գրաստ պատրաստական՝ որպէս զի
իջուցեալ զՊաւղոս ապրեցուսցեն առ Փելիքս դա-
25 տաւոր: Գրեալ թուղթ՝ որ ունէր օրինակ զայս.
26 Կղաւդիոս Լիւսիաս առ քաջ դատաւորդ Փելիքս,
27 ողջոյն: Զայրս զայս կալեալ ի Հրէից եւ մերձ ի
սպանանել ի նոցանէ, հասեալ ի վերայ զօրականաւ՝
28 ապրեցուցի, իմացեալ թէ Հռոմայեցի է: Կամեցայ
գիտել զվնասն՝ վասն որոյ ամբաստանէին զդմանէ,
29 իջուցի զդա յատեան նոցա: Զոր գտի ամբաստանեալ
վասն խնդրոյ իրիք իւրեանց օրինաց. եւ ոչ ինչ ար-
30 ժանի մահու կամ կապանաց ունէր վնաս: Իբրեւ ազդ
եղեւ ինձ նենգութեան յայրդ լինելոյ ի նոցանէ՝ յղե-
ցի առ քեզ. հրաման տուեալ եւ չարախօսացն խօսել
31 զդմանէ առաջի քո. ողջ լեր: Եւ զօրականացն ըստ

հրամանի նորա առեալ զՊաւղոս՝ ածին գիշերայն
յԱնտիպատրիս։ Եւ ի վաղիւ անդր արձակեալ զհե- 32
ծեալսն ընդ նմա երթալ՝ դարձան ի բանակն։ Նոքա 33
մտին ի Կեսարիա. եւ տուեալ ցդատաւորն զթուղ-
թըն, առաջի կացուցին նորա եւ զՊաւղոս։ Իբրեւ 34
ընթերցաւ՝ եհարց թէ յորմէ՞ նահանգէ իցէ. եւ
տեղեկեալ եթէ ի Կիլիկեայ է, Լուայց քեզ, ասէ, 35
յորժամ չարախօսքն քո եկեսցեն, եւ հրամայեաց
յապարանսն Հերովդի պահել զնա։

ԳԼՈՒԽ ԻԴ.

ԻԴ. Եւ յետ հինգ աւուր էջ քահանայապետն 1
Անանիա՝ հանդերձ ծերովք ոմամբք եւ ճարտասա-
խօսաւ Տերտիղեաւ ումեմբ, որք եւ զգացուցին դատա-
ւորին վասն Պաւղոսի։ Եւ ի կոչելն զնա՝ սկսաւ Տեր- 2
տիղոս ամբաստան լինել եւ ասել. Բազում խա-
ղաղութիւն գտեալ ի քէն եւ իրաց ուղղութիւն
ազգիս այսորիկ քով խնամով, Ամենայնիւ եւ ամե- 3
նայն ուրեք շնորհակալ եմք, քա՛ջդ Փելիքս, ամենայն
գոհութեամբ։ Բայց զի մի աւելի եւս աշխատ արա- 4
րից զքեզ, աղաչեմ լսել մեզ կարճ ի կարճոյ՝ քոյին
հեզութեամբդ։ Գտաք զայրս զայս ապակա- 5
նիչ եւ խռովիչ ամենայն Հրէից՝ որք են ընդ տիե-
զերս, եւ առաջնորդ Նազովրացւոց հերձուածոյն.
Որ եւ զտաճարն իսկ կամեցաւ պղծել, զոր եւ կա- 6
լաք եւ ըստ մերոց օրինացն դատել կամեցաք։ Եկեալ 7
Լիւսիաս հազարապետ՝ մեծաւ բռնութեամբ ի ձե-
ռաց մերոց եհան։ Հրամայեաց եւ չարախօսացն նորա 8
գալ առ քեզ. յորմէ դու իսկ բաւական լինիցիս վե-
րըստին դատեալ, ամենայնի հասու լինել՝ զորոց մեքս
ամբաստանեմք զդմանէ։ Միաբանեցին եւ Հրեայքն, 9
ասեն՝ այդ այդպէս է։ Պատասխանի ետ Պաւղոս՝ 10
յակնարկել նմա դատաւորին խօսել. Ի բազում ա-
մաց լինել քեզ դատաւոր ազգիս այսորիկ գիտեմ.

յօժարութեամբ վասն իմոց իրաց պատասխանի տա-
11 նեմ: Քանզի կարող ես գիտել, զի ոչ ինչ աւելի է
իմ քան զաւուրս երկոտասան՝ յորմէ հետէ ելի ե-
12 լեր պագանել յԵրուսաղէմ: Եւ ոչ ի տաճարի անդ
գտին զիս ընդ ումեք խօսեցեալ, եւ կամ ժողովս
13 արարեալ բազմաց, ոչ ի ժողովուրդս Եւ ոչ ի քա-
ղաքի. եւ ոչ յանդիման առնել կարեն քեզ՝ վասն
14 որոյ այժմս չարախօսեն զինէն: Բայց զայս խոստա-
նամ քեզ, եթէ ըստ ճանապարհին՝ զոր ասեն հեր-
ձուած, այնպէս պաշտեմ զհայրենի Աստուածն, հա-
ւատացեալ ամենայնի՝ որ ինչ յօրէնսն եւ ի մարգարէս
15 գրեալ է: Ունիմ յոյս առ Աստուած, որում եւ
դոքա իսկ ակն ունին, թէ յարութիւն լինելոց է ար-
16 դարոց եւ մեղաւորաց: Յորում եւ ես իսկ ճգնիմ,
անխիղճ միտս ունել առ Աստուած եւ առ մարդիկ
17 յամենայն ժամ: Ի բազում ամաց ողորմութիւնս եկի
18 առնել յազգ իմ, եւ ետու պատարագս. Որովք
գտին զիս սրբեալ ի տաճարին՝ ոչ բազմօք եւ ոչ
19 ամբոխիւ: Ոմանք յԱսիացւոց անտի Հրեայք՝ որոց
պարտ էր գալ առաջի քո եւ ամբաստան լինել, եթէ
20 ունիցին ինչ զինէն. Եւ կամ ինքեանք սոքա ասաս-
ցեն, զի՞նչ գտին յիս անիրաւութիւն՝ մինչ դեռ կայի
21 յատենին: Բայց միայն վասն միոյ բարբառոյս այսո-
րիկ՝ զոր աղաղակեցի մինչ կայի ի մէջ նոցա, եթէ
վասն յարութեան մեռելոց դատիմ ես այսօր ի ձէնջ:
22 Եւ յապաղեաց զնոսա Փելիքս, զի ստուգագոյնս գի-
տէր վասն ճանապարհին, ասէ. յորժամ Լիւսիաս
23 հազարապետ իջցէ այսր՝ տեղեկացայց վասն ձեր: Հրա-
մայեաց հարիւրապետին պահել զնա, եւ ունել յընդ-
արձակի, եւ մի զոք յիւրոց անտի արգելուլ ի պաշ-
տելոյ զնա:

24 ԻԲ. Եւ յետ աւուրց ինչ եկն Փելիքս հանդերձ
Դրուսիլաւ կնաւ իւրով, որ էր Հրեայ. կոչեաց
զՊաւղոս եւ լուաւ ի նմանէ վասն որ ի Քրիստոս Յի-

սուս հաւատոցն։ Եւ ի խօսելն նորա վասն արդարու- 25
թեան եւ ժուժկալութեան եւ հանդերձեալ դա-
տաստանին, զահի հարեալ Փելիքս՝ ետ պատասխա-
նի. դու առ այժմ երթ, եւ յորժամ ժամ լինիցի,
կոչեցից զքեզ։ Միանգամայն եւ ակն ունէր՝ թէ տա- 26
ցի ինչ նմա ի Պաւղոսէ. վասն որոյ եւ ստէպ կոչե-
ցեալ զնա՝ խօսէր ընդ նմա։ Եւ ի կատարել երկուց 27
ամաց, եկն փոխանակ Փելիքսի՝ Փեստոս Պորկիոս.
իբրեւ կամեցաւ շնորհս առնել Հրէից Փելիքս,
եթող զՊաւղոս կապեալ։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Փեստոս իբրեւ եհաս յիշխանութիւնն, յետ երից 1
աւուրց ել յԵրուսաղէմ ի Կեսարիայ։ Եւ զգացու- 2
ցին նմա քահանայապետքն եւ գլխաւորք Հրէից
զՊաւղոսէ, Եւ աղաչէին խնդրել շնորհս ի նմանէ, 3
զի կոչեսցէ զնա յԵրուսաղէմ. դարան գործեալ սպա-
նանել զնա ի ճանապարհին։ Իսկ Փեստոս արար պա- 4
տասխանի՝ պահել զնա ի Կեսարիա. թէ ինքն իսկ
ընդ հուպ անդր երթալոց էր։ Եւ որ ի ձէնջ կարողք 5
իցեն, ասէ, ընդ իս իջցեն, եւ եթէ իցէ ինչ յառնն
վնաս՝ ամբաստան լիցին զնմանէ։ Եւ լեալ անդ աւուրս 6
ոչ աւելի քան զութ կամ զտասն, եկն էջ ի Կեսա-
րիա. եւ ի վաղիւ անդր նստեալ յատենի, հրամայեաց
ածել զՊաւղոս։ Եւ իբրեւ եկն՝ կացին շուրջ զնո- 7
վաւ որ յԵրուսաղեմէ իջեալ էին Հրեայքն. բա-
զում եւ ծանր վնաս դնէին՝ զոր ոչ կարէին ցուցա-
նել։ Քանզի առնէր պատասխանի Պաւղոս, եթէ ոչ 8
յօրէնս Հրէից եւ ոչ ի տաճարն եւ ոչ ի կայսր ինչ
վնասակար եմ։ Բայց Փեստոս կամեցեալ Հրէից 9
շնորհս առնել՝ պատասխանի ետ Պաւղոսի եւ ասէ.
կամի՞ս յԵրուսաղէմ ելանել եւ անդ վասն սոցին ի-
րաց դատել առաջի իմ։ Եւ ասէ Պաւղոս. յատենի 10
կայսեր հասեալ կամ, ուր պարտ է ինձ դատել.

Հրէից ինչ չեմ վնասակար, որպէս եւ դու իսկ քաջ
11 գիտես: Ապա թէ վնասակար իցեմ եւ արժանի ինչ
մահու գործեցի, ոչ զանգիտեմ ի մեռանելոյ. իսկ
եթէ ոչ ինչ իցէ՝ զորոց սոքա ամբաստան լինին զի-
նէն, ոչ ոք կարէ զիս դոցա շնորհել. ի կայսր բողո-
12 քեմ: Յայնժամ Փեստոսի խօսեցեալ ընդ խորհըր-
դակցին՝ ապա պատասխանի. ի կայսր բողոքեցեր, առ
կայսր երթիջիր:

13 ԻԳ. Իբրեւ անցին աւուրք ինչ՝ Ագրիպպաս ար-
քայ եւ Բերենիկէ եկին ի Կեսարիա՝ յողջոյն Փես-
14 տոսի: Եւ իբրեւ աւուրս բազումս հանէին անդ,
Փեստոս զեկոյց արքայի զՊաւղոսէ եւ ասէ. այր մի է
15 աստ մնացեալ կապեալ ի Փելիքսէ: Վասն որոյ ի-
բրեւ չոգայ յԵրուսաղէմ, զգացուցին ինձ քահանայա-
պետքն եւ գլխաւորք Հրէիցն. խնդրէին յինէն առնել
16 նմա պատուհաս: Որոց ետու պատասխանի, եթէ չէ
օրէն Հռովմայեցւոց շնորհել ումեք զոք, մինչ չեւ
ամբաստանեալն յանդիման ունիցի զդատախազսն եւ
տեղի պատասխանւոյ առնուցու վասն ամբաստանու-
17 թեանն: Եւ իբրեւ եկին այսր, ոչ ինչ յապաղեցի.
այլ ի վաղիւն նստեալ յատենի՝ հրամայեցի ածել
18 զայրն: Վասն որոյ մատուցեալ ամբաստանիչքն, եւ ոչ
մի ինչ վնաս չարութեան ի մէջ բերէին՝ զորոց ես
19 կարծէի: Բայց խնդիրս ինչ՝ որ վասն իւրեանց պաշ-
տաման ունէին ընդ նմա, եւ վասն Յիսուսի ուրուք
20 մեռելոյ, զորմէ ասէր Պաւղոս թէ կենդանի է: Իբրեւ
յանհնարս մտի վասն այնպիսի իրաց քննութեան,
ասեմ. եթէ կամիցի՞ երթալ յԵրուսաղէմ, եւ անդ
21 դատել վասն նոցին իրաց: Բայց ի Պաւղոսի բողո-
քելն՝ զի պահեսցի ի քաջի արանցն յանդիմանութիւն,
հրամայեցի պահել զնա՝ մինչեւ տաց տանել առ
22 կայսր: Ագրիպպաս ցՓեստոս ասէ. կամէի եւ ես լսել
առնն. եւ նա ասէ՝ վաղիւ լուիցես:

23 ԻԴ. Եւ ի վաղիւ անդր իբրեւ եկն Ագրիպպաս

եւ Բերինիկէ՝ բազում երեւելի սպասուք, եւ մտին
յատեանն հանդերձ հազարապետօքն եւ արամբք պա-
տուաւորօք քաղաքին, եւ հրամայեալ Փեստոսի՝
ածին զՊաւղոս։ Եւ ասէ Փեստոս. արքայ Ագրիպ- 24
պա եւ ամենայն արք՝ որք ընդ մեզ էք, տեսանէք
զսա, վասն սորա ամենայն ժողովք Հրէից ամբաստան
եղեն ինձ յԵրուսաղէմ եւ աստ. աղաղակէին թէ չէ
պարտ դմա կեալ։ Բայց ես ի վերայ հասի թէ ոչ 25
ինչ է դորա արժանի մահու գործեալ. եւ դորա ին-
քնին բողոք կալեալ առ քաջ արանցն, խորհեցայ
յղել։ Վասն որոյ ստուգութեամբ ինչ գրել տեառն 26
իմում ոչ ունիմ. վասն այսորիկ ածի զդա առաջի
ձեր, եւ մանաւանդ առաջի քո, արքայ Ագրիպպա.
որպէս վերստին քննեալ՝ մարթացից ինչ գրել։ Քան- 27
զի անպատեհ իմն թուի ինձ՝ տալ տանել կապեալ
մի, եւ ոչ ինչ վնաս զնմանէ նշանակել։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Եւ Ագրիպպաս ասէ ցՊաւղոս. հրամայեալ է 1
քեզ՝ վասն քո խօսել. յայնժամ Պաւղոսի ձգեալ
զձեռն՝ առնէր պատասխանի։ Վասն ամենայն ամբաս- 2
տանութեան Հրէիցդ զինէն, արքայ Ագրիպպա, հա-
մարիմ զանձն երանելի, զի քո առաջի այսօր տալոց
եմ պատասխանի։ Մանաւանդ զի գիտակ իսկ ես ա- 3
մենայն կրօնից եւ խնդրոց Հրէից. վասն որոյ
աղաչեմ երկայնմտութեամբ լսել ինձ։ Քանզի 4
զկենաց իմոյ՝ որ ի մանկութենէ, ի սկզբանէ լեալ
յազգի իմում յԵրուսաղէմ, տեղեակ են ամենայն
Հրեայք։ Յառաջագոյն գիտեն ի վաղուց հետէ, եթէ 5
կամիցին վկայել, զի ըստ ճշմարտագոյն կրօնից օրի-
նացն մերոց կեցեալ եմ փարիսեցի։ Եւ արդ վասն 6
յուսոյն՝ առ հարսն եղելոյ աւետեացն յԱստուծոյ դա-
տեալ կամ յատենի. Յոր երկոտասան ազգատոհմս 7
մերոյ անդադար զցայգ եւ զցերեկ պաշտեալ ակն ունին

հասանել. վասն որոյ յուսոյ ամբաստանիմ, արքայ, ի
8 Հրէից: Զի՞նչ անհաւատ թուի ձեզ՝ եթէ Աս-
9 տուած զմեռեալս յարուցանէ: Ես իսկ ինքնին պատ-
շաճ համարէի՝ զբազում ինչ հակառակ անուանն
10 Յիսուսի Նազովրեցւոյ գործել: Զոր եւ արարի իսկ
յԵրուսաղէմ. եւ զբազումս ի սրբոցն ես բանտարգել
առնէի, ի քահանայապետիցն առեալ իշխանութիւն.
11 եւ զսպանելոցն նոցա բերէի համար: Եւ ըստ ամե-
նայն ժողովրդոցն՝ բազում անգամ պատժեալ զնոսա՝
բռնադատէի հայհոյել. առաւել եւս մոլեալ ի վե-
րայ նոցա՝ հալածէի մինչեւ յարտաքին քաղաքսն:
12 Որովք գնացեալ ի Դամասկոս՝ իշխանութեամբ եւ
13 հրամանօք քահանայապետիցն, Զմիջաւուրբն ի ճա-
նապարհի տեսի, արքայ, յերկնից առաւել քան զլու-
սաւորութիւն արեգական ծագեալ զինեւ լոյս, եւ
14 զնովօք՝ որ ընդ իսն երթային: Եւ յամենեցուն մեր
անկանել յերկիր, լուայ ձայն, որ ասէր ցիս՝ Եբ-
րայեցւոց բարբառով. Սաւուղ Սաւուղ, զի՞ հա-
լածես զիս. խիստ է քեզ ընդդէմ խթանի աքա-
15 ցել: Եւ ես ասեմ, ո՞վ ես, Տէր. եւ Տէր ասէ.
16 ես եմ Յիսուս՝ զոր դու հալածես: Այլ արի եւ
կաց ի վերայ ոտից քոց. զի վասն այսորիկ երեւե-
ցայ քեզ՝ առնուլ զքեզ ի ձեռն պաշտօնեայ եւ
վկայ՝ որոց տեսերդ զիս եւ որոց երեւեցայց քեզ.
17 փրկել զքեզ ի ժողովրդենէդ եւ ի հեթանոսաց, յորս
18 ես առաքեցից զքեզ. Բանալ զաչս նոցա, դարձու-
ցանել ի խաւարէ ի լոյս, եւ յիշխանութենէ սատա-
նայի յԱստուած. առնուլ նոցա զթողութիւն մեղաց,
19 եւ վիճակ ընդ սուրբս՝ հաւատովքն որ յիս: Ուս-
տի, արքայ Ագրիպպա, ոչ եղէ անհաւան երկնաւոր
20 տեսլեանն. Այլ նախ որոց ի Դամասկոս եւ յԵրու-
սաղէմ էին, եւ ընդ ամենայն գաւառսն Հրէաստանի
եւ ի հեթանոսս պատմեցի՝ զզջանալ եւ դառնալ
յԱստուած կենդանի, արժանի ապաշխարութեան

գործս գործել: Վասն այսորիկ Հրէից կալեալ զիս 21
ի տաճարին, կամէին սպանանել: Օգնութիւն հա- 22
սեալ առ ի յԱստուծոյ՝ մինչեւ ցայսօր կացի վկայեալ
փոքու եւ մեծի. ոչ ինչ արտաքոյ ասել՝ քան զոր
մարգարէքն եւ Մովսէս խօսեցան զհանդերձելոցն
լինելոյ. Եթէ չարչարելոց է Քրիստոսն, եթէ առա- 23
ջին ի յարութենէ մեռելոց՝ լոյս պատմելոց է ժողո-
վրդեանն եւ հեթանոսաց: Եւ նորա զայս պատաս- 24
խանի տուեալ, Փեստոս ի ձայն մեծ ասէ. մոլիս, Պաւ-
ղէ, բազում դպրութիւնք զքեզ ի մոլութիւն դար-
ձուցանեն: Իսկ Պաւղոս ասէ, ոչ մոլիմ, քաջդ Փես- 25
տոս, այլ զցածութեան եւ զճշմարտութեան բանս
բարբառիմ: Գիտակ իսկ է այսորիկ արքայ, ընդ 26
որում եւ համարձակեալդ խօսիմ. քանզի ծածկել
ի քէն ինչ ի սոցանէ՝ չառնում յանձն. զի ոչ եթէ
յանկեան ուրեք գործեալ իցէ այս: Հաւատա՞ս, արքայ 27
Ագրիպպա, մարգարէից. գիտեմ զի հաւատաս: Եւ 28
ասէ Ագրիպպաս ցՊաւղոս. փոքու ինձ հաւանեցու-
ցանես զիս լինել քրիստոնեայ: Եւ Պաւղոս ասէ. 29
խնդրէի յԱստուծոյ եւ փոքու եւ մեծաւ, ոչ միայն
զքեզ, այլ զամենեսեան՝ որ լսեն ինձ այսօր, լինել
այսպիսի որպէս եւ ես եմ, բաց ի կապանաց աստի:
Յոտն եկաց արքայն եւ դատաւորն եւ Բերենիկէ եւ 30
որ ընդ նոսայն նստէին: Եւ իբրեւ գնացին, խօսէին 31
ընդ միմեանս եւ ասէին. թէ ոչ ինչ արժանի մահու
կամ կապանաց գործէ այրս այս: Իսկ Ագրիպպաս 32
ցՓեստոս ասէ. արձակել մարթ էր զայրս զայս, եթէ
ոչ էր բողոքեալ ի կայսր:

ԳԼՈՒԽ ԻԷ.

ԻԷ. Իբրեւ հրամայեցաւ մեզ նաւել յԻտալիա, 1
տային զՊաւղոս եւ զայլս ոմանս կապեալս ցհարիւ-
րապետ մի, որում անուն էր Յուլիոս՝ Սեբաստեան
գնդէն: Եւ ելեալ ի նաւ մի Ադրամիտացի, որ եր- 2

թալոյ էր ի կողմանս Ասիացւոց՝ գնացաք. էր ընդ
մեզ եւ Արիստարքոս Մակեդոն Թեսաղոնիկեցի:
3 Եւ ի վաղիւ անդր իջաք ի Սիդոն. եւ մարդասիրու-
թիւն ցուցեալ Յուլեայ առ Պաւղոս, հրամայեաց
4 առ բարեկամս երթալ եւ դարման գտանել: Եւ ան-
տի ելեալ խոնարհագոյն նաւեցաք ի Կիպրոս՝ վասն
5 հողմոյն ընդդէմ լինելոյ: Յայնժամ ընդ մէջ ծովուն
Կիւլիկեայ եւ Պամփիլեայ նաւեալ՝ իջաք ի Սմիւռայ
6 Լիկիացւոց: Եւ անդ գտեալ հարիւրապետին նաւ
մի Աղեքսանդրացի՝ որ երթայր յԻտալիա, եմոյծ
7 զմեզ անդր: Եւ ի բազում աւուրս ծանրանաւեալք՝
հազիւ հասաք առ Կնիդեաւ. եւ ի չթողացուցանել
զմեզ հողմոյն, նաւեցաք խոնարհագոյն ի Կրետէ առ
8 Սաղմոնեաւ: Հազիւ անցեալ առ նովաւ՝ եկաք ի
տեղի ինչ՝ որ կոչէր Գեղեցիկ նաւահանգիստ, յոր
9 հուպ էր քաղաքն Ղասեայ: Եւ իբրեւ բազում ժա-
մանակք անցանէին, եւ սխալ եւս լինէր նաւելոյն,
եւ վասն այն ինչ եւս պահոցն անցանելոյ, տայր խրատ
10 Պաւղոս, Եւ ասէ ցնոսա. արք, տեսանեմ զի թշնա-
մանօք եւ բազում վնասու՝ ոչ միայն բեռինդ եւ
նաւիդ, այլ եւ անձանց մերոց լինելոց է նաւարկու-
11 թիւնս: Իսկ հարիւրապետն նաւապետին եւ նաւա-
12 վարին առաւել անսայր՝ քան բանիցն Պաւղոսի: Ի-
բրեւ դժպատեհ իսկ թուէր նաւահանգիստն առ ի
ձմերել, բազումք խորհեցան գնալ անտի. թերեւս
կարասցեն հասանել ի Փիւնիկէ՝ ձմերել ի նաւա-
հանգստին Կրետացւոց, որ հայէր ընդ հարաւակողմն
13 եւ ընդ աշխարհն: Եւ ի շնչել հարաւոյն, համարե-
ցան ուր դիմեալն էին՝ հասանել. եւ արկեալ մօտ
14 անցանէին զԿրետէաւ: Եւ ոչ յետ բազում ժամուց՝
անկաւ զնովաւ հողմ ուռուցիկ, որ կոչի Եւրակիւղոն:
15 Ընդ յափշտակել նաւին եւ ի չհանդուրժել ընդ-
դէմ հողմոյն, թոյլ տուեալ երթայաք եւ գայաք:
16 Ի կղզի ինչ դիմեալ՝ որ կոչէր Կղաւդիա. հազիւ կա-

րայաք ըմբռնել զմակոյկն: Զոր առեալ յօգնակա- 17
նութիւն կապէին ընդ նաւն, երկուցեալ թէ գուցէ
ի յորձանուտն անկանիցին. իջուցեալ զառագաստն՝
այնպէս երթային եւ գային: Եւ ի սաստկագոյն վտա- 18
նալոյն մերոյ՝ ի վաղիւ անդր զկարասին ընկեցիկ առ-
նէին: Եւ յերիր աւուր ընդ իւրեանց ձեռն զգործին 19
նաւին ընկեցին: Իբրեւ ոչ արեւ եւ ոչ աստեղք ե- 20
րեւէին ի բազում աւուրս, եւ ձմեռն ոչ սակաւ կայր
ի վերայ, ապա բառնայր ամենայն յոյս փրկութեան
մերոյ. Եւ զի բազում աւուրս նօթի էին. յայնժամ 21
Պաւղոս կացեալ ի մէջ նոցա՝ ասէ. պարտ էր ձեզ,
ով արք, անսալ ինձ եւ ոչ ելանել ի Կրետեայ, եւ
շահել զվիշտս զայս եւ զվնաս: Եւ արդ՝ խրատեմ 22
զձեզ քաջալերել. զի վնաս անձին եւ ոչ միում ի
ձէնջ լինիցի, բայց ի նաւէդ: Քանզի երեւեցաւ ինձ 23
յայսմ գիշերի հրեշտակ Աստուծոյ՝ որոյ եսն եմ եւ
պաշտեմ զնա. Եւ ասէ. մի երկնչիր, Պաւղէ, կայսեր 24
եւս պարտ է քեզ յանդիման լինել. եւ ահա շնոր-
հեալ է քեզ Աստուծոյ զամենեսեան, որ են ընդ
քեզ ի նաւիդ: Վասն այսորիկ քաջալերեցարուք, 25
արք, զի հաւատամ յԱստուած՝ թէ այսպէս լինի՝
զոր օրինակ խօսեցաւ ընդ իս: Բայց ի կղզի ինչ հա- 26
սանէ մեզ անկանել:

ԻԹ. Իբրեւ չորեքտասաներորդ գիշեր լինէր՝ մինչ 27
դեռ ծփէաք ի Ադրին անդունդս, ի մէջ գիշերին
կարծէին նաւավարքն եթէ հասեալ իցեն յաշխարհ
ուրեք: Եւ ընկեցեալ զգունդսն՝ գտին գիրկս քսան. 28
եւ սակաւ ինչ դադարեալ՝ դարձեալ ընկեցին, եւ
գտին գիրկս հնգետասան: Զահի հարեալ թէ գու- 29
ցէ ի խիստ ինչ տեղիս անկանիցին, յետուստ կողմանէ
ընկեցին խարիսխս չորս. ըղձանային այգուն լինելոյ:
Բայց նաւավարքն խնդրէին փախչել ի նաւէ անտի. 30
եւ իջուցեալ զկուրն ի ծով անդր, պատճառանօք՝
որպէս թէ առաջոյ կողմանէ զխարիսխսն ձգելոց իցեն:

31 Ասէ Պաւղոս ցհարիւրապետն եւ ցզօրականսն. եթէ
ոչ դոքա մնան ի նաւիս՝ դուք ապրել ոչ կարէք։
32 Յայնժամ զօրականքն հատին զլարս կրին եւ ի բաց
33 ընկեցին։ Եւ մինչ դեռ այգն կամէր լինել, աղաչէր
Պաւղոս զամենեսեան առնուլ կերակուր, ասէ. այս
չորեքտասաներորդ օր է՝ որում ակն ունիք նօթիս կա-
34 տարել, եւ չէ ինչ ճաշակեալ։ Վասն որոյ աղաչեմ
զձեզ՝ ճաշակել կերակուր, զի այն իսկ վասն ձերոյ
փրկութեան է. զի ոչ ուրուք ի ձէնջ մազ մի ի գլխոյ
35 կորիցէ։ Եւ իբրեւ ասաց զայս, առեալ հաց՝ գոհա-
ցաւ զԱստուծոյ առաջի ամենեցուն, եբեկ եւ սկսաւ
36 ուտել։ Եւ քաջալերեցան ամենեքին, եւ նոքա առին
37 կերակուր։ Եւ էաք ամենայն հոգիք ի նաւին՝ երկե-
38 րիւր եօթանասուն եւ վեց։ Իբրեւ յագեցան կերա-
կրովն, թեթեւացուցին զնաւն՝ թափեալ զցորեանն
39 ի ծով. Եւ իբրեւ այգ եղեւ՝ զերկիրն ոչ ճանա-
չէին, բայց զծոց մի նշմարէին՝ թէ ափն ծովուն
իցէ, յոր խորհէին թէ հնար ինչ իցէ՝ զերծուցանել
40 զնաւն։ Եւ զխարիսխն հատեալ՝ ընկեցին ի ծովն,
թողացուցին զխառնելիս թեւոցն, եւ ի բաց առին
զաւագաստն. եւ ետուն հողմոյն յափն կոյս ծովուն։
41 Անկեալ ի տեղի մի երկծով՝ թիւրեցին զնաւն. եւ
առաջին կողմն նաւին խրեալ՝ անշարժ մնայր, եւ յե-
42 տին կողմն քակէր ի բռնութենէն։ Եւ զօրականացն
խորհուրդ արարեալ՝ զի զկապեալսն սպանցեն, եւ մի՝
43 ոք լուղիցի եւ փախիցէ։ Եւ հարիւրապետն քանզի
կամեցաւ ապրեցուցանել զՊաւղոս՝ արգել զնոսա ի
խորհրդոյն. հրամայեաց զի որ կարողն իցեն լուղել՝
44 անկանիցին նախ, եւ ի ցամաք ելանիցեն. Եւ զայլսն՝
զորս ի տախտակս եւ զորս յայլ ինչ կահ ի նաւէ
անտի. եւ այսպէս եղեւ ամենեցուն փրծանել յեր-
կիր եւ ապրեալք։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Յայնժամ գիտացաք թէ Մելիտինէ էր անուն 1
կղզւոյն. բայց բարբարոսքն շնորհեցին ոչ սակաւ
մարդասիրութիւն մեզ: Քանզի լուցին խարոյկ եւ 2
ընկալան զամենեսին զմեզ վասն անձրեւին որ ստի-
պէր եւ վասն ցրտոյն: Եւ ի ժողովել Պաւղոսի 3
խռիւ ինչ բազում եւ դնել ի վերայ խարուկին,
իժ մի ի ջերմութենէն ելեալ՝ կալաւ զձեռանէ նորա:
Եւ իբրեւ տեսին բարբարոսքն կախեալ զգազանն 4
զձեռանէ նորա, ասէին ցմիմեանս. ուրեմն սպանող է
այրս այս՝ որ թէպէտ եւ ապրեցաւ ի ծովէն, իրա-
ւունքն չետուն կեալ: Եւ նորա թօթափեալ զգա- 5
զանն ի հուրն, եղեւ նմա չար եւ ոչ ինչ: Եւ նոքա 6
ակն ունէին նմա այտնլոյ կամ անկանելոյ եւ յանկար-
ծակի մեռանելոյ. իբրեւ շատ ակն կալեալ, եւ տե-
սանէին թէ ոչ ինչ վնաս եղեւ նմա՝ դարձեալ դար-
ձուցին զբանսն, ասէին թէ աստուած ոմն է: Եւ 7
շուրջ զտեղեաւն զայնուիկ էին գեւղք գլխաւորի
կղզւոյն՝ որում անուն էր Պոպղիոս, որ առ զմեզ յե-
ռաշխի զերիս աւուրս եւ սիրով ընկալաւ: Եւ եղեւ 8
հօրն Պոպղեայ ի ջերմն եւ յախտ թանչից հիւան-
դանալ դնել. առ որ մտեալ Պաւղոս եւ կացեալ
յաղօթս՝ եդ ծունր եւ բժշկեաց զնա: Եւ իբր- 9
եւ այդ եղեւ, այլ հիւանդքն՝ որ էին ի կղզւոջն,
գային եւ բժշկէին. Որք եւ բազում պատուովք պա- 10
տուեցին զմեզ. եւ իբրեւ գնացաք՝ ետուն որ ինչ
պէտք էին:

ԻԲ. Եւ յետ երից ամսոց ելաք ի նաւ մի Աղե- 11
քսանդրացի՝ որ ձմերեալ էր ի կղզւոջն նշանաւորաւ
Դիոսկորացւոց: Եւ իջեալ ի Սիրակուսա՝ եղաք աւ- 12
ուրս երիս: Ուստի գնացեալ հասաք ի Ռեգիոն. եւ 13
յետ աւուր միոյ ի շնչել հարաւոյն, երկօրեայք եկաք
ի Պատիողւս: Ուր եւ գտաք եղբարս՝ աղաչեցեալք 14

ի նոյանէ լինել աւուրս եօթն. եւ ապա եկաք ի
15 Հռովմ: Եւ անտի լուեալ եղբարց զմէնջ՝ ելին ընդ-
առաջ մեր մինչեւ յԱրգոստայն Ապփեայ եւ երիցն
կրպակաց. զորս տեսեալ Պաւղոսի՝ գոհացաւ զԱստու-
16 ծոյ եւ քաջալերեցաւ: Եւ իբրեւ մտաք ի Հռովմ,
հրամայեցաւ Պաւղոսի լինել առանձինն հանդերձ
17 զինուորաւն պահապանաւ իւրով: Եւ եղեւ յետ երից
աւուրց՝ կոչել նմա զՀրէից գլխաւորս. եւ իբրեւ
եկին, ասէ ցնոսա. ես, ա՛րք եղբարք, ոչ ինչ հակառակ
գործեալ ժողովրդեանն կամ կրօնից հայրենեաց,
կապեալ յԵրուսաղեմէ՝ մատնեցայ ի ձեռս Հռով-
18 մայեցւոց: Որք իբրեւ դատեցանն զիս՝ կամեցան ար-
ձակել, վասն եւ ոչ մի ինչ վնաս մահու գտանելոյ
19 յիս: Ի հակառակել Հրէից, հարկ եղեւ բողոքել
ի կայսր, իբրեւ ոչ եթէ զազգէն իմմէ ունէի ինչ չա-
20 րախօսել: Վասն այսր պատճառանաց աղաչեցի
զձեզ՝ տեսանել եւ խօսել. քանզի վասն յուսոյն Իս-
21 րայելի կամ ի շղթայս յայսոսիկ: Եւ նոքա ասեն
ցնա. մեք ո՛չ թուղթս ինչ վասն քո ընկալաք ի
Հրէաստանէ, եւ ո՛չ եկեալ ոք յեղբարց պատմեաց
22 կամ խօսեցաւ ինչ վասն քո չարութիւն: Բայց
աղաչեմք ի քէն լսել՝ թէ զի՞նչ խորհիցիս. զի վասն
հերձուածոյդ այդորիկ յայտ իսկ է մեզ, զի ամենայն
23 ուրեք հակառակութիւն կրէ: Կամ եդեալ նմա օր
մի, եկին ի վանսն առ նա բազումք. որոց պատմէր
վկայութեամբ զարքայութիւն Աստուծոյ, եւ հաւա-
նեցուցանէր զնոսա վասն Յիսուսի, յօրինացն Մով-
24 սիսի եւ ի մարգարէից՝ յայգուէ մինչեւ ցերեկոյ: Եւ
ոմանք հաւանէին բանիցն, եւ կէսք չհաւատային:
25 Եւ անմիաբանք լեալ միմեանց՝ արձակէին, յասելն
Պաւղոսի բան մի, թէ բարւոք խօսեցաւ Հոգին սուրբ
26 ի ձեռն Եսայեայ մարգարէի առ հարսն մեր. Եւ ասէ.
Երթ առ ժողովուրդն եւ ասասցես. լսելով լուիջիք
եւ մի՛ իմասջիք, եւ տեսանելով տեսջիք եւ մի՛ տես-

ջիք։ Զի թանձրացաւ սիրտ ժողովրդեանն այնորիկ, 27
եւ ականջօք իւրեանց ծանունս լուան. եւ զաչս իւ-
րեանց կափուցին, զի մի երբեք տեսցեն աչօք եւ ա-
կանջօքն լուիցեն եւ սրտիւք իմասցին եւ դարձցին,
եւ բժշկեցից զնոսա։ Եւ արդ՝ յայտնի լիցի ձեզ, զի 28
հեթանոսաց առաքեցաւ փրկութիւն Աստուծոյ, նո-
քին եւ լուիցեն։ (Եւ իբրեւ զայս ասաց՝ ի բաց 29
գնացին ի նմանէ Հրեայքն. որք ունէին խնդիրս
բազումս ընդ միմեանս։) Եւ եղեւ զերկեամ մի՝ բո- 30
վանդակ իւրով վարձու. Եւ ընդունէր զամենե- 31
սեան որ մտանէին առ նա։ Քարոզէր զարքայութիւնն 32
Աստուծոյ, եւ ուսուցանէր վասն Տեառն Յիսուսի
Քրիստոսի անխափան՝ ամենայն համարձակութեամբ։

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԵՍ. ՊԱՒՂՈՍ ծառայ Յիսուսի Քրիստոսի,
կոչեցեալ առաքեալ, որոշեալ յաւետարանն Աս-
2 տուծոյ. Որ յառաջ խոստացաւ ի ձեռն մարգարէից
3 իւրոց գրովք սրբովք, Վասն Որդւոյ իւրոյ եղելոյ ի
4 զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ, Սահմանելոյ որդւոյն
Աստուծոյ զօրութեամբ ըստ հոգւոյն սրբութեան. ի
յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն
5 մերոյ. Որով ընկալաք շնորհս եւ առաքելութիւն՝ ի
հնազանդութիւն հաւատոց յամենայն հեթանոսս
6 վասն անուան նորա. Յորս եւ դուք էք կոչեցեալ
7 Յիսուսի Քրիստոսի: Ամենեցուն որոց էք ի Հռովմ,
սիրելեաց Աստուծոյ՝ կոչեցելոց սրբոց, շնորհք ընդ
ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ
8 ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Նախ գոհանամ
զԱստուծոյ իմոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի վասն
ձեր ամենեցուն. զի հաւատք ձեր պատմեալ են ընդ
9 ամենայն աշխարհ: Վկայ է ինձ Աստուած, զոր պաշ-
տեմ հոգւով իմով յաւետարանի Որդւոյ նորա, թէ
10 որպէս զյիշատակս ձեր առնեմ Յամենայն ժամ յա-
ղօթս իմ, աղաչելով զի թերեւս երբեք յաջողեսցի
11 ինձ կամօքն Աստուծոյ գալ առ ձեզ: Քանզի անձ-

կացեալ եմ տեսանել զձեզ, զի փոխեցից ի ձեզ
շնորհս ինչ հոգեւորս՝ առ ի հաստատել զձեզ.
Այսինքն է, մխիթարակից լինել ձեզ վասն ընդ մի- 12
մեանց իմոյ եւ ձերդ հաւատոյ: Ոչ կամիմ եթէ 13
ագէտք իցէք, եղբարք. զի բազում անգամ յօժարեցի
գալ առ ձեզ, եւ արգելայ մինչեւ ցայժմ. զի եւ ի
ձեզ գտից պտուղ ինչ որպէս եւ յայլ հեթանոսս:
Քանզի յունաց եւ բարբարոսաց, իմաստնոց եւ ան- 14
մտից պարտապան եմ, Այնպէս՝ որչափ իմովսանն 15
յօժարութեամբ եւ ձեզ՝ որ ի Հռովմ էք՝ աւետա-
րանել: Զի ոչ եթէ ամօթ ինչ համարիմ զաւետա- 16
րանն. քանզի զօրութիւն Աստուծոյ է ի փրկութիւն
ամենայն հաւատացելոց. նախ հրէի եւ ապա հեթա-
նոսի: Զի արդարութիւն Աստուծոյ նովաւ յայտնի 17
ի հաւատոց ի հաւատս. որպէս եւ գրեալ է եթէ
Արդարն ի հաւատոց կեցցէ:

ՃԳ. Քանզի յայտնելոց է բարկութիւն Աստու- 18
ծոյ յերկնից ի վերայ ամենայն ամբարշտութեան եւ
անիրաւութեան մարդկան, որք զճշմարտութիւնն ան-
իրաւութեամբ ունին: Վասն զի գիտութիւնն Աստու- 19
ծոյ յայտնի է ի նոսա. քանզի Աստուած իսկ յայտ-
նեաց նոցա: Զի աներեւոյթք նորա ի սկզբանէ աշ- 20
խարհի արարածովքս իմացեալ տեսանին. այսինքն
է՝ մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ աստուա-
ծութիւն նորա. զի ոչ գտանիցեն ամենեւին տալ
պատասխանի: Զի ծանեան զԱստուած, եւ ոչ ի- 21
բրեւ զԱստուած փառաւորեցին կամ գոհացան. այլ
նանրացան ի խորհուրդս իւրեանց, եւ խաւարեցան
անմտութեամբ սիրտք նոցա: Զանձինս առ իմաս- 22
տունս ունէին՝ յիմարեցան: Եւ փոխեցին զփառս 23
անեղծին Աստուծոյ՝ ի նմանութիւն պատկերի եղծա-
նելի մարդոյ եւ թռչնոց եւ չորքոտանեաց եւ սողնոց:
Վասն որոյ մատնեաց զնոսա Աստուած ի ցանկու- 24
թիւն սրտից նոցա ի պղծութիւն, անարգել զմարմինս

25 *իւրեանց յանձինս իւրեանց. Որք փոխանակեցին զճշմար-*
տութիւն Աստուծոյ ընդ ստութեան. հնազանդեցան
եւ պաշտեցին զարարածս, եւ ոչ զարարիչն, որ է օր-
26 *հնեալ յաւիտեանս. ամէն։ Վասն այսորիկ մատ-*
նեաց զնոսա Աստուած ի կիրս անարգութեան. զի
էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս ի պէտս ան-
27 *բնականս։ Նոյնպէս եւ արուացն թողեալ զբնական*
պէտս իգութեանն, բորբոքեցան ցանկութեամբք իւ-
րեանց ի միմեանս. արուք ընդ արուս զխայտառա-
կութիւն գործէին, եւ զդարձ փոխարինին՝ որ պարտ
էր մոլորութեանն նոցա, յանձինս իւրեանց ընդու-
28 *նէին։ Եւ որպէս զի ոչ ընտրեցին զԱստուած ունել*
ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած ի միտս
29 *անարգութեան՝ գործել զանարժանս. Զլցեալս ա-*
մենայն անիրաւութեամբ, պոռնկութեամբ, անզգա-
մութեամբ, ագահութեամբ, չարութեամբ, լի նա-
խանձու, սպանութեամբ, հեռիւ, նենգութեամբ, չա-
30 *րաբարութեամբ, շոգմոգք, Չարախօսք, աստուածա-*
տեացք, թշնամանողք, ամբարտաւանք, ամբարհաւ-
31 *անք, գտիչք չարեաց, զծնողս անարգուք. Անմիտք,*
ուխտադրուժք, անագորոյնք, աննուէրք, անողորմք։
32 *Ոյք հասեալ էին յԱստուծոյ իրաւանցն վերայ, եթէ*
ոյք զայսպիսին գործեն՝ արժանի են մահու. եւ ոչ
միայն որ զայն առնեն, այլ եւ որ կամակիցն լինին
գործելեացն։

ԳԼՈՒԽ Բ.

1 *Վասն որոյ առանց պատասխանի տալոյ ես, ո՛վ*
մարդ, որ դատիդ։ Զի որով դատիս զընկերն,
զանձն քո դատապարտես, զի դու զնոյն գործես՝
որով դատիսն։
2 *Ըփ. Քանզի գիտեմք, եթէ Աստուծոյ դատաս-*
տանն ճշմարտութեամբ է ի վերայ այնոցիկ՝ որ զայն-
3 *պիսին գործեն։ Իսկ արդ՝ խորհիցիս զայս, ո՛վ մարդ,*

որ դատիս զայնոսիկ՝ որ զայնպիսին գործեն, եւ դու
զնոյն գործես, եթէ դու ապրելոց իցես ի դատաստա-
նացն Աստուծոյ: Եթէ զմեծութեամբ քաղցրութեան 4
նորա եւ զներելովն եւ զերկայնմտութեամբն արհա-
մարհիցես, չգիտիցե՞ս՝ զի քաղցրութիւնն Աստուծոյ
զքեզ յապաշխարութիւն ածէ: Այլ ըստ խստու- 5
թեան քում եւ ըստ անզեղջ սրտի՝ գանձես անձին
քում բարկութիւն՝ յաւուր բարկութեան եւ յայ-
տնութեան արդար դատաւորութեան Աստուծոյ: Որ 6
հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործս իւրեանց. Որ 7
համբերութեամբ են ի գործս բարութեան, եւ զփառս
եւ զպատիւ եւ զանեղծութիւն խնդրեն, զկեանսն
յաւիտենից. Իսկ որ ի հակառակութենէ անտի են, 8
եւ ապստամբք ի ճշմարտութենէն, եւ զհետ երթեալ
զանիրաւութեան, բարկութիւն եւ սրտմտութիւն.
Նեղութիւն եւ անձկութիւն ի վերայ ամենայն մար- 9
դոյ՝ որ գործէ զչար, նախ Հրէին եւ ապա հեթանոսի.
Փառք եւ պատիւ եւ խաղաղութիւն ամենայնի՝ որ 10
գործէ զբարի, նախ Հրէին եւ ապա հեթանոսի: Զի 11
ոչ է ակնառութիւն առաջի Աստուծոյ:

ԱԵ. Որք միանգամ արտաքոյ օրինացն մեղան, 12
արտաքոյ օրինացն եւ կորնչին. եւ որք ընդ օրինօքն
մեղան, օրինօքն եւ դատեսցին: Զի ոչ եթէ որ լսե- 13
լիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ,
այլ առնելիք օրինացն արդարասցին: Այլ յորժամ 14
հեթանոսք՝ որ զօրէնս ոչ ունին, բնութեամբ զօրի-
նացն գործիցեն, նոքա՝ որ զօրէնսն ոչ ունին, անձանց
իւրեանց իսկ են օրէնք: Որք ցուցանեն զգործս օրի- 15
նացն գրեալ ի սիրտս իւրեանց՝ վկայութեամբ մտաց
իւրեանց, եւ յանդիմանել զմիմեանս ի խորհրդոց
իւրեանց, կամ թէ պատասխանի իսկ տալ, Յաւուրն 16
յորում դատիցի Աստուած զգաղտնիս մարդկան՝ ըստ
աւետարանիս իմոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի:
Ապա եթէ դու Հրեայ անուանեալ ես, եւ յեցեալ 17

18 ես յօրէնսն, եւ պարծիս յԱստուած, Եւ գիտես
զկամս նորա, եւ ընտրես զլաւն, եւ խրատեալ ես յօ-
19 րինացն. Վստահ ես յանձն քո առաջնորդ լինել
20 կուրաց, լոյս խաւարելոց, Խրատիչ անզգամաց, վար-
դապետ տղայոց, ունել զկերպարանս գիտութեան եւ
21 ճշմարտութեան օրինացն: Իսկ արդ՝ որ ուսուցանես
զընկերն, զանձն քո ոչ ուսուցանես. որ քարոզես չգո-
22 ղանալ, գողանաս. Որ ասես չշնալ, շնաս. որ գարշիս
23 ի մեհենաց, զսեղանս կողոպտես. Որ օրինօքն պար-
ծիս, յանցանել ըստ օրէնսն զԱստուած անարգես:
24 Զի անուն Աստուծոյ վասն ձեր հայհոյի ի մէջ հե-
թանոսաց, որպէս եւ գրեալ է:
25 ԱՅ. Թլփատութիւն օգնէ՝ եթէ զօրէնսն պահի-
ցես. ապա եթէ յանցաւոր օրինացն իցես, թլփատու-
26 թիւն քո անթլփատութիւն եղեւ: Իսկ եթէ ան-
թլփատութիւնն զիրաւունս օրինացն պահիցէ, ո՞չ ա-
պաքէն անթլփատութիւնն նորա ի թլփատութիւն հա-
27 մարեսցի. Եւ դատիցի՝ որ ի բնէ անթլփատութիւնն
է զօրէնսն կատարելով՝ զքեզ, որ գրովն եւ թլփա-
28 տութեամբն յանցաւոր օրինացն իցես: Զի ոչ եթէ
որ յայտնի հրեայն է, եւ ոչ որ յայտնի մարմնով
29 թլփատութիւնն. Այլ որ ի ծածուկ հրեայն է, եւ
թլփատութիւն սրտի հոգւով եւ ոչ գրով. որոյ գո-
վութիւն ոչ ի մարդկանէ է, այլ յԱստուծոյ:

ԳԼՈՒԽ Գ.

1 Իսկ արդ՝ զի՞նչ աւելի է հրէին, կամ զի՞նչ
2 օգուտ ի թլփատութենէ անտի: Բազում ինչ ամե-
նայն իրօք. Նախ այն իսկ՝ զի հաւատարիմ եղեն պատ-
3 գամքն Աստուծոյ: Իսկ արդ՝ եթէ չէր հաւատացեալ
ոմանց, միթէ անհաւատութիւն նոցա զԱստուծոյ
4 հաւատսն խափանէ՞ր. քաւ լիցի: Արդ՝ եղիցի Աս-
տուած ճշմարիտ, եւ ամենայն մարդ՝ սուտ. որպէս եւ
գրեալ է. Որպէս արդար եղիցես ի բանս քո, եւ յաղ-

Թեսցես ի դատել քեզ։ Իսկ արդ՝ եթէ ապիրատու- 5
թիւնն մեր զԱստուծոյ արդարութիւնն յանդիման կա-
ցուցանէ, զի՞նչ ասեմք. միթէ անիրաւ ինչ է Ա-
ստուած՝ որ ածէ զբարկութիւնն, Ըստ մարդկութեան 6
ասեմ. քաւ լիցի. ապա թէ ոչ՝ զիա՞րդ դատի Աստու-
ած զաշխարհ։ Զի եթէ ճշմարտութիւնն Աստուծոյ 7
յիմում ստութեանն առաւելաւ ի փառս նորա, զի՞
եւս ես իբրեւ զմեղաւոր դատիմ։ Եւ կամ թէ՝ որ- 8
պէս հայհոյիմքն, եւ որպէս ասեն զմէնջ ոմանք ասել,
թէ արասցուք զչար՝ զի եկեսցէ բարի. որոց դատաս-
տանքն յիրաւի են։ Եւ արդ՝ ի՞ւ իւիք առաւել 9
իցեմք. ապաքէն եւ ոչ իւիք. քանզի յառաջագոյն
իսկ մեղադիր եղեաք Հրէից եւ հեթանոսաց՝ ամենե-
ցուն ընդ մեղօք լինելոյ։ Որպէս եւ գրեալ է. թէ 10
ոչ ոք է արդար եւ ոչ մի. Եւ ոչ ոք է՝ որ իմանայ, 11
եւ ոչ ոք է՝ որ խնդրէ զԱստուած։ Ամենեքեան խո- 12
տորեցան, ի միասին անպիտանացան. ոչ ոք է որ առ-
նէ զքաղցրութիւն, եւ ոչ ոք է մինչեւ ի մի։ Գե- 13
րեզման բաց է կոկորդ նոցա, լեզուօք իւրեանց նեն-
գաւորք եղեն. Թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա։
Որոց բերանք անիծիւք եւ դառնութեամբ լի են։ 14
Երագ են ոտք նոցա հեղուլ զարիւն. Բեկումն եւ 15
Թշուառութիւն ի ճանապարհս նոցա. Եւ զճանա- 16
պարհն խաղաղութեան ոչ ծանեան։ Ոչ է երկիւղ 17
Աստուծոյ առաջի աչաց նոցա։ 18

ԲՓ. Բայց գիտեմք՝ որ ինչ միանգամ օրէնքն 19
ասեն, այնոցիկ որ ընդ օրինօքն են, ասեն. զի ամենայն
բերան խցցի, եւ դատապարտ լիցի ամենայն աշխարհ
Աստուծոյ։ Զի ի գործոց օրինաց ոչ արդարասցի 20
ամենայն մարմին առաջի նորա. քանզի օրինօքն է
գիտութիւն մեղաց։ Բայց արդ՝ առանց օրինացն իսկ 21
արդարութիւնն Աստուծոյ յայտնեալ է՝ վկայեալ յօ-
րինաց անտի եւ ի մարգարէից։ Քանզի արդարու- 22
թիւնն Աստուծոյ ի հաւատոց անտի Յիսուսի Քրիս-

տուի յամենայն հաւատացեալս. եւ ոչ ինչ է խտիր·
23 Քանզի ամենեքեան մեղան. եւ նուազեալ են ի փա-
24 ռացն Աստուծոյ: Եւ արդարանան ձրի նորին շնոր-
հօք ի ձեռն փրկութեանն՝ որ ի Քրիստոս Յիսուս:
25 Զոր յառաջն եդ Աստուած քաւութիւն ի ձեռն
հաւատոցն արեամբն նորա, ի հանդէս արդարութեան
նորա վասն թողութեան յառաջագոյն մեղացն գոր-
26 ծելոց, Ի ներելն Աստուծոյ՝ ի հանդէս արդարութեանն
նորա ի ժամանակի յայսմիկ. զի եղիցի նա արդար,
եւ արդարացուցէ զայն՝ որ ի հաւատոցն Յիսուսի:
27 Իսկ արդ ո՞ւր են պարծանքն, արգելան. յորո՞ց օրի-
նաց, ի գործո՞ց անտի. ոչ, այլ ի հաւատոցն օրինաց:
28 Քանզի համարիմք հաւատովք արդարանալ մարդոյ՝
29 առանց գործոց օրինաց: Եթէ Հրէի՞ց միայն իցէ
Աստուած, եւ հեթանոսաց ոչ. այո՛ եւ հեթանոսաց:
30 Զի եթէ մի է Աստուած՝ որ արդարացուցանէ զթլփա-
տութիւն ի հաւատոց, ապա եւ զանթլփատութիւնն
31 նովին հաւատովք: Արդ զօրէնս ի՞նչ խափանե՞մք
հաւատովքս, քաւ լիցի. այլ զօրէնս հաստատեմք:

ԳԼՈՒԽ Դ.

1 ԲԶ. Իսկ արդ՝ զի՞նչ ասիցեմք զգտանելն Աբրա-
2 համու նահապետին մերոյ ըստ մարմնոյ: Զի եթէ
Աբրահամու գործովք էր արդարացեալ, ունել ու-
3 նէր պարծանս, այլ ոչ առ Աստուած: Իսկ զի՞նչ
ասիցէ գիր. Հաւատաց Աբրահամ յԱստուած, եւ
4 համարեցաւ նմա յարդարութիւն: Բայց այնմ՝ որ
գործիցէն, ոչ համարին վարձքն ըստ շնորհաց, այլ
5 ըստ պարտեաց: Իսկ այնմ՝ որ ոչն գործիցէ, բայց հա-
ւատայցէ յայն՝ որ արդարացուցանէ զամբարիշտս,
6 համարին հաւատք նորա յարդարութիւն: Որպէս եւ
Դաւիթ ասէ զերանութիւն մարդոյ՝ որում Աստու-
7 ած համարի արդարութիւն առանց գործոց: Երանի
որոց թողան անօրէնութիւնք, եւ որոց ծածկեցան

մեղք իւրեանց: Երանեալ է այր՝ որում ոչ համա- 8
րեսցի Տէր զմեղս նորա: Արդ երանութիւնս այս ի 9
վերայ թլփատութեա՞ն է, թէ ի վերայ անթլփա-
տութեան. քանզի ասեմք՝ եթէ համարեցաւ Աբրա-
համու հաւատքն յարդարութիւն: Արդ զիա՞րդ հա- 10
մարեցաւ. մինչ դեռ ի թլփատութեա՞ն էր՝ եթէ յան-
թլփատութեան. ոչ ի թլփատութեանն, այլ յան-
թլփատութեանն: Եւ նշանակ առ զթլփատութիւնն, 11
կնիք արդարութեան հաւատոյ՝ որ յանթլփատու-
թեանն էր. զի եղիցի նա հայր ամենայն հաւա-
տացելոց՝ որ յանթլփատութեանն իցեն, առ ի
համարելոյ եւ նոցա արդարութիւն. Եւ հայր թլփա- 12
տութեան՝ որոց ոչ ի թլփատութենէ անտի եւեթ,
այլ եւ որոց երթայցեն ընդ հետս անթլփատութեան
հաւատոց հօր մերոյ Աբրահամու:

ԳԳ. Զի ոչ եթէ օրինօքն են աւետիքն Աբրա- 13
համու եւ զաւակի նորա՝ ժառանգ լինել աշխարհի,
այլ ի հաւատոցն արդարութենէ: Զի եթէ որք յօ- 14
րինացն են, ժառանգ իցեն. ապա ընդունայն են հա-
ւատքն եւ դատարկ աւետիքն: Քանզի օրէնքն զբար- 15
կութիւն գործեն. բայց ուր ոչ են օրէնք, եւ ոչ
յանցանք ինչ: Վասն այնորիկ ի հաւատոյ անտի, 16
զի ըստ շնորհացն իցէ. առ ի լինելոյ հաստատուն
աւետեացն ամենայն զաւակին. ոչ այնմ միայն՝ որ յօ-
րինաց անտի, այլ եւ այնմ՝ որ ի հաւատոցն Աբրա-
համու, որ է հայր մեր ամենեցուն. Որպէս եւ գրեալ 17
է, թէ Հայր ազգաց բազմաց արարի զքեզ առաջի
Աստուծոյ, որում հաւատացն եթէ կենդանի առնէ
զմեռեալս եւ կոչէ զչգոյն իբրեւ զգոյ: Որ յանյոյս 18
յուսով հաւատաց լինել նմա հայր ազգաց բազմաց.
որպէս եւ ասացաւն, թէ Այնպէս եղիցի զաւակ քո:
Եւ նա ոչ երկմտեաց ի հաւատոցն. թէպէտ եւ 19
հայեցաւ ի մարմին իւր այնուհետեւ իբրեւ ի մեռեալ,
քանզի զհարիւրամենիւք ուրեմն էր, եւ ի մեռելու-

20 թիւն արգանդին Սառայի: Բայց յաւետեացն Աս-
տուծոյ ոչ երկմտեաց անհաւատութեամբ. այլ զօ-
21 րացաւ հաւատովք, ետ փառս Աստուծոյ. Եւ հա-
տատեցաւ ի միտս իւր, թէ որ խոստացաւն՝ կարող
22 է առնել: Վասն որոյ համարեցաւ նմա յարդարու-
23 թիւն: Այլ ոչ գրեցաւ, ոչ եթէ վասն նորա միայն՝
24 թէ համարեցաւ նմա: Այլ եւ վասն մերոց հա-
մարելոց է, որք հաւատամք յայն՝ որ յարոյցն զՅի-
25 սուս զՏէր մեր ի մեռելոց: Որ մատնեցաւ վասն
յանցանաց մերոց, եւ յարեաւ վասն զմեզ արդա-
րացուցանելոյ:

ԳԼՈՒԽ Ե.

1 ՎԵՐՋ. Այսուհետեւ արդարացեալք ի հաւատոց
անտի, խաղաղութիւն կալցուք առ Աստուած ի ձեռն
2 Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որով եւ զընծայու-
թիւնն ընկալաք հաւատովք ի շնորհս յայսոսիկ՝ յո-
րում կամք, եւ պարծիմք յուսով փառացն Աստուծոյ:
3 Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք եւս ի նե-
ղութիւնս մեր. քանզի գիտեմք, եթէ նեղութիւնք
4 զհամբերութիւն գործեն, համբերութիւն զհանդէս,
5 հանդէս զյոյս. Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ. զի
սէրն Աստուծոյ սփռեալ է ի սիրտս մեր ի ձեռն Հո-
6 գւոյն սրբոյ՝ որ տուաւ մեզ: Զի մինչ դեռ տկարքն
էաք, Քրիստոս վասն մեր ի ժամանակի ի վերայ ամ-
7 բարշտաց մեռաւ: Զի վասն արդարոյ հազիւ ոք թէ
մեռանիցի. այլ վասն բարւոյ թերեւս համարձակիցի
8 ոք մեռանել: Յայտնեաց Աստուած զսէրն իւր ի
9 մեզ. զի մինչ դեռ մեղաւորքն էաք, Քրիստոս վասն
մեր մեռաւ. Որչափ եւս առաւել յարդարանալս մե-
րում այժմիկ արեամբն նորա՝ ապրեսցուք նովաւ ի
10 բարկութենէ անտի: Զի եթէ մինչ թշնամիքն էաք՝
հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ Որդւոյ նորա,
որչափ եւս առաւել ի հաշտելս մերում՝ ապրեսցուք

կենօքն նորա: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ պարծիմք 11
եւս յԱստուած ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, որով եւ զհաշտութիւնն իսկ ընկալաք:
ԳԶ. Զի որպէս ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ 12
մտին եւ ի մեղաց անտի մահ, եւ այնպէս յամենայն
մարդիկ տարածեցաւ մահ՝ որով ամենեքեան մեղան:
Քանզի մինչեւ յօրէնսն մեղք էին յաշխարհի. բայց 13
մեղք ոչ համարէին, ուր օրէնք ոչ իցեն: Այլ թագա- 14
ւորեաց մահ յԱդամայ մինչեւ ի Մովսէս, եւ ի վերայ
չյանցուցելոցն, ըստ նմանութեան յանցուածոյն Ա-
դամայ, որ է օրինակ հանդերձելոցն: Այլ ոչ որպէս 15
յանցանքն՝ նոյնպէս եւ շնորհքն. զի եթէ միոյն յան-
ցանօք բազումք մեռան, ո՞րչափ եւս առաւել շնորհքն
Աստուծոյ եւ պարգեւք շնորհօք միոյն մարդոյ Յի-
սուսի Քրիստոսի ի բազումս առաւելան: Եւ ոչ որ- 16
պէս ի միոջէ յանցուցելոյն պարգեւքս. զի դատաս-
տանն ի միոջէ յանցուածոց անտի ի դատապարտու-
թիւն. այլ շնորհքն ի բազմաց յանցուածոյն յար-
դարութիւն: Զի եթէ ի միոյն յանցանաց մահ թա- 17
գաւորեաց միովն, ո՞րչափ եւս առաւել որք զառաւե-
լութիւն շնորհաց եւ զպարգեւաց արդարութեանն
առնուցուն, կենօք թագաւորեսցեն ի ձեռն միոյն
Յիսուսի Քրիստոսի: Ապա ուրեմն որպէս միոյն յան- 18
ցանօք յամենայն մարդիկ դատապարտութիւն, նոյն-
պէս եւ միոյն արդարութեամբն յամենայն մարդիկ
արդարութիւն կենաց: Զի որպէս անհնազանդու- 19
թեամբ միոյն մարդոյ՝ մեղաւորք բազումք եղեն. նոյն-
պէս եւ հնազանդութեամբ միոյն, արդարք բազումք
եղիցին: Բայց օրէնք ի ներքս անկան, զի յանցանքն 20
բազմասցին. զի ուր առաւել եղեն մեղքն, առաւել
եւս յաւելան շնորհքն: Զի որպէս թագաւորեցին 21
մեղքն ի մահու անդ, նոյնպէս եւ շնորհքն թագա-
ւորեսցեն արդարութեամբ ի կեանս յաւիտենից ի
ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:

ԳԼՈՒԽ Զ.

1 ՎԵՐՋ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք, յաճախեսցո՞ւք
2 ի մեղսն՝ զի շնորհքն բազմասցին: Քա՛ւ լիցի. որք մե-
ռաք մեղացն, զիա՞րդ տակաւին ի նմին կեցցեմք:
3 Եթէ ո՞չ գիտէք՝ զի որ միանգամ մկրտեցաք ի
Քրիստոս Յիսուս՝ ի մահ անդր նորա մկրտեցաք:
4 Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ, զի որ-
պէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօք Հօր, նոյն-
5 պէս եւ մեք ի նորոգութիւն կենաց շրջեսցուք: Զի եթէ
անկակից եղեաք նմանութեան մահու նորա, այլ եւ
6 յարութեան նորա լինիցիմք: Զայս գիտասջիք՝ զի
հին մարդն մեր խաչակից եղեւ նորա, զի խափանեսցի
մարմին մեղացն, մի եւս ծառայել մեզ մեղացն:
7 Զի որ մեռանիցի՝ արդարացեալ է ի մեղաց անտի.
8 Իսկ եթէ մեռաք ընդ Քրիստոսի, հաւատամք թէ
9 եւ կեցցուք ընդ նմա: Գիտեմք եթէ Քրիստոս յա-
րուցեալ է ի մեռելոց. այսուհետեւ ոչ մեռանի, եւ
10 մահ նմա ոչ եւս տիրէ: Զի որ մեռաւն՝ մեղացն մե-
ռաւ մի անգամ, եւ որ կենդանին է՝ կենդանի է
11 Աստուծոյ: Նոյնպէս եւ դուք համարեսջիք զանձինս
մեռեալս մեղացն, եւ կենդանիս Աստուծոյ ի Քրիս-
տոս Յիսուս ի Տէր մեր:
12 ԳԿ. Մի այսուհետեւ թագաւորեսցեն մեղք ի
մահկանացու մարմինս ձեր՝ հնազանդել ցանկու-
13 թեանց նորա: Եւ մի պատրաստէք զանդամս ձեր
զէն անիրաւութեան մեղացն. այլ պատրաստեցէք
զանձինս ձեր Աստուծոյ՝ որպէս ի մեռելոց ի կենդա-
նիս. եւ զանդամս ձեր զէն արդարութեանն Աստուծոյ:
14 Զի մեղք ձեզ ոչ տիրեսցեն. քանզի ոչ էք ընդ
15 օրինօք, այլ ընդ շնորհօք: Իսկ արդ՝ զիա՞րդ. մեղի-
ցո՞ւք՝ զի չեմք ընդ օրինօք, այլ ընդ շնորհօք. քա՛ւ
16 լիցի. Ո՞չ գիտէք՝ եթէ որում պատրաստէք զանձինս
ձեր ծառայս ի հնազանդութիւն, ծառայ էք՝ որում

հնազանդիք, եթէ մեղաց՝ ի մահ, եւ եթէ ի հնա-
զանդութիւն արդարութեան՝ ի կեանս: Այլ շնորհք 17
Աստուծոյ. զի էիք ծառայք մեղաց՝ հնազանդեցա-
րուք ի սրտէ՝ որում աւանդեցայք յառակ վարդա-
պետութեան: Արդ ազատացեալք ի մեղաց՝ ծա- 18
ռայեցէք արդարութեանն: Մարդկօրէն ասեմ վասն 19
տկարութեան մարմնոյ ձերոյ. զի որպէս պատրաստե-
ցէք զանդամս ձեր ծառայս պղծութեան եւ անօրէ-
նութեան յանօրէնութիւն, նոյնպէս եւ այժմ պատ-
րաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարութեան ի
սրբութիւն: Զի մինչ ծառայքն էիք մեղաց, ազա- 20
տացեալք էիք յարդարութենէն: Իսկ արդ զի՞նչ 21
պտուղ ունէիք յայնժամ, որովք այժմդ զամօթի
հարեալ էք. զի վախճան նոցա մահ է: Բայց արդ 22
ազատացեալք ի մեղացն եւ ծառայեալք Աստուծոյ՝
ունիք զպտուղ ձեր ի սրբութիւն, եւ վախճան նորա
կեանք յաւիտենից: Զի թոշակն մեղաց մահ է. այլ 23
շնորհք Աստուծոյ կեանք յաւիտենից ի Քրիստոս
Յիսուս ի Տէր մեր:

ԳԼՈՒԽ Է.

ԻԹ. Եթէ ո՞չ գիտէք, եղբարք, զի ընդ գիտունս 1
օրինացն խօսիմ. զի օրէնք տիրեն մարդոյ՝ որչափ ժա-
մանակս կենդանի իցէ: Քանզի կին առնակին ի կեն- 2
դանի այր իւր կապեալ կայ օրինօք. իսկ եթէ մեռա-
նիցի այրն, արձակեալ է յօրինաց առնն: Ապա ուրեմն 3
մինչ կենդանի է այրն, շուն կոչի՝ եթէ լինիցի առն
այլում. եւ եթէ մեռանիցի այրն՝ ազատ է յօրինացն,
չհամարեալ շուն՝ եթէ լինիցի առն այլում: Այսու- 4
հետեւ եւ դուք, եղբարք, մեռարուք օրինացն մար-
մնովն Քրիստոսի, լինել այլում՝ որ ի մեռելոց յա-
րուցեալ է, զի պտղաբերք լիցուք Աստուծոյ: Քան- 5
զի մինչ էաքն մարմնով, կարիք մեղաց՝ որ օրինօքն
էին, զօրանային յանդամս մեր, առ ի պտղաբեր առ-

6 նելոյ զմեզ մահու։ Բայց այժմ դատարկացաք յօ-
րինաց անտի. քանզի մեռաք այնմիկ՝ որով ըմբռ-
նեալն էաք, առ ի ծառայել մեզ նորոգութեամբ
7 հոգւոյն, եւ ոչ հնութեամբ գրոյն։ Իսկ արդ՝ զի՞նչ
ասեմք. օրէնքն մե՞ղք իցեն. քաւ լիցի. այլ զմեղս
ոչ գիտէի, եթէ ոչ օրինօքն. եւ զցանկութիւն ոչ
ճանաչէի, եթէ ոչ օրինացն էր ասացեալ՝ մի ցանկա-
8 նայցես։ Պատճառս առին մեղքն պատուիրանաւն,
եւ գործեցին յիս զամենայն ցանկութիւն. զի առանց
9 օրինաց մեղքն մեռեալ էին։ Եւ ես առանց օրինացն
երբեմն էի կենդանի. այլ իբրեւ եհաս յիս պատուի-
10 րանն, մեղքն կենդանացան. Եւ ես մեռայ, եւ գտաւ
11 ինձ պատուիրանն՝ որ ի կեանս էր, նոյն ի մահ։ Զի
մեղացն պատճառս առեալ պատուիրանաւն՝ խաբե-
ցին զիս, եւ նովին սպանին։

12 ԳԶ. Այսուհետեւ օրէնքն սուրբ են, եւ պա-
13 տուիրանն՝ սուրբ եւ արդար եւ բարերար։ Իսկ արդ՝
ինձ բարին մա՞հ եղեւ. քաւ լիցի. այլ մեղքն. զի
երեւեսցին մեղքն բարեաւն գործել ինձ զմահ, զի
եղիցին ըստ առաւելութեան մեղքն մեղաւոր ի ձեռն
14 պատուիրանին։ Գիտեմք զի օրէնքն հոգեւոր են,
15 այլ ես մարմնաւոր եմ, ընդ մեղօք վաճառեալ։ Զի
զոր գործեմն՝ ոչ գիտեմ. ոչ եթէ զոր կամիմն՝ զայն
16 առնեմ, այլ զոր ատեամն՝ զայն գործեմ։ Ապա թէ
զոր ոչն կամիմ՝ զայն առնեմ, վկայեմ օրինացն՝ եթէ
17 բարւոք են։ Այլ արդ ոչ եթէ ես գործեմ զայն,
18 այլ բնակեալ յիս մեղքն։ Գիտեմ զի ոչ բնակեալ
է յիս, այսինքն ի մարմնի իմում, բարի ինչ. զի կամքն
19 առաջի կան ինձ, եւ առնել զբարին՝ ոչ։ Զի ոչ
եթէ զոր կամիմ զբարին՝ առնեմ, այլ զոր ոչն կա-
20 միմ զչարն, զայն գործեմ։ Ապա եթէ զոր ոչն կա-
միմ՝ զայն առնեմ, ոչ եւս ես առնեմ զայն, այլ
21 բնակեալ յիս մեղքն։ Եւ արդ գտանեմ զօրէնս
այնորիկ՝ որ կամիցին առնել յիս զբարին. եւ ինձ

չարն առաջի կայ. Հաճեալ եմ ընդ օրէնսն Աստու- 22
ծոյ ըստ ներքին մարդոյն. Բայց տեսանեմ այլ օրէնս 23
յանդամս իմ, զինեալ հակառակ օրինաց մտաց իմոց.
եւ գերեալ զիս օրինօքն մեղաց՝ որ են յանդամս իմ:
Այր մի տառապեալ եմ ես. ո՞վ ապրեցուսցէ զիս 24
ի մարմնոյ աստի մահու: Այլ շնորհքն Աստուծոյ ի 25
ձեռն Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:

ԿԶ. Արդ ուրեմն ես ինքնին մտօք իմովք ծառայ-
եմ օրինացն Աստուծոյ, եւ մարմնովս՝ օրինացն մեղաց:

ԳԼՈՒԽ Ը.

Թէ այդպէս իցէ, ոչ ինչ դատապարտութիւն է 1
այնոցիկ՝ որ ի Քրիստոս Յիսուս, որ ոչ գնան ըստ
մարմնոյ: Զի օրէնք հոգւոյն կենաց ի Քրիս- 2
տոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց մեղացն եւ
մահու: Զի որ անհնարինն էր օրինացն՝ որով 3
տկարանայր մարմնով, Աստուած զՈրդին իւր ա-
ռաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց եւ վասն
մեղաց, եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ:
Զի արդարութիւն օրինացն կատարեսցի ի մեզ, որք 4
ոչ ըստ մարմնոյ գնայցեմք, այլ ըստ հոգւոյն: Զի 5
որք ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին, եւ որք
ըստ հոգւոյն՝ զհոգւոյն: Զի խորհուրդ մարմնոյ՝ մահ 6
է. եւ խորհուրդ հոգւոյն, կեանք եւ խաղաղութիւն:
Քանզի խորհուրդ մարմնոյ թշնամութիւն է յԱս- 7
տուած, զի օրինացն Աստուծոյ ոչ հնազանդի. նա եւ
կարէ իսկ ոչ: Զի որ մարմնովքն են, Աստուծոյ հաճոյ 8
լինել ոչ կարեն: Բայց դուք ոչ էք մարմնով, այլ 9
հոգւով, եթէ իցէ հոգին Աստուծոյ ի ձեզ բնակեալ.
ապա եթէ ոք զհոգի Քրիստոսի ոչ ունի, նա չէ
նորա: Իսկ եթէ Քրիստոս ի ձեզ է, ապա մարմին 10
մեռեալ է վասն մեղաց. եւ հոգին կենդանի է վասն
արդարութեան: Եթէ հոգի այնորիկ՝ որ յարոյց 11
զՅիսուս ի մեռելոց, բնակեալ է ի ձեզ. ապա եւ որ

յարոյցն զՔրիստոս ի մեռելոց՝ կենդանա-
ցուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ Հո-
գւոյն իւրով ի ձեզ:
12 ՎԵՐՋ. Այսուհետեւ, եղբարք, պարտապան եմք
13 ոչ մարմնոյ՝ ըստ մարմնոյ կեալ: Զի եթէ ըստ մար-
մնոյ կեայք, մեռանելոց էք. իսկ եթէ Հոգւով զգործս
14 մարմնոյ սպանանիցէք, կեցջիք: Զի որ Հոգւովն Ա-
15 ստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ: Զի ոչ
առէք զհոգին ծառայութեան միւսանգամ յերկիւղ,
այլ առէք զհոգին որդեգրութեան, որով աղաղա-
16 կեմք աբբայ, հայր: Նոյն ինքն հոգին վկայէ հոգւոյս
17 մերում, եթէ եմք որդիք Աստուծոյ: Եւ եթէ որ-
դիք, ապա եւ ժառանգք. ժառանգք Աստուծոյ, եւ
ժառանգակիցք Քրիստոսի. եթէ չարչարանացն կցորդ
18 լինիմք, եւ փառացն հաղորդ լինելոց եմք: Ինձ այս-
պէս թուի եթէ ոչ են արժանի չարչարանք ժամա-
նակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ի մեզ:
19 Զի ակնկալութիւն արարածոց՝ յայտնութեան Որ-
20 դւոյն Աստուծոյ սպասէ: Զի ընդունայնութեան արա-
րածք հնազանդեցան, ոչ իւրեանց կամաւ, այլ վասն
21 այնորիկ՝ որ հնազանդեցոյցն յուսով. Զի եւ ին-
քեանք իսկ արարածքն ազատեսցին ի ծառայութենէ
ապականութեան՝ յազատութիւն փառաց Որդւոյն
22 Աստուծոյ: Քանզի գիտեմք եթէ ամենայն արա-
23 րածք հեծեն եւ երկնեն մինչեւ ցայժմ: Եւ ոչ այս-
չափ միայն. այլ եւ մեք իսկ՝ որ զպտուղ Հոգւոյն ու-
նիմք, անձամբ յանձինս մեր հեծեմք, որդեգրու-
24 թեանն ակն կալեալ փրկութեան մարմնոյ մերոյ: Զի
յուսով ապրեցաք. այլ յոյս տեսանելի՝ չէ յոյս. զի
25 զոր տեսանէ ոք՝ զի՞ եւս յուսայ: Ապա եթէ զոր ոչն
տեսանեմք՝ յուսամք, համբերութեամբ ակն ունիմք:
26 Նոյնպէս եւ Հոգին ի թիկունս հասանէ տկարու-
թեանս մերում. զի զոր կամքն յաղօթս՝ որպէս ար-
ժան իցէ, ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխօս

լինի ի հեծութիւնս անմռունչս։ Բայց որ քննէն 27
զսիրտս՝ գիտէ զինչ խորհուրդ է Հոգւոյն. զի ըստ
Աստուծոյ բարեխօսէ վասն սրբոց։ Բայց գիտեմք 28
եթէ որոց սիրենն զԱստուած՝ յամենայնի գործակից
լինին ի բարիս՝ որք հրաւիրանաւն կոչեցան։ Զի զորս 29
յառաջն ճանաչէր՝ յառաջագոյն հրաւիրեաց կերպա-
րանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ. զի եղիցի նա
անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց։ Եւ զորս յառա- 30
ջագոյնն հրաւիրեաց, զնոսին եւ կոչեաց. եւ զորս կո-
չեացն, զնոսին եւ արդարացոյց, եւ զորս արդարացոյցն,
զնոսին եւ փառաւորս արար։ Իսկ արդ զի՞նչ ասեմք 31
առ այս. եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր
հակառակ։ Որ յիւր Որդին ոչ խնայեաց, այլ վասն 32
մեր ամենեցուն մատնեաց զնա, զիա՞րդ ոչ նովաւ
հանդերձ զամենայն շնորհիցէ մեզ։ Ո՞վ իցէ որ մե- 33
ղադիր լինիցի ընտրելոց Աստուծոյ. Աստուած է որ
արդարացուցանէ, Իսկ արդ ո՞վ է որ դատապարտ 34
՚առնիցէ. Քրիստոս Յիսուս՝ որ մեռաւն, մանաւանդ
թէ յարուցեալ իսկ է, եւ է ընդ աջմէ Աստու-
ծոյ, որ եւ բարեխօս իսկ է վասն մեր։ Արդ ո՞վ 35
մեկնեսցէ զմեզ ի սիրոյն Քրիստոսի, նեղութի՞ւն,
թէ անձկութիւն, թէ հալածանք, թէ սով, թէ մեր-
կութիւն, թէ վիշտք, թէ սուր։ Որպէս եւ գրեալ է. 36
վասն քո մեռանիմք զօրհանապազ, համարեցաք ի-
բրեւ զոչխար ի սպանդ։ Այլ յայսմ ամենայնի ա- 37
ռաւել յաղթեմք նովաւ՝ որ սիրեացն զմեզ։ Քանզի 38
հաստատեալ եմ եթէ ոչ մահ եւ ոչ կեանք եւ
ոչ հրեշտակք եւ ոչ իշխանութիւնք եւ ոչ որ կանս
եւ ոչ հանդերձեալքն եւ ոչ զօրութիւնք, Եւ ոչ 39
բարձրութիւնք եւ ոչ խորութիւնք եւ ոչ այլ ինչ
արարած կարէ մեկնել զմեզ ի սիրոյ անտի Աստու-
ծոյ, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։

ԳԼՈՒԽ Թ.

1 ԿԹ. Ճշմարտութեամբ ասեմ ի Քրիստոս, եւ ոչ
2 ստեմ, վկայեն ինձ միտք իմ ի Հոգի սուրբ. Զի
տրտմութիւն է ինձ յոյժ եւ անպակաս ցաւք սրտի
3 իմոյ: Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզով լի-
նել ի Քրիստոսէ վասն եղբարց եւ ազգականաց իմոց
4 ըստ մարմնոյ, Որ են Իսրայելացիք. որոց որդեգրու-
թիւնն եւ փառքն եւ կտակարանքն եւ օրէնսդրու-
5 թիւնն եւ պաշտօնն եւ աւետիքն, Որոց հարքն, յո-
րոց եւ Քրիստոս ըստ մարմնոյն, որ է ի վերայ ամե-
6 նեցուն Աստուած օրհնեալ յաւիտեանս. ամէն: Ոչ
ինչ է մարթ՝ եթէ անկած լինիցի բանն Աստուծոյ.
զի ոչ ամենեքեան՝ որ յԻսրայելէն են, նոքա Իսրայե-
7 լեանք իցեն. Եւ ոչ որ զաւակն Աբրահամու են՝
ամենեքեան որդիք իցեն. այլ Իսահակաւ կոչեսցի
8 քեզ զաւակ: Այսինքն՝ ոչ եթէ որ որդիք մարմնոյն
են, են որդիք Աստուծոյ. այլ որդիք աւետեացն հա-
9 մարին ի զաւակ: Քանզի աւետեաց իսկ է բանս այս
եթէ ի ժամանակի յայսմիկ եկից, եւ եղիցի որդի
10 Սառայի: Եւ ոչ այնչափ միայն, այլ եւ ի Ռեբեկայ
11 ի միոջէ անկողնոյ Սահակայ հօր մերոյ: Զի մինչ չեւ
ծնեալ էին, եւ մինչ չեւ բարի ինչ կամ չար գոր-
ծեալ էր, զի ըստ ընտրութեանն յառաջադրութիւնն
12 Աստուծոյ հաստատեսցի, Ոչ ի գործոց, այլ յայն-
13 մանէ՝ որ կոչեացն, ասացաւ նմա թէ Երէցն կրտսե-
րոյն ծառայեսցէ. որպէս եւ գրեալ է թէ ԶՅակոբ
14 սիրեցի, եւ զԵսաւ ատեցի. Իսկ արդ զի՞նչ ասեմք.
միթէ անիրաւութի՞ւն իցէ Աստուծոյ. քաւ լիցի:
15 Զի Մովսեսի ասէ. Ողորմեցայց՝ որում ողորմեցայցն,
16 եւ գթացայց՝ յորս գթացայցն: Ապա ոչ ըստ այնմ
ինչ է՝ որ կամիցին, եւ ոչ ըստ այնմ՝ որ ընթանայցէ.
այլ ըստ Աստուծոյ՝ որ ողորմի:
17 ԿԼ. Քանզի ասէ գիր ցփարաւոն, թէ Վասն

այնորիկ զրգուեցի զքեզ, զի ի քեզ ցուցից զզօրու-
թիւն իմ, եւ պատմեսցի անուն իմ ընդ ամենայն
երկիր: Ապա ուրեմն ում կամի՝ ողորմի, եւ ում 18
կամի՝ խստանայ: Իսկ արդ՝ ասիցես, Թէ մեղ եւս զի՞ 19
դնէ՝ զի կամաց նորա ոչ ոք կայ հակառակ Իսկ արդ 20
դու ո՞վ ես, մարդ, որ պատասխանի տաս Աստուծոյ.
միթէ ասիցէ՞ ստեղծուածն ցստեղծիչն՝ թէ ընդէ՞ր
այդպէս արարեր զիս: Եթէ ո՞չ ունիցի իշխանութիւն 21
բրուտն կաւոյն, ի նմին զանգուածոյ առնել անօթ՝
զոմն ի պատիւ եւ զոմն յանարգանս: Ապա եթէ 22
կամէր Աստուած ցուցանել զբարկութիւն, եւ յայ-
տնի առնել զզօրութիւն իւր, զոր համբերն բազում
երկայնմտութեամբ անօթոյն բարկութեան՝ պատրաս-
տելոյն ի կորուստ: Զի յայտնի արասցէ զմեծու- 23
թիւն փառաց իւրոց ի վերայ անօթոցն ողորմու-
թեան, զոր պատրաստեաց ի փառս: Զորս եւ կո- 24
չեաց զմեզ, ոչ միայն ի Հրէից, այլ եւ ի հեթանոսաց,
Որպէս եւ Յովսէէ ասէ. Կոչեցից զոր ոչ ժողովուրդն 25
իմ, ժողովուրդ ինձ. եւ զչսիրեցեալն՝ սիրեցեալ, եւ
զչողորմեալն՝ ողորմեալ: Եւ եղիցի ի տեղւոջ՝ յորում 26
ասացաւ նոցա թէ ոչ ժողովուրդ իմ դուք, անդ
կոչեսցին նոքա որդիք Աստուծոյ կենդանւոյ: Եսայի 27
աղաղակէ վասն Իսրայելի. Եթէ իցէ թիւ որդւոցն
Իսրայելի իբրեւ զաւազ ծովու, սակաւ ինչ մնացորդք
մնասցեն. Զի բան մի հակիրճ եւ համառօտ արդա- 28
րութեամբ, զբանն հակիրճ արասցէ Տէր ի վերայ եր-
կրի: Եւ որպէս ասէ Եսայի, Եթէ ոչ Տէրն զօրու- 29
թեանց թողեալ էր մեզ զաւակ, իբրեւ զՍոդոմ լի-
նէաք, եւ զԳոմորայ նմանէաք:

ՁԱ. Իսկ արդ զի՞նչ ասիցեմք. զի հեթանոսք՝ 30
որ ոչ երթային զհետ արդարութեան, հասին արդա-
րութեան, այնմ արդարութեան՝ որ ի հաւատոց
անտի: Այլ Իսրայէլ երթայր զհետ օրինացն արդա- 31
րութեան, եւ յօրէնս արդարութեանն ոչ ժամանեաց:

32 Ընդէ՞ր. զի ոչ ի հաւատոց, այլ իբրեւ ի գործոց
օրինաց. քանզի գթեցին նոքա առ վիմին գայթագ-
33 ղութեան: Որպէս եւ գրեալ է. Ահաւասիկ դնեմ ի
Սիոն քար գայթագղութեան եւ վէմ գլորման, եւ
ամենայն՝ որ հաւատասցէ ի նա, մի ամաչեսցէ:

ԳԼՈՒԽ Ժ.

1 Եղբա՛րք, իմ կամք սրտի եւ աղօթք առ Աստու-
2 ած վասն նոցա են ի փրկութիւն: Քանզի վկայեմ
նոցա՝ եթէ զնախանձն Աստուծոյ ունին, այլ ոչ գի-
3 տութեամբ: Զի ագէտ են Աստուծոյ արդարու-
թեանն, եւ զիւրեանցն խնդրեն կացուցանել. զի ար-
4 դարութեանն Աստուծոյ ոչ հնազանդեցան: Քանզի
կատարած օրինացն Քրիստոս է՝ յարդարութիւն ա-
մենայն հաւատացելոց:
5 ԶԻ Մովսէս գրէ զարդարութիւն, որ յօրինաց
6 անտի է. եթէ արասցէ զայն մարդ՝ կեցցէ նովին: Իսկ
զհաւատոցն արդարութիւնն այսպէս ասէ. Մի՛ ասիցես
ի սրտի քում, ո՞վ ելանիցէ յերկինս, այսինքն է՝
7 զՔրիստոս իջուցանել. Կամ ո՞վ իջանիցէ յանդունդս,
8 այսինքն է՝ զՔրիստոս հանել ի մեռելոց: Այլ զի՞նչ
ասէ գիր. Մերձ է բանն ի բերան քո, եւ ի սրտի քում
9 է. այսինքն է՝ բանն հաւատոց զոր քարոզեմք: Զի
եթէ խոստովանեսցես բերանով քով Տէր զՅիսուս,
եւ հաւատասցես ի սրտի քում, թէ Աստուած յա-
10 րոյց զնա ի մեռելոց, կեցցես: Զի սրտիւ հաւատայք
յարդարութիւն, եւ բերանով խոստովանիք ի փրկու-
11 թիւն: Քանզի ասէ գիր. Ամենայն՝ որ հաւատասցէ
12 ի նա, մի ամաչեսցէ: Զի ոչ գոյ խտիր հրէի եւ հե-
թանոսի. քանզի նոյն Տէր է ամենեցուն, բաւական
13 յամենեսին՝ որք կարդան առ նա: Զի ամենայն՝ որ
14 կարդասցէ զանուն Տեառն՝ կեցցէ: Իսկ զիա՞րդ կար-
դասցեն՝ յոր ոչն հաւատացին, կամ զիա՞րդ հաւա-
տասցեն՝ որում ոչն լուան, կամ զիա՞րդ լուիցեն՝ ա-

ռանց ուրուք քարոզելոյ. Կամ զիա՞րդ քարոզեսցեն, 15
եթէ ոչ առաքեսցին. որպէս եւ գրեալ է. Իբրեւ զի
գեղեցիկ են ոտք աւետարանչացն խաղաղութեան եւ
աւետարանչացն բարութեան: Այլ ոչ ամենեքեան 16
հնազանդ եղեն աւետարանին. Եսայի ասէ. Տէ՛ր,
ո՞ հաւատաց լրոյ մերում: Ապա ուրեմն հաւատք ի 17
լսելոյ են, եւ լուր ի բանէն Քրիստոսի:

ՎԵՐՋ. Այլ ասեմ, միթէ ո՞չ լուան. մանաւանդ 18
զի Ընդ ամենայն իսկ երկիր ել բարբառ նոցա, եւ
ընդ ծագս տիեզերաց խօսք նոցա: Այլ ասեմ, միթէ 19
Իսրայէլ ո՞չ լուաւ. նախ Մովսէս ասէ, Ես նախան-
ձեցուցից զձեզ ոչ ինչ ժողովրդեամբ, եւ ազգաւ
անմտաւ զկծեցուցից զձեզ: Բայց Եսայի համարձա- 20
կի իսկ եւ ասէ. Գտայ այնոցիկ՝ որ զիս ոչ խնդրէին,
յայտնի եղէ այնոցիկ՝ որ զինէն ոչ հարցանէին: Այլ 21
առ Իսրայէլ ասէ. Զօր ամենայն ձգեցից զձեռն իմ
առ ժողովուրդն անհաւան եւ հակառակող:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԶԶ. Իսկ արդ՝ ասեմ, միթէ մերժեա՞ց Աստու- 1
ած զժողովուրդ իւր. քաւ լիցի. քանզի եւ ես Իս-
րայելացի եմ, ի զաւակէ Աբրահամու, յազգէ Բե-
նիամենի: Ոչ մերժեաց Աստուած զժողովուրդ իւր, 2
զոր յառաջն ծանեաւ. թէ ո՞չ գիտէք յԵղիա զինչ
ասէ գիր որպէս ամբաստան լինի Աստուծոյ զԻս-
րայելէ. Տէր, զմարգարէս քո կոտորեցին եւ զսեղանս 3
քո կործանեցին. ես մնացի միայն, եւ խնդրեն զանձն
իմ: Այլ զի՞նչ ասէ նմա պատասխանին, Թողի ինձ, 4
ասէ, եօթն հազար այր՝ որ ոչ կրկնեցին ծունր Բա-
հաղու: Նոյնպէս եւ յայսմ ժամանակի մնացորդք 5
ըստ ընտրութեան շնորհացն եղեն: Իսկ եթէ շնոր- 6
հօք, ոչ եւս ի գործոց. ապա թէ ոչ՝ շնորհքն ոչ
եւս շնորհք լինին: Իսկ արդ՝ զոր խնդրէրն Իսրայէլ՝ 7
այնմ ոչ եհաս, բայց ընտրութեանն եհաս. եւ այլքն

8 կուրացան: Որպէս եւ գրեալ է. Ետ նոցա Աստուած
հոգի յիմարութեան. աչս՝ որովք ոչ տեսանիցեն, եւ
ականջս՝ որովք ոչ լսիցեն, մինչեւ ցայսօր ժամանակի:
9 Եւ Դաւիթ ասէ. Եղիցին սեղանք նոցա յորոգայթ
եւ յորս եւ ի գայթագղութիւն եւ ի հատուցումն
10 նոցին: Խաւարեսցին աչք նոցա՝ զի մի տեսցեն. եւ
11 զթիկունս նոցա հանապազ կորացո: Իսկ արդ ասեմ,
միթէ վասն ա՞յնորիկ յանցեան՝ զի կործանեսցին. քաւ
լիցի. այլ նոցա յանցանօքն փրկութիւն հեթանոսաց,
12 զի նախանձ արկցէ նոցա: Իսկ եթէ յանցանքն նոցա
մեծութիւն աշխարհի, եւ պակասութիւն նոցա մե-
ծութիւն հեթանոսաց. ո՞րչափ եւս առաւել լրու-
13 թիւն նոցա: Այլ ձեզ ասեմ հեթանոսաց՝ ցորչափ
ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն
14 իմ փառաւոր առնեմ. Զի թերեւս նախանձ արկից
նոցա մարմնով իմով, եւ ապրեցուցից զոմանս ի նո-
15 ցանէ: Զի եթէ մերժումն նոցա հաշտութիւն աշ-
խարհի է, իսկ ընդունելութիւնն զի՞նչ իցէ, եթէ ոչ՝
16 կենդանութիւն ի մեռելոց: Իսկ եթէ սկիզբն սուրբ
է, եւ զանգուածն. եւ եթէ արմատն, ապա եւ ոստքն:
17 Եթէ յոստոց անտի ոմանք փշրեցան, եւ դու որ ձի-
թենիդ վայրենի էիր, պատուաստեցար ի նոսա, եւ
բաժանորդ եղեր արմատոյն եւ պարարտութեան ձի-
18 թենւոյն, Մի պարծիր առ ոստովքն. ապա եթէ
պարծիցիս՝ ոչ եթէ դու զարմատն ի վեր ունիս, այլ
19 արմատն զքեզ: Իսկ արդ՝ ասիցես, ոստքն փշրեցան,
20 զի ես պատուաստեցայց: Բարւոք է՝ անհաւատու-
թեամբն փշրեցան, եւ դու հաւատովք հաստատե-
21 ցար. մի հպարտանար, այլ երկիր: Զի եթէ Աստուած
ի բուն ոստոցն ոչ խնայեաց, գուցէ երբեք եւ ի քեզ
22 ոչ խնայիցէ: Արդ՝ տես զքաղցրութիւն եւ զսաստ-
կութիւն Աստուծոյ. ի վերայ կործանելոցն սաստկու-
թիւն, եւ ի վերայ քո քաղցրութիւն Աստուծոյ,
եթէ կայցես ի նմին քաղցրութեան. ապա թէ ոչ՝ եւ

դու կոտորեսցիս. Եւ նոքա եթէ ոչ ի նմին անհաւա- 23
տութեան կայցեն, պատուաստեսցին. զի կարող է
Աստուած միւանգամ պատուաստել զնոսա. Զի 24
եթէ դու ի բուն ի վայրենի ձիթենւոյ անտի հատար,
եւ յանբուն քո ի բարի ձիթենւոջն պատուաստեցար,
ո՞րչափ եւս առաւել նոքա՝ որ բունքն իսկ են, պա-
տուաստեսցին յիւրեանց ձիթենւոջն:

ԻԲ. Ոչ կամիմ, եղբարք, եթէ ագէտ իցէք խոր- 25
հրդոյս այսմիկ, զի մի յանձինս ձեր իցէք իմաստունք.
զի կուրութիւն փոքր ի շատէ եղեւ Իսրայելի, մինչեւ
լրումն հեթանոսաց մտցէ, Եւ ապա ամենայն Իս- 26
րայէլ կեցցէ. որպէս եւ գրեալ է. Եկեսցէ ի Սիովնէ
փրկիչ, եւ դարձուսցէ զամբարշտութիւնս ի Յակով-
բայ: Եւ այս նոցա որ յինէն ուխտ, յորժամ բար- 27
ձից զմեղս նոցա: Ըստ աւետարանին թշնամիք են 28
վասն ձեր, ըստ ընտրութեանն՝ սիրելիք վասն հարցն:
Քանզի անզեղջ են շնորհք եւ կոչումն Աստուծոյ: 29
Զի որպէս եւ դուք երբեմն ապստամբք էիք յԱս- 30
տուծոյ, եւ արդ ողորմութիւն գտէք առ նոցա ա-
պստամբութեամբն. Նոյնպէս եւ նոքա այժմ ապս- 31
տամբք եղեն առ ձերում ողորմութեամբդ, զի եւ նոքա
ողորմութիւն գտցեն: Քանզի արգել Աստուած 32
զամենեսին յանհաւանութիւն զի ամենեցուն ողոր-
մեսցի: Ո՜վ խորք մեծութեան եւ իմաստութեան եւ 33
գիտութեանն Աստուծոյ, որպէս զի առանց քննելոյ
են դատաստանք նորա, եւ առանց զննելոյ են ճանա-
պարհք նորա: Զի ո՞վ գիտաց զմիտս Տեառն, կամ 34
ո՞վ խորհրդակից լինիցի նմա. Կամ ո՞վ ետ նմա 35
փոխ, եւ առնուցու փոխարէն ի նմանէ: Զի ի նմա- 36
նէ եւ նովաւ եւ ի նոյն ամենայն. նմա փառք յաւի-
տեանս. ամէն:

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Աղաչեմ զձեզ, եղբարք, գթութեամբքն Աս-
տուծոյ՝ պատրաստել զմարմինս ձեր պատարագ կեն-
դանի, սուրբ, հաճոյ Աստուծոյ, զխոսուն պաշտօնդ
2 ձեր. Եւ մի կերպարանիք կերպարանօք աշխարհիս
այսորիկ, այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց
ձերոց, առ ի քննել ձեզ զնա, եւ եթէ զինչ են
կամքն Աստուծոյ, բարին եւ հաճոյն եւ կատարեալն։
3 Զայս ասեմ շնորհօքն Աստուծոյ՝ որ տուեալ են
ինձ, ամենայնի որ է ի ձեզ, մի առաւել ինչ խորհել
քան զարժանն խորհելոյ, այլ խորհել ի զգաստա-
նալ իւրաքանչիւր՝ որպէս եւ բաժանեաց Աստուած
4 չափ հաւատոյ։ Որպէս ի միում մարմնի անդամս
բազումս ունիմք, եւ անդամքն ամենայն ոչ զնոյն գործ
5 ունին. Նոյնպէս եւ բազումքս մի մարմին եմք ի
Քրիստոս. այլ իւրաքանչիւր միմեանց անդամք եմք։
6 Բայց ունիմք մեք շնորհս ըստ շնորհացն, որ տուեալ
են մեզ ազգս ազգս. եթէ մարգարէութիւն՝ ըստ
7 չափուն հաւատոց, Եթէ պաշտօն՝ ըստ պաշտամանն,
8 եթէ որ ուսուցանէն՝ ըստ վարդապետութեանն. Եթէ
որ մխիթարէն՝ ըստ մխիթարութեանն. որ տայն է՝
զուարթութեամբ, որ վերակացուն է՝ փութով, որ
9 ողորմին՝ լըջմտութեամբ։ Սէր առանց կեղծաւորու-
10 թեան, ատել զչար, զհետ երթալ բարեաց. Եղ-
բայրսիրութեան առ միմեանս գթածք, ի պատիւ
11 զմիմեամբք եկանել. Ի փոյթ մի վեհերոտք. հոգւով
12 եռացեալք, Տեառն ծառայեցէք, Յուսով խնդացէք,
նեղութեանց համբերեցէք, աղօթից ստէպ կացէք,
13 Ի պէտս սրբոց հաղորդեցարուք, զհիւրասիրութեան
14 զհետ երթայք։ Օրհնեցէք զհալածիչս ձեր, օրհ-
15 նեցէք եւ մի անիծանէք։ Խնդալ ընդ խնդացողս,
16 լալ ընդ լացողս. Զնոյն միմեանց խորհիջիք. մի ամ-
բարտաւանէք, այլ ընդ խոնարհս զիջանիցէք. մի լի-

նից իմաստունք յանձինս ձեր. Մի՛ ումեք չարի չար 17
հատուցանէք. խորհեցարուք զբարիս առաջի ամե-
նայն մարդկան: Եթէ հնար ինչ իցէ ձեզ՝ ընդ ամե- 18
նայն մարդկան զխաղաղութիւն կալջիք: Մի՛ զան- 19
ձանց վրէժ խնդրէք, սիրելիք, այլ տուք տեղի բարկու-
թեանն. քանզի գրեալ է. Իմ է վրէժխնդրութիւն,
եւ ես հատուցից, ասէ Տէր: Այլ եթէ քաղցեալ 20
իցէ թշնամին քո՝ հաց տուր նմա, եւ եթէ ծարաւի՝
ջուր տուր նմա. զայս արարեալ՝ կայծակունս հրոյ
կուտեսցես ի գլուխ նորա: Մի՛ յաղթիր ի չարէ, այլ 21
յաղթեա բարեաւն չարին:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է՝ ի 1
հնազանդութեան կացցէ. քանզի ոչ ուստեք է իշ-
խանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ. եւ որ ենն, յԱս-
տուծոյ կարգեալ են: Այսուհետեւ որ հակառակ 2
կայ իշխանութեանն, Աստուծոյ հրամանին հակառակ
կայ. եւ որ հակառակն կան, անձանց դատաստանս
ընդունին. Զի իշխանք ոչ են յերկիւղ բարեաց գոր- 3
ծոց, այլ չարաց: Կամի՞ս չերկնչել յիշխանութենէ
անտի, զբարիս գործեա, եւ ընկալցիս գովութիւն ի
նմանէ. Զի Աստուծոյ պաշտօնեայ է քեզ ի բարիս: 4
Ապա եթէ չար գործիցես, երկիր. զի ոչ եթէ վայ-
րապար ածեալ է սուսեր ընդ մէջ. Աստուծոյ սպա-
սաւոր է՝ վրէժխնդիր ի բարկութիւն, այնմ՝ որ զչարն
գործիցէ: Վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ 5
միայն վասն բարկութեան, այլ եւ վասն խղճի մտացն:
Վասն այնորիկ եւ հարկս հարկանէք, զի Աստուծոյ 6
սպասաւորք են ի նոյն կանխեալք: Արդ հատուցէք 7
ամենեցուն զպարտս, որում զհարկ՝ զհարկն, որում
զմաքս՝ զմաքսն, որում զերկիւղ՝ զերկիւղն, որում
զպատիւ՝ զպատիւն: Եւ մի՛ ումեք պարտապան 8
գտանիցիք, բայց զմիմեանս սիրելոյ. զի որ սիրէ զըն-

9 *կերն, զօրէնսն կատարէ. Զի մի՛ շնայցես, եւ մի՛ սպա-
նանիցես, եւ մի՛ գողանայցես, եւ մի՛ սուտ վկայիցես,
եւ մի՛ ցանկանայցես. եւ եթէ այլ ինչ պատուիրան
է՝ յայն բան բովանդակի, եթէ Սիրեսցես զընկեր քո
10 իբրեւ զանձն քո: Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ.
11 լրումն օրինացն սէր է: Եւ զայս գիտասջիք վասն ժա-
մանակիս. զի արդ ժամ իսկ է մեզ ի քնոյ զարթ-
նուլ. զի այժմ մերձ է մեզ փրկութիւն. քանզի յոր-
12 ժամ հաւատացաքն, Գիշերն մերժեցաւ եւ տիւն
մերձեցաւ. ի բաց արասցուք այսուհետեւ զգործսն
13 խաւարի, եւ զգեցցուք զզէնն լուսոյ: Իբրեւ ի տուըն-
ջեան զգաստացեալք շրջեսցուք. մի՛ անառակու-
թեամբք եւ արբեցութեամբք, եւ մի՛ խառն անկողնովք
եւ պղծութեամբք, եւ մի՛ նախանձու եւ հակառակու-
14 թեամբք. Այլ զգեցարուք զՏէր Յիսուս Քրիստոս.
եւ մարմնոյ խնամ մի՛ տանիք ի ցանկութիւնս:*

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 *Այլ զտկարացեալն ի հաւատս ընկալարուք՝
2 մի՛ խղճիւ երկմտութեանց: Ոմն հաւատայ ուտել
3 զամենայն, եւ որ հիւանդն է, բանջար կերիցէ: Որ
ուտէն, զայն՝ որ ոչն ուտէ, մի՛ անգոսնեսցէ. եւ որ ոչն
ուտէ, զայն՝ որ ուտէն, մի՛ դատեսցի. քանզի Աս-
4 տուած զնա ընկալաւ: Դու ո՞վ ես՝ որ դատիս զայլոյ
ծառայ. իւրում Տեառն կայ կամ անկանի. բայց
5 կացցէ՝ զի կարող է Տէր հաստատել զնա: Ոմն պահէ
օր ըստ օրէ, եւ ոմն պահէ զօրհանապազ. իւրաքան-
6 չիւր ոք զիւր միտս հաճեսցէ: Որ խորհի զօրն՝ Տեառն
խորհի, եւ որ ոչն խորհի զօրն, Տեառն չխորհի. եւ
որ ուտէ, Տեառն ուտէ, եւ գոհանայ զԱստուծոյ.
եւ որ ոչն ուտէ, Տեառն չուտէ, եւ գոհանայ զԱս-
7 տուծոյ: Զի ոչ ոք ի մէնջ անձամբ կեայ, եւ ոչ ան-
8 ձամբ մեռանի: Եթէ կեամք՝ Տեառն կեամք, եւ եթէ
մեռանիմք՝ Տեառն մեռանիմք, եւ արդ եթէ կեամք*

եւ եթէ մեռանիմք, Տեառն եմք: Վասն զի ի նոյն իսկ 9
եւ Քրիստոս մեռաւ եւ եկեաց, զի մեռելոց եւ կեն-
դանեաց առ հասարակ տիրեսցէ: Դու զի՞ դատիս 10
զեղբայր քո, կամ ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո:
Վասն զի ամենեքեան կալոց եմք առաջի ատենին Աս-
տուծոյ: Զի գրեալ է. Կենդանի եմ ես, ասէ Տէր. 11
զի ինձ կրկնեսցի ամենայն ծունր, եւ ամենայն լեզու
խոստովան եղիցի Աստուծոյ: Ապա ուրեմն իւրա- 12
քանչիւր ոք ի մէնջ ընդ անձին համար տացէ Աս-
տուծոյ: Այսուհետեւ մի՛ զմիմեանս դատեսցուք. 13
այլ առաւել զայս դիք ի մտի՝ չդնել գայթագղու-
թիւն եղբօրն: Զայս գիտեմ, եւ հաստատեալ եմ 14
ի Քրիստոս Յիսուս, զի ոչ ինչ է պիղծ նովաւ. բայց
այնմ՝ որ համարիցի ոք ինչ պիղծ, նմա է պիղծ:
Զի եթէ վասն կերակրոյ եղբայրն քո տրտմի, ոչ եւս 15
սիրով գնացեր. մի՛ կերակրովն քով զնա կորուսա-
ներ, վասն որոյ Քրիստոսն մեռաւ: Մի՛ հայհոյեսցի 16
բարին ձեր: Զի ոչ է արքայութիւն Աստուծոյ կե- 17
րակուր եւ ըմպելի, այլ արդարութիւն եւ խնդու-
թիւն եւ խաղաղութիւն ի Հոգին սուրբ: Զի որ 18
յայսմ ծառայէ Քրիստոսի, հաճոյ է Աստուծոյ եւ
ընտիր մարդկան: Ապա այսուհետեւ զհետ երթիցուք 19
զխաղաղութեան եւ զշինութեան՝ որ առ միմեանս:
Մի՛ վասն կերակրոյ քակեր զգործ Աստուծոյ. ամե- 20
նայն ինչ սուրբ է. այլ չար այնմ մարդոյ է՝ որ խղ-
ճիւ ուտիցէ: Լաւ է ոչ ուտել միս, եւ ոչ ըմպել 21
գինի, եւ ոչ՝ որով եղբայրն քո գայթագղի կամ գթէ
կամ տկարանայ: Դու ապաքէն հաւատս ունիս, կալ 22
առանձինն առաջի Աստուծոյ. երանի որ ոչ դատիցի
զանձն, որով զընկերն փորձիցէ: Բայց որ խղճէն, 23
թէպէտ եւ ուտիցէ՝ դատապարտեալ է, զի ոչ ըստ
հաւատոց. զի ամենայն ինչ՝ որ ոչ ի հաւատոց է,
մեղք են: Այլ այնմ, որ կարողն է հաստատել 24
զձեզ ըստ աւետարանիս իմում եւ ըստ քարոզու-

թեանն Յիսուսի Քրիստոսի, ըստ յայտնութեան
25 խորհրդոյն՝ ժամանակօքն յաւիտենից լռեցելոյ, Եւ
յայտնելոյ այժմիկ ի ձեռն գրոց մարգարէականաց,
ըստ հրամանի մշտնջենաւորին Աստուծոյ, ի հնա-
զանդութիւն հաւատոց, յամենայն հեթանոսս ծա-
նուցելոյ՝ միայնոյ իմաստնոյն Աստուծոյ, ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն:

ԳԼՈՒԽ ԺԵ.

1 ԻԴ. Պարտ է մեզ՝ որ կարողքս եմք, զտկարու-
թիւն տկարացն բառնալ. եւ մի՛ անձանց եւեթ հա-
2 ճոյ լինել: Այլ իւրաքանչիւր ոք ի մէնջ ընկերին հա-
3 ճոյ լինիցի ի բարիս վասն շինութեան: Քանզի եւ
Քրիստոս ոչ եթէ անձին հաճոյ եղեւ, այլ որպէս
եւ գրեալ է. Նախատինք նախատչաց քոց անկան ի
4 վերայ իմ: Բայց որ ինչ գրեցաւն՝ ի մեր վարդապե-
տութիւն գրեցաւ. զի համբերութեամբ եւ մխիթա-
5 րութեամբ գրոց զյոյսն ընկալցուք: Այլ Աստուած
համբերութեան եւ ամենայն մխիթարութեան, տացէ
ձեզ զնոյն խորհել ընդ միմեանս ըստ Յիսուսի Քրիս-
6 տոսի. Զի միաբանութեամբ ի մի բերան փառաւոր
առնիցէք զԱստուած, եւ զՀայր Տեառն մերոյ Յի-
7 սուսի Քրիստոսի: Վասն որոյ ընկալարուք զմիմեանս,
որպէս եւ Քրիստոս ընկալաւ զձեզ ի փառս Աստու-
8 ծոյ: Ասեմ, թէ Քրիստոսի սպասաւոր թլփատու-
թեանն լինել՝ վասն ճշմարտութեան Աստուծոյ էր, առ
9 ի հաստատուն առնելոյ զաւետիս հարցն: Այլ հե-
թանոսք վասն ողորմութեան փառաւոր առնեն զԱս-
տուած, որպէս եւ գրեալ է. Վասն այսորիկ խոստո-
վան եղէց քեզ ի հեթանոսս, եւ անուան քում
10 սաղմոս ասացից: Եւ դարձեալ ասէ. Ուրախ եղերուք
11 հեթանոսք ընդ ժողովրդեան նորա, Եւ դարձեալ
թէ, Օրհնեցէք ամենայն հեթանոսք զՏէր, եւ գո-
12 վեցէք զնա ամենայն ժողովուրդք: Եւ դարձեալ

Եսայի ասէ. Եղիցի արմատն Յեսսեայ, եւ որ կանգնե-
լոցն է՝ իշխան հեթանոսաց, ի նա հեթանոսք յու-
սասցին: Այլ Աստուած յուսոյ՝ լի արասցէ զձեզ 13
ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւ-
ելուլ ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն սրբոյ:
ԻԲ. Հաստատեալ եմ եւ ես ինքնին, եղբարք 14
իմ, վասն ձեր, զի եւ դուք լի էք բարութեամբ, լի
էք ամենայն գիտութեամբ, կարող էք եւ զմիմեանս
խրատել: Այլ համարձակագոյնս գրեցի առ ձեզ, 15
եղբարք, փոքր ի շատէ, իբրեւ յիշեցուցանելով ձեզ,
վասն շնորհացն՝ որ տուեալ են ինձ յԱստուծոյ.
Լինել ինձ սպասաւոր Յիսուսի Քրիստոսի ի հե- 16
թանոսս. ըղձակերտս առնել զաւետարանն Աստու-
ծոյ, զի եղիցի պատարագն հեթանոսաց ընդունելի՝
սրբեալ Հոգւովն սրբով: Ունիմ այսուհետեւ պար- 17
ծանս ի Քրիստոս Յիսուս առ Աստուած: Քանզի 18
ոչ իշխեմ խօսել ինչ՝ զոր ոչ գործեաց Քրիստոս
ինեւ ի հնազանդութիւն հեթանոսաց՝ բանիւք եւ
արդեամբք. Զօրութեամբ նշանաց եւ արուեստից, 19
զօրութեամբ Հոգւոյն սրբոյ. որպէս ինձ յԵրուսա-
ղեմէ մինչեւ ի կողմանս Իլիւրիկեցւոց լնուլ զաւետա-
րանն Քրիստոսի: Այնպէս առատացեալ յաւետա- 20
րանել, ոչ ուր անուանեցաւ Քրիստոս, զի մի իբրեւ
յայլոյ հիման վերայ շինիցեմ, այլ որպէս եւ գրեալ
է, թէ Որոց ոչ պատմեցաւ վասն Նորա՝ տեսցեն, եւ 21
որոց ոչ իցէ լուեալ՝ ի միտ առցեն: Վասն որոյ շատ 22
խափանեցայ գալ առ ձեզ: Բայց արդ ոչ եւս գոյ 23
ինձ տեղի ի կողմանս յայսոսիկ. եւ անձուկ յոյժ ու-
նիմ ի բազում ամաց գալ առ ձեզ: Յորժամ ան- 24
ցանիցեմ ի Սպանիա, ակն ունիմ յանցանելն առ
նոսա՝ տեսանել զձեզ. եւ ի ձէնջ յուղարկել անդր,
եթէ նախ իսկ փոքր ի շատէ ձեօք լցայց: Բայց արդ 25
երթամ յԵրուսաղէմ պաշտել զսուրբսն: Քանզի 26
հաճոյ թուեցաւ Մակեդոնացւոց եւ Աքայեցւոց

հաղորդութիւն ինչ առնել ընդ աղքատս սրբոցն՝ որ
27 են յԵրուսաղէմ: Հաճոյ թուեցաւ, քանզի եւ պար-
տապան իսկ են նոցա, զի եթէ հոգեւորացն նոցա
հաղորդ եղեն հեթանոսք, պարտին եւ մարմնաւո-
28 րացն կցորդ լինել նոցա: Արդ զայս կատարեալ եւ
կնքեալ զպտուղն նոցա, անցից առ ձեօք ի Սպանիա:
29 Զայս գիտեմ, զի ի գալն առ ձեզ, լրութեամբ օր-
հնութեան եկից:
30 ԻԵ. Աղաչեմ զձեզ, եղբարք, ի ձեռն Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի եւ սիրով Հոգւոյն, պատե-
րազմակից լինել ինձ յաղօթս վասն իմ առ Աստու-
31 ած. Զի ապրեցայց յապստամբացն՝ որ ի Հրէաս-
տանի են. եւ պաշտօնն իմ որ յԵրուսաղէմ, ընդու-
32 նելի լիցի սրբոցն. Զի խնդութեամբ եկեալ առ
33 ձեզ ի կամս Աստուծոյ, հանգեայց ընդ ձեզ: Եւ
Աստուած խաղաղութեան եղիցի ընդ ձեզ ամենե-
սին. ամէն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Յանձն առնեմ ձեզ զՓիբէ զքոյր մեր, որ է
2 սպասաւոր եկեղեցւոյն Կենքրացւոց. Զի զնա ընկալ-
ջիք ի Տէր՝ արժանի սրբոց, եւ վերակացու լինիջիք
նմա՝ յոր պէտս իրաց եւ կոչեսցէ զձեզ. քանզի եւ
նա վերակացու եղեւ բազմաց եւ ինձ իսկ գլխովին:
3 Ողջոյն տաջիք Պրիսկեայ եւ Ակիւղայ՝ գործակցաց
4 իմոց ի Քրիստոս Յիսուս. Որք ընդ անձին իմոյ զիւ-
րեանց պարանոցս մատուցին. զորոց ոչ ես միայն գո-
հանամ, այլ եւ ամենայն եկեղեցիք հեթանոսաց:
5 Եւ առանին եկեղեցւոյն նոցա: Ողջոյն տաջիք Եպեն-
տեայ սիրելւոյ իմոյ՝ որ է պտուղ Ասիացւոց ի Քրիս-
6 տոս: Ողջոյն տաջիք Մարեայ՝ որ բազում վաստակս
7 վաստակեաց ի ձեզ: Ողջոյն տաջիք Անդրոնիկեայ եւ
Յունեայ ազգականաց իմոց եւ գերեկցաց, որք երեւե-
լիքն իսկ են յառաքեալս. որք եւ յառաջ իսկ քան

զիս եղեն ի Քրիստոս: Ողջոյն տաջիք Ամպղեայ սի- 8
րելւոյ իմոյ ի Տէր: Ողջոյն տաջիք Ուրբանեայ գոր- 9
ծակցի իմոյ ի Տէր, եւ Ստաքեայ սիրելւոյ իմոյ: Ող- 10
ջոյն տաջիք Ապեղեայ՝ որ ընտիրն է ի Տէր: Ողջոյն 11
տաջիք նոցա՝ որ յԱրիստաբուղեայ տանէ անտի են.
ողջոյն տաջիք Հերովդիոնեայ ազգականի իմոյ. ողջոյն
տաջիք այնոցիկ՝ որ ի Նարկիսեայ տանէն իցեն ի Տէր:
Ողջոյն տաջիք Տրիփոսեայ եւ Տրիփոնեայ վաստա- 12
կաւորաց ի Տէր. ողջոյն տաջիք Պերսիդեայ սիրելւոյ,
որ բազում վաստակս վաստակեաց ի Տէր: Ողջոյն 13
տաջիք Ռուփոյ ընտրելոյ ի Տէր, եւ մօր նորա եւ
իմոյ: Ողջոյն տաջիք Ասիւնկրիտեայ, Փղեգոնտեայ, 14
Երմայ, Պատրոբայ, Երմեայ, եւ որք ընդ նոսա եղ-
բարք իցեն: Ողջոյն տաջիք Փիլողոգեայ եւ Յուղեայ, 15
Ներեայ եւ քեռ նորա, եւ Ողիմպեայ եւ որք ընդ
նոսա սուրբք ամենեքին իցեն, Ողջոյն տաջիք միմեանց 16
ի համբոյր սրբութեան. ողջոյն տան ձեզ ամենայն
եկեղեցիք Քրիստոսի:

ԽԶ. Աղաչեմ զձեզ, եղբարք, գիտել զայնպի- 17
սիսն, որ հերձուածս եւ գայթագղութիւնս անդի-
ցեն արտաքոյ վարդապետութեանն՝ զոր դուքն ուսա-
րուք, եւ խորշեցարուք ի նոցանէ: Զի այնպիսիքն 18
Տեառն մերոյ Քրիստոսի ոչ ծառայեն. այլ իւրեանց
որովայնին, եւ քաղցրաբանութեամբ եւ օրհնու-
թեամբ պատրեն զսիրտս անմեղաց: Զի ձեր հնա- 19
զանդութիւնդ առ ամենեսեան հասեալ է. եւ արդ
ի ձեզ ուրախ եմ. բայց կամիմ զձեզ իմաստունս
լինել ի բարիս եւ անմեղս ի չարիս: Եւ Աստուած 20
խաղաղութեան խորտակեսցէ զսատանայ ընդ ոտիւք
ձերովք մերձ ընդ մերձ: Շնորհք Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի ընդ ձեզ: Ողջոյն տայ ձեզ Տիմո- 21
թէոս եղբայր եւ գործակից իմ, եւ Ղուկիոս, եւ
Յասոն, եւ Սոսիպատրոս ազգականք իմ: Ողջոյն 22
տամ ձեզ եւ ես Տերտիոս, որ զթուղթս գրեցի ի

23 Տէր : Ողջոյն տայ ձեզ Գայիոս ասպնջական իմ, եւ
ամենայն եկեղեցւոյն : Ողջոյն տայ ձեզ Երաստոս շա-
24 հապ քաղաքիս, եւ Կուարտոս եղբայր : Այլ այնմ,
որ կարողն է հաստատել զձեզ ըստ աւետարանիս
իմում եւ ըստ քարոզութեանն Յիսուսի Քրիստոսի,
ըստ յայտնութեան խորհրդոյս այսորիկ՝ ժամանակօք
25 յաւիտենից լռեցելոյ, Եւ յայտնելոյ այժմիկ ի ձեռն
գրոց մարգարէականաց, ըստ հրամանի մշտնջենաւորին
Աստուծոյ, ի հնազանդութիւն հաւատոց, յամենայն
26 հեթանոսս ծանուցելոյ, Միայնոյ իմաստնոյն Աս-
տուծոյ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. Նմա պատիւ
27 եւ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն : Շնորհք
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամե-
նեսեան :

Առ Հռովմայեցիս գրեցաւ ի Կորնթոսէ ի ձեռն Փիբեայ սարկաւագի :

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԱՓ. ՊԱՒՂՈՍ կոչեցեալ առաքեալ Յիսուսի 1
Քրիստոսի կամօքն Աստուծոյ, եւ Սոսթենէս եղ-
բայր. Եկեղեցւոյդ Աստուծոյ՝ որ է ի Կորնթոս, 2
նուիրելոց ի Քրիստոս Յիսուս, կոչեցելոց սրբոց, ա-
մենեքումբք հանդերձ՝ որ կարդան զանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի յամենայն տեղիս նոցա եւ
մեր: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստու- 3
ծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:
Գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ վասն 4
ձեր ի վերայ շնորհացն Աստուծոյ՝ որ տուեալ են
ձեզ ի Քրիստոս Յիսուս. Զի յամենայնի մեծա- 5
ցարուք դուք նովաւ, ամենայն բանիւ եւ ամենայն
գիտութեամբ. Որպէս վկայութիւնն իսկ Աստուծոյ 6
հաստատեցաւ ի ձեզ. Զի դուք մի նուազիցիք եւ 7
մի իւիք շնորհօք, ակնկալեալ յայտնութեան Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի. Որ եւ հաստատեսցէ 8
զձեզ մինչեւ ի կատարած անպարտս յօր Տեառն մե-
րոյ Յիսուսի Քրիստոսի: Հաւատարիմ է Աստուած, 9
որով կոչեցարուք ի հաղորդութիւն Որդւոյ նորա
Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ:

ԱՋ. Աղաչեմ զձեզ, եղբարք, անուամբն Տեառն 10

մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի զնոյն բան ունիցիք
ամենեքեան, եւ մի՛ իցեն ի ձեզ հերձուածք. քանզի
էիք հաստատեալք ի նոյն միտս եւ ի նոյն հանճար։
11 Ազդ եղեւ ինձ վասն ձեր, եղբարք, ի Քղուացւոց ան-
12 տի, թէ հակառակութիւնք են ի ձեզ։ Եւ արդ ասեմ
իսկ, եթէ իւրաքանչիւր ոք ի ձէնջ ասէ. ես Պաւղո-
սեան եմ, եւ միւսն՝ եթէ ես Ապողոսեան, եւ միւսն՝
եթէ ես Կեփայեան, եւ միւսն՝ եթէ ես Քրիստո-
13 սեան։ Իսկ արդ բաժանեալ ի՞նչ իցէ Քրիստոս.
միթէ Պաւղո՞ս ի խաչ ելեալ իցէ վասն ձեր, կամ
14 յանուն Պաւղոսի՞ մկրտեցայք։ Գոհանամ զԱս-
տուծոյ իմոյ՝ զի ոչ զոք ի ձէնջ մկրտեցի, բայց միայն
15 զԿրիսպոս եւ զԳայիոս. զի մի՛ ոք ասիցէ թէ յիմ
16 անուն մկրտեցայք։ Տալ ետու կնիք եւ տանն Ստե-
փանեայ. այլ ոք ոչ գիտեմ ամենեւին թէ մկրտե-
17 ցի։ Զի ոչ առաքեաց զիս Քրիստոս մկրտել, այլ
աւետարանել. ոչ ճարտարութեամբ բանից, զի մի՛
18 ընդունայն լիցի խաչն Քրիստոսի։ Զի ճառ խաչին
կորուսելոցն յիմարութիւն է. այլ փրկելոցս մեզ՝
19 զօրութիւն Աստուծոյ։ Զի գրեալ է. Կորուսից զի-
մաստութիւն իմաստնոց, եւ զխորհուրդս խորհրդա-
20 կանաց արհամարհեցից։ Ո՞ւր իմաստուն, ո՞ւր դպիր,
ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ. ո՞չ ապաքէն յիմա-
րեցոյց Աստուած զիմաստութիւն աշխարհիս այսորիկ։
21 Քանզի իմաստութեամբն Աստուծոյ ոչ ծանեաւ աշ-
խարհ իմաստութեամբն զԱստուած. հաճեցաւ Աս-
տուած յիմարութեամբ քարոզութեանն ապրեցու-
ցանել զհաւատացեալս։
22 ԲԱ. Իսկ որովհետեւ Հրեայք նշան հայցեն,
23 եւ հեթանոսք իմաստութիւն խնդրեն. Մեք քարո-
զեսցուք զխաչելեալն Քրիստոս, Հրէից գայթագղու-
24 թիւն եւ հեթանոսաց, յիմարութիւն. Բայց նոցին
իսկ կոչեցելոցն Հրէից եւ հեթանոսաց, զՔրիստոս՝
Աստուծոյ զօրութիւն եւ Աստուծոյ իմաստութիւն։

Զի յիմարն Աստուծոյ իմաստնագոյն է քան զմար- 25
դիկ, եւ տկարն Աստուծոյ զօրագոյն է քան զմարդիկ:
Թէպէտ եւ զձեր իսկ կոչումն տեսէք, եղբարք, զի ոչ 26
բազումք իմաստունք ըստ մարմնոյ, եւ ոչ բազումք
հզօրք, եւ ոչ բազումք ազնուականք. Այլ զյիմարս 27
աշխարհիս ընտրեաց Աստուած, զի յամօթ արասցէ
զիմաստունս. եւ զտկարս աշխարհիս ընտրեաց Աս-
տուած, զի յամօթ արասցէ զհզօրս. Եւ զանտոհմս 28
աշխարհի եւ զարհամարհեալս ընտրեաց Աստուած
եւ զոչինչսն, զի զէսն իմն խափանեսցէ. Որպէս զի մի՛ 29
պարծեսցի ամենայն մարմին առաջի Աստուծոյ: Զի 30
ի նմանէ դուք էք ի Քրիստոս Յիսուս, որ եղեւ մեզ
իմաստութիւն յԱստուծոյ, արդարութիւն եւ սրբու-
թիւն եւ փրկութիւն. Զի որպէս եւ գրեալ է. որ 31
պարծին՝ ի Տէր պարծեսցի:

ԳԼՈՒԽ Բ.

Եւ ես թէպէտ եւ եկի առ ձեզ, եղբարք, ոչ 1
ըստ առաւելութեան ինչ բանից իմաստութեան պատ-
մել ձեզ զվկայութիւն Աստուծոյ. Զի ոչ եթէ ի 2
մտի եդի գիտել ինչ ի ձեզ՝ բայց միայն զՅիսուս
Քրիստոս, եւ զնոյն ի խաչ ելեալ: Եւ ես տկարու- 3
թեամբ եւ երկիւղիւ եւ դողութեամբ բազմաւ եղէ
առ ձեզ. Եւ բանն իմ եւ քարոզութիւն, ոչ պա- 4
տիր բանիւք իմաստութեան, այլ արդեամբք Հոգւոյն
եւ զօրութեամբ. Զի հաւատք ձեր մի՛ իցեն իմաս- 5
տութեամբ մարդկան, այլ զօրութեամբ Աստուծոյ:
ՎԵՐՋ. Զիմաստութիւն խօսիմք ընդ կատա- 6
րեալս. զիմաստութիւն ո՛չ զաշխարհիս այսորիկ, եւ
ո՛չ զիշխանաց աշխարհիս այսորիկ զխափանելեացս
Այլ խօսիմք զԱստուծոյ իմաստութիւնն ծածուկ 7
խորհրդով, զոր յառաջ քան զյաւիտեանս սահմա-
նեաց Աստուած ի փառս մեր. Զոր ոչ ոք յիշխա- 8
նաց աշխարհիս այսորիկ ծանեաւ. զի եթէ էր ծանու-

ցեալ, ոչ արդեօք զՏէրն փառաց ի խաչ հանէին:
9 Այլ որպէս եւ գրեալ է. Զոր ակն ոչ ետես, եւ
ունկն ոչ լուաւ, եւ ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, պա-
տրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց:
10 ԲՓ. Այլ մեզ յայտնեաց Աստուած Հոգւովն
իւրով. զի Հոգին զամենայն քննէ եւ զխորս Աստու-
11 ծոյ: Զի ո՞ ոք ի մարդկանէ գիտէ ինչ զմարդոյն, եթէ
ոչ հոգի մարդոյն՝ որ ի նմա. նոյնպէս եւ ոչ զԱստու-
12 ծոյսն ոք գիտէ՝ եթէ ոչ Հոգին Աստուծոյ: Այլ մեք
ոչ եթէ զհոգի աշխարհիս առաք, այլ զհոգին՝ որ
յԱստուծոյ. զի ծանիցուք զայն՝ որ յԱստուծոյն շնոր-
13 հեցաւ մեզ: Եւ զոր խօսիմքս՝ ոչ եթէ մարդկեղէն
ուսմամբ ճարտարութեամբ բանից, այլ վարդապե-
տութեամբ Հոգւոյն ընդ հոգեւորս զհոգեւորսն հա-
14 մեմատեմք: Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀո-
գւոյն Աստուծոյ, զի յիմարութիւն է նմա. եւ ոչ կարէ
15 գիտել՝ թէ հոգեպէս քննիցի: Իսկ հոգեւորն քննէ
16 զամենայն, եւ ինքն յումեքէ ոչ քննի: Իսկ արդ ո՞վ
գիտաց զմիտս Տեառն, որ եւ խրատու լինիցի նմա.
այլ մեք զմիտս Քրիստոսի ունիմք:

ԳԼՈՒԽ Գ.

1 Եւ ես, եղբարք, ոչ կարացի խօսել ընդ ձեզ
իբրեւ ընդ հոգեւորս, այլ իբրեւ ընդ մարմնաւորս:
2 Իբրեւ տղայոց ի Քրիստոս կաթն ջամբեցի ձեզ,
եւ ոչ հաստատուն կերակուր, զի ոչ եւս կարէիք.
նա եւ արդ իսկ ոչ կարէք, զի դեռ մարմնաւոր էք:
3 Ուր եւ արդ են իսկ ի ձեզ հեռ եւ նախանձ. ո՞չ ա-
4 պաքէն մարմնաւոր էք եւ ըստ մարդկան գնայք: Յոր-
ժամ ասէ ոք ի ձէնջ, ես Պաւղոսեան եմ, եւ միւսն՝
եթէ ես Ապողոսեան, ո՞չ մարդիկ էք. իսկ արդ՝ ո՞վ
5 է Պաւղոսն, կամ ո՞վ է Ապողոս: Պաշտօնեայք՝
որովք հաւատացէքն, եւ իւրաքանչիւր որպէս եւ
6 Տէր ետ: Ես տնկեցի, Ապողոս ջուր ետ, այլ Աս-

տուած աճեցոյց։ Այսուհետեւ ոչ այն ոք ինչ է՝ որ 7
տնկեացն, եւ ոչ այն՝ որ զջուրն ետ. այլ որ աճեցոյցն
Աստուած։ Որ տնկեացն եւ որ զջուրն ետ՝ մի են. 8
բայց իւրաքանչիւր ոք զիւր վարձս առնուցու ըստ իւ-
րում վաստակոց։ Զի Աստուծոյ գործակից եմք, 9
Աստուծոյ արդիւն էք, Աստուծոյ շինած էք։ Ըստ 10
շնորհացն Աստուծոյ՝ որ տուեալ են ինձ, իբրեւ
իմաստուն ճարտարապետ հիմն եդի. բայց այլ է՝ որ
շինէն. այլ իւրաքանչիւր ոք զգոյշ լիցի՝ թէ որպէս
շինիցէ։ Զի հիմն այլ ոք ոչ կարէ դնել՝ քան զե- 11
դեալն, որ է Յիսուս Քրիստոս։

ՎԵՐՋ. Եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ ոսկի, 12
արծաթ, ականս պատուականս, փայտ, խոտ, եղէգն,
Իւրաքանչիւր գործն յայտնելոց է. զի օրն ընտրեսցէ, 13
զի հրով յայտնելոց է. Եւ զիւրաքանչիւր գործն 14
զինչ եւ իցէ՝ հուրն փորձեսցէ։ Եթէ ուրուք գործն 15
զոր շինեաց՝ կացցէ, վարձս առցէ. եւ եթէ ուրուք
գործն այրեսցի՝ տուժեսցի, բայց ինքն կեցցէ. այլ
այնպէս՝ որպէս թէ ի հուր։ Ո՞չ գիտէք՝ եթէ տաճար 16
էք Աստուծոյ, եւ հոգի Աստուծոյ բնակեալ է ի ձեզ։
Եթէ ոք զտաճար Աստուծոյ ապականէ, ապականես- 17
ցէ զնա Աստուած. զի տաճար Աստուծոյ սուրբ է,
որ էք դուք։ Մի ոք զանձն խաբեսցէ. եթէ ոք կա- 18
մեսցի ի ձէնջ իմաստուն լինել յաշխարհիս յայսմիկ,
յիմար լիցի, զի եղիցի իմաստուն։ Զի իմաստութիւն 19
աշխարհիս այսորիկ՝ յիմարութիւն է առաջի Աստու-
ծոյ. քանզի գրեալ է՝ թէ որ ըմբռնէ զիմաստունս ի
խորագիտութեան իւրեանց։ Եւ դարձեալ՝ թէ Տէր 20
ճանաչէ զխորհուրդս իմաստնոց՝ զի են ընդունայն։
Այսուհետեւ մի ոք պարծեսցի ի մարդկանէ։ Զի 21
ամենայն ինչ ձեր է. եթէ Պաւղոս, եթէ Ապողոս, 22
եթէ Կեփաս, եթէ աշխարհ, եթէ կեանք, եթէ
մահ, եթէ որ կան, եթէ հանդերձեալքն. ամենայն
ինչ ձեր է, Դուք Քրիստոսի, Քրիստոս Աստուծոյ։ 23

ԳԼՈՒԽ Դ.

1 Այսպէս համարեսցին զմեզ մարդիկ, իբրեւ
զպաշտօնեայս Քրիստոսի եւ հազարապետս խորհր-
2 դոցն Աստուծոյ: Արդ խնդիր է ի մէջ հազարապե-
3 տաց՝ եթէ ոք հաւատարիմ գտցի: Այլ ինձ եւ այս
անարգանք են, եթէ ի ձէնջ դատեցայց կամ բնաւ
4 իսկ ի մարդկանէ, նա եւ զանձն իմ ոչ քննեմ: Զի
ոչ ինչ գիտեմ զանձին իմոյ, այլ ոչ եթէ այսու ար-
5 դարանամ, զի որ քննէն զիս՝ Տէր է: Այսուհետեւ
մի՛ յառաջ քան զժամանակն դատիք. մինչեւ եկեսցէ
Տէր, որ լուսաւոր առնիցէ զգաղտնիս խաւարի, եւ
յայտնիցէ զխորհուրդս սրտից. եւ ապա իւրաքան-
6 չիւր գովութիւն եղիցի յԱստուծոյ: Զայս, եղբարք,
առակեցի յանձն իմ եւ յԱպողոս վասն ձեր. զի ի
մէնջ ուսջիք՝ մի՛ ինչ առաւել քան զգրեալն իմա-
նալ. զի մի՛ այր քան զընկեր հպարտանայցէք ի վերայ
7 ընկերին: Իսկ արդ ո՞վ է՝ որ քննիցէ զքեզ. զի՞նչ
ունիս՝ զոր ոչ իցէ առեալ. եւ եթէ առեր, զի՞ պար-
8 ծիս իբրեւ չառեալ: Արդէն իսկ յագեալ իցէք, եւ
արդէն մեծացայք, առանց մեր թագաւորեցէք.
եւ երանի թէ թագաւորէիք, զի եւ մեք ընդ ձեզ
9 թագաւորեաք: Ինձ այսպէս թուի թէ զմեզ զառա-
քեալս յետնորդս արար Աստուած, իբրեւ զմահա-
պարտս. զի տեսիլ եղեաք աշխարհի, եւ հրեշտակաց
10 եւ մարդկան: Մեք յիմարք վասն Քրիստոսի, եւ դուք
իմաստունք ի Քրիստոս. մեք տկարք, եւ դուք հզօրք.
11 դուք փառաւորեալք, եւ մեք անարգք: Մինչեւ ցայս-
օր ժամանակի եւ քաղցեաք եւ ծարաւեցաք եւ
մերկ գնացաք եւ կռփահարեցաք եւ անհանգիստ ե-
12 ղեաք. Եւ աշխատեցաք ձեռօք մերովք. բամբասէին
13 զմեզ՝ օրհնէաք. հալածէին՝ յանձն առնուաք. Հայ-
հոյէին՝ աղաչէաք. իբրեւ առակ նշաւակի եղեաք ամե-
նայն աշխարհի. ամենեցուն փարելի լինել մինչեւ

ցայժմ: Ոչ եթէ յամօթ ինչ առնելով զձեզ գրեմ 14
զայս, այլ իբրեւ զորդիս սիրելիս խրատեմ: Թէպէտ 15
եւ բիւր դաստիարակս ունիցիք ի Քրիստոս, այլ ոչ
եթէ բազում հարս. զի ի Քրիստոս Յիսուս աւե-
տարանաւն ես ծնայ զձեզ: Արդ աղաչեմ զձեզ նմա- 16
նողք ինձ եղիջիք (որպէս եւ ես Քրիստոսի): Վասն 17
այնորիկ առաքեցի առ ձեզ զՏիմոթէոս, որ է իմ
որդի սիրելի եւ հաւատարիմ ի Տէր. որ յիշեցուսցէ
ձեզ զճանապարհս իմ, որ ի Քրիստոս Յիսուս. որ-
պէս եւ ամենայն ուրեք յամենայն եկեղեցիս ուսու-
ցանեմ: Որպէս թէ չիցեմ գալոց առ ձեզ՝ ոմանք 18
հպարտացան: Այլ եկից հուպ ընդ հուպ՝ եթէ Տէր 19
կամեսցի. եւ ի միտ առից ոչ զբանս հպարտացելոցն,
այլ զզօրութիւն: Զի ոչ եթէ բանիւք է արքայու- 20
թիւն Աստուծոյ, այլ զօրութեամբ: Արդ ո՞րպէս 21
կամիք. գաւազանա՞ւ եկից առ ձեզ, եթէ սիրով հո-
գւոյն՝ հեզութեան եւ արդարութեան եւ խոնարհու-
թեան:

ԳԼՈՒԽ Ե.

Բնաւ եւ անուանի իսկ ի ձեզ ընդէր պոռնկու- 1
թիւն, եւ այնպիսի պոռնկութիւն՝ որ ոչ եւ ի հե-
թանոսս, որպէս թէ զկին հօր ուրուք ունել: Եւ դուք 2
հպարտացեալ էք. եւ ոչ առաւել սգացարուք, զի
բարձցի ի միջոյ ձերմէ՝ որ զգործն զայն գործեաց:
Զի ես թէպէտ եւ մարմնով մեկուսի եմ, սակայն հո- 3
գւով մերձ եմ. բայց արդէն իսկ իբրեւ ի մօտոյ ընտրե-
ցի զայն՝ որ այնպէսն գործեաց. Յանուն Տեառն 4
մերոյ Յիսուսի Քրիստոսի, ժողովել ձեզ ի միասին
եւ իմով հոգւովս զօրութեամբն հանդերձ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի, Մատնել զայնպիսին սա- 5
տանայի ի սատակումն մարմնոյ. զի ոգին ապրեսցի
յաւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ոչ բա- 6
րւոք են պարծանքդ ձեր. ո՞չ գիտէք՝ եթէ փոքր մի

7 խմոր զամենայն զանգուածն խմորէ: Սրբեցէք ի բաց
զհին խմորն, զի եղիջիք նոր զանգուած, որպէս էքդ
8 անխմորք. քանզի զատիկ մեր զենաւ Քրիստոս: Այ-
սուհետեւ պասցուք տօնս, մի ի խմորն հին եւ մի
ի խմորն չարութեան եւ անզգամութեան, այլ յան-
խմորս սրբութեան եւ ճշմարտութեան:
9 ԲՋ. Գրեցի ձեզ ի թղթի այդր չխառնակել
10 ընդ պոռնիկս: Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս աշխարհիս
այսորիկ կամ ընդ ագահս եւ ընդ յափշտակօղս կամ
ընդ կռապաշտս. ապա թէ ոչ՝ պարտ էիք եւ յաշ-
11 խարհէ իսկ ելանել: Բայց արդ գրեցի ձեզ չխառ-
նակել, եթէ ոք եղբայր անուանեալ, կամ պոռնիկ
իցէ կամ կռապաշտ կամ ագահ կամ բամբասող
կամ արբեցող կամ յափշտակող, ընդ այնպիսումն
12 եւ հաց մի՛ ուտել: Զի՞ կայ իմ եւ զարտաքինսն
դատելոյ. ո՞չ ապաքէն դուք զներքինսն դատիցիք.
13 Եւ զարտաքինսն Աստուած դատիցի. բարձէք զչարն
ի միջոյ ձերմէ:

ԳԼՈՒԽ Զ.

1 Իշխէ՞ ոք ի ձէնջ՝ եթէ իրք ինչ իցեն ընդ ընկերի
իւրում, դատել առաջի անիրաւաց, եւ ոչ առաջի
2 սրբոց: Եթէ ո՞չ գիտէք զի սուրբք զաշխարհ դատին.
եւ եթէ ձեօք դատի աշխարհ, ապա ոչ էք արժանի
3 անարգ ատենից: Ո՞չ գիտէք եթէ զհրեշտակս դա-
4 տիմք, թող թէ զերկրաւորս: Զերկրաւոր ատեանս
եթէ յանձն առնուցուք, զանարգս եկեղեցւոյ դա-
5 տաւորս նստուցանէք: Առ ամօթոյ ձերոյ ասեմ. այն-
չափ ոչ գոյ ոք իմաստուն ի ձեզ, որ կարիցէ իրաւունս
6 ընտրել ի մէջ եղբօր իւրոյ: Այլ եղբայր ընդ եղբօր
7 դատի, եւ զայն՝ ի մէջ անհաւատից: Եւ արդ ամե-
նեւին իսկ վատթարութիւն է ի ձեզ, զի դատաստանք
իսկ գոն ի միջի ձերում. ընդէ՞ր ոչ դուք զրկիք եւ
8 ոչ դուք առաւել նեղիք: Այլ դուք զրկէք եւ նե-

ղէք, եւ այդ՝ զեղբարս եւս: Եթէ ո՞չ գիտէք զի 9
անիրաւք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն.
մի խաբիք՝ ոչ պոռնիկք, ոչ կռապաշտք, ոչ շունք,
Ոչ իգացեալք, ոչ արուագէտք, ոչ գողք, ոչ ա- 10
գահք, ոչ արբեցողք, ոչ բամբասողք եւ ոչ յափշտ-
տակողք՝ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն:
Եւ դուք այնպիսիք ոմանք էիք. այլ լուացարուք, 11
այլ սրբեցարուք, այլ արդարացարուք յանուն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ ի Հոգին Աստուծոյ
մերոյ:

ԳԼ. Ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ ամենայն 12
ինչ օգուտ է. ամենայն ինչ ինձ մարթ է, այլ ոչ
եթէ ես ընդ իշխանութեամբ ուրուք լինիցիմ: Կերա- 13
կուր որովայնի, եւ որովայն կերակրոյ. այլ Աստուած
զսա եւ զնոսա խափանեսցէ. բայց մարմին ոչ պոռ-
նկութեան, այլ Տեառն, եւ Տէր մարմնոյ: Այլ Աս- 14
տուած՝ որ եւ զՏէրն յարոյց, եւ զմեզ յարուսցէ
զօրութեամբ իւրով: Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր 15
անդամք են Քրիստոսի. արդ առեալ զանդամն
Քրիստոսի, առնիցեմ անդամս պոռնկի. քաւ լիցի:
Եթէ ո՞չ գիտէք զի որ մերձենայ ի պոռնիկ՝ մի մար- 16
մին է. Եղիցին, ասէ, երկոքեան ի մարմին մի: Եւ որ 17
մերձենայ ի Տէր՝ մի հոգի է: Փախերուք ի պոռնկու- 18
թենէ: Զամենայն մեղս՝ զոր եւ գործէ մարդ, ար-
տաքոյ մարմնոյ իւրոյ է. իսկ որ պոռնկին՝ յիւր մար-
մինն մեղանչէ: Եթէ ո՞չ գիտէք զի մարմինք ձեր 19
տաճար են Հոգւոյն սրբոյ՝ որ է ի ձեզ, զոր ունիք
յԱստուծոյ. եւ չէք անձանց տէր: Քանզի գնոց գնե- 20
ցայք. փառաւոր արարէք զԱստուած ի մարմինս ձեր
եւ յոգիս, որ է յԱստուծոյ:

ԳԼՈՒԽ Է.

Այլ վասն որոյ գրեցէքն առ իս, բարւոք է մար- 1
դոյ ի կին մարդ չմերձենալ: Բայց վասն պոռնկու- 2

թեան իւրաքանչիւր ոք զիւր կին կալցի. եւ իւրաքան-
3 չիւր ոք կին զիւր այր կալցի: Կնոջ այր իւր զպարտն
4 հատուսցէ. նոյնպէս եւ կին՝ առն իւրում: Զի կին
մարմնոյ իւրում ոչ իշխէ, այլ այրն. նոյնպէս եւ այրն
5 իւրում մարմնոյ ոչ իշխէ, այլ կինն: Մի՛ զրկէք զմի-
մեանս. բայց եթէ ինչ ի միաբանութենէ առ ժամա-
նակ մի, զի ուխտիցն պարապիցէք. եւ դարձեալ ի
նոյն դարձջիք, զի մի՛ փորձեսցէ զձեզ սատանայ
6 վասն անխառնութեան ձերոյ: Զայս ասեմ ներելով
7 եւ ոչ հրաման տալով: Քանզի կամիմ եթէ ամենայն
մարդ լինէր իբրեւ զիս. այլ իւրաքանչիւր ոք զիւր
շնորհս ունի յԱստուծոյ, ոմն այսպէս եւ ոմն այնպէս:
8 Բայց ամուրեացն եւ այրեացն ասեմ, լաւ է նոցա թէ
9 կայցեն իբրեւ զիս: Ապա թէ ոչ ունիցին ժոյժ՝ ամու-
10 սնասցին. զի լաւ է ամուսնանալ՝ քան զջեռնուլ: Այլ
կանամբեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ Տէր. կնոջ
11 յառնէ մի՛ մեկնել: Ապա եթէ մեկնեսցի, անայր
մնասցէ կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի.
եւ առն՝ զկին իւր մի՛ թողուլ:

12 ՎԵՐՋ. Բայց այլոց ես պատուիրեմ, ոչ եթէ
Տէր. եթէ ոք եղբայր կին ունիցի անհաւատ, եւ նմա
13 հաճոյ իցէ բնակել ընդ նմա՝ մի՛ թողցէ զնա: Եւ
կին՝ որ ունիցի այր անհաւատ, եւ նմա կամ իցէ
14 բնակել ընդ նմա՝ մի՛ թողցէ զայրն. Զի սուրբ է այրն
անհաւատ՝ կնաւն, եւ սուրբ է կինն անհաւատ՝ ա-
րամբն. ապա թէ ոչ՝ որդիքն ձեր պիղծ էին. բայց
15 այժմ սուրբ են: Ապա եթէ անհաւատն մեկնեսցի,
մեկնեսցի. զի ոչ ինչ հարկ ի վերայ կայ եղբօրն կամ
քեռն՝ յայնպիսի իրս. քանզի ի խաղաղութիւն կո-
16 չեաց զմեզ Աստուած: Զի՞ գիտես, կին դու, եթէ
զայր քո ապրեցուսցես. կամ զի՞ գիտես, այ՛ր դու,
17 եթէ զկին քո ապրեցուսցես. Եթէ ոչ՝ իւրաքանչիւր
ումեք որպէս եւ բաժանեաց Տէր, զիւրաքանչիւր ոք
որպէս եւ կոչեաց Աստուած՝ այնպէս գնասցէ. եւ

այսպէս ընդ ամենայն եկեղեցիս հրամանս տամ: Թլփա- 18
տեա՞լ ոք կոչեցաւ՝ մի՛ յանկասցի անթլփատութեան.
յանթլփատութենէ՞ ոք կոչեցաւ՝ մի՛ թլփատեսցի.
Զի թլփատութիւն ոչ ինչ է եւ անթլփատութիւն 19
ոչ ինչ. այլ պահպանութիւն Աստուծոյ պատուի-
րանացն: Բայց իւրաքանչիւր ոք յոր կոչումն կոչեցաւ՝ 20
ի նմին կացցէ. Ծառա՞յ կոչեցար՝ մի՛ փոյթ լիցի քեզ. 21
այլ թէ կարիցես եւս ազատ լինել՝ քեզ այնպէս լաւ
լիցի: Զի որ ի Տէր կոչեցեալ իցէ ծառայն՝ ազատ 22
Տեառն է. նոյնպէս եւ որ ազատն կոչեցեալ է՝ ծա-
ռայ Քրիստոսի է. Գնոց գնեցայք՝ մի՛ լինիք ծա- 23
ռայք մարդկան: Իւրաքանչիւր ոք՝ յոր կոչումն կոչե- 24
ցաւ, եղբարք, ի նմին կացցէ առաջի Աստուծոյ:

ԳՓ · Այլ վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառ- 25
նէ ոչ ունիմ. բայց խրատ տամ՝ որպէս ողորմելոյ
ուրուք ի Տեառնէ, հաւատարիմ լինել: Համարիմ 26
թէ այնպէս լաւ իցէ. բայց վասն վտանգին որ ի վերայ
կայ՝ բարւոք է մարդոյ թէ այնպէս իցէ: Կապեալ ես 27
ի կին, մի՛ խնդրեր արձակել. արձակեալ ես ի կնոջէ,
մի՛ խնդրեր կին: Զի եթէ ամուսնանայցես՝ ոչ մե- 28
ղար. եւ եթէ ամուսնանայցէ կոյս՝ ոչ մեղաւ, բայց
նեղութիւն մարմնոյ ունիցին այնպիսիքն. այլ ես
խնայեցի ի ձեզ: Բայց զայս ասեմ, եղբարք, եթէ ժա- 29
մանակս կարճեալ է այսուհետեւ. զի որ ունիցին կա-
նայս՝ որպէս թէ չունիցին. Եւ որ լայցենն՝ որպէս թէ 30
ոչ լայցեն. եւ որ խնդանն՝ որպէս թէ չխնդայցեն.
եւ որ գնենն՝ որպէս թէ չունիցին. Եւ որ վարենն 31
զաշխարհս՝ որպէս թէ չվայելիցեն. զի անցեալ է
վայելչութիւն աշխարհիս այսորիկ: Այլ կամիմ 32
զձեզ անհոգս լինել. զի որ անկինն է՝ հոգայ զՏեառն,
թէ որպէս հաճոյ լիցի Տեառն. Եւ որ կանամբին է, 33
հոգայ զաշխարհիս՝ թէ որպէս հաճոյ լիցի կնոջ իւ-
րում: Եւ ահա մեկնեցան ի միմեանց առնականն եւ 34
կոյսն. զի կոյսն հոգայ զՏեառն՝ զի իցէ սուրբ մար-

մնով եւ հոգւով, եւ առնակինն հոգայ զաշխարհիս՝
35 թէ որպէս հաճոյ լիցի առն իւրում: Այլ զայս վասն
ձերոյ օգտի ասեմ․ ոչ եթէ խեղդ ինչ արկանեմ ձեզ,
այլ վասն պարկեշտութեան եւ հպատակութեան
Տեառն առանց զբաղանաց:

36 ԳԶ․ Ապա թէ ոք ամօթ համարեսցի վասն կու-
սին իւրոյ՝ եթէ իցէ ելեալ ըստ չափ, եւ այնպէս ինչ
պարտ իցէ լինել, զոր կամեսցի արասցէ, ոչ մեղանչէ՝
37 ամուսնասցի: Իսկ որ հաստատեալ է ի սրտի իւրում,
եւ վտանգ ինչ ոչ իցէ նմա, իշխանութիւն ունի ի
վերայ կամաց իւրոց, եւ զայն ընտրեաց ի սրտի իւ-
38 րում՝ պահել զկոյսն իւր, բարւոք առնէ: Եւ որ ա-
մուսնացուցանէ զկոյսն իւր՝ բարւոք առնէ. եւ որ ոչն
39 ամուսնացուցանէ՝ լաւ եւս առնէ․ Կին կապեալ է՝
ցորքան ժամանակս կենդանի է այր նորա․ ապա եթէ
ննջեսցէ այր նորա, ազատ է՝ ում կամիցի ամուսնա-
40 նալ․ բայց միայն տերամբ: Բայց երանելի եւս է՝ թէ
այնպէս կացցէ ըստ իմում խրատու․ եւ այսպէս հա-
մարիմ, թէ եւ յիս իցէ Հոգի Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Ը․

1 Այլ վասն զոհից կռոցն՝ գիտեմք եթէ ամենե-
քին գիտութիւն ունիմք․ գիտութիւն հպարտացու-
2 ցանէ, այլ սէր շինէ: Եթէ ոք կամիցի գիտել ինչ,
3 չեւ եւս գիտաց՝ որպէս արժանն էր գիտել: Բայց որ
4 սիրէ զԱստուած, նա է ծանուցեալ ի նմանէ: Այլ
վասն կերակրոցն զոհելոյ՝ գիտեմք եթէ ոչ ինչ իսկ
կուռք են յաշխարհի․ զի չիք ոք Աստուած՝ բայց ի
5 միոյն: Զի թէպէտ եւ իցեն անուանեալ աստուածք՝
եթէ յերկինս եւ եթէ յերկրի․ որպէս եւ են աստու-
6 ածք բազումք եւ տեարք բազումք․ Այլ մեզ մի է
Աստուած Հայր՝ յորմէ ամենայն, եւ մեք ի նա․ եւ
մի Տէր Յիսուս Քրիստոս՝ որով ամենայն եւ մեք
նովաւ:

ՎԵՐՋ. Այլ ոչ յամենեսին գիտութիւն է. ոմանք 7
առ խղճի մտաց մինչեւ ցայժմ զկռոցն իբրեւ զզո-
հեալ ուտեն. եւ խիղճ մտացն նոցա՝ քանզի տկար
է, պղծի: Այլ կերակուր զմեզ առաջի Աստուծոյ 8
ոչ կացուցանէ. ոչ եթէ չուտեմք՝ պակասեմք ինչ,
եւ ոչ եթէ ուտեմք՝ առաւելումք ինչ: Բայց զգուշ 9
լերուք՝ գուցէ իշխանութիւնդ ձեր այդ՝ գայթագղու-
թիւն լինիցի տկարաց: Եթէ ոք տեսանիցէ զքեզ որ 10
զգիտութիւնդ ունիս՝ բազմեալ ի մեհենի, ո՞չ ապա-
քէն խիղճ մտացն նորա՝ որ տկարութեամբն զգա-
ծեալ է, անդրէն շինիցի ուտել զզոհեալն. Եւ կո- 11
րնչիցի տկար եղբայրն ի քում գիտութեանն, վասն
որոյ Քրիստոս մեռաւ: Եւ այնպէս յանցուցեալ 12
յեղբարս, եւ զխիղճ մտաց տկարացն զայրացուցեալ,
ի Քրիստոս մեղանչէ: Վասն որոյ եթէ կերակուր 13
գայթագղեցուցանէ զեղբայրն իմ, ոչ կերայց միս
յաւիտեան, զի մի՛ զեղբայրն իմ գայթագղեցուցից:

ԳԼՈՒԽ Թ.

Ո՞չ ապաքէն ազատ եմ, ո՞չ ապաքէն առաքեալ 1
եմ, ո՞չ ապաքէն զՏէր մեր Յիսուս Քրիստոս աչօք
իմովք տեսի, ո՞չ ապաքէն գործ իմ դուք էք ի Տէր:
Թէպէտ եւ այլոց չիցեմ առաքեալ, այլ դէպ ձեզ 2
եմ. զի կնիք իսկ առաքելութեան իմոյ դուք էք ի
Տէր: Իմ պատասխանի՝ ուր զիս հարցանիցեն, այս է. 3
Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն ուտել եւ ըմպել. 4
Միթէ ո՞չ ունիցիմք իշխանութիւն զքորս կանայս 5
շրջեցուցանել ընդ մեզ. որպէս եւ այլ առաքեալքն
եւ եղբարքն Տեառն եւ Կեփաս: Եթէ միայն ես եւ 6
Բառնաբա՞ս ոչ ունիցիմք իշխանութիւն չգործել
ինչ: Ո՞ ոք երբեք զինուորիցի իւրովք թոշակօք. ո՞ 7
ոք տնկիցէ այգի, եւ ի պտղոյ նորա ոչ ուտիցէ. ո՞ ոք
արածիցէ խաշն, եւ ի կաթանէ խաշինն ոչ ուտիցէ:
Միթէ ըստ մարդկութեա՞ն խօսիցիմ զայս. կամ թէ 8

9 եւ օրէնքն զայն ո՞չ ասիցեն: Ի Մովսիսի իսկ օրէնսն
գրեալ է. Մի՛ կապեսցես զցռուկ եզին կալոտւոյ. միթէ
10 զեզա՞նց ինչ փոյթ էր Աստուծոյ: Ո՞չ ապաքէն վասն
մեր ասէ. քանզի վասն մեր գրեցաւ. զի յուսով
պարտի որ սերմանէն՝ սերմանել, եւ որ կասուն՝ յու-
11 սով վայելել: Եթէ մեք ի ձեզ զհոգեւորսն սերմա-
նեցաք՝ մեծ ի՞նչ է եթէ ի ձէնջ զմարմնաւորսդ հնձի-
12 ցեմք: Եթէ այլք ձերով իշխանութեամբդ վայելեն,
ո՞չ առաւել եւս մեք. այլ ոչ ի գործ ինչ արկաք
զիշխանութիւնս զայս. բայց ամենայնի համբերեմք.
13 զի մի՛ խափան ինչ լինիցիմք աւետարանին: Ո՞չ գի-
տէք եթէ որ ի տաճարին գործեն, ի տաճարէ անտի
ուտեն. եւ որ սեղանոյն պաշտօնեայք են, ի սեղանոյ
14 անտի վայելեն: Նոյնպէս եւ Տէր հրաման ետ որոց
զաւետարանն աւետարանեն, յաւետարանէ անտի
15 կեալ: Բայց ես եւ ոչ զմի ինչ յայսցանէ արկի ի գործ,
եւ ոչ գրեցի զայդ՝ զի ինձ այնպէս ինչ լինիցի. լաւ
է ինձ մանաւանդ մեռանել, եւ ոչ զի զպարծանս իմ
16 ոք ընդունայն համարիցի: Զի եթէ աւետարանեմ,
ոչ ինչ են ինձ պարծանք, քանզի հարկ ի վերայ կայ.
17 բայց վա՛յ է ինձ, եթէ ոչ աւետարանեմ: Եթէ կա-
մաւ զայն առնեմ, վարձք են ինձ. եւ եթէ ակամայ՝
18 տնտեսութիւն յանձն է ինձ: Եւ արդ զի՞նչ վարձք
իցեն ինձ, եթէ յաւետարանելն ձրի տաց զաւետա-
րանն՝ զի մի՛ զեղծիցիմ ինչ իշխանութեամբս իմով
19 յաւետարանի անդ: Քանզի ազատ էի յամենայնէ,
եւ ամենեցուն զանձն ի ծառայութեան կացուցի. զի
20 զբազումս շահեցայց: Եղէ ընդ Հրեայսն իբրեւ
21 զՀրեայ, զի զՀրեայսն շահեցայց: Եղէ ընդ օրինօք
իբրեւ զայնոսիկ՝ որ ընդ օրինօքն էին. իբրեւ ոչ եթէ
ընդ օրինօքն էի, այլ զի որ ընդ օրինօքն իցեն՝ եւ
զնոսա շահեցայց. ընդ անօրէնսն եղէ իբրեւ զանօրէն
իբր ոչ եթէ անօրէն ինչ էի յԱստուծոյ, այլ ընդ
22 օրինօքն Քրիստոսի. զի շահեցայց զանօրէնսն: Եղէ

ընդ տկարսն իբրեւ տկար, զի զտկարսն շահեցայց.
ընդ ամենայնի ամենայն եղէ, զի թերեւս ապրեցուցից
զոմանս: Զայս ամենայն առնեմ վասն աւետարա- 23
նին, զի կցորդ եղէց նմա:
ԻԴ. Ոչ գիտէք եթէ որ յասպարիսին ընթա- 24
նան, ընթանալ ամենեքին ընթանան. բայց մի ոք
առնու զյաղթութեանն. այնպէս ընթացարուք՝ զի
հասանիցէք: Ամենայն որ պատերազմի՝ ամենայնի 25
ժուժկալ լինի. նոքա զի զեղծանելի պսակն առնու-
ցուն, եւ մեք զանեղծութեանն: Արդ ես իսկ այնպէս 26
ընթանամ, ոչ որպէս յանրեւոյթս. այնպէս մրցիմ,
որպէս ոչ թէ զհողմս ինչ կոծելով. Այլ ճնշեմ 27
զմարմինս իմ եւ հնազանդեցուցանեմ. զի գուցէ որ
այլոցն քարոզեցի՝ ես ինքնին անպիտան գտանիցիմ:

ԳԼՈՒԽ Ժ.

Ոչ կամիմ եթէ տգէտ իցէք, եղբարք, զի 1
հարքն մեր ամենեքին ընդ ամպովն էին, եւ ամենե-
քին ընդ ծովն անցին. Եւ ամենեքին ի Մովսէս 2
մկրտեցան յամպն եւ ի ծովն. Եւ ամենեքին զնոյն 3
հոգեւոր կերակուրն կերան. Եւ ամենեքին զնոյն հո- 4
գեւոր ըմպելին արբին, զի ըմպէին ի հոգեւոր վիմէն՝
որ երթայր զհետ նոցա, եւ վէմն էր ինքն Քրիստոս:
Այլ ոչ եթէ ընդ բազումս ի նոցանէ հաճեցաւ Աս- 5
տուած. քանզի տապաստ անկան յանապատի անդ:
Եւ այն օրինակ լինէր վասն մեր. զի մի լիցուք ցան- 6
կացողք չարեաց, որպէս եւ նոքայն ցանկացան: Եւ 7
մի՛ կռապաշտք լինել, որպէս ոմանք ի նոցանէ. որ-
պէս եւ գրեալ է. Նստաւ ժողովուրդն ուտել եւ ըմ-
պել եւ յարեան ի խաղալ: Եւ մի՛ պոռնկեսցուք, 8
որպէս ոմանք պոռնկեցան ի նոցանէ, եւ անկան ի
միում աւուր քսան եւ չորք հազարք: Եւ մի՛ փոր- 9
ձեսցուք զՏէր, որպէս ոմանք ի նոցանէ փորձեցին,
եւ յօձից անտի սատակեցան: Եւ մի՛ տրտնջեսցուք, 10

որպէս ոմանք ի նոցանէ տրտնջեցին, եւ կորեան ի
11 սատակչէ անտի: Այլ այն ամենայն օրինակաւ ան-
ցանէր ընդ նոսա. բայց գրեցաւ վասն մերոյ խրատու,
յորս վախճան յաւիտենիցն եհաս:
12 ԳԹ. Այսուհետեւ որ համարիցի հաստատուն
13 կալ՝ զգոյշ լիցի, գուցէ անկանիցի: Փորձութիւն ի
ձեր վերայ ոչ է եկեալ՝ բաց ի մարդկանէ. այլ հաւա-
տարիմ է Աստուած՝ որ ոչ արկցէ զձեզ ի փոր-
ձութիւն առաւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ
փորձութեան եւ զելսն, զի համբերել կարասջիք:
14 Վասն որոյ, սիրելիք իմ, փախերուք ի կռապաշտու-
15 թենէ: Իբրեւ ընդ իմաստունս խօսիմ. ընտրեցէք ձե-
16 զէն զոր ասեմս: Բաժակն օրհնութեան զոր օրհնեմք՝
ո՞չ ապաքէն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի.
հացն զոր բեկանեմք՝ ո՞չ ապաքէն հաղորդութիւն է
17 մարմնոյն Քրիստոսի: Զի մի հաց, մի մարմին եմք
բազումքս. զի ամենեքին ի միոջէ հացէ անտի վայե-
18 լեմք: Տեսէք զԻսրայէլ ըստ մարմնոյ. ո՞չ ապաքէն
19 որ ուտեն ի զոհիցն՝ հաղորդք են սեղանոյն: Իսկ արդ
զի՞նչ ասեմ. եթէ զոհեալն իցէ՞ ինչ, եւ կամ թէ
20 կուռքն իսկ իցե՞ն ինչ: Այլ զոր զոհենն հեթանոսք,
դիւաց եւ ոչ Աստուծոյ զոհեն. ոչ կամիմ զձեզ
հաղորդս դիւաց լինել. քանզի ոչ կարէք զբաժակն
21 Տեառն ըմպել եւ զբաժակն դիւաց. Եւ ոչ կարէք
ի սեղանոյ Տեառն վայելել եւ ի սեղանոյ դիւաց:
22 Եթէ նախանձ ինչ արկանիցեմք Տեառն. միթէ զօ-
րագո՞յնք իցեմք քան զնա: Ամենայն ինչ ինձ մարթ
23 է, այլ ոչ ամենայն ինչ օգուտ է: Ամենայն ինչ ինձ
24 մարթ է, այլ ոչ ամենայն ինչ շինէ: Մի՛ ոք զանձին
25 եւեթ խնդրիցէ, այլ եւ զընկերին: Ամենայն ինչ որ
ի սպանդանոցի վաճառի, կերայք եւ մի՛ խտրէք
26 վասն խղճի մտաց. Զի Տեառն է երկիր լրիւ իւրով:
27 Եթէ ոք կոչեսցէ զձեզ յանհաւատից եւ կամիցիք եր-
թալ, զամենայն ինչ՝ որ առաջի դնիցի, կերայք եւ

մի՛ խտրէք վասն խղճի մտաց: Ապա եթէ ոք ասիցէ 28
ձեզ՝ եթէ այդ զոհեալ է, մի՛ ուտիցէք վասն նորա՝
որ գուշակն եղեւ, եւ վասն խղճի մտացն: Այլ 29
զխիղճ մտացն ասեմ ոչ զքոյն, այլ զընկերին. իսկ
ընդէ՞ր բնաւ ազատութիւնս իմ դատիցի յայլոյ խղճէ
մտաց: Եթէ ես շնորհօք վայելեմ, ընդէ՞ր հայհոյի- 30
ցիմ, վասն որոյ ես գոհանամ: Արդ եթէ ուտիցէք, 31
եթէ ըմպիցէք, եթէ զինչ եւ գործիցէք, զամենայն
ինչ ի փառս Աստուծոյ արասջիք: Առանց գայթա- 32
գղութիւն դնելոյ Հրէից եւ հեթանոսաց լինիջիք, եւ
եկեղեցւոյն Աստուծոյ: Որպէս եւ ես ամենեւին ամե- 33
նեցուն հաճոյ լինիմ. ոչ խնդրեմ զանձին օգուտ,
այլ զբազմաց՝ զի ապրեսցին:

ԳԼՈՒԽ ԺԱ.

ԿԶ· ՛Նմանողք ինձ եղերուք, որպէս եւ ես Քրիս- 1
տոսի: Գովեմ զձեզ՝ զի զամենայն ինչ զիմ յիշէք. 2
եւ որպէս աւանդեցի ձեզ՝ զաւանդութիւնսն ունիցիք:
Կամիմ զի գիտիցէք դուք եթէ առն ամենայնի գլուխ 3
Քրիստոս է, եւ գլուխ կնոջ այր, եւ գլուխ Քրիս-
տոսի Աստուած: Ամենայն այր՝ յորժամ յաղօթս 4
կայցէ կամ մարգարէանայցէ, եւ զգլուխն ծածկեալ
ունիցի, յամօթ առնէ զգլուխն իւր: Եւ ամենայն 5
կին՝ յորժամ յաղօթս կայցէ կամ մարգարէանայցէ
բացաւ գլխով, յամօթ առնէ զգլուխն իւր, զի այն-
պէս համարի թէ գերծեալ իցէ: Զի եթէ ոչ սքօ- 6
ղեսցի կին, փոքրեսցէ զհերս իւր. ապա թէ անպա-
տեհ է կնոջ փոքրել կամ գերծուլ, սքօղեսցի: Այր 7
մարդոյ չէ պարտ ծածկել զգլուխ, զի պատկեր եւ
փառք Աստուծոյ է. իսկ կին փառք առն իւրոյ է:
Զի ոչ եթէ այր ի կնոջէ է, այլ կին յառնէ: Քան- 8
զի ոչ իսկ հաստատեցաւ այր վասն կնոջ, այլ կին 9
վասն առն: Վասն այնորիկ պարտի կինն շուք դնել 10
գլխոյն վասն հրեշտակաց: Բայց ոչ կին առանց առն, 11

12 Եւ ոչ այր առանց կնոջ ի Տէր։ Զի որպէս կին յառ-
նէ՝ նոյնպէս եւ այր ի կնոջէ, բայց ամենայն յԱստու-
13 ծոյ։ Այլ դուք ձեզէն տուք զիրաւդ․ արժա՞ն է կնոջ
14 մարդոյ հոլանի յաղօթս կալ առաջի Աստուծոյ։ Եւ
ո՞չ բնութիւնն իսկ ուսուցանէ զձեզ․ զի այր եթէ գի-
15 սաւոր է՝ անարգանք են նմա․ Բայց կին եթէ գիսա-
ւոր է՝ փառք են նմա․ զի գէսք փոխանակ զգեստու
16 տուեալ են նմա։ Ապա եթէ ոք կամի հակառակող
լինել, մեք չունիմք այնպիսի սովորութիւն, եւ ոչ
եկեղեցիքն Աստուծոյ։
17 ՎԵՐՋ․ Այլ զայս պատուիրեմ, ոչ որպէս եթէ
գովեցեմ, զի ոչ ի լաւ անդր, այլ ի վատթարն նկր-
18 տիք։ Նախ՝ յորժամ ի մի վայր ժողովիցիք յեկեղե-
ցին, լսեմ եթէ հերձուածք գոն ի ձեզ․ եւ սակաւ
19 ինչ հաւատացի։ Բայց եւ հերձուածք լինելոց են ի
20 ձեզ․ զի որ ընտիրքն իցեն ի ձեզ՝ երեւեսցին։ Եւ
արդ ի ժողովելն ձեզ ի միասին՝ ոչ է տուն Տեառն
21 ձեզ տեղի հաց ուտելոյ։ Զի իւրաքանչիւր ոք զիւր
ընթրիս յառաջանայ ուտել, եւ ոմն քաղցեալ եւ
22 ոմն արբեալ։ Միթէ տունս ո՞չ ունիցիք ուտելոյ եւ
ըմպելոյ․ եթէ զեկեղեցեաւն Աստուծոյ արհամար-
հէք, եւ յամօթ առնէք զչքաւորսն․ զի՞նչ ասացից,
23 գովեցի՞ց զձեզ․ յայդմ ոչ գովեմ։ Զի ես ընկալայ
ի Տեառնէ՝ զոր եւ ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յի-
24 սուս ի գիշերին՝ յորում մատնէր, առ հաց․ Գոհա-
ցաւ, եբեկ եւ ասէ․ Առէք եւ կերայք․ այս է մարմին
իմ, որ վասն ձեր բաշխի․ զայս արարէք առ իմոյ յի-
25 շատակի։ Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն առ
եւ ասէ․ Այս բաժակ՝ նոր ուխտ է իմով արեամբ․
զայս արարէք, քանիցս անգամ եթէ ըմպիցէք՝ առ
26 իմոյ յիշատակի։ Քանիցս անգամ եթէ ուտիցէք
զհացս զայս եւ զբաժակս ըմպիցէք, զմահն Տեառն
27 պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա։ Այսուհետեւ որ
ուտիցէ զհացս կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անար-

ժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ եւ արեան
Տեառն: փորձեսցէ մարդ զանձն իւր, եւ ապա ի հացէ 28
անտի կերիցէ եւ ի բաժակէն արբցէ: Զի որ ուտէ 29
եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստան անձին իւ-
րում ուտէ եւ ըմպէ. զի ոչ խտրէ զմարմինն Տեառն:
Վասն այնորիկ իսկ են ի ձեզ բազում հիւանդք եւ 30
ախտաժէտք. եւ շատ եւս այն են, որ եւ ննջեցեալքն
իսկ իցեն: Զի եթէ զանձինս քննէաք՝ ապա ոչ դա- 31
տապարտէաք: Եւ եթէ դատիմք՝ ի Տեառնէ խրա- 32
տիմք, զի մի ընդ աշխարհի դատապարտեսցուք: Այ- 33
սուհետեւ, եղբարք, յորժամ ի մի վայր ժողովիցիք
ուտել՝ միմեանց մնասջիք: Ապա եթէ ոք քաղցեալ 34
իցէ՝ ի տան իւրում կերիցէ. զի մի ի դատապարտու-
թիւն ժողովիցիք: Բայց զայլ ինչ յորժամ եկից՝
յանժամ պատուիրեցից:

ԳԼՈՒԽ ԺԲ·

ԵՒ· Այլ վասն հոգեւորացն, եղբարք, ոչ կամիմ 1
եթէ տգէտք իցէք: Գիտէք իսկ զի մինչ հեթանոսքն 2
էիք, առ կուռս անմռունչս որպէս երթայիք եւ
գայիք: Վասն որոյ ցուցանեմ ձեզ, զի ոչ ոք հո- 3
գւով Աստուծոյ խօսի, եւ ասիցէ թէ նզովեալ Յի-
սուս. եւ ոչ ոք կարէ ասել Տէր զՅիսուս, եթէ ոչ
Հոգւովն սրբով: Թէպէտ եւ բաժինք շնորհաց են, 4
այլ Հոգի նոյն է: Եթէ բաժինք պաշտամանց են, 5
այլ Տէր նոյն է: Եթէ բաժինք աջողութեանց են, 6
այլ Աստուած նոյն է, որ աջողէ զամենայն յամե-
նայնի: Բայց իւրաքանչիւր ումեք տուեալ է յայտ- 7
նութիւն Հոգւոյն՝ առ իւրաքանչիւր օգուտ: Ումեմն 8
ի Հոգւոյն տուեալ է բան իմաստութեան, այլում
բան գիտութեան ըստ նմին Հոգւոյ. Միւսումն հա- 9
ւատք նովին Հոգւով. այլում շնորհք բժշկութեանց
նովին Հոգւով. Այլում աջողութիւնք զօրութեանց, 10
այլում մարգարէութիւն, այլում ընտրութիւն հո-

գւոց, այլում ազգք լեզուաց, այլում թարգմանու-
11 թիւնք լեզուաց: Այլ զայս ամենայն աջողէ մի եւ
նոյն Հոգի, եւ բաժանէ իւրաքանչիւր որպէս եւ կամի:
12 ԵԳ. Որպէս մարմին մի է, եւ անդամս բազումս
ունի, եւ ամենայն բազում անդամք մարմնոյն՝ մի մար-
13 մին է. նոյնպէս եւ Քրիստոս: Քանզի միով Հոգւով
մեք ամենեքին ի մի մարմին մկրտեցաք. եթէ Հրեայք,
եթէ հեթանոսք, եթէ ծառայք, եթէ ազատք, ա-
14 մենեքին զմի Հոգի արբաք: Քանզի մարմին ոչ մի
15 անդամ է, այլ բազում: Եթէ ասիցէ ոտն, զի չեմ
ձեռն՝ չեմ ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ ի մարմնոյ
16 անտի: Եթէ ասիցէ ունկն, վասն զի չեմ ակն՝ չեմ
ի մարմնոյ անտի, ոչ այնու չիցէ ի մարմնոյ անտի:
17 Եթէ ամենայն մարմին ակն էր՝ ո՞ւր էր ունկն. եւ
18 եթէ ամենայն լսելիք էին՝ ո՞ւր էին հոտոտելիք: Բայց
արդ Աստուած եդ զանդամն՝ զմի մի իւրաքանչիւր
19 ի նոցանէ ի մարմին, որպէս եւ կամեցաւ: Ապա թէ
20 էր ամենայն մի անդամ, ո՞ւր էր մարմին: Բայց արդ
21 անդամք բազում են, եւ մարմին մի: Ոչ կարէ ակն
ասել ձեռին, թէ չես ինձ պիտոյ, եւ կամ դարձեալ
22 գլուխն ոտին՝ թէ չէք ինձ պիտոյ: Այլ առաւել որ
թուին անդամք մարմնոյն թէ տկարագոյնք իցեն, կա-
23 րեւորք են. Եւ որ թուին թէ անարգագոյնք իցեն
մարմնոյն, այնց առաւելագոյն պատիւ առնեմք. եւ ա-
մօթոյքն մեր առաւել եւս պարկեշտութիւն ունին:
24 Եւ պարկեշտից մերոց չէ ինչ պիտոյ. քանզի Աս-
տուած խառնեաց զմարմինն, եւ նուաղին առաւել
25 եւս պատիւ ետ. Զի մի՛ իցեն հերձուածք ի մարմնի
անդ, այլ զի նոյնք զմիմեանց հոգայցեն անդամքն:
26 Եթէ վշտանայ ինչ մի անդամն, վշտանան ամենայն
անդամքն ընդ նմա. եւ եթէ փառաւորի մի անդամն,
27 խնդան ամենայն անդամքն ընդ նմա: Այլ դուք մար-
մին Քրիստոսի էք եւ անդամք յանդամոց նորա:
28 ՎԵՐՋ. Եւ զորս եդ Աստուած յեկեղեցւոջ՝ այս

են. Նախ զառաքեալս, երկրորդ զմարգարէս, երրորդ
զվարդապետս, ապա զզօրութիւնս, ապա շնորհս
բժշկութեանց, օգնութիւնս, վարիչս, ազգս լեզուաց,
թարգմանութիւնս լեզուաց: Միթէ ամենեքին առա- 29
քեա՞լք իցեն. միթէ ամենեքին մարգարէ՞ք իցեն.
միթէ ամենեքին վարդապե՞տք իցեն. միթէ ամենեքին
զօրութի՞ւնք իցեն. Միթէ ամենեքին շնորհս բժըշ- 30
կութեա՞ն ունիցին. միթէ ամենեքին ի լեզո՞ւս խօ-
սիցին. միթէ ամենեքին թարգմանիցե՞ն: Բայց նա- 31
խանձաւորք լերուք շնորհացն՝ որ լաւն են: Եւ ես
առաւել եւս ճանապարհ ցուցանեմ ձեզ:

ԳԼՈՒԽ ԺԳ.

ԺԳ. Եթէ զլեզուս մարդկան խօսիցիմ եւ 1
զհրեշտակաց, եւ սէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրեւ
զպղինձ՝ որ հնչէ, կամ իբրեւ զծնծղայս՝ որ զօղան-
ջեն: Եւ եթէ ունիցիմ մարգարէութիւն, եւ գիտի- 2
ցեմ զխորհուրդս ամենայն եւ զամենայն գիտու-
թիւն, եւ եթէ ունիցիմ զամենայն հաւատս՝ մինչեւ
զլերինս փոփոխելոյ, եւ սէր ոչ ունիցիմ, ոչ ինչ եմ:
Եւ եթէ ջամբիցեմ զամենայն ինչս իմ աղքատաց, 3
եւ մատնիցեմ զմարմինս իմ յայրումն, եւ սէր ոչ
ունիցիմ, ոչ ինչ օգտիմ: Սէր երկայնամիտ է, քաղ- 4
ցրանայ. սէր ոչ նախանձի, ոչ ամբարհաւաճէ, ոչ
հպարտանայ. Ոչ յանդգնի, ոչ խնդրէ զիւր, ոչ գըր- 5
գռի, ոչ խորհի չար. Ոչ խնդայ ընդ անիրաւութիւն, 6
այլ խնդայ ընդ ստուգութիւն. Ամենայնի տանէ, 7
ամենայնի հաւատայ, ամենեւին յուսայ, ամենայնի
համբերէ: Սէր ոչ երբէք անկանի. եթէ մարգարէ- 8
ութիւնք են՝ խափանեսցին. եթէ լեզուք՝ լռեսցեն.
եթէ գիտութիւնք՝ խափանեսցին: Քանզի փոքր ի 9
շատէ գիտեմք, եւ փոքր ի շատէ մարգարէանամք:
Եւ յորժամ եկեսցէ կատարումն, փոքր ի շատէս 10
խափանեսցի:

11 ԶԿ. Մինչ տղայն էի՝ իբրեւ զտղայ խօսէի, ի-
բրեւ զտղայ խորհէի, իբրեւ զտղայ համարէի. այլ
յորժամ եղէ այր՝ զտղայութեանն ի բաց խափանեցի:
12 Այժմ տեսանեմք իբրեւ ընդ հայելի օրինակաւ,
այլ յայնժամ դէմ յանդիման. այժմ խելամուտ եմ
փոքր ի շատէ, այլ յայնժամ գիտացից՝ որպէս եւ
13 նայն ծանեաւ զիս: Բայց արդ մնան հաւատք, յոյս,
սէր, սոքա երեքեան, եւ մեծ քան զսոսա սէր է:

ԳԼՈՒԽ ԺԴ.

1 Զհետ երթայք սիրոյ, եւ նախանձաւոր լերուք
հոգեւորացն առաւել՝ զի եւ դուք մարգարէանայցէք:
2 Զի որ խօսի ի լեզուս՝ ոչ ընդ մարդկան խօսի, այլ
ընդ Աստուծոյ. զի ոչ ոք է՝ որ լսէ, բայց հոգւով
3 խօսի ի խորհուրդս: Իսկ որ մարգարէանայն, մարդկան
խօսի շինութիւն եւ մխիթարութիւն եւ սփոփու-
4 թիւն: Որ խօսի ի լեզուս, զանձն իւր շինէ. եւ որ
5 մարգարէանայ, զեկեղեցին շինէ: Կամիմ զի ամենե-
քին դուք ի լեզուս խօսիցիք, առաւել՝ զի մարգա-
րէանայցէք. զի լաւ է որ մարգարէանայն քան զայն՝
որ ի լեզուսն խօսիցի. բայց եթէ թարգմանիցէ՝ զի
եկեղեցին շինութիւն առնուցու:
6 ՎԵՐՋ. Բայց այժմ, եղբարք, եթէ եկից առ ձեզ
ի լեզուս խօսելով, զի՞նչ օգուտ լինիցիմ ձեզ՝ եթէ
ոչ խօսիցիմ կամ յայտնութեամբ կամ գիտու-
թեամբ կամ մարգարէութեամբ կամ վարդապե-
7 տութեամբ: Այնպէս որպէս անշունչքն ձայն տայ-
ցեն, եթէ փող եւ եթէ քնար. զի եթէ ընտրութիւն
ինչ բարբառոյն չտանիցեն, զիա՞րդ ծանիցի փողոյն
8 հարկանել կամ քնարին հնչել: Քանզի եթէ խառ-
նաձայն արձակիցի փողն, ո՞վ պատրաստեսցի ի պա-
9 տերազմ: Նոյնպէս եւ դուք եթէ լեզուօք ոչ նշա-
նակիցէք զբանն՝ զիա՞րդ ծանիցի խօսքն. զի լինիցիք
10 այսուհետեւ իբրեւ ընդ օդս խօսեցեալք: Զի այնչափ

ազգք ձայնից են յաշխարհի, եւ ոչ ինչ անձայն է:
Իսկ արդ եթէ ոչ գիտիցեմ զզօրութիւն ձայնին, 11
լինիցիմ այնմ՝ որ խօսիցին ընդ իս՝ խուժ, եւ նա՝ որ
խօսիցին ընդ իս՝ դուժ: Նոյնպէս եւ դուք՝ քանզի 12
նախանձորդք էք հոգեւորացն, վասն շինածոյ եկե-
ղեցւոյն խնդրեցէք՝ զի առաւել եւս իցէք: Վասն որոյ 13
որ խօսին ի լեզուս, աղօթս արասցէ՝ զի եւ թարգմա-
նիցէ: Եթէ կամ յաղօթս լեզուաւ՝ հոգին իմ կայ 14
յաղօթս, այլ միտք իմ անպտուղ են: Իսկ արդ 15
զի՞նչ իցէ. կացից յաղօթս եւ հոգւով, կացից յա-
ղօթս եւ մտօք. սաղմոս ասացից հոգւով, սաղմոս
ասացից եւ մտօք: Ապա թէ ոչ՝ եթէ օրհնեսցես 16
հոգւով, որ կայցէ ի տեղւոջ տգիտին, զիա՞րդ ասիցէ
ի քում գոհութեանն՝ զամէնն. քանզի զոր ասեսն՝ նա
ոչ գիտէ: Զի դու բարւոք գոհանաս, այլ ընկերն 17
ոչ շինի:

ԶԲ. Գոհանամ զԱստուծոյ, վասն ամենեցուն 18
ձեր՝ առաւել լեզուաւ խօսիմ: Այլ ի մէջ եկեղե- 19
ցւոյն կամիմ բանս հինգ մտօք խօսել, զի եւ զայլս
խրատեցից, քան զբազում բանս լեզուաւ: Եղբարք, 20
մի՛ տղայք լինիք մտօք, այլ ի չարեաց տղայացարուք,
եւ մտօք կատարեալք լինիջիք: Քանզի եւ յօրէնս 21
գրեալ է, եթէ Յօտար լեզուս եւ ի շրթունս օտա-
րոտիս խօսեցայց ընդ ժողովրդեանդ ընդ այդմիկ, սա-
կայն եւ ոչ այնպէս լուիցեն ինձ, ասէ Տէր: Ապա ու- 22
րեմն լեզուք նշանակի վասն են՝ ոչ հաւատացելոց,
այլ անհաւատից. իսկ մարգարէութիւն՝ ոչ անհաւա-
տից, այլ հաւատացելոց: Ապա եթէ գայցէ եկեղեցին 23
ամենայն ի մի վայր, եւ ամենեքեան ի լեզուս խօսի-
ցին, եւ մտանիցեն անդր տգէտք կամ անհաւատք,
ո՞չ ասիցեն եթէ զի՞ մոլիք: Իսկ եթէ ամենեքեան 24
մարգարէանայցեն, եւ մտանիցէ ոք անդր անհաւատ
կամ տգէտ, յանդիմանի յամենեցունց, եւ քննի
յամենեցունց. Եւ գաղտնիք սրտի նորա յայտնի 25

լինին. եւ ապա անկեալ ի վերայ երեսաց՝ երկիր պա-
գանիցէ Աստուծոյ, եւ խոստովան լինիցի թէ արդա-
րեւ Աստուած է ի ձեզ:
26 ԶԴ. Եւ արդ զի՞նչ իցէ, եղբարք. յորժամ ի մի
վայր ժողովիցիք, իւրաքանչիւր ոք ի ձէնջ եթէ սաղմոս
ունիցի, եթէ վարդապետութիւն ունիցի, եթէ յայտ-
նութիւն ունիցի, եթէ լեզուս ունիցի, եթէ թարգ-
27 մանութիւն ունիցի, ամենայն ի շինած լինիցի: Եթէ
ի լեզուս ոք խօսեսցի՝ երկուք, եւ եթէ եւս աւելի՝
երեք, եւ ապա մի ըստ միոջէ. եւ մինն թարգմանի-
28 ցէ: Ապա եթէ չիցէ ոք՝ որ թարգմանիցէ, լուռ լիցի
յեկեղեցւոջն. ընդ միտս իւր եւ ընդ Աստուծոյ խօ-
29 սեսցի: Բայց մարգարէք երկու կամ երեք խօսեսցին,
30 եւ այլքն քննեսցեն: Ապա եթէ այլ ումեք որ նըս-
31 տիցին՝ յայտնեսցի, առաջինն լռեսցէ: Քանզի կարող
էք ամենեքին մի ըստ միոջէ մարգարէանալ. զի ամե-
նեքեան ուսանիցին, եւ ամենեքեան մխիթարեսցին:
32 Քանզի եւ հոգիք իսկ մարգարէից՝ մարգարէից հնա-
33 զանդին: Զի ոչ եթէ խռովութեան է Աստուած,
այլ խաղաղութեան. որպէս յամենայն եկեղեցիս
34 սրբոց: Կանայք յամենայն եկեղեցիս լուռ լիցին. զի
ոչ հրամայի նոցա խօսել, այլ հնազանդ լինել. որ-
35 պէս եւ օրէնքն իսկ ասեն: Ապա եթէ ուսանել ինչ
կամիցին, ի տան զարս իւրեանց հարցանիցեն. քանզի
36 անպատեհ է կնոջ մարդոյ յեկեղեցւոջ խօսել: Եթէ
ի ձէ՞նջ բանն Աստուծոյ ել, եւ կամ թէ առ ձե՞զ
37 միայն եհաս: Իսկ եթէ ոք համարիցի մարգարէ լինել
կամ հոգեւոր, գիտասցէ զոր գրեցիդ առ ձեզ, եթէ
38 Տեառն պատուիրանք են: Ապա եթէ ոք տգիտանայ-
39 ցէ, տգիտասցի: Այսուհետեւ, եղբարք, նախանձե-
ցարուք մարգարէանալ եւ զխօսելն լեզուօք մի ար-
40 գելուք: Եւ ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ
ըստ կարգի լինիցի:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն իմ, զոր 1
աւետարանեցի ձեզ, զոր եւ ընկալարուք, յոր եւ
հաստատեալդ էք. Որով ապրեցէքն, որով բանիւ 2
աւետարանեցի ձեզ՝ եթէ ունիցիք. բայց եթէ ի զուր
ինչ հաւատացէք: Զի ես ձեզ զայն նախ աւանդեցի՝ 3
զոր եւ ես ընկալայ. թէ եւ Քրիստոս մեռաւ վասն
մեղաց մերոց՝ ըստ գրոց, Եւ զի թաղեցաւ, թէ եւ 4
յարեաւ յաւուր երրորդի՝ ըստ գրոց. Եւ թէ երեւե- 5
ցաւ Կեփայի, եւ ապա երկոտասանիցն. Ապա երեւե- 6
ցաւ աւելի եւս քան զհինգ հարիւր եղբարց միանգա-
մայն. յորոց բազումք կան մինչեւ ցայժմ, եւ ոմանք
ննջեցին: Եւ ապա երեւեցաւ Յակովբայ, ապա ա- 7
ռաքելոցն ամենեցուն: Յուսկ յետոյ քան զամենեսին 8
իբրեւ անարգի միոջ՝ երեւեցաւ եւ ինձ: Զի ես իսկ 9
եմ տրուպն առաքելոց, որ չեմ իսկ արժանի թէ կո-
չեցայց առաքեալ. զի հալածեցի զեկեղեցին Աստու-
ծոյ: Այլ շնորհօքն Աստուծոյ եմ՝ զինչ եւ իցեմ, 10
եւ շնորհք նորա որ յիս՝ ընդունայն ինչ ոչ եղեն.
այլ առաւել քան զնոսա ամենեսին վաստակեցի, եւ
ոչ եթէ ես, այլ շնորհքն Աստուծոյ՝ որ ընդ իս:
Արդ եթէ ես եւ եթէ նոքա այսպէս քարոզեցաք, 11
եւ դուք այսպէս հաւատացէք: Ապա եթէ Քրիս- 12
տոս քարոզի թէ ի մեռելոց յարուցեալ է, զիա՞րդ
ասեն ոմանք ի ձէնջ եթէ յարութիւն մեռելոց չիք:
Եթէ յարութիւն մեռելոց չիք, ապա եւ Քրիստոս 13
չէ յարուցեալ: Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, 14
ընդունայն է քարոզութիւնն մեր, ընդունայն են եւ
հաւատքն ձեր. Եւ գտանիցիմք սուտ վկայք Աստու- 15
ծոյ, զի վկայեցաք զԱստուծոյ եթէ յարոյց զՔրիս-
տոս, զոր ոչն արդեօք յարոյց՝ եթէ մեռեալք ոչ
յառնիցեն: Իսկ եթէ մեռեալք ոչ յառնեն, ապա եւ 16
Քրիստոս չէ յարուցեալ: Եւ եթէ Քրիստոս չիցէ 17

յարուցեալ, ընդունայն են եւ հաւատքն ձեր. եւ
18 տակաւին ի նմին մեղս կայցէք։ Իսկ արդ որ ննջեցինն
19 ի Քրիստոս, կորեա՞ն արդեօք։ Եթէ այսու կենօքս
միայն յուսացեալ եմք ի Քրիստոս, ողորմելի եմք
քան զամենայն մարդիկ։
20 ԶԴ. Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մե-
21 ռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոց. Քանզի մարդով
22 եղեւ մահ, եւ մարդով յարութիւն մեռելոց։ Որպէս
Ադամաւ ամենեքին մեռանին. նոյնպէս եւ Քրիս-
23 տոսիւ ամենեքեան կենդանասցին։ Իւրաքանչիւր յիւ-
րում կարգի. նախ Քրիստոս, եւ ապա Քրիստո-
24 սեանք ի գալստեան նորա։ Եւ ապա կատարած. յոր-
ժամ տացէ ի ձեռս զթագաւորութիւնն Աստուծոյ
եւ Հօր. յորժամ խափանեսցէ զամենայն իշխանու-
թիւնս եւ զամենայն պետութիւն եւ զզօրութիւն։
25 Զի պարտ է նմա թագաւորել՝ մինչեւ դիցէ զամե-
26 նայն թշնամիս ի ներքոյ ոտից իւրոց։ Յետին թշնա-
մին խափանի՝ մահ. եւ զամենայն ինչ հնազանդ արար
27 ի ներքոյ ոտից նորա։ Այլ յորժամ ասիցէ, թէ
հնազանդեալ է նմա ամենայն, յայտ է թէ բաց
28 յայնմանէ՝ որ հնազանդեցոյց նմա զամենայն։ Այլ
յորժամ հնազանդեսցի նմա ամենայն, յայնժամ եւ
ինքն Որդի հնազանդեսցի այնմ՝ որ հնազանդեցոյց
նմա զամենայն. զի եղիցի Աստուած ամենայն յամե-
29 նայնի։ Ապա թէ ոչ՝ զի՞նչ գործիցեն որ մկրտիցինն
վասն մեռելոց, եթէ արդարեւ մեռեալք ոչ յառնի-
30 ցեն. ընդէ՞ր իսկ բնաւ մկրտին վասն նոցա. Ընդէ՞ր եւ
31 մեք ճգնիմք յամենայն ժամ, Եւ հանապազ մեռա-
նիմք. ի պարծանս ձեր երդնում, եղբարք, զոր ու-
32 նիմ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր։ Եթէ վասն
մարդոյ ի գազանամարտի լեալ էի յԵփեսոս, զի՞նչ
օգուտ էր ինձ, եթէ մեռեալք ոչ յառնեն. կերիցուք
33 արբցուք, քանզի վաղիւ մեռանիմք։ Մի՛ խաբիք.
ապականեն զբարս քաղցունս բանք չարք։

ՁԵ. Սթափեցարուք արդարութեամբ եւ մի՛ մե- 34
ղանչէք. զի զգիտութիւն Աստուծոյ ոչ ունին ոմանք.
առ ամօթոյ ձերոյ ասեմ: Այլ ասիցէ ոք. զիա՞րդ 35
յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով գայցեն:
Անմիտ, դու զոր սերմանեսն, ոչ կենդանանայ՝ թէ ոչ 36
մեռանիցի: Եւ զոր սերմանեսն, ոչ զնոյն մարմին, որ 37
ծնանելոցն իցէ՝ սերմանես, այլ հատ մերկ. եթէ ցո-
րենոյ իցէ եւ եթէ յայլոց սերմանեաց: Եւ Աս- 38
տուած տայ նմա մարմին՝ որպէս եւ կամի. եւ իւրա-
քանչիւր սերմանեացն զիւր մարմին: Ոչ ամենայն 39
մարմին նոյն մարմին է, այլ՝ այլ մարմին է մարդկան,
եւ այլ մարմին անասնոց, այլ մարմին թռչնոց եւ
այլ մարմին ձկանց: Եւ մարմինք երկնաւորք եւ մար- 40
մինք երկրաւորք. այլ՝ այլ փառք երկնաւորաց են եւ
այլ փառք երկրաւորաց: Այլ փառք արեգական, եւ 41
այլ փառք լուսնի, այլ փառք աստեղաց. եւ աստղ
քան զաստղ առաւել է փառօք: Նոյնպէս եւ յա- 42
րութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ եւ
յառնէ առանց ապականութեան. Սերմանի անարգու- 43
թեամբ եւ յառնէ փառօք. սերմանի տկարութեամբ
եւ յառնէ զօրութեամբ. Սերմանի մարմին շնչաւոր 44
եւ յառնէ մարմին հոգեւոր. եթէ գոյ մարմին շնչա-
ւոր, գոյ եւ հոգեւոր: Այսպէս եւ գրեալ է, Եղեւ 45
մարդն առաջին Ադամ ի շունչ կենդանի. երկրորդ
Ադամ՝ ի հոգի կենդանարար: Բայց ոչ նախ հո- 46
գեւորն. այլ շնչաւորն, եւ ապա հոգեւորն: Առաջին 47
մարդն յերկրէ՝ հողեղէն. իսկ երկրորդ մարդն՝ Տէր
յերկնից: Որպէս հողեղէնն, նոյնպէս եւ հողեղէնքս, 48
եւ որպէս երկնաւորն, նոյնպէս եւ երկնաւորքն: Եւ 49
որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք եւ
զպատկեր երկնաւորին:

ՁԶ. Բայց զայս ասեմ, եղբարք, թէ մարմին եւ 50
արիւն զարքայութիւն Աստուծոյ ժառանգել ոչ կա-
րեն. եւ ոչ ապականութիւն զանապականութիւն

51 ժառանգէ: Երդ խորհուրդ մի ասեմ ձեզ. ամենե-
քեան ննջեսցուք, այլ ոչ ամենեքեան նորոգեսցուք:
52 Յանկարծակի յական թօթափել՝ ի փող յետին.
քանզի փող հարկանի, եւ մեռեալք յարիցեն ա-
53 ռանց ապականութեան, եւ մեք նորոգեսցուք: Զի
պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանա-
պականութիւն, եւ մահկանացուիս այսմիկ զգենուլ
54 զանմահութիւն: Այլ յորժամ մահկանացուս այս
զգեցցի զանմահութիւն, եւ ապականութիւնս զան-
ապականութիւն, յայնժամ եղիցի բանն՝ որ գրեալ.
55 եթէ Ընկլաւ մահ ի յաղթութիւն: Ո՞ւր է մահ յաղ-
56 թութիւն քո. ո՞ւր է դժոխք խայթոց քո: Խայթոց
57 մահու մեղք են, եւ զօրութիւն մեղաց օրէնք: Այլ
շնորհք Աստուծոյ՝ որ ետ մեզ զյաղթութիւն ի ձեռն
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
58 ԱՓ. Այսուհետեւ, եղբա՛րք իմ սիրելիք, հաս-
տատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել լերուք
ի գործս Տեառն յամենայն ժամ. գիտասջիք զի վաս-
տակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն:

ԳԼՈՒԽ ԺԶ.

1 Այլ վասն հաշուին՝ որ ի սուրբսն է, որպէս
պատուէր ետու եկեղեցեացն Գաղատացւոց, նոյնպէս
2 եւ դուք առնիջիք: Ըստ իւրաքանչիւր միաշաբաթուցն
իւրաքանչիւր ոք ի ձէնջ անձին իւրում գանձեսցէ՝ որ
3 ինչ եւ աջողեսցի: Զի մի՛ յորժամ գայցեմ, յայն-
ժամ հաշիւք լինիցին. այլ յորժամ եկից՝ զոր միան-
գամ ընտրեցէք թղթովք, զնոսա առաքեցից տանել
4 զշնորհսն ձեր յԵրուսաղէմ: Ապա եթէ արժան իցէ
5 եւ ինձ երթալ՝ ընդ իս երթիցեն: Այլ եկից առ ձեզ՝
յորժամ ի Մակեդովնիա անցանիցեմ. բայց իբրեւ
6 շրջեցայց ընդ Մակեդովնիա, թէ դէպ լիցի, առ ձեզ
մնացից եւ կամ ձմերեցից. զի դուք յուղարկիցէք
7 զիս՝ ուր եւ երթալոցն իցեմ: Զի ոչ կամիմ զձեզ

այժմ ի հարեւանցի տեսանել. այլ ունիմ ժամանակ
ինչ առնել առ ձեզ, եթէ Տէր հրամայեսցէ: Բայց 8
այժմ լինիմ յԵփեսոս մինչեւ ցպենտակոստէ. Զի 9
դուռն բացեալ է ինձ մեծ եւ կարեւոր, եւ հակա-
ռակորդք բազում են: Այլ եթէ եկեսցէ Տիմոթէոս՝ 10
տեսջիք զի անհոգ լինիցի առ ձեզ. զի զգործ
Տեառն գործէ՝ որպէս եւ ես. Մի ոք զնա անգոսնես- 11
ցէ. եւ յուղարկեսջիք զնա խաղաղութեամբ՝ զի եկես-
ցէ առ իս. քանզի ակն ունիմ նմա եղբարբք հանդերձ:
ԾԶ. Այլ վասն Ապողոսի եղբօր, յոյժ աղաչեցի 12
զնա՝ զի եկեսցէ առ ձեզ եղբարբք հանդերձ. եւ ար-
դեօք ոչ էին կամք՝ զի այժմ եկեսցէ. այլ եկեսցէ
յորժամ եւ պարապեսցէ: Հսկեցէք, հաստատուն կա- 13
ցէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն 14
ինչ ձեր սիրով լինիցի: Աղաչեմ զձեզ, եղբարք, գի- 15
տէք զտունն Ստեփանեայ եւ Փորտունատեայ՝ որ են
պտուղ Աքայեցւոց, եւ ի պաշտօն սրբոցն կարգեցին
զանձինս. Զի եւ դուք հնազանդ լիջիք այնպիսեացն. 16
եւ ամենայնի՝ որ գործակից իցէ եւ վաստակակից:
Ուրախ եղէ ի գալ Ստեփանեայ եւ Փորտունատեայ 17
եւ Աքայիկոսի, զի զձեր պակասութիւն նոքա լցին.
Քանզի հանգուցին զոգի իմ եւ զձեր. արդ ծանի- 18
ջիք զայնպիսիսն: Ողջոյն տան ձեզ եկեղեցիքն Ասիա- 19
ցւոց. ողջոյն շատ տան ձեզ ի Տէր՝ Ակիւղաս եւ Պրիս-
կիղա՝ հանդերձ առտնին եկեղեցեաւն իւրեանց: Ողջոյն 20
տան ձեզ եղբարք ամենեքեան: Ողջոյն տուք միմեանց
ի համբոյր սրբութեան: Ողջոյնդ այդ իմոյ ձեռին 21
Պաւղոսի է: Եթէ ոք ոչ սիրէ զՏէր Յիսուս, եղիցի 22
նզովեալ՝ Մարանաթայ: Շնորհք Տեառն մերոյ Յի- 23
սուսի Քրիստոսի ընդ ձեզ: Եւ սէրն իմ ընդ ամե- 24
նեսին ձեզ ի Քրիստոս Յիսուս. ամէն:

Առ Կորնթացիս առաջին թուղթն գրեցաւ ի Փիլիպեայ,
ի ձեռն Ստեփանեայ եւ Փորտունատեայ եւ Աքայիկոսի:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՐՆԹԱՑԻՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԲԿ· ՊԱՒՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի
կամօքն Աստուծոյ, եւ Տիմոթէոս եղբայր, եկեղե-
ցւոյդ Աստուծոյ՝ որ է ի Կորնթոս, սրբովքդ ամե-
նեքումբք՝ որ են յամենայն կողմանս Աքայեցւոց:
2 Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ:
3 Օրհնեալ է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի, Հայր գթութեանց եւ Աստուած
4 ամենայն մխիթարութեան. Որ մխիթարէն զմեզ յա-
մենայն նեղութիւնս մեր, առ ի կարող լինելոյ մեզ
մխիթարել զայնոսիկ՝ որ յամենայն նեղութիւնս իցեն,
մխիթարութեամբն՝ որով մեք մխիթարիմք յԱստու-
5 ծոյ: Զի որպէս առաւելան չարչարանքն Քրիստոսի
ի մեզ, նոյնպէս եւ ի ձեռն Քրիստոսի առաւել լցի
6 եւ մխիթարութիւնն մեր: Զի եթէ նեղիմք վասն ձե-
րոյ մխիթարութեան եւ փրկութեան. եւ եթէ մխի-
թարիմք վասն ձերոյ մխիթարութեան եւ փրկութեան,
որ յաջողեալն է համբերութեամբ նոցին չարչարանաց,
7 զոր եւ մեքն չարչարիմք. Եւ յոյսն մեր հաստատուն
է վասն ձեր, քանզի գիտեմք թէ որպէս կցորդ եմք
8 չարչարանացն, նոյնպէս եւ մխիթարութեանն: Քանզի

ոչ կամիմ տգէտ լինել ձեզ, եղբարք, վասն նեղու-
թեանն մերոյ եղելոյ յԱսիա. զի առաւել քան զկար
մեր ծանրացաք, մինչեւ անյոյս լինելոյ մեզ եւ ի կե-
նաց: Այլ անձամբ յանձինս զվճիռ մահու ընկալաք. 9
զի մի յանձինս ապաստանիցիմք, այլ յԱստուած՝ որ
յարուցանէ զմեռեալս. Որ յայնպիսի մահուանէ փըր- 10
կեաց զմեզ եւ փրկեսցէ. Քանզի յուսացեալ եմք, 11
եթէ տակաւին փրկեսցէ օգնականութեամբ աղօթից
ձերոց վասն մեր: Զի ի բազմադէմ շնորհացն որ ի
մեզ, բազմօք յաճախեսցեն գոհութիւնքն վասն մեր:

ԲԳ. Քանզի պարծանք մեր այս են, վկայու- 12
թիւն մտաց մերոց. զի սրբութեամբ եւ ստուգու-
թեամբ Աստուծոյ, եւ ոչ մարմնեղէն իմաստութեամբ,
այլ շնորհօքն Աստուծոյ շրջեցաք յաշխարհի, բայց
առաւել եւս առ ձեզ: Քանզի ոչ եթէ այլազգ ինչ 13
գրեմք առ ձեզ, այլ զոր ընթեռնուցուքն եւ գիտակ
լինիցիք. քանզի յուսամ եթէ մինչ ի վախճան գի-
տիցէք, Որպէս եւ խելամուտ եղէք մեզ փոքր ի շա- 14
տէ. զի պարծանք ձեր եմք, որպէս եւ դուք մեր յա-
ւուրն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւ յայս 15
ապաստան՝ կամէի նախ առ ձեզ գալ, զի դուք կրկին
շնորհս ընդունիցիք. Եւ ի ձէնջ երթալ ի Մակե- 16
դոնիա. եւ դարձեալ ի Մակեդոնիայ գալ առ ձեզ,
եւ ի ձէնջ յուղարկել ի Հրէաստան: Իսկ եթէ զայս 17
խորհեցայ, միթէ թեթեւութեամբ ինչ գնացի. եւ
կամ զոր խորհիցիմ՝ ըստ մարմնոյ ինչ խորհիցիմ.
այլ զի եղիցի յինէն կողմանէ այոն՝ այո, եւ ոչն՝ ոչ:
Հաւատարիմ է Աստուած՝ զի բանն մեր որ առ ձեզ 18
եհաս, ոչ է այո, եւ ոչ: Քանզի Որդին Աստուծոյ 19
Յիսուս Քրիստոս, որ ի ձեզ մեօք քարոզեցաւ, ինեւ
եւ Սիղուանոսիւ եւ Տիմոթէիւ, ոչ եղեւ այո եւ ոչ.
այլ այոն ի նմին եղեւ: Զի որչափ աւետիքն Աս- 20
տուծոյ են ի նմա այոն. վասն որոյ եւ նովին ամէնն
մեօք ի փառս Աստուծոյ: Այլ որ հաստատեացն 21

զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս, եւ որ օծ զմեզ,
22 Աստուած է. Որ եւ կնքեացն զմեզ, եւ ետ զառ-
հաւատչեայ հոգւոյն ի սիրտս մեր:
23 ԲՁ. Այլ ես վկայ զԱստուած կոչեմ անձին
իմոյ, զի վասն խնայելոյ ի ձեզ ոչ եւս եկի ի Կորըն-
թոս. զի ոչ եթէ տիրեմք ձեզ հաւատովքս, այլ
գործակից եմք շնորհացդ ձերոց. քանզի հաւատովք
հաստատեալ կայք:

ԳԼՈՒԽ Բ.

1 Բայց զայս եւեթ ընտրեցի՝ զի մի միւսանգամ
2 տրտմութեամբ եկից առ ձեզ: Զի եթէ ես տրտմե-
ցուցանեմ զձեզ, եւ ո՞վ է որ ուրախ առնիցէ զիս,
3 եթէ ոչ որ տրտմիցին յինէն: Եւ զայս զի գրեցի, զի
մի յորժամ գայցեմ՝ տրտմութիւն ինչ կրիցեմ, ուս-
տի արժան իցէ ինձ ուրախ լինել. յուսացեալ եմ ի
ձեզ ամենեսին, զի իմ ուրախութիւնս՝ ձեր ամենե-
4 ցուն է: Զի ի բազում վշտաց եւ ի նեղութենէ սրտի
գրեցի առ ձեզ բազում արտասուօք. ոչ զի տրտմի-
ցիք, այլ զի զսէրն իմ գիտասջիք՝ զոր ունիմ առա-
5 ւելապէս առ ձեզ: Ապա թէ ոք տրտմեցոյց, ոչ եթէ
զիս տրտմեցոյց, այլ փոքր ի շատէ, զի մի ծանրացայց
6 ամենեցուն ձեզ. Դատ է այնպիսւոյն պատուհասն
7 այն՝ որ ի բազմաց անտի է: Այսուհետեւ նմին հա-
կառակ՝ մանաւանդ շնորհել ձեզ նմա եւ մխիթա-
րել. զի մի յառաւել տրտմութենէն ընկղմեսցի այն-
8 պիսին: Վասն որոյ աղաչեմ զձեզ հաստատել ի նա
9 զսէրն: Վասն այնորիկ իսկ եւ գրեցի, զի զչափ առից
10 զձեր եթէ յամենայնի հպատակ իցէք: Զի եթէ
ումեք շնորհիցէք, եւ ես. քանզի եւ ես եթէ շնոր-
հիցեմ, զոր ինչ շնորհիցեմն՝ վասն ձեր ի դէմս
11 Քրիստոսի, Զի մի զրկիցիմք ի սատանայէ. քանզի
չեմք ինչ անտեղեակ խորհրդոցն նորա:
12 ԳԿ. Այլ իբրեւ հասի ես ի Տրովադա յաւե-

տարանն Քրիստոսի, եւ դուռն բաց էր ինձ ի Տէր,
Ոչ եւտու հանգիստ հոգւոյ իմում, քանզի ոչ գտի 13
ես անդ զՏիտոս զեղբայր իմ, այլ հրաժարեալ ի նո-
ցանէ՝ գնացի ի Մակեդոնիա: Այլ Աստուծոյ շնորհ- 14
քն՝ որ յամենայնի հռչակ հարկանէ զմեզ ի Քրիս-
տոս Յիսուս, եւ զհոտ գիտութեանն իւրոյ յայտնի
առնէ մեօք յամենայն տեղիս. Զի հոտ անոյշ եմք 15
Քրիստոսի առ Աստուած ի մէջ փրկելոցն եւ ի մէջ
կորուսելոցն. Ոմանց հոտ մահուանէ ի մահ, եւ ոմանց 16
հոտ կենդանութենէ ի կեանս. եւ առ այս ո՞ բաւա-
կան իցէ: Քանզի ոչ եմք իբրեւ զայլսն՝ որ վաճառա- 17
կան լինին բանին Աստուծոյ. այլ իբրեւ ի հաստա-
տութենէ, այլ իբրեւ յԱստուծոյ, առաջի Աստուծոյ
ի Քրիստոս խօսիմք:

ԳԼՈՒԽ Գ.

Սկսանիմք այսուհետեւ վերստին զանձինս ըն- 1
ծայեցուցանել. Թէպէտ եւ ոչ պիտոյ իցեն մեզ, որ-
պէս ոմանց, թուղթք ընծայութեան առ ձեզ կամ ի
ձէնջ: Այլ թուղթք մեր դուք էք, գրեալ ի սիրտս 2
մեր, ծանուցեալ եւ ընթերցեալ յամենայն մարդ-
կանէ. Յայտնեալք, զի էք թուղթք Քրիստոսի, 3
պաշտեցեալ ի մէնջ, եւ գրեալ ոչ մրով, այլ Հո-
գւով Աստուծոյ կենդանւոյ, ոչ ի տախտակս քարե-
ղէնս, այլ ի տախտակս սրտի մարմնեղէնս:
ԳԳ. Յոյս մի այսպիսի ունիմք ի ձեռն Քրիս- 4
տոսի առ Աստուած. Իբր ոչ եթէ անձամբ բաւական 5
եմք խորհել ինչ իբրեւ ի մէնջ, այլ բաւականու-
թիւնն մեր յԱստուծոյ է. Որ եւ բաւականս արար 6
զմեզ պաշտօնեայս նորոց կտակարանացս, ոչ գրով,
այլ հոգւով. զի գիրն սպանանէ, այլ հոգին կեցու-
ցանէ: Զի եթէ պաշտօնն մահու գրով դրոշմեալ ի 7
տախտակն քարեղէնս՝ եղեւ փառօք, զի մի կարասցեն
հայել որդիքն Իսրայելի յերեսն Մովսիսի վասն փա-

8 ռաց երեսաց նորա, որ խափանելոցն էր. Ո՞րչափ եւս
9 առաւել պաշտօն Հոգւոյն եղիցի փառօք: Զի եթէ
պաշտօն դատապարտութեան փառօք էր, ո՞րչափ եւս
10 առաւել պաշտօն արդարութեանն փառօք: Քանզի
ոչ եթէ փառաւորի փառաւորեալն յայսմ մասին,
11 վասն առաւելութեան փառացն: Զի եթէ որ խա-
փանելոցն էր՝ այն փառօք էր, ո՞րչափ եւս առաւել
12 որ կալոցն է՝ փառօք իցէ: Եւ արդ զի ունիմք այսպի-
սի յոյս, բազում համարձակութեամբ վարեսցուք.
13 Եւ ոչ որպէս Մովսէս արկանէր քող ի վերայ երե-
սաց իւրոց, վասն չհայելոյ որդւոցն Իսրայելի ի վախ-
14 ճան խափանելոցն: Այլ կուրացան միտք նոցա, քան-
զի մինչեւ ցայսօր ժամանակի նոյն քող ձգեալ կայ
ի վերայ ընթերցուածոց հին կտակարանացն. եւ ոչ
15 վերանայ, զի Քրիստոսիւ խափանելոց է: Այլ մին-
չեւ ցայսօր յորժամ ընթեռնուն զՄովսէս, նոյն ա-
16 ռագաստ կայ ի վերայ սրտից նոցա: Այլ յորժամ
17 դարձցին առ Տէր՝ ապա վերասցի առագաստն: Զի Տէր
Հոգին է. ուր Հոգի Տեառն է, անդ ազատութիւն է:
18 ՎԵՐՋ. Բայց մեր ամենեցուն բացաւ երեսօք
զփառսն Տեառն իբրեւ ընդ հայելի տեսեալ, ի նոյն
պատկեր նորոգիմք փառաց ի փառս. որպէս եւ ի
Տեառն Հոգւոյ:

ԳԼՈՒԽ Դ.

1 Վասն այսորիկ ունիմք զպաշտօնս զայս, որպէս
2 եւ գտաք զողորմութիւն, եւ ոչ ձանձրանամք. Այլ
հրաժարեցաք ի գաղտնեաց ամօթոյն. զի մի գնա-
ցուք խորամանկութեամբ, եւ մի նենգեսցուք զբանն
Աստուծոյ. այլ յայտնութեամբ ճշմարտութեանն ըն-
ծայեցուսցուք զանձինս մեր առ ամենայն միտս մարդ-
3 կան առաջի Աստուծոյ: Ապա թէ իցէ եւս ծածկեալ
աւետարանն մեր, ի մէջ կորուսելոցն է ծածկեալ.
4 Որոց Աստուած աշխարհիս այսորիկ կուրացոյց զմիտս

անհաւատից, զի մի՛ ծագեսցէ ի նոսա լուսաւորու-
թիւն աւետարանի փառացն Քրիստոսի, որ է պատ-
կեր աներեւութին Աստուծոյ: Զի ոչ եթէ զանձինս 5
քարոզեմք, այլ զՔրիստոս Յիսուս զՏէր, եւ զմեզ
ծառայս ձեզ վասն Քրիստոսի: Զի Աստուած՝ որ 6
ասաց ի խաւարի լոյս ծագել, որ եւ ծագեաց իսկ ի
սիրտս մեր ի լուսաւորութիւն գիտութեան փառացն
Աստուծոյ ի դէմս Յիսուսի Քրիստոսի: Այսուհե- 7
տեւ ունիմք զգանձս զայս յամանս խեցեղէնս, զի ա-
ռաւելութիւն զօրութեանն իցէ յԱստուծոյ, եւ ոչ ի
մէնջ: Յամենայնի նեղեալք, այլ ոչ նուաղեալք. կա- 8
րօտեալք, այլ ոչ տարակուսեալք. Հալածեալք, այլ 9
ոչ լքեալք. չարչարեալք, այլ ոչ սատակեալք. Յա- 10
մենայն ժամ զմահն Յիսուսի ի մարմինս մեր կրեա-
ցուք, զի եւ կեանքն Յիսուսի ի մարմինս մեր յայտ-
նեսցին: Քանզի միշտ մեք՝ որ կենդանիքս եմք, ի մահ 11
մատնիմք վասն Յիսուսի, զի եւ կեանքն Յիսուսի
յայտնի լիցին ի մահկանացու մարմինս մեր: Այսու- 12
հետեւ մահ ի մեզ զօրանայ, եւ կեանք ի ձեզ: Արդ 13
ունիմք զնոյն հոգի հաւատոյ, որպէս եւ գրեալ է.
Հաւատացի, վասն որոյ եւ խօսեցայ. եւ մեք հաւա-
տամք, վասն որոյ եւ խօսիմք իսկ: Զայս գիտեմք եթէ 14
որ յարոյցն զՅիսուս, եւ զմեզ ընդ Յիսուսի յա-
րուսցէ եւ յանդիման կացուսցէ ձեօք հանդերձ. Քան- 15
զի ամենայն ինչ վասն ձեր է. զի շնորհքն յաճա-
խեալք ի բազմաց գոհութենէ անտի՝ առաւելեսցին ի
փառս Աստուծոյ: Վասն որոյ եւ ոչ ձանձրանամք. 16
այլ թէպէտ եւ արտաքին մարդս մեր ապականի, այլ
ներքին մարդն մեր նորոգի օր ըստ օրէ: Զի առժա- 17
մայն յաճախութիւն թեթեւ նեղութեանս մերոյ ի
յաւիտենական առաւելութիւն, զմեծութիւն փա-
ռացն գործէ ի մեզ: Քանզի ոչ գիտեմք զերեւելիս,
այլ զաներեւոյթսն. զի երեւելիքս առժամանակ մի
են, եւ աներեւոյթքն յաւիտենականք:

ԳԼՈՒԽ Ե.

1 Քանզի գիտեմք զի եթէ երկրաւոր տաճար շի-
նուածոյս մերոյ քակտեսցի. շինած յԱստուծոյ ու-
նիմք՝ տաճար առանց ձեռագործի, յաւիտենական
2 յերկինս: Եւ ընդ այս տաղտկամք. քանզի զբնակու-
3 թիւն երկնից փափագեմք զգենուլ. Միայն թէ յոր-
4 ժամ զգենուցումքն՝ ոչ մերկ գտանիցիմք: Քանզի
որ եմք ընդ յարկաւս ընդ այսուիկ տաղտկամք ծան-
րացեալք. զի ոչ կամիմք մերկանալ, այլ զայն ի վե-
րայ այսր զգենուլ, զի ընկղմեսցի մահկանացուս ի կե-
5 նաց անտի: Այլ որ յաջողէն մեզ ի սոյն՝ Աստուած
է, որ ետ մեզ զառհաւատչեայ հոգւոյն:
6 Գդ. Արդ համարձակիմք յամենայն ժամ, եւ
գիտեմք եթէ որչափ յամեմք ի մարմնի աստ, օտա-
7 րանամք ի Տեառնէ. Զի հաւատովք գնամք եւ ոչ
8 կարծեօք: Այլ համարձակիմք եւ առաւել եւս հա-
ճեալ եմք ելանել ի մարմնոյ աստի եւ մտանել առ
9 Աստուած: Վասն որոյ եւ առատանամք. զի եթէ
յամիցեմք եւ եթէ ելանիցեմք՝ հաճոյ եւեթ լիցեմք
10 նմա: Քանզի ամենեցուն մեզ յանդիման լինել կայ
առաջի ատենին Քրիստոսի. զի ընկալցի իւրաքանչիւր
իւրով մարմնովն զոր ինչ գործեաց յառաջ՝ եթէ բա-
11 րի, եւ եթէ չար: Իսկ արդ զահն Տեառն գիտե-
լով չափ, զմարդկան ինչ միտս հաճեմք. սակայն ա-
ռաջի Աստուծոյ յայտնելոց եմք, բայց եւ յուսամ
12 եւ ի ձեր միտս յայտնի լինել: Իբր ոչ եթէ միւսան-
գամ զանձինս ինչ ընծայեցուցանեմք ձեզ, այլ պատ-
ճառս տամք ձեզ պարծանաց վասն մեր. զի ունիցէք
առ այնոսիկ՝ որ առ աչսն պարծիցին, եւ ոչ սրտիւք:
13 Զի եթէ առանցաք ինչ՝ այն Աստուծոյ է. եւ եթէ
14 զգաստանամք՝ այն ձեր է: Զի սէրն Քրիստոսի ստի-
պէ զմեզ քննել զայս. զի եթէ մին փոխանակ ամե-
նեցուն մեռաւ, ապա ուրեմն ամենեքեան մեռեալ

էին. Եւ ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդա- 15
նիքն իցեն՝ մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ՝ որ
ի վերայ նոցայն մեռաւ եւ յարեաւ։ Այսուհետեւ 16
մեք ոչ զոք գիտեմք մարմնով. զի թէպէտ եւ գի-
տէաք մարմնով զՔրիստոս, այլ արդ ոչ եւս նոյնպէս
գիտեմք։ Բայց եթէ ինչ ի Քրիստոս նոր արարած 17
իցէ. զի հինն անց, եւ արդ նոր եղեւ։ Այլ ամենայն 18
ինչ յԱստուծոյ՝ որ հաշտեցոյցն զմեզ ընդ իւր ի
ձեռն Քրիստոսի. եւ ետ մեզ զպաշտօնն հաշ-
տութեան։

ՎԵՐՋ. Եւ քանզի Աստուած էր, Քրիստոսիւ 19
զաշխարհս հաշտեցուցանել ընդ իւր, եւ չհամարել
նոցա զմեղս իւրեանց, եւ եդ ի մեզ զբանն հաշտու-
թեան։ Արդ վասն Քրիստոսի պատգամաւորիմք որ- 20
պէս եւ Աստուծոյ բարեխօսութեամբ մեօք. աղաչեմք
վասն Քրիստոսի՝ հաշտեցարուք ընդ Աստուծոյ։ Զի 21
զայն որ ոչն գիտէր զմեղս, վասն մեր մեղս արար. զի
մեք եղիցուք նովաւ արդարութիւն Աստուծոյ։

ԳԼՈՒԽ Զ.

Գործակից եմք ձեր եւ աղաչեմք, մի ընդունայն 1
զշնորհսն Աստուծոյ ընդունել ձեզ։ Զի ի ժամա- 2
նակի ընդունելութեան, ասէ, լուայ քեզ, եւ յաւուր
փրկութեան օգնեցի քեզ։ Ահաւասիկ ժամանակ ընդ-
ունելի, ահա օր փրկութեան։ Մի եւ մի իւիք տայ- 3
ցեք պատճառս, զի մի արատեսցի պաշտօնն. Այլ 4
յամենայնի ընծայեցուցեք զանձինս ձեր իբրեւ պաշ-
տօնեայս Աստուծոյ՝ համբերութեամբ բազմաւ ի նե-
ղութիւնս, ի վիշտս, ի չարչարանս, ի գանս, ի բանտս, 5
ի խռովութիւնս, յաշխատութիւնս, ի հսկմունս, ի
պահս, ի սրբութեան, ի գիտութեան, յերկայնմտու- 6
թեան, ի քաղցրութեան, ի Հոգւի սուրբ, ի սէր ա-
ռանց կեղծաւորութեան, ի բանս ճշմարտութեան, 7
ի զօրութեան Աստուծոյ. վասն զինուն արդարու-

8 թեան՝ որ ընդ աջմէն եւ ընդ ահեկէն է․ փառօք եւ
անարգութեամբ, գովութեամբ եւ պարսաւանօք, ի-
9 բրեւ մոլարք եւ ճշմարիտք, Իբրեւ անծանօթք եւ
ծանուցեալք․ իբրեւ մահկանացուք եւ ահաւասիկ
կենդանի եմք․ իբրեւ խրատեալք եւ ոչ մահապար-
10 տեալք․ Իբրեւ տրտմեալք եւ հանապազ ուրախ
եմք․ իբրեւ տնանկք եւ զբազումս մեծացուցանեմք․
իբրեւ ոչ ինչ ունիցիմք եւ զամենայն ինչ ունիմք։
11 Բերանք մեր բացեալ են առ ձեզ, Կորնթացիք, եւ
12 սիրտք մեր ընդարձակեալք։ Ոչ ինչ նեղիք ի մէնջ,
13 բայց եթէ ի գութս ձեր նեղեցիք։ Արդ զնոյն հատու-
ցումն իբրեւ ընդ որդեակս ունիմ․ ընդարձակեցա-
14 րուք եւ դուք։ Եւ մի լինիք լծակիցք անհաւատից․
քանզի զի՞նչ հաղորդութիւն է արդարութեան ընդ
անօրէնութեան, եւ կամ զի՞նչ հաւասարութիւն է
15 լուսոյ ընդ խաւարի, Եւ կամ զի՞նչ միաբանութիւն
է Քրիստոսի ընդ բելիարայ, կամ զի՞նչ բաժին կայ
16 հաւատացելոյն ընդ անհաւատին, Կամ զի՞նչ նմա-
նութիւն է տաճարի Աստուծոյ՝ մեհենաց։ Ապաքէն
դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք, որպէս եւ
ասաց Աստուած, թէ Բնակեցայց ի նոսա, եւ գնա-
ցից ի նոսա, եւ եղէց նոցա Աստուած, եւ նոքա եղի-
17 ցին իմ ժողովուրդ։ Վասն որոյ ելէք ի միջոյ նոցա
եւ մեկնեցարուք, ասէ Տէր, եւ ի պիղծս մի մերձե-
18 նայք․ Եւ ես ընկալայց զձեզ, եւ ես եղէց ձեզ ի
հայր, եւ դուք եղիջիք ինձ յուստերս եւ ի դստերս,
ասէ Տէր ամենակալ։

ԳԼՈՒԽ Է․

1 Իսկ որովհետեւ զայս աւետիս ունիմք, սիրե-
լիք, սրբեսցուք զանձինս մեր յամենայն պղծութենէ
մարմնոյ եւ հոգւոյ․ կատարեսցուք զսրբութիւն ա-
2 հիւն Աստուծոյ։ Տարայք մեզ, զի ոչ ումեք մեղաք,
3 եւ ոչ զոք եղծաք, եւ ոչ զոք զրկեցաք։ Ոչ եթէ ի

դատապարտութիւն ինչ ասեմ. քանզի յառաջ իսկ
ասացի, եթէ ի սրտի մերում կայք՝ ի կեալ եւ ի
մեռանել ընդ ձեզ։
ԳԿ. Բազում համարձակութիւն է ինձ առ 4
ձեզ, բազում պարծանք են ինձ վասն ձեր. լի եմ
մխիթարութեամբ, առաւելեալ եմ ուրախութեամբ
յամենայն նեղութիւնս մեր։ Քանզի յորժամ հա- 5
սաք մեք ի Մակեդոնիա, եւ ոչ միով իւիք հան-
գիստ գտաւ մարմնոյ մերում, այլ յամենայնի նե-
ղեալք. քանզի արտաքոյ մարտք եւ ի ներքոյ արհա-
ւիրք։ Այլ որ մխիթարէն զխոնարհս, մխիթարեաց 6
զմեզ Աստուած ի գալստեանն Տիտոսի։ Եւ միայն ի 7
գալստեան նորա, այլ եւ ի մխիթարութեանն՝ զոր
մխիթարեցաւ նա ի ձեզ, ի պատմել մեզ զանձուկն
ձեր, զողբումն ձեր, զնախանձն ձեր վասն իմ, մինչեւ
առաւել ուրախ լինել ինձ։ Զի թէ եւ տրտմեցուցի 8
զձեզ թղթովն՝ ոչ զղջանամ, թէպէտ եւ զղջացեալ
էի. քանզի տեսանեմ՝ զի թուղթն այն թէ եւ առ
ժամանակ մի տրտմեցոյց զձեզ, Արդ ուրախ եմ, ոչ 9
զի տրտմիցիք, այլ զի յապաշխարութիւն տրտմեցա-
րուք. քանզի տրտմեցայք դուք ըստ Աստուծոյ. զի
մի՛ իւիք զրկիցիք ի մէնջ։ Զի որ ըստ Աստուծոյն 10
տրտմութիւն է, ապաշխարութիւն ի փրկութիւն ա-
ռանց զղջանալոյ գործէ. իսկ աշխարհի տրտմութիւն՝
մահ գործէ։ Արդ նոյն իսկ որ ըստ Աստուծոյն տրտմե- 11
ցարուք, որչափ ինչ փոյթ գործեաց ի ձեզ, կամ
աղերս կամ սաստ կամ երկիւղ կամ անձուկ կամ
նախանձ կամ վրէժխնդրութիւն. քանզի յամենայնի
ընծայեցուցէք զանձինս ձեր սուրբս լինել յիրիդ
յայդմիկ. Ապա ուրեմն թէ եւ գրեցի ես առ ձեզ, 12
ոչ վասն այնորիկ՝ որ զրկեացն, եւ ոչ վասն այնորիկ՝
որ զրկեցաւն. այլ վասն յայտնի լինելոյ փութոյն
ձերոյ՝ որ վասն մեր առ ձեզ առաջի Աստուծոյ։
Վասն այնորիկ մխիթարեալ եմք ի վերայ մխիթա- 13

րութեանն մերոյ. առաւել եւս խնդացաք ի վերայ
խնդութեանն Տիտոսի. քանզի հանգուցեալ էր հոգի
14 նորա ի ձէնջ ամենեցունց: Զի զինչ եւ պարծեցայ
առ նմա վասն ձեր՝ ոչ ամաչեցի. այլ որպէս զամե-
նայն ճշմարտութեամբ խօսեցաք ընդ ձեզ, նոյնպէս
15 եւ պարծանքն մեր առ Տիտոսի ճշմարիտ եղեն: Նա
եւ գութք նորա առաւել եւս են ի ձեզ. քանզի
յիշեցուցանէր մեզ զամենեցուն ձեր հնազանդու-
թիւն, թէ որպէս ահիւ եւ դողութեամբ ընկալա-
16 րուք զնա: Եւ արդ ուրախ եմ, զի յամենայնի հա-
մարձակ եմ առ ձեզ:

ԳԼՈՒԽ Ը.

1 ԳԲ. Ցուցանեմ ձեզ, եղբարք, զշնորհսն Աս-
տուծոյ՝ որ տուեալ են եկեղեցեացն Մակեդոնացւոց.
2 Զի մեծաւ հանդիսիւ նեղութեան՝ առաւելութիւն
խնդութեանն նոցա, եւ ծանր աղքատութիւն նոցա
առաւել եղեւ ի մեծութիւն առատութեան նոցա.
3 Զի ըստ կարի նոցա վկայեմ, եւ աւելի քան զկար.
4 Ինքնակամ բազում աղաչանօք աղաչէին զշնորհսն
եւ զհաղորդութիւն պաշտամանն որ ի սուրբսն՝ տալ
5 ցմեզ: Ոչ որչափ ակն ունէաք, այլ եւ զանձինս եւս
ետուն, նախ Տեառն եւ ապա մեզ՝ կամօքն Աստու-
6 ծոյ, Աղաչել զՏիտոս, զի որպէս սկսաւ յառաջա-
գոյն, նոյնպէս եւ կատարեսցէ ի ձեզ եւ զայդ եւս
7 շնորհս: Այլ որպէս յամենայնի առաւել էք հաւա-
տովք եւ բանիւ եւ գիտութեամբ եւ ամենայն փու-
թով, եւ որ ի մէնջ ի ձեզ սէրն է, զի եւ յայդմ
8 եւս շնորհի առաւել լինիցիք: Ոչ որպէս հրաման
տալոյ ասեմ. այլ վասն այլոց փութոյ, եւ վասն ձե-
9 րոյ սիրոյ՝ զմտերմութիւնդ փորձեմ: Քանզի գիտէք
զշնորհսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի վասն
ձեր աղքատացաւ՝ որ մեծատունն էր, զի դուք նորա
10 աղքատութեամբն մեծասջիք: Եւ խրատ մի յայսմիկ

տամ, զի այն իսկ օգուտ է ձեզ. որք ոչ միայն զառ-
նելն, այլ եւ զկամելն յառաջագոյն սկսայք ի հերուն
հետէ։ Բայց արդ եւ զառնելն իսկ կատարեցէք. զի 11
որպէս յօժարութիւնն ի կամաց է, նոյնպէս եւ առ-
նելն ըստ գոյին։ Զի եթէ յօժարութիւնն առաջի 12
կայ, ըստ գոյին ընդունելի է, եւ ոչ եթէ ըստ չգոյին։
Զի ոչ եթէ այլոց հանգիստ կամիցիմ, եւ ձեզ նե- 13
ղութիւն։ Այլ հաւասարութեամբ յայժմու ժամա- 14
նակիս ձեր առաւելութիւնդ ի նոցա պակասութեանն,
զի եւ նոցա առաւելութիւնն եղիցի ի ձերում պա-
կասութեանդ, զի եղիցի հաւասարութիւն, որպէս եւ
գրեալ է. Թէ որ բազումն առ՝ ոչ առաւելաւ, եւ 15
որ սակաւն՝ ոչ նուազեցաւ։

ԳԳ. Բայց շնորհք Աստուծոյ՝ որ արկ զնոյն 16
փոյթ վասն ձեր ի սիրտ Տիտոսի. Զի զաղաչանսն 17
ընկալաւ, եւ փութացաւ յօժարագոյնս դիմեաց գալ
առ ձեզ։ Եւ առաքեցաք ընդ նմա զեղբայրն՝ որոյ 18
գովութիւնն յաւետարանի անդ է ընդ ամենայն եկե-
ղեցիս։ Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ ձեռնադրեալ 19
յեկեղեցեաց անտի, նշդեհակից մեր եղեւ ի շնորհս
յայսմիկ՝ որ պաշտի ի մէնջ, ի փառս Տեառն եւ ի
մեր յօժարութիւն։ Բայց զայս խղճեաք իսկ թէ 20
գուցէ արատ ինչ ոք դնիցէ ի հաստատութեանս
յայսմիկ՝ որ պաշտեցաւս ի մէնջ։ Քանզի խորհիմք 21
զբարիս ոչ միայն առաջի Տեառն, այլ եւ առաջի
մարդկան։ Եւ առաքեցաք ընդ նոսա զեղբայրն մեր՝ 22
զոր ընտրեցաք ի բազում իրս բազում անգամ պինդ
գտեալ, եւ առաւել եւս այժմ պնդագոյն, յուսով
մեծաւ ի ձեզ։ Բայց եթէ վասն Տիտոսի ինչ բանք 23
են, իմ հաւասար է եւ ձեր գործակից. եւ եթէ եղ-
բարք մեր, առաքեալքն եկեղեցւոյ եւ փառք Քրիս-
տոսի։ Եւ արդ զհանդէս սիրոյ ձերոյ եւ զմերոյ պար- 24
ծանացն վասն ձեր, ի դոսա ցուցջիք յանդիմանս ամե-
նայն եկեղեցեաց։

ԳԼՈՒԽ Թ.

1 ԴԴ. Այլ վասն պաշտամանն՝ որ ի սուրբսն է,
2 աւելի է ինձ եւ գրել առ ձեզ: Զի գիտեմ զյօժա-
րութիւն ձեր, զոր վասն ձեր պարծեցեալ եմ ի մէջ
Մակեդոնացւոցն, եթէ Աքայեցիքն ի հերուն հետէ
պատրաստ են. եւ ձեր նախանձն զբազումս յորդո-
3 րեաց. Իսկ առաքեցաք զեղբարսն, զի մի պար-
ծանքն մեր որ վասն ձեր՝ ընդունայն լինիցին ի մա-
սինդ յայդմիկ. այլ որպէս ասէի իսկ, պատրաստա-
4 գոյնք գտանիջիք. Գուցէ յորժամ գայցեն ընդ մեզ
Մակեդոնացիքն եւ գտանիցեն զձեզ անպատրաստս,
եւ ամաչեսցուք մեք, զի մի՛ ասասցուք թէ դուք, ի
5 մասինդ յայդմիկ պարծանաց: Արդ կարեւոր համա-
րեցայ աղաչել զեղբարս, զի յառաջագոյն եկեսցեն
առ ձեզ, եւ յառաջագոյն պատրաստեսցեն զյառա-
ջագոյն խոստացեալ օրհնութիւնն ձեր ի պատրաստի
ունել. այնպէս իբրեւ զօրհնութիւն, եւ մի՛ իբրեւ
6 զագահութիւն: Վասն զի զայդ որ սերմանէ ճշդելով՝
ճշդելով եւ հնձեսցէ. եւ որ սերմանէ առատու-
7 թեամբ՝ առատութեամբ եւ հնձեսցէ: Իւրաքանչիւր
որպէս եւ յօժարեսցէ ոք սրտիւ, մի՛ առ հարկի եւ
տրտմութեան. քանզի զտուրս զուարթառատս սիրէ
8 Աստուած: Այլ կարող է Աստուած զամենայն շնորհս
առաւելուլ ի ձեզ. զի յամենայնի յամենայն ժամ
զամենայն բաւականութիւն ընկալեալ՝ առաւելուցուք
9 յամենայն գործս բարութեան, Որպէս եւ գրեալ է.
Սփռեաց եւ ետ տնանկաց, արդարութիւն նորա մնայ
յաւիտեան:

10 ԴԵ. Այլ այն որ պարգեւէ սերմն սերմանահա-
նաց եւ հաց ի կերակուր, պարգեւեսցէ եւ բազմա-
ցուսցէ զսերմանիս ձեր, եւ աճեցուսցէ զարդիւնս ար-
11 դարութեան ձերոյ. Յամենայնի մեծացեալք ամենայն
առատութեամբ, որ յօրինէն մեօք գոհութիւն Աս-

տուծոյ: Զի պաշտօն հարկիս այսորիկ ոչ միայն առ 12
ի լնուլ զպակասութիւն սրբոցն է, այլ եւ առաւելուլ
բազմօք գոհութիւնս Աստուծոյ. Զանդիխիւ պաշ- 13
տամանս այսորիկ փառաւորել զԱստուած ի վերայ
հնազանդութեան խոստովանութեան ձերոյ յաւե-
տարանն Քրիստոսի, եւ առատութեամբ հաղորդու-
թեանն ի նոսա եւ յամենեսեան, Եւ նոցա աղօթք 14
վասն ձեր. քանզի անձկացեալ են առ մեզ վասն ա-
ռաւել շնորհացն Աստուծոյ՝ որ ի մեզ: Այլ շնորհք 15
Աստուծոյ ի վերայ անպատում պարգեւացն նորա:

ԳԼՈՒԽ Ժ.

Այլ ես իսկ Պաւղոս աղաչեմ զձեզ հեզու- 1
թեամբ եւ հանդարտութեամբն Քրիստոսի, որ յան-
դիման ձեզ իբրեւ տառապեալ մի եմ ի միջի ձե-
րում. բայց ի հեռուստ համարձակիմ առ ձեզ: Աղա- 2
չեմ, զի մի՛ ի մօտոյ եւեթ համարձակեցիմ վստա-
հութեամբ, կամ համարեցիմ յանդգնել ի վերայ
ոմանց՝ որ կարծեն զմէնջ եթէ ըստ մարմնոյ գնայ-
ցեմք: Զի թէպէտ եւ մարմնով գնամք, այլ ոչ եթէ 3
ըստ մարմնոյ զինուորիմք: Զի զէն զինուորութեան 4
մերոյ ոչ է մարմնաւոր, այլ զօրաւոր յԱստուծոյ,
առ ի քակելոյ զամուրս, զխորհուրդս քակեմք, Եւ 5
զամենայն բարձրութիւն հպարտացեալ ի վերայ գի-
տութեանն Աստուծոյ. եւ գերեմք զամենայն միտս ի
հնազանդութիւն Քրիստոսի. Եւ ի պատրաստի ու- 6
նիմք խնդրել զվրէժ ամենայն անհնազանդութեան՝
յորժամ ձեր եւս հնազանդութիւնդ կատարեսցի:
ԳՋ. Ըստ իւրաքանչիւր երեսաց դիտեսջիք. եթէ 7
ոք վստահ յանձն իցէ՝ Քրիստոսի լինել, զայս խոր-
հեսցի դարձեալ ի միտս իւր, թէ որպէս նայն Քրիս-
տոսի է՝ նոյնպէս եւ մեք: Զի թէ առաւել եւս 8
պարծեցայց վասն իշխանութեանս մերոյ՝ զոր ետ
մեզ Տէր ի շինել, եւ ոչ ի քակել զձեզ, ոչ ինչ

9 ամաչեցից։ Զի մի՛ թուեցայց իբրեւ ահ ինչ ար-
10 կանել ձեզ թղթովքս։ Ասիցէք, թուղթքս ծանունք
են եւ սաստիկք. բայց տեսիլ մարմնոյ տկար եւ
11 բանն արհամարհեալ. Զայս խորհեսցի այնպիսին, զի
որպիսիք եմք բանիւք թղթոցդ ի հեռուստ՝ նոյնպի-
12 սիք եւ ի մօտոյ արդեամբք։ Քանզի ոչ իշխեմք կշռել
եւ հաւասարել զանձինս մեր ումանց, որ զանձինս իւ-
րեանց ձեզ ընծայեցուցանեն. այլ անձամբ յանձինս
զանձինս չափեն, եւ ի կշռել անձամբ յանձինս, ոչ
13 առնուն ի միտ։ Այլ մեք ոչ եթէ յանչափս ինչ
պարծեսցուք, այլ ըստ չափոյ կանոնին, զոր բաժա-
նեաց մեզ Աստուած չափով հասանել մինչեւ առ
14 ձեզ։ Իբր ոչ եթէ հասու ինչ չիցեմք ի ձեզ եւ
ձգտեցուցանիցեմք զանձինս. քանզի մինչեւ առ ձեզ
15 հասաք աւետարանաւն Քրիստոսի։ Եւ ոչ յանչափս
ինչ պարծիմք օտար վաստակօք։ Բայց յոյս մի ունիմք
զաճմանն հաւատոց ձերոց այդրէն ի ձեզ մեծանալոյ
16 ըստ կանոնիս մերոյ յառաւելութիւն, ի վեր եւս քան
զձեզ աւետարանել՝ ոչ օտար կանոնաւ ի պատրաս-
17 տականս ինչ պարծել։ Զի որ պարծիցի՝ ի Տէր
պարծեսցի։
18 ԲԿ. Զի ոչ եթէ որ զանձն իւր ընծայեցուցանէ
նա է ընտրեալ, այլ զոր Տէրն ընծայեցուցանէ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Լաւ էր եթէ ներէիք փոքր մի եւ իմում ան-
2 զգամութեանս. այլ եւ անսայէք իսկ։ Նախանձե-
ցուցանեմ զձեզ ի նախանձն Աստուծոյ, զի խօսեցայց
զձեզ առն միում, իբրեւ զկոյս մի սուրբ յանդիման
3 կացուցանել Քրիստոսի։ Բայց երկնչիմ գուցէ որ-
պէս օձն խաբեաց զԵւա խորամանկութեամբ իւրով,
ապականեսցին միտք ձեր ի միամտութենէն՝ որ ի
4 Քրիստոս։ Զի եթէ որ գալոցն իցէ՝ այլ Քրիստոս
քարոզիցէ, զոր մեքն ոչ քարոզեցաք, կամ ոգի օտար

առնուցուք՝ զոր ոչ առէք, կամ աւետարան օտար՝
զոր ոչ ընկալարուք, բարւոք անսայիք նոցա: Բայց 5
ես այսպէս համարիմ, թէ ոչ ինչ իւիք պակաս իցեմ
քան զլաւ առաքեալսն: Թէպէտ եւ տգէտ եւս իցեմ 6
բանիւ, այլ ոչ եթէ գիտութեամբ. սակայն յամե-
նայնի յայտնեցաք զանձինս ամենեւին առ ձեզ: Եւ 7
եթէ վնա՞ս ինչ գործեցի՝ զի զանձն խոնարհեցուցի.
եւ այն՝ զի դուք բարձրասջիք. զի ձրի զաւետարանն
Աստուծոյ աւետարանեցի ձեզ: Զայլ եկեղեցիս կո- 8
ղոպտեցի առեալ թոշակ ի ձեր սպասաւորութիւն:
Եւ յորժամ եկի առ ձեզ, թէպէտ եւ պակասեաց 9
ինչ, ոչ զոք ի ձէնջ ծանրացուցի, զի զպակասութիւնն
իմ լցին եղբարքն եկեալք ի Մակեդոնացւոց. եւ
յամենայնի առանց ծանրանալոյ ձեզ զանձն իմ պա-
հեցի եւ պահեցից: Քանզի գոյ յիս ճշմարտութիւնն 10
Քրիստոսի:

ԲԹ. Զի պարծանքս այս ոչ արգելցին յինէն ի
կողմանս Աքայեցւոց: Ընդէ՞ր. իբրու թէ ո՞չ սիրիցեմ 11
զձեզ. զայն Աստուած գիտէ. Զոր առնեմն՝ եւ արա- 12
րից, զի հատից զպատճառս այնոցիկ՝ որ զպատճառսն
կամիցին. զի որով պարծիցինն, եւ նոքա իբրեւ զմեզ
գտանիցին: Զի այնպիսիքն սուտ առաքեալք, մշակք 13
նենգաւորք, կերպարանին ի կերպարանս առաքելոց
Քրիստոսի: Եւ չեն ինչ զարմանք. քանզի եւ ինքն 14
սատանայ կերպարանի ի հրեշտակ լուսոյ: Եւ ոչ 15
ինչ է մեծ թէ եւ պաշտօնեայք նորա կերպարանին
իբրեւ պաշտօնեայք արդարութեան, որոց կատարածն
եղիցի ըստ գործոց իւրեանց: Դարձեալ ասեմ. մի՛ 16
ոք համարեսցի զիս անզգամ, ապա թէ ո՛չ գոնէ իբրեւ
զանզգամ ընկալարուք զիս, զի եւ ես փոքր մի ինչ
պարծեցայց: Եւ զոր խօսիմս՝ ոչ եթէ ըստ Տեառն 17
ինչ խօսիմ, այլ իբրեւ անզգամութեամբ ըստ կարգի
այդր պարծանաց: Եւ քանզի բազումք պարծին ըստ 18
մարմնոյ, եւ ես պարծեցայց: Մտադիւր իմն անսայիք 19

20 անմտացն ձերովդ իմաստութեամբ: Քանզի անսայք
եթէ ոք խաբէ զձեզ, եթէ ոք ծառայեցուցանէ, եթէ
ոք ուտէ զձեր, եթէ ոք առնու ինչ, եթէ ոք հպար-
21 տանայ, եթէ ոք զձեզ յանդիման հարկանէ: Ըստ
անարգանացդ ասեմ, իբրեւ թէ մեք տկարացա՞ք ար-
դեօք. յոր ինչ ոք համարձակիցի, անզգամութեամբ
22 ասեմ, համարձակիմ եւ ես: Եբրայեցի՞ք իցեն, եւ
ես. Իսրայէլացի՞ք իցեն, եւ ես. զաւակ Աբրահա-
23 մո՞ւ իցեն, եւ ես. Պաշտօնեայք Քրիստոսի՞ իցեն,
յանդգնագոյնս ասացից՝ թէ առաւել եւս ես. եթէ
վաստակովք՝ առաւել, եթէ գանիւք՝ եւս առաւել,
եթէ բանտիւ՝ աւելի քան զնոսա, եթէ մահուամբք՝
24 բազում անգամ: Ի Հրէից հնգիցս՝ քառասուն միով
25 պակաս առի, Երիցս ձաղկեցայ, մի անգամ քարկոծ
եղէ, երիցս նաւակոծ եղէ, զտիւ եւ զգիշեր յան-
26 դունդս տառապեցայ. Ի ճանապարհս բազում ան-
գամ. վիշտս ի գետոց, վիշտս յաւազակաց, վիշտս
յազգէ, վիշտս ի հեթանոսաց, վիշտս ի քաղաքի,
վիշտս յանապատի, վիշտս ի ծովու, վիշտս ի սուտ
27 եղբարց. Ի ջանս եւ ի վաստակս, ի տքնութիւնս բա-
զում անգամ, ի քաղց եւ ի ծարաւ, ի պահս բա-
28 զում անգամ, ի ցուրտ եւ ի մերկութեան: Թող
զայլ նեղութիւնն, եւ զի հանապազ խուժանն ի
վերայ իմ կուտէր եւ հոգք ամենայն եկեղեցեացն:
29 Ո՞ հիւանդանայ, եւ ոչ ես հիւանդանամ. ո՞ գայ-
թագղի, եւ ոչ ես տապանամ:
30 ԲԸ. Եթէ պարծել ինչ պա՞րտ իցէ, զտկարու-
31 թեանն պարծեցայց: Աստուած եւ Հայր Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի գիտէ՝ որ է օրհնեալ յաւի-
32 տեանս, զի ոչ ստեմ: Ի Դամասկոս ազգապետն
Արետայ արքայի պահէր զքաղաքն Դամասկացւոց
33 ունել զիս. Եւ ընդ պատուհանն վանդակաւ կա-
խեցայ ընդ պարիսպն, եւ փախեայ ի ձեռաց նորա:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Արդ պարծե՞լ ինչ պարտ իցէ. այլ օգնէ ինչ ոչ: 1
Բայց եկից ի տեսիլս եւ ի յայտնութիւնս Տեառն:
Գիտեմ այր մի ի Քրիստոս յառաջ քան զչորեք- 2
տասան ամ, եթէ մարմնով ոչ գիտեմ, եւ եթէ ա-
ռանց մարմնոյ՝ ոչ գիտեմ, Աստուած գիտէ. յափշ-
տակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկինս: Եւ 3
գիտեմ զայնպիսի այր, եթէ մարմնով եւ եթէ առ-
անց մարմնոյ ոչ գիտեմ, Աստուած գիտէ, Զի յափշ- 4
տակեցաւ ի դրախտն, եւ լուաւ բանս անճառս, զոր
ոչ է պարտ մարդոյ խօսել: Վասն այնպիսւոյն պար- 5
ծեցայց, այլ վասն անձին ինչ ոչ պարծեցայց, բայց
եթէ ի տկարութիւնս: Զի եթէ եւ կամիցիմ պար- 6
ծել՝ ոչ եղէց անզգամ, քանզի զարդարն ասեմ. այլ
անխայեմ, գուցէ ոք համարիցի ինչ յիս աւելի՝ քան
զոր տեսանիցէ յիս կամ լուիցէ յինէն: Եւ զի մի 7
առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց,
տուաւ ինձ խայթ մարմնոյ հրեշտակ սատան՝ կռփել
զիս. զի մի՛ հպարտացայց: Եւ վասն այնորիկ երիցս 8
անգամ աղաչեցի զՏէր՝ զի ի բաց արասցէ յինէն.
Եւ ասէ ցիս. շատ են քեզ շնորհք իմ, զի զօրու- 9
թիւն իմ ի տկարութեան կատարի. եւ արդ լաւ եւս
լիցի ինձ պարծել ի տկարութիւնս, զի բնակեսցէ յիս
զօրութիւնն Քրիստոսի:

Գփ. Վասն որոյ հաճեալ եմ ընդ տկարու- 10
թիւնս, ընդ թշնամանս, ընդ վիշտս, ընդ հալածանս
եւ ընդ նեղութիւնս վասն Քրիստոսի. զի յորժամ
տկարանամ, յայնժամ զօրանամ: Եղէ անզգամ, 11
քանզի դուք ստիպեցէք. զի ինձ պարտ էր ի ձէնջ
վկայութիւն առնուլ՝ թէ ոչ ինչ պակաս գտայ քան
զլաւ առաքեալսն. զի թէպէտ եւ ես ոչ ինչ եմ,
Սակայն նշանք առաքելոյ գործեցան ի ձեզ ամենայն 12
համբերութեամբ, նշանօք եւ արուեստիւք եւ զօրու-

13 թեամբք։ Եւ արդ զի՞նչ իցէ, որո՛վ պակաս գտայք
քան զայլ եկեղեցիս. բայց եթէ այնու՝ զի ես զձեզ
ոչ ծանրացուցի. շնորհեցէք ինձ զվնասդ զայդ։
14 Ահաւասիկ այս երիցս անգամ պատրաստեալ եմ
գալ առ ձեզ, եւ ձեզ բեռն ինչ ոչ եղէց. զի ոչ
խնդրեմ ինչ զձեր, այլ զձեզ. քանզի ոչ պարտին
15 որդիք հարց գանձել, այլ հարք՝ որդւոց։ Բայց ես
մտադիւրութեամբ ծախեցից եւ ծախեցայց վասն
անձանց ձերոց. զի թէպէտ եւ յառաւել սիրոյն զձեզ
16 սակաւ սիրիցեմ, Այլ գրեթէ ես ոչ ինչ ծանրացայ
ձեզ. այլ քանզի խորագէտ էի, խելօք կալայ զձեզ։
17 Միթէ որովք առաքեցին առ ձեզ՝ նոքօք ինչ ագա-
18 հեցի՞ ի ձէնջ։ Աղաչեցի զՏիտոս եւ առաքեցի ընդ
նմա զեղբայրն, միթէ ագահեա՞ց ինչ զձեր Տիտոս.
ո՞չ նովին ոգւով գնացաք, ո՞չ նովին շաւիղք շրջեցաք։
19 ԳԶ. Դարձեալ համարիցիք՝ եթէ յողոք ան-
կեալ ինչ ձեզ աղերսիցե՞մք. առաջի Աստուծոյ ի
Քրիստոս խօսիմք, զի ամենայն ինչ, սիրելիք, վասն
20 ձերոյ շինութեան է։ Այլ երկնչիմ, գուցէ եկեալ՝ ոչ
որպիսիս կամիմն գտանիցեմ զձեզ. եւ ես գտանի-
ցիմ ձեզ՝ որպէս եւ դուք ոչ կամիցիք. գուցէ դար-
ձեալ հեռ, նախանձ, սրտմտութիւնք, գրգռութիւնք,
չարախօսութիւնք, քսութիւնք, հպարտութիւնք,
21 ամբարտաւանութիւնք, խռովութիւնք։ Գուցէ դար-
ձեալ յորժամ գայցեմ՝ նկուն ինչ առնիցէ զիս Ա-
ստուած իմ առ ձեզ. եւ սուգ առնուցում վասն բազ-
մաց յառաջագոյն մեղուցելոց եւ ոչ ապաշխարելոց
ի վերայ պղծութեան եւ պոռնկութեան եւ գիջու-
թեան զոր գործեցին։

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Այս երիցս անգամ գամ առ ձեզ, զի ի բերա-
նոյ երկուց եւ երից վկայից հաստատեսցի ամենայն
2 բան։ Յառաջ ասացի եւ դարձեալ կանխաւ ասեմ

յանդիման երկիցս անգամ. եւ այժմ ի բացուստ
գրեմ յառաջագոյն յանցուցելոցն եւ այլոցն ամե-
նեցուն. զի եթէ եկից դարձեալ՝ ոչ խնայեցից: Եթէ 3
զփո՞րձ ինչ խնդրէք զՔրիստոսի, որ ինեւս ընդ ձեզ
խօսի, որ հզօրացեալն է ի ձեզ, եւ ոչ տկարացեալ:
Զի թէպէտ եւ խաչեցաւ ի մերմէ տկարութենէ, 4
այլ կենդանի է զօրութեամբն Աստուծոյ. եւ մեք
թէպէտ եւ տկարանայցեմք վասն նորա, այլ կենդանի
լիցուք ընդ նմա զօրութեամբն Աստուծոյ:

ԳԿ. Փորձեցէք զանձինս ձեր, եթէ կայցէք ի 5
նոյն հաւատս. քննեցէք զանձինս, եթէ ո՞չ գիտէք
զանձինս՝ զի Քրիստոս Յիսուս ի ձեզ է. բայց եթէ
անպիտանք իցէք: Այլ ակն ունիմ թէ գիտիցէք, 6
զի մեք ոչ եմք անպիտանք: Այլ խնդրեմք յԱս- 7
տուծոյ, զի մի՛ ինչ արասցէ ձեզ չար. ոչ զի մեք ըն-
տիրք երեւեսցուք, այլ զի դուք զբարիս գործիցէք
եւ մեք անպիտանք իցեմք: Զի ոչ կարեմք ինչ հա- 8
կառակ կալ ճշմարտութեանն, այլ վերակացու եմք
ճշմարտութեանն: Խրախ եմք՝ յորժամ մեք տկարա- 9
նայցեմք, եւ դուք զօրաւորք իցէք. զդոյն իսկ եւ ա-
ղօթս առնեմք զձեր հաստատութիւնդ: Վասն այ- 10
նորիկ զայս ի հեռուստ գրեմ, զի մի՛ յորժամ եկից՝
սաստկութեամբ վարեցայց ըստ իշխանութեանս, զոր
ետ ինձ Տէր ի շինել եւ ոչ ի քակել: Այսուհետեւ, 11
եղբարք, ողջ լերուք, հաստատուն կացէք, մխիթարե-
ցարուք, միաբան լերուք, խաղաղութիւն արարէք. եւ
Աստուած խաղաղութեան եւ սիրոյ եղիցի ընդ ձեզ:
Ողջոյն տուք միմեանց ի համբոյր սրբութեան. ողջոյն 12
տան ձեզ սուրբք ամենայն: Շնորհք Տեառն մերոյ 13
Յիսուսի Քրիստոսի եւ սէրն Աստուծոյ եւ հաղոր-
դութիւն Հոգւոյն սրբոյ ընդ ձեզ ամենեսին, ամէն:

Առ Կորնթացիս երկրորդ թուղթն գրեցաւ ի Փիլիպ-
պեայ, ի ձեռն Տիտոսի եւ Ղուկայ:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԳԱՂԱՏԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 ՊԱՒՂՈՍ առաքեալ ոչ ի մարդկանէ եւ
ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի
2 եւ Աստուծոյ Հօր՝ որ յարոյց զնա ի մեռելոց. Եւ
որ ընդ իս են եղբարք ամենեքեան, եկեղեցեացդ
3 Գաղատացւոց: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղու-
թիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յի-
4 սուսէ Քրիստոսէ, Որ ետ զանձն իւր վասն մեղաց
մերոց, զի զմեզ փրկեսցէ յաշխարհէս աստի չարէ՝ ըստ
5 կամացն Աստուծոյ եւ Հօր մերոյ, Որում փառք
6 յաւիտեանս յաւիտենից. ամէն: Զարմանամ զի այդ-
պէս վաղվաղակի փոփոխիք յայնմանէ՝ որ կոչեացն
7 զձեզ ի շնորհսն Քրիստոսի, յայլ աւետարան, Որ ոչ
գոյ այլ. բայց եթէ իցեն ոմանք՝ որ խռովեցուցանի-
8 ցեն զձեզ, եւ կամիցին շրջել զաւետարանն Քրիս-
տոսի: Այլ թէ մեք, կամ հրեշտակ յերկնից աւե-
տարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն
9 ձեզ, Նզովեալ լիցի: Որպէս յառաջագոյնն ասացաք
եւ արդ դարձեալ ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ
10 աւելի քան զոր առէքն, Նզովեալ լիցի: Արդ մարդ-
կա՞ն հաճոյ լինիցիմ, թէ Աստուծոյ, կամ խնդրիցեմ
մարդկա՞ն հաճոյ լինել. եթէ տակաւին մարդկան
հաճոյ լինէի, ապա Քրիստոսի ծառայ ոչ էի:

ԳՋ. Ցուցանեմ ձեզ, եղբարք, զաւետարանն, 11
որ աւետարանեցաւ յինէն. զի ոչ է ըստ մարդոյ.
Քանզի եւ ոչ ես ի մարդոյ առի, եւ ոչ ուսայ յու- 12
մեքէ, այլ ի յայտնութենէն Յիսուսի Քրիստոսի:
Քանզի լուեալ իսկ է ձեր զիմ գնացսն, որ երբեմն 13
ի Հրէութեան անդ. զի անչափ հալածէի զեկեղեցին
Աստուծոյ եւ աւեր հարկանէի զնա: Եւ յառաջա- 14
դէմ էի ի Հրէութեանն՝ քան զբազում հասակակիցս
իմ, որ յազգին իմում էին. առաւել նախանձախնդ-
դիր էի իմոյ հայրենի աւանդութեանցն: Այլ յոր- 15
ժամ հաճեցաւ Աստուած՝ որոշեաց զիս յորովայնէ
մօր իմոյ, եւ կոչեաց ի ձեռն շնորհաց իւրոց, Յայ- 16
տնել զՈրդին իւր ինեւ. զի աւետարանեցից զնա ի
հեթանոսս. անդէն վաղվաղակի ոչ ինչ զգացուցի
մարմնոյ եւ արեան, Եւ ոչ ելի յԵրուսաղէմ, առ որ 17
յառաջագոյն քան զիս առաքեալքն էին. այլ չոգայ
յԱրաբիա, եւ դարձեալ դարձայ ի Դամասկոս: Ապա 18
յետ երից ամաց ելի յԵրուսաղէմ տեսանել զՊե-
տրոս, եւ եղէ առ նմա աւուրս հնգետասան: Զայլ 19
ոք յառաքելոց անտի ոչ տեսի, բայց միայն զՅակով-
բոս՝ զեղբայրն Տեառն: Այլ զոր գրեմս առ ձեզ, ա- 20
հաւասիկ առաջի Աստուծոյ՝ զի ոչ ստեմ: Ապա եկի 21
ի կողմանս Ասորւոց եւ Կիլիկեցւոց: Եւ յանծանօթս 22
էի երեսօք եկեղեցեացն՝ որ ի Թլփատութենէ անտի
էին ի Քրիստոս: Բայց զի լսելով լուեալ էր, թէ 23
որ հալածէրն զմեզ յայնժամ, արդ աւետարանէ
զհաւատսն՝ զոր երբեմն խախտէր: Եւ փառաւոր առ- 24
նէին ինեւ զԱստուած:

ԳԼՈՒԽ Բ.

ԵԿ. Ապա յետ ամաց չորեքտասանից միւսան- 1
գամ ելի յԵրուսաղէմ ընդ Բառնաբայ, առեալ ընդ
իս եւ զՏիտոս: Եւ ելի ըստ յայտնութեանն, եւ զգա- 2
ցուցի նոցա զաւետարանն՝ զոր քարոզէի ի հեթանոսս,

առանձինն այնոցիկ՝ որ կարծեալքն էին, գուցէ ընդու-
3 նայն ինչ ընթացեալ իցեմ կամ ընթանայցեմ։ Այլ
եւ ոչ Տիտոս՝ որ ընդ իս ի հեթանոսաց էր, բռնա-
4 դատեցաւ թլփատել. Այլ վասն սպրդողաց սուտ
եղբարցն, որք սպրդեցին մտանել դիտել զազատու-
թիւնն մեր՝ զոր ունիմք ի Քրիստոս Յիսուս, զի
5 զմեզ ծառայեցուսցեն։ Որոց եւ ոչ առ ժամանակ մի
անսացաք հնազանդութեանն, զի ճշմարտութիւն
6 աւետարանին հաստատեսցի առ ձեզ։ Բայց զկարծե-
լոցն եթէ իցեն ինչ, որպիսիք ոք երբեմն էին, չէ ինչ
ինձ փոյթ. քանզի Աստուած ակն մարդկան ոչ առ-
նու, զի ինձ կարծեալքն այնպիսի ինչ ոչ զգացուցին։
7 Այլ զնորին հակառակն իբրեւ տեսին եթէ հաւա-
տացեալ է ինձ աւետարանն անթլփատութեան, որ-
8 պէս եւ Պետրոսի թլփատութեանն. Զի որ յաջո-
ղեացն Պետրոսի յառաքելութիւն թլփատութեան,
9 յաջողեաց եւ ինձ ի հեթանոսս. Իբրեւ գիտացին
զշնորհսն որ տուեալ էին ինձ, Յակովբոս եւ Կե-
փաս եւ Յովհաննէս, որ կարծեալ սիւնքն էին, ձեռն
ետուն հաւանութեան ինձ եւ Բառնաբայ. զի մեք ի
10 հեթանոսս, եւ նոքա ի թլփատութեանն. Բայց
միայն զի զաղքատսն յիշեսցուք, զոր եւ ես փու-
թացայ զնոյն առնել։
11 ԽԳ. Այլ յորժամ եկն Կեփաս յԱնտիոք, ընդ-
դէմ դարձայ նորա քանզի գոգ իբրեւ ստգտեալ իմն
12 էր։ Քանզի մինչ չեւ եկեալ էին ոմանք առ ի Յա-
կովբայ, ընդ հեթանոսս ուտէր անխտիր. իսկ իբրեւ
եկին, պատանէր եւ որոշէր զանձն, երկուցեալ յայն-
13 ցանէ՝ որ ի թլփատութենէ անտի էին։ Եւ կեղծաւո-
րեցան ընդ նմա եւ այլ Հրեայքն. մինչեւ Բառնա-
բաս անգամ խոնարհեցաւ ի նոցա կեղծաւորութիւնն։
14 Այլ իբրեւ տեսի թէ ոչ ուղիղ գնան ի ճշմարտու-
թիւն աւետարանին, ասեմ ցԿեփաս առաջի ամենե-
ցուն. Եթէ դու որ Հրեայդ ես՝ հեթանոսաբար եւ

ոչ հրէաբար կեաս, զիա՞րդ ստիպես հեթանոսաց լի-
նել հրէաբէն։ Զի մեք բուն հրեայք եմք, եւ ոչ ի 15
հեթանոսաց մեղաւորք։ Զայս գիտեմք եթէ ոչ ար- 16
դարանայ մարդ ի գործոց օրինաց, եթէ ոչ ի հաւա-
տոցն Յիսուսի Քրիստոսի. եւ մեք ի Քրիստոս Յի-
սուս հաւատացաք, զի արդարասցուք ի հաւատոցն
Քրիստոսի, եւ ոչ ի գործոց օրինաց. զի ի գործոց
օրինաց ոչ արդարասցի ամենայն մարմին։ Իսկ եթէ
մինչ խնդրիցեմք արդարանալ ի Քրիստոս, եւ գտա- 17
նիցիմք մեղաւորք, ապա ուրեմն Քրիստոս մեղաց
պաշտօնեայ եղեւ. քաւ լիցի։ Զի եթէ զոր քա- 18
կեցին՝ զնոյն միւսանգամ շինիցեմ, ապա յանցաւոր
զանձն իմ ես ինձէն երեւեցուցանեմ։ Զի ես 19
օրինօք՝ օրինացն մեռայ, զի Աստուծոյ կեցից եւ ընդ
Քրիստոսի ի խաչ ելից։ Եւ կենդանի եմ այսուհե- 20
տեւ, ոչ ես, այլ կենդանի է յիս Քրիստոս։

ԽԶ. Այլ որ այժմս կեամ մարմնով, հաւատովք
Որդւոյն Աստուծոյ կեամ. որ սիրեացն զիս եւ մատ-
նեաց զանձն վասն իմ։ Եւ ես ոչ անարգեմ զշնորհսն 21
Աստուծոյ. զի եթէ յօրինաց անտի է արդարութիւն,
ապա Քրիստոս զուր մեռաւ։

ԳԼՈՒԽ Գ.

Ո՛ անմիտ Գաղատացիք, ո՞ նախանձ արար զձեզ 1
(չհնազանդել ճշմարտութեան). որոց գրեթէ առաջի
աչաց Քրիստոս Յիսուս գրեցաւ ի խաչ ելեալ։
Զայս միայն կամիմ ուսանել ի ձէնջ. ի գործո՞ց օրի- 2
նաց զհոգին ընկալարուք, եթէ ի լրոյ հաւատոց։
Այդչափ անմիտք էք. սկսեալ հոգւով, եւ արդ 3
մարմնո՞վ վախճանիք։ Եւ այնչափ անցք անցին ընդ 4
ձեզ զուր, եթէ իցէ զուր։ Իսկ արդ որ բաշխեաց ի 5
ձեզ զհոգին եւ յաջողեաց ի ձեզ զզօրութիւնս, ի
գործոց օրինա՞ց է, եթէ ի լրոյ հաւատոց։ Որպէս 6
Աբրահամ հաւատաց յԱստուած, եւ համարեցաւ

7 նմա յարդարութիւն: Գիտիցէք արդեօք. զի որք ի
հաւատոց անտի են, նոքա են որդիք Աբրահամու:
8 Յառաջագոյն գիտէր գիր, եթէ ի հաւատոց անտի
արդարացուցանէ Աստուած զհեթանոսս, յառաջա-
գոյն խոստացաւ Աստուած Աբրահամու, թէ ի քեզ
9 օրհնեսցին ամենայն ազգք: Այսուհետեւ որք ի հա-
ւատոց անտի են՝ օրհնին ընդ հաւատացելոյն Աբրա-
10 համու: Զի որ միանգամ ի գործոց օրինացն են, ընդ
անիծիւք են. քանզի գրեալ է, թէ Անիծեալ ամե-
նայն մարդ՝ որ ոչ կացցէ յամենայն ի գրեալսն ի գիրս
11 օրինաց՝ առնել զամենայն: Զի օրինօքն ոչ ոք ար-
դարանայ առաջի Աստուծոյ, այն յայտ իսկ է. զի
Արդարն, ասէ, ի հաւատոց կեցցէ:
12 ՎԵՐՋ. Բայց օրէնքն չեն ի հաւատոց, այլ որ
13 արասցէ զայն՝ կեցցէ ի նոսին: Քրիստոս գնեաց զմեզ
յանիծից օրինացն, եղեալ վասն մեր անէծք. զի
գրեալ է, թէ Անիծեալ է ամենայն՝ որ կախեալ
14 կայցէ զփայտէ. Զի ի հեթանոսս օրհնութիւնն Ա-
բրահամու եղիցի ի Քրիստոս Յիսուս. զի մեք զաւ-
15 ետիս Հոգւոյն սրբոյ առցուք հաւատովք: Ըստ
մարդկութեան ասեմ, եղբարք. ապաքէն զմարդկան
հաստատեալ կտակ ոչ ոք կարէ անարգել. եւ ոչ այլ
16 հրաման ի վերայ այնր տալ: Իսկ Աբրահամու խոս-
տացան աւետիքն, եւ զաւակի նորա. եւ ոչ ասէ՝ զա-
ւակաց՝ իբրեւ բազմաց, այլ իբրեւ զմիոյ, թէ եւ
17 զաւակի քում, որ է Քրիստոս: Բայց զայս ասեմ,
զկտակն յառաջագոյն հաստատեալ յԱստուծոյ ի
Քրիստոս, օրէնքն որ յետ չորեքհարիւր եւ երեսուն
ամի եղան, ոչ կարեն խախտել առ ի խափանելոյ
18 զաւետիսն: Եթէ յօրինաց անտի է ժառանգութիւն,
ապա ոչ եւս յաւետեացն. բայց Աբրահամու աւե-
19 տեօք շնորհեաց Աստուած: Իսկ զի՞նչ իցեն օրէնք.
յանցուածոց վասն յաւելան, մինչեւ եկեսցէ զաւակն,
որում խոստացեալն էր՝ կարգեալ հրեշտակօք ի ձեռն

միջնորդի։ Իսկ միջնորդ միոյ ուրուք ոչ է, բայց Աս- 20
տուած մի է։ Իսկ արդ օրէնքն հակառա՞կ ինչ իցեն 21
աւետեացն Աստուծոյ. քաւ լիցի. զի եթէ տուեալ էին
օրէնքն՝ որ կարող էին կենդանի առնել, ապա հաս-
տատ յօրինաց անտի էր արդարութիւն։ Այլ փակե- 22
ցին գիրք զամենեսեան ընդ մեղօք, զի աւետիքն ի
հաւատոց անտի Յիսուսի Քրիստոսի տացին հաւա-
տացելոց։ Մինչ չեւ հաւատքն եկեալ էին՝ ընդ օրի- 23
նօք փակեալ պահէաք ի հանդերձեալ հաւատսն,
որ յայտնելոց էին ի մեզ։ Ապա օրէնքն դաստիարակ 24
եղեն մեզ ի Քրիստոս Յիսուս, զի ի հաւատոցն ար-
դարասցուք։ Այլ իբրեւ եկին հաւատքն, ոչ եւս ընդ 25
դաստիարակաւ եմք։ Քանզի ամենեքեան որդիք Ա- 26
տուծոյ էք հաւատովք ի Քրիստոս Յիսուս։ Որք 27
միանգամ ի Քրիստոս մկրտեցարուք, զՔրիստոս
զգեցեալ էք. չիք խտիր, Ոչ հրէի եւ ոչ հեթանո- 28
սի, ոչ ծառայի եւ ոչ ազատի, ոչ արուի եւ ոչ իգի.
զի ամենեքեան դուք մի էք ի Քրիստոս Յիսուս։
Ապա եթէ դուք Քրիստոսի էք, ուրեմն Աբրահա- 29
մու զաւակ էք ըստ աւետեացն ժառանգք։

ԳԼՈՒԽ Դ.

ԶԿ. Զայս ասեմ, ցորքան ժամանակս ժառանգն 1
տղայ է, չէ ինչ աւելի քան զծառայն, թէպէտ եւ
տէր իցէ ամենեցուն. Այլ ընդ հազարապետօք է եւ 2
ընդ գաւառապետօք մինչեւ ի ժամանակակէտ հօրն։
Նոյնպէս եւ մեք մինչ տղայքն էաք՝ ընդ տարերբք 3
աշխարհիս ի ծառայութեան կայաք։ Այլ իբրեւ եկն 4
լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր
որ եղեւ ի կնոջէ, եւ եմուտ ընդ օրինօք. Զի զնոսա 5
որ ընդ օրինօքն իցեն, գնեսցէ. զի մեք զորդեգրու-
թիւն ընկալցուք։ Եւ զի էք դուք որդիք, առաքեաց 6
Աստուած զհոգի Որդւոյն իւրոյ ի սիրտս մեր՝ որ ա-
ղաղակէ աբբա, հայր։ Այսուհետեւ չես ծառայ, այլ 7

8 որդի. եթէ որդի, եւ ժառանգ Աստուծոյ: Այլ յայն-
ժամ մինչ ոչն գիտէիք զԱստուած, ծառայէիք այնո-
9 ցիկ՝ որ ոչն էին ի բնէ աստուածք: Այլ այժմիկ ծա-
նեարուք զԱստուած, մանաւանդ թէ ծանուցայք իսկ
յԱստուծոյ. զիա՞րդ դառնայք միւսանգամ անդրէն
ի տարերս տկարս եւ յաղքատս, որոց միւսանգամ
10 զանձինս ծառայեցուցանել կամիք: Զաւուրս խորէք
11 եւ զամիս եւ զժամանակս եւ զտարիս: Երկնչիմ ի
ձէնջ, գուցէ թէ ի զուր ինչ վաստակեցի ի ձեզ:
12 Եղերուք իբրեւ զիս, քանզի եւ ես իբրեւ զձեզ էի:
Եղբարք, աղաչեմ զձեզ, չիք ինչ ձեր մեղուցեալ առ
13 իս: Գիտէք դուք զի տկարութեամբ մարմնոյ աւե-
տարանեցի ձեզ զառաջինն, եւ զփորձանսն որ ի մար-
14 մնի իմում էին, Ոչ անարգեցէք եւ ոչ անգոսնեցէք.
այլ իբրեւ զՀրեշտակ Աստուծոյ ընկալայք զիս, ի-
15 բրեւ զՔրիստոս Յիսուս: Իսկ արդ ո՞ւր է երանու-
թիւնն ձեր. վկայեմ ձեզ, եթէ հնար ինչ էր, զաչս
16 ձեր հանէիք եւ տայիք ինձ: Արդ զի՞ թշնամի իմն եղէ
17 ձեզ, զի զստոյգն խօսեցայ: Այլ նախանձեցուցանեն
զձեզ ոչ ի բարի, եւ արգելուլ կամին զձեզ՝ զի նոցա
18 նախանձաւորք լինիցիք: Բայց լաւ է նախանձաւոր
լինել ի բարիս յամենայն ժամ, եւ ոչ միայն յոր-
ժամ ի ձերում միջի իցեմ:

19 **ԶԹ.** Որդեակք իմ, զորս դարձեալ վերստին
20 երկնեմ մինչեւ նկարեսցի Քրիստոս ի ձեզ: Կամէի
այժմ գալ առ ձեզ եւ փոխել զբարբառ իմ. զի
21 տարակուսեալ եմ ես վասն ձեր: Ասէք ինձ՝ որ
ընդ օրինօքն կամիք լինել, չիցէ՞ ընթերցեալ ձեր զօ-
22 րէնս: Զի գրեալ է՝ թէ Աբրահամու երկու որդիք
23 էին, մի յաղախնոյ անտի եւ մի յազատէն: Այլ որ
յաղախնոյն էր՝ ըստ մարմնոյ ծնեալ էր, եւ որ յա-
24 զատէն՝ ըստ աւետեացն. Որ է առակ օրինակի: Զի
այս ինքն են երկու կտակարանք, մի ի լեռնէ Սինայ ի
25 ծառայութիւն ծնեալ՝ որ է Հագար: Քանզի Հա-

գայն լեառն Սինայ է յԱրաբիա, համաստր է այժմ
Երուսաղեմի. զի ծառայէ որդւովքն իւրովք հանդերձ:
Այլ վերինն Երուսաղէմ ազատ է՝ որ է մայր մեր 26
ամենեցուն: Զի գրեալ է. Ուրախ լեր ամուլ՝ որ ոչ 27
ծնանէիր, գոչեա եւ աղաղակեա՝ որ ոչդ երկնէիր.
զի բազում են որդիք ամլոյդ առաւել քան զա-
րամբոյն: Այլ մեք, եղբարք, ըստ Սահակայ աւետեացն 28
որդիք եմք: Այլ որպէս յայնժամ որ ըստ մարմնոյն 29
ծնեալ էր՝ հալածէր զայն որ ըստ հոգւոյն, նոյնպէս
եւ այժմ: Այլ զի՞նչ ասէ գիր. Ի բաց հան զաղա- 30
խինդ եւ զորդի նորա. զի մի ժառանգեսցէ որդի ա-
ղախնոյն ընդ որդւոյն ազատի: Վասն որոյ, եղբարք, 31
չեմք որդիք աղախնոյն, այլ ազատին. ազատու-
թեամբն որով Քրիստոս զմեզ ազատեաց:

ԳԼՈՒԽ Ե.

Պինդ կացէք այսուհետեւ, եւ մի միւսանգամ 1
ընդ լծով ծառայութեան մտանիցէք:

ԶԶ. Ահաւասիկ ես Պաւղոս ասեմ ձեզ. զի եթէ 2
թլփատիք, Քրիստոս ինչ ձեզ ոչ օգնէ: Վկայեմ 3
ամենայն մարդոյ՝ որ թլփատիցի, թէ պարտական է
զամենայն օրէնսն կատարել: Խափանեալ էք ի Քրիս- 4
տոսէ՝ որ օրինօքն արդարանայք եւ անկեալ էք ի
շնորհաց անտի: Զի մեք հոգւոյն ի հաւատոց յու- 5
սոյն արդարութեան ակն ունիմք: Զի ի Քրիստոս 6
Յիսուս ոչ թլփատութիւն ինչ կարող է եւ ոչ ան-
թլփատութիւն. այլ հաւատք սիրով աշխատեալք:
Բարւոք ընթանայիք, ո՞ կասեցոյց զձեզ ճշմարտու- 7
թեանն չհաւանել: Զի այն հրապոյրք ոչ յայնմանէ 8
են՝ որ կոչեացն զձեզ: Փոքր մի խմոր զամենայն զան- 9
գուածն խմորէ: Այլ ես յուսացեալ եմ ի ձեզ 10
Տէրամբ թէ ոչ այլազգ ինչ խորհիցիք. եւ որ խռո-
վեցուցանէ զձեզ, կրեսցէ զդատաստան ո՛ ոք եւ իցէ:
Այլ ես, եղբարք, եթէ թլփատութիւն քարոզէի, 11

ընդէ՞ր տակաւին հալածիմ. ապա ուրեմն խափա-
12 նեալ իցէ գայթագղութիւն խաչին: Երանի՜ թէ
մօտակոտուր իսկ լինէին՝ որ զձեզն խռովեցուցանեն:
13 Զի դուք յազատութիւն կոչեցեալ էք, եղբարք, միայն
զի ազատութիւնն ձեր ոչ լինիցի ի պատճառս մար-
14 մնոյ. այլ սիրով ծառայեցէք միմեանց: Զի ամենայն
օրէնք ի մի բան կատարին. ի սիրեսցես զընկեր քո
15 իբրեւ զանձն քո: Ապա թէ զմիմեանս խածատիցէք
եւ ուտիցէք, զգոյշ լերուք՝ գուցէ ի միմեանց սա-
տակիցիք:

16 ԻԴ. Բայց զայս ասեմ. հոգւով գնացէք, եւ
17 զցանկութիւն մարմնոյ մի՛ կատարէք: Զի մարմին
ցանկայ հակառակ հոգւոյ, եւ հոգի հակառակ մար-
մնոյ. եւ զի սոքա միմեանց հակառակ են, մի՛ զոր կա-
18 միցիքն՝ զայն առնիցէք: Իսկ եթէ հոգւով վարիք,
19 ապա չէք ընդ օրինօք: Զի յայտնի են գործք մար-
մնոյ. այսինքն են՝ շնութիւն, պոռնկութիւն, գիջու-
20 թիւն, պղծութիւն, Կռապաշտութիւն, կախարդու-
թիւն, թշնամութիւն, հեռ, նախանձ, բարկութիւն,
հակառակութիւնք, երկպառակութիւնք, հերձու-
21 ածք, Չարակնութիւնք, սպանութիւնք, արբեցու-
թիւնք, անառակութիւնք եւ որ ինչ սոյին նման են.
զոր յառաջագոյն իսկ ասեմ ձեզ, որպէս եւ կանխաւն
ասէի, թէ որ զայսպիսի ինչ գործեն՝ զարքայութիւն
22 Աստուծոյ ոչ ժառանգեն: Իսկ պտուղ հոգւոյն այս
է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնմտու-
23 թիւն, Քաղցրութիւն, բարութիւն, հաւատք, հե-
զութիւն, ժուժկալութիւն. զայսպիսեաց աստի օ-
24 րէնքն չեն հակառակ: Իսկ որ Քրիստոսեանքն են,
զմարմինս իւրեանց ի խաչ հանին կարեօք եւ ցանկու-
25 թեամբք հանդերձ: Եթէ կեամք հոգւով՝ ընդ հո-
26 գւոյն եւ միաբանեսցուք: Եւ մի՛ լիցուք սնապարծք
միմեանց ձայն տալով, եւ ընդ միմեանս նախանձելով:

ԳԼՈՒԽ Զ·

ԻԶ· Եղբա՛րք, եթէ յանկարծ ըմբռնեսցի ոք ի 1
ձէնջ յինչ եւ իցէ յանցանս, դուք որ հոգեւորքդ
էք՝ հաստատեցէք զայնպիսին հոգւով հեզութեան·
զգոյշ լինիցիք անձանց՝ զի մի՛ եւ դուք փորձիցիք։
Զմիմեանց բեռն բարձէք, եւ այնպէս կատարեցէք 2
զօրէնսն Քրիստոսի։ Եթէ համարիցի ոք լինել ինչ, 3
եւ չիցէ, զանձն իւր խաբէ։ Զգործ իւր կշռեսցէ 4
իւրաքանչիւր ոք եւ ապա անձին իւրում միայն պար-
ծանս տացէ, եւ մի՛ առ ընկերաւն։ Զի իւրաքան- 5
չիւր ոք զիւր բեռն բառնալոց է։ Հաղորդութիւն 6
արասցէ աշակերտն վարդապետին յամենայն բարու-
թիւնս։ Մի՛ խաբիք· Աստուած ոչ արհամարհի։ 7
Զի զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն եւ հնձեսցէ· որ 8
սերմանէ ի մարմին իւր, ի մարմնոյ անտի հնձեսցէ
զապականութիւն· եւ որ սերմանէ ի հոգին, ի հոգւոյ
անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից։ Այլ զբարիս 9
գործել մի՛ ձանձրասցուք, զի ի ժամանակի իւրում
հնձեսցուք առանց լքանելոյ։ Այսուհետեւ մինչ դեռ 10
ժամանակս ի ձեռս է՝ գործեսցուք զբարիս առ ամե-
նեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ։ Տե- 11
սէք, որպիսի գրով գրեցի առ ձեզ իմով ձեռամբ։
Զի որ միանգամ կամին բարեմարդիկ լինել մար- 12
մնով, նոքա ստիպեն զձեզ թլփատել· միայն զի մի՛
զխաչին Քրիստոսի զհետ երթայցեն։ Քանզի որ 13
թլփատեալքն իսկ իցեն, նոքա զօրէնսն ոչ պահեն·
այլ կամին զի դուք թլփատեսջիք, զի ձերով մար-
մնովդ պարծեսցին։

ՎԵՐՋ· Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն 14
ի խաչն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով
ինձ աշխարհ ի խաչ ելեալ է եւ ես աշխարհի։ Զի 15
(ի Քրիստոս Յիսուս) ոչ թլփատութիւն ինչ է եւ
ոչ անթլփատութիւն, այլ նոր արարած։ Եւ որ 16

միանգամ այսմ կանոնի միաբան լինին, խաղաղու-
թիւն ի վերայ նոցա եւ ողորմութիւն եւ ի վերայ
17 Իսրայելին Աստուծոյ: Այսուհետեւ աշխատ ոք զիս
մի արասցէ. զի ես զչարչարանսն Քրիստոսի ի մար-
18 մնի իմում կրեմ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում, եղբարք. ամէն:

Առ Գաղատացիս գրեցաւ ի Հռոմէ:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵՓԵՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԸԿ. ՊԱՒՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի 1
կամօքն Աստուծոյ, սրբոց որ են յԵփեսոս եւ հաւա-
տացելոց ի Քրիստոս Յիսուս: Շնորհք ընդ ձեզ 2
եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի
Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Օրհնեալ է Աստու- 3
ած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ
օրհնեաց զմեզ ամենայն հոգեւոր օրհնութեամբ
յերկնաւորս ի Քրիստոս. Որպէս ընտրեաց զմեզ 4
նովաւ յառաջ քան զլինելն աշխարհի, լինել մեզ
սուրբս եւ անարատս առաջի նորա սիրով: Յառաջա- 5
գոյն սահմանեաց զմեզ յորդեգրութիւն ի ձեռն Յի-
սուսի Քրիստոսի ի նոյն ըստ հաճութեան կամաց
իւրոց, Ի գովեստ փառաց շնորհաց իւրոց, որով 6
զուարճացոյց զմեզ սիրելեաւն: Որով ունիմք զփր- 7
կութիւն ի ձեռն արեան նորա զթողութիւն մեղաց
ըստ մեծութեան շնորհաց իւրոց, Որ առաւելաւ ի 8
մեզ ամենայն իմաստութեամբ եւ գիտութեամբ: Ե- 9
ցոյց մեզ զխորհուրդս կամաց իւրոց ըստ հաճութեան
իւրում, զոր յառաջագոյն եդ նովաւ, Ի տնտեսութիւն 10
լրման ժամանակաց, բովանդակել զամենայն Քրիս-
տոսիւ, որ ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի ի նոյն:

11 Որով եւ վիճակեցաք յառաջագոյն հրաւիրեալք ըստ
յառաջադրութեանն Աստուծոյ, որ զամենայն յա-
12 ջողէ ըստ խորհրդոց կամաց իւրոց, Լինել մեզ ի գո-
վեստ փառաց նորա յառաջագոյն յուսացելոցս ի
13 Քրիստոս: Որով եւ դուք իբրեւ լուարուք զբանն
ճշմարտութեան, զաւետարանն փրկութեան ձերոյ,
որով եւ հաւատացեալ կնքեցայք Հոգւոյն սրբոյ
14 աւետեաց, Որ է առհաւատչեայ ժառանգութեան
մերոյ, ի փրկութիւն նուաճութեան, ի գովեստ փա-
ռաց նորա:

15 ԸԹ. Վասն այնորիկ եւ ես իբրեւ լուայ զհաւ-
ատսն ձեր՝ որ ի Տէր Յիսուս, եւ զսէրն որ ընդ ամե-
16 նայն սուրբս, Ոչ դադարեմ ի գոհանալոյ վասն ձեր
17 յիշել զձեզ յաղօթս. Զի Աստուած Տեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի Հայրն փառաց տացէ ձեզ զհո-
գին իմաստութեան եւ յայտնութեան գիտութեամբն
18 իւրով, Լուսաւոր առնել զաչս սրտից առ ի գիտե-
լոյ մեզ՝ զինչ է յոյս կոչման նորա, եւ զինչ է մեծու-
19 թիւն փառաց ժառանգութեան նորա ի սուրբս. Եւ
զինչ է առաւելութիւն մեծութեան զօրութեան նո-
րա ի մեզ հաւատացեալս ըստ յաջողութեան կարո-
20 ղութեան զօրութեանն իւրոյ, Զոր յաջողեաց ի
Քրիստոս. զի յարոյց զնա ի մեռելոց եւ նստոյց ընդ
21 աջմէ իւրմէ յերկնաւորս, Ի վերայ ամենայն իշխա-
նութեան եւ պետութեան եւ զօրութեան եւ տէ-
րութեան եւ ամենայն անուան անուանելոյ, ոչ միայն
յաշխարհիս յայսմիկ, այլ եւ ի հանդերձելումն:
22 Եւ զամենայն ինչ հնազանդ արար ի ներքոյ ոտից
նորա, եւ զնա ետ գլուխ ի վերայ ամենայն իրիք եկե-
23 ղեցւոյ, Որ է մարմին նորա. լրումն որ զամենայն յա-
մենայնի լնու:

ԳԼՈՒԽ Բ.

Եւ դուք՝ որ մեռեալն էիք ի մեղս ձեր եւ յան- 1
ցանս, Յորս երբեմն գնայիք ըստ յաւիտենի աշխար- 2
հիս այսորիկ, ըստ իշխանին իշխանութեան օդոյս այ-
սոյ, որ այժմ ընդմտեալ է յորդիսն ապստամբու-
թեան, Յորս եւ մեք ամենեքեան շրջեաք երբեմն ի 3
ցանկութիւնս մարմնոյ մերոյ, եւ առնէաք զկամս մար-
մնոյ եւ զմտաց, եւ էաք արդարեւ որդիք բարկու-
թեան իբրեւ այլքն:

ԲԶ. Այլ Աստուած՝ որ մեծն է ողորմութեամբ, 4
վասն բազում սիրոյն իւրոյ զոր սիրեաց զմեզ, Մինչ 5
դեռ մեռեալն էաք ի մեղս մեր, կենդանիս արար
զմեզ ի Քրիստոս. քանզի շնորհօք ապրեցաք: Ընդ 6
նմին յարոյց եւ ընդ նմին նստոյց յերկնաւորս ի
Քրիստոս Յիսուս: Զի ցուցցէ ի յաւիտեանսն որ գա- 7
լոցն են՝ զառաւել մեծութիւն շնորհացն իւրոց քաղ-
ցրութեամբ ի մեզ ի Քրիստոս Յիսուս: Զի շնոր- 8
հօք նորա էք փրկեալք ի ձեռն հաւատոյն. եւ այս
ոչ ի ձէնջ, այլ Աստուծոյ պարգեւ է. Ոչ ի գոր- 9
ծոց, զի մի ոք պարծեսցի: Զի նորա արարածք եմք՝ 10
հաստատեալք Քրիստոսիւ Յիսուսիւ ի գործս բա-
րութեան, յորս յառաջագոյն պատրաստեաց Աս-
տուած, զի ի նոյնս գնասցուք: Վասն որոյ եւ դուք 11
յիշեցէք՝ զի երբեմն հեթանոսք էիք մարմնով, որ
կոչեցեալ են անթլփատութիւն՝ յանուանեալ թլփա-
տութենէ անտի մարմնաւոր ձեռագործին. Զի 12
էիք ի ժամանակին յայնմիկ առանց Քրիստոսի (եւ
օտարացեալ յառաքինութենէն Իսրայելի) եւ տա-
րագիրք յուխտից աւետեացն, եւ յոյս ինչ ոչ ու-
նէիք, եւ անաստուածք էիք յաշխարհի: Իսկ այժմիկ 13
ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, դուք որ երբեմն հե-
ռաւորն էիք, մերձաւորք եղերուք արեամբն Քրիս-
տոսի: Զի նա է խաղաղութիւն մեր՝ որ արար զեր- 14

կոսեան մի, եւ զմիջնորմն ցանկոյն քակեաց, զթշնա-
15 մութիւն ի մարմնի իւրում, Եւ զօրէնս պատուիրա-
նացն հրամանօքն խափանեաց. զի զերկոսեան հաս-
տատեսցէ ինքեամբ ի մի նոր մարդ, եւ արասցէ խա-
16 ղաղութիւն, Եւ հաշտեցուսցէ զերկոսին միով մար-
մնով ընդ Աստուծոյ խաչիւն իւրով. քանզի սպան
17 զթշնամութիւն յանձին իւրում: Եւ եկն աւետարա-
նեաց խաղաղութիւն ձեզ հեռաւորաց, եւ խաղա-
18 ղութիւն մերձաւորաց. Զի նովաւ ունիմք զնուա-
19 ճութիւն երկոքեան միով հոգւով առ Հայր: Ապա
այսուհետեւ ոչ էք օտարք եւ պանդուխտք, այլ
20 քաղաքակիցք սրբոց եւ ընտանիք Աստուծոյ, Շի-
նեալք ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից, ո-
21 րոյ է գլուխ անկեանն Քրիստոս Յիսուս, Յորում
ամենայն շինուածն յօդեալ եւ պատշաճեալ, աճէ ի
22 տաճար սուրբ Տէրամբ. Յորում եւ դուք ընդ նմին
շինիք ի բնակութիւն Աստուծոյ հոգւով:

ԳԼՈՒԽ Գ.

1 ՎԵՐՋ. Վասն այսորիկ ես Պաւղոս կապեալ
2 Յիսուսի Քրիստոսի վասն ձեր հեթանոսաց. Թէ-
բեւս լուեալ իցէ ձեր զտնտեսութիւն շնորհացն Աս-
3 տուծոյ, որ տուեալ են ինձ ի ձեզ. Զի ըստ յայտ-
նութեան ցուցաւ ինձ խորհուրդն, որպէս յառաջա-
4 գոյն գրեցի առ ձեզ սակաւուք, Առ ի կարող լինե-
լոյ ընթեռնուլ եւ ի միտ առնուլ զիմաստութիւնն
5 զիմ ի խորհրդեանն Քրիստոսի: Զի այլոց ազգաց ոչ
ցուցաւ որդւոց մարդկան, որպէս այժմ յայտնեցաւ
6 սրբոց իւրոց առաքելոց եւ մարգարէից հոգւովն, Լի-
նել հեթանոսաց ժառանգակիցս եւ մարմնակիցս եւ
հաղորդս աւետեացն ի Քրիստոս Յիսուս աւետարա-
7 նաւն, Որոյ եղէ ես սպասաւոր ըստ պարգեւաց շնոր-
հացն Աստուծոյ՝ որ տուան ինձ ըստ յաջողութեան
8 զօրութեան նորա: Ինձ, որ տրուպս եմ ամենայն

սրբոց, տուաւ շնորհքս այս, ի հեթանոսս աւետա-
րանել զանքննին մեծութիւնն Քրիստոսի, Եւ լու- 9
սաւոր առնել զամենեսեան, եթէ զինչ է տնտեսու-
թիւն խորհրդոյն, որ ծածկեալ էր յամենայն յաւի-
տենից առ Աստուծոյ՝ որ զամենայն ինչ արար. Զի 10
յայտնեսցի արդ իշխանութեանց եւ պետութեանց
որ յերկինս են՝ ի ձեռն եկեղեցւոյ բազմապատիկ ի-
մաստութիւնն Աստուծոյ, Ըստ յառաջադրութեան 11
յաւիտենիցն՝ զոր արար ի ձեռն Տեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի: Որով ունիմք զհամարձակութիւն 12
եւ զնուաճութիւն յուսով ի ձեռն հաւատոց նորա:
Վասն որոյ աղաչեմ մի ձանձրանալ ի նեղութեանս 13
մերում, որ վասն ձեր է, որ է փառք ձեր: Վասն 14
այսորիկ դնեմ ծունր առ Հայր Տեառն մերոյ Յիսու-
սի Քրիստոսի. Ուստի ամենայն նահապետութիւն 15
յերկինս եւ յերկրի անուանի, Զի տացէ ձեզ ըստ 16
մեծութեան փառաց իւրոց՝ հաստատել զօրութեամբ
ի ձեռն Հոգւոյն իւրոյ ի ներքին մարդն, Բնակել 17
Քրիստոսի հաւատովք ի սիրտս ձեր, սիրով արմա-
տացեալք եւ հաստատեալք. Զի կարող լինիջիք 18
հասանել ընդ ամենայն սուրբս, զինչ է լայնութիւն
եւ երկայնութիւն եւ բարձրութիւն եւ խորութիւն,
Ճանաչել զառաւելութիւն գիտութեան սիրոյն 19
Քրիստոսի, զի լցջիք ամենայն լրութեամբն Աստու-
ծոյ: Այլ այնմ որ կարողն է առաւել քան զամե- 20
նայն ինչ առնել յաճախութեամբ, քան զոր խըն-
դրեմքն եւ իմանամք ըստ զօրութեանն՝ որ յաջողեալն
է ի մեզ. Նմա փառք յեկեղեցւոջ, եւ ի Քրիստոս 21
Յիսուս յամենայն ազգս յաւիտենից յաւիտեանս.
ամէն:

ԳԼՈՒԽ Դ.

Արդ աղաչեմ զձեզ ես որ կապեալս եմ ի Տէր, 1
արժանի գնալ կոչմանն յոր կոչեցարուք: Ամենայն 2

խոնարհութեամբ եւ հեզութեամբ եւ երկայնմտու-
3 թեամբ անսալ միմեանց սիրով, փութալ պահել
զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան:
4 Մի մարմին եւ մի հոգի, որպէս եւ կոչեցայք ի
5 մի յոյս կոչման ձերոյ: Մի է Տէր, մի հաւատք, մի
6 մկրտութիւն: Մի Աստուած եւ Հայր ամենեցուն՝
որ ի վերայ ամենայնի եւ ընդ ամենեսին եւ յամենե-
7 սին ի մեզ: Այլ իւրաքանչիւր ումեք ի մէնջ տու-
եալ են շնորհք ըստ չափոյ պարգեւացն Քրիստոսի:
8 Վասն որոյ եւ ասէ. Ել ի բարձունս, գերեաց զգե-
9 րութիւն եւ ետ պարգեւս մարդկան: Որ ելն զի՞նչ
10 է, եթէ ոչ զի էջ նախ ի ստորին կողմն երկրի: Որ
էջն, նոյն է եւ որ ելն ի վերոյ քան զամենայն եր-
11 կինս, զի լցցէ զամենայն: Եւ նա ետ զոմանս առա-
քեալս, զոմանս մարգարէս, զոմանս աւետարանիչս,
12 զոմանս հովիւս եւ վարդապետս, ի հաստատութիւն
սրբոց, ի գործ պաշտաման, ի շինուած մարմնոյն
13 Քրիստոսի. Մինչեւ հասցուք ամենեքեան ի մի մի-
աբանութիւն հաւատոց եւ գիտութեան Որդւոյն
Աստուծոյ, յայր կատարեալ ի չափ հասակի կա-
14 տարմանն Քրիստոսի: Զի մի՛ յայսմհետէ իցեմք
տղայք խռովեալք եւ տատանեալք յամենայն հողմոց
վարդապետութեան, խաբէութեամբ մարդկան, խո-
րամանկութեամբ ի խաբէութիւն մոլորութեան:
15 Այլ ճշմարտեալք սիրով, աճեցուսցուք ի նա զա-
16 մենայն, որ է գլուխ Քրիստոս. Ուստի ամենայն
մարմինն յօդեալ եւ պատշաճեալ ամենայն խաղա-
լեօք տարաբերութեան ըստ ազդեցութեան՝ չափով
ըստ իւրաքանչիւր մասին, զաճումն մարմնոյ գործէ ի
17 շինուած անձին իւրոյ սիրով: Արդ զայս ասեմ եւ
ուխտեմ ի Տէր, մի՛ եւս ձեզ զնոյն օրինակ գնալ,
որպէս եւ այլ հեթանոսք գնան ունայնութեամբ
18 մտաց իւրեանց, Որոց խաւարեալ են միտք իւրեանց,
եւ օտարացեալ են ի կենաց անտի Աստուծոյ վասն

տգիտութեանն որ է ի նոսա, վասն կուրութեան
սրտից իւրեանց: Որք զանձանց իւրեանց զյոյս հա- 19
տին եւ մատնեցին զանձինս գիջութեան, ի գործս
ամենայն պղծութեան ագահութեամբ. Այլ դուք 20
ոչ այսպէս ուսարուք զՔրիստոս. Թէպէտ եւ լուա- 21
րուք զնմանէ, եւ նովաւ ուսայք՝ որպէս է ճշմարտու-
թիւնն Յիսուսի, ի բաց մերկանալ ի ձէնջ ըստ ա- 22
ռաջին գնացիցն զմարդն հին՝ զապականեալն ցանկու-
թեամբք խաբէութեանն: Եւ նորոգել հոգւով մտաց 23
ձերոց, Եւ զգենուլ զնոր մարդն, որ ըստ Աստուծոյ 24
հաստատեալ է, արդարութեամբ եւ սրբութեամբ
ճշմարտութեանն: Վասն որոյ ի բաց ընկեցէք 25
զստութիւն, խօսեցարուք զճշմարտութիւն իւրա-
քանչիւր ընդ ընկերի իւրում. զի եմք միմեանց ան-
դամք: Բարկանայք, եւ մի՛ մեղանչէք. արեգակն ի վե- 26
րայ բարկութեան ձերոյ մի՛ մտցէ: Եւ մի՛ տայք տե- 27
ղի սատանայի: Որ գողանայրն, մի՛ եւս գողասցի, այլ 28
մանաւանդ վաստակեսցէ գործել ձեռօք իւրովք
զբարիս. զի բաւական իցէ տալ ումք պիտոյ իցէ:
Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի՛ ելցէ, այլ 29
որ ինչ բարին է ի շինած պիտոյից. զի տացէ շնորհս
այնոցիկ, որ լսենն: Եւ մի՛ տրտմեցուցանէք զՀո- 30
գին սուրբ Աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն
փրկութեան: Ամենայն դառնութիւն եւ բարկու- 31
թիւն եւ սրտմտութիւն եւ աղաղակ եւ հայհոյու-
թիւն բարձցի ի ձէնջ ամենայն չարութեամբն հան-
դերձ: Եղերուք ընդ միմեանս քաղցունք, գթածք, 32
շնորհել միմեանց. որպէս եւ Աստուած Քրիստո-
սիւ շնորհեաց մեզ:

ԳԼՈՒԽ Ե.

Եղերուք նմանողք Աստուծոյ, իբրեւ որդիք սի- 1
րելիք. Եւ գնացէք սիրով, որպէս եւ Քրիստոս սի- 2
րեաց զմեզ եւ մատնեաց զանձն իւր վասն մեր պա-

3 տարագ եւ զենումն Աստուծոյ ի հոտ անուշից: Այլ
պոռնկութիւն եւ ամենայն պղծութիւն կամ ագա-
հութիւն եւ անուանեսցի մի ի միջի ձերում, որպէս
4 եւ վայել է սրբոց, Եւ զազրութիւն կամ խօսք յի-
մարութեան կամ խեղկատակութիւն որ ոչ վայել է,
5 այլ մանաւանդ գոհութիւն: Զայս տեղեկացեալ
գիտասջիք, թէ ամենայն պոռնիկ կամ պիղծ կամ
ագահ, որ է կռապաշտ, ոչ ունի ժառանգութիւն
6 յարքայութեանն Քրիստոսի եւ Աստուծոյ: Մի ոք
զձեզ խաբեսցէ բանիւք սնոտեօք. զի վասն այսորիկ
իսկ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն ան-
7 հաւանութեան: Մի այսուհետեւ լինիք բաժանորդք
8 նոցա: Զի թէպէտ եւ երբեմն էիք խաւար, արդ լոյս
9 էք ի Տէր, իբրեւ զորդիս լուսոյ գնացէք. Զի պտուղ
լուսոյ ամենայն բարութեամբ է եւ արդարութեամբ
10 եւ ճշմարտութեամբ: Փորձեցէք զինչ է հաճոյ
11 Տեառն, Եւ մի կցորդ լինիք անպտղութեան գոր-
12 ծոցն խաւարի. այլ մանաւանդ յանդիմանեցէք: Զի
որ ի ծածուկ ինչ գործի ի նոցա՝ զայն եւ խօսել աղ-
13 տեղի է: Այլ ամենայն ինչ յանդիմանեալ ի լուսոյ՝
յայտնի լինի. զի ամենայն ինչ՝ որ յայտնի է, լոյս
14 է: Վասն որոյ եւ ասէ. Արի որ ննջեսդ եւ կան-
գնեաց ի մեռելոց, եւ լուսատու լիցի քեզ Քրիստոս:
15 ԹԿ. Տեսջիք՝ որպէս ճշմարտիւ գնայցէք. մի
16 իբրեւ անիմաստք, Այլ իբրեւ իմաստունք. գնեցէք
17 զժամանակս, զի աւուրքս չարութեան են: Վասն
այնորիկ մի լինիք անմիտք, այլ իմացարուք զինչ կամք
18 են Տեառն: Եւ մի արբենայք գինւով, յորում
գեղխութիւն է. այլ մանաւանդ լցարուք Հոգւով.
19 Խօսել ի սիրտս ձեր սաղմոսիւք եւ օրհնութեամբք
եւ երգովք հոգեւորօք, երգել եւ սաղմոս ասել ի
20 սիրտս ձեր Տեառն: Գոհացարուք յամենայն ժամ ի
վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի
21 Քրիստոսի՝ Հօրն եւ Աստուծոյ: Հնազանդ լերուք

միմեանց երկիւղիւն Քրիստոսի։ Կանայք իւրեանց 22
արանց հնազանդ լիցին իբրեւ Տեառն. Զի այր է 23
գլուխ կնոջ, որպէս եւ Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ,
եւ ինքն է փրկիչ մարմնոյ։ Այլ որպէս եկեղեցի 24
հնազանդ լինի Քրիստոսի, նոյնպէս եւ կանայք իւ-
րեանց արանց յամենայնի։ Արք, սիրեցէք զկանայս 25
ձեր, որպէս եւ Քրիստոս սիրեաց զեկեղեցի, եւ
զանձն իւր մատնեաց վասն նորա, Զի զնա սրբեսցէ 26
սրբութեամբ աւազանին բանիւ, Զի կացուսցէ ինքն 27
իւր յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի՛ ունիցի
ինչ արատ կամ աղտեղութիւն կամ այլ ինչ յայս-
պիսեաց. այլ զի իցէ սուրբ եւ անարատ։ Նոյնպէս 28
պարտին արք սիրել զիւրեանց կանայս՝ իբրեւ զիւ-
րեանց մարմինս. որ սիրէ զկին իւր՝ զանձն իւր սիրէ։
Զի ոչ ոք երբեք ատեաց զանձն իւր, այլ սնուցանէ 29
եւ դարմանէ զնա, որպէս եւ Քրիստոս զեկեղեցի.
Զի անդամք եմք մարմնոյ նորա՝ ի մարմնոյ նորա, եւ 30
ոսկր յոսկերաց նորա։ Վասն այսորիկ թողցէ այր 31
զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ
իւրոյ, եւ եղիցին երկոքին ի մարմին մի։ Խորհուրդս 32
այս մեծ է. բայց ես ասեմ ի Քրիստոս եւ յեկեղեցի։
Այլ եւ դուք նոյնպէս մի ըստ միոջէ. զի իւրաքան- 33
չիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրեւ զիւր անձն,
եւ կին երկնչիցի յառնէ իւրմէ։

ԳԼՈՒԽ Զ.

ԹԳ. Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց 1
ի Տէր, զի այն է արժան։ Պատուեա զհայր քո եւ 2
զմայր, որ է առաջին պատուիրան յաւետիւն, Զի 3
քեզ բարի եղիցի, եւ երկայնակեաց լինիցիս ի վերայ
երկրի։ Հարք, մի՛ զայրացուցանէք զորդիս ձեր, այլ 4
սնուցանիջիք զնոսա խրատու եւ ուսմամբ Տեառն։
Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց մարմնա- 5
ւորաց ահիւ եւ դողութեամբ եւ միամտութեամբ

6 սրտից ձերոց որպէս եւ Քրիստոսի։ Մի առ ականէ
ծառայել իբրեւ մարդահաճոյք, այլ իբրեւ ծառայք
7 Քրիստոսի առնել զկամս Աստուծոյ. Սրտի մտօք
ծառայել իբրեւ Տեառն, եւ մի իբրեւ մարդկան։
8 Գիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ զինչ առնէ զբա-
րին, զնոյն ընդունի եւ ի Տեառնէ, եթէ ծառայ եւ
9 եթէ ազատ։ Եւ դուք, տեա՛րք, զնոյն առնիջիք առ
նոսա՝ ներելով առնել զպատուհասն. գիտասջիք թէ
եւ նոցա եւ ձեր Տէր գոյ յերկինս, եւ ակնառութիւն
ոչ գոյ առաջի նորա։

10 ՎԵՐՋ. Այսուհետեւ զօրացարուք Տէրամբ, եւ
11 կարողութեամբ զօրութեան նորա. Եւ զգեցարուք
զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարող լինիջիք
12 կալ ընդդէմ հնարից սատանայի։ Զի ոչ է մեզ
պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ
իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս եւ ընդ աշխար-
հակալս խաւարիս այսորիկ, ընդ այսս չարութեան որ
ի ներքոյ երկնից։

13 ԹԶ. Վասն այսորիկ առէք զսպառազինութիւնն
Աստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել չա-
14 րին յաւուրն չարութեան։ Եւ իբրեւ զամենայն ինչ
կատարիցէք, հաստատուն կացէք, զտեղի կալջիք,
պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ եւ զգեցեալ
15 զզրահսն արդարութեան, Եւ ագուցեալ զոտս պա-
16 տրաստութեամբ աւետարանին խաղաղութեան։ Եւ
ի վերայ ամենայնի առէք զվահանն հաւատոյ, որով
կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջու-
17 ցանել։ Եւ առէք զսաղաւարտն փրկութեան եւ
18 զսուսեր հոգւոյն՝ որ է բանն Աստուծոյ, Ամենայն ա-
ղօթիւք եւ խնդրուածովք աղօթս առնել յամենայն
ժամանակի հոգւով. եւ ի նոյն տքնիջիք ամենայն
ժուժկալութեամբ եւ խնդրուածովք վասն ամենայն
19 սրբոց, Եւ վասն իմ, զի ինձ տացի բան ի բանալ
բերանոյ իմոյ, համարձակութեամբ ցուցանել զխոր-

հուրդս աւետարանին, Վասն որոյ պատգամաւորեմ 20
կապանօքս, զի նովին համարձակեցայց, որպէս եւ
պարտ իցէ ինձ խօսել։ Բայց զի գիտիցէք եւ դուք 21
զինէն, զինչ գործիցեմ, զամենայն ինչ ցուցցէ ձեզ
Տիւքիկոս սիրելի եղբայր եւ հաւատարիմ պաշտօնեայ
ի Տէր, Զոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գի- 22
տասջիք դուք զմէնջ եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր։
Խաղաղութիւն ընդ եղբարս, եւ սէր հաւատովքն 23
հանդերձ յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ։ Շնորհք ընդ ամենեսեան՝ ոյք սիրեն 24
զՏէր մեր Յիսուս Քրիստոս անեղծութեամբ։

Առ Եփեսացիս գրեցաւ ի Հռոմէ ի ձեռն Տիւքիկոսի։

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՊԵՑԻՍՆ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԺԿ. ՊԱՒՂՈՍ եւ Տիմոթէոս ծառայք Յիսու-
սի Քրիստոսի, ամենայն սրբոց ի Քրիստոս Յիսուս,
որ են ի կողմանս Փիլիպեցւոց, եպիսկոպոսակցօք եւ
2 սարկաւագօք։ Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ
3 Քրիստոսէ։ Գոհանամ զԱստուծոյ իմոյ ի վերայ
4 ամենայն յիշատակաց ձերոց, Յամենայն ժամ յամե-
նայն խնդրուածս իմ վասն ձեր ամենեցուն առնել
5 աղօթս խնդութեամբ. Վասն հաղորդութեան ձերոյ
ընդ աւետարանին, յօրէ յառաջնմէ մինչեւ ցայժմ։
6 Վստահ եմ յայդ, թէ որ սկսաւն ի ձեզ զգործս
բարեաց, կատարեսցէ մինչեւ յօրն Յիսուսի Քրիս-
7 տոսի. Որպէս իրաւ իսկ թուի ինձ խորհել զայս վասն
ձեր ամենեցուն, վասն ունելոյ ինձ զձեզ ի սրտի ի
կապանս իմում եւ ի պատասխանատուութեան իմում
եւ ի հաստատութեան աւետարանին, կցորդս ինձ
8 շնորհացն զձեզ ամենեսին լինել։ Վկայ է ինձ Աս-
տուած, որպէս անձկացեալ եմ առ ձեզ ամենեսին
9 գթովքն Քրիստոսի Յիսուսի. Եւ զայն աղօթս առ-
նեմ, զի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լցի ի
10 գիտութեան եւ յամենայն իմաստութեան. Ընտրել

ձեզ զլաւն, զի իցէք հաստատունք եւ առանց գայ-
թագղութեան ի յաւուրն Քրիստոսի. Լցեալ պտ- 11
ղովք արդարութեան ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ի
փառս եւ ի գովեստ Աստուծոյ:

ԺԳ. Կամիմ թէ գիտիցէք, եղբարք, զի որ ինչ 12
վասն իմ էր, եւս քան զեւս ի յառաջադիմութիւն
աւետարանին ելն, Մինչեւ կապանաց իմոց յայտնի 13
լինել ի Քրիստոս յամենայն հրապարակի, եւ առ
այլս ամենեսին, Եւ առ բազում եղբարս ի Տէր, որ 14
վստահ են կապանօքս իմովք՝ առաւել եւս համար-
ձակել առանց երկիւղի զբանն Աստուծոյ խօսել: Ո- 15
մանք առ նախանձու եւ հակառակութեան, եւ ոմանք
մտադիւրութեամբ իսկ զՔրիստոս քարոզեն, Եւ 16
ոմանք ի սիրոյ, քանզի գիտեն եթէ ի պատասխանա-
տուութիւն աւետարանին կամ, Եւ ոմանք առ հես- 17
տութեան զՔրիստոս պատմեն, այլ ոչ սրբութեամբ.
քանզի համարին նեղութիւնս յարուցանել ի վերայ
կապանաց իմոց: Բայց այս զի՞նչ է. որով օրինակաւ 18
եւ իցէ, եթէ պատճառանօք եւ եթէ ճշմարտու-
թեամբ, Քրիստոս պատմի, եւ ընդ այս խնդամ, այլ
եւ ուրախ եւս եղէց: Զի գիտեմ, եթէ այս պահի 19
ինձ ի փրկութիւն ի ձերոց խնդրուածոց եւ ի պար-
գեւաց Հոգւոյն Յիսուսի Քրիստոսի, Ըստ ակնկալու- 20
թեան եւ յուսոյն իմոյ, զի մի՛ իւիք յամօթ եղէց,
այլ ամենայն համարձակութեամբ, որպէս եւ յամե-
նայն ժամ եւ այժմ, մեծասցի Քրիստոս ի մարմնի
իմում, եթէ կենօք եւ եթէ մահու: Զի ինձ կեանք 21
Քրիստոս է եւ մեռանել շահ: Ապա եթէ կեանքս 22
մարմնոյ՝ այս ինձ պտուղ գործոյ է, եւ զի՞նչ ընտրե-
ցից՝ զայն ոչ գիտեմ: Նեղեալ եմ յերկոցունց. 23
զցանկալն ելանել եւ ընդ Քրիստոսի լինել՝ առաւել
լաւ համարիմ. Եւ կալ մնալ աստէն ի մարմնի՝ կա- 24
րեւոր եւս վասն ձեր: Եւ զայս յուսացեալ գիտեմ, 25
եթէ կացից եւ մնացից ամենեցուն ձեզ, ի ձեր զար-

26 ցանալ եւ խրախ լինել ի հաւատս. Զի պարծանք
ձեր առաւել լինիցին ի Քրիստոս Յիսուս ինեւ ի
միւսանգամ գալստեան իմում առ ձեզ:
27 ՎԵՐՋ. Միայն թէ արժանի աւետարանին Քրիս-
տոսի գնայցէք. զի եթէ գայցեմ եւ տեսանիցեմ
զձեզ, եւ եթէ հեռի իցեմ եւ լսիցեմ զձէնջ, զի
հաստատուն կայցէք ի մի հոգի, եւ միով շնչով նա-
28 հատակիցիք ի հաւատս աւետարանին. Եւ մի զան-
գիտիցէք եւ մի խուլք ի հակառակորդաց անտի, որ է
29 նոցա հանդէս կորստեան եւ ձերոյ փրկութեան: Եւ
այդ յԱստուծոյ է՝ որ ձեզ շնորհեցաւ վասն Քրիս-
տոսի, ոչ միայն ի նա հաւատալ, այլ եւ վասն նորա
30 չարչարել, Զնոյն պատերազմ ունել՝ զոր յիս տե-
սէք եւ այժմ լսէք յինէն:

ԳԼՈՒԽ Բ.

1 Արդ եթէ մխիթարութիւն ինչ իցէ ի Քրիս-
տոս, եթէ սփոփութիւն սիրոյ, եթէ հաղորդութիւն
2 հոգւոյ, եթէ գթութիւն եւ ողորմութիւն. Լցէք
զխնդութիւնս իմ. զնոյն խորհիջիք, զնոյն սէր յանձին
3 ունիջիք, համաշունչք միախորհուրդք. Մի ինչ ըստ
գրգռութեան եւ մի՛ ինչ ըստ սնապարծութեան, այլ
խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել առաւել
4 քան զանձինս. Մի զանձանց եւեթ դիտել, այլ իւ-
5 րաքանչիւր ոք զընկերին: Զայն խորհեսջիք իւրաքան-
6 չիւր ոք ի ձէնջ, որ եւ ի Քրիստոս Յիսուս. Որ ի
կերպարանս Աստուծոյ է, ոչ ինչ յափշտակութիւն
7 համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, Այլ
զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի առեալ,
ի նմանութիւն մարդկան եղեալ, եւ կերպարանօք
8 գտեալ իբրեւ զմարդ: Խոնարհեցոյց զանձն, լեալ
9 հնազանդ մահու չափ եւ մահու խաչի: Վասն որոյ
եւ Աստուած զնա առաւել բարձրացոյց, եւ շնորհեաց
10 նմա անուն՝ որ ի վեր է քան զամենայն անուն: Զի

29*

յանուն Յիսուսի Քրիստոսի ամենայն ծունր կրկնես-
ցի, երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդարամետա-
կանաց, Եւ ամենայն լեզու խոստովան լիցի, թէ Տէր 11
է Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր:
ԺԲ. Այսուհետեւ, սիրելիք իմ, որպէս յամե- 12
նայնի հնազանդեցարուք, մի՛ միայն ի գալստեան ի-
մում, այլ առաւել եւս այժմ՝ յորժամ հեռի եմ
ի ձէնջ, ահիւ եւ դողութեամբ զանձանց փրկութիւն
գործեցէք: Զի Աստուած է, որ յաջողէ ի ձեզ 13
զկամելն եւ զառնելն վասն հաճութեան: Զամենայն 14
ինչ գործեցէք առանց տրտնջելոյ եւ քրթմնջելոյ,
Զի եղիջիք անբիծք եւ անարատք, որդիք Աստուծոյ, 15
անմեղք ի մէջ կամակոր եւ խեղաթիւր ազգին, յո-
րոց միջի երեւիցիք իբրեւ լուսաւորք յաշխարհի,
Զբանն կենաց ունել յանձինս ի պարծանս ինձ յաւ- 16
ուրն Քրիստոսի. զի ոչ ընդունայն ինչ ընթացայ,
եւ ոչ ընդունայն վաստակեցի: Այլ թէպէտ եւ նուի- 17
րիմ ի վերայ պատարագի եւ պաշտաման հաւատոյն
ձերոյ, խնդամ եւ ուրախակից եմ ամենեցուն ձեր.
Նոյնպէս եւ դուք խնդացէք եւ ուրախակից եղերուք 18
ինձ: Բայց յուսամ ի Տէր Յիսուս զՏիմոթէոս վաղ- 19
վաղակի արձակել առ ձեզ. զի եւ ինձ սրտի դիւր լի-
նիցի, յորժամ գիտիցեմ ինչ զձէնջ: Զի ոչ զոք 20
ունիմ համաշունչ՝ եթէ ընտանեբար հոգայցէ վասն
ձեր. Զի ամենեքին զանձանց խնդրեն, եւ ոչ զՅի- 21
սուսի Քրիստոսի: Բայց զփորձ նորա գիտէք եւ 22
դուք, զի իբրեւ որդի հօր ծառայեաց ընդ իս յաւե-
տարանին: Արդ զսա ակն ունիմ արձակել, որպէս 23
նոյնհետայն զանձնէ ստուգեցից: Այլ յուսացեալ 24
եմ ի Տէր՝ թէ եւ ես իսկ ընդ հուպ եկից: Բայց լա- 25
համարեցայ զԵպափրոդիտոս զեղբայր եւ զգործակից
եւ զզինուորակից իմ, զձեր առաքեալ եւ զպաշտօ-
նեայ իմոյ պիտոյից, առաքել առ ձեզ: Քանզի եւ 26
ինքն իսկ յոյժ անձկացեալ է տեսանել զամենեսին

զձեզ, եւ հոգայր զի ձեր լուեալ էր թէ խօթացաւ:
27 Եւ արդարեւ խօթացաւ մերձ ի մահ, այլ Աստուա-
ծ ողորմեցաւ նմա. ոչ նմա միայն, այլ եւ ինձ՝ զի
28 մի տրտմութիւն ի վերայ տրտմութեան կրեցից: Արդ
փութապէս յղեցի զնա, զի տեսեալ զնա միւսան-
գամ ուրախ լինիցիք, եւ ես առանց տրտմութեան
29 եղէց: Ընկալջիք զնա ի Տէր ամենայն խնդութեամբ,
30 եւ զայնպիսիսն առ պատուականս ունիջիք. Զի
վասն գործոյ Տեառն մինչեւ ի մահ մերձեցաւ, դուն
գործեալ ոգւովք չափ, զի լցէ զձեր պակասութիւն
իմոյ սպասաւորութեան:

ԳԼՈՒԽ Գ.

1 ՎԵՐՋ. Այսուհետեւ, եղբարք իմ, ուրախ լերուք
ի Տէր. զնոյն գրել առ ձեզ՝ ինձ ոչինչ դանդաղելի է,
2 եւ ձեզ կարի զգուշալի: Զգուշ եղերուք ի շանց
անտի, զգուշ եղերուք ի չար մշակաց անտի, զգուշ
3 եղերուք ի կրճատութենէ անտի: Զի թլփատու-
թիւն մեք եմք, որ Հոգւովն Աստուծոյ պաշտեմք, եւ
պարծիմք ի Քրիստոս Յիսուս, եւ ոչ ի մարմին ինչ
4 պանծացեալ եմք: Թէպէտ եւ ես իսկ զնոյն վստա-
հութիւն ունիմ ի մարմնի, եթէ ոք համարիցի այլ-
ազգ վստահ լինել ի մարմին, առաւել եւս ես:
5 Թլփատութեամբ ութօրեայ, յազգէ Իսրայելի, ի
ցեղէ Բենիամենի, եբրայեցի յեբրայեցւոյ, ըստ օ-
6 րինացն փարիսեցի, Ըստ նախանձայոյզ լինելոյ հա-
լածէի զեկեղեցին, ըստ արդարութեան օրինացն լեալ
7 անարատ: Այլ որ ինչ ինձ շահն էր՝ զայն վնաս
8 համարիմ վասն Քրիստոսի: Այլ եւ համարիմ իսկ
զամենայն վնաս վասն առաւել գիտութեանն Յիսու-
սի Քրիստոսի Տեառն մերոյ, վասն որոյ յամենայնէ
զրկեցայ, եւ համարիմ կղկղանս, զի զՔրիստոս շա-
9 հեցայց, Եւ գտայց ի նմա. իբրեւ ոչ եթէ զիմ ար-
դարութիւն ինչ՝ որ յօրինաց անտի է, ունիցիմ, այլ

զհաւատոցն Քրիստոսի, որ յԱստուծոյ արդարու-
թիւնն է. Հաւատովք ճանաչել զնա, եւ զզօրու- 10
թիւն յարութեան նորա, եւ զհաղորդութիւն չար-
չարանաց նորա, կերպարանակից լինել մահու նորա,
Թէ որպէս հասից ի մեռելոցն յարութիւն: Իբր ոչ 11
եթէ արդէն առեալ իցէ, կամ արդէն կատարեալ 12
իցեմ, զհետ մտեալ եմ թէ հասից, մանաւանդ
թէ ըմբռնեալ իսկ իցեմ ի Քրիստոսէ Յիսուսէ:
Ե՛ղբարք, ես ոչ համարիմ զանձն իմ թէ հասեալ 13
իցեմ. բայց մի ինչ է, զի զառ ի յետոյսն մոռացեալ
է, եւ ի յառաջադէմսն նկրտեալ եմ: Ուշ եդեալ 14
ընթանամ ի կէտ կոչմանն Աստուծոյ ի Քրիստոս
Յիսուս: Այսուհետեւ որ միանգամ կատարեալքդ 15
էք, զայս խորհեսցուք, եւ եթէ այլ ազգ ինչ խոր-
հիցիք, սակայն եւ զայն Աստուած ձեզ յայտնեսցէ:
Բայց յոր ժամանեցաքս, զնոյն խորհել եւ սմին կա- 16
նոնի միաբան լինել: Նմանողք ինձ եղիջիք, եղբարք, 17
եւ դիտեսջիք զայնպիսիսն, որ այնպէսն գնայցեն, որ-
պէս ունիքդ զմեզ ձեզ օրինակ: Զի բազումք գնան, 18
զորոց բազում անգամ ասէի ձեզ, բայց արդ եւ լա-
լով իսկ ասեմ, զթշնամեաց խաչին Քրիստոսի, Ո- 19
րոց կատարածն կորուստ է, որոց Աստուած որովայնն
իւրեանց է, եւ փառք ամօթն իւրեանց, որք զեր-
կրաւորս եւեթ խորհին: Այլ մեր առաքինութիւնն 20
յերկինս է, ուստի եւ փրկչին ակն ունիմք Տեառն
Յիսուսի Քրիստոսի, Որ նորոգեսցէ զմարմին խո- 21
նարհութեան մերոյ կերպարանակից լինել մարմնոյ
փառաց իւրոյ ըստ զօրութեանն, առ ի կարող լինե-
լոյ հնազանդեցուցանել ընդ իւրեւ զամենայն:

ԳԼՈՒԽ Դ.

Այսուհետեւ, եղբա՛րք իմ սիրելիք եւ անձկա- 1
լիք, ուրախութիւն իմ եւ պսակ. այսպէս հաստա-
տուն կացէք ի Տէր, սիրելիք: Զեւոդիա աղաչեմ, 2

3 եւ զՍիւնտիքէ աղաչեմ միոյն խորհել ի Տէր: Այո
աղաչեմ եւ զքեզ, մտերիմ իմ եւ լծակից, եւ դու
օգնական լինիջիր նոցա՝ որք յաւետարանին նահա-
տակեցան ընդ իս Կղեմաւ հանդերձ եւ այլովք գոր-
ծակցօք իմովք, որոց անուանքն ի դպրութեան կե-
4 նաց: Ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ. դար-
5 ձեալ ասեմ, ուրախ լերուք: Հեզութիւն ձեր յայ-
6 տնի լիցի ամենայն մարդկան. Տէր մերձ է: Մի
ինչ հոգայք, այլ ամենայն աղօթիւք եւ խնդրուա-
ծովք, գոհութեամբ, խնդրուածք ձեր յայտնի լի-
7 ցին առ Աստուած: Եւ խաղաղութիւնն Աստուծոյ՝
որ ի վեր է քան զամենայն միտս, պահեսցէ զսիրտս
ձեր եւ զմիտս ի Քրիստոս Յիսուս:
8 Այսուհետեւ, եղբարք, որ ինչ ճշմարտու-
թեամբ է, որ ինչ պարկեշտութեամբ, որ ինչ ար-
դարութեամբ, որ ինչ սրբութեամբ, որ ինչ սիրով,
որ ինչ համբաւ բարեաց, որ ինչ քաջութեամբ, որ
9 ինչ գովութեամբ, զայն խորհիջիք: Զոր ուսարուքն
եւ ընկալարուք եւ լուայք եւ տեսէք յիս, զայն ա-
րարէք, եւ Աստուած խաղաղութեան եղիցի ընդ
10 ձեզ: Ուրախ եղէ ես ի Տէր յոյժ, զի եւ դուք զմտաւ
ածէք հոգալ ինչ վասն իմ, որպէս եւ հոգայիքն.
11 բայց բարբարէիք ինն է: Իբր ոչ առ կարօտութեան
ինչ ասեմ, զի ես ուսայ՝ որովք կարեմ բաւական լի-
12 նել: Գիտեմ նուաղել, գիտեմ առաւելուլ. յա-
մենայնի ամենեւին խելամուտ եմ եւ յագել եւ քաղ-
13 ցենալ, եւ առաւելուլ եւ նուաղել: Յամենայնի
14 կարող եմ այնու՝ որ զօրացուցն զիս: Բայց բարւոք
15 արարէք՝ զի կցորդ եղերուք ինձ ի նեղութիւնս: Գի-
տէք եւ դուք, Փիլիպեցիք, զի ի սկզբան աւետա-
րանին իբրեւ ելի ես ի Մակեդովնիա, եւ ոչ մի եկե-
ղեցի հաղորդեաց ինձ յաղագս տալոյ եւ առնլոյ,
16 բայց միայն դուք. Զի եւ ի Թեսաղոնիկէ միանգամ
17 եւ երկիցս զպէտս իմ եւտուք բերել: Իբր ոչ եթէ

խնդրեմ զտուրսն, այլ խնդրեմ զպտուղն, որ յա-
ճախէ ի բան ձեր։ Այլ իմ առեալ զամենայն, եւ 18
առաւելեալ եմ. ընկալայ, եւ լի եմ ի ձեռն Ե-
պափրոդիտեայ, որ է ի ձէնջ հոտ անուշից՝ պատա-
րագ ընդունելի, հաճոյ Աստուծոյ։ Եւ Աստուած իմ 19
լի արասցէ զամենայն պէտս ձեր ըստ իւրում մեծու-
թեանն փառօք ի Քրիստոս Յիսուս։ Այլ Աստու- 20
ծոյ եւ Հօր մերում փառք յաւիտեանս յաւիտենից.
ամէն։ Ողջոյն տաջիք ամենայն սրբոց ի Քրիստոս 21
Յիսուս։ Ողջոյն տան ձեզ որ ընդ իս են եղբարք։ 22
Ողջոյն տան ձեզ ամենայն սուրբք, մանաւանդ որ ի 23
տանէս կայսեր են։ Շնորհք Տեառն Յիսուսի Քրիս- 24
տոսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն։

Առ Փիլիպեցիս՝ գրեցաւ ի Հռոմէ ի ձեռն Եպա-
փրոդիտեայ։

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԿՈՂՈՍԱՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

1 ՊԱՒՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստո-
2 սի կամօքն Աստուծոյ, եւ Տիմոթէոս եղբայր, Կո-
ղոսացիս սուրբս եւ հաւատացեալս, եղբարս ի
3 Քրիստոս: Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ
Քրիստոսէ: Գոհանամք զԱստուծոյ եւ զՀօրէ
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յամենայն ժամ
4 վասն ձեր աղօթս առնեմ: Իբրեւ լուաք զհաւատսն
ձեր որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, եւ զսէրն
5 որ ընդ ամենայն սուրբս ունիք, Վասն յուսոյն որ
պահի ձեզ յերկինս, զորմէ լուարուք բանիւն
6 ճշմարտութեան աւետարանին, Որ եհաս առ ձեզ.
որպէս ընդ ամենայն աշխարհ աճէ եւ պտղաբերէ,
որպէս եւ ի ձերում միջի, յօրէ յորմէ լուարուք եւ
7 ծանեայք զշնորհսն Աստուծոյ ճշմարտութեամբ. Որ-
պէս եւ ուսարուք յԵպափրեայ սիրելւոյ ծառայա-
կցէ մերմէ, որ է հաւատարիմ վասն ձեր պաշտօնեայ
8 Յիսուսի, Որ եւ պատմեաց մեզ զձեր սէրն հոգւով:
9 Վասն այնորիկ եւ մեք յօրէ յորմէ լուաք, ոչ դա-
դարեմք վասն ձեր աղօթս առնել եւ խնդրուածս
մատուցանել. զի լնուցուք զգիտութիւն կամաց նո-

րա ամենայն իմաստութեամբ եւ հոգեւոր հանճա-
րով. Գնալ ձեզ արժանի Տեառն յամենայն հա- 10
ճութեան, յամենայն գործս բարութեան, պտղա-
բերք եւ աճեցունք գիտութեամբն Աստուծոյ, Ամե- 11
նայն զօրութեամբ զօրացեալք ըստ զօրութեան փա-
ռաց նորա, յամենայն համբերութիւն եւ երկայն-
մտութիւն:
ԸԳ. Ուրախութեամբ գոհանալ զԱստուծոյ 12
Հօրէ՝ որ կոչեաց զձեզ ի մասն վիճակի սրբոցն ի
լոյս. Որ փրկեաց զմեզ յիշխանութենէ խաւարի, 13
եւ փոխեաց զմեզ յարքայութիւն Որդւոյն իւրոյ սի-
րելւոյ. Որով ունիմք զփրկութիւն արեամբն նորա, 14
եւ զթողութիւն մեղաց մարմնովն նորա. Որ է պատ- 15
կեր աներեւութին Աստուծոյ, անդրանիկ ամենայն
արարածոց: Զի նովաւ հաստատեցաւ ամենայն, որ 16
ինչ յերկինս եւ որ ինչ յերկրի, որ երեւելին եւ որ
ոչն երեւելին. եթէ աթոռք, եթէ տէրութիւնք, ե-
թէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ամենայն
ինչ նովաւ եւ ի նոյն հաստատեցաւ: Եւ նա է յա- 17
ռաջ քան զամենայն, եւ ամենայն ինչ նովաւ եկաց
բովանդակ: Եւ նա է գլուխ մարմնոյ եկեղեցւոյ, որ 18
է սկիզբն, անդրանիկ ի մեռելոց. զի եղիցի ինքն յա-
մենայնի յառաջացեալ: Զի ի նմա հաճեցաւ ամե- 19
նայն լրումն աստուածութեանն բնակել, Եւ նովաւ 20
հաշտեցուցանել զամենայն ի նոյն. արար խաղաղու-
թիւն արեամբ խաչին իւրոյ, որ ինչ յերկրի եւ որ
ինչ յերկինս: Եւ զձեզ որ երբեմն օտարացեալքն 21
էիք, եւ թշնամիք խորհրդովք ի գործս չարու-
թեան, Այժմ աւադիկ հաշտեցոյց անդամովք մար- 22
մնոյ իւրոյ ի ձեռն մահուն իւրոյ, յանդիման կացու-
ցանել զձեզ սուրբս եւ անբիծս եւ անարատս առա-
ջի նորա. Եթէ կայցէք ի հաւատսն արմատացեալք 2
եւ հաստատեալք, եւ անշարժք ի յուսոյ աւետարա-

նին՝ զոր լուարուք քարոզելոյ ընդ ամենայն արարածս
ի ներքոյ երկնից, որոյ եղէ ես Պաւղոս պաշտօնեայ:
24 ԻԴ. Եւ արդ ուրախ եմ ի չարչարանս իմ վասն
ձեր, եւ լնում զպակասութիւն նեղութեանցն Քրիս-
տոսի ի մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է ե-
25 կեղեցի. Որոյ եղէ ես Պաւղոս պաշտօնեայ ըստ տըն-
տեսութեանն Աստուծոյ, որ տուեալ է ինձ ի ձեզ
26 կատարել զբանն Աստուծոյ. Զխորհուրդն որ ծած-
կեալն էր ի յաւիտենից եւ յազգաց, որ այժմ
27 յայտնեցաւ սրբոց իւրոց: Որոց կամեցաւ Աստուած
ցուցանել, թէ զինչ է մեծութիւն փառաց խորհըր-
դոյն նորա ի հեթանոսս, որ է Քրիստոս ի ձեզ յոյսն
28 փառաց, Զոր մեքն քարոզեմք, եւ խրատեմք զամե-
նայն մարդ, եւ ուսուցանեմք զամենայն մարդ ամե-
նայն հոգեւոր իմաստութեամբ. զի կացուսցուք զա-
29 մենայն մարդ կատարեալ ի Քրիստոս Յիսուս, Յոր
եւ աշխատիմ պատերազմեալ ըստ յաջողութեան
նորա որ յաջողեալ է յիս զօրութեամբ:

ԳԼՈՒԽ Բ.

1 Կամիմ զի գիտիցէք դուք, որպիսի ճգնութիւն
ունիմ յանձին վասն ձեր եւ վասն Լաւոդիկեցւոցն,
2 եւ որոց չիցէ տեսեալ զերեսս իմ մարմնով. Զի
մխիթարեսցին սիրտք նոցա տեղեկացեալք սիրով, եւ
յամենայն մեծութիւն լրութեան իմաստութեան ի
գիտութիւն խորհրդոյն Աստուծոյ Հօր ի Քրիստոս
3 Յիսուս, Յորում ամենայն գանձք իմաստութեան եւ
4 գիտութեան ծածկեալ կան: Այլ զայս ասեմ, զի
5 մի ոք զձեզ զառանցուսցէ պատիր բանիւք: Զի թէ-
պէտ եւ մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ
եմ. խնդամ, իբրեւ տեսանեմ զկարգն ձեր եւ զհաս-
տատութիւն հաւատոյն ձերոյ որ ի Քրիստոս Յի-
6 սուս: Արդ որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս
7 զՏէր, նովին գնասջիք. Արմատացեալք եւ շինեալք

ի նա, եւ հաստատեալք ի հաւատս, որպէս ուսա-
րուքն, առաւելեալք ի նմին գոհութեամբ:
ՎԵՐՋ. Զգոյշ լերուք, մի ոք իցէ՝ որ զձեզ կո- 8
ղոպտիցէ ճարտարմտութեամբ եւ սնոտի խաբէու-
թեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան եւ ըստ
տարերց աշխարհիս, եւ ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի.
Զի ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն 9
մարմնապէս: Եւ էք դուք նովաւ լցեալք, որ է գլուխ 10
ամենայն իշխանութեան եւ պետութեան, Որով 11
թլփատեցարուք հաւատովք զանձեռագործ թլփա-
տութիւնն՝ ի մերկանալ զանդամս մարմնոյ թլփա-
տութեամբն Քրիստոսի: Թաղեալք ընդ նմին մկըր- 12
տութեամբն, որով եւ ընդ նմին յարեայք հաւա-
տովք Աստուծոյ ազդեցութեանն, որ յարոյց զնա ի
մեռելոց: Եւ զձեզ՝ որ երբեմն մեռեալն էիք ի մեղս 13
եւ յանթլփատութեան մարմնոյ ձերոյ, կենդանա-
ցոյց յանձին իւրում. շնորհեաց մեզ զամենայն յան-
ցանս մեր, Եւ ջնջեաց զձեռագիր մերոյ հակառա- 14
կութեանն հրամանօքն իւրովք որ կայր մեզ հակա-
ռակ. եբարձ զայն ի միջոյ, եւ բեւեռեաց ընդ խաչա-
փայտին: Մերկեաց զիշխանութիւնս եւ զպետու- 15
թիւնս. յայտ յանդիման խայտառակեաց նշաւա-
կեալ զնոսա յանձին իւրում ի յաղթութեան իւ-
րում: Մի ոք այսուհետեւ զձեզ դատեսցի ուտե- 16
լով կամ ըմպելով կամ մասամբք տօնից կամ ա-
մսամտիւք կամ շաբաթուք. Որ են ստուերք հան- 17
դերձելոցն, այլ մարմին Քրիստոս է: Մի ոք զձեզ 18
խաբեսցէ, որ կամիցի խոնարհութեամբ եւ կրօնիւք
հրեշտակաց, զոր չիցէ տեսեալ՝ զրահետ փարեալ, տա-
րապարտ հպարտացեալ ի մտաց մարմնոյ իւրոյ. Եւ 19
ոչ ունիցի զգլուխն Քրիստոս, ուստի ամենայն մար-
մինն յօդիւք եւ խաղալեօք տարաբերեալ եւ խառ-
նեալ՝ աճէ զաճումն Աստուծոյ: Եթէ մեռարուք ընդ 20
Քրիստոսի ի տարերց աշխարհիս, զի՞ եւս իբրեւ զկեն-

21 դանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք։ Մի՛ մերձե-
22 նար, մի՛ ճաշակեր, մի՛ հուպ լինիր, Որ է ամենայն
ինչ ի պէտս ապականութեան, ըստ պատուիրանաց
23 եւ վարդապետութեան մարդկան, Որ յիմաստու-
թիւն իմն համարէ, ինքնակամ կրօնիւք եւ խոնար-
հութեամբ եւ անխայութեամբ մարմնոյ, եւ ոչ ի
պատիւ ինչ լրութեան մարմնոյ։

ԳԼՈՒԽ Գ.

1 Եթէ յարերուք ընդ Քրիստոսի, ապա զվերինն
խնդրեցէք, ուր Քրիստոսն նստի ընդ աջմէ Աստու-
2 ծոյ, Զվերինն խորհեցարուք, մի՛ զայս՝ որ յերկրի
3 աստ է։ Քանզի մեռարուք եւ կեանքն ձեր ծածկեալ
4 են ընդ Քրիստոսի յԱստուած։ Իսկ յորժամ Քրիս-
տոս յայտնեսցի՝ կեանքն ձեր, յայնժամ եւ դուք ընդ
5 նմա յայտնեսջիք փառօք։ Սպանէք այսուհետեւ զան-
դամս ձեր զերկրաւորս. ի բաց ընկեցէք զպոռնկու-
թիւն, զպղծութիւն, զբիծ, զցանկութիւն չարեաց,
6 եւ զագահութիւն՝ որ է կռապաշտութիւն։ Վասն
որոյ գայ բարկութիւն Աստուծոյ ի վերայ որդւոցն
7 անհաւանութեան, Որովք եւ դուք երբեմն գնայիք՝
8 մինչ կենդանիքն էիք ի նոսա։ Այլ ի բաց թօթափե-
ցէք եւ դուք զայն ամենայն, զբարկութիւն, զսրտ-
մտութիւն, զչարութիւն, զհայհոյութիւն, զխեղկա-
9 տակութիւն ի բերանոց ձերոց։ Մի՛ ստէք միմեանց.
10 մերկացարուք զհին մարդն գործովքն իւրովք, Եւ
զգեցարուք զնորն նորոգեալ ի գիտութիւն ըստ պատ-
11 կերի արարչին իւրոյ. Ուր ոչ է հրեայ եւ ոչ հեթա-
նոս, թլփատութիւն եւ անթլփատութիւն, խուժ,
դուժ, Սկիւթացի, ծառայ, ազատ. այլ ամենայն
12 եւ յամենայնի Քրիստոս։ Զգեցարուք այսուհետեւ
իբրեւ ընտրեալք Աստուծոյ՝ սուրբք եւ սիրեցեալք՝
զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնար-
13 հութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն, Ներել

միմեանց, շնորհել իրերաց, եթէ ուրուք զումեքէ
տրտունջ ինչ իցէ. որպէս Աստուած Քրիստոսիւ
շնորհեաց մեզ՝ նոյնպէս եւ դուք: Եւ ի վերայ այսր 14
ամենայնի զսէրն, որ է զօդ կատարմանն: Եւ խա- 15
ղաղութիւնն Քրիստոսի հաստատեսցի ի սիրտս ձեր,
յոր եւ կոչեցարուքն միով մարմնով:

Եւ. Եւ գոհացողք լինիջիք. Զբան Քրիս- 16
տոսի բնակեսցէ ի ձեզ առատապէս, ամենայն իմաս-
տութեամբ ուսուցանել եւ խրատել զմիմեանս. սաղ-
մոսիւք եւ օրհնութեամբք եւ երգովք հոգեւորօք
եւ շնորհօք օրհնել զԱստուած ի սիրտս ձեր. Եւ 17
զամենայն զոր եւ առնիցէք բանիւք եւ արդեամբք,
զամենայն յանուն Տեառն Յիսուսի արասջիք. գո-
հացողք լինիջիք զԱստուծոյ եւ զՀօրէ նորա: Կա- 18
նայք, հնազանդ լերուք արանց ձերոց, որպէս եւ վայել
է ի Տէր: Արք, սիրեցէք զկանայս ձեր եւ մի դառ- 19
նացուցանէք զնոսա: Որդիք, հնազանդ լերուք ծնո- 20
ղաց ձերոց յամենայնի, զի այն է հաճոյ առաջի
Տեառն: Հարք, մի զայրացուցանէք զորդիս ձեր, զի 21
մի տրտմեսցին: Ծառայք, հնազանդ լերուք տերանց 22
ձերոց յամենայնի, մի առ ականէ ծառայութեամբ՝
իբրեւ մարդահաճոյք, այլ միամտութեամբ սրտի
երկնչել ի Տեառնէ: Զոր ինչ եւ առնիցէք՝ սրտի 23
մտօք գործեսջիք իբրեւ Տեառն, եւ ոչ իբրեւ մարդ-
կան: Գիտասջիք, զի ի Տեառնէ առնուցուք զհա- 24
տուցումն ժառանգութեան ձերոյ. քանզի Տեառն
Քրիստոսի ծառայէք: Իսկ ապիրատն ընկալցի ըստ 25
իւրում ապիրատութեանն. զի չիք ակնառութիւն
առաջի Աստուծոյ:

ԳԼՈՒԽ Դ.

Տեարք, զիրաւունս եւ զհաւասարութիւն ծա- 1
ռայից ձերոց շնորհեցէք. գիտասջիք, զի եւ ձեր Տէր
գոյ յերկինս: Աղօթից սատէպ կացէք, տքնել ի նմին 2

3 գոհութեամբ: Աղօթս արարէք միանգամայն եւ վասն
մեր. զի Աստուած բացցէ մեզ դուռն բանին, խօսել
զխորհուրդն Քրիստոսի, վասն որոյ եւ կապեալս
4 կամ. Զի յայտնի արարից զնա՝ որպէս արժան իցէ
ինձ խօսել:

5 ԱՁ. Իմաստութեամբ գնասջիք առ արտաքինսն,
6 գնոյ առեալ զժամանակս: Եւ բանն ձեր յամենայն
ժամ ընդ շնորհօք Տեառն իբրեւ աղիւ համեմեալ
լիցի, գիտել որպէս արժան իցէ ձեզ իւրաքանչիւր
7 ումեք տալ պատասխանի: Այլ որ ինչ զինէն է՝
ցուցցէ ձեզ զամենայն Տիւքիկոս սիրելի եղբայր եւ
հաւատարիմ պաշտօնեայ եւ ծառայակից ի Տէր.
8 Զոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք
9 վասն մեր, եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր, Ոնեսիմու
հանդերձ եղբարբ հաւատարմաւ եւ սիրելեաւ՝ որ է
ի ձէնջ. զամենայն ինչ ցուցցեն ձեզ՝ որ ինչ աստ է:
10 Ողջոյն տայ ձեզ Արիստարքոս գերեկից իմ, եւ Մար-
կոս եղբօրորդի Բառնաբայ. վասն որոյ առէք պա-
11 տուէր՝ եթէ եկեսցէ առ ձեզ՝ ընկալջիք զնա. Եւ
Յիսուս՝ որ անուանեալն է Յուստոս, որք են ի
թլփատութենէ անտի. զի դոքա միայն գործակից
եղեն ինձ յարքայութեանն Աստուծոյ, որք եւ եղեն իսկ
12 ինձ մխիթարութիւն: Ողջոյն տայ ձեզ Եպափրաս՝
որ ի ձէնջ ծառայ Քրիստոսի Յիսուսի է. յամենայն
ժամ պատերազմեալ վասն ձեր յաղօթս, զի կայ-
ցէք կատարեալք եւ լցեալք յամենայն կամս Աստու-
13 ծոյ: Վկայեմ նմա, զի բազում աշխատութիւն ունի
վասն ձեր եւ վասն Լաւոդիկեցւոցն, եւ վասն այնո-
14 ցիկ՝ որ Յերապօղիսն են: Ողջոյն տայ ձեզ Ղուկաս
15 բժիշկ եւ սիրելի, եւ Դեմաս: Ողջոյն տաջիք եղբարց՝
որք են ի Լաւոդիկիայ եւ ի Նիմփայ, եւ որ առ տանն
16 եկեղեցին է նորա: Եւ յորժամ ընթեռնուցու առ
ձեզ թուղթդ՝ արասջիք զի եւ ի Լաւոդիկեցւոց եկե-
ղեցւոջն ընթերցցի. եւ զառ ի Լաւոդիկեցւոցն՝ զի

եւ դուք ընթեռնուցուք։ Եւ ասասջիք ցԱրքիպպոս. 17
զգոյշ լեր սպասաւորութեանդ՝ զոր ընկալար ի Տէր,
զի զայդ կատարեսցես։ Ողջոյնդ ձեռին իմոյ Պաւ- 18
ղոսի է։ Յուշ լիցին ձեզ կապանքս իմ։ Շնորհք
ընդ ձեզ։

Առ Կողոսացիս գրեցաւ ի Հռոմէ ի ձեռն Տիւքիկոսի
եւ Ոնեսիմեայ։

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԲԿ. ՊԱՒՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս,
եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց, յԱստուած Հայր մեր
2 եւ ի Տէր Յիսուս Քրիստոս: Շնորհք ընդ ձեզ եւ
խաղաղութիւն: Գոհանամք զԱստուծոյ յամենայն
ժամ վասն ձեր ամենեցուն, յիշատակ առնել յա-
3 ղօթս մեր անդադար, Յիշել զձեր գործն հաւատոց
եւ զվաստակ սիրոյ եւ զհամբերութիւն յուսոյ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ առաջի Աստուծոյ եւ Հօր
4 մերոյ: Գիտէք, եղբարք սիրեցեալք յԱստուծոյ,
5 զընտրութիւնն ձեր. Զի աւետարանն մեր ոչ եղեւ
առ ձեզ միայն բանիւ, այլ եւ զօրութեամբ եւ Հո-
գւով սրբով եւ լրութեամբ բազմաւ. որպէս եւ գի-
տէք իսկ թէ որպիսիք եղեաք ի միջի ձերում վասն
6 ձեր: Եւ դուք նմանեցայք մեզ եւ Տեառն, ընկալեալ
զբանն ի բազում նեղութեան խնդութեամբ Հոգւոյն
7 սրբոյ, Լինել ձեզ օրինակ ամենայն հաւատացելոց,
8 որ են ի Մակեդոնիա եւ յԱքայիա: Զի ի ձէնջ
հնչեցաւ բանն Աստուծոյ ոչ միայն ի Մակեդոնիա
եւ յԱքայիա, այլ յամենայն տեղիս հաւատքն ձեր՝
որ առ Աստուած են, սփռեցան. զի այսուհետեւ

ոչ ինչ է պիտոյ մեզ եւ խօսել ինչ: Զի նոքին իսկ 9
պատմեն վասն մեր, թէ որպէս եղեւ մեզ մուտ առ
ձեզ, եւ որպէս դարձայք առ Աստուած ի կռոց ան-
տի, ծառայել Աստուծոյ կենդանւոյ եւ ճշմարտի,
Եւ ակն ունել Որդւոյ նորա յերկնից, զոր յարոյց 10
ի մեռելոց զՅիսուս՝ որ փրկելոցն է զմեզ ի բարկու-
թենէ անտի, որ գալոցն է:

ԳԼՈՒԽ Բ.

Բի. Դուք ինքնին գիտէք, եղբարք, զմուտն 1
մեր առ ձեզ. զի ոչ ընդունայն ինչ եղեւ, Այլ յա- 2
ռաջագոյն չարչարեալք եւ թշնամանեալք, որպէս եւ
դուք իսկ գիտէք, ի մէջ Փիլիպեցւոց համարձակեցաք
Աստուծով մերով պատմել ձեզ զաւետարանն Աս-
տուծոյ մեծաւ պատերազմաւ: Զի մխիթարութիւնն 3
մեր ոչ ի մոլորութենէ է եւ ոչ ի պղծութենէ եւ ոչ
նենգութեամբ, Այլ որպէս ընտրեցաք յԱստուծոյ 4
հաւատարիմ լինել աւետարանին, նոյնպէս եւ խօ-
սիմք. ոչ իբրեւ մարդկան հաճոյ լինել, այլ Աստուծոյ
որ քննէ զսիրտս մեր: Զի ոչ երբեք բանիւք ողոքա- 5
նաց եղեաք առ ձեզ, որպէս եւ դուք իսկ գիտէք, եւ
ոչ ի պատճառս ագահութեան, որպէս եւ Աստուած
վկայ է, Եւ ոչ խնդրեաք փառս ի մարդկանէ, ոչ ի 6
ձէնջ եւ ոչ յայլոց: Կարող էաք որպէս Քրիստոսի 7
առաքեալս ծանրանալ, այլ եղեաք հեզք ի միջի ձե-
րում. որպէս դայեակ մի՝ որ սնուցանիցէ զմանկունս,
Նոյնպէս եւ մեք գթայաք ի ձեզ. հաճոյ թուէր մեզ 8
տալ ձեզ ոչ միայն զաւետարանն Աստուծոյ, այլ եւ
զանձինս մեր. քանզի սիրելիք մեր եղերուք: Յիշէք, 9
եղբարք, զվաստակն մեր եւ զջան. զի զցայգ եւ զցե-
րեկ գործէաք վասն չծանրանալոյ ումեք ի ձէնջ, եւ
քարոզէաք ձեզ զաւետարանն Աստուծոյ: Դուք ին- 10
քնին վկայէք եւ Աստուած, որպէս սրբութեամբ եւ
արդարութեամբ եւ անբծութեամբ ձեզ հաւա- 11

տացելոցդ եղեաք, Որպէս եւ գիտէք իսկ. զի զիւրա-
12 քանչիւր ոք ի ձէնջ, իբրեւ հայր զորդիս, Մխիթա-
րէաք եւ սփոփէաք եւ գնէաք վկայութիւն գնալ ձեզ
արժանապէս Աստուծոյ, որ կոչեացն զձեզ յիւր ար-
քայութիւնն եւ ի փառս:
13 ՎԵՐՋ. Վասն այնորիկ եւ մեք գոհանամք զԱս-
տուծոյ անպակաս, զի առեալ զլուր բանին Աստու-
ծոյ առ ի մէնջ՝ ընկալարուք, ոչ իբրեւ զբան մարդկան,
այլ որպէս ճշմարտիւ զբան Աստուծոյ, որ եւ յաջո-
14 ղեալ իսկ է ի ձեզ հաւատացեալսդ: Զի դուք նմա-
նող եղերուք, եղբարք, եկեղեցեացն Աստուծոյ՝ որ
են ի Հրէաստանի ի Քրիստոս Յիսուս, զի զնոյն չար-
չարանս չարչարեցայք եւ դուք ի ձերոց ազգականաց,
15 որպէս եւ նոքայն ի Հրէից. Որք եւ զՏէրն Յիսուս
սպանին եւ զմարգարէսն, եւ զմեզ հալածեցին, եւ
Աստուծոյ յաչաց ելին, եւ ամենայն մարդկան հակա-
16 ռակ եղեն. Եւ արգելուլն զմեզ խօսել հեթանոսաց՝
զի ապրեսցին, զի կատարեսցեն զմեղս իւրեանց յա-
մենայն ժամ. քանզի հասեալ է ի վերայ նոցա բար-
կութիւն մինչեւ ի սպառ:
17 ԲՋ. Այլ մեք, եղբարք, թէպէտ եւ որբ մնացաք
ի ձէնջ առ ժամանակ մի, երեսօք եւ ոչ սրտիւք,
առաւել եւս փութացաք տեսանել զերեսս ձեր մե-
18 ծաւ ցանկութեամբ: Վասն այսորիկ կամեցայ գալ
առ ձեզ ես Պաւղոս մի անգամ եւ երկիցս, եւ խա-
19 փանեաց զմեզ սատանայ: Քանզի ո՞վ է մեր յոյս
կամ խնդութիւն կամ պսակ պարծանաց մերոց,
եթէ ոչ դուք ի Տէր առաջի Տեառն մերոյ Յիսուսի
20 Քրիստոսի ի նորա գալստեանն: Զի դուք էք փառք
մեր եւ խնդութիւն:

ԳԼՈՒԽ Գ.

1 Վասն որոյ ոչ եւս ունիմք ժոյժ, զի բարւոք
2 թուեցաւ մեզ միայն մնալ յԱթէնս: Եւ առաքեցաք

զՏիմոթէոս զեղբայր մեր եւ զգործակից աւետարա-
նին Աստուծոյ եւ հօրն Քրիստոսի, հաստատել
զձեզ եւ մխիթարել վասն հաւատոյն ձերոյ:
ՎԵՐՋ. Զի մի տաղտկայցէք ի նեղութիւնս յայ- 3
սոսիկ. քանզի դուք ինքնին իսկ գիտէք, զի ի սոյն
կամք: Քանզի մինչ առ ձեզն իսկ էաք՝ յառաջագոյն 4
ասէաք ձեզ, թէ նեղութիւնք հասանելոց են ի
վերայ մեր. որպէս եւ եղեւ իսկ եւ գիտացէք: Վասն 5
այնորիկ եւ ես՝ զի ոչ եւս ունէի ժոյժ, առաքեցի գի-
տել զհաւատսն ձեր. գուցէ որպէս փորձեաց եւ
զձեզ փորձիչն, եւ ընդունայն լիցի ջանն մեր: Բայց 6
արդ իբրեւ եկն Տիմոթէոս ի ձէնջ առ մեզ, եւ ետ
մեզ զաւետիս հաւատոյն ձերոյ եւ զսիրոյ, զի ունիք
ի մտի զյիշատակս մեր բարեաց յամենայն ժամ.
ցանկացեալ էք տեսանել զմեզ՝ որպէս եւ մեք զձեզ:
Վասն այնորիկ մխիթարեցաք ի ձեզ, եղբարք, ի վե- 7
րայ ամենայն վշտաց եւ նեղութեանց ձերոց ի ձեռն
հաւատոյն ձերոյ. Զի այժմ կենդանի եմք, եթէ 8
դուք հաստատուն կայցէք ի Տէր: Զի՞նչ կարեմք 9
գոհութիւն մատուցանել Աստուծոյ վասն ձեր ի
վերայ ամենայն խնդութեանն՝ զոր խնդամք վասն ձեր
առաջի Աստուծոյ մերոյ. Զցայգ եւ զցերեկ առա- 10
ւել եւս աղաչեմք տեսանել զերեսս ձեր, եւ հաս-
տատել զպակասութիւն հաւատոյն ձերոյ: Այլ 11
ինքն Աստուած եւ Հայր մեր եւ Տէր մեր Յիսուս
Քրիստոս ուղղեսցէ զճանապարհս մեր առ ձեզ: Եւ 12
զձեզ ինքն Տէր բազմապատիկս եւ առաւելս արասցէ
սիրով ընդ միմեանս եւ առ ամենեսին, որպէս եւ
մեք ի ձեզ. Հաստատել զսիրտս ձեր անարատս ի 13
սրբութիւն առաջի Աստուծոյ եւ Հօր մերոյ՝ ի գալըս-
տեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի հանդերձ
ամենայն սրբովք իւրովք:

ԳԼՈՒԽ Դ.

1 Գկ. Այսուհետեւ, եղբարք, աղաչեմք զձեզ եւ
մխիթարեմք ի Քրիստոս Յիսուս. զի որպէս ընկա-
լայք ի մէնջ, թէ որպէս պարտ իցէ ձեզ գնալ եւ
հաճոյ լինել Աստուծոյ, որպէս եւ գնայք իսկ. զի
2 եւս քան զեւս յաւելուցուք ի նոյն: Եւ գիտէք թէ
որպիսի պատուիրանս տուաք ձեզ ի Տէր Յիսուս:
3 Զի այս են կամք Աստուծոյ, սրբութիւն ձեր. ի
4 բաց լինել ձեզ ի պոռնկութենէ. Գիտել իւրաքան-
չիւր ումեք ի ձէնջ զիւր աման ստանալ սրբութեամբ
5 եւ պատուով. Մի ի ցաւս ցանկութեան, որպէս եւ
6 այլ հեթանոսք, որ ոչ գիտեն զԱստուած: Մի զան-
ցանել եւ զրկել յիրիք յայդմիկ զեղբայր իւր. քան-
զի վրէժխնդիր է Տէր ի վերայ ամենայնի այդորիկ.
որպէս յառաջագոյն ասացաք ձեզ եւ եդաք վկայու-
7 թիւն: Քանզի ոչ կոչեաց զմեզ Աստուած ի պղծու-
8 թիւն, այլ ի սրբութիւն: Այսուհետեւ որ անար-
գէ, ոչ զմարդ անարգէ, այլ զԱստուած՝ որ եւ ետ
9 զՀոգին սուրբ ի ձեզ: Այլ վասն եղբայրսիրութեան
չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ, զի դուք ինքնին իսկ
10 աստուածուսոյցք էք առ զմիմեանս սիրելոյ: Քանզի
եւ առնէք իսկ զդոյն յամենայն եղբարս՝ որ են յա-
մենայն կողմանս Մակեդոնացւոց: Աղաչեմք զձեզ,
եղբարք, առաւել եւս առաւելուլ եւ առատանալ.
11 հանդարտել, Եւ գործել զիւրաքանչիւր, եւ գոր-
ծել ձեռօք ձերովք, որպէս եւ պատուիրեցաք ձեզ,
զի գնայցէք պարկեշտութեամբ առ արտաքինսն եւ
12 մի՛ ինչ կարօտեալք իցէք: Ոչ կամիմ, եղբարք,
եթէ տգէտք իցէք վասն ննջեցելոցն. զի մի՛ տրտմի-
13 ցիք, որպէս եւ այլքն՝ որոց ոչ գոյ յոյս: Եթէ հա-
ւատամք եթէ Յիսուս մեռաւ եւ յարեաւ. նոյնպէս
եւ Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ
ընդ նմա:

ՎԵՐՋ. Բայց զայս ասեմք Տեառն բանիւ, եթէ 14
մեք որ կենդանիքս եմք մնացեալք, ի գալստեանն
Տեառն ոչ ժամանեմք ննջեցելոցն։ Զի ինքնին Տէր 15
հրամանաւ, ի ձայն հրեշտակապետի եւ ի փող Աս-
տուծոյ իջանէ յերկնից. եւ մեռեալք ի Քրիստոս
յարիցեն յառաջագոյն։ Ապա եւ մեք որ կենդանւոյն 16
մնացեալ լիցուք, նոքօք հանդերձ յափշտակեսցուք
ամպովք ընդ առաջ Տեառն յօդս. եւ այնպէս յա-
մենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք։ Այսուհետեւ 17
մխիթարեցէք զմիմեանս բանիւքս այսոքիւք։

ԳԼՈՒԽ Ե.

ԳԴ. Այլ վասն ժամուց եւ ժամանակաց, եղ- 1
բարք, չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ. Զի դուք ինքնին 2
իսկ ստոյգ գիտէք, թէ օրն Տեառն իբրեւ զգող գի-
շերի՝ այնպէս հասանէ։ Յորժամ ասիցեն թէ խա- 3
ղաղութիւն եւ շինութիւն է, յայնժամ յանկար-
ծակի հասանէ նոցա սատակումն՝ որպէս եւ երկն
յղւոյ, եւ մի՛ ապրեսցին։ Այլ դուք, եղբարք, ոչ 4
էք ի խաւարի՝ թէ օրն ձեր իբրեւ զգող ի վերայ հա-
սանիցէ. Զի ամենեքին դուք որդիք լուսոյ էք եւ 5
որդիք տունջեան. չեմք գիշերոյ, չեմք խաւարի։ Ա- 6
պա մի՛ զքնով անկանիցիմք, որպէս եւ այլքն. այլ
արթունք եւ զուարթունք եղիցուք։ Զի որ ննջենն՝ 7
գիշերի ննջեն, եւ որ արբենանն՝ գիշերի արբենան։
Այլ մեք զի տունջեան եմք, արթունք եղիցուք, եւ 8
զգեցցուք զզրահսն հաւատոյ եւ սիրոյ, եւ դիցուք
զսաղաւարտն յուսոյն փրկութեան։ Զի ոչ եդ զմեզ 9
Աստուած ի բարկութիւն, այլ ի փրկութիւն կեն-
դանութեան ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի. Որ մեռաւն վասն մեր. զի եթէ արթունք ի- 10
ցեմք եւ եթէ ննջեցեմք, նովաւ հանդերձ կեցցուք։
Վասն որոյ մխիթարեցէք զմիմեանս, եւ շինեցէք 11
զիրեարս, որպէս եւ առնէքդ իսկ։

12 ԳԶ. Աղաչեմ զձեզ, եղբարք, ճանաչել զվաս-
տակաւորս եւ զվերակացուս ձեր ի Տէր, եւ զխրա-
13 տիչս ձեր։ Եւ համարեցարուք զնոսա արժանիս ա-
ռաւել սիրոյ՝ վասն գործոյ նոցա. խաղաղութիւն
14 արարէք ընդ միմեանս։ Աղաչեմ զձեզ, եղբարք,
խրատեցէք զստահակս, մխիթարեցէք զկարճամիտս,
պատսպարան լերուք տկարաց, երկայնամիտ լերուք
15 առ ամենեսեան։ Զգոյշ լերուք, գուցէ ոք չարի չար
հատուցանիցէ. այլ յամենայն ժամ զբարեաց զհետ
16 երթայք առ միմեանս եւ առ ամենեսեան։ Յամե-
17 նայն ժամ ուրախ լերուք։ Անդադար աղօթս արա-
18 րէք։ Յամենայնի գոհացարուք. զի այս են կամք
19 Աստուծոյ Քրիստոսիւ Յիսուսիւ ի ձեզ։ Զհոգին
20 մի շիջուցանէք։ Զմարգարէութիւնս մի արհամար-
21 հէք։ Զամենայն ինչ փորձեցէք, զբարին ընկալա-
22 րուք։ Յամենայն իրաց չարաց ի բաց կացէք։ Եւ
23 ինքն Աստուած խաղաղութեան սուրբ արասցէ զձեզ
համօրէնս. եւ բովանդակ ձեր ոգի եւ շունչ եւ մար-
մին՝ անարատ ի գալստան Տեառն մերոյ Յիսուսի
24 Քրիստոսի պահեսցի։ Հաւատարիմ է որ կոչեաց
25* զձեզ, որ եւ արասցէ զնոյն։ Եղբարք, աղօթս ա-
26 րարէք եւ ի մեր վերայ։ Ողջոյն տուջիք եղբարց ամե-
27 նեցուն ի համբոյր սրբութեան։ Երդմնեցուցանեմ
զձեզ ի Տէր՝ ընթեռնուլ զթուղթդ առաջի ամենայն
28 եղբարց սրբոց։ Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ձեզ. ամէն։

Առ Թեսաղոնիկեցիս առաջին թուղթն գրեցաւ յԱթենայ։

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Գկ. ՊԱՒՂՈՍ եւ Սիղուանոս եւ Տիմոթէոս՝ 1
եկեղեցւոյդ Թեսաղոնիկեցւոց՝ յԱստուած հայր մեր
եւ ի Տէր Յիսուս Քրիստոս: Շնորհք ընդ ձեզ եւ 2
խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառ-
նէ Յիսուսէ Քրիստոսէ: Գոհանալ պարտիմք զԱս- 3
տուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբարք, որպէս
եւ արժան իսկ է. զի եւս քան զեւս աճէ հաւատքդ
ձեր, եւ յաճախէ սէր իւրաքանչիւր ձեր ամենեցուն
առ միմեանս: Որպէս եւ մեզ ձեօք պարծել յեկե- 4
ղեցիսն Աստուծոյ վասն համբերութեան ձերոյ եւ
հաւատոց յամենայն հալածանս ձեր եւ ի նեղու-
թիւնս, որում դուքն համբերէք, Յօրինակ արդար 5
դատաստանին Աստուծոյ. արժանի լինել ձեզ ար-
քայութեանն Աստուծոյ, վասն որոյ եւ զճգնու-
թիւնդ կրէք. Եթէ պարտ է առաջի Աստուծոյ հա- 6
տուցանել նեղչացն ձերոց նեղութիւն, Եւ ձեզ նե- 7
ղելոցդ հանգիստ ընդ մեզ ի յայտնութեանն Տեառն
մերոյ Յիսուսի յերկնից հրեշտակօք զօրութեան
իւրոյ, Ի բոց հրոյ առնուլ զվրէժս յայնցանէ՝ որք ոչ 8

ճանաչեն զԱստուած, եւ որ ոչ հնազանդին աւետա-
9 րանին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի․ Որք տու-
ցեն վրէժս ի սատակումն յաւիտենից յերեսաց Տեառն
10 եւ ի փառաց զօրութեան նորա, Յորժամ գայցէ
փառաւոր լինել ի մէջ սրբոց իւրոց, եւ սքանչելի ի
մէջ ամենայն հաւատացելոց․ զի հաւատարիմ եղեւ
վկայութիւնն մեր ի վերայ ձեր յաւուր յայնմիկ։
11 Յոր եւ աղօթս առնեմք վասն ձեր յամենայն ժամ,
զի զձեզ արժանիս արասցէ կոչմանն ձերում Աստու-
ած, մինչեւ լցցէ զամենայն հաճութիւն բարութեան
12 եւ զգործս հաւատոյն զօրութեամբ․ Զի փառաւոր
լիցի անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեզ
եւ դուք ի նմա, ըստ շնորհացն Աստուծոյ մերոյ եւ
Տեառն Յիսուսի Քրիստոսի։

ԳԼՈՒԽ Բ·

1 ՒԻ· Աղաչեմ զձեզ, եղբարք, վասն գալըս-
տեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ մերոյ
2 ժողովելոյն առ նա․ Մի վաղվաղակի խռովել ձեզ ի
մտաց եւ մի զարհուրել, մի՛ հոգւով եւ մի բանիւ
եւ մի՛ թղթովք՝ իբրեւ թէ ի մէնջ, որպէս թէ ե-
3 կեալ հասեալ իցէ օրն Տեառն։ Մի ոք զձեզ խա-
բեսցէ եւ մի՛ իւիք իրօք․ զի եթէ ոչ նախ եկեսցէ
ապստամբութիւնն, եւ յայտնեսցի մարդն անօրէնու-
4 թեան, որդին կորստեան, Հակառակորդն հպարտա-
ցեալ ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ աս-
տուած կամ պաշտօն․ մինչեւ նստել նմա ի տա-
ճարին Աստուծոյ եւ ցուցանել զանձն թէ աստու-
5 ած իցէ։ Ո՞չ յիշեցէք զի մինչ առ ձեզն իսկ էի՝ ա-
6 սէի զայս։ Եւ արդ դուք գիտէք զայն՝ որ ու-
7 նին յայտնել նմա յիւրում ժամանակի։ Զի խոր-
հուրդն անօրէնութեան արդէն իսկ զօրանայ․ բայց
8 յայնժամ մինչ ի միջոյ բարձցի՝ որ այժմդ ունի։ Եւ
ապա յայտնեսցի անօրէնն, զոր Տէր Յիսուս սատա-

կեսցէ Հոգւով բերանոյ իւրոյ, եւ խափանեսցէ յայ-
տնութեամբ գալստեանն իւրոյ: Որոյ գալուստն ըստ 9
ազդեցութեան սատանայի է, ամենայն զօրութեամբ
եւ նշանօք եւ արուեստիւք ստովք, Եւ ամենայն պա- 10
տրանօք անիրաւութեան ի վերայ կորուսելոցն. փո-
խանակ զի զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան՝ զի ա-
պրեսցին, եւ վասն այնորիկ առաքեսցէ նոցա Աս-
տուած ազդեցութիւն մոլորութեան՝ հաւատալ նո-
ցա ստութեանն: Զի դատապարտեսցին ամենեքեան՝ 11
որ ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ հաճեցան
ընդ անօրէնութիւնն: Այլ մեք պարտիմք գոհանալ 12
զԱստուծոյ յամենայն ժամ վասն ձեր, եղբա՛րք սի-
րեցեալք ի Տեառնէ. զի ընտրեաց զձեզ Աստուած ի
սկզբանէ ի փրկութիւն սրբութեամբ հոգւոյն եւ հա-
ւատովքն ճշմարտութեան, Յոր եւ կոչեաց զձեզ 13
աւետարանաւն մերով ի փրկութիւն փառացն Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի: Այսուհետեւ, եղբարք, 14
հաստատուն կացէք եւ պինդ կալարուք զաւանդու-
թիւնսն՝ զոր ուսարուք, եթէ բանիւ եւ եթէ թղթով
մերով: Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ 15
Աստուած Հայր մեր, որ սիրեաց զմեզ եւ ետ
մեզ մխիթարութիւն յաւիտենից եւ յոյս բարեաց
շնորհօք, Մխիթարեսցէ զսիրտս ձեր, եւ հաստա- 16
տեսցէ յամենայն բանս եւ ի գործս բարութեան:

ԳԼՈՒԽ Գ.

ԳՋ. Այսուհետեւ, եղբարք, աղօթս արարէք ի 1
վերայ մեր, զի բանն Տեառն ընթանայցէ եւ փառա-
ւոր լիցի յամենայն տեղիս, որպէս եւ առ ձեզ. Զի 2
ապրեսցուք յանօրինաց եւ յանզգամաց մարդոց, զի
ոչ ամենեցուն են հաւատք: Այլ հաւատարիմ է 3
Տէր, որ եւ հաստատեսցէ զձեզ եւ պահեսցէ ի չարէ
անտի: Վստահ եմք ի ձեզ Տերամբ, թէ զոր պա- 4
տուիրեցաքն ձեզ, եւ առնէք եւ առնիցէք: Այլ 5

Տէր ուղղեսցէ զսիրտս ձեր ի սէրն Աստուծոյ եւ ի
6 համբերութիւնն Քրիստոսի: Պատուիրեմ ձեզ, եղ-
բարք, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի,
խորշել ձեզ յամենայն եղբօրէ՝ որ ստահակն գնայ-
ցեն, եւ ոչ ըստ աւանդութեանն՝ զոր ընկալարուք ի
7 մէնջ: Զի դուք ինքնին գիտէք թէ որպէս պարտ է
ձեզ նմանել մեզ. եւ ոչ երբեք ստահակեցաք առ
8 ձեզ, Եւ ոչ ձրի զուրուք հաց կերաք, այլ ջանիւ եւ
վաստակով զցայգ եւ զցերեկ գործէաք՝ վասն չծան-
9 րանալոյ ումեք ի ձէնջ: Ոչ եթէ չունէաք իշխանու-
թիւն, այլ զի զանձինս օրինակ արասցուք ձեզ՝ նմա-
10 նողս լինել մեզ: Քանզի մինչ դեռ առ ձեզն իսկ
էաք՝ զայս պատուիրէաք ձեզ, թէ որ ոչն կամիցի
11 գործել, եւ կերիցէ մի: Արդ լսեմք զոմանց ի ձէնջ
թէ ստահակութեամբ գնան, գործ ինչ ոչ գործեն,
12 այլ յուլացեալ հետաքրքիր շրջին: Այնպիսեացն
պատուէր տամք եւ աղաչեմք ի Տէր Յիսուս Քրիս-
տոս, զի հանդարտութեամբ գործեսցեն եւ զիւ-
13 րեանց հաց կերիցեն: Այլ դուք, եղբարք, մի ձան-
14 ձրանայք զբարիս գործել: Ապա եթէ ոք ոչ հնա-
զանդեսցի բանիս մերում թղթովս այսուիկ, դուք
նշանակեսջիք զնա, եւ մի խառնակեսջիք ընդ նմա,
15 զի պատկառեսցէ: Բայց մի իբրեւ զթշնամի համա-
16 րեսջիք, այլ խրատեսջիք իբրեւ զեղբայր: Եւ ինքն
Տէր խաղաղութեան տացէ ձեզ խաղաղութիւն յա-
մենայն ժամ յամենայն իրս: Տէր ընդ ամենեսին ընդ
17 ձեզ: Ողջոյնս իմոյ ձեռին Պաւղոսի է, որ է նշանակ,
18 յամենայն թուղթս այսպէս գրեմ. Շնորհք Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ամենեսին ձեզ:

Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ գրեցաւ յԱթենայ:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՌԿ. ՊԱՒՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի 1
ըստ հրամանի փրկչին մերոյ Աստուծոյ եւ Քրիստոսի
Յիսուսի յուսոյն մերոյ, Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ 2
հաւատովք. շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն
յԱստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ
Քրիստոսէ: Որպէս աղաչեցի զքեզ կալ յԵփեսոս 3
մինչ երթայի ի Մակեդոնիա. զի պատուէր տացես
ոմանց չլինել օտարուսմունս, Եւ չհայել յառաս- 4
պելս եւ ի տոհմաթիւս անչափս. որ մանաւանդ խնդ-
դիրս յուզեն, եւ ոչ զտնտեսութիւն Աստուծոյ հա-
ւատովք: Քանզի գլուխ պատուիրանին սէր է, ի 5
սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց եւ յանկեղծաւոր
հաւատոյ: Յորոց ոմանք վրիպեցան, խոտորեալք 6
յունայնութիւն բանից: Կամին լինել վարդապետք 7
օրինաց. ինքեանք ոչ իմանան զինչ խօսին, եւ ոչ
վասն որոց պնդեալն են: Գիտեմք եթէ բարւոք են 8
օրէնք՝ եթէ ոք զնոսա օրինօքն կրեսցէ: Բայց զայս 9
գիտասցէ, զի ի վերայ արդարոց օրէնք ոչ կան, այլ
ի վերայ անօրինաց եւ անհնազանդից, ամպարշտաց
եւ մեղաւորաց, անսրբոց եւ պղծոց, զհայր եւ զմայր
անարգողաց, մարդասպանաց, Պոռնկաց, արուագի- 10

տաց, մարդելուզաց, ստոց, ստերդմանց, եւ եթէ այլ
ինչ իցէ հակառակ ողջամիտ վարդապետութեանս.
11 Որ ըստ աւետարանի փառաց երանելւոյն Աստուծոյ
է, որում եղէ ես հաւատարիմ:
12 ՎԵՐՋ. Շնորհ ունիմ այնմիկ, որ զօրացոյցն զիս
ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. զի հաւատարիմ
13 համարեցաւ կարգել ի սպասաւորութիւն, Որ յառա-
ջագոյն հայհոյիչն էի եւ հալածիչ եւ թշնամանիչ.
այլ գտի ողորմութիւն, զի զայն յանգիտութեան եւ
14 յանհաւանութեան գործէի: Եւ առաւել եղեն
շնորհք Տեառն մերոյ հաւատովքն եւ սիրով որ ի
15 Քրիստոս Յիսուս: Հաւատարիմ է բանս եւ ամե-
նայն ընդունելութեան արժանի է. զի Քրիստոս Յի-
սուս եկն յաշխարհ փրկել զմեղաւորս, որոց գլուխն
16 ես եմ: Այլ վասն այնորիկ գտի ողորմութիւն, զի
նախ յիս եցոյց Յիսուս Քրիստոս զամենայն երկայն-
մտութիւն յօրինակ այնոցիկ՝ որ հաւատալոցն իցեն ի
17 նա, ի կեանսն յաւիտենից: Այլ թագաւորին յաւի-
տենից, անեղծի եւ աներեւութի, միոյն Աստուծոյ
փառք եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:
18 Զայս պատուիրան աւանդեմ քեզ, որդեակ իմ Տի-
մոթէոս, ըստ կանխելոց ի քեզ մարգարէութեանցն,
զի դու զինուորիցիս նոքօք զգեղեցիկ զինուորութիւնն.
19 Ունիցիս հաւատս սրբովք մտօք, զոր ոմանց մերժեալ
20 յանձանց իւրեանց՝ նաւաբեկեցան ի հաւատսն. Որոց
ասկի են Հիմենոս եւ Աղեքսանդրոս, զորս մատա-
նեցի սատանայի, զի խրատեսցին չհայհոյել:

ԳԼՈՒԽ Բ.

1 Եւ արդ աղաչեմ, նախ քան զամենայն առնել
աղօթս, խնդրուածս, պաղատանս, գոհութիւնս վասն
2 ամենայն մարդկան, Մանաւանդ վասն թագաւորաց
եւ ամենայն իշխանաց. զի խաղաղութեամբ եւ հան-
դարտութեամբ վարեսցուք զկեանս մեր, ամենայն

աստուածպաշտութեամբ եւ սրբութեամբ։ Զի այն 3
է բարի եւ ընդունելի առաջի փրկչին մերոյ Աստուծոյ.
Որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն եւ ի գիտու- 4
թիւն ճշմարտութեան եկեսցեն։ Զի մի է Աստուած, 5
եւ մի միջնորդ Աստուծոյ եւ մարդկան՝ մարդն Յիսուս
Քրիստոս. Որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն, 6
վկայութիւն ժամանակաց իւրոց։ Յոր եդայ ես քա- 7
րոզ եւ առաքեալ. ճշմարիտ ասեմ ի Քրիստոս եւ
ոչ ստեմ, եղէ վարդապետ հեթանոսաց հաւատովք
եւ ճշմարտութեամբ։

Արդ. Կամիմ զի արք կայցեն յաղօթս յամենայն 8
տեղիս. բառնայցեն զսուրբ ձեռս ի վեր առանց բար-
կութեան եւ երկմտութեան։ Նոյնպէս եւ կանայք ի 9
զարդ խոնարհութեան, ակնածութեամբ եւ զգաս-
տութեամբ զարդարել զանձինս. մի ի հիւս ոսկե-
մանս ընդելուզեալս մարգարտով կամ ի հանդերձս
պաճուճեալս. Այլ որպէս վայել է կանանց՝ զաստու- 10
ածպաշտութիւն յանձն առելոց գործովք բարու-
թեան։ Կին մարդ ցածութեամբ ուսցի, ամենայն 11
հնազանդութեամբ։ Այլ ուսուցանել կնոջ մարդոյ 12
ոչ հրամայեմ, եւ ոչ ճոխաբան լինել քան զայր
մարդ. այլ ի լռութեան կալ։ Զի Ադամ նախ ստեղ- 13
ծաւ, եւ ապա Եւայ։ Եւ Ադամ ոչ պատրեցաւ, այլ 14
կինն պատրեցաւ եւ յանցեաւ։ Բայց կեցցէ վասն 15
որդեծնութեանն, եթէ կացցեն ի հաւատս եւ ի սէր
եւ ի սրբութիւն պարկեշտութեամբ։

ԳԼՈՒԽ Գ.

Հաւատարիմ է բանս. եթէ ոք եպիսկոպոսու- 1
թեան ցանկայ, բարւոյ գործոյ ցանկայ։ Պարտ է ե- 2
պիսկոպոսին անարատ լինել, միոյ կնոջ այր, հեզ, ցած,
պարկեշտ, հիւրասէր, ուսուցիչ։ Մի թշնամանող, 3
մի հարկանող, այլ հանդարտ. մի կռուող, մի ար-
ծաթասէր. Զի իւրում տանն իսկ բարւոք վերակա- 4

ցու լեալ իցէ. որդեակս ունիցի, որ ի հնազանդու-
5 թեան կայցեն ամենայն պարկեշտութեամբ: Ապա
եթէ ոք իւրում տանն վերակացու չգիտիցէ լինել,
6 զիա՞րդ եկեղեցւոյ Աստուծոյ խնամակալ լինիցի: Մի՛
մատաղատունկ, զի մի հպարտացեալ ի դատաստանս
7 սատանայի անկանիցի: Այլ պարտ է նմա վկայութիւն
բարի եւ յարտաքնոցն ունել. զի մի ի նախատինս
8 անկանիցի եւ յորոգայթս սատանայի: Նոյնպէս եւ
զսարկաւագունս պարկեշտս. մի՛ երկբանս, մի՛ գինե-
9 սէրս, մի՛ զօշաքաղս. Այլ ունիցին զխորհուրդ հա-
10 ւատոցն սուրբ մտօք: Նոքեանք նախ փորձեսցին, եւ
11 ապա ի պաշտօնն մատիցեն, զի անարատք իցեն: Նոյն-
պէս եւ կանայք նոցա պարկեշտք, մի՛ չարախօսք.
12 հեզք, հաւատարիմք յամենայնի: Սարկաւագք լի-
նիցին միոյ կնոջ արք. որոց որդւոց իւրեանց բար-
13 ւոք վերակացու լեալ իցեն եւ տանց իւրեանց. Զի
որ բարւոքն պաշտիցեն աստիճան բարի անձանց իւ-
րեանց շահին, եւ բազում համարձակութիւն ի
հաւատսն՝ որ ի Քրիստոս Յիսուս:

14 ՎԵՐՋ. Զայս գրեմ առ քեզ, զի ակն ունիմ ի
15 մօտոյ գալ: Ապա թէ յամեցից, զի գիտասցես թէ
որպէս պարտ իցէ քեզ ի տան Աստուծոյ շրջել, որ
է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն եւ հաստա-
16 տութիւն ճշմարտութեան: Եւ յայտնի իսկ մեծ է
խորհուրդն աստուածպաշտութեան, որ երեւեցաւ
մարմնով, արդարացաւ հոգւով, յայտնեցաւ հրեշ-
տակաց, քարոզեցաւ ի հեթանոսս, հաւատարիմ
եղեւ յաշխարհի, եւ վերացաւ փառօք:

ԳԼՈՒԽ Դ.

1 ԱՋ. Այլ Հոգին սուրբ յայտնապէս ասէ, թէ
ի ժամանակս յետինս քակեսցին ոմանք ի հաւատոցն,
եւ հայեսցին յայս մոլորութեան եւ ի վարդապե-
2 տութիւնս դիւաց, Կեղծաւորութեամբ ստաբանք,

խարեալք իւրեանց խղճիւն մտաց. Որ արգելուցուն 3
յամուսնանալոյ, եւ մեկնիցեն ի կերակրոց՝ զոր Ա-
ստուած հաստատեաց ի վայելել հաւատացելոց, եւ
ոյք հասեալ իցեն ի ճշմարտութեանն վերայ: Զի ա- 4
մենայն արարածք Աստուծոյ բարի են, եւ չիք ինչ խո-
տան, մանաւանդ որ գոհութեամբ ընդունիցին, Զի 5
սրբի բանիւն Աստուծոյ եւ աղօթիւք: Զայս խրատ 6
տուեալ եղբարց՝ բարւոք պաշտօնեայ լինիցիս Քրիս-
տոսի Յիսուսի, սնանիցիս բանիւք հաւատոց, եւ
բարւոք վարդապետութեամբն՝ զորոյ զհետն իսկ եղեր:
Այլ ի պիղծ բանից եւ յառասպելաց պառաւանց 7
հրաժարեսջիր: Բայց կրթեա զանձն քո յաստուածա-
պաշտութիւն. Զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ 8
ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ
ամենայն ինչ օգտակար է, եւ զաւետիս կենաց ունի,
զարդիս եւ զհանդերձելոցն: Հաւատարիմ է բանս, 9
եւ ամենայն ընդունելութեան արժանի է: Զի ի սոյն 10
իսկ վաստակեմք եւ նախատինս յանձն առնումք. զի
յուսացեալ եմք յԱստուած կենդանի, որ է փրկիչ
ամենայն մարդկան, մանաւանդ հաւատացելոց: Պա- 11
տուէր տացիր զայդ եւ ուսուցանիջիր: Զի մի՛ ոք 12
իցէ՝ որ զքո մանկութիւնդ արհամարհիցէ:

Բկ. Այլ օրինակ լինիջիր հաւատացելոց բանիւք,
գնացիւք, սիրով, հաւատովք, սրբութեամբ: Մինչեւ 13
գամ ես, միտ դիր ընթերցուածոց մխիթարութեան,
վարդապետութեան: Մի՛ անփոյթ առներ զշնորհացդ՝ 14
որ ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ ի
ձեռնադրութենէ երիցութեան: Զայդ խորհեաց եւ 15
ի դոյն կանխեսջիր. զի քո յառաջադիմութիւնդ ամե-
նեցուն յայտնի լիցի: Զգոյշ լինիջիր անձին եւ վար- 16
դապետութեանդ եւ ի դմին յամեսջիր. զայդ եթէ
առնիցես, եւ զանձն ապրեցուսցես եւ զայնոսիկ՝ որ
քեզն լսիցեն:

ԳԼՈՒԽ Ե.

1 Զերէց մի՛ պատուհասեսցես, այլ մխիթա-
րեսջիր իբրեւ զհայր, զերիտասարդս իբրեւ զեղբարս,
2 Զպառաւունս իբրեւ զմարս, զմանկամարդս իբրեւ
3 զքորս ամենայն սրբութեամբ: Զայրիս պատուեա,
4 որ ստոյգ այրիքն իցեն: Ապա թէ ոք այրի՝ որդիս եւ
թոռունս ունիցի, ուսանիցեն նախ իւրեանց տանց
բարի առնել եւ զփոխարէնս հատուցանել ծնողացն.
5 զի այն է բարի եւ ընդունելի առաջի Աստուծոյ: Իսկ
որ ճշմարտիւ այրին իցէ, եւ մենացեալ յուսացեալ
յԱստուած, եւ կանխեալ յաղօթս եւ ի խնդրու-
6 ածս զցայգ եւ զցերեկ: Իսկ գիրգ այրին՝ կենդանւոյն
7 մեռեալ է: Զայս պատուիրեա, զի անարատք իցեն:
8 Իսկ եթէ ոք իւրոց եւ մանաւանդ ընտանեացն խնամ
ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է, եւ չար եւս
9 քան զանհաւատն է: Այրի ընդ այրիս անուանեսցի,
որ չիցէ պակաս ի վաթսնամենից, միոյ առն կին
10 լեալ. Եւ ի գործս բարիս վկայեալ, եթէ մանկունս
սնուցեալ իցէ, եթէ զհիւրս ընկալեալ իցէ, եթէ
զսրբոց զոտս լուացեալ իցէ, եթէ նեղելոց բաւական
լեալ իցէ, եթէ զամենայն գործոց բարեաց զհետ
11 երթեալ իցէ: Այլ ի մանկամարդաց այրեացն հրա-
ժարեաց, զի յորժամ խայտան զՔրիստոսիւ՝ ամուս-
12 նանալ կամին. Իսկ զդատաստանս ընդունին, զի զա-
13 ռաջին հաւատն արհամարհեցին: Միանգամայն եւ
դատարկանձունք ուսանին, շրջողք տանէ ի տուն. եւ
ոչ միայն դատարկք, այլ եւ փաքուաք եւ հետաքրքր-
14 քիրք. եւ խօսին՝ որ ինչ ոչ է պիտոյ: Կամիմ զման-
կամարդացդ ամուսնանալ, որդիս ծնանել, տնարարս
լինել, եւ մի՛ ինչ պատճառս տալ հակառակորդին ի
15 հայհոյութեան աղագս: Զի արդէն իսկ ոմանք խո-
16 տորեցան զկնի սատանայի: Եթէ ոք հաւատացեալ՝
այրիս ունիցի, բաւական լիցի նոցա, եւ մի՛ ծանրա-

ցի եկեղեցւոյն. զի ճշմարիտ այրեացն բաւական լի-
նիցի:

Բկ. Որ բարւոք վերակացու լինիցին երիցունք՝ 17
կրկին պատուոյ արժանի եղիցին. մանաւանդ որ աշ-
խատիցին բանիւ եւ վարդապետութեամբ: Քանզի 18
ասէ գիր. Մի կապեսցես զցռուկ եզին կալոտւոյ. եւ
արժանի է մշակն վարձու իւրոյ: Զերիցու չարախօ- 19
սութիւն մի ընդունիցիս. բայց եթէ երկուք եւ ե-
րիւք վկայիւք: Իսկ որ մեղանչենն, առաջի ամենե- 20
ցուն յանդիմանեա, զի եւ այլքն երկիցեն: Վկայու- 21
թիւն դնեմ առաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիս-
տոսի եւ ընտրելոց հրեշտակաց, զի զայդ պահեսցես
առանց մտահաճութեան. մի ինչ առնել աչառա-
նօք: Զձեռս վաղվաղակի յուրուք վերայ մի դնիցես, 22
եւ մի կցորդ լինիցիս մեղաց օտարաց. զանձն քո սուրբ
պահեսջիր: Այսուհետեւ մի ջուր եւեթ ըմպիցես, 23
այլ սակաւիկ մի եւ գինի խառնեսջիր վասն ստամո-
քսի եւ սաէպ հիւանդութեանց: Են մարդք՝ որոց 24
մեղքն յայտնի են, եւ յառաջագոյն հասեալ ի դա-
տաստան, եւ են՝ որոց զկնի երթան: Նոյնպէս եւ 25
բարի գործքն յայտնի են. եւ որ այլ ազգ եւս ինչ
իցեն՝ թաքչել ոչ կարեն:

ԳԼՈՒԽ Զ.

Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն, 1
զիւրաքանչիւր տեարս պատուոյ արժանի համարես-
ցին, զի մի անունն Աստուծոյ եւ վարդապետու-
թիւնն հայհոյեսցի: Իսկ որ հաւատացեալ տեարս 2
ունիցին՝ մի արհամարհեսցեն, զի եղբարք են. այլ
առաւել ծառայեսցեն՝ զի հաւատացեալքն են եւ սի-
րունք. որք զբարերարութիւն յանձինս ունիցին. զայս
ուսուցանիջիր եւ մխիթարեսջիր: Իսկ եթէ ոք այլ- 3
ազգ ինչ ուսուցանիցէ, եւ ոչ անսայցէ ողջմտութեան
բանից Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ ըստ

4 աստուածպաշտութեան վարդապետութեանն. Այն-
պիսին հպարտացեալ է, եւ ոչ ինչ ոչ գիտէ. այլ
տապի ի խնդիրս եւ ի բանս հակառակութեան, ուս-
տի լինին նախանձ, հեռ, հայհոյութիւն, կարծիք
5 չարեաց, Խարդախութիւնք ապականելոց մտաց
մարդկան եւ օտարացելոց ի ճշմարտութենէ անտի,
որ շահավաճառ համարին զաստուածպաշտութիւնն.
բայց դու մերժեսջիր յայնպիսեաց անտի:
6 ԲԶ. Այլ շահավաճառ մեծ աստուածպաշտու-
7 թիւնն է՝ բաւականութեամբ հանդերձ: Զի ոչ բե-
րաք ինչ յաշխարհս եւ ոչ տանել ինչ կարասցուք:
8 Այլ ունիմք կերակուր եւ հանդերձս, եւ այնու շա-
9 տասցուք: Իսկ որք կամին մեծանալ, անկանին ի
փորձութիւն եւ յորոգայթ, եւ ի բազում ցանկու-
թիւնս անմիտս եւ վնասակարս. որք ընկղմեն զմար-
10 դիկ ի սատակումն եւ ի կորուստ: Զի արմատ ամե-
նայն չարեաց արծաթսիրութիւն է, որում ոմանց
ցանկացեալ՝ մոլորեցան ի հաւատոյն եւ զանձինս
11 արկին ընդ բազում ցաւովք: Այլ դու, ով մարդ
Աստուծոյ, փախիր յայնցանէ, եւ երթ զհետ ար-
դարութեան, զաստուածպաշտութեան, զհաւատոյ,
12 զսիրոյ, զհամբերութեան, զհեզութեան: Եւ մար-
տիր զբարւոք մարտն հաւատոյ, եւ բուռն հար զկե-
նացն յաւիտենականաց՝ յոր կոչեցարն, եւ դաւանե-
ցեր զբարւոք դաւանութիւնն առաջի բազում վկայից:
13 Պատուիրեմ քեզ առաջի Աստուծոյ՝ որ կենդանի
առնէ զամենայն, եւ Յիսուսի Քրիստոսի՝ որ վկայեաց
առաջի Պոնտացւոյ Պիղատոսի զբարւոք դաւանու-
14 թիւնն. Պահել քեզ զպատուիրանն անբիծ՝ անա-
րատ մինչեւ ի յայտնութիւն Տեառն մերոյ Յիսու-
15 սի Քրիստոսի. Զոր յիւր ժամանակս ցուցցէ երա-
նելին եւ միայն հզօրն, Թագաւոր թագաւորաց եւ
16 Տէր տերանց. Որ միայն ունի զանմահութիւն, բնա-
կեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես ի մարդկա-

նէ եւ ոչ տեսանել կարող է. որում պատիւ եւ
զօրութիւն յաւիտեանս, ամէն։ Մեծատանց՝ որ են 17
յայսմ աշխարհի, պատուէր տաջիր մի հպարտանալ
եւ մի՛ յուսալ ի մեծութիւն սնոտի, այլ յԱստու-
ած՝ որ տայ մեզ զամենայն առատապէս ի վայելել,
Զբարիս գործել, մեծանալ գործովք բարութեան, 18
առատս, սփռունս, հաղորդս լինել. Գանձել անձանց 19
հիմն բարի ի հանդերձեալն. զի բուռն հարկանիցեն
զճշմարիտ կենացն։ Ո՛վ Տիմոթէէ, պահեա զաւ- 20
անդն, խոտորեալ ի պղծոց եւ ի նորաձայն բանից
եւ ի հակառակութենէ եւ ի մոլարանուն գիտու-
թենէ, Զոր ոմանց յանձն առեալ՝ վրիպեցան ի 21
հաւատոց անտի։ Շնորհք ընդ քեզ, ամէն։

Առ Տիմոթէոս առաջին թուղթ գրեցաւ ի Լաւոդիկեայ,
որ է մայր քաղաքաց Պակատիանացւոց։

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՄՈԹԷՈՍ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԳԿ. ՊԱՒՂՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստո-
սի կամօքն Աստուծոյ, ըստ աւետեաց կենացն՝ որ
2 ի Քրիստոս Յիսուս. Տիմոթեայ որդւոյ սիրելւոյ,
շնորհք, ողորմութիւն եւ խաղաղութիւն յԱստուծոյ
3 Հօրէ եւ ի Քրիստոսէ Յիսուսէ Տեառնէ մերմէ։
Շնորհ ունիմ Աստուծոյ՝ զոր պաշտեմ ի նախնեաց
մտօք սրբովք, իբր զի անպակաս ունիմ զքէն յիշա-
4 տակ յաղօթս իմ. զցայգ եւ զցերեկ Յանկացեալ եմ
տեսանել զքեզ, յիշատակեալ զարտասուսն քո, զի
5 լցայց ուրախութեամբ. Զմտաւ ածեալ զանկեղծ
հաւատսն, որ են ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ
ի հանոյ քում Լաւոդեայ եւ ի մօր քում Եւնի-
6 կեայ. հաստատեալ եմ թէ եւ ի քեզ է։ Վասն
որոյ յիշեցուցանեմ քեզ արծարծել զշնորհսն Աս-
7 տուծոյ, որ են ի քեզ ի ձեռնադրութենէ իմմէ։ Զի
ոչ ետ մեզ Աստուած հոգի վհատութեան, այլ զօ-
8 րութեան եւ սիրոյ եւ զգաստութեան Մի այսու-
հետեւ ամօթ համարիցիս զվկայութիւնն Տեառն մե-
րոյ եւ մի զիս զկապեալ նորա, այլ կցորդ լեր չար-
չարանաց աւետարանին ըստ զօրութեանն Աստուծոյ.
9 Որ փրկեացն զմեզ եւ կոչեաց ի կոչումն սուրբ, ոչ

ըստ գործոց մերոց, այլ ըստ իւրում յառաջադրու-
թեանն եւ շնորհացն՝ որ տուաւ մեզ ի Քրիստոս
Յիսուս յառաջ քան զժամանակսն յաւիտենից:
ԳՓ. Բայց յայտնեցաւ այժմիկ յերեւել փրկչին 10
մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ խափանեաց զմահ,
եւ լուսաւոր արար զկեանս եւ զանեղծութիւն ի
ձեռն աւետարանին, Որոյ եդայ ես քարոզ եւ առա- 11
քեալ եւ վարդապետ հեթանոսաց: Վասն որոյ եւ 12
զայս չարչարանս կրեմ, այլ ոչ ինչ ամօթ համարիմ.
քանզի գիտեմ յո հաւատացեալն եմ. եւ հաստա-
տեալ եմ թէ կարող է զաւանդն իմ պահել յօրն
յայն: Ունիցիս օրինակ ողջմտութեան բանիցն՝ զորս 13
յինէն լուար, հաւատովք եւ սիրով որ ի Քրիստոս
Յիսուս: Զբարւոք աւանդն պահեսջիր ի ձեռն Հո- 14
գւոյն սրբոյ ի մեզ բնակելոյ: Զայս գիտասջիր, զի 15
մեկնեցան ի մէնջ ամենեքեան որ էին յԱսիա, որոց
սակի են Փիգեղոս եւ Հերմոգինէս: Տացէ Աստուած 16
ողորմութիւն տանն Ոնեսիփորայ, զի բազում անգամ
հանգոյց զիս, եւ զկապանս իմ ոչ ամօթ համարե-
ցաւ: Այլ իբրեւ եկն ի Հռոմ, պնդագոյնս խըն- 17
դրեաց զիս եւ եգիտ: Տացէ նմա Տէր ողորմութիւն 18
գտանել ի Տեառնէ յաւուրն յայնմիկ. եւ որչափ ինչ
միանգամ յԵփեսոս սպաս կալաւ ինձ, զայն դու ի-
քնին քաջ գիտես:

ԳԼՈՒԽ Բ.

Այլ դու, որդեակ իմ, զօրացիր շնորհօքն որ 1
ի Քրիստոս Յիսուս: Եւ զոր լուար յինէն բազում 2
վկայիւք, զայն աւանդեսցես հաւատարիմ մարդոց,
որք բաւական իցեն եւ զայլս ուսուցանել:
ԳՋ. Աշխատակից լեր իբրեւ զբարւոք զինուոր 3
Քրիստոսի Յիսուսի: Ոչ ոք զինուորեալ պատէն ընդ 4
կեանս աշխարհիս պատաղի, եթէ զօրավարին հաճոյ
լինիցի: Եւ եթէ մարտիկ ոք իցէ, ոչ պսակի՝ եթէ 5

6 ոչ ըստ օրինին մարտիցէ: Եւ հողագործին աշխա-
7 տելոյ պարտ է նախ ի պտղոյն վայելել: Իմա զինչ
ասեմս. տացէ քեզ Տէր իմաստութիւն յամենայնի:
8 Յիշեա զՔրիստոս Յիսուս յարուցեալ ի մեռելոց
9 ի զաւակէ Դաւթի ըստ աւետարանիս իմում, Յո-
րում չարչարիմ կապանօք չափ իբրեւ զչարագործ.
10 այլ բանն Աստուծոյ ոչ եթէ կապեալ իցէ: Վասն
այնորիկ ամենայնի համբերեմ վասն ընտրելոցն, զի
եւ նոքա փրկութեանն հասանիցեն որ ի Քրիստոս
11 Յիսուս երկնաւոր փառօքն հանդերձ: Հաւատարիմ
է բանս, զի եթէ ընդ նմա մեռաք, ընդ նմին եւ կեց-
12 ցուք. Եւ եթէ համբերեմք, ընդ նմին եւ թագաւո-
13 րեսցուք. Եւ եթէ ուրանամք, եւ նա ուրասցի զմեզ.
եւ եթէ չհաւատամք, նա հաւատարիմ մնայ, ու-
14 րանալ զանձն իւր ոչ կարէ: Զայս յուշ արասջիր
վկայութիւն եդեալ առաջի Աստուծոյ. մի՛ բանակռիւ
լինել յոչ ինչ պէտս ի կործանումն լսողաց:
15 ԿԻՐ. Փութասջիր զանձն քո ընտիր կացուցա-
նել առաջի Աստուծոյ, մշակ առանց ամօթոյ, ու-
16 ղիղ համառօտել զբանն ճշմարտութեան: Այլ ի
պղծոց եւ ի սնոտի խօսից մերժեսջիր. զի առաւել
17 յառաջ դային յամբարշտութիւնս. Եւ բանք նոցա
իբրեւ զքաղցկեղ ճարակ գտանեն. որոց սակի են
18 Հիմենոս եւ Փիղետոս, Որք վրիպեցան ի ճշմարտու-
թենէ, եւ ասեն եթէ յարութիւն մեռելոց արդէն
19 իսկ եղեալ է, եւ կործանեն զհաւատս ոմանց: Այլ
հաստատուն հիմն Աստուծոյ կայ եւ ունի զկնիքս
զայս, եթէ ծանեաւ Տէր զայնոսիկ որ իւրն են, եւ
ի բաց լիցի յանիրաւութենէ ամենայն՝ որ անուանէ
20 զանուն Տեառն: Այլ ի տան մեծի ոչ միայն են ա-
նօթք ոսկեղէնք եւ արծաթեղէնք, այլ եւ փայտե-
ղէնք եւ խեցեղէնք. են՝ որ ի պատուի են, եւ են՝ որ
21 յանարգութեան: Եթէ ոք սրբեսցէ զանձն իւր յայն-
պիսեաց անտի, եղիցի անօթ պատուական սրբեալ եւ

պիտանի Տեառն իւրում յամենայն գործս բարու-
թեան պատրաստեալ: Այլ յերիտասարդական ցան- 22
կութեանց փախիր. եւ երթ զհետ արդարութեան,
զհաւատոց, զսիրոյ, զխաղաղութեան, զսրբութեան,
ընդ այնոսիկ՝ որ կարդան զանուն Տեառն սուրբ սըր-
տիւք: Այլ ի յիմար եւ յանխրատ խնդրոց հրաժա- 23
րեա. գիտասջիր թէ անտի ծնանին կռիւք: Բայց 24
ծառայի Տեառն ոչ է պարտ կռուել, այլ հեզ լի-
նել առ ամենեսին, ուսուցիչ, անոխակալ. Հանդար- 25
տութեամբ խրատել զհակառակորդսն. թերեւս տա-
ցէ նոցա Աստուած ապաշխարութիւն ի գիտութիւն
ճշմարտութեան, Եւ սթափեսցին յորոգայթից սա- 26
տանայի, որսացեալք ի նմանէ ի նորա կամս:

ԳԼՈՒԽ Գ.

ԿԺԲ. Զայս գիտասջիր եթէ յաւուրս յետինս 1
եկեսցեն ժամանակք չարք. Զի եղիցին մարդիկ ան- 2
ձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք,
հայհոյիչք, անհաւանք ծնողաց, անշնորհք, ան-
սուրբք, Աննուէրք, անգութք, բանսարկուք, անժոյժք, 3
վէսք, անբարեսէրք, Մատնիչք, յանդգունք, ամբար- 4
հաւաճք, ցանկասէրք մանաւանդ քան աստուածա-
սէրք. Որ ունիցին զկերպարանս աստուածպաշտու- 5
թեան, եւ ի զօրութենէ անտի նորա ուրացեալ իցեն.
եւ խորշեսջիր ի նոցանէ: Զի ի նոցանէ են՝ որ մտա- 6
նեն տանէ ի տուն, եւ գերեն զկանայս շեղջակուտեալս
մեղօք՝ վարեալս ի պէսպէս ցանկութիւնս. Որ յամե- 7
նայն ժամ ուսանին, եւ երբեք ի գիտութիւն ճշմար-
տութեան ոչ հասանեն: Այլ որպէս Յանէս եւ 8
Յամբրէս հակառակ կացին Մովսիսի, նոյնպէս եւ
սոքա հակառակ կան ճշմարտութեանն. մարդք ապա-
կանեալք մտօք, անպիտանք ի հաւատս: Այլ ոչ եր- 9
բեք գայցեն յառաջ ի լաւ անդր. քանզի անմտու-

թիւն սոցա յայտնի լինիցի ամենեցուն, որպէս եւ
նոցայն իսկ եղեւ։
10 Այլ դու զհետ եկիր վարդապետութեան իմոյ,
առաջնորդութեան, յօժարութեան, հաւատոյ, եր-
11 կայնմտութեան սիրոյ, համբերութեան, հալածա-
նաց, չարչարանաց. որպիսիք եղեն ինձ յԱնտիոք եւ
յԻկոնիոն եւ ի Լիւստրիս, որպիսի հալածանաց
12 համբերի, եւ յամենայնէ փրկեաց զիս Տէր։ Եւ ամե-
նեքին՝ որ կամիցին աստուածպաշտութեամբ կեալ
13 ի Քրիստոս Յիսուս, ի հալածանս կացցեն։ Այլ
մարդք չարք եւ կախարդք յառաջ եկեսցեն ի չար
14 անդր. մոլորեալք եւ մոլորեցուցանիցեն։ Այլ դու
հաստատուն կաց՝ յոր ուսարդ եւ հաւատարիմ
15 եղեր. գիտես ուստի ուսար. Զի ի մանկութենէ
զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել
զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատոցն՝ որ ի Քրիս-
տոս Յիսուս։
16 ԺԶ. Ամենայն գիրք աստուածաշունչք եւ օգ-
տակարք, ի վարդապետութիւն են եւ ի յանդիմանու-
թիւն եւ յուղղութիւն եւ ի խրատ արդարութեան.
17 Զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ յամենայն
գործս բարութեան հաստատեալ։

ԳԼՈՒԽ Դ.

1 Զայս վկայութիւն դնեմ առաջի Աստուծոյ
եւ Յիսուսի Քրիստոսի՝ որ դատելոց է զկենդանիս
եւ զմեռեալս ի յայտնութեան իւրում եւ յարքայու-
2 թեան. Եւ դու քարոզեա զբանն, հաս ի վերայ ժա-
մու եւ տարաժամու, յանդիմանեա, սաստեա, մխի-
թարեա ամենայն երկայնմտութեամբ եւ վարդապե-
3 տութեամբ։ Քանզի եկեսցէ ժամանակ, զի ողջմտու-
թեան վարդապետութեանն ոչ անսայցեն. այլ ըստ
իւրաքանչիւր ցանկութեանց կուտեսցեն իւրեանց վար-
4 դապետս ըստ մարմաջելոյ լսելեաց իւրեանց. Եւ ի

ճշմարտութենէ անտի դարձուցանիցեն զլսելիս, եւ
յառասպելս կործանեսցին: Այլ դու զուարթ կաց 5
յամենայնի, ճգնեաց, զգործս աւետարանչի գործեա,
զպաշտօնդ քո կատարեալ կալ: Զի ես այսուհետեւ 6
նուիրեալ եմ եւ ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ:
Զբարւոք պատերազմ պատերազմեցայ, զընթացսն 7
կատարեցի, զհաւատսն պահեցի: Այսուհետեւ կայ 8
մնայ ինձ արդարութեան պսակն, զոր հատուսցէ
ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր. ոչ
միայն ինձ, այլ եւ ամենեցուն՝ որ սիրեցին զյայ-
տնութիւն նորա:

ՁԶ. Փութասջիր գալ առ իս վաղվաղակի. Զի 9
Դեմաս եթող զիս եւ սիրեաց զաշխարհ, եւ գնաց
ի Թեսաղոնիկէ. Կրեսկէս՝ ի Գաղղիա, Տիտոս ի 10
Դաղմատիա. Ղուկաս միայն է ընդ իս: Զմարկոս 11
առեալ ընդ քեզ ածցես, զի է ինձ պիտանի ի սպա-
սաւորութիւն: Զտիւքիկոս առաքեցի յԵփեսոս: 12
Զփելոնն թողի ի Տրովադայ առ Կարպոսի. յորժամ 13
գայցես, բերջիր եւ զգիրսն, մանաւանդ զմատեանսն:
Աղեքսանդրոս բազում չարչարանս եցոյց ինձ. հա- 14
տուսցէ նմա Տէր ըստ գործս նորա. Յորմէ եւ դու 15
անձնապահ լինիջիր. զի շատ հակառակ եկաց բանից
մերոց: Յառաջնումն ատենին ոչ ոք ինձ ի թիկունս 16
եկաց, այլ ամենեքին թողին զիս. մի համարեսցի նո-
ցա այն: Այլ Տէր օգնեաց ինձ եւ զօրացոյց զիս, 17
զի ինեւ քարոզութիւնն հաստատեսցի, եւ լուիցեն
ամենայն հեթանոսք. եւ ապրեցայ ես ի բերանոյ
առիւծուն: Փրկեսցէ զիս Տէր յամենայն գործոց 18
չարաց եւ զերծուսցէ զիս յարքայութիւն իւր՝ որ
յերկինս է. որում փառք յաւիտեանս յաւիտենից.
ամէն: Ողջոյն տաջիր Պրիսկեայ եւ Ակիւղեայ եւ 19
Ոնեսիփորայ տանն: Երաստոս մնաց ի Կորնթոս: 20
Զտրոփիմոս թողի ի Մելիտոս հիւանդացեալ: Փու- 21
թասջիր յառաջ քան զձմեռն գալ: Ողջոյն տան

քեզ Եւբուղոս եւ Պուդէս եւ Ղինոս եւ Կղաւդիա
22 եւ եղբարք ամենեքեան։ Տէր Յիսուս Քրիստոս ընդ
ոգւոյդ քում։ Շնորհք ընդ քեզ։

Առ Տիմոթէոս երկրորդ թուղթն, որ էր Եփեսացւոց եկեղեցւոյն եպիսկոպոս առաջին ձեռնադրեալ, գրեցաւ ի Հռոմէ, յորժամ երկրորդ անգամ եկաց յատենի Պաւղոս առաջի Ներոնի կայսեր Հռոմայ։

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՏԻՏՈՍ

ԳԼՈՒԽ Ա.

*ՊԱՒՂՈՍ ծառայ Աստուծոյ եւ առաքեալ Յի- 1
սուսի Քրիստոսի, ըստ հաւատոց ընտրելոցն Աստու-
ծոյ, եւ ի գիտութիւն ճշմարտութեան՝ որ ըստ աս-
տուածպաշտութեանն է. Յուսով կենացն յաւիտե- 2
նից, զոր խոստացաւ անսուտն Աստուած յառաջ
քան զժամանակս յաւիտենից. Բայց յայտնեաց իւ- 3
րովք ժամանակօք զբանն իւր քարոզութեամբ, որոյ
եղէ ես հաւատարիմ ըստ հրամանի փրկչին մերոյ
Աստուծոյ: Տիտոսի որդւոյ սիրելւոյ ըստ հասարակաց 4
հաւատոց, շնորհք եւ խաղաղութիւն յԱստուծոյ
Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ փրկչէ մեր-
մէ: Վասն այնորիկ իսկ թողի զքեզ ի Կրետէ, զի որ 5
ինչ միանգամ պակաս իցէ՝ ուղղեսցես, եւ կացուս-
ցես ըստ քաղաքաց երիցունս, որպէս եւ ես քեզ
պատուիրեցի: Եթէ ոք անարատ իցէ, միոյ կնոջ այր, 6
որդեակս ունիցի հաւատացեալս, եւ ոչ յամբաստա-
նութիւն անառակութեան կամ անհնազանդս: Զի 7
պարտ է եպիսկոպոսին անարատ լինել՝ որպէս եւ Աս-
տուծոյ տնտեսի. մի՛ յանդուգն, մի՛ բարկացող, մի՛
թշնամանող, մի՛ հարկանող, մի՛ զօշաքաղ. Այլ հիւ- 8
րասէր, բարեսէր, ցած, արդար, սուրբ, ժուժկալ.*

9 Վերակացու լինել հաւատարիմ բանին վարդապե-
տութեան, զի կարող իցէ եւ մխիթարել ողջմտու-
թեամբ վարդապետութեանն եւ զհակառակորդսն
10 կշտամբել: Քանզի բազումք են անհնազանդք, զրա-
խօսք եւ մտախաբք, մանաւանդ որ ի թլփատութենէ
11 անտի են, Զորս պարտ է ըմբերանել, որք զամենայն
տունս կործանեն, եւ ուսուցանեն՝ զոր չէ արժան,
վասն զօշաքաղութեան:
12 ԺԹ. Ասաց ոմն ի նոցանէ, իւրեանց իսկ մար-
գարէ, Կրետացիք հանապազասուտք, չարաճճիք,
13 դատարկապորտք: Եւ ստոյգ է վկայութիւնս այս.
վասն որոյ կշտամբեսցես զնոսա խստագոյնս, զի ա-
14 ռողջասցին ի հաւատս. Եւ մի հայեսցին ի հրէական
առասպելս եւ ի պատուէրս մարդկան զառածելոցն ի
15 ճշմարտութենէ: Ամենայն ինչ սուրբ է սրբոց, բայց
պղծոցն եւ անհաւատից ոչ ինչ է սուրբ. այլ
16 պղծեալ են միտք եւ խորհուրդք նոցա: Խոստանան
գիտել զԱստուած, եւ գործովք իւրեանց ուրանան.
պիղծք եւ անհաւանք, եւ յամենայն գործս բարեաց
անպիտանք:

ԳԼՈՒԽ Բ.

1 Այլ դու խօսեաց որ ինչ վայելէ ողջամիտ վար-
2 դապետութեանդ: Ծերոց զգաստս լինել, պար-
կեշտս, ցածունս, ողջամիտս ի հաւատս, ի սէր, ի
3 համբերութեան, ի ժուժկալութեան: Պառաւանց
նոյնպէս ի զգաստութեան, ի սուրբ վայելչութեան.
4 մի՛ բանսարկուս, մի՛ գինեմոլս, այլ բարեխրատս. Զի
զգաստացուսցեն զմանկամարդսն՝ այրասէրս լինել, որ-
5 դեսէրս, Ցածունս, սուրբս, տնարարս, բարեգործս,
հնազանդս իւրեանց արանց. զի մի՛ բանն Աստուծոյ
6 եւ վարդապետութիւնն հայհոյեսցի: Զերիտասարդս
7 նոյնպէս աղաչեսջիր ցածունս լինել, Ամենեցուն զանձն
օրինակ կացուցանել՝ գործոց բարութեան, վարդա-

պետութեամբ զանեղծութիւն ունել, զսրբութիւն,
զպարկեշտութիւն, Զբանն ողջմտութեան, անպար- 8
սաւ լինել. զի որ հակառակորդն իցէ՝ յամօթ լիցի,
եւ մի՛ ինչ ունիցի ասել զմէնջ չարութիւն: Ծա- 9
ռայից՝ իւրեանց տերանց հնազանդ լինել եւ հաճոյս
յամենայնի, մի՛ հակառակողս, Մի՛ հատուս. այլ 10
զամենայն հաւատս ցուցանել բարութեամբ, զի
զվարդապետութիւն փրկչին մերոյ Աստուծոյ զարդա-
րեսցեն յամենայնի:

ՎԵՐՋ. Քանզի երեւեցաւ շնորհն Աստուծոյ 11
փրկիչ ամենայն մարդկան, Որ խրատէն զմեզ՝ զի ու- 12
րացուք զամբարշտութիւն եւ զաշխարհական ցան-
կութիւնս. զգաստութեամբ եւ արդարութեամբ եւ
աստուածպաշտութեամբ կեցցուք յաշխարհի. Եւ 13
ակն կալցուք երանելի յուսոյն եւ յայտնութեան փա-
ռաց մեծին Աստուծոյ եւ փրկչին մերոյ Յիսուսի
Քրիստոսի. Որ ետ զանձն վասն մեր, զի փրկեսցէ 14
զմեզ յամենայն անօրէնութենէ, եւ սրբեսցէ իւր
ժողովուրդ սեպհական՝ նախանձաւոր գործոց բարու-
թեան: Զայդ խօսեաց, եւ մխիթարեա եւ յանդի- 15
մանեա ամենայն սաստիւ. զի մի՛ ոք իցէ, որ զքեզ
արհամարհիցէ:

ԳԼՈՒԽ Գ.

ՁԶ. Եւ յուշ արասջիր նոցա իշխանութեանց 1
եւ պետութեանց հնազանդ լինել եւ հպատակ կալ,
եւ ամենայն գործոց բարութեան պատրաստ գտա-
նել. Մի՛ զոք հայհոյել, անկռիւս լինել, հեզս, զա- 2
մենայն ցածութիւն առ ամենայն մարդիկ ցուցանել:
Զի էաք երբեմն եւ մեք անմիտք, անհաւանք, մո- 3
լորեալք, ծառայէաք ցանկութեանց եւ պէսպէս անա-
ռակութեանց. չարութեամբ եւ նախանձու շրջէաք,
ատեցեալք եւ զմիմեանս ատէաք: Իսկ յորժամ քաղ- 4
ցրութիւն եւ մարդասիրութիւն փրկչին մերոյ Աս-

5 տուծոյ յայտնեցաւ, Ոչ ի գործոց արդարութեան՝
զոր արարաք մեք, այլ ըստ իւրում ողորմութեանն՝
ապրեցոյց զմեզ ի ձեռն աւազանին միւսանգամ
6 ծննդեանն, եւ նորոգութեամբ Հոգւոյն սրբոյ. Զոր
եհեղ ի մեզ առատութեամբ, ի ձեռն Յիսուսի
7 Քրիստոսի փրկչին մերոյ. Զի արդարացեալք շնոր-
հօքն՝ եղիցուք ժառանգաւորք յուսով կենացն յաւ-
8 իտենականաց: Հաւատարիմ է բանս, եւ ի սոյն կա-
միմ զքեզ հաստատուն լինել, զի փոյթ արասցեն գոր-
ծոց բարեաց վերակացու լինել հաւատացելոցն յԱս-
9 տուած, զի այն է բարի եւ օգտակար մարդկան: Այլ
զյիմարութեան խնդիրս եւ զտոհմաթիւս եւ զհեռ
եւ զօրինական կռիւսն ի բաց մերժեսջիր. զի անօ-
10 գուտք են եւ սնոտիք: Յառնէ հերձուածողէ յետ
11 մի անգամ եւ երկիցս խրատելոյ՝ հրաժարեսջիր. Գի-
տասջիր զի թիւրեալ է այնպիսին, եւ մեղանչէ՝ ան-
12 ձամբ զանձն դատապարտեալ: Այլ յորժամ յղեցից
առ քեզ զԱրտեմայ կամ զՏիւքիկոս, փութասջիր
գալ առ իս ի Նիկոպօլիս. զի անդ եդի ի մտի ձմե-
13 րել: Եւ զԶենոն զօրինական դպիր եւ զԱպողոս՝
փութով արձակեսջիր, զի մի՛ ինչ պակասիցէ նոցա:
14 Ուսցին եւ մերքն եւս բարեաց գործոց վերակացու
լինել ի պէտս կարեւորս, զի մի՛ անպտուղք լինիցին:
15 Ողջոյն տան քեզ որ ընդ իս են ամենեքին: Ողջոյն
տուր սիրելեաց մերոց հաւատովք: Շնորհք ընդ
ձեզ ամենեսին. ամէն:

Առ Տիտոս Կրետացւոց եկեղեցւոյն առաջին ձեռնադրեալ
եպիսկոպոսի, գրեցաւ ի Նիկոպօլէ Մակեդոնացւոց:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ՓԻԼԻՄՈՆ

ՊԱՒՂՈՍ կապեալ Յիսուսի Քրիստոսի, եւ 1
Տիմոթէոս եղբայր, Փիլիմոնի սիրելւոյ եւ գործա-
կցի մերոյ, Եւ Ապփեայ քեռ, եւ Արքիպպեայ զի- 2
նուորակցի մերոյ եւ առտնին եկեղեցւոյդ: Շնորհք 3
ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ հօրէ մերմէ
եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Գոհանամ 4
զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ յիշատակեալ յա-
ղօթս իմ վասն քո, Իբրեւ լսեմ զքո հաւատսն եւ 5
զսէր, զոր ունիս առ Տէր Յիսուս եւ առ ամենայն
սուրբս: Զի հաղորդութիւն հաւատոցն քոց արդոյ 6
լինիցի գիտութեամբ ամենայն բարութեան, որ ի ձեզ
է ի Քրիստոս Յիսուս: Խնդութիւն յոյժ ընկալայ 7
եւ մխիթարութիւն ի վերայ սիրոյն քո, զի գութք
սրբոց քեւ հանգուցեալ են, եղբայր: Վասն որոյ 8
բազում համարձակութիւն ունիմ ի Քրիստոս հրա-
մանն տալ քեզ զարժանն Վասն սիրոյ. մանաւանդ 9
թէ աղաչեմ իսկ այնպիսի լինել, որպէս եւ Պաւղոս
ծերացեալ, արդ եւ կապեալ եւս Յիսուսի Քրիս-
տոսի: Աղաչեմ զքեզ վասն որդւոյ իմոյ՝ զոր ծնայ ի 10
կապանս իմ, զՈնեսիմոս, Որ երբեմն անպիտան էր 11
քեզ, բայց արդ քեզ եւ ինձ պիտանի. Զոր յղեցի 12
առ քեզ: Եւ դու զդա ընկալջիր, այսինքն է զիմ ա-
ղիս: Զոր կամէի առ իս արգելուլ, զի ընդ քո ունի- 13

14 ցի ինձ սպաս ի կապանս աւետարանին. Բայց առանց
քո կամաց ոչ ինչ կամեցայ առնել, զի մի՛ բարիքդ քո
15 ի հարկէ լինիցին, այլ կամաւ: Եւ թերեւս վասն
այնորիկ մեկնեցաւ առ ժամանակ մի, զի յաւիտեան
16 ունիցիս զդա, Մի՛ եւս իբրեւ զծառայ, այլ ի վեր
քան զծառայ, իբրեւ զեղբայր սիրելի. եւ եթէ ինձ
այսպէս, ո՛րչափ եւս առաւել քեզ մարմնով եւ տե-
17 ռամբ: Եթէ զիս քեզ հաղորդ համարիցիս, ընկալ
18 զդա իբրեւ զիս: Եւ եթէ յանցուցեալ ինչ իցէ
19 կամ պարտիցի, զայն ինձ համարեաց: Ես Պաւղոս
գրեցի իմով ձեռամբ. ես հատուցից, զի մի՛ ասի-
20 ցեմ քեզ՝ թէ եւ դու զանձն քո ինձ պարտիս: Այո,
եղբայր, ես քո փոխանակ եղէց ի Տէր. հանգո զա-
21 ղիսդ իմ ի Քրիստոս: Յուսացեալ ի հնազանդու-
թիւնդ քո, գրեցի առ քեզ. քանզի գիտեմ թէ ա-
22 ռաւել քան զոր ասեմդ՝ առնիցես: Միանգամայն եւ
պատրաստեսջիր ինձ վանս. քանզի յուսամ եթէ ա-
23 ղօթիւք ձերովք շնորհեցայց ձեզ: Ողջոյն տայ ձեզ
24 Եպափրաս գերեկից իմ ի Քրիստոս Յիսուս. Եւ
Մարկոս եւ Արիստարքոս եւ Դեմաս եւ Ղուկաս
25 գործակիցք իմ: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի ընդ ոգւոյդ ձերում. ամէն:

Առ Փիլիմոն եւ առ Ապփիա տեարս Ոնեսիմոսի, եւ առ Արքիպպոս սարկաւագ Կողոսացւոց եկեղեցւոյն, գրեցաւ ի Հռոմէ ի ձեռն Ոնեսիմոսի ծառայի:

ԹՈՒՂԹ

ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌ ԵԲՐԱՅԵՑԻՍ

ԳԼՈՒԽ Ա.

ԵՒ. ԲԱԶՈՒՄ մասամբք եւ բազում օրինա- 1
կօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մար-
գարէիւք. ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ 2
մեզ Որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի, որով եւ
զյաւիտեանսն արար. Որ է լոյս փառաց եւ նկարա- 3
գիր էութեան նորա. որ կրէ զամենայն բանիւ զօրու-
թեան իւրոյ. սրբութիւն մեղաց մերոց արարեալ՝
նստաւ ընդ աջմէ մեծութեանն ի բարձունս: Այն- 4
չափ առաւել եղեալ քան զհրեշտակս, որչափ յաւ-
եւս քան զնոսա անուն ժառանգեաց: Քանզի ցո՞ եր- 5
բեք ասաց ի հրեշտակաց. Որդի իմ ես դու, ես այս-
օր ծնայ զքեզ. եւ դարձեալ թէ Ես եղէց նմա ի
հայր, եւ նա եղիցի ինձ յորդի: Այլ յորժամ միւս- 6
անգամ մուծցէ զանդրանիկն յաշխարհ, ասէ. Եր-
կիր պագցեն նմա ամենայն հրեշտակք Աստուծոյ:
Այլ առ հրեշտակսն ասէ. Որ արար զհրեշտակս իւր 7
հոգիս, եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ: Իսկ ցոր- 8
դին ասէ. Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւի-
տենից. գաւազան ուղղութեան, գաւազան արքայու-
թեան քո. Սիրեցեր զարդարութիւն եւ ատեցեր զա- 9
նօրէնութիւն. վասն այսորիկ օծ զքեզ Աստուած,

Աստուած քո իւղով ուրախութեան առաւել քան
10 զընկերս քո. Եւ դու Տէր ի սկզբանէ զերկիր հաս-
11 տատեցեր, եւ գործք ձեռաց քոց երկինք են. Նոքա
կորնչին, եւ դու կաս եւ մնաս. ամենեքեան իբրեւ
12 զձորձս մաշեսցին, Եւ իբրեւ զվերարկուս. գալարես-
ցես զնոսա իբրեւ զհանդերձ, եւ գալարեսցին. բայց
13 դու նոյն իսկ ես, եւ ամք քո ոչ պակասեն: Յո՞ եր-
բեք ասաց ի հրեշտակաց. Նիստ ընդ աջմէ իմմէ՝
մինչեւ եդից զթշնամիս քո պատուանդան ոտից
14 քոց: Ո՞չ ապաքէն ամենեքեան հոգիք են հարկաւորք,
որ առաքին ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ
ժառանգելոցն են զփրկութիւն:

ԳԼՈՒԽ Բ.

1 ԾԹ. Վասն այնորիկ պարտ է մեզ առաւել եւս
ունկնդիր լինել բանիցն ասացելոց, զի մի՛ երբեք նու-
2 ազեսցուք: Զի եթէ որ ի ձեռն հրեշտակաց խօսե-
ցաւ բանն՝ հաստատուն եղեւ, եւ ամենայն յանցա-
ւորութիւն եւ անհնազանդութիւն ընկալաւ զպա-
3 տիժ պատուհասի. Մե՛ք զիա՞րդ ապրեսցուք հեղ-
գացեալք յայնպիսի փրկութենէ, որ սկիզբն առ խօ-
սելոյ ի Տեառնէ, եւ ի ձեռն այնոցիկ որ լուանն՝ ի
4 մեզ հաստատեցաւ. Վկայեալ յԱստուծոյ նշանօք
եւ արուեստիւք եւ պէսպէս զօրութեամբք, եւ մա-
5 սամբք Հոգւոյն սրբոյ ըստ իւրոց կամաց: Զի ոչ ե-
թէ հրեշտակաց հնազանդեցոյց զհանդերձեալ աշ-
6 խարհն, վասն որոյ մեքս խօսիմք: Վկայեաց ոք ու-
րեք եւ ասէ. Զի՞նչ է մարդ եթէ յիշեսցես զնա,
7 կամ որդի մարդոյ թէ այց առասցես նմա: Փոքր մի
խոնարհ արարեր զնա քան զհրեշտակս. փառօք եւ
պատուով պսակեցեր զնա, եւ կացուցեր զնա ի վե-
8 ձեռակերտաց քոց: Զամենայն ինչ հնազանդ արա-
րեր ի ներքոյ ոտից նորա: Արդ ի հնազանդեցուցա-
նելն զամենայն, ոչ ինչ եթող անհնազանդ ի նմա-

նէ. բայց այժմ ոչ եւս տեսանեմք հնազանդեալ նմա
զամենայն։ Այլ զփոքր մի խոնարհեալ քան զհրեշ- 9
տակս տեսանեմք զՅիսուս վասն չարչարանաց մահուն,
փառօք եւ պատուով պսակեալ. զի շնորհօքն Աս-
տուծոյ վասն ամենեցուն զմահ ճաշակեսցէ։ Զի 10
վայելէր իսկ նմա, վասն որոյ ամենայն եւ որով ա-
մենայն, բազում որդիս ի փառս ածել եւ զառա-
ջնորդ փրկութեան նոցա չարչարանօք կատարել։
ՎԵՐՋ. Զի որ սրբէն եւ որ սրբին՝ ի միոջէ էին 11
ամենեքեան, վասն որոյ ոչ ամօթ համարի եղբարս
անուանել զնոսա եւ ասել. Պատմեցից զանուն քո 12
եղբարց իմոց, ի մէջ եկեղեցւոյ օրհնեցից զքեզ։ Եւ 13
դարձեալ՝ թէ Ես եղէց յուսացեալ ի նա. եւ դար-
ձեալ՝ Ահաւասիկ ես եւ մանկունք իմ, զոր ետ ինձ
Աստուած։ Արդ որովհետեւ մանկունք հաղորդեսցին 14
արեան եւ մարմնոյ, եւ ինքն իսկ մերձաւորութեամբ
կցորդ եղեւ նոցունց. զի մահուն իւրով խափա-
նեսցէ զայն, որ զիշխանութիւն մահուն ունէր, այս
ինքն է՝ զսատանայ. Եւ ապրեցուսցէ զայնոսիկ, որ 15
մահուն երկիւղիւ հանապազ կէին վտարանդեալք ի
ծառայութիւն։ Քանզի ոչ երբեք զհրեշտակաց բուռն 16
հարկանէ, այլ զզաւակէն Աբրահամու բուռն հար-
կանէ։ Ուստի պարտ իսկ էր նմա ամենայնիւ եղբարց 17
նմանել. զի ողորմած լինիցի եւ հաւատարիմ քա-
հանայապետ յաստուածակոյս կողմանէ անտի, առ ի
քաւելոյ զմեղս ժողովրդեանն։ Զի որով ինքն չար- 18
չարեցաւ զփորձ առեալ, կարող է եւ փորձանաւո-
րացն օգնական լինել։

ԳԼՈՒԽ Գ.

Ուստի, եղբարք սուրբք, երկնաւոր կոչմանն 1
բաժանորդք. նայեցարուք ընդ առաքեալն եւ ընդ քա-
հանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս
Քրիստոս. Որ հաւատարիմ է արարչին իւրոյ, որպէս 2

3 եւ Մովսէս յամենայն տան նորա։ Զի առաւել եւս
փառաց քան զՄովսէս արժանի եղեւ, որչափ առա-
ւել եւս պատիւ ունիցի քան զտունն՝ տանն առնելի։
4 Զի ամենայն տուն կազմի, յումէ կազմի. իսկ որ
5 զամենայն արար, Աստուած է։ Մովսէս հաւատարիմ
է յամենայն տան նորա իբրեւ զծառայ առ ի վկայու-
6 թենէ բանից ասացելոց։ Այլ Քրիստոս իբրեւ որ-
դի ի վերայ տան իւրոյ, որոյ տունն մեք իսկ եմք, մի-
այն թէ զհամարձակութիւն եւ զպարծանս յուսոյն
7 մինչեւ ի վախճան հաստատուն ունիցիմք։ Վասն ո-
րոյ այսպէս ասէ Հոգին սուրբ. Այսօր եթէ ձայնի
8 նորա լուիցէք, Մի խստացուցանէք զսիրտս ձեր ի-
բրեւ ի դառնութեանն յաւուրն փորձութեան յանա-
9 պատի, Ուր փորձեցին զիս հարքն ձեր. քննեցին զիս
10 եւ տեսին զգործս իմ զքառասուն ամ. Վասն
որոյ տաղտկացայ ազգաւն այնուիկ, եւ ասացի. միշտ
մոլորեալ են սրտիւք. եւ նոքա ոչ ծանեան զճանա-
11 պարհս իմ. Որպէս երդուայ ի բարկութեան իմում
թէ մտցեն ի հանգիստ իմ։

12 ԵԶ. Տեսէք, եղբարք, գուցէ երբեք լինիցի յու-
մեք ի ձէնջ սիրտ չար անհաւատութեան, ապստամբ
13 լինել յԱստուծոյ կենդանւոյ։ Այլ մխիթարեցէք
զմիմեանս զօրհանապազ մինչդեռ այսօրդ առաջի կայ.
զի մի՛ ոք խստասցի ի ձէնջ խաբէութեամբ մեղաց։
14 Քանզի բաժանորդք եղեաք Քրիստոսի. միայն թէ
զսկիզբն հաստատութեանն մինչեւ ի վախճան պինդ
15 կալցուք. Յասելն, Այսօր եթէ ձայնի նորա լուիցէք՝
մի՛ խստացուցանէք զսիրտս ձեր որպէս ի դառնու-
16 թեանն։ Քանզի ոմանք լուան եւ դառնացուցին, այլ
ոչ ամենեքեան՝ որ ելեալ էին յԵգիպտոսէ ի ձեռն
17 Մովսիսի։ Յումէ՞ տաղտկացաւ զքառասուն ամ. ո՞չ
ապաքէն ի յանցուցելոցն, որոց ոսկերքն անկան յա-
18 նապատի անդ։ Ո՞ւմ երդուաւ չմտանել ի հանգիստն

իւր, եթէ ոչ անհաւատից: Եւ տեսանեմք, զի ոչ 19
կարացին մտանել վասն անհաւատութեանն:

ԳԼՈՒԽ Դ.

Երկիցուք այսուհետեւ գուցէ ի թողուլ զաւե- 1
տիսն, ի մտանելոյ ի հանգիստն նորա գտանիցի ոք ի
ձէնջ նուազեալ: Քանզի եմք աւետարանեալք, որ- 2
պէս եւ նոքայն. այլ նոցա ոչ ինչ օգնեաց լուր բա-
նին, չամոքելոցն ի հնազանդութիւն հաւատոց: Այլ 3
մեք մտանեմք ի հանգիստն, որք հաւատացաքս. որ-
պէս եւ ասացն թէ որպէս երդուայ ի բարկութեան
իմում թէ մտցեն ի հանգիստ իմ. թէպէտ եւ ար-
գիւնքն ի սկզբանէ աշխարհի լեալ էին: Քանզի ասէ 4
ուրեք վասն աւուրն եօթներորդի այսպէս. Եւ հան-
գեաւ Աստուած յաւուրն եօթներորդի յամենայն
գործոց իւրոց: Եւ աստ դարձեալ ասէ՝ թէ մտցեն ի 5
հանգիստ իմ: Եւ արդ քանզի արգելան ոմանք մտա- 6
նել ի նա, եւ որք յառաջագոյն աւետարանեալն էին՝
չմտին վասն անհաւատութեանն. Դարձեալ այլ օր 7
սահմանէ զայսօրն Դաւթի, եւ ասէ՝ յետ այնչափ
ժամանակաց, որպէս յառաջագոյն ասաց, Այսօր եթէ
ձայնի նորա լուիցէք՝ մի խստացուցանէք զսիրտս ձեր:
Զի եթէ զնոսա Յեսուայ հանգուցեալ էր, ապա 8
վասն այլոյ աւուր ոչ խօսէր յետ այնորիկ: Արդ ու- 9
րեմն նուազեալ է շաբաթումն ժողովրդեանն Աս-
տուծոյ: Զի որ եմուտ ի հանգիստն նորա, եւ նա 10
հանգեաւ յիւրոց գործոց անտի, որպէս եւ Աս-
տուած յիւրայոցն:

ՎԵՐՋ. փութասցուք այսուհետեւ մտանել յայն 11
հանգիստ. զի մի ոք ընդ նովին օրինակաւ անհաւա-
տութեանն անկանիցի: Զի կենդանի է բանն Աստու- 12
ծոյ եւ ազդող եւ հատու քան զամենայն սուր երկ-
սայրի, եւ անցանէ մինչեւ ցորոշումն շնչոյ եւ ոգւոյ
եւ յօդից եւ ուղղոյ, եւ քննիչ է մտաց եւ խորհրդ-

13 գոյ սրտից: Եւ չիք արարած աներեւոյթ յերեսաց
Նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի
14 աչաց Նորա՝ զորմէ մեր բանքս են: Ունիմք այսու-
հետեւ քահանայապետ մեծ անցեալ ընդ երկինս,
զՅիսուս զՈրդին Աստուծոյ. պինդ կալցուք զխոստո-
15 վանութիւնն: Քանզի ոչ եթէ ունիմք քահանայա-
պետ՝ որ չիցէ կարող չարչարակից լինել տկարու-
թեան մերոյ. այլ փորձ է ամենայնիւ ըստ նմանու-
թեան առանց մեղաց:
16 ԶԿ. Մատիցուք այսուհետեւ համարձակու-
թեամբ առաջի աթոռոյ շնորհացն Նորա. զի ընկալ-
ցուք զողորմութիւն, եւ գտցուք շնորհս ի դէպ ժա-
մանակի օգնականութեան:

ԳԼՈՒԽ Ե.

1 Զի ամենայն քահանայապետ ի մարդկանէ ա-
ռեալ՝ վասն մարդկան կայ յաստուածակոյս կողմն
անդր, զի մատուսցէ պատարագս եւ զոհս վասն մե-
2 ղաց: Զափով չարչարակից կարող է լինել տգիտաց
եւ մոլորելոց, քանզի եւ ինքն իսկ տկարութեամբ
3 զգածեալ է: Վասն այնորիկ հարկ է, որպէս վասն
ժողովրդեանն, նոյնպէս եւ ընդ անձին մատուցանել
4 պատարագ վասն մեղաց: Եւ ոչ եթէ անձամբ ոք
առնու պատիւ, այլ կոչեցեալն յԱստուծոյ, որպէս
5 եւ Ահարոն: Նոյնպէս եւ Քրիստոս ոչ եթէ անձին
ինչ շուք եդ լինել քահանայապետ, այլ որ խօսե-
ցաւն առ նա թէ Որդի իմ ես դու, ես այսօր ծնայ
6 զքեզ. Որպէս եւ ի միւսումն ասէ. Դու ես քահա-
7 նայ յաւիտեան ըստ կարգին Մելքիսեդեկի: Որ յա-
ւուրս մարմնոյ իւրոյ աղօթս եւ պաղատանս առ այն,
որ կարողն էր ապրեցուցանել զնա ի մահուանէ,
ուժգին գոչմամբ եւ արտասուօք մատուցանէր, եւ
8 լսելի լինէր առ լաւութեանն: Թէպէտ եւ Որդի է,
9 ուսաւ ի չարչարանաց անտի զհնազանդութիւն: Եւ

իբրեւ կատարեցաւ, եղեւ ամենայն հնազանդելոց
իւրոց պատճառք փրկութեանն յաւիտենից. Եւ ա- 10
նուանեցաւ յԱստուծոյ քահանայապետ յաւիտենից
ըստ կարգին Մելքիսեդեկի:
ԶԳ. Վասն որոյ բազում են մեզ բանք, եւ 11
դժուարապատում ի մեկնել. քանզի խօթամիտք
եղերուք լսելեօք: Փոխանակ զի պարտ էր ձեզ լինել 12
վարդապետս վասն ժամանակին, դարձեալ պիտոյ է
ձեզ ուսանել՝ թէ զինչ են նշանագիրք իսկզբան բա-
նիցն Աստուծոյ. եւ եղերուք կարօտք կաթին եւ ոչ
հաստատուն կերակրոյ: Զի ամենայն որ կաթնկեր 13
է՝ տգէտ է բանին արդարութեան, քանզի տղայ է:
Այլ կատարելոցն է հաստատուն կերակուր. որոց 14
վասն ի չափն հասանելոյ ճաշակելիքն կիրթ են ըն-
տրութեան բարւոյ եւ չարի:

ԳԼՈՒԽ Զ.

Վասն որոյ թողեալ զբան սկզբանն Քրիստոսի, 1
ի կատարումն եկեսցուք. մի՛ միւսանգամ արկանել
հիմն ապաշխարութեան ի մեռելոտի գործոց անտի,
եւ հաւատոցն որ յԱստուած, Եւ մկրտութեանցն 2
վարդապետութեան, եւ ձեռնադրութեան ձեռաց,
եւ յարութեան մեռելոց, եւ դատաստանին յաւի-
տենից: Եւ արդ արասցուք զայն, եթէ Աստուած 3
հրամայեսցէ: Քանզի անհնար է մի անգամ մկրտե- 4
լոցն, որ ճաշակեցին յերկնաւոր պարգեւացն, եւ
հաղորդք եղեն Հոգւոյն սրբոյ, Եւ զգեղեցիկ բանին 5
Աստուծոյ ճաշակս ճաշակեցին, եւ զզօրութիւնս
հանդերձելոյ աշխարհին, Եւ կործանեսցին, միւսան- 6
գամ նորոգել յապաշխարութիւն, եւ վերստին ի
խաչ հանել անձանց զՈրդին Աստուծոյ, եւ դարձեալ
խայտառակել: Քանզի երկիր՝ որ ըմպիցէ զանձրեւ 7
բազում անգամ եկեալ ի վերայ նորա, եւ ծնանիցի
արդիւնս շայեկանս նոցա՝ վասն որոյ գործիցին, ընդ-

8 ունի զօրհնութիւն յԱստուծոյ: Իսկ որ բերէ փուշ
եւ տատասկ, անպիտան է եւ մերձ յանէծս, եւ վախ-
ճան նորա յայրումն:
9 ԶԶ. Բայց համոզեալ եմք վասն ձեր, սիրե-
լիք, ի լաւ անդր եւ որ լին է փրկութեամբ. զի թէ-
10 պէտ եւ այսպէս խօսիմք, Ոչ եթէ անիրաւ ինչ է
Աստուած՝ մոռանալ զգործս ձեր եւ զսէրն՝ զոր ցու-
ցէք յանուն նորա, զի պաշտեցիք զսուրբսն եւ պաշ-
11 տէք: Եւ մեք ըղձանամք՝ զի իւրաքանչիւր ոք ի ձէնջ
զնոյն փոյթ ցուցանիցէ ի հաստատութիւն յուսոյն
12 մինչեւ ցվախճան. Զի մի՛ հեղգամիտք լինիցիք:
Նմանողք եղերուք այնոցիկ՝ որ հաւատովքն եւ եր-
13 կայնմտութեամբ ժառանգեցին զաւետիսն: Զի Ա-
բրահամու խոստացեալ զաւետիսն Աստուծոյ, քան-
14 զի յայլ ոք ի մեծ ոչ գոյր երդնուլ, Յանձն իւր եր-
դուաւ եւ ասէ. Այո՛, օրհնելով օրհնեցից զքեզ,
15 եւ բազմացուցանելով բազմացուցից: Եւ այնպէս
16 երկայնամիտ եղեալ՝ եհաս աւետեացն: Ապաքէն մար-
դիկ՝ որ ինչ ի վեր է քան զինքեանս, յայն երդնուն.
եւ ամենայն հակառակութեան նոցա վճիռ ի հաս-
17 տատութիւն, երդումն է: Որով առաւել եւս կա-
մեցեալ Աստուծոյ ցուցանել ժառանգաւորաց աւե-
տեացն զհաստատութիւն խորհրդոյն իւրոյ, միջնոր-
18 դեաց երդմամբ: Զի երկու անփոփոխելի իրօքն՝
որովք անհնարին է սուտ Աստուծոյ, հաստատուն
մխիթարութիւն ունիցիմք, որք ապաստան եղեաք
19 բուռն հարկանել զհանդերձեալ յուսոյն. Զոր ի-
բրեւ զխարիսխ հաստատուն եւ անշարժ ունիցիմք
անձանց մերոց, որ եւ մտանիցէ ի ներքին կողմն վա-
20 րագուրին, Ուր կարապետն մեր Յիսուս եմուտ վասն
մեր, ըստ կարգին Մելքիսեդեկի եղեւ քահանայա-
պետ յաւիտենից:

ԳԼՈՒԽ Է·

Քանզի այս Մելքիսեդեկ թագաւոր էր Սաղե- 1
մայ, քահանայ Աստուծոյ բարձրելոյ, որ եւ ընդ առաջ
Աբրահամու, յորժամ դարձեալ գայր ի կոտորածէ
թագաւորացն, եւ օրհնեաց զնա, Որում եւ տասա- 2
նորդս յամենայնէ ետ Աբրահամ: Նախ թարգմանի
թագաւոր արդարութեան, ապա թագաւոր Սաղե-
մայ՝ որ է թագաւոր խաղաղութեան. Անհայր, ան- 3
մայր, չհամարեալ յազգս, որոյ ոչ սկիզբն աւուրց եւ
ոչ կատարած կենաց. նմանեալ Որդւոյ Աստուծոյ՝
կայ մնայ քահանայ մշտնջենաւոր: Արդ տեսէք որպի- 4
սի ոք էր սա, որում եւ Աբրահամ տասանորդս ետ
յաւարէ անտի՝ նահապետն: Եւ որք յորդւոցն Ղե- 5
ւեայ զքահանայութիւնն առնուն, պատուէր ունին
տասանորդել զժողովուրդն ըստ օրինացն, այսինքն է
զեղբարս իւրեանց. թէպէտ եւ ելեալ իցեն յերա-
նացն Աբրահամու: Իսկ չհամարեալն յազգս ի նոցա- 6
նէ՝ տասանորդեաց զԱբրահամ, եւ զնա՝ որոյ զաւե-
տիսն ընկալեալ էր, օրհնեաց: Զի առանց ամենայն 7
հակառակութեան, նուաղն ի լաւէ անտի օրհնեսցի:
Եւ աստ մարդք մահկանացուք տասանորդս առնուն, 8
բայց անդ վկայեցաւ թէ կենդանի է. եւ որպէս բա-
նից կարգ է ասել, թէ Աբրահամաւ եւ Ղեւի իսկ՝ 9
որ զտասանորդսն առնոյր, տասանորդեցաւ: Զի դեռ 10
եւս յերանս հօր իւրոյ էր՝ յորժամ ընդ առաջ եղեւ
նմա Մելքիսեդեկ:

ԷԿ· Իսկ արդ եթէ կատարումն ի ձեռն Ղեւ- 11
տացւոց քահանայութեանն էր, քանզի ժողովուրդն
յայն օրէնս դրեցաւ. զի՞նչ պիտոյ էր ըստ կարգին
Մելքիսեդեկի այլում քահանայի յառնել, եւ ոչ
ասել թէ ըստ կարգին Ահարոնի: Այլ ի փոփոխել 12
քահանայութեանն, հարկ էր եւ օրինացն փոփոխումն
լինել: Զի զորմէ այսպէսն ասի՝ յայլմէ ազգէ կալա- 13

հաղորդութիւն, յորմէ ոչ ոք երբեք եղեւ հաղորդ
14 սեղանոյն: Արդ յայտ իսկ է, թէ յազգէ Յուդայ ծա-
գեաց Տէր մեր, յորմէ ազգէ վասն քահանայից
15 Մովսէս ինչ ոչ ճառեաց: Եւ եւս առաւել յայտ է՝
թէ ըստ նմանութեան Մելքիսեդեկի յառնելոց է
16 այլ քահանայ, Որ ոչ ըստ մարմնաւոր պատուիրանին
եղեւ, այլ ըստ զօրութեան կենացն անվախճանից:
17 Քանզի վկայեցաւ, թէ Դու ես քահանայ յաւիտեան
18 ըստ կարգին Մելքիսեդեկի: Արհամարհութիւն լինէր
առաջին պատուիրանին՝ վասն նորին տկարութեանն
19 եւ անշահութեան: Քանզի ոչ ինչ կատարումն գոր-
ծեցին օրէնքն, եւ մուտ ազնուական յուսոյն՝ որով
20 մերձենամք առ Աստուած: Եւ այնչափ, զի ոչ ա-
ռանց երդման. զի են ոմանք՝ որ առանց երդման են
21 կացեալ քահանայք: Բայց սա երդմամբ ի ձեռն այ-
նորիկ՝ որ ասացն ի նա. Երդուաւ Տէր, եւ ոչ եւս
22 զղջասցի, դու ես քահանայ յաւիտեան: Եւ այնչափ
23 լաւագոյն ուխտի եղեւ երաշխաւոր Յիսուս: Եւ բա-
զում են կացեալ քահանայք՝ վասն մահու արգել
24 լինելոյ ի մշտնջենաւորել: Իսկ սա վասն յաւիտեան
կալոյ՝ առանց անցանելոյ ունի զքահանայութիւնն:
25 Ուստի եւ կենդանի առնել համօրէն կարող է զմա-
տուցեալսն նովաւ առ Աստուած. քանզի միշտ կեն-
դանի է՝ լինել բարեխօս վասն նոցա:

26 Ա. Զի այսպիսի իսկ եւ վայել էր մեզ քահա-
նայապետ, սուրբ, անմեղ, անարատ, զատեալ ի մե-
27 ղաւորաց, եւ բարձրացեալ քան զերկինս. Որում ոչ
հանապազ հարկ է, որպէս այլոց քահանայապետիցն
նախ վասն իւրեանց մեղացն պատարագս մատուցա-
նել եւ ապա վասն ժողովրդեանն. իսկ սա զայն միան-
գամայն կատարեաց, զի զանձն իւր մատոյց պատարագ:
28 Օրէնքն զմարդիկ կացուցանեն քահանայապետս զգա-
ծեալս տկարութեամբ. իսկ բանն երդման յետ օրի-
նացն՝ զորդի, որ յաւիտեան կատարեալ է:

ԳԼՈՒԽ Ը.

Եւ բանից գլուխ խօսիցս. այնպիսի ունիմք քա- 1
հանայապետ, որ նստաւ ընդ աջմէ մեծութեան
աթոռոյն յերկինս, Սրբութեանցն պաշտօնեայ, եւ 2
խորանին ճշմարտութեան, զոր Տէրն կանգնեաց, եւ
ոչ մարդ: Զի ամենայն քահանայապետ վասն մա- 3
տուցանելոյ զօհս եւ պատարագս կայ. ուստի հարկ
է եւ նմա ունել ինչ զոր մատուցանիցէ: Զի թէ էր 4
յերկրէ, թերեւս չէր իսկ քահանայ. զի գոյին՝ որ
մատուցանէին ըստ օրինացն պատարագ. Որք առակաւ 5
եւ օրինակաւ պաշտէին երկնաւորացն. որպէս եւ
հրամայեցաւ Մովսեսի՝ յորժամ գործելոց էր զվրան
ժամուն. Տեսջիր, ասէ, արասցես զամենայն ըստ օրի-
նակին՝ որ ցուցաւ քեզ ի լերինն: Բայց արդ առա- 6
տագոյն եւս պաշտաման եհաս Յիսուս, որչափ լաւա-
գոյն եւս ուխտի է միջնորդ՝ որ յառաւել աւետիսն
օրինադրեցաւ: Զի թէ առաջինն անարատ էր, ապա 7
երկրորդին տեղի ոչ խնդրէր: Նա աւանիկ բամբասէ 8
զնոսա եւ ասէ. Ահաւասիկ աւուրք եկեսցեն, ասէ
Տէր, եւ կատարեցից ի վերայ տանն Իսրայելի եւ ի
վերայ տանն Յուդայ՝ ուխտ նոր. Ոչ ըստ ուխտին՝ 9
զոր եդի ընդ հարս նոցա յաւուր յորում առի ի
ձեռն հանել զնոսա յերկրէն Եգիպտացւոց. եւ զի
նոքա ոչ կացին յուխտին իմում, եւ ես անփոյթ
արարի զնոցանէ, ասէ Տէր ամենակալ: Այլ այս է 10
ուխտն՝ զոր եդից տանն Իսրայելի յետ աւուրցն այնո-
ցիկ, ասէ Տէր. տաց զօրէնս իմ ի միտս նոցա, եւ ի
սիրտս նոցա գրեցից զնոսա. եւ եղէց նոցա Աստու-
ած, եւ նոքա եղիցին ինձ ի ժողովուրդ: Եւ ոչ եւս 11
ուսուցանիցեն իւրաքանչիւր զքաղաքակից իւր, եւ
իւրաքանչիւր զեղբայր իւր, եւ ասիցեն թէ ծանիր
զՏէր. զի ամենեքին ծանիցեն զիս ի փոքրկանց մին-
չեւ ի մեծամեծս նոցա: Զի քաւիչ եղէց անիրաւու- 12

թեանց նոցա. եւ զմեղս նոցա եւ զանօրէնութիւնս
13 այլ ոչ եւս յիշեցից: Ընդ ասելովն նոր, հնացոյց
զառաջինն. եւ որ հնանայն եւ ծերանայ՝ մերձ է յա-
պականութիւն:

ԳԼՈՒԽ Թ.

1 ՎԵՐՋ. Ունել ունէր եւ առաջինն իրաւունս
պաշտաման յայնժամ զաշխարհական սրբութիւնն:
2 Զի խորանն առաջին հանդերձեցաւ այսպէս. յորում
աշտանակն եւ սեղանն եւ հացն նուիրաց՝ որ Սրբու-
3 թիւնն կոչէր. Եւ յետ երկրորդ վարագուրին խո-
4 րանն՝ որ կոչէր Սրբութիւն սրբութեանց: Յորում
կայր բուրվառն ոսկի, եւ արկղն կտակարանաց պա-
տեալ ներքոյ եւ արտաքոյ ոսկւով. յորում սափորն
ոսկի լի մանանայիւ, եւ գաւազանն Ահարոնի՝ որ
5 ծաղկեցաւ, եւ տախտակք կտակարանացն. Եւ ի վե-
րայ նորա քերովբէքն փառաց՝ որ հովանի ունէին ի
վերայ քաւութեանն. վասն որոյ ոչ է այժմ ասել մի
6 ըստ միոջէ: Եւ այն ամենայն իբրեւ այնպէս հանդեր-
ձեալ կայր, յառաջին խորանն յամենայն ժամ մտա-
7 նէին քահանայքն զպաշտամունսն կատարել. Բայց
յերկրորդն մի անգամ ի տարւոջն քահանայապետն,
եւ զայն՝ ոչ առանց արեան, զոր մատուցանէր վասն
8 իւր եւ վասն ժողովրդեանն անգիտութեան: Զայս
ցուցեալ Հոգւոյն սրբոյ՝ մինչ չեւ յայտնեալ էր ճա-
նապարհի սրբութեանցն. քանզի դեռ առաջին խո-
9 րանն ունէր զհաստատութիւն. Որ է առակ ժամա-
նակին, որ առաջի կայր. յորում պատարագքն եւ
զոհք մատչէին, որք ոչ կարէին ըստ միտս կատա-
րել զպաշտօնեայսն. բայց միայն կերակրովք եւ ըմ-
10 պելեօք, Եւ պէսպէս մկրտութեամբք՝ մարմնոյ արդա-
րութիւնքն, որ մինչեւ ի ժամանակս ուղղութեանն ի
11 վերայ կային: Այլ Քրիստոս եկեալ քահանայապետ
հանդերձելոցն բարեաց՝ մեծաւն եւ կատարելով եւ

անձեռագործ խորանաւն, այսինքն է՝ որ ոչ յայսց ա-
րարածոց, Եւ ոչ արեամբ նոխազաց եւ զուարակաց. 12
այլ իւրով արեամբն եմուտ մի անգամ ի սրբու-
թիւնսն յաւիտենականս գտեալ զփրկութիւն: Զի 13
եթէ արիւն ցլուցն եւ նոխազացն եւ մոխիր երնջոցն
ցանեալ՝ զպղծեալսն սրբէր առ ի մարմնոյ սրբութենէ.
Որչափ եւս առաւել արիւնն Քրիստոսի, որ ի ձեռն 14
Հոգւոյն յաւիտենականի մատոյց զանձն անարատ պա-
տարագ Աստուծոյ, սրբեսցէ զխիղճ մտաց ձերոց ի
մեռելոտի գործոց անտի՝ պաշտել զԱստուած կեն-
դանի: Եւ վասն այնորիկ նորոյ ուխտիս է միջնորդ. 15
զի յորժամ մահ լինիցի՝ ի փրկութիւն վասն առա-
ջին ուխտին յանցանաց, զաւետիս առցեն հրաւի-
րեալքն ի ժառանգութիւն յաւիտենից: Քանզի ուր 16
կտակ է, հարկ է զմահ ի մէջ բերել զկտակագրին:
Զի կտակ յետ մահու հաստատուն է. ապա թէ ոչ՝ 17
զիա՞րդ լիցէ հաստատուն, մինչ կտակագիրն կենդանի
է: Ուստի եւ ոչ առաջինն առանց արեան նորոգէր: 18
Քանզի իբրեւ պատմեցան ամենայն պատուիրանք օ- 19
րինացն ի Մովսիսէ ժողովրդեանն, առեալ զարիւն
ցլուցն եւ նոխազացն, ջրով եւ բրդով, կարմրով եւ
զոպայիւ, զկտակարանօքն իսկ եւ զամենայն ժողովր-
դեամբն սրսկեաց, Եւ ասէ. Այս է արիւն կտակին՝ 20
զոր պատուիրեաց ձեզ Աստուած: Եւ զխորանաւն 21
եւ զամենայն կահիւ սպասուն նոյնպէս սրսկեաց զա-
րիւնն: Եւ գրեթէ ամենայն ինչ արեամբն սրբէր ըստ 22
օրինացն. եւ առանց հեղման արեան չլինէր թողու-
թիւն: Ապա հարկ էր օրինաւորացն այնպիսեօքն 23
սրբել. եւ բուն իսկ երկնաւորացն՝ առաւել եւս պա-
տարագօք քան զնոյնս: Զի ոչ եթէ ի ձեռագործ 24
սրբութիւնսն եմուտ Քրիստոս յօրինակս ճշմարտու-
թեանն. այլ ի բուն իսկ յերկինս, յանդիման լինել
երեսացն Աստուծոյ վասն մեր: Ոչ զի բազում ան- 25
գամ մատուցանիցէ զանձն պատարագ՝ որպէս քահա-

նայապետն, որ մտանէր ի սրբութիւն սրբութեանցն
26 ամի ամի արեամբն օտարաւ. Ապա թէ ոչ՝ պարտ էր
նմա բազում անգամ չարչարել ի սկզբանէ աշխար-
հի. բայց արդ աւասիկ մի անգամ ի կատարած յաւ-
իտեանց յանարգութիւն մեղաց իւրով պատարա-
27 գաւն յայտնեալ է: Եւ զոր օրինակ կայ մնայ մարդ-
կան մի անգամ մեռանել եւ յետ այնորիկ դատաս-
28 տան. Նոյնպէս եւ Քրիստոս մի անգամ մատուցեալ
պատարագ առ ի բառնալոյ զմեղս բազմաց. իսկ յեր-
կրորդումն առանց մեղաց յայտնեսցի այնոցիկ, որ
ակն ունիցին նմա հաւատովք ի փրկութիւն:

ԳԼՈՒԽ Ժ.

1 Բ. Քանզի զստուեր հանդերձելոց բարեացն ու-
նէին օրէնքն, եւ ոչ զնոյն կերպարանս իրացն. ամի
ամի զնոյն պատարագս մատուցանեն ցանգ, որք ոչ
2 են կարող զմատուցեալսն կատարել. Ապա թէ ոչ՝
դադարէին ի մատուցանելոյ, վասն եւ ոչ մի ինչ այ-
նուհետեւ խիղճ մնայր ունելոյ պաշտօնէիցն մի ան-
3 գամ սրբեցելոցն. Այլ անդէն ի նմին ի յիշատակս
4 մեղացն կային ամի ամի: Քանզի ոչ կարէր արիւն նո-
5 խազացն եւ ցլուցն բառնալ զմեղս: Վասն որոյ ի
մտանել իւրում յաշխարհ՝ ասէ. Զզոհս եւ զպա-
տարագս ոչ կամեցար, բայց մարմին հաստատեցեր
6 ինձ. Ընդ ողջակէզս եւ ընդ վասն մեղացն ոչ հա-
7 ճեցար: Յայնժամ ասացի թէ Ահաւասիկ եկի. ի
ճառս գրոց գրեալ է վասն իմ, առնել զկամս քո,
8 Աստուած: Վերագոյնն ասէ, թէ ընդ զոհս եւ ընդ
պատարագս եւ ընդ ողջակէզս եւ ընդ վասն մեղացն
ոչ հաճեցար, եւ ոչ կամեցար՝ որք ըստ օրինացն մատ-
9 չէին: Ապա ասէ՝ ահաւասիկ գամ առնել զկամս քո,
Աստուած. մերժէ զառաջինն, զի զերկրորդն հաս-
10 տատեսցէ. Որով կամօք եւ մեք սրբեցաք ի ձեռն
պատարագի մարմնոյն Յիսուսի Քրիստոսի մի անգամ:

Եւ ամենայն քահանայապետ կայ հանապազորդ ի 11
պաշտաման, եւ զնոյն պատարագս մատուցանէ բա-
զում անգամ, որք ոչ երբեք կարող են բառնալ
զմեղս: Իսկ սա զմին վասն մեղաց մատոյց պատարագ, 12
եւ մշտնջենաւոր նստաւ ընդ աջմէ Աստուծոյ: Եւ 13
այսուհետեւ ակն ունի մինչեւ դիցին թշնամիք իւր ի
ներքոյ ոտից իւրոց: Քանզի միով պատարագաւ կա- 14
տարեաց զսրբեալսն ի մշտնջենաւորս: Այլ վկայէ 15
մեզ եւ Հոգին սուրբ՝ յետ ասելոյն յառաջագոյն
եթէ Այս է ուխտն՝ զոր եդից ընդ հարս նոցա յետ 16
աւուրցն այնոցիկ, ասէ Տէր. տաց զօրէնս իմ ի
սիրտս նոցա, եւ ի խորհուրդս նոցա գրեցից զնոսա:
Ապա ասէ թէ Զմեղս նոցա եւ զանօրէնութիւնս այլ 17
ոչ եւս յիշեցից: Իսկ ուր թողութիւն է, ոչ եւս 18
պիտոյ է վասն մեղաց պատարագ:

ՎԵՐՋ· Ունիմք այսուհետեւ, եղբարք, համար- 19
ձակութիւն ի մուտս սրբութեանցն արեամբն Յիսու-
սի. Զոր նորոգեաց մեզ ճանապարհ նորոգ եւ կեն- 20
դանի ի ձեռն վարագուրին, այսինքն է մարմնոյ իւրոյ,
Եւ քահանայ մեծ ի վերայ տանն Աստուծոյ: Մա- 21
տիցուք ճշմարիտ սրտիւ, լրութեամբ հաւատոց, լու- 22
ացեալ զսիրտս ի խղճէ չարեաց, եւ մկրտեալ զմար-
մին ի ջուրն սրբութեան: Պինդ կալցուք զխոստովա- 23
նութիւն անշարժ յուսոյն, զի հաւատարիմ է որ
խոստացաւն: Եւ զգուշասցուք միմեանց յորդորմամբք 24
սիրոյ եւ գործոց բարեաց. Եւ մի թողցուք զժողովս 25
միմեանց, որպէս եւ սովոր են ոմանք. այլ մխիթա-
րեսցուք, եւ այնչափ եւս առաւել՝ որչափ տեսանի-
ցէք զօրն մերձեալ: Զի կամակար մեօք եթէ յան- 26
ցանիցեմք յետ ընդունելութեան գիտութեան ճշմար-
տութեանն, այնուհետեւ ոչ եւս պիտոյ է վասն մե-
ղաց պատարագ. Այլ ահեղ ակնկալութիւն դատաս- 27
տանին, եւ նախանձ հրոյն որ ուտիցէ զհակառա-
կորդսն: Արհամարհեալ ուրուք զօրէնսն Մովսիսի,

առանց ողորմութեանց առ երկուք կամ երիւք վկայիւք
29 *մեռանէր. Իսկ ո՞րչափ սաստիկ պատժոց արժանի հա-*
մարիցիք զայն որ զՈրդին Աստուծոյ առ ոտն եհար,
եւ զարիւն նորոյ ուխտին խառնակ համարեցաւ,
որով սրբեցաւն, եւ զՀոգին շնորհաց թշնամա-
30 *նեաց: Այլ գիտեմք զայն՝ որ ասացն. Իմ են վրէժ-*
խնդրութիւնք, եւ ես հատուցից, ասէ Տէր. եւ
31 *դարձեալ թէ Դատի Տէր զժողովուրդ իւր: Ահ մեծ*
է անկանել ի ձեռս Աստուծոյ կենդանւոյ:
32 *Արդ յիշեցէք զաւուրսն զառաջինս, յորս լու-*
սաւորեալք բազում ճգանց եւ չարչարանաց համբե-
33 *րէք. Մերթ ի նախատինս եւ ի նեղութիւնս խայ-*
տառակեալք, մերթ կցորդք այնպիսեաց վաստակա-
34 *ւորացն լինել: Քանզի եւ ընդ կապեալս չարչարեցա-*
րուք, եւ զյափշտակութիւն ընչից ձերոց խնդու-
թեամբ ընկալարուք. քանզի գիտէիք եթէ լաւագոյն
եւս ստացուածս ունիք անձանց յերկինս՝ ուր կանն
35 *եւ մնան: Արդ մի մերժէք ի ձէնջ զհամարձակու-*
թիւնն ձեր, յորում կայ մեծաց վարձուց հատու-
36 *ցումն: Պիտոյ է ձեզ համբերութիւն. զի զկամս Աս-*
37 *տուծոյ արարեալ՝ հասջիք աւետեացն: Զի փոքր*
միւս եւս քան որչափ, որ գալոցն իցէ՝ եկեսցէ եւ ոչ
38 *յամեսցէ: Զի արդարն իմ ի հաւատոց կեցցէ. եւ*
եթէ յերկմիտս ոք իցէ, ոչ հաճեսցի ընդ նա անձն
39 *իմ: Բայց մեք ոչ եթէ երկմտութեամբ եմք ի կո-*
րուստ. այլ հաւատովք ի փրկութիւն հոգւոց:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 *Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրաց*
հաստատութիւն, եւ յանդիմանութիւն որոց ոչն ե-
2 *րեւին: Զի նովաւ վկայեցան առաջինքն: Հաւատովք*
3 *իմանամք հաստատեալ զյաւիտեանսն բանիւ Աստու-*
4 *ծոյ, յաներեւութից զերեւելիսս եղեալ: Հաւա-*
տովք լաւ պատարագ Հաբէլ քան զԿայէն մատու-

ցանէր Աստուծոյ, Որով վկայեցաւ իսկ արդար լինել.
զի ի վերայ պատարագացն եղեւ վկայութիւն նմա
յԱստուծոյ. զի թէպէտ եւ մեռաւ ի նմին, սակայն
տակաւին խօսի: Հաւատովք Ենովք փոխեցաւ, զի 5
մի զմահ ճաշակեսցէ. եւ ոչ ուրեք գտանէր, քանզի
փոխեաց զնա Աստուած, եւ յառաջ քան զփոխելն
նորա՝ վկայեցաւ հաճոյ լինել Աստուծոյ: Բայց ա- 6
ռանց հաւատոց անհնար է հաճոյ լինել. այլ հաւա-
տալ արժան է այնմ որ մերձենայ առ Աստուած՝ թէ
է Աստուած, եւ որ խնդրեն զնա՝ լինի պարգեւա-
տու: Հաւատովք առեալ հրաման Նոյի, վասն չեւ 7
եւս երեւելեացն զահի հարեալ կազմէր զտապանն ի
փրկութիւն տան իւրոյ, որով դատեցաւ զաշխարհ,
եւ հաւատոյն արդարութեան եղեւ ժառանգաւոր:
Հաւատովք՝ որ Աբրահամն կոչեցաւ, ունկնդիր եղեւ 8
ելանել ի տեղին, զոր առնլոց էր ի ժառանգութիւն.
ել գնաց, եւ ոչ գիտէր յո՞ւր երթիցէ: Հաւատովք 9
պանդխտեցաւ յերկրին աւետեաց իբրեւ յօտարու-
թեան. խորանօք բնակեաց Իսահակաւ եւ Յակոբաւ
հանդերձ ժառանգակցօք նոյին աւետեաց: Քանզի 10
ակն ունէր հիմանց հաստատելոյ քաղաքին, որոյ
ճարտարապետ եւ արարիչ Աստուած է: Հաւատովք 11
եւ ինքն Սառա՝ որ ամուլն էր, զօրութիւն առնլոյ
զսերմն որդեծնութեան ընդունէր, եւ ի տարաժամ
հասակի ծնանէր. քանզի հաւատարիմ համարեցաւ
զայն՝ որ խոստացաւն: Վասն որոյ եւ ի միոջէն 12
ծնանէին, եւ այն՝ յանցեալ ժամանակի, իբրեւ զաս-
տեղս երկնից բազմութեամբ եւ իբրեւ զաւազ առ
ափն ծովու առանց թուոյ: Ըստ հաւատոց մեռան 13
ամենեքին սոքա, եւ չեւ եւս ընկալեալ զաւետիսն,
այլ ի հեռուստ տեսին զնոսա եւ ցնծացան, եւ խոս-
տովան եղեն թէ օտարք եւ պանդուխտք են յերկրի:
Զի որք զայնպիսին խօսին, յայտ առնեն թէ զա- 14
ւառ իմն խնդրեն: Զի եթէ զայն յիշէին՝ ուստի ե- 15

16 լինն, գոյր ժամանակ դառնալոյ անդրէն: Նա աւանիկ
աղնուականի իմն ցանկացեալ են, այս ինքն է եր-
կնաւորին. վասն որոյ ոչ համարի ամօթ Աստուած՝
կոչել նոցա Աստուած. քանզի պատրաստեաց նոցա
17 քաղաք: Հաւատովք մատոյց Աբրահամ ի փորձու-
թեան իւրում զԻսահակ պատարագ. եւ զմիամօրն
18 մատուցանէր, որոյ զաւետիսն ընկալեալ էր, Որում
19 ասացաւն թէ Իսահակաւ կոչեսցի քեզ զաւակ: Եդ
ի միտ իւրում, թէ եւ ի մեռելոց կարող է յարու-
ցանել Աստուած. ուստի եւ յառակս ընկալաւ զնա:
20 Հաւատովք վասն հանդերձելոց իրաց օրհնեաց Իսա-
21 հակ զՅակոբ եւ զԵսաւ: Հաւատովք Յակոբ ի
մեռանել իւրում զիւրաքանչիւր ոք յորդւոցն Յով-
սեփու օրհնեաց, եւ երկիր եպագ ի ծագ գաւազանի
22 իւրոյ: Հաւատովք Յովսէփ ի վախճանել իւրում յի-
շեաց զելս որդւոցն Իսրայելի, եւ վասն ոսկերաց իւ-
23 րոց պատուիրեաց: Հաւատովք զՄովսէս իբրեւ
ծնաւ, թաքուցաւ ամիսս երիս ի հարց իւրոց. քան-
զի տեսին կայտառ զմանուկն, եւ ոչ զանգիտեցին ի
24 հրամանէ թագաւորին: Հաւատովք Մովսէս իբրեւ
անձնեաց՝ ուրացաւ կոչել որդի դստերն Փարաւոնի:
25 Լաւ համարեցաւ չարչարել ընդ ժողովրդեանն Աս-
26 տուծոյ, քան առ ժամանակ մի վայելել ի մեղս: Կա-
րեւոր համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան
զմեծութիւն գանձուցն Եգիպտացւոց. զի հայեցեալ
27 ակն ունէր վարձուցն հատուցման: Հաւատովք թո-
ղոյր զերկիրն Եգիպտացւոց, եւ ոչ երկնչէր ի ցաս-
մանէ թագաւորին. զի զաներեւոյթն իբրեւ զտե-
28 սեալ համբերութեամբ համարեցաւ: Հաւատովք
արար զզատիկն եւ զհեղումն արեանն. զի մի սատա-
29 կիչն անդրանկաց մերձեսցէ ի նոսա: Հաւատովք
անցին ընդ ծովն կարմիր՝ իբրեւ ընդ ցամաք երկիր.
30 զորոյ զփորձ առեալ Եգիպտացւոցն՝ ընկղմեցան: Հա-
ւատովք պարիսպքն Երիքովի անկան, շուրջ եկեալ

զնոքօք զեօթն օր։ Հաւատով Րախաբ պոռնիկ ոչ 31
կորեաւ ընդ անհաւատսն, որոյ ընկալեալ էր զլրտեսսն
խաղաղութեամբ։ Եւ արդ զի՞նչ եւս ասացից. զի չէ 32
բաւական ժամանակս պատմելոյ վասն Գեդէոնի,
Բարակայ, Սամփսոնի, Յեփթայայ, Դաւթի եւ
Սամուելի եւ այլոց մարգարէից, Որք հաւատով 33
պարտեցին զթագաւորութիւնս, գործեցին զարդա-
րութիւն, հասին աւետեաց, խցին զբերանս առիւ-
ծուց, Շիջուցին զզօրութիւն հրոյ, ապրեցան ի բե- 34
րանոյ սրոյ, զօրացան ի տկարութենէ, եղեն զօրա-
ւորք ի պատերազմի, առին զբանակս օտարաց։ Ըն- 35
կալան կանայք ի յարութենէ զմեռեալս իւրեանց.
կէսք կոշկոճեցան, եւ չեւ եւս ընկալեալ զփրկու-
թիւն, զի լաւագոյն յարութեանն հասանիցեն։ Եւ 36
կէսք զտանջանաց եւ զգանից զփորձ առին, զկապա-
նաց եւ զբանտից։ Քարկոծեցան, սղոցեցան, փոր- 37
ձեցան, սպանմամբ սրոյ մեռան, շրջեցան լեշկմաշկօք
եւ մորթովք այծենեօք. կարօտեալք, նեղեալք, չար-
չարեալք. Որոց ոչ արժէ աշխարհս, յանապատի 38
մոլորեալք եւ ի լերինս եւ յայրս եւ ի փապարս եր-
կրի։ Եւ սոքա ամենեքին վկայեալք ի հաւատոյն, 39
չեւ եւս ընկալան զաւետիսն։ Աստուծոյ վասն մեր 40
լաւագոյն համարեալ, զի մի առանց մեր կատարես-
ցին։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Այսուհետեւ եւ մեք՝ որ այսչափ շուրջ զմեօք 1
ածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտու-
թիւն զամենայն ի բաց ընկեսցուք եւ զմեղս կարե-
ւորս. համբերութեամբ ընթասցուք ի պատերազմն՝
որ առաջի կայ մեզ։ Հայեսցուք ի զօրագլուխն հա- 2
ւատոյ եւ ի կատարիչն Յիսուս, որ փոխանակ ու-
րախութեանն որ նմա առաջի կայր, յանձն առ
զխաչն, արհամարհեաց զամօթն, նստաւ ընդ աջմէ

3 աթոռոյն Աստուծոյ։ Աղէ ածէք զմտաւ, որ զայսպիսի
համբերութիւն ի մեղաւորաց հակառակութենէ ան-
տի կրեաց. զի մի աշխատ լինիցիք անձամբք ձերովք
4 եւ լքանիցիք։ Զի չեւ եւս արեամբ չափ պատերազ-
5 մեալք՝ հակառակ կացէք մեղացն, Եւ մոռացարուք
զմխիթարութիւնն, որ ընդ ձեզ իբրեւ ընդ որդեակս
խօսի։

Գ. Որդեակ իմ, մի լքանիր ի խրատու Տեառն,
6 եւ մի վհատիցիս՝ յանդիմանեալ ի նմանէ։ Զի զոր
սիրէ Տէր՝ խրատէ, տանջէ զամենայն որդի՝ զոր ըն-
7 դունի։ Ի խրատու համբերութեան կայք, իբրեւ
յորդիս մատուցեալ է ի ձեզ Աստուած. ո՞ր որդի է՝
8 զոր ոչ խրատիցէ հայր։ Զի եթէ առանց խրատու
լինիցիք, որով ամենեքին բաժանորդք եղեն. ապա
9 խորթք իցէք եւ ոչ որդիք։ Զի եթէ ի մարմնաւոր
հարցն մերոց զոր ունիմք խրատիչս՝ պատկառեմք,
ո՞րչափ եւս առաւել հնազանդեսցուք հօրն հոգւոց
10 եւ կեցցուք։ Զի նոքա առ սակաւ ժամանակս ըստ
կամաց իւրեանց խրատէին. իսկ նա վասն օգտի, առ ի
11 յընդունելոյ զսրբութիւն նորա։ Ամենայն խրատ առ
ժամանակն ոչ ուրախութեան թուի, այլ տրտմու-
թեան. բայց յետոյ պտուղ խաղաղութեան նովաւ
12 կրթեցելոցն հատուցանէ յարդարութիւն։ Վասն
որոյ զձեռս լքեալս եւ զծունկս կթոտս հաստատե-
13 ցէք, Եւ զշաւիղս ուղիղս արարէք ոտից ձերոց, զի
մի որ կաղն իցէ՝ գլորիցի, այլ մանաւանդ բժշկեսցի։
14 Զխաղաղութեան զհետ երթայք ընդ ամենեսին եւ
զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր։
15 Զգոյշ լերուք, գուցէ ոք յետնեալ գտանիցի ի
շնորհացն Աստուծոյ։ Մի՛ ոք արմատ դառնութեան
ի վեր երեւեալ նեղիցէ, եւ նովաւ բազումք պղծի-
16 ցին։ Մի՛ ոք պոռնիկ եւ պիղծ իբրեւ զԵսաւ. որ ընդ
17 միոյ կերակրոյ զանդրանկութիւնսն վաճառեաց։ Գի-
տէք, զի թէպէտ եւ յետոյ կամեցաւ ժառանգել

*զօրհնութիւնն, խոտան գտաւ, զի ապաշխարու-
թեան տեղի ոչ եգիտ, թէպէտ եւ արտասուօք
խնդրեաց զնա։*

Գ. Զի ոչ էք մատուցեալ առ լեառն շօշա- 18
*փելի՝ որ հրովն վառեալ էր եւ միգով եւ մառախղով
եւ խաւարաւ եւ մթով. Ո՛չ փողն հնչէր եւ բար-* 19
*բառ պատգամացն. ուստի՝ որք լուանն, հրաժարեցին,
զի մի կրկնեսցի առ նոսա բանն։ Քանզի ոչ հանդար-* 20
*տէին հրամանին. թէպէտ եւ գազան մերձենայր ի
լեառն՝ քարկոծ լինէր։ Եւ այնպէս ահագին էր տե-* 21
*սիլն, զի եւ Մովսէս ասէր թէ զահի հարեալ եմ եւ
դողամ։ Այլ մատուցեալ էք ի Սիովն լեառն եւ ի* 22
*քաղաք Աստուծոյ կենդանւոյ՝ յԵրուսաղէմ յերկինս,
եւ ի բիւրաւոր բանակս հրեշտակաց, Եւ յեկեղեցիս* 23
*անդրանկաց գրելոց յերկինս, եւ առ դատաւորն ա-
մենեցուն Աստուած, եւ յոգիս արդարոց կատարե-
լոց. Եւ ի նորոց կտակարանաց միջնորդն Յիսուս, եւ* 24
*ի հեղումն արեան նորա՝ որ առաւել խօսի քան
զաբելին։*

Զգոյշ լերուք, գուցէ հրաժարիցէք յայնմանէ՝ 25
*որ խօսեցաւն. զի եթէ նոքա ոչ կարացին զերծանել
հրաժարեալք յայնմանէ՝ որ յերկրին հրաման տայր.
ո՞րչափ եւս առաւել մեք, եթէ յերկնաւորէն թի-
կունս դարձուցանիցեմք. Որոյ ձայնն զերկիր շարժեաց* 26
*յայնժամ, եւ այժմ խոստացեալ է եւ ասէ. Մի-
անգամ շարժեցից ոչ միայն զերկիր, այլ եւ զեր-
կինս։ Այլ միւսանգամն յայտ առնէ զշարժելոցն* 27
*իբրեւ զեղելոց փոփոխումն, զի հաստատուն կացցեն
անշարժքն։ Վասն որոյ թագաւորութիւն անշարժ* 28
*ընկալեալ, պինդ կալցուք զշնորհսն, որով պաշտեմք
զԱստուած հաճութեամբ, ահիւ եւ դողութեամբ.
Քանզի Աստուած մեր հուր ծախիչ է։* 29

ԳԼՈՒԽ ԺԳ.

1 Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ:
2 Զօտարասիրութիւն մի մոռանայք, զի այնու ոմանք
3 յանգէտս ընկալան զհրեշտակս: Յուշ լիցին ձեզ կա-
պեալքն, որպէս թէ դուք ընդ նոսա կապեալ իցէք.
եւ չարչարեալքն, որպէս թէ եւ դուք իսկ մարմնա-
4 ւոր էք: Պատուական է ամուսնութիւն ամենեւին,
եւ սուրբ անկողինք. բայց զշունս եւ զպոռնիկս դատի
5 Աստուած: Բարք անարծաթասէրք լինիցին, բաւա-
կան համարել որչափ ինչ ի ձեռս իցէ. քանզի ինքն
6 իսկ ասաց, Ոչ թողից զքեզ եւ ոչ ընդ վայր հարից.
Որպէս զի համարձակ լիցուք ասել. Տէր է իմ օգնա-
7 կան, եւ ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ: Յի-
շեցէք զառաջնորդս ձեր, որ խօսեցան ձեզ զբանն
Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանողք
8 եղերուք հաւատոյն: Յիսուս Քրիստոս երէկ եւ այս-
9 օր, նոյն եւ յաւիտեանս: Ուսմունս պէսպէսս եւ
յօտարաձայնս մի դանդաչէք. զի լաւ է շնորհօք
հաստատել զսիրտս, եւ ոչ կերակրովք, որովք ոչ
ինչ օգտեցան՝ որ այնպէս գնացին:
10 Ի. Ունիմք մեք սեղան, ուստի ոչ ունին իշ-
խանութիւն ճաշակել, որք պաշտեն զպաշտօն խո-
11 րանին: Զի որոց անասնոց մատչէր արիւնն ի սրբու-
թիւնսն վասն մեղաց ի ձեռն քահանայապետին, նո-
12 ցին մարմինքն այրէին արտաքոյ բանակին: Վասն որոյ
եւ Յիսուս՝ զի սրբեսցէ իւրով արեամբն զժողովուրդն,
13 արտաքոյ դրանն չարչարեցաւ: Արդ եկայք ելցուք առ-
նա արտաքոյ բանակին, առեալ յանձն զնախատինս
14 նորա: Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք՝ որ աստէն
15 մնալոց է, այլ զհանդերձեալսն խնդրեմք: Արդ ի
ձեռն նորա մատուցուք պատարագ օրհնութեան
յամենայն ժամ Աստուծոյ, այսինքն է՝ զպտուղ շր-
16 թանց խոստովանելոց յանուն նորա: Զբարերարու-

թիւն եւ զհաղորդութիւն մի՛ մոռանայք, զի ընդ
այնպիսի պատարագս հաճի Աստուած: Ունկնդիր 17
լերուք առաջնորդաց ձերոց, եւ հպատակ կացէք
նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ
համարս տալոց են ընդ ձեր. զի խնդութեամբ արաս-
ցեն զայն, եւ մի՛ յոգւոց հանելով. զի այն ոչ յօ-
գուտ ձեր է:

ԿԻԲ. Աղօթս արարէք վասն մեր. զի հաստա- 18
տեալ գիտեմք եթէ բարւոք միտս ունիմք. յամե-
նայնի կամիմք բարւոք գնացս ցուցանել: Եւ առաւել 19
աղաչեմ՝ զի զայն առնիցէք, զի վաղագոյն պատսպա-
րեցայց ձեզ: Եւ Աստուած խաղաղութեան՝ որ եհան 20
ի մեռելոց զհովիւն հօտից, զմեծն արեամբ յաւիտե-
նական ուխտին, զՏէր մեր Յիսուս, Հաստատեսցէ 21
զձեզ ի գործս բարութեան առնել զկամս նորա. եւ
արասցէ ի մեզ զհաճոյսն առաջի իւր ի ձեռն Յիսու-
սի Քրիստոսի, որում փառք յաւիտեանս. ամէն:
Աղաչեմ զձեզ, եղբարք, անսալ բանիս մխիթարու- 22
թեան. քանզի սակաւուք գրեցի ձեզ: Եւ ծանիջէք 23
զեղբայրն մեր զՏիմոթէոս զարձակեալն առ. ձեզ, ընդ
որում, եթէ վաղագոյն գայցէ, տեսից զձեզ: Ողջոյն 24
տաջիք ամենայն առաջնորդաց ձերոց եւ ամենայն
սրբոց: Ողջոյն տան ձեզ՝ որ ի կողմանս Իտալիացւոց
են: Շնորհք ընդ ամենեսին ձեզ: 25

Առ Եբրայեցիս գրեցաւ յԻտալիայ ի ձեռն Տիմոթեայ:

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
ՅԱԿՈՎԲԱՅ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԵՍ · ՅԱԿՈՎԲՈՍ Աստուծոյ եւ Տեառն Յի-
սուսի Քրիստոսի ծառայ. երկոտասան ազգացդ որ ի
2 սփիւռս էք, ողջոյն։ Ամենայն ուրախութեան ար-
ժանի համարիջիք, եղբարք, յորժամ ի պէսպէս փոր-
3 ձութեանց ի մէջ անկանիջիք։ Գիտասջիք զի համ-
դէս ձերոց հաւատոցն յօրինեալ գործէ զհամբերու-
4 թիւն։ Իսկ համբերութիւնն գործ կատարեալ ունի-
ցի, զի իցէք ողջանդամք եւ կատարեալք, եւ ոչ իւիք
5 նուազեալք։ Ապա թէ ոք ի ձէնջ իցէ նուազեալ
յիմաստութենէ, խնդրեսցէ յԱստուծոյ, որ տայն
ամենայնի առատապէս, եւ ոչ նախատէ. եւ տացի
6 նմա։ Բայց խնդրեսցէ հաւատովք, եւ մի երկմտես-
ցէ. զի որ երկմիտն է, նման է հողմակոծեալ եւ
7 տատանեալ ալեաց ծովու. Մի ակնկալցի մարդն այն
8 առնուլ ինչ յԱստուծոյ. Զի այր երկմիտ առանց
հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր։
9 Պարծեսցի եղբայր խոնարհ ի բարձրութիւն իւր. Իսկ
10 որ մեծատունն իցէ՝ ի խոնարհութիւն իւր. քանզի
11 իբրեւ զծաղիկ խոտոյ անցցէ։ Զի ծագեաց արեւ
հանդերձ խորշակաւ, եւ ցամաքեցոյց զխոտն, եւ թօ-
թափեցաւ ծաղիկն նորա, եւ կորեաւ վայելչութիւն

երեսաց նորա. նոյնպէս եւ մեծատունն հանդերձ շա-
հիւքն իւրովք թարշամեսցի: Երանեալ է այր՝ որ 12
համբերիցէ փորձանաց. զի եթէ ընտիր եւս գտանիցի,
առցէ զպսակն կենաց՝ զոր խոստացաւ սիրելեաց
իւրոց:

ԱԵ. ՄԻ ոք որ ի փորձութեան իցէ, ասիցէ թէ 13
յԱստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չա-
րեաց, փորձէ նա եւ ոչ զոք. Իւրաքանչիւր ոք փոր- 14
ձի առ ի յիւրոցն ցանկութեանց ձգեալ եւ պա-
տրեալ: Ապա այնուհետեւ ցանկութիւնն յղացեալ՝ 15
զմեղս ծնանի, եւ մեղքն կատարեալ՝ զմահ ծնանին:
Մի խաբիք, եղբա՛րք իմ սիրելիք. Զի ամենայն 16
տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի 17
վերուստ են իջեալ առ ի Հօրէն լուսոյ, յորում չիք
փոփոխումն եւ կամ շրջելոյ ստուեր: Կամեցեալ 18
ծնաւ զմեզ բանիւ ճշմարտութեանն՝ լինել մեզ
պտուղ ինչ ստացուածոց նորա: Գիտասջիք, եղբա՛րք 19
իմ սիրելիք. Եղիցի ամենայն մարդ արագ առ ի լսել,
եւ ծանր առ ի խօսել, եւ ծանր առ ի բարկանալ:
Զի բարկութիւն մարդոյ զարդարութիւն Աստուծոյ 20
ոչ գործէ: Որով ի բաց թօթափեալ զամենայն 21
աղտեղութիւնս եւ զյաւելուածս չարեաց, հեզու-
թեամբ ընդունիջիք զբանն ընդաբոյս, որ կարող է
կեցուցանել զոգիս ձեր: Լինիջիք առնելք բանին, 22
եւ մի լսելք միայն համարեսջիք զանձինս: Զի թէ 23
ոք լսող միայն իցէ բանին եւ ոչ առնելի, նման է նա
մարդոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ
ծնանիցին ի հայելւոջ. Զի հայեցեալ ետես զինքն 24
եւ զանց արար, եւ անդէն մոռացաւ թէ որպիսի ոք
էր: Իսկ որ յառեալ ի կատարեալ օրէնս ազատու- 25
թեանն հայիցի եւ ի նմին կայցէ, ոչ եղեւ նա լսող
մոռացութեան, այլ առնելի գործոյն. նա յառնելն
իւրում լիցի երանելի: Եթէ ոք կամիցի կրօնաւոր 26
լինել, եւ ոչ սանձահարիցէ զլեզու իւր, այլ զբաղե-

ցուցանիցէ զսիրտ իւր, այնպիսւոյն վայրապար է
27 կրօնաւորութիւնն: Կրօնաւորութիւն սուրբ եւ ան-
արատ առ ի յԱստուծոյ եւ ի Հօրէ՝ այս է, այցելու
լինել որբոց եւ այրեաց ի նեղութեան իւրեանց,
անարատ պահել զանձն յաշխարհէ:

ԳԼՈՒԽ Բ.

1 ԱԶ. Եղբարք իմ, մի աչառութեամբ ունիցիք
զհաւատսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ
2 Տէրն է փառաց: Եթէ մտանիցէ ի ժողովուրդ ձեր
այր՝ որ ունիցի մատանի ոսկի եւ հանդերձս պայ-
ծառս, մտանիցէ անդր եւ աղքատ ոք ի հանդերձս
3 աղտեղիս, Հայիցիք ընդ այն՝ որ ունիցի զհանդերձն
պայծառս, եւ ասիցէք եթէ դու նիստ աստ պատու-
ով. եւ ցաղքատն ասիցէք եթէ յոտն կաց դու այդր,
4 կամ թէ եկ նիստ առ պատուանդանիս իմում: Եւ
ոչ խղճիցէք յանձինս ձեր, եւ լինիցիք դատաւորք
5 չարեացն խորհրդոց: Լուարուք ինձ, եղբարք իմ սի-
րելիք, ո՞չ ապաքէն Աստուած ընտրեաց զաղքատս
աշխարհիս, որ են մեծատունք հաւատովք եւ ժա-
ռանգաւորք արքայութեանն՝ զոր խոստացաւ սիրե-
6 լեաց իւրոց: Եւ դուք անարգէք զաղքատս: Ո՞չ մե-
ծատունք յաղթահարեն զձեզ, եւ նոքա քարշեն
7 զձեզ ի դատաստան: Ո՞չ նոքա հայհոյեն զբարւոք ա-
8 նունն՝ որ կոչեցեալ է ի վերայ ձեր: Ապա թէ զօրէնսն
կատարիցէք զարքունականս ըստ գրոց, եթէ Սիրես-
9 ցես զընկեր քո իբրեւ զանձն քո, բարւոք առնէք:
Իսկ եթէ աչառիցէք, մեղս գործէք, յանդիմանեալք
10 յօրինացն իբրեւ օրինազանցք: Որ ոք զամենայն
օրէնսն պահիցէ, եւ միով իւիք ինչ գթիցէ, եղեւ
11 ամենայն օրինացն պարտապան: Զի որ ասացն՝ թէ
Մի՛ սպանանիցես, ասաց թէ եւ Մի՛ շնայցես. զի ե-
թէ սպանանիցես ոչ, բայց շնայցես, եղեր յանցաւոր
12 օրինացն: Այնպէս խօսեցարուք եւ այնպէս արարէք,

որպէս զի ազատութեան օրինօքն լիցէք դատելոց։
Զի անողորմ դատաստան լինելոց է այնմ՝ որ ոչ 13
առնիցէ զողորմութիւն. քանզի բարձր ի գլուխ պար-
ծի ողորմութիւն առ դատաստանաւն։

Աէ. Զի՞նչ օգուտ իցէ, եղբարք իմ, եթէ ասի- 14
ցէ ոք հաւատս ունել, եւ գործս ոչ ունիցի. միթէ
կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցանել զնա։ Եթէ եղ- 15
բայր ոք կամ քոյր իցեն մերկ կամ կարօտեալ աւուրն
կերակրոյ, Ասիցէ ոք ի ձէնջ ցնոսա. երթայք խա- 16
ղաղութեամբ, ջեռարուք եւ յագեցարուք. եւ տայ-
ցէք ոչ նոցա զպէտս մարմնոյն, զի՞նչ օգուտ իցէ։
Այնպէս եւ հաւատք՝ եթէ գործս ոչ ունիցին, մե- 17
ռեալ են առանձինն։ Այլ թերեւս ասիցէ ոք. եթէ 18
դու հաւատս ունիս, եւ ես գործս ունիմ. ցոյց ինձ
զհաւատսն քո առանց գործոց, եւ ես ցուցից քեզ
ի գործոց իմոց զհաւատս։ Դու հաւատաս զի մի է 19
Աստուած, բարւոք առնես. եւ դեւք հաւատան եւ
սարսեն։ Կամի՞ս գիտել, ո՛վ մարդ սնոտի, զի հաւ- 20
ատք առանց գործոց դատարկ են։ Աբրահամ հայր 21
մեր ո՞չ ապաքէն ի գործոց արդարացաւ, հանեալ ի
սեղան զորդին իւր զԻսահակ պատարագ։ Տեսանե՞ս, 22
զի հաւատքն եղեն գործակից գործոց նորա. եւ ի
գործոց անտի հաւատքն կատարեցան։ Եւ կատարե- 23
ցաւ գիրն՝ որ ասէ. Հաւատաց Աբրահամ յԱստու-
ած, եւ համարեցաւ նմա յարդարութիւն, եւ կոչե-
ցաւ բարեկամ Աստուծոյ։ Տեսանէ՞ք, զի ի գործոց 24
արդարանայ մարդ, եւ ոչ ի հաւատոց միայն։ Այն- 25
պէս եւ Ռախաբ պոռնիկ ո՞չ ապաքէն ի գործոց ար-
դարացաւ, ընկալեալ զլրտեսսն, եւ ընդ այլ ճանա-
պարհ արձակեաց։ Զորօրինակ մարմին առանց հո- 26
գւոյ մեռեալ է, սոյնպէս եւ հաւատք առանց գոր-
ծոց մեռեալ են։

ԳԼՈՒԽ Գ.

1 ԲԿ. Մի՛ բազում վարդապետք լինիլ, եղբարք.
գիտասջիք, զի մեծ դատաստան ընդունելոց եմք.
2 Զանզի բազում ինչ յանցանեմք ամենեքեան: Եթէ
ոք բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ, որ
3 կարող է սանձահարել զամենայն մարմին իւր: Տես
զի ձիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա
4 մեզ, եւ զամենայն մարմինս նոցա նուաճեմք: Ահա-
ւասիկ եւ նաւք որպիսի՛ ինչ են, եւ ի սաստիկ հող-
մոց վարին. եւ փոքր թեւովն շրջին յոր կոյս եւ միտք
5 ուղղչին կամիցին: Այնպէս եւ լեզու փոքր ինչ ան-
դամ է, եւ մեծամեծս բարբառի. ահա եւ սակաւ
6 ինչ հուր զորպիսի անտառս հրդեհէ: Եւ լեզու հուր,
զարդ անիրաւութեան, լեզու հաստատեալ է յան-
դամս մեր, որ զամենայն մարմինն ապականէ, եւ
վառէ հրով զանիւ ծննդեան, եւ բորբոքեալ տոչորի
7 ի գեհենի: Ամենայն բնութիւն գազանաց եւ թռչնոց
եւ սողնոց եւ որ ի ծովու են, հնազանդեալ է եւ
8 հնազանդի մարդկեղէն բնութեան: Բայց զլեզու
մարդկան ոչ ոք կարէ հնազանդել, զչարն եւ զան-
9 կարգ եւ զլի թունոք մահաբերիւ: Նովաւ օրհնեմք
զՏէրն եւ զՀայր, եւ նովաւ անիծանեմք զմար-
10 դիկ՝ որ ըստ նմանութեան Աստուծոյ արարան: Ի
նմին բերանոյ ելանեն օրհնութիւնք եւ անէծք. ոչ է
11 պարտ, եղբա՛րք իմ, այսմ այսպէս լինել: Մի թէ
աղբիւր անդստին ի միոյ ականէն բխիցէ քաղցր եւ
12 դառն: Մի թէ մարթ ինչ իցէ, եղբա՛րք իմ, թզե-
նւոյ ձէթ բերել կամ որթոյ թուզ, եւ ոչ աղ-
տաղտին տեղւոյ ջուր քաղցր առնել:
13 ԲԲ. Ո՞վ է իմաստուն եւ հանճարեղ ի ձեզ.
ցուցցէ ի բարւոք գնացից զգործս իւր հեզութեամբ
14 իմաստութեան: Ապա եթէ նախանձ եւ դառնու-
թիւն եւ հակառակութիւն ունիցիք ի սիրտս ձեր,

մի՛ պարծիք սուտ առնել զճշմարտութիւնն։ Ոչ է 15
իմաստութիւնս այս իջեալ ի վերուստ. այլ երկրաւ-
որ, շնչաւոր եւ դիւական։ Զի ուր հեռ եւ նա- 16
խանձ է, անդ է անկարգութիւն եւ ամենայն իրք
չարք։ Իսկ վերին իմաստութիւնն, նախ զի սուրբ 17
է. ապա խաղաղարար, հեզ, դիւրահաւան, լի ողոր-
մութեամբ եւ պտղովք բարեաց, անխիղճ, առանց
կեղծաւորութեան։ Պտուղ արդարութեան խաղա- 18
ղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղու-
թիւն։

ԳԼՈՒԽ Դ.

Ուստի՞ պատերազմունք եւ ուստի՞ կռիւք ի ձեզ. 1
ո՞չ յայսպիսի ցանկութեանց ձերոց, որ զօրացեալ են
յանդամս ձեր։ Ցանկանայք, եւ ոչ ունիք. սպա- 2
նանէք եւ նախանձիք, եւ ոչ կարէք հասանել. պա-
տերազմիք, կռուիք եւ ոչ ունիք. վասն զի ոչ
խնդրէք։ Խնդրէք եւ ոչ առնուք, վասն զի չարաչար 3
խնդրէք. զի անդէն ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք։
Շնացողք, ո՞չ գիտէք զի սէր աշխարհիս այսորիկ 4
թշնամութիւն է առ Աստուած. զի որ ոք կամիցի
սիրել զաշխարհ, թշնամի առնէ զանձն իւր Աստու-
ծոյ։ Կամ թէ փայրապա՞ր համարիցիք զոր ասէ գիրն. 5
առ նախանձ ինչ՝ որում փափագէ հոգին որ բնակեաց
ի մեզ, Տալ զառաւել շնորհս. վասն որոյ ասէ. Տէր 6
ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խո-
նարհաց։

ԲԳ. Հնազանդեցարուք այսուհետեւ Աստու- 7
ծոյ, եւ կացէք հակառակ չարախօսին. եւ լիցի փա-
խստական առ ի ձէնջ։ Մերձեցարուք առ Աստու- 8
ած, եւ մերձեսցի առ ձեզ։ Սրբեցէք զձեռս, մեղա-
ւորք, եւ ուղեղ արարէք զսիրտս, երկմիտք։ Տառա- 9
պեցարուք, սգացարուք եւ լացէք, ծաղր ձեր ի սուգ
դարձցի, եւ ուրախութիւն ձեր՝ ի տրտմութիւն։

10 Խոնարհեցարուք առաջի Տեառն, եւ բարձրացուսցէ
11 զձեզ: Մի՛ բամբասէք զմիմեանս, եղբարք. որ բամ-
բասէ զեղբայր կամ դատի զեղբայր իւր, զօրէնսն
բամբասէ եւ զօրէնսն դատի. իսկ եթէ զօրէնսն դատի-
12 ցիս, ոչ առնելի օրինացն ես, այլ դատաւոր: Մի է
օրէնսդիր եւ դատաւոր, որ կարողն է փրկել եւ կո-
13 րուսանել. Դու ո՞ ես՝ որ դատիս զընկերն: Ահաւա-
սիկ են, որ ասեն. այսօր եւ վաղիւ երթիցուք յայս
անուն քաղաք, եղիցուք անդ տարի մի, վաճառե-
14 ցուք եւ շահեսցուք: Որք ոչ գիտէք զվաղուին, Որ-
15 պիսի՞ ինչ են կեանք ձեր. զի իբրեւ զմրրիկ էք, որ
առ սակաւ մի երեւեալ եւ ապա ապականեալ. փո-
խանակ զի ասէիք. եթէ Տէր կամեսցի եւ կեցցուք,
16 արասցուք զայս ինչ կամ զայն: Եւ արդ պարծիք
յամբարտաւանութեան ձերում. ամենայն ինչ այս-
17 պիսի պարծանք չարութեան են: Որ ոք գիտիցէ
զբարին եւ ոչ առնիցէ, մեղք են նմա:

ԳԼՈՒԽ Ե.

1 Բփ. Արդ այսուհետեւ, մեծատունք, լացէք եւ
ողբացէք ի վերայ թշուառութեանցն, որ գալոց են
2 ի վերայ ձեր: Զի մեծութիւնք ձեր յոչինչ է, եւ
3 հանդերձ ձեր կերակուր ցեցոյ: Արծաթ ձեր եւ ոսկի
ժանկահար, եւ ժանկ նոցա լիցի ձեզ ի վկայութիւն,
եւ կերիցէ զմարմինս ձեր. իբրեւ զհուր գանձեցէք
4 աւուրցն յետնոց: Ահաւասիկ վարձք մշակաց որ գոր-
ծեն զանդս ձեր, առ ձեզ են. զրկեալն ի ձէնջ ա-
ղաղակէ, եւ բողոք հնձողացն եհաս յականջս Տեառն
5 զօրութեանց: Փափկացայք ի վերայ երկրի եւ զբօ-
սայք, սնուցէք զսիրտս ձեր իբրեւ աւուր սպանման:
6 Զրկեցէք, սպանէք զարդարն, որ ոչ կայր ձեզ հա-
7 կառակ: Երկայնամիտ լերուք, եղբարք իմ, մինչեւ
ի գալուստն Տեառն. ահա մշակ երկայնամտեալ սպա-
սէ պատուական պտղոյն երկրի, մինչեւ առցէ զկա-

նուխ եւ զանագան։ Երկայնամտեցէք եւ դուք, եւ 8
հաստատեցէք զսիրտս ձեր. զի գալուստն Տեառն
մերձեալ է։ Մի՛ տրտմեցուցանէք զմիմեանս, եղբարք, 9
զի մի՛ դատիցիք. ահաւասիկ դատաւորն առ դուրս
կայ։ Օրինակ առէք, եղբարք, չարչարանաց եւ եր- 10
կայնմտութեան զմարգարէսն՝ որք խօսեցան յանուն
Տեառն։ Ահաւասիկ երանեմք համբերողաց. զհամ- 11
բերութիւնն Յոբայ լուարուք եւ զկատարումն
Տեառն տեսէք. զի բազմագութ է Տէր եւ ողորմած։

Բե. Յառաջ քան զամենայն ինչ, եղբա՛րք իմ, 12
մի՛ երդնուցուք, մի՛ յերկինս, մի՛ յերկիր, մի՛ յայլ
ինչ երդումն. այլ եղիցի ձեր այոն այո եւ ոչն ոչ.
զի մի՛ ի կեղծաւորութիւն ինչ անկանիցիք։ Վշտա- 13
նայցէ ոք ի ձէնջ, յաղօթս կացցէ. բերկրեսցի ոք,
սաղմոս ասասցէ։ Հիւանդանայցէ ոք ի ձէնջ, կոչես- 14
ցէ զերիցունս եկեղեցւոյն, եւ արասցեն ի վերայ նո-
րա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն. Եւ ա- 15
ղօթքն հաւատովք փրկեսցեն զաշխատեալն, եւ յա-
րուսցէ զնա Տէր. եւ եթէ մեղս ինչ իցէ գործեալ,
թողցի նմա։ Խոստովան եղերուք միմեանց զմեղս, եւ 16
աղօթս արարէք ի վերայ միմեանց, որպէս զի բժշկես-
ջիք. քանզի յոյժ զօրաւոր են աղօթք արդարոց յօ-
գնականութիւն։ Եղիա մարդ էր իբրեւ զմեզ չար- 17
չարելի. եւ յաղօթս եկաց, եւ ոչ տեղեաց յերկիր
զերիս ամս եւ զվեց ամիս։ Եւ դարձեալ եկաց յա- 18
ղօթս, եւ ետուն երկինք զանձրեւ, եւ բուսոյց երկիր
զպտուղ իւր։ Եղբա՛րք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորի- 19
ցի ի ճշմարտութեան ճանապարհէ անտի, եւ դար-
ձուսցէ ոք զնա, Գիտասցէ, զի որ դարձուցանէ զմե- 20
ղաւորն ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փըր-
կեսցէ զոգի իւր ի մահուանէ, եւ ծածկեսցէ զբազ-
մութիւն մեղաց։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

1 ԲԶ. ՊԵՏՐՈՍ առաքեալ Յիսուսի Քրիստոսի,
ընտրելոց նժդեհից՝ որ ի սփիւռս Պոնտացւոց, Գաղա-
տացւոց եւ Կապադովկեցւոց եւ Ասիացւոց եւ Բիւ-
2 թանացւոց, Ըստ կանուխ գիտութեանն Աստուծոյ
Հօր, սրբութեամբ Հոգւոյն, ի հնազանդութիւն եւ
ի հեղումն արեանն Յիսուսի Քրիստոսի. շնորհք
3 ընդ ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի: Օրհնեալ
է Աստուած եւ Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի, որ ըստ բազում ողորմութեան իւրում ծնաւ
զմեզ վերստին ի յոյսն կենդանի՛ ի ձեռն յարու-
4 թեանն Յիսուսի Քրիստոսի ի մեռելոց, Յանեղծ եւ
յանարատ եւ յանթառամ ժառանգութիւնն որ պա-
5 հեալ է յերկինս ձեզ. Որ զօրութեամբն Աստուծոյ
պահեալ էիք հաւատովք ի պատրաստեալ փրկու-
6 թիւնն, յայտնեալ ի յետին ժամանակս: Որով ու-
րախ լինիջիք, որք այժմ սակաւիկ ինչ ըստ պատշա-
ճի իրացդ տրտմեալ էք ի պէսպէս փորձութիւնս:
7 Զի հանդէս ձերոյ հաւատոյն առաւել քան զոսկի

կորստական պատուական է. որ հրով փորձեալ,
գտաւ ի գովութիւն եւ ի փառս եւ ի պատիւ ի յայ-
տնութեանն Յիսուսի Քրիստոսի: Զոր ոչն տեսէք, 8
եւ սիրեցէք. ընդ որ այժմ ոչ հայեցեալք, բայց
հաւատացէք. եւ ուրախ էք անճառ եւ փառաւո-
րեալ խնդութեամբն. Ընկալեալ զկատարումն հաւ- 9
ատոցն ձերոց զոգւոցն փրկութիւն: Վասն որոյ փր- 10
կութեան խնդրեցին եւ քննեցին մարգարէքն, որք
վասն որոյ ի ձեզ լինելոց էին շնորհքն, մարգարէա-
նային: Քննէին յորում եւ յորպիսի ժամանակի 11
ցուցանէր ի նոսա Հոգին Քրիստոսի, որ նախ զչար-
չարանացն Քրիստոսի վկայէր եւ յետ այնորիկ զփա-
ռացն: Որոց եւ յայտնեցաւ իսկ. զի ոչ եթէ ան- 12
ձանց, այլ մեզ մատակարարք լինէին նոցին, որք
այժմ պատմեցան այնոքիւք, որք աւետարանեցինն
ձեզ Հոգւովն սրբով, որ առաքէրն յերկնից, զոր
ցանկային տեսանել զոնեայ ընդ աղօտ հրեշտակք:

Բի. Որով պնդեալ զմէջս մտաց ձերոց, զու- 13
արթացեալք բովանդակ սպասեցէք հասելոց ձեզ
շնորհացն ի յայտնութեանն Յիսուսի Քրիստոսի,
Իբրեւ զորդիս հնազանդութեան. մի կերպարանեալք 14
առաջին ձերովք անգիտութեանն ցանկութեամբք.
Այլ ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ, եւ դուք սուրբք 15
յամենայն ի գնացս ձեր լինիջիք: Վասն որոյ գրեալ 16
է, եթէ Եղերուք սուրբք, զի ես սուրբ եմ: Եւ ե- 17
թէ հայր կոչիցէք զայն, որ առանց ակնառութեան
դատի ըստ իւրաքանչիւր գործոց. ապա երկիւղիւ
զձերոյ պանդխտութեան ժամանակս գնասջիք: Գի- 18
տասջիք, զի ոչ ապականացու արծաթեղինօք եւ ոս-
կեղինօքն փրկեցարուք ի ձերոց ունայնութեան հայ-
րենատուր գնացիցն. Այլ պատուական արեամբն 19
Քրիստոսի, իբրեւ անբիծ եւ անարատ գառին. Որ 20
յառաջծանօթն էր նախ քան զհիմնադրութիւն աշխարհի,
եւ երեւեցաւ ի վախճան ժամանակաց վասն ձեր,

21 Որք նովաւ հաւատայք յԱստուած՝ որ յարոյց զնա
ի մեռելոց, եւ ետ նմա փառս. զի հաւատքն ձեր եւ
22 յոյս լիցին յԱստուած: Զանձինս ձեր սրբել հնա-
զանդութեամբ ճշմարտութեանն, յեղբայրսիրու-
թեան առանց կեղծաւորութեան, ի սուրբ սրտէ սի-
23 րել սերտիւ զմիմեանս: Ծնեալք վերստին ոչ յա-
պականութեան սերմանէն, այլ յանապականացուէն,
24 կենդանի եւ մշտնջենական բանիւն Աստուծոյ: Զան-
զի ամենայն մարմին իբրեւ զխոտ է, եւ ամենայն
փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ. խոտն ցամաքե-
25 ցաւ, եւ ծաղիկն թօթափեցաւ. Եւ բան Տեառն
մնայ յաւիտեան, այսինքն է բանն՝ որ ի ձեզ աւե-
տարանեցաւ:

ԳԼՈՒԽ Բ.

1 Գլ. Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն
չարութիւն եւ զամենայն նենգութիւն եւ զկեղծաւո-
րութիւնս եւ զնախանձ եւ զամենայն չարախօսու-
2 թիւն. Իբրեւ զարդի ծնեալ մանկունս խօսունս, եւ
անխարդախ կաթինն փափագեցէք. զի նովաւ աճի-
3 ցէք ի փրկութիւն: Եթէ ճաշակեցէք, զի քաղցր է
4 Տէր. Առ որ մատուցեալ ի վէմն կենդանի, որ թէ-
պէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի յԱստու-
5 ծոյ ընտրեալ եւ պատուական է: Եւ դուք իբրեւ
զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր. յանարատ
քահանայութիւն մատուցանել զհոգեւորն պատա-
րագ հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստո-
6 սի: Զանզի կայ իսկ ի գրի, թէ Ահաւասիկ դնեմ ի
Սիոն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, եւ
7 որ ի նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ: Ձեզ այսուհե-
տեւ հաւատացելոց է վէմ պատուական, իսկ անհա-
ւատից, վէմ զոր անարգեցին շինողքն, նա եղեւ
8 գլուխ անկեան, Եւ վէմ գլորման եւ վէմ գայթա-
գղութեան, որ գայթագղին ապստամբեալք ի բանէն՝

յոր եւ եղանն։ Այլ դուք ազգ էք ընտիր, Թագա- 9
ւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողո-
վուրդ սեպհական. որպէս զի զձեր առաքինութիւնսն
նուիրիցէք այնմ, որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր
սքանչելի լոյսն։ Որք երբեմն չժողովուրդ, բայց արդ 10
ժողովուրդ Աստուծոյ, որք չողորմեալք՝ այժմ ողոր-
մութիւն գտէք։ Սիրելիք, աղաչեմ, իբրեւ զպան- 11
դուխտս եւ զնժդեհս ի բաց մերժել ի մարմնաւոր
ցանկութեանցն, որ զինուորին ընդդէմ ոգւոց։ 12
Զվարս ձեր ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցա-
նել. զի՛ որով բամբասիցեն զձեզ իբրեւ զչարագործս,
ի բարւոք գործոցն ձերոց դիտեալ՝ փառաւոր առ-
նիցեն զԱստուած յաւուրն այցելութեան։

ԳԲ. Հնազանդ լերուք ամենայն մարդկեղէն 13
ստեղծուածոյ վասն Տեառն. եթէ թագաւորի՝ իբրեւ
առաւել ումեք, Եթէ դատաւորաց՝ իբրեւ ի նմանէ 14
առաքելոց ի վրէժխնդրութիւն չարագործացն եւ ի
գովութիւն բարեգործաց։ Զի այսպէս էն կամք Ա- 15
ստուծոյ, բարեգործացն պապանձեցուցանել զան-
գգամ մարդոց զանգիտութիւն։ Իբրեւ զազատս լի- 16
նել, եւ մի՛ իբրեւ պատրուակ չարութեան ունել զա-
զատութիւնն. այլ իբրեւ Աստուծոյ ծառայք։ Զա- 17
մենեսեան պատուեցէք. զեղբայրսիրութիւն սիրեցէք.
յԱստուծոյ երկերուք. զթագաւորս պատուեցէք։
Ծառայք, հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տե- 18
րանց, ոչ միայն բարերարացն եւ հեզոց, այլ եւ կամա-
կորացն։ Զի այս շնորհք յԱստուծոյ են, եթէ բա- 19
րուք ինչ մտօք տանիցի ոք վշտաց յանիրաւի։ Քանզի 20
զի՞նչ երախտիք իցեն, եթէ յորժամ մեղանչիցէք՝
տանջիցիք եւ համբերիցէք. այլ թէ բարիս գոր-
ծիցէք՝ չարչարիցիք եւ համբերիցէք, այն շնորհք
յԱստուծոյ են։ Քանզի ի դոյն իսկ կոչեցարուք. զի 21
եւ Քրիստոս վասն ձեր մեռաւ եւ ձեզ եթող օրի-
նակ, զի զհետ երթայցէք հետոց նորա. Որ ոչն արար 22

23 մեղս, եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա. Որ
բամբասեալ եւ ոչ փոխարէն բամբասէր. չարչարեալ
եւ ոչ պահէր սպառնալիս, բայց իրաւամբք մատնէր
24 դատաւորին. Որ զմեր մեղս իւրով մարմնովն վերա-
ցոյց ի խաչափայտն, զի լիցուք զերծեալք ի մեղաց
անտի, եւ իցեմք արդարութեանն կենակիցք. որոյ
25 վիրօքն բժշկեցայք: Քանզի էիք իբրեւ զոչխարս մո-
լորեալս. այլ այժմ դարձարուք առ հովիւն եւ տե-
սուչ ոգւոց ձերոց:

ԳԼՈՒԽ Գ.

1 գգ. Այնպէս եւ կանայք հնազանդ լինել ա-
ռանց իւրեանց. զի եթէ իցեն նոքա ապստամբք ի բա-
նէ անտի, յաղագս կանանց գնացից եւ առանց բանին
2 իսկ շահեսցին, Գիտել երկիւղիւ զձեր պարկեշտ
3 գնացս: Որոց լինիցի ոչ արտաքուստ հիւսիւք եւ ոս-
կեհուռ ծամակալօք կամ պաճուճեալ զգեստուք
4 զարդ. Այլ ծածուկ սրտին մարդն, անեղծութեամբ
հեզութեան եւ հանդարտութեան հոգւոյն, որ է ա-
5 ռաջի Աստուծոյ բազմապատիկ: Քանզի այսպէս եր-
բեմն եւ կանայք՝ որ յուսացեալ էին յԱստուած,
զարդարէին զանձինս հնազանդել իւրեանց արանց:
6 Որպէս եւ Սառայ, զի հնազանդ էր Աբրահամու եւ
տէր իւր կոչէր զնա, որոյ եղերուք դուք որդիք. բա-
րեգործք էին, եւ ոչ կասկածէին եւ ոչ ի միոջէ
7 ինչ երկիւղէ: Այնպէս եւ արք իմաստութեամբ բնա-
կեսցեն ընդ նոսա. իբրեւ տկար անօթոյ առնիցեն
պատիւ կանանց՝ իբրեւ ժառանգակցաց շնորհացն կե-
8 նաց, զի մի խափան լինիցին աղօթիցն ձերոց: Եւ
գլուխ ամենայնի, զի համամիտք իցէք համակալիք,
9 եղբայրասէրք, ազնուադութք, խոնարհք: Մի՛ չար
փոխանակ չարի հատուցանել կամ բամբասանս ընդ
բամբասանաց. այլ զորին հակառակն օրհնել, զի
յայս իսկ կոչեցարուք, զի զօրհնութիւն ժառանգիցէք:

Գփ. „Զի որ կամիցի զկեանս սիրել եւ տեսա- 10
նել զաւուրս բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր ի
չարութենէ եւ զշրթունս իւր ի չխօսելոյ զնենգու-
թիւն: Խոտորեսցի ի չարէ, եւ արասցէ զբարի. խըն- 11
դրեսցէ զխաղաղութիւն, եւ երթիցէ զհետ նորա:
Զի աչք Տեառն ի վերայ արդարոց եւ ականջք նո- 12
րա յաղօթս նոցա. երեսք Տեառն ի վերայ չարագոր-
ծաց: Եւ ո՞ իցէ որ չարչարիցէ զձեզ, եթէ դուք 13
բարւոյն նախանձաւորք լինիցիք: Այլ թէ եւ չարչա- 14
րիցիք եւս յաղագս արդարութեան, երանելի էք.
բայց յերկիւղէ նոցա մի՛ երկնչիցիք եւ մի՛ խռովեսջիք:
Այլ զՏէր զնոյն զՔրիստոս սուրբ առնիջիք ի սիրտս 15
ձեր: Պատրաստ իցէք տալ պատասխանի ամենայնի
որ խնդրիցէ զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ: Այլ 16
հեզութեամբ եւ երկիւղիւ ունիցիք բարս քաղցունս.
զի որով չարախօսիցեն զձէնջ, յամօթ լիցին որք
բամբասեն զձեր բարւոք գնացս ի Քրիստոս: Զի 17
լաւ է բարեգործաց, եթէ կամիցին ըստ Աստուծոյ
կամացն չարչարել, քան չարագործացն: Զի եւ 18
Քրիստոս մի անգամ վասն մեղաց ի վերայ ձեր մե-
ռաւ, արդարն ի վերայ անարդարաց, զի զձեզ մեր-
ձեցուսցէ առ Աստուած. թէպէտ եւ մեռաւ մար-
մնով, այլ կենդանի է հոգւով: Որով եւ ոգւոցն՝ 19
որ էին ի բանտին, երթեալ քարոզեաց, Երբեմն ա- 20
պստամբելոցն, յորժամ ներէր նոցա Աստուծոյ եր-
կայնմտութիւնն յաւուրս Նոյի, յորս տապանն կազ-
մէր, յոր նուազունք՝ այսինքն ոգիք իբրեւ ութ ա-
պրեցան ի ջրոցն: Որ եւ զձեզ ըստ նմին օրինակի կե- 21
ցուսցէ մկրտութիւնն. ոչ զմարմնոյ աղտն ի բաց ըն-
կենլով, այլ զբարւոք մտացն հանդէս առ Աստուած
ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի. Որ է ընդ 22
աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս, ի հնազանդել
նմա հրեշտակաց եւ իշխանութեանց եւ զօրութեանց:

ԳԼՈՒԽ Դ·

1 Գե· Քրիստոսի չարչարելն մարմնով վասն մեր,
եւ դուք ի նոյն միտս վառեցարուք. զի որ չարչարի
2 մարմնով, դադարէ ի մեղաց. Զի մի՛ եւս ըստ մարդ-
կան ցանկութեանց, այլ ըստ կամացն Աստուծոյ կեց-
3 ցէ զայլ եւս ժամանակն: Քանզի բաւական է ան-
ցեալ ժամանակն լինելոյ կամացն հեթանոսաց, որք
գնայլին գիջութեամբք, ցանկութեամբք, գինեհարու-
թեամբք, անառակութեամբք, արբեցութեամբք, ան-
4 օրէն կռապաշտութեամբք. Որով օտարացեալք, ոչ
ընդ ձեզ վարին ի նոյն անկարգութեան զեղխութիւն
5 եւ հայհոյեն: Որ տայցեն պատասխանի այնմ, որ ի
պատրաստին ունի դատել զկենդանիս եւ զմեռեալս:
6 Զի ի սոյն իսկ եւ մեռելոց խոստացեալ է, զի դա-
տեսցին ըստ մարդկան մարմնով, եւ կենդանի լինիցին
7 ըստ Աստուծոյ հոգւով: Ամենեցուն վախճան մեր-
ձեալ է. զգաստացարուք այսուհետեւ, եւ լերուք
8 զուարթունք յաղօթս: Նախ քան զամենայն սէր
սերտ ունել ընդ միմեանս. զի սէր ծածկէ զբազմու-
9 թիւն մեղաց: Օտարասէրք լինել ընդ միմեանս ա-
10 ռանց տրտնջելոյ: Իւրաքանչիւր ոք որպէս եւ ընկա-
լաւ շնորհս ինչ, ի միմեանս զնոյն մատակարարել,
իբրեւ զբարւոք հազարապետս պէսպէս շնորհացն Աս-
11 տուծոյ: Եթէ ոք խօսիցի, իբրեւ զԱստուծոյ պատ-
գամս. եթէ ոք մատակարարիցէ, իբրեւ ի զօրութենէ
զոր շնորհէ Աստուած, զի յամենայնի փառաւորեսցի
Աստուած ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, որում փառք
եւ զօրութիւն յաւիտեանս. ամէն:
12 Գզ· Սիրելիք, մի՛ օտարոտի համարել զեռանդն
ինչ՝ որ ի փորձութիւն ձեզ լինիցի, որպէս թէ օտար
13 ինչ իրք ձեզ դիպիցին. Այլ իբրեւ հաղորդեալք
Քրիստոսի չարչարանացն, ուրախ լինիջիք, զի եւ ի
յայտնութեան փառաց նորա ցնծացեալք բերկրեա-

ջիք ։ Իսկ եթէ նախատիցիք եւս վասն անուանն Քրիս- 14
տոսի, երանելի էք. զի փառացն եւ զօրութեան
անուն է, եւ Աստուծոյ Հոգին ի վերայ ձեր հանգու-
ցեալ է ։ Մի՛ ոք ի ձէնջ չարչարեսցի իբրեւ զսպա- 15
նող, կամ իբրեւ գող, կամ իբրեւ չարագործ,
կամ իբրեւ զօտարատեսուչ ։ Ապա եթէ իբրեւ 16
զքրիստոնեայ, մի՛ ինչ ամաչեսցէ. այլ փառաւոր առ-
նիցէ զԱստուած անուամբս այսուիկ ։ Զի ժամանակ 17
է սկիզբն լինելոյ դատաստանին ի տանէն Աստուծոյ.
զի եթէ նախ ի մէնջ, իսկ զի՞նչ կատարած այնոցիկ
իցէ՝ որ ոչ հաւանեցան Աստուծոյ աւետարանին ։ Եւ 18
եթէ արդարն հազիւ կեցցէ, իսկ ամբարիշտն եւ մե-
ղաւորն ո՞ւր գտանիցի ։ Որպէս զի եւ որ չարչարիցին 19
ըստ Աստուծոյ կամացն, հաւատարիմ հաստչին աւ-
անդեսցեն զեւրեանց ոգիսն բարերարութեամբք ։

ԳԼՈՒԽ Ե.

ԳԻ. Զերիցունս այսուհետեւ աղաչեմ իբրեւ 1
երիցակից եւ վկայ չարչարանացն Քրիստոսի, որ եւ
հանդերձեալ փառացն յայտնելոց հաղորդ ։ Արածե- 2
ցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել
մի՛ իբրեւ ակամայ, այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛
զօշաքաղութեամբ, այլ յօժարութեամբ ։ Մի՛ իբրեւ 3
տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին ։ Զի 4
յերեւել հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ
փառաց պսակն ։ Սոյնպէս եւ երիտասարդք, հնազանդ 5
լերուք ծերոց ։ Ամենեքին ընդ միմեանս զխոնարհու-
թիւն ունիցիք. զի Աստուած ամբարտաւանից հա-
կառակ կայ, տայ շնորհս խոնարհաց ։ Խոնարհեցա- 6
րուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ բար-
ձրացուսցէ ի ժամանակի ։ Զամենայն հոգս ձեր ըն- 7
կեցէք ի նա, զի նա է որ հոգայ վասն ձեր ։
ԳԿ. Արթուն լերուք, հսկեցէք, զի ոսոխն ձեր 8
սատանայ իբրեւ զառիւծ գոչէ, շրջի եւ խնդրէ թէ

9 զոր կլանիցէ․ Որում ի դիմի հարկանիցէք հաստա-
տեալք հաւատովք․ գիտասջիք զնոյն անցս չարչարա-
նաց եղբայրութեան ձերոյ յաշխարհի յանձինս կա-
10 տարել։ Եւ Աստուած ամենայն շնորհաց որ կոչեաց
զձեզ յիւր ի յաւիտենական փառսն Քրիստոսիւ
Յիսուսիւ, որում փոքր մի եղերուք չարչարակիցք,
նա կազդուրեցուսցէ, կարողացուսցէ, հաստահիմն
11 արասցէ․ Նմա իշխանութիւն եւ փառք յաւիտեանս․
12 ամէն։ Ի ձեռն Սիղուանոսի հաւատարիմ եղբօր,
որպէս կարծեմ, փոքր ի շատէ գրեցի առ ձեզ մխի-
թարել, եւ ի վերայ այսորիկ վկայել․ զի եւ այս
ճշմարիտ շնորհք Աստուծոյ են, յոր հաստատեալ
13 կայցէք։ Ողջոյն տայ ձեզ որ ի Բաբելոն ընտրելակից
14 եկեղեցին է, եւ Մարկոս որդի իմ։ Ողջոյն տաջիք
միմեանց ի համբոյր սրբութեան։ Խաղաղութիւն ընդ
ձեզ ամենեսին, որ էք ի Քրիստոս Յիսուս․ ամէն։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՊԵՏՐՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

ԴԲ. ՇՄԱՒՈՆ Պետրոս ծառայ եւ առա- 1
քեալ Յիսուսի Քրիստոսի, որոց հանգիտապատիւ
մեզ հասէք հաւատոց յարդարութիւն Աստուծոյ
մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի: Շնորհք ընդ 2
ձեզ եւ խաղաղութիւն բազմասցի գիտութեամբն
Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ: Որ- 3
պէս ամենայն ինչ մեզ իւրոյ աստուածեղէն զօրու-
թեանն առ ի կեանս եւ յաստուածպաշտութիւն
շնորհեալ, ի ձեռն գիտութեան այնորիկ, որ կոչեացն
զմեզ յիւր ի փառսն եւ ի վայելչութիւն: Որով մե- 4
ծամեծքն եւ պատուական աւետիք պարգեւեալ են
մեզ, զի նոքիմբք աստուածեղէն բնութեանն լինի-
ցիմք հաղորդակիցք, փախուցեալք ի ցանկութեանց
աշխարհիս եւ յապականութեանց: Եւ սմին այսմիկ 5
զամենայն փոյթ ի մէջ առեալ ձերովք հաւատովքն
մատակարարեսջիք զառաքինութիւն, եւ առաքինու-
թեամբն զգիտութիւն, Եւ գիտութեամբն զժուժ- 6
կալութիւն, եւ ժուժկալութեամբն զհամբերութիւն,

7 եւ համբերութեամբն զաստուածպաշտութիւն, Եւ
աստուածպաշտութեամբն զեղբայրսիրութիւն, եւ
8 եղբայրսիրութեամբն զսէր: Զայսոսիկ ձեր յանձին
կալեալ եւ ի սոյն յաճախեալ, ոչ դատարկս եւ ան-
պտուղս զձեզ հաստատիցեն ի Տեառն մերոյ Յիսու-
9 սի Քրիստոսի գիտութիւնն: Իսկ յոր ոչն իցեն սոքա
մերձ, կոյր է եւ զաչացու․ ի մոռացօնս դարձուցեալ
10 զսրբութիւն առաջնոց իւրոցն յանցանաց: Վասն
որոյ, եղբարք, առաւել փութասջիք զի բարեացն
գործովք հաստատուն զձեր կոչումն եւ զընտրու-
թիւն պահիցէք: Զայս արարեալ, ոչ երբէք յան-
11 ցանիցէք․ Զի այսպէս առատապէս շնորհեսցի ձեզ
մուտ ի յաւիտենական արքայութիւն Տեառն մերոյ
եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի:
12 ԴԳ․ Որով պատրաստ իցեմ միշտ ձեզ յիշեցու-
ցանել վասն սոցին առաւել եւս գիտակացն եւ հաս-
13 տատելոցն, եկեալ հասեալ ճշմարտութեանն: Քան-
զի իրաւունս համարիմ, մինչ դեռ եմ ի մարմնի աստ,
14 զարթուցանել զձեզ յիշատակօք: Գիտեմ թէ վաղ-
վաղակի է լինելոց մերկանալ յինէն մարմնոյս, որ-
15 պէս եւ Տէր մեր Յիսուս Քրիստոս եցոյց ինձ: Եւ
փութամ ճեպիմ միշտ զձեզ յորդորել, զի եւ յետ
իմոյ ելանելոյ յաշխարհէս ունիցէք զյիշատակս այ-
16 սոցիկ: Քանզի ոչ եթէ պաճուճեալ ինչ առասպե-
լեաց զհետ երթեալ, ցուցաք ձեզ զՏեառն մերոյ
Յիսուսի Քրիստոսի զզօրութիւն եւ զգալուստն․ այլ
17 մեզէն եղեալ ականատեսք նորա մեծութեանն: Քան-
զի առեալ յԱստուծոյ եւ ի Հօրէ զփառս եւ զպա-
տիւ, եկեալ յայնպիսի բարբառոյ ի մեծվայելչու-
թեան փառաց անտի, եթէ Դա է որդի իմ սիրելի
18 ընդ որ ես հաճեցայ: Եւ զայս բարբառ մեք իսկ լու-
աք եկեալ յերկնից, որ ընդ նմա իսկ էաք ի սուրբ
19 լերինն: Եւ ունիմք հաստատագոյն զբանն մարգարէա-
կան, որում եթէ անսայցէք, բարւոք առնէք, իբրեւ

ճրագի՝ որ տայցէ լոյս ի խաւարչտին տեղւոջ, մինչեւ
տիւն լուսաւորեսցէ, եւ արուսեակն ծագեսցէ ի
սիրտս ձեր:
ԳԳ. Բայց նախ այսմ գիտակ լինիջիք, զի ամե- 20
նայն մարգարէութիւն իւրոց գրոց լուծումն ոչ ունի:
Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մար- 21
գարէութիւն երբեք, այլ ի Հոգւոյն սրբոյ կրեալք՝
խօսեցան մարդիկ յԱստուծոյ:

ԳԼՈՒԽ Բ.

Եղեն եւ սուտ մարգարէք ի ժողովրդեանն, 1
որպէս եւ այժմ ի ձեզ լինիցին սուտ վարդապետք,
որք սպրդեալ մուծանեն հերձուածս կորստեան, եւ
զոր Տէրն գնեաց զնոսա՝ ուրացեալ, ածեն ի վերայ
անձանց զարագահաս կորուստ: Եւ բազումք անկեալ 2
երթիցեն զհետ նոցա անառակութեանցն. վասն որոյ
ճշմարտութեանն ճանապարհ հայհոյեսցի: Եւ ագա- 3
հութեամբ մտացածին բանիւք առնիցեն զձեզ վտա-
րանդի. որոց դատաստանն ի բնէ ոչ դատարկանայ,
եւ կորուստն նոցա ոչ նիրհեսցէ: Զի եթէ ի հրեշ- 4
տակն յանցուցեալս Աստուած ոչ խնայեաց, այլ
խաւարին կապանօք արկեալ ի տարտարոսն՝ ետ պա-
հել ի դատաստան. Նա եւ ոչ ի սկզբանն աշխարհի 5
խնայեաց. բայց զութերորդն զՆոյ՝ զարդարութեանն
քարոզ պահեաց ի ջրհեղեղէ աշխարհի ամբարշտե-
լոցն ածեալ: Եւ զքաղաքս Սոդոմացւոց եւ Գոմո- 6
րացւոց դարձուցեալ յաճիւն՝ դատեցաւ, օրինակ առ
յապա ամբարշտելոցն կացուցանէր: Եւ զարդարն 7
զՂովտ ձանձրացեալ յանկարգ գիջութեան գնացիցն
փրկեաց: Քանզի ականատես եւ ականջալուր արդարն 8
բնակեալ ի մէջ նոցա, օր ըստ օրէ զիւր սուրբ ոգին
նոցա անօրէն գնացիւքն տանջէր:
ԳԵ. Գիտէ Տէր զաստուածապաշտս փրկել ի 9
փորձութենէ, եւ զանօրէնս պահել ի տանջանս ա-

10 ւուրն դատաստանի․ Մանաւանդ որ զհետ մարմնոյ
պղծալից ցանկութեանց իցեն երթեալ, արհամար-
հողք տէրութեանն, ժպիրհք, յանդգունք, չզան-
11 գիտեն զփառս հայհոյել։ Ուր հրեշտակք զօրու-
թեամբ եւ կարողութեամբ քան զնոսա մեծամեծք,
չածեն զնոքօք ի Տեառնէ զհայհոյութեան դատաս-
12 տան։ Այլ սոքա իբրեւ զանխօս անասունս ըստ բնա-
ծին բարուցն յեղծումն եւ յապականութիւն, որոց
չենն գիտակ, հայհոյեն յապականութեան իւրեանց,
13 եւ ապականեսցին, Տանջեալք ի վարձուց անիրաւու-
թեան․ որ ցանկութիւն զաւուրն փափկութիւն հա-
մարին․ բծկանք, արատաւորք, փափկացեալք ի պա-
14 տիրս իւրեանց, լեալ ձեզ խրախճանակիցք։ Աչս
ունին հանգոյնս պոռնկաց, անդադարս ի մեղաց, պա-
տրեն զանձինս յողդողդաց․ որ ունին սիրտ հարեալ
15 զագահութեան, մանկունք անիծից։ Թողեալ զու-
ղորդ ճանապարհն, մոլորեցան․ զհետ երթեալ ճա-
նապարհին Բաղաամայ Բէորեան, զվարձս անիրաւու-
16 թեան սիրեցին․ Որ կշտամբանս իւրոյ անօրէնութեանն
ստացաւ զէշն անխօսուն, մարդկեղէն բարբառովն
բարբառեալ, արգել զմարգարէին զանօրէնութիւն։
17 Այսպիսիքն են աղբիւրք անջրդիք եւ մէգք վարեալք
ի մրրկէ, որոց աղջամուղջք խաւարին յաւիտեան
18 պահեալ կան։ Քանզի մեծաբանս սնոտեաց բարբա-
ռեալ, պատրեն գիջութեամբք, ցանկութեամբք
մարմնոյ զայնոսիկ՝ որ սոյզն փախչէին յայնցանէ,
19 որ ի մոլորութեանն շրջէին։ Նոցա ազատութիւն
խոստանան, եւ ինքեանք ապականութեան ծառայք
են․ զի որով իւիք յաղթիցի ոք, նորին եւ ծառայ
20 է։ Զի եթէ փախուցեալք ի պղծութեանց աշխար-
հի գիտութեամբ Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի
Քրիստոսի, եւ դարձեալ ընդ նոյնս շաղեալք պա-
տիցին, եղեւ նոցա վախճանն չար քան զառաջինն։
21 Զի լաւ էր նոցա թէ բնաւ իսկ չէր ծանուցեալ զար-

դարութեան ճանապարհն. քան թէ ծանեան, եւ
յետս կացին ի սուրբ պատուիրանէն՝ որ նոցա աւան-
դեցաւ: Եկեալ ի դէպ նոցա ճշմարիտ առակին զգօ- 22
նութեան, եթէ Շուն դառնայ անդրէն ի փսխած
իւր, եւ Խոզ լուացեալ ընդ տիղմն թաւալեալ:

ԳԼՈՒԽ Գ.

ԳԶ. Զայս ձեզ, սիրելիք, երկրորդ թուղթ գրեմ, 1
որով զարթուցից ի յիշատակ զհաստատուն միտս
ձեր. Յիշել զյառաջագոյն ասացեալ պատգամս ի 2
սրբոց մարգարէից եւ յառաքելոցն ձերոց, զպատուէրս
Տեառն եւ փրկչին: Բայց զայս նախ գիտասջիք, զի 3
յաւուրս յետինս եկեսցեն արհամարհողք, այպա-
նողք, որ ըստ իւրեանց ցանկութեանց գնասցեն. Եւ 4
ասիցեն՝ ո՞ւր են աւետիք գալստեան նորա. զի յորմէ
հետէ հարքն ննջեցին՝ ամենայն ինչ նոյնպէս կայ մնայ
ի սկզբանէ արարածոց. Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ 5
որ զայսն կամին, եթէ երկինք էին ի սկզբանէ եւ
երկիր ի ջրոց, եւ ջուրք հաստատեալ բանիւն Աս-
տուծոյ. Վասն որոյ երբեմն աշխարհ ջրհեղեղաւ 6
ապականեալ կորեաւ: Եւ այժմ երկինք եւ երկիր 7
նովին բանիւ գանձեալ են, հրոյ պահեալք յօրն
դատաստանի, եւ կորստեան ամբարիշտ մարդկան:
Եւ այս եւս մի լիցի ի ձէնջ ծածկեալ, սիրելիք, զի 8
մի օր Տեառն իբրեւ զհազար ամ է, եւ հազար ամ
իբրեւ զմի օր: Ոչ յամեցուցէ Տէր զաւետիսն, որ- 9
պէս ոմանք յամր համարին, այլ երկայնամիտ լինի
առ ձեզ. քանզի ոչ կամի եթէ ոք կորիցէ, այլ զամե-
նեցուն հասանել յապաշխարութիւն:

ԳԻ. Այլ եկեսցէ օր Տեառն իբրեւ զգող. յո- 10
րում երկինք սաստկապէս անցցեն, եւ բնութիւնք
հրով կիզեալ լուծցին, եւ երկիր եւ որ ի նմա գործք
գտանիցին: Եւ ի լուծանել այսպէս այսր ամենայնի, 11
որպիսի ինչ պարտ իցէ ձեզ գտանել. այլ սուրբ եւ

12 աստուածապաշտ կարգաւ ակն ունել, Եւ փութալ
հասանել գալստեան աւուրն Տեառն, յորում եր-
կինք հրայրեացք լուծանիցին, եւ բնութիւնք հրդե-
13 հեալ հալեսցին: Նորոց երկնից եւ նորոյ երկրի ըստ
աւետեացն հայեցեալ սպասիցեմք, յորս արդարու-
14 թիւնն բնակէ: Վասն որոյ, սիրելիք, այսոցիկ սպա-
սեալ, փոյթ յանձին ունիջիք անբիծք եւ անարատք
15 գտանել նմա ի խաղաղութիւն. Եւ զՏեառն երկայն-
մտութիւնն՝ փրկութիւն համարեսջիք: Զոր օրի-
նակ եւ սիրելի եղբայրն մեր Պաւղոս ըստ շնորհելոյ
16 իմաստութեանն նմա յԱստուծոյ գրեաց ձեզ. Որպէս
եւ յամենայն իսկ թուղթսն խօսի վասն այսոցիկ,
յորս գտանի ինչ ինչ դժուարիմաց, զոր անուսմունքն
եւ յողդողդքն կամակորեն, որպէս եւ զամենայն իսկ
17 գիրս առ իւրեանց անձանց կորուստ: Դուք այսու-
հետեւ, սիրելիք, իբրեւ զկանխագէտս զգուշասջիք,
զի մի՛ անառակ մոլորութեամբն զգածեալք՝ անկանի-
18 ջիք յաստեաց հաստատութեանն: Աճեցէք շնորհօք
եւ գիտութեամբն Տեառն մերոյ եւ փրկչին Յիսուսի
Քրիստոսի. Նմա փառք եւ այժմ եւ յօրն յաւի-
տենից. Ամէն:

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ԵԿ. ՈՐ էրն ի սկզբանէ, զորմէ լուաքն, որում 1
ականատեսն իսկ եղեաք, ընդ որ հայեցաքն, եւ
ձեռք մեր շօշափեցին ի վերայ բանին կենաց. Եւ 2
կեանքն յայտնեցան, եւ տեսաք, եւ վկայեմք, եւ
պատմեմք ձեզ զյաւիտենական կենացն, որ էր առ
Հօր եւ երեւեցաւ մեզ: Զոր տեսաքն եւ լուաք, 3
պատմեմք եւ ձեզ, զի եւ դուք հաղորդութիւն ու-
նիցիք ընդ մեզ, եւ մեր հաղորդութիւնն իցէ ընդ
Հօր եւ ընդ Որդւոյ նորում Յիսուսի Քրիստոսի:
Եւ զայս գրեմք ձեզ, զի ձեր ուրախութիւնն կա- 4
տարեալ իցէ: Եւ այս են աւետիքն՝ զոր լուաք առ 5
ի նմանէ եւ պատմեմք ձեզ. զի Աստուած լոյս է, եւ
խաւար ի նմա չիք եւ ոչ մի: Եթէ ասիցեմք եթէ 6
հաղորդութիւն ունիմք ընդ նմա, եւ ի խաւարի շըր-
ջիցիմք, ստեմք եւ ոչ առնեմք զճշմարտութիւնն:
Իսկ եթէ ընդ լոյս գնայցեմք, որպէս եւ նա լոյս է, 7
հաղորդութիւն ունիմք ընդ միմեանս, եւ արիւնն

Յիսուսի Որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց։
8 Եթէ ասիցեմք եթէ մեղս ինչ մեք ոչ ունիմք, զան-
ձինս խաբեմք. եւ ճշմարտութիւն ի մեզ ոչ գոյ։
9 Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր, հաւա-
տարիմ է նա եւ արդար տալ ի թողուլ զմեղս մեր,
10 եւ սրբել զմեզ յամենայն անիրաւութենէ։ Եթէ
ասիցեմք եթէ ոչ ինչ մեղաք, սուտ առնեմք զնա,
եւ բան նորա ոչ է ի մեզ։

ԳԼՈՒԽ Բ.

1 ԽԲ. Որդեակք իմ, զայս գրեմ ձեզ զի մի՛ մե-
ղիցէք. եւ եթէ մեղիցէ ոք, ունիմք բարեխօս առ
Աստուած զՅիսուս Քրիստոս զարդարն եւ զանա-
2 րատ։ Եւ նա է քաւութիւն մեղաց մերոց, եւ ոչ
3 եթէ մերոցն միայն, այլ եւ ամենայն աշխարհի։ Եւ
յայսմիկ գիտեմք եթէ ծանեաք զնա, եթէ զպատուի-
4 րանս նորա պահիցեմք։ Որ ասիցէ եթէ ծանեայ զնա,
եւ զպատուիրանս նորա ոչ պահիցէ, սուտ է, եւ
5 ճշմարտութիւն ի նմա ոչ գոյ։ Իսկ որ պահիցէ զբան
նորա, արդարեւ ի նմա կատարեալ է սէրն Աստու-
6 ծոյ. այսուիկ ճանաչեմք եթէ ի նմա եմք։ Որ ասիցէ
ի նմա բնակել, այնպէս պարտի գնալ, որպէս եւ
նայն գնաց։
7 ԽԳ. Սիրելիք, ոչ եթէ նոր ինչ պատուիրան
գրեմ ձեզ, այլ զհին պատուիրանն՝ զոր ի սկզբանէ
ունէիք, եւ հին պատուիրանն՝ բանն է զոր լուարուք։
8 Դարձեալ նոր պատուիրան գրեմ ձեզ, որ է ճշմար-
տիւ ի նմա եւ ի ձեզ. զի խաւարն անցանէ, եւ լոյսն
9 ճշմարիտ արդէն իսկ երեւի։ Որ ասէ եթէ ի լոյս իցէ,
եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է, եւ ի խաւարի է
10 տակաւին։ Որ սիրէ զեղբայր իւր, ի լոյս բնակէ, եւ
11 գայթագղութիւն ի նմա չիք։ Իսկ որ ատեայ զեղբայր
իւր, ի խաւարի է եւ ընդ խաւար շրջի, եւ ոչ գի-
տէ յո երթայ, զի խաւարն կուրացոյց զաչս նորա։

Գրեմ ձեզ, որդեակք, զի թողեալ են ձեզ մեղքն 12
ձեր վասն անուան նորա: Գրեմ ձեզ, հարք, զի ծա- 13
նեայք դուք զայն որ ի սկզբանէն է: Գրեմ ձեզ, ե-
րիտասարդք, զի յաղթեցէք դուք չարին: Գրեցի 14
ձեզ, մանկունք, զի ծանեայք դուք զՀայրն: Գրեցի
ձեզ, հարք, զի ծանեայք դուք զայն որ ի սկզբանէն
է: Գրեցի ձեզ, երիտասարդք, զի էք դուք հզօրա-
ցեալք, եւ բանն Աստուծոյ ի ձեզ բնակէ, եւ յաղ-
թեցէք դուք չարին: Մի՛ սիրէք զաշխարհ, եւ մի՛ որ 15
ինչ յաշխարհի է: Եթէ ոք սիրէ զաշխարհ, ոչ է ի 16
նմա սէր Հօր. զի ամենայն որ ինչ յաշխարհի է,
ցանկութիւն է մարմնոյ, եւ ցանկութիւն աչաց, եւ
ամբարտաւանութիւն աստի կենացս. որ ոչ է առ ի
Հօրէ, այլ յաշխարհէ աստի է: Եւ աշխարհս անց- 17
ցանէ եւ ցանկութիւն նորա. իսկ որ առնէ զկամս
Աստուծոյ, մնայ յաւիտեան:

ԺԹ. Որդեակք, յետին ժամանակ է, եւ որպէս 18
լուարուք եթէ Նեռն գալոց է, եւ արդէն իսկ նեռինք
բազումք եկեալ են, որով մարթեմք իմանալ եթէ
յետին ժամանակ է: Առ ի մէնջ ելին, այլ ոչ էին ի 19
մէնջ. զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ մնային.
այլ զի յայտնի լինիցին եթէ ոչ էին ամենեքին նոքա
ի մէնջ: Եւ դուք օծութիւն ունիք առ ի սրբոյն, եւ 20
գիտէք ամենեքին: Ոչ գրեցի ձեզ եթէ ոչ գիտէք 21
զճշմարտութիւնն, այլ թէ գիտէք զնա, եւ թէ զի
ամենայն ստութիւն ոչ է ի ճշմարտութենէ անտի:
Իսկ ո՞ իցէ սուտ, եթէ ոչ՝ որ ուրանայ եթէ Յիսուս 22
չէ Քրիստոսն. նա իսկ է Նեռն, որ ուրանայ զՀայր
եւ զՈրդի: Ամենայն որ ուրանայ զՈրդի, եւ ոչ զՀայր 23
ընդունի. իսկ որ խոստովանի զՈրդի, նա եւ զՀայր
ընդունի: Դուք զոր լուարուքն ի սկզբանէ՝ ի ձեզ 24
բնակեսցէ. զի եթէ ի ձեզ բնակեսցէ՝ զոր ի սկզբանէն
լուարուք, եւ դուք յՈրդի եւ ի Հայր բնակեսջիք: Եւ 25

այս են աւետիքն զոր աւետարանեացն նա մեզ զկեանս
յաւիտենականս ։
26 ԽԶ. Զայս գրեցի ձեզ, զի մի՛ ոք զձեզ մոլորե-
27 ցուցանիցէ ։ Եւ դուք օծութիւնն՝ զոր ընկալարուք
ի նմանէ, բնակեսցէ ի ձեզ. եւ չէ ինչ պիտոյ թէ ոք
զձեզ ուսուսցէ, այլ որպէս զի նորա օծութիւնն ու-
սուցանիցէ զձեզ վասն ամենայնի. եւ ճշմարիտ է եւ
28 չէ սուտ. եւ որպէս ուսոյց զձեզ, կայք ի նմա ։ Եւ
այժմ, ո՛րդեակք, կացէք ի նմին. զի եթէ յայտնես-
ցի, ունիցիմք համարձակութիւն, եւ մի՛ ամաչեսցուք
29 ի նմանէ ի գալստեանն նորա ։ Զի եթէ գիտիցէք ե-
թէ արդար է նա, իմասջիք եթէ ամենայն որ առնէ
զարդարութիւն՝ առ ի նմանէ ծնեալ է ։

ԳԼՈՒԽ Գ.

1 Տեսէք որպիսի՛ սէր շնորհեաց մեզ Հայր, զի
որդիք Աստուծոյ կոչեսցուք եւ եմք. վասն այսորիկ
աշխարհ ոչ ճանաչէ զմեզ, քանզի ոչ ծանեաւ զնա ։
2 ԽԷ. Սիրելիք, այժմ որդիք Աստուծոյ եմք, եւ
չեւ եւս է յայտ եթէ զի՛նչ լինելոց իցեմք. գիտեմք
զի յորժամ նա յայտնեսցի, նման նմա լինելոց եմք,
3 զի տեսանելոց եմք զնա, որպէս եւ էն ։ Եւ ամենայն
որ ունի զայս յոյս յանձին՝ սրբէ զանձն իւր, որպէս
4 եւ նայն սուրբ է ։ Ամենայն որ զմեղս գործէ, նա եւ
զանօրէնութիւն առնէ, եւ ինքն իսկ մեղքն անօրէ-
5 նութիւն է ։ Եւ գիտեմք զի նա յայն սակս յայտնե-
6 ցաւ, զի զմեղս բարձցէ, եւ ի նմա մեղք ոչ են ։ Ա-
մենայն որ ի նմա է հաստատեալ՝ ոչ մեղանչէ. եւ ա-
մենայն որ մեղանչէ, ոչ ետես զնա եւ ոչ ծանեաւ
7 զնա ։ Մանկունք, մի՛ ոք զձեզ խաբեսցէ. որ առնէ
զարդարութիւն, արդար է՝ որպէս եւ նայն արդար է ։
8 Եւ որ առնէ զմեղս՝ ի սատանայէ է, զի ի սկզբանէ
սատանայ մեղանչէ. վասն այսորիկ յայտնեցաւ Որդին
9 Աստուծոյ, զի լուծցէ զգործս սատանայի ։ Ամենայն

որ յԱստուծոյ է ծնեալ՝ մեղս ոչ առնէ, զի սերմն
նորա ի նմա մնայ. եւ ոչ կարէ մեղանչել, զի յԱս-
տուծոյ է ծնեալ: Այսուիկ յայտնի են ի միմեանց 10
որդիք Աստուծոյ եւ որդիք սատանայի:

ԾԼ. Ամենայն որ ոչ առնէ զարդարութիւն՝ չէ
նա յԱստուծոյ, եւ որ ոչ սիրէ զեղբայր իւր: Զի 11
այս է պատուիրանն՝ զոր լուարուք ի սկզբանէ, զի սի-
րեսցուք զմիմեանս: Ոչ որպէս Կայէնն ի չարէ անտի 12
էր, եւ սպան զեղբայրն իւր, եւ յո՞ր սակս սպան
զնա. զի իւր գործքն չար էին, եւ եղբօրն բարի: Եւ 13
մի՛ ինչ զարմանայք, եղբարք, եթէ աշխարհս զձեզ
ատեայ: Մեք գիտեմք, զի փոխեցաք ի մահուանէ ի 14
կեանս, քանզի սիրեմք զեղբարս. իսկ որ ոչն սիրէ,
անդէն ի մահուն մնայ: Ամենայն որ ատեայ զեղբայր 15
իւր, մարդասպան է. եւ գիտէք, զի ամենայն մար-
դասպան ոչ ունի կեանս յաւիտենականս յանձին
հաստատեալ: Այսուիկ գիտացաք զսէրն, զի նա 16
զանձն իւր եդ վասն մեր. եւ մեք վասն եղբարց մե-
րոց պարտիմք դնել զանձինս: Որ ունիցի զկեանս ինչ 17
զաշխարհիս, եւ տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ
իւիք, եւ փակեսցէ զգութս իւր առ ի նմանէ, զիա՞րդ
սէրն Աստուծոյ ի նմա իցէ բնակեալ:

ՁԿ. Որդեակք, մի՛ բանիւք եւ լեզուօք սիրես- 18
ցուք, այլ արդեամբք եւ ճշմարտութեամբ: Եւ այ- 19
սուիկ լիցուք ծանուցեալք եթէ ի ճշմարտութենէ
անտի իցեմք. եւ առաջի նորա արասցուք հանդէս
սրտից մերոց: Եթէ ստգտանիցեն զմեզ սիրտք մեր, 20
այլ Աստուած մեծ է քան զսիրտս մեր, եւ գիտէ
զամենայն: Սիրելիք, եթէ սիրտք մեր զմեզ ոչ 21
ստգտանիցեն, համարձակութիւն ունիմք առ Աստու-
ած. Եւ զոր ինչ հայցեմք, առնումք ի նմանէ. զի 22
զպատուիրանս նորա պահեմք եւ զհաճոյս առաջի
նորա առնեմք: Եւ այս է պատուիրան նորա, զի հա- 23
ւատասցուք յանուն Որդւոյ նորա Յիսուսի Քրիս-

տոսի, եւ սիրեսցուք զմիմեանս, որպէս եւ ետ մեզ
24 պատուէր: Եւ որ պահէ զպատուիրանս նորա, ի նմա
է հաստատեալ եւ նա ի նմա. եւ յայսմանէ գիտեմք
եթէ բնակեալ է ի մեզ ի Հոգւոյ անտի՝ զոր ետ մեզ:

ԳԼՈՒԽ Դ.

1 ԶԲ. Սիրելիք, մի՛ ամենայն հոգւոյ հաւատայք.
այլ ընտրեցէք զհոգիսն եթէ յԱստուծոյ իցեն. զի
2 բազում սուտ մարգարէք ելեալ են յաշխարհ: Եւ
մեք այսուիկ ճանաչեմք զհոգին Աստուծոյ: Ամենայն
հոգի որ խոստովանի զՅիսուս Քրիստոս մարմնով
3 եկեալ, յԱստուծոյ է նա. Եւ ամենայն հոգի որ ոչ
խոստովանի զՅիսուս մարմնով եկեալ, չէ նա յԱս-
տուծոյ. եւ այս նեռինն է, զորմէ լուարուք եթէ գա-
4 լոց է, եւ արդէն իսկ յաշխարհի է: Դուք յԱստու-
ծոյ էք, որդեակք, եւ յաղթեցէք նոցա. զի մեծ է
5 որ ի ձեզ է, քան զայն որ յաշխարհին է: Նոքա
յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, եւ
6 աշխարհ լսէ նոցա: Մեք յԱստուծոյ եմք. որ զԱս-
տուած ճանաչէ՝ լսէ մեզ, եւ որ ոչ է յԱստուծոյ՝ ոչ
լսէ մեզ. այսուիկ ճանաչեմք զհոգին ճշմարտութեան
եւ զհոգին խաբէութեան:

7 ԶԳ. Սիրելիք, սիրեսցուք զմիմեանս, զի սէր
յԱստուծոյ է. եւ ամենայն որ սիրէ, յԱստուծոյ է
8 ծնեալ եւ ճանաչէ զԱստուած: Եւ որ ոչն սիրէ՝
9 ոչ ճանաչէ զԱստուած, զի Աստուած սէր է: Եւ զի
յայսմ երեւեցաւ սէրն Աստուծոյ ի մեզ, զի զՈրդին
իւր միածին առաքեաց յաշխարհ, զի եղիցուք նովաւ
10 կենդանիք: Յայսմ է սէրն, ոչ զի մեք սիրեցաք զԱս-
տուած, այլ զի նա սիրեաց զմեզ, եւ առաքեաց զՈր-
11 դին իւր ի քաւութիւն մեղաց մերոց: Սիրելիք, եթէ
Աստուած այնպէս սիրեաց զմեզ, ապա եւ մեք պար-
տիմք զմիմեանս սիրել:

12 ԶԴ. ԶԱստուած ուրուք երբեք չիք տեսեալ.

եթէ սիրեսցուք զմիմեանս, Աստուած ի մեզ բնակէ,
եւ սէր նորա ի մեզ կատարեալ է: Այսուիկ գի- 13
տեմք եթէ մեք ի նմա բնակեալ եմք եւ նա ի մեզ,
զի ի Հոգւոյն իւրմէ ետ մեզ: Եւ մեք տեսաք եւ 14
վկայեմք, զի Հայր առաքեաց զՈրդին իւր փրկիչ աշ-
խարհի: Որ ոք խոստովանեսցի՝ թէ Յիսուս է Որդի 15
Աստուծոյ, Աստուած ի նմա բնակէ եւ նա յԱստու-
ած: Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք զսէրն Աս- 16
տուծոյ, զոր ունի առ մեզ: Աստուած սէր է, եւ որ
կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, եւ Աստուած
ի նմա բնակէ: Յայսմիկ կատարեալ է սէրն նորա ի 17
մեզ, զի համարձակութիւն ունիցիմք յաւուրն դա-
տաստանի. զի որպէս եւ նայն է, նոյնպէս եւ մեք եմք
յաշխարհիս յայսմիկ: Երկիւղ ոչ գոյ ի սէր, այլ սէր 18
կատարեալ ի բաց մերժէ զերկիւղն. զի երկիւղ ընդ-
տանջանօք է, իսկ որ երկնչին, չէ կատարեալ ի սէրն:
Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սի- 19
րեաց զմեզ: Եթէ ոք ասիցէ եթէ սիրեմ զԱստուած, 20
եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր
իւր՝ զոր տեսանէ, զԱստուած զոր ոչն եւտես՝ զիա՞րդ
կարիցէ սիրել: Եւ զայս պատուէր ունիմք առ ի նմա- 21
նէ, զի որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա եւ զեղբայր իւր:

ԳԼՈՒԽ Ե.

ՁԶ. Ամենայն որ հաւատայ եթէ Յիսուս է 1
Քրիստոսն, յԱստուծոյ ծնեալ է. եւ ամենայն որ
սիրէ զծնողն, սիրէ եւ զծնեալն ի նմանէ: Այսուիկ 2
ճանաչեմք եթէ սիրեմք զՈրդին Աստուծոյ, յորժամ
զԱստուած սիրեսցուք եւ զպատուիրանս նորա պահե-
ցուք: Քանզի այս է սէրն Աստուծոյ, եթէ զպատուի- 3
րանս նորա պահեսցուք. եւ պատուիրանք նորա չեն
ինչ ծանունք: Զի ամենայն որ յԱստուծոյ ծնեալ 4
է, յաղթէ աշխարհի. եւ այս է յաղթութիւնն որ
յաղթէ աշխարհի, հաւատքն մեր: Եւ ո՞վ իցէ՝ որ 5

յաղթիցէ աշխարհի, եթէ ոչ՝ որ հաւատայցէ եթէ
6 Յիսուս է Որդի Աստուծոյ: Սա է՝ որ եկն ջրով եւ
հոգւով եւ արեամբ, Յիսուս Քրիստոս. ոչ ջրով
միայն, այլ եւ արեամբ եւ ջրով. եւ Հոգին է՝ որ
7 վկայէ, զի Հոգին իսկ է ճշմարտութիւն: Զի երեք
են որ վկայեն յերկինս. Հայր, Բանն եւ Հոգին
8 սուրբ. եւ երեքեանս մի են: Եւ երեք են որ վկայեն
յերկրի. հոգի, ջուր եւ արիւն. եւ երեքեանն մի են:
9 Եթէ զմարդկան ինչ վկայութիւն ունիցիմք, ապաքէն
Աստուծոյ վկայութիւնն մեծ իցէ: Այս է վկայու-
թիւնն Աստուծոյ, զի վկայեաց ի վերայ Որդւոյն ի-
10 րոյ: Որ հաւատայ յՈրդին Աստուծոյ, ունի յանձին
զվկայութիւնս զայս. որ ոչ հաւատայ Որդւոյ Աս-
տուծոյ, սուտ առնէ զնա. քանզի ոչ հաւատայ
վկայութեանն զոր վկայեաց Աստուած ի վերայ Որ-
11 դւոյն իւրոյ: Եւ այս իսկ է վկայութիւնն, զի կեանս
յաւիտենականս ետ մեզ Աստուած. եւ այս են
12 կեանք՝ որ յՈրդին նորա են: Որ ընդունի զՈրդին,
ընդունի եւ զկեանս. եւ որ ոչ ընդունի զՈրդին Աս-
տուծոյ, եւ ոչ զկեանս ընդունի:

13 Զե. Զայս գրեցի ձեզ, զի գիտասջիք եթէ
կեանս յաւիտենականս ունիք. եւ զի հաւատայցէք
14 յանուն Որդւոյն Աստուծոյ: Եւ այս է համարձակու-
թիւնն զոր ունիմք մեք առ նա, զի զոր ինչ հայցես-
15 ցուք ըստ կամաց նորա, լսէ մեզ: Զի եթէ գիտիցեմք
եթէ լսէ հայցուածոյն մերոյ, ապա գիտեմք եթէ
առնումք զհայցուածսն՝ զոր հայցեմք առ ի նմանէ:
16 Եթէ ոք տեսցէ զեղբայր իւր մեղուցեալ մեղս՝ որ ոչ
ի մահ, խնդրեսցէ, եւ տացէ նմա կեանս մեղուցելոյն
ոչ առ ի մահ: Են մեղք՝ որ մահուչափ են. ոչ վասն
17 այնորիկ ասեմ եթէ խնդրեսցես: Ամենայն անիրա-
ւութիւն՝ մեղք են. եւ են մեղք՝ որ մահու չափ
18 են: Գիտեմք եթէ ամենայն որ յԱստուծոյ է ծնեալ՝
ոչ մեղանչէ. այլ որ յԱստուծոյն է ծնեալ՝ պահէ

զանձն, եւ չարն առ նա ոչ մերձենայ: Գիտեմք 19
եթէ յԱստուծոյ եմք, եւ աշխարհ ամենայն ի չարի
կայ: Եւ գիտեմք եթէ Որդին Աստուծոյ եկն, եւ 20
ետ մեզ միտս, զի ծանիցուք զճշմարիտն. եւ եմք ի
ճշմարտին Որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի. զի նա
է ճշմարիտ Աստուած եւ կեանք յաւիտենական:
Որդեակք, պահեցէք զանձինս ի կռապաշտութենէ: 21

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՐԿՐՈՐԴ

1 ԷԿ. ՅԵՐԻՑՈՒՆՍ առ ընտրեալ Կիւրիա եւ առ
որդեակս իւր, զոր ես սիրեմ ճշմարտութեամբ, եւ
ոչ եթէ ես միայն, այլ եւ ամենեքեան ոյք գիտակ
2 են ճշմարտութեանն. Վասն որոյ ճշմարտութեանն
որ ի մեզ հաստատեալ է, զի եւ ընդ ձեզ իցէ, եւ
3 դուք յաւիտենից ընդ մեզ իցէք: Շնորհք, ողորմու-
թիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ, եւ ի
Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր՝ ճշմար-
4 տութեամբ եւ սիրով եղիցին ընդ ձեզ: Ուրախ եղէ
յոյժ, զի գտի յորդեկացդ քոց որ գնան ճշմարտու-
5 թեամբ, ըստ պատուիրանին զոր առաք ի Հօրէ: Եւ
այժմ աղաչեմ զքեզ, Կիւրիա, իբրեւ ոչ եթէ նոր
ինչ պատուիրան գրեմ քեզ, այլ զոր ի սկզբանէն
6 ունէաք, զի սիրեսցուք զմիմեանս: Եւ այս է սէրն,
զի գնասցուք ըստ պատուիրանաց նորա. եւ այս է
պատուիրանն, զի որպէս լուարուք ի սկզբանէ՝ ըստ
7 նմին գնասջիք: Զի բազում մոլորեցուցիչք ելին յաշ-
խարհ. որ ոք ոչ խոստովանի զՅիսուս Քրիստոս ե-
կեալ մարմնով, նա մոլորեցուցիչ է եւ նեռն:
8 ԷԲ. Զգոյշ լինիջիք անձանց, զի մի՛ կորուսա-

նիցէք զոր վաստակեցէքն, այլ զի առնուցուք բովան-
դակ զվարձս։ Ամենայն որ յանցանէ, եւ ոչ կայ ի 9
վարդապետութեանն Քրիստոսի, զԱստուած ոչ ճա-
նաչէ. որ կայ ի վարդապետութեանն, նա՝ եւ զՈրդի
եւ զՀայր ընդունի։ Եթէ ոք գայցէ առ ձեզ, եւ 10
զվարդապետութիւնս զայս ոչ ունիցի, մի՛ ընդունի-
ցիք զնա ի տուն, եւ մի՛ ողջոյն տայցէք նմա։ Զի որ 11
տասցէ նմա ողջոյն, կցորդ լիցի չարաց գործոց նո-
րա։ Բազում ինչ ունէի գրել առ ձեզ, այլ ոչ կա- 12
մեցայ քարտիսիւ եւ դեղով. զի ակն ունիմ ինձէն
իսկ գալ առ ձեզ, եւ բերան ի բերան խօսել. զի
ուրախութիւնն մեր լիցէ կատարեալ։ Ողջոյն տան 13
քեզ որդիք քեռ քո ընտրելոյ։ Շնորհք ընդ ձեզ։

ԹՈՒՂԹ

ԿԱԹՈՂԻԿԵԱՅՑ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԵՐՐՈՐԴ

---

1 ԻԳ· ՅԵՐԻՑՈՒՆ առ Գայիոս սիրելի, զոր ես
2 սիրեմ ճշմարտութեամբ: Սիրելի, վասն ամենայն ի-
րաց քոյ աջողութեան եւ առողջութեան աղօթս
առնեմ, որպէս է իսկ յաջողութիւն անձինդ քո:
3 Յոյժ ուրախ եղէ ի գալ եղբարց եւ լինել վկայ քոյոյ
ճշմարտութեանդ, որպէս գնաս դու ճշմարտութեամբ:
4 Մեծ եւս ինչ ուրախութիւն քան զայս ոչ ունիմ,
զի լսեմ եթէ իմ որդեակքն ճշմարտութեամբ գնան:
5 Սիրելի, հաւատարիմ գործես զայդ, զոր եթէ առ-
6 նիցես առ եղբարս՝ զդոյն եւ առ օտարս. Որք վկայե-
ցին վասն քո սիրոյդ առաջի եկեղեցւոյ, որոց բարիս
7 արարեալ յուղարկես արժանի Աստուծոյ: Զի վասն
անուանն ելին, եւ ոչ ինչ յումեքէ առնուն զհեթա-
8 նոսականացն: Մեք այսուհետեւ պարտիմք ընդունել
զայնպիսիսն, զի գործակիցք լիցուք ճշմարտութեանն:
9 ԻԳ· Գրեցի ինչ եկեղեցւոյն. այլ որ յառաջադէմն
10 ի նոցանէ՝ Դիոտրեփէս, ոչ ընդունի զմեզ: Վասն
այսորիկ եթէ եկից՝ յիշեցուցից զգործս նորա զոր առ-
նէ, բանիւք չարեօք շատխօսութեամբ առնէ աշխատ
զմեզ. եւ ոչ այսոքիւք շատացեալ, ոչ ինքն ընդունի

զեղբարս, եւ զայնոսիկ որ ընդունէինն՝ արգելու, նա
եւ յեկեղեցւոյ եւս հանէ: Սիրելի, մի՛ լինիցիս նմա- 11
նող չարի, այլ բարւոյ. զի որ զբարիս առնէ՝ յԱս-
տուծոյ է. եւ որ զչարիս գործէ՝ նա ոչ եւս երբեք
զԱստուած: ԶԴեմետրեայ վկայեալ յամենեցունց 12
եւ յեկեղեցւոյն եւ ի ճշմարտութենէ, եւ մեք վկայ-
եմք, եւ դու գիտես զի ճշմարիտ է մեր վկայութիւնն:
Բազում ինչ ունէի գրել քեզ, այլ ոչ կամիմ քար- 13
տիսիւ եւ դեղով գրել. Զի ակն ունիմ ի մօտոյ 14
իսկ տեսանել զքեզ, եւ բերան ի բերան խօսել:
Խաղաղութիւն ընդ քեզ: Ողջոյն տան քեզ սիրե- 15
լիք: Ողջոյն տաջիր սիրելեաց մերոց իւրաքանչիւր
յանուանէ:

ԹՈՒՂԹ
ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅՑ
ՅՈՒԴԱՅԻ ԱՌԱՔԵԼՈՅ

---

1 ԻԵ· ՅՈՒԴԱՅ Յիսուսի Քրիստոսի ծառայ
եւ եղբայր Յակովբայ. հեթանոսաց, որ յԱստուծոյ
Հօրէ էք սիրեցեալք, եւ Յիսուսի Քրիստոսի պա-
2 հեալք եւ ընտրեալք: Ողորմութիւն ձեզ եւ խա-
3 ղաղութիւն եւ սէր բազմասցի: Սիրելիք, զամենայն
փոյթ յանձին կալեալ գրել ձեզ վասն մերոյ հասա-
րակաց փրկութեան, հարկ յանձին կալայ գրել ձեզ
եւ աղաչել, զի ծգնիցիք ի վերայ հաւատոյն որ մի-
4 անգամ աւանդեցաւ սրբոց: Քանզի սպրդեցին մտին
ոմանք, որք յառաջագոյն իսկ կատարեալ էին ի սոյն
դատաստան. ամբարիշտք, որ զԱստուծոյ մերոյ շնորհ-
սն դարձուցին յանկարգութիւն, եւ զմի միայն
զիշխանն եւ զՏէր մեր Յիսուս Քրիստոս ուրացեալք:
5 Յիշեցուցանել ձեզ այսուհետեւ կամ է ինձ, որ գի-
տէքդ զամենայն. զի Աստուած մի անգամ զժողո-
վուրդն փրկեաց յԵգիպտոսէ, երկրորդ անգամ զան-
6 հաւատսն կորոյս: Եւ զհրեշտակս՝ որ ոչ պահեցին
զիւրեանց իշխանութիւնն, այլ թողին զիւրեանց
բնակութիւնն, ի դատաստանս մեծի աւուրն մշտնջե-
7 նաւոր կապանօք պահեաց ի խաւարի: Որպէս Սոդոմ
եւ Գոմոր եւ որ շուրջ զնոքօք քաղաքքն, որ ըստ
նմին օրինակի պոռնկեցան զհետ ընկերացն մարմնոց,
կան առաջի օրինակ, զյաւիտենական հրոյն ընկալեալ

զպատաստան։ Ըստ նմին օրինակի եւ սոքա իբրեւ 8
քնով զանդգաչեալք՝ զմարմին պղծեն, զտէրութիւնս
քամահեն, զփառս հայհոյեն։ Ուր Միքայէլ հրեշ- 9
տակապետ, յորժամ բանսարկու սատանայի վիճեալ
տայր պատասխանի վասն Մովսիսեան մարմնոյն, ոչ
ժպրհեցաւ հայհոյութեան դատաստանին հանդուր-
ժել, այլ ասէ. Սաստեսցէ ի քեզ Տէր։ Իսկ սոքա 10
զոր ինչ ոչ իմանան, հայհոյեն. եւ զայն եւս, զոր
բնութեամբ իբրեւ զանխօս անասունս գիտեն, ի նոսին
ապականեսցին։ Վայ է նոցա, զի ըստ ճանապարհին 11
Կայենի գնացին, եւ ըստ մոլորութեանն Բաղաամայ
զեղխեցան զհետ վարձուց, եւ ըստ հակառակու-
թեանն Կորխայ կորեան։

ԻԶ. Սոքա են ատեցեալք, շոգմոգք, երթեալք 12
զհետ ցանկութեանց իւրեանց, ի սէրս իւրեանց խար-
դախութեամբ, լինին ընդ ձեզ ուրախակիցք, աներ-
կիւղ զանձինս ճարակեն, ամպք անջրդիք հողմակո-
ծեալք, ծառք պտղակորոյսք, անպտուղք, կրկնա-
մեռք, խլեալք արմատաքի. Անսաստ ալիք ծովու, 13
որ միշտ փրփրեն զիւրեանց զանձանց զամօթ. աս-
տեղք մոլարք, որոց վիհ խաւարին յաւիտեան պա-
հեալ է։ Մարգարէացաւ վասն նոցա եւ եօթներորդն 14
յԱդամայ Ենովք, եւ ասէ. Ահաւասիկ եկն Տէր
բիւրովք սրբովք հրեշտակօք, Առնել դատաստան 15
ըստ ամենայնի, եւ յանդիմանել զամենայն ամբարիշ-
տըս վասն գործոց իւրեանց զոր ամբարշտեցին, եւ
վասն ամենայն խիստ բանից, զոր խօսեցան զնմանէ
մեղաւորք եւ ամբարիշտք։ Սոքա են տրտնջօղք եւ 16
շոգմոգք, երթեալք ըստ իւրեանց անձանցն ցանկու-
թեանց. եւ բերանք նոցա զամբարտաւանս բարբա-
ռին. առնուն ակն երեսաց վասն օգտի։

ԻԷ. Բայց դուք, սիրելիք, յիշեցէք զկանխա- 17
սաց բանս զառաքելոցն Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի. Զի ասէին ձեզ եթէ ի յետին ժամանակս ե- 18

ղեցին մարդք արհամարհողք, երթեալք ըստ իւ-
19 րեանց ամբարշտութեանցն ցանկութեանց։ Սոքա են
20 նշաւակեալք շնչաւորք, որ զոգին ոչ ունիցին։ Այլ
մեք, սիրելիք, եղիցուք շինել զանձինս սրբութեամբ
21 հաւատոցն ի Հոգին սուրբ. կացցուք յաղօթս, Պա-
հել զանձինս սիրովն Աստուծոյ, ակն ունել ողոր-
մութեանն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի
22 կեանսն յաւիտենականս։ Եւ ոմանց դատապարտելոց
23 լինիջիք կշտամբիչք. Եւ զոմանս ապրեցուցանիջիք,
յափշտակեալ ի հրոյ. եւ ոմանց ողորմեսջիք երկիւ-
ղիւ դատել եւ զպատմուճանն որ ի մարմնոյն իցէ
24 աղտեղեալ։ Եւ այնմ, որ կարողն իցէ պահել զձեզ
անարատս եւ անբիծս, հաստատել առաջի իւրոյ
25 փառացն աներկեւան ցնծութեամբ. Միոյն Աստու-
ծոյ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ
փառք, մեծութիւն, զօրութիւն եւ իշխանութիւն
յառաջ քան զամենայն յաւիտեանս, եւ այժմ եւ
յամենայն յաւիտեանս. Ամէն։

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՌԱՔԵԼՈՅ

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ Յիսուսի Քրիստոսի, ի 1
ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց
որ ինչ լինելոց է վաղվաղակի, եւ նշանակեաց առա-
քելով ի ձեռն հրեշտակի իւրոյ առ ծառայ իւր Յով-
հաննէս. Որ վկայեաց զվկայութիւն բանին Աստու- 2
ծոյ, եւ զվկայութիւն Յիսուսի Քրիստոսի՝ զոր ե-
տես, եւ որ էր եւ որ լինելոցն էր յետ այնորիկ։ Ե- 3
րանի որ կարդասցէ կամ լուիցէ զբանս մարգարէու-
թեանս, եւ պահեսցէ զոր ի սմա գրեալ է. զի ժա-
մանակս մերձեալ է։

Ի Յովհաննէ առ եօթն եկեղեցիս՝ որ են յԱ- 4
սիա, շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստու-
ծոյ յէէն եւ որ էն եւ որ գալոցն է, եւ յեօթն զօ-
րութեանց Հոգւոյն որ է առաջի աթոռոյն իւրոյ. Եւ 5
ի Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայէն, որ է
անդրանիկ ի մեռեալս, եւ իշխան թագաւորութեանց
երկրի. որ սիրեաց զմեզ, եւ լոյծ զկապանս մեղաց
մերոց արեամբն իւրով. Եւ արար զմեզ թագաւորս 6
եւ քահանայս Աստուծոյ եւ Հօր իւրոյ. որում փառք
եւ զօրութիւն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-
տենից. ամէն։ Ահաւասիկ գալոց է ընդ ամպս. եւ 7
տեսցեն զնա ամենայն աչք, եւ տեսցեն զնա ծագք
երկրի, եւ որք խոցեցին զնա ամենեքեան յերկրի, եւ

8 կոծեսցին ի վերայ նորա. այո, ամէն: Ես եմ Այբ
եւ ես եմ Քէ, ասէ Տէր Աստուած, որ էն եւ որ է
9 եւ որ գալոցն է ամենակալ: Ես Յովհաննէս եղբայր
ձեր եւ հաւասարակից նեղութեան եւ արքայութեան
եւ համբերութեան որ ի Քրիստոս Յիսուս, եղէ ես
ի կղզւոջն որ անուանեալ կոչի Պատմոս վասն բանին
10 եւ վասն վկայութեանն Յիսուսի Քրիստոսի: Եւ ե-
ղեւ յիս Հոգի ի կիւրակէի աւուր, եւ լուայ զձայն
զհետ իմ զմեծ իբրեւ զձայն փողոյ, որ ասէր ցիս.
11 Ես եմ Ալփա եւ Ով. առաջին եւ վերջին. Զոր
տեսանես՝ գրեա ի գիրս, եւ տուր տանել յեօթն ե-
կեղեցիս որ յԵփեսոս եւ ի Զմիւռնիա, ի Պերգամոն
եւ ի Թիւատիրա եւ ի Սարդիկէ եւ ի Փիղադեղփիա
12 եւ ի Լաւոդիկեա: Եւ դարձայ տեսանել զձայնն որ
խօսէր ցիս, եւ ի դառնալն իմում տեսի եօթն ճրա-
13 գարան ոսկի: Եւ ի մէջ եօթն ճրագարանացն նման
որդւոյ մարդոյ, զգեցեալ պատմուճան պճղնաւոր, եւ
14 գօտեւորեալ առ ստեամբքն գօտի ոսկեղէն. Եւ գլուխ
նորա եւ հերքն իբրեւ զասր սպիտակ եւ որպէս զձիւն.
15 եւ աչք նորա որպէս բոց հրոյ. Եւ ոտք նորա նմա-
նեալ պղնձոյ ծխելոյ ի մէջ հնոցի հրաշէկ. եւ ձայն
16 նորա իբրեւ զձայն ջուրց բազմաց: Եւ ունէր յաջոյ
ձեռին իւրում աստեղս եօթն, եւ ի բերանոյ նորա
ելանէր սուր երկբերանեան. եւ երեսք նորա իբրեւ
17 զարեգակն ճառագայթեալ երեւէին: Եւ իբրեւ տե-
սի զնա, անկայ առ ոտս նորա իբրեւ զմեռեալ. եւ
եդ ի վերայ իմ զաջ իւր եւ ասէ ցիս. Մի՛ երկնչիր.
18 ես եմ առաջին եւ ես եմ յետին. Եւ ես եմ կեանք
եւ ես նոյն որ մեռայ եւ եմ կենդանի այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն. եւ ունիմ զփա-
19 կանս մահու եւ դժոխոց: Գրեա զոր տեսանես, որ
էն եւ որ յապայ եւ որ հանդերձեալ է լինել այս.
20 Զխորհուրդ եօթն աստեղացդ զոր տեսերդ յաջս իմ,
եւ զեօթն ճրագարանս ոսկիս. եօթն աստեղքն՝ հրեշ-

տակք եօթն եկեղեցեացն են, եւ ճրագարանք եօթն՝
եօթն եկեղեցիքն են։

ԳԼՈՒԽ Բ.

Եւ հրեշտակ Եփեսացւոց եկեղեցւոյն գրեա. 1
այսպէս ասէ կալողն որ ունի զաստեղս եօթն յաջու
ձեռին իւրում, եւ շրջի ի մէջ եօթն աշտանակի ոս-
կւոյ։ Գիտեմ զգործս քո եւ զվաստակս քո եւ 2
զհամբերութիւն քո. եւ զի ոչ բառնաս զչարս, եւ
փորձեցեր որ ասեն զինքեանս առաքեալս եւ ոչ են,
եւ Հեբրայեցիս եւ ստեն։ Եւ համբերեցեր եւ վշտա- 3
ցար վասն անուան իմոյ եւ աշխատեցար։ Այլ ասեմ 4
առ քեզ, զի զսէրն քո զառաջին թողեր։ Յիշեա 5
այժմ ուստի անկար, եւ ապաշաւեա. եւ զառաջին
գործսն քո արա. ապա թէ ոչ, գամ ես վաղվաղակի,
եւ շարժեցից զաշտանակս քո ի տեղւոջէ իւրմէ, եթէ
ոչ ապաշխարեսցես։ Արդ զայս արա, զի ատեսցես 6
զգործսն Նիկողայոսի, զոր ես ատեամ։ Որ ունի ա- 7
կանջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ Հոգին սուրբ առ եկե-
ղեցիս. որ յաղթէն, տաց նմա ուտել ի փայտէն կե-
նաց որ է ի մէջ դրախտին Աստուծոյ։ Եւ առ հրեշ- 8
տակ Զմիւռնացւոց եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ
անսկիզբնն եւ անվախճանն, որ եղեւ մեռեալ, եւ
կենդանացաւ։ Տեսի զգործս քո եւ զնեղութիւն եւ 9
զաղքատութիւն, այլ աղքատութիւն քո մեծու-
թիւն եղեւ. եւ զհայհոյութիւնն որ ասէին զինքեանս
Հրեայս գոլ եւ չէին ինչ, այլ ժողով սատանայի։
Մի երկնչիր՝ վասն որոյ կամիս չարչարել. ահա հան- 10
դերձէ բանսարկուն արկանել ի ձէնջ ի բանտ, զի
փորձիցիք, եւ ունիք նեղութիւն աւուրս տասն. լեր
հաւատարիմ մինչեւ ի մահ, եւ տաց քեզ զպսակն
կենաց։ Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին 11
սուրբ ասէ առ եկեղեցիս. որ յաղթէ, ոչ անիրաւի
յերկրորդ մահուանէն։ Եւ առ հրեշտակն որ ի Պեր- 12

գամոյ եկեղեցւոյն, գրեա. այսպէս ասէ որ ունի զսուրն
13 երկսայրի սրեալ: Տեսի զգործս քո, եւ զի բնակեալ
ես ուր աթոռն է սատանայի, եւ ունիս զանուն իմ,
եւ ոչ ուրացար զհաւատս իմ յաւուր յորում Ան-
թիպաս վկայն իմ հաւատարիմ եղեւ. զի վկայ է իմ
հաւատարիմ ամենայն հաւատացեալ՝ որ սպանաւ ի
14 ձէնջ, որ կայք՝ ուր սատանայ է բնակեալ: Այլ ու-
նիմ առ քեզ սակաւ. զի կայ առ քեզ վարդապե-
տութիւնն Բաղաամու՝ որ ուսոյց զԲաղակ դնել գայ-
թագղութիւն առաջի որդւոցն Իսրայելի, ուտել նո-
15 ցա զոհեալ եւ պոռնկել: Այսպէս եւ դու ունիս
զվարդապետութիւնն Նիկողայեցւոց՝ զոր ես ատեամ:
16 Արդ ապաշխարեա, ապա թէ ոչ, գամ վաղվաղակի.
եւ պատերազմեցայց ընդ նոսա սրով բերանոյ իմոյ:
17 Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ Հոգին ասէ
առ եկեղեցիս. որ յաղթէ, տաց նմա ուտել ի մանա-
նայէն թաքուցելոյ, եւ տաց նմա զգիրն սրբութեան.
եւ գրեալ անուն նոր ի գիրն, զոր ոչ ոք գիտէ, բայց
18 միայն որ առնուն: Եւ առ հրեշտակն որ ի Թիւա-
տրոյ եկեղեցւոյն, գրեա. այսպէս ասէ Որդին Աստու-
ծոյ, որոյ աչք իւր են իբրեւ զբոց հրոյ, եւ ոտք նորա
19 նման պղնձի ծխելոյ. Տեսի զգործս քո եւ զսէր եւ
զհաւատ եւ զպաշտօն քո համբերութեամբ. զի բա-
20 զում է վաստակ քո վերջինն քան զառաջինն: Այլ
ասեմ առ քեզ բազում. զի թողեր զկինն զՅեզա-
բէլ, որ ասէր զինքն մարգարէ, եւ ուսուցանէր մոլո-
րութիւն զծառայս իմ, պոռնկել եւ ուտել զզո-
21 հեալ: Եւ ետու նոցա ժամանակ ապաշխարել
22 զպոռնկութիւնն իւրեանց, եւ ոչ ապաշխարեցին: Ա-
հաւասիկ ես արկանեմ զնա ի հնոց, եւ զգործակիցս
իւր ընդ որս շնացաւ՝ ի նեղութիւնս մեծամեծս.
23 եթէ ոչ ապաշխարեսցեն ի գործոց իւրեանց: Եւ
զորդիս նոցա սպանից մահուամբ. եւ ծանիցեն ամե-
նայն եկեղեցիք թէ ես եմ որ յանդիմանեմ զերիկա-

մունս եւ զսիրտս, եւ տաց ձեզ իւրաքանչիւր ըստ
գործոց իւրեանց: Այլ ձեզ ասեմ որք ի Թիւատիր 24
էք, եւ ոչ ունիք զվարդապետութիւնս զայս. որ ոչ
ծանեայք զխորս սատանայի՝ զոր խօսին, ոչ արկից
զձեօք ծանրութիւն: Այլ զոր ունիք՝ պահեցէք, 25
մինչեւ ես գամ: Եւ որ յաղթէ եւ պահէ զգործս 26
իմ մինչեւ ցվախճան, տաց նմա իշխանութիւն ի վե-
րայ ազգաց: Եւ հովուեսցէ զնոսա գաւազանաւ եր- 27
կաթեաւ, եւ իբրեւ զանօթ բրտի փշրեսցէ զնոսա:
Որպէս եւ ես ընկալայ ի Հօրէ իմմէ, եւ տաց նոցա 28
զաստղն առաւօտուն: Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ 29
զինչ Հոգին ասէ առ եկեղեցիս:

ԳԼՈՒԽ Գ.

Եւ առ հրեշտակ Սարդիկեցւոց եկեղեցւոյն 1
գրեա. այսպէս ասէ որ ունի զեօթն հոգիսն Աստուծոյ
եւ զեօթն աստեղս. տեսի զգործս քո, զի անուն
կենդանւոյ ունիս, եւ մեռեալ ես: Լեր արթուն եւ 2
հաստատեա այսուհետեւ, զի հանդերձեալ ես մե-
ռանել. քանզի ոչ գտի զգործս քո կատարեալ ա-
ռաջի Աստուծոյ: Արդեօք յիշեա թէ որպէս լուարն, 3
եւ պահեա եւ ապաշխարեա. ապա թէ ոչ զուար-
թանաս, գամ որպէս գող, եւ ոչ ոք իմանայ զգա-
լուստ իմ առ քեզ: Ունիս սակաւ մի զանուն Սար- 4
դիկեցւոց, որք ոչ աղտեղացուցին զհանդերձս ի-
րեանց, եւ շրջին ի սպիտակս՝ որում արժանի եղեն:
Որ յաղթէ, այսպէս զգեցցի սպիտակս, եւ ոչ ջնջես- 5
ցի անուն նորա ի դպրութենէն կենաց. եւ խոստո-
վանեցայց զանուն նորա առաջի Հօր իմոյ եւ առաջի
հրեշտակաց: Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ 6
ասէ Հոգին առ եկեղեցիս: Եւ առ հրեշտակն Փի- 7
ղադելփեաց եկեղեցւոյն գրեա. այսպէս ասէ սուրբն
ճշմարիտն, որ ունի զփականս Դաւթի. բանայ եւ
ոչ ոք է որ փակէ, եւ փակէ եւ ոչ ոք է որ բանայ:

8 Գիտեմ զգործս քո. ահա ետու առաջի քո դուռն բա-
ցեալ, զոր ոչ ոք կարէ փակել. զի սակաւիկ ունիս
զօրութիւն, եւ պահեցեր զբանս իմ եւ ոչ ուրացար
9 զանուն իմ: Ահաւասիկ ես տամ քեզ զժողովն սա-
տանայի, որք ասեն զինքեանս Հրեայս գոլ եւ ոչ են,
այլ ստեն. արարից զնոսա զի եկեսցեն եւ երկիր
պագցեն առաջի ոտից քոց, եւ ծանիցեն՝ զի ես սի-
10 րեցի զքեզ: Զի պահեցեր զբան համբերութեան
իմոյ, եւ ես պահեցից զքեզ ի ժամէ փորձութեան
քո, որ հանդերձեալ է գալ յամենայն տիեզերս
11 փորձել զամենայն բնակեալս յերեսս երկրի: Ահա
գամ վաղվաղակի, կալ զոր ունիսդ՝ զի մի ոք առցէ
12 զպսակ քո: Որ յաղթէ, արարից զնա սիւն տաճարի
Աստուծոյ իմոյ, եւ արտաքս այլ մի եւս ելցէ. եւ
գրեցից ի վերայ նորա զանուն Աստուծոյ իմոյ, եւ
զանուն քաղաքի Աստուծոյ իմոյ՝ զնորն Երուսաղէմի,
որ իջանելոց է յերկնից Աստուծոյ իմոյ. եւ անուն
13 նորա նոր: Որ ունի ականջս՝ լուիցէ զինչ ասէ Հոգին
14 առ եկեղեցիս: Եւ առ հրեշտակն Լաւոդիկեայ եկե-
ղեցւոյն գրեա. այսպէս ասէ ամէնն, վկայն հաւատա-
րիմ եւ ճշմարիտ, սկիզբն սկզբան արարածոց Ա-
15 ստուծոյ: Գիտեմ զգործս քո, զի ոչ ցուրտ ես եւ ոչ
ջերմ. պարտ էր քեզ ցուրտ լինել եւ կամ ջերմ:
16 Այլ դու գաղջ ես, եւ ոչ ջերմ եւ ոչ ցուրտ, հան-
17 դերձեալ ես փսխել ի բերանոյ իմմէ: Զի ասես.
մեծատուն էի եւ մեծացայ, եւ ոչ ինչ կարօտ եմ.
եւ ոչ գիտես՝ եթէ դու ես ողորմելի եւ հեղգ եւ
18 աղքատ, մերկ եւ կոյր: Արդ ես խորհրդակից եղէց
քեզ. առ գնեա յինէն ոսկի փորձեալ ի հրոյ՝ զի մե-
ծասցիս, եւ հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս, զի մի
երեւեսցի անվայելչութիւն մերկութեան քո. եւ դիր
19 դեղ յաչս քո՝ զի տեսցես: Ես՝ զոր սիրեմ, յանդի-
մանեմ եւ խրատեմ. նախանձեա այժմ, եւ ապաշ-
20 խարեա: Ահաւասիկ կամ ես առ դուրս եւ բախեմ.

*եթէ ոք լուիցէ ձայնի իմում եւ բանայցէ զդրունսն ,
մտից առ նա , եւ ընթրիս արարից առ նա , եւ նա
ընդ իս ։ Որ յաղթէ , տաց նմա նստել ընդ իս յա- 21
թոռ իմ . որպէս եւ ես յաղթեցի , եւ նստայ յա-
թոռ Հօր իմոյ ։ Որ ունիցի ականջս՝ լուիցէ զինչ ասէ 22
Հոգին առ եկեղեցիս ։*

ԳԼՈՒԽ Դ.

*Եւ յետ այսր ամենայնի տեսի , եւ ահա դրունք 1
երկնից բացեալ էին , եւ ձայն փողոյն առաջնոյ զոր
լուայ , խօսէր ընդ իս եւ ասէր . ել այսր , եւ ցուցից
քեզ զինչ լինելոց է յապա ժամանակս ։ Եւ ժամա- 2
նեալ յիս Հոգի , եւ տեսի աթոռ մի զի կայր յեր-
կինս ։ Եւ ի վերայ աթոռոյն նստէր նման տեսլեան 3
ականց յասպւոյ եւ սարդիոնի ։ Եւ քահանայք շուրջ 4
զաթոռովն նմանք տեսլեան զմրխտի . եւ շուրջ զա-
թոռովն աթոռք քսան եւ չորք , եւ ի վերայ աթո-
ռոյն նստէին քսան եւ չորք երիցունք զգեցեալ հան-
դերձս սպիտակս , եւ ի գլուխս իւրեանց պսակս ոս-
կիս ։ Եւ յաթոռոյ անտի ելանէին փայլատակմունք 5
եւ ձայնք եւ որոտմունք . եւ եօթն ղամբարք հրոյ
բորբոքելոյ առաջի աթոռոյն , որ են եօթն Հոգիքն
Աստուծոյ ։ Եւ էր առաջի աթոռոյն ծով ապակեղէն 6
նման սպիտակութեան սառին , եւ ի մէջ աթոռոյն
չորք կենդանիք , եւ լի էին աչօք առաջոյ եւ յետոյ ։
Եւ էր կենդանին առաջին նման առիւծու , եւ եր- 7
կրորդ կենդանին նման զուարակի , եւ երրորդ կենդա-
նին ունէր երեսս մարդոյ , եւ չորրորդ կենդանին նման
արծուոյ թռուցելոյ ։ Եւ չորից կենդանեացն էին միոյ 8
միոյ ի նոցանէ վեց թեւք , շուրջանակի եւ ի ներքոյ
լի էին աչօք , ոչ հանգչէին ոչ զտիւ եւ ոչ զգիշեր
ասելով . սուրբ սուրբ սուրբ Տէր Աստուած ամենա-
կալ՝ որ էն եւ ես , եւ որ գալոց ես ։ Եւ յորժամ 9
տային կենդանիքն փառս եւ պատիւ եւ գոհութիւն*

նստելոյն ի վերայ աթոռոյն՝ կենդանւոյն յաւիտեանս
յաւիտենից, անկանէին քսան եւ չորք երիցունքն ա-
ռաջի նստելոյն յաթոռն, եւ երկիր պագանէին կեն-
10 դանւոյն յաւիտեանս յաւիտենից. Եւ դնէին զպսակս
11 իւրեանց առաջի աթոռոյն ասելով, Արժանի ես Տէր
Աստուած մեր սուրբ, առնուլ փառս եւ պատիւ եւ
զօրութիւն, զի դու ստեղծեր զամենայն, եւ ի կա-
մըն քո ստեղծան եւ կան հաստատուն:

ԳԼՈՒԽ Ե.

1 Եւ տեսի ի ձեռս աջոյ՝ որ նստէր ի վերայ աթո-
ռոյն, գիրք գրեալ ներքոյ եւ արտաքոյ. եւ կնքեալ
2 եօթն կնքով: Եւ տեսի հրեշտակ մի զօրաւոր, զի
քարոզէր ի ձայն մեծ. ո՞ է արժանի բանալ զգիրքս
3 եւ լուծանել զկնիք նորա: Եւ ոչ ոք կարէր ոչ ի
յերկինս եւ ոչ յերկիր եւ ոչ ի ներքոյ երկրի բանալ
4 զգիրքն, զի ոչ տեսին զնա: Եւ ես լայի ուժգին զի
ոչ ոք գտաւ արժանի բանալ զգիրքն եւ հայել ի նա:
5 Եւ մի յերիցանցն ասէ ցիս. Մի՛ լար, ահաւասիկ
յաղթեաց առիւծն յազգէն Յուդայ յարմատոյն
Դաւթի բանալ զգիրքն եւ լուծանել զեօթն կնիքսն
6 նորա: Եւ տեսի ի մէջ աթոռոյն եւ ի մէջ չորից կեն-
դանեացն եւ ի մէջ երիցանցն գառն կայր զենեալ, որ
ունէր եօթն եղջիւրս եւ աչս եօթն, որ են եօթն
Հոգիք Աստուծոյ որ են առաքեալ ընդ ամենայն եր-
7 կիր: Եւ եկն ընկալաւ յաջոյ ձեռանէ նորա, որ
8 նստէր ի վերայ աթոռոյն: Եւ յորժամ առ զգիրն,
չորք կենդանիքն եւ քսան եւ չորք երիցունքն անկա-
նէին առաջի գառինն. եւ ունէին իւրաքանչիւր քնար
եւ բուրվառ ոսկի լի խնկով, որ է աղօթք սրբոց:
9 Եւ օրհնէին երգս նորս եւ ասէին. Արժանի ես առ-
նուլ զգիրդ եւ բանալ զկնիք դորա, զի զենար, եւ
գնեցեր զմեզ Աստուծոյ արեամբդ քով յամենայն
10 ազգաց եւ ի լեզուաց եւ ի ժողովրդոց հեթանոսաց: Եւ

արարեր զնոսա Աստուծոյ մերոյ թագաւորս եւ քա-
հանայս թագաւորել ի վերայ երկրի։ Եւ տեսի, եւ 11
լուայ զձայն հրեշտակաց բազմաց, որք կային շուրջ
զաթոռովն եւ զչորիւք կենդանեօքն եւ զքահա-
նայիւքն. եւ էր թիւ նոցա բիւրք բիւրուց եւ հա-
զարք հազարաց։ Ասէին ձայնիւ մեծաւ. Արժան է 12
գառնդ զենեալ առնուլ զմեծութիւն եւ զիմաստու-
թիւն եւ զզօրութիւն եւ զպատիւ եւ զփառս եւ
զօրհնութիւն։ Եւ ամենայն արարածք՝ որ են յեր- 13
կինս եւ յերկրի եւ ի ծովու եւ որ ի նոսա, լուայ զի
ասէին. Որ նստի յաթոռն, եւ գառնն օրհնեալ
բարձրացեալ եւ փառաւորեալ յաւիտեանս յաւի-
տենից։ Եւ չորք կենդանիքն ասէին, Ամէն. եւ երի- 14
ցունքն անկանէին առաջի նորա եւ երկիր պագանէին։

ԳԼՈՒԽ Զ.

Եւ տեսի, զի եբաց զմին ի կնքոցն, եւ լուայ ի 1
միոյ ի չորից կենդանեացն իբրեւ զձայն որոտման, զի
ասէր թէ Գ՟ամ։ Եւ տեսի, եւ ահա ձի սպիտակ, եւ 2
որ հեծեալն էր ի նմա՝ ունէր աղեղն, եւ տուաւ նմա
պսակ, եւ եկն յաղթող զի յաղթեսցէ։ Եւ յոր- 3
ժամ եբաց զկնիքն երկրորդ, լուայ յերկրորդ կեն-
դանւոյն՝ զի ասէր, Գ՟ամ։ Եւ ել այլ ձի կարմիր. 4
եւ որ հեծեալն էր ի վերայ նորա՝ տուաւ նմա առ-
նուլ զխաղաղութիւն յերկրէ, զի զմիմեանս զենցեն.
եւ տուաւ նմա սուր մի մեծ։ Եւ յորժամ եբաց 5
զկնիքն երրորդ, լուայ յերրորդ կենդանւոյն՝ զի ասէր
թէ Գ՟ամ. եւ տեսի, եւ ահա ձի սեաւ, եւ որ
նստեալն էր ի վերայ նորա՝ ունէր կշիռք ի ձեռին իւ-
րում. Եւ լուայ ձայն ի միջոյ չորից կենդանեացն. 6
Կապիճ մի ցորեան՝ դենարի միոյ, եւ երեք կապիճ
գարի՝ դենարի միոյ. եւ ձէթ եւ գինի մի՛ վնասեսցես։
Եւ յորժամ եբաց զկնիքն չորրորդ, լուայ ձայն ի 7
չորրորդ կենդանւոյն՝ զի ասէր թէ Գ՟ամ։ Եւ տեսի, 8

եւ ահա ձի շլուոս, եւ որ նստէրն ի վերայ՝ ունէր
զմահ, եւ դժոխք երթային զհետ նորա. եւ տուաւ
նմա իշխանութիւն չորրորդ մասին աշխարհի, սպա-
նել սրով եւ սովով եւ մահուամբ եւ գազանօք եր-
9 կրի: Եւ յորժամ եբաց զկնիքն հինգերորդ, տեսի ի
ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկան զենեալ
վասն բանին Աստուծոյ եւ վասն վկայութեան նորա
10 զոր ունէին: Որք աղաղակէին ի ձայն մեծ. Մինչեւ յե՞րբ,
Տէր սուրբ եւ ճշմարիտ, ոչ դատիս եւ խնդրես զվրէժ
11 արեան մերոյ ի բնակչաց երկրի: Եւ տուաւ նոցա ար-
կանելիս սպիտակս, եւ ասացաւ նոցա զի հանգիցեն
փոքր մի ժամանակ, մինչեւ լցցին ծառայակիցք նոցա
եւ եղբարք նոցա, որք հանդերձեալ են կատարիլ
12 իբրեւ զնոսա: Եւ տեսի յորժամ եբաց զկնիքն վե-
ցերորդ, եղեւ շարժումն մեծ, եւ արեգակն եղեւ
սեաւ իբրեւ զկապերտ այծեայ, եւ լուսինն բոլորովին
13 եղեւ արիւն: Եւ աստեղք երկնից թօթափեցան ի
յերկիր, որպէս տերեւ թզենւոյ զի ուժգին շարժիցի
14 ի հողմոյ: Եւ երկին իբրեւ զմագաղաթեայ գիրս գա-
լարէր. եւ ամենայն լերինք եւ կղզիք ի տեղւոյ իւ-
15 րեանց շարժեցան: Եւ թագաւորք երկրի եւ իշխանք,
հազարապետք եւ մեծամեծք եւ զօրաւորք եւ ամե-
նայն ծառայք եւ ամենայն ազատք թաքուցին զին-
16 քեանս յայրս եւ ի ծերպս վիմաց: Եւ ասէին լերանց՝
թէ Անկերուք ի վերայ մեր, եւ ցբլուրս թէ Ծած-
17 կեցէք զմեզ: Զի եկն օր մեծ բարկութեան նորա.
եւ ո՞վ կարէ կալ առաջի նորա:

ԳԼՈՒԽ Է.

1 Եւ յետ այնորիկ տեսի չորս հրեշտակս, զի կային
ի չորս անկիւնս երկրի. եւ ունէին զչորս հողմս եր-
կրի, զի մի շնչեսցէ հողմ ի վերայ երկրի, եւ մի ի
2 ծովու եւ մի ի ծառս: Եւ տեսի այլ հրեշտակ, զի
ել յարեւելից, եւ ունէր զկնիք Աստուծոյ կենդանւոյ,

եւ աղաղակեաց ձայնիւ մեծաւ առ չորս հրեշտակսն՝
որոց տուեալ էր իշխանութիւն ապականել զերկիր եւ
զծով, Եւ ասէր. Մի՛ վնասէք երկրի, մի՛ ծովու, մի՛ 3
ծառոց. զագարեցէք մինչեւ կնքեցից զծառայս Ա-
տուծոյ իմոյ ի ճակատս նոցա: Եւ լուայ զթիւ կն- 4
քելոցն հարիւր քառասուն եւ չորք հազար կնքեալք
յազգէ որդւոցն Իսրայէլի: Յազգէն Յուդայ երկոտա- 5
սան հազար կնքեալ: Յազգէն Ռուբենի երկոտասան
հազար կնքեալ: Յազգէն Գադայ երկոտասան հա-
զար կնքեալ: Յազգէն Ասերայ երկոտասան հազար 6
կնքեալ: Յազգէն Նեփթաղիմայ երկոտասան հազար
կնքեալ: Յազգէն Մանասէի երկոտասան հազար
կնքեալ: Յազգէն Շմաւոնի երկոտասան հազար 7
կնքեալ: Յազգէն Ղեւեայ երկոտասան հազար կն-
քեալ: Յազգէն Իսաքարայ երկոտասան հազար կն- 8
քեալ: Յազգէն Զաբուղոնի երկոտասան հազար
կնքեալ: Յազգէն Յովսեփայ երկոտասան հազար
կնքեալ: Յազգէն Բենիամենի երկոտասան հազար
կնքեալ: Եւ յետ այսորիկ տեսի, եւ ահա ժողովուրդ 9
բազում՝ որոց ոչ գոյր թիւ, յամենայն հեթանոսաց
եւ յամենայն ազգաց եւ յամենայն լեզուաց եւ յա-
մենայն ժողովրդոց, որք կային առաջի աթոռոյն եւ
առաջի գառինն, արկեալ զիւրեամբք հանդերձս սպի-
տակս, եւ արմաւենիս ի ձեռս իւրեանց: Աղաղակէին 10
ի ձայն մեծ եւ ասէին. Փրկութիւն Աստուծոյ մերոյ
որ նստի ի վերայ աթոռոյն, եւ գառինն: Եւ ամենայն 11
հրեշտակք կային շուրջ զաթոռովն եւ զերիցամբքն
եւ զչորիւք կենդանեօքն, եւ անկանէին յերեսս առա-
ջի աթոռոյ եւ երկիր պագանէին Աստուծոյ, Ասելով. 12
Ամէն. օրհնութիւն եւ փառք եւ իմաստութիւն եւ
գոհութիւն եւ պատիւ եւ զօրութիւն եւ շնորհք
Տեառն Աստուծոյ մերոյ յաւիտեանս յաւիտենից.
ամէն: Եւ ասէ ցիս մի յերիցանց անտի. Սոքա որ 13
զգեցեալս են զհանդերձս սպիտակս ո՞յք են եւ կամ

14 ուստի՞ գան: Եւ ասացի ցնա. Տէր, դու գիտես. Եւ
ասէ ցիս. Սոքա են՝ որ գան ի վշտաց մեծաց, եւ լու-
ացին զարկանելիս իւրեանց եւ սպիտակացուցին ա-
15 րեամբ գառինն: Վասն այնորիկ են առաջի աթոռոյն
Աստուծոյ, եւ պաշտեն զնա զտիւ եւ զգիշեր ի տա-
ճարի նորա. եւ որ նստի ի վերայ աթոռոյն՝ բնակեալ
16 է ի նոսա: Ոչ քաղցիցեն եւ ոչ ծարաւիցեն, եւ ոչ
17 ոք մեղիցէ նոցա, ոչ արեգակն եւ ոչ տօթ: Եւ
գառնն ի միջոյ աթոռոյն իւրոյ հովուեսցէ զնոսա, եւ
առաջնորդեսցէ նոցա ի կենաց աղբիւր ջրոյ կենդա-
նւոյ. քանզի եհատ Աստուած զամենայն արտօսր
յերեսաց նոցա:

ԳԼՈՒԽ Ը․

1 Եւ յորժամ եբաց զկնիքն եօթներորդ, եղեւ
2 լռութիւն յերկինս որպէս կէս ժամու: Եւ տեսի
հրեշտակս եօթն, որ առաջի Աստուծոյ կային. եւ
3 տուաւ նոցա եօթն փողս: Եւ այլ հրեշտակ եկն ե-
կաց առ սեղանն, եւ ունէր խնկանոց ոսկի. եւ տուաւ
նմա խունկ բազում, զի մատուսցէ զաղօթս ամենայն
սրբոց ի վերայ ոսկեղէն սեղանոյ առաջի աթոռոյն:
4 Եւ ել ծուխ խնկոցն աղօթք սրբոցն ի ձեռաց հրեշ-
5 տակացն առաջի Աստուծոյ: Եւ ելից հրեշտակն
զխնկանոցն ի հրոյ սեղանոյն, եւ արկ զնա յերկիր. եւ
եղեւ որոտումն եւ ձայնք եւ փայլատակումն եւ շար-
6 ժումն մեծ: Եւ եօթն հրեշտակքն որ ունէին եօթն
փողս, պատրաստեցին զինքեանս առ ի հարկանել:
7 Եւ առաջին հրեշտակն եհար զփողն, եւ եղեւ կար-
կուտ եւ հուր եւ արիւն խառնեալ, եւ անկաւ յեր-
կիր, եւ զերրորդ մասն երկրի այրեաց, եւ զերրորդ
մասն ծառոց այրեաց, եւ զամենայն դալար խոտոյ
8 այրեաց: Եւ երկրորդ հրեշտակն փողեաց, եւ իբրեւ
զլեառն մի մեծ հրդեհեալ անկաւ ի ծով, եւ եղեւ
9 երրորդ մասն ծովու արիւն. Եւ սատակեցաւ երրորդ

մասն ղուղակաց, եւ որ ունէր շունչ կենդանի՝ ապա-
կանեցաւ. եւ երրորդ մասն նաւուց ընկղմեցաւ: Եւ 10
երրորդ հրեշտակն փողեաց, եւ անկաւ յերկնից աստղ
մի մեծ բորբոքեալ իբրեւ զղամբար, եւ անկաւ յեր-
րորդ մասն գետոց եւ աղբերաց. Եւ էր անուն աս- 11
տեղն Դառնութիւն. եւ բազումք մեռան ի դառնու-
թենէ ջուրցն: Եւ չորրորդ հրեշտակն փողեաց, եւ 12
վիրաւորէր երրորդ մասն արեգական եւ երրորդ մասն
լուսնի եւ երրորդ մասն աստեղաց. եւ խաւարէր եր-
րորդ մասն նոցա, եւ երրորդ մասն գիշերոյ նոյնպէս:
Եւ տեսի եւ լուայ ձայն հրեշտակի թռուցելոյ ի մէջ 13
երկնից՝ զի ասէր ի ձայն մեծ, Վայ վայ վայ, որ բնա-
կեալ են յերկրի. յորժամ լինիցի ձայն երիցն եւս
փողոց, զոր կամիցին հրեշտակքն հարկանել:

ԳԼՈՒԽ Թ.

Եւ հինգերորդ հրեշտակն փողէր. եւ տեսի զի 1
աստղ մի անկաւ յերկնից, եւ տուաւ նմա բանալի
գբոյն անդնդոց. Եւ ելանէր ծուխ ի գբոյն որպէս 2
զծուխ հնոցի մեծի. եւ խաւարեցաւ արեգակն եւ
օդք: Եւ ի գբոյն ելանէր մարախ ի յերկիր. եւ տը- 3
ւաւ նոցա իշխանութիւն իբրեւ զխայթոցս կարճի. Եւ 4
ասացաւ նոցա՝ զի մի՛ մեղիցեն խոտոյ երկրի եւ մի՛ ա-
մենայն ծառոց, բայց միայն մարդոյ երկրայնոյ, որ ոչ
ունիցին զկնիք ի վերայ ճակատու իւրեանց: Եւ տը- 5
ւաւ նոցա հրաման՝ զի մի՛ սպանանիցեն զնոսա, այլ
չարչարեսցեն զնոսա ամիսս հինգ. եւ չարչարանք նո-
ցա իբրեւ զխայթոցս կարճի՝ որ հարկանիցէ զմարդ:
Եւ յաւուրսն յայնոսիկ խնդրեսցեն մարդիկ զմահ, 6
եւ մի՛ գտցեն. եւ ցանկան մեռանել, եւ փախիցէ ի
նոցանէ մահ: Եւ նմանութիւն մարախոյն, նմանու- 7
թիւն ձիոյ պատրաստելոյ ի պատերազմ. եւ ի վերայ
գլխոց նոցա իբրեւ զպսակ՝ նմանեալ ոսկւոյ. եւ ե-
րեսք նոցա իբրեւ զերեսս մարդոյ. Եւ հերք նոցա ի- 8

բրեւ զհերս կնոջ. եւ ատամունք նոցա իբրեւ զա-
9 ռիւծու. Եւ ունէին զրահս իբրեւ զզրահս երկա-
թի, եւ ձայն թեւոց նոցա իբրեւ զձայն կառավար
10 ձիոց բազմաց՝ որ արշաւեն ի պատերազմ: Եւ ունին
ագիս ըստ նմանութեան կարճի, եւ խայթոց յագիս
նոցա. եւ ունէին իշխանութիւն չարչարել զմարդիկ
11 ամիսս հինգ: Եւ ունին թագաւոր ի վերայ իւրեանց
զհրեշտակն դժոխոց. եւ անուն նորա եբրայեցերէն
12 Աղբադոն, որ կոչի ի հայ բարբառ Կորուստ: Ահա-
13 ւասիկ վայ մի էանց, եւ վայք երկու գալոց են: Եւ
վեցերորդ հրեշտակն հարկանէր զփողն. եւ լուայ ձայն
ի չորից կենդանեացն որ էին առաջի սեղանոյն Աս-
14 տուծոյ, Զի ասէր ցհրեշտակն վեցերորդ որ ունէր
զփողն. Լոյծ զչորս հրեշտակսն զկապեալս ի վերայ
15 գետոյն Եփրատայ: Եւ լուծան չորս հրեշտակքն՝
պատրաստեալք ի ժամ եւ յօր եւ յամիս եւ ի տա-
16 րի, զի սպանցեն զերրորդ մասն մարդկան: Եւ հա-
մարք հեծելոց զօրաց նոցա բիւրք բիւրուց եւ հա-
17 զարք հազարաց լուայ զթիւ նոցա: Եւ տեսի ձիս ի
տեսլեանն, եւ հեծեալս ի նոսա որք ունէին զրահս
հրեղէնս, եւ յակինթս հրդեհեալս ծծմբով, եւ
գլուխք ձիոցն իբրեւ զգլուխս առիւծուց, եւ ի բե-
18 րանոյ նոցա հուր ելանէր եւ ծուխ եւ ծծումբ: Եւ ի
հարուածոցս յայսցանէ մեռաւ երրորդ մասն մարդ-
կան՝ ի հրոյն եւ ի ծխոյն եւ ի ծծմբոյն, որ ելանէր ի
19 բերանոյ նոցա: Զի իշխանութիւն ի բերանս է նոցա
եւ յագիս նոցա, եւ ագիք նոցա նմանութիւն օձի.
20 եւ ունէին գլուխք՝ որով սատակէին զանիրաւս: Եւ
այլք ի մարդկանէ որ ոչ մեռան ի հարուածոցս յայս-
ցանէ, ոչ ապաշխարեցին եւ ոչ դարձան ի գործոց
ձեռաց իւրեանց, յերկրպագութենէ դիւաց եւ կռոց
յոսկեղինաց եւ յարծաթեղինաց եւ ի պղնձոյ եւ ի
քարէ եւ ի փայտէ, որք ոչ տեսանել կարեն եւ ոչ
21 լսել եւ ոչ գնալ. Եւ ոչ ապաշխարեցին ի մարդա-

սպանութենէ եւ ի դեղատուութենէ եւ ի պոռնկութենէ եւ ի գողութենէ իւրեանց:

ԳԼՈՒԽ Ժ.

Եւ տեսի այլ հրեշտակ զօրաւոր՝ զի իջանէր 1
յերկնից, եւ զգեցեալ էր ամպ եւ ծիածան ի գլուխ
նորա, եւ երեսք նորա իբրեւ զարեգակն, եւ ոտք նո-
րա որպէս սիւն հրոյ: Եւ ունէր ի ձեռին իւրում 2
գրկոյք մի բացեալ, եւ եդ զոտն իւր զաջ ի վերայ
ծովու, եւ զձախն ի վերայ երկրի: Եւ աղաղակեաց 3
ի ձայն մեծ, գոչեաց իբրեւ զառիւծ. եւ յորժամ
աղաղակեաց՝ խօսեցան եօթն որոտմունք յիւրեանց
ձայնս: Եւ յորժամ խօսեցան եօթն որոտմունքն 4
կամէի գրել. եւ լուայ ձայն յերկնից, զի ասէր: Կն-
քեա զոր խօսեցան եօթն որոտմունքն, եւ մի գրեր:
Եւ հրեշտակն զոր տեսի, որ եդ զոտն իւր ի վերայ 5
ծովու եւ զմիւսն ի ցամաքի, համբարձ զձեռն իւր
զաջ յերկինս, Եւ երդուաւ ի կենդանին յաւիտե- 6
նից՝ որ հաստատեաց զերկինս եւ որ ի նմա, եւ զեր-
կիր եւ որ ի նմա, զի ոչ եւս կայ այլ ժամանակ. Այլ 7
յաւուրս ձայնի եօթներորդ հրեշտակին՝ յորժամ
հարցէ զփողն, կատարեսցի խորհուրդն Աստուծոյ՝ որ
աւետարանեցաւ ի ձեռն ծառայից իւրոց մարգարէից:
Եւ ձայնն, զոր լուայ յերկնից դարձեալ խօսեցաւ 8
ընդ իս եւ ասէ. Երթ առ զգրկոյն՝ զոր ունի հրեշ-
տակն բացեալ ի ձեռին իւրում, եւ կայ ի վերայ ծո-
վու եւ ցամաքի: Եւ ես երթեալ առ հրեշտակն՝ 9
խնդրեցի ի նմանէ, եւ ասէ ցիս. Առ զսա եւ կեր զդոյն,
եւ դառնասցի յորովայն քո. այլ ի բերան քո է
քաղցր իբրեւ զմեղր: Եւ առի զգրկոյն բացեալ ի 10
հրեշտակէն, եւ կլայ զնա. եւ էր ի բերան իմ որպէս
մեղր, եւ յորժամ կերայ՝ դառնացաւ յորովայն իմ:
Եւ ասէ ցիս. Հասանէ քեզ դարձեալ մարգարէա- 11

նալ ի ժողովուրդս եւ ի հեթանոսս եւ ի լեզուս եւ
ի թագաւորս երկրի:

ԳԼՈՒԽ ԺԱ.

1 Եւ տուաւ ինձ եղէգն նման գաւազանի. եւ
կայր հրեշտակն, եւ ասէր ցիս. Արի եւ չափեա զտա-
ճարն Աստուծոյ եւ զսեղանն եւ զերկրպագուսն որ ի
2 նմա: Եւ զգաւիթն որ արտաքոյ տաճարին, թող
զնա եւ մի չափեր, զի տուեալ է զնա հեթանոսաց,
եւ զքաղաքն սուրբ կոխեսցեն ամիսս քառասուն եւ
3 երկուս: Եւ տաց երկուց վկայից իմոց, եւ մարգա-
րէասցին աւուրս հազար երկերիւր եւ վաթսուն զգե-
4 ցեալ քուրձ: Սոքա են երկու ձիթենիքն եւ երկու
5 ճրագք, որ կան առաջի Աստուծոյ յերկրի: Եւ որք
կամիցին վնասել նոցա, հուր ելցէ ի բերանոյ նոցա
եւ կերիցէ զթշնամիս նոցա. եւ որք կամիցին մեղան-
6 չել նոցա՝ այսպէս սատակեսցին: Սոքա ունին իշխա-
նութիւն փակել զերկինս, զի մի տեղասցէ զաւուրս
մարգարէութեան նոցա. եւ ունին իշխանութիւն ի
վերայ ջուրց, դարձուցանել զնոսա յարիւն, եւ հար-
կանել զերկիր յամենայն հարուածս քանիցս անգամ
7 եւ կամիցին: Եւ յորժամ կատարեսցեն զամենայն
աւուրս վկայութեան իւրեանց, յայնժամ գազանն
որ ելանէ յանդնդոց՝ տացէ ընդ նոսա պատերազմ,
8 եւ յաղթեսցէ նոցա եւ սպանցէ զնոսա: Եւ դի նոցա
անկեալ կայցէ ի մէջ հրապարակաց քաղաքին նոցա
մեծի, որ անուանեալ կոչի ըստ հոգւոյն Սոդոմ եւ
9 Եգիպտոս, ուր եւ Տէրն նոցա խաչեցաւ: Եւ տես-
ցեն զնոսա ամենայն ցեղք եւ ժողովուրդք եւ ամե-
նայն լեզուք եւ հեթանոսք, զի դի նոցա անկեալ
կայցէ զերիս աւուրս եւ կէս, եւ ոչ տացեն թաղել
10 ի գերեզմանս զոսկերս նոցա: Եւ որ բնակեալ են
յերկրի՝ ուրախ լինին եւ խնդան ի վերայ նոցա, մին-
չեւ ընծայս եւ պատարագս տանել միմեանց. վասն

զի սոքա երկոքին մարգարէքս չարչարեցին զբնակիչս
երկրի։ Եւ յետ երից աւուրց եւ կիսոյ հոգի կեն- 11
դանի յԱստուծոյ մտցէ ի նոսա. եւ յարիցեն կացցեն
ի վերայ ոտից իւրեանց, եւ ահ եւ երկիւղ մեծ ան-
կաւ ի վերայ ամենեցուն՝ որ սպանինն զնոսա։ Եւ 12
լուայ զձայն մեծ, որ ասէր ցնոսա. Վերացիք ելէք
աստ. եւ վերացան ելին յերկինս ամպովք, եւ տեսին
զնոսա թշնամիք իւրեանց։ Եւ ի ժամուն յայնմիկ 13
շարժումն մեծ եղեւ, եւ տասներորդ մասն քաղաքին
ընկղմեցաւ, եւ մեռան ի շարժմանէն այր եօթն հա-
զար. եւ յետ այնորիկ ահ մեծ եղեւ յամենեսեան,
եւ փառս տային Աստուծոյ երկնաւորի։ Ահաւասիկ 14
վայն երկրորդ եանց, եւ վայն երրորդ գալոց է վաղ-
վաղակի։ Եւ յորժամ եօթներորդ հրեշտակն հար- 15
կանէր զփողն, եղեւ ձայն յերկինս, եւ ասէ. Եղեւ
թագաւորութիւն ամենայն տիեզերաց Տեառն մերոյ
եւ Յիսուսի Քրիստոսի իւրոյ, եւ թագաւորեսցէ ի
վերայ ամենայնի յաւիտեանս յաւիտենից։ Եւ քսան 16
եւ չորս երիցունքն՝ որ նստէին յաթոռս իւրեանց ա-
ռաջի Աստուծոյ, անկանէին ի վերայ երեսաց իւրեանց
եւ երկիր պագանէին Տեառն Աստուծոյ, եւ ասէին.
Գոհանամք զքէն, Տէր Աստուած ամենակալ, որ էն 17
եւ էս, եւ առեր զզօրութիւն քո մեծ եւ թագաւո-
րեցեր։ Եւ հեթանոսք բարկացան, եւ եկն բարկու- 18
թիւն քո, եւ ժամանակ մեռելոց՝ զի դատեսցին, եւ
տաս վարձս ծառայից քոց մարգարէից եւ սրբոց եր-
կիւղածաց անուան քոյ, փոքունց եւ մեծամեծաց,
եւ ապականես զապականիչս երկրի։ Եւ բացաւ տա- 19
ճարն Աստուծոյ որ յերկինս, եւ երեւեցաւ տապա-
նակն Աստուծոյ ի տաճարն իւր. եւ եղեն փայլատակ-
մունք եւ ձայնք եւ որոտմունք եւ շարժումն եւ
կարկուտ մեծամեծ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

1 Եւ նշան մեծ երեւեցաւ յերկինս. կին մի ար-
կեալ զիւրեւ զարեգակն, եւ լուսին ի ներքոյ ոտից
նորա, եւ ի վերայ գլխոյ նորա պսակ աստեղեայ յեր-
2 կոտասանից: Եւ էր յղի. եւ ճչէր յերկնելն, եւ բա-
3 զում վշտօք մերձ էր ի ծնանել: Եւ երեւեցաւ այլ
նշան յերկինս, եւ ահաւասիկ վիշապ մի մեծ հրեղէն,
որոյ էին գլուխք եօթն եւ եղջիւրք տասն, եւ ի վե-
4 րայ գլխոյ նորա եօթն խոյրք: Եւ տուտն նորա քար-
շէր զերրորդ մասն աստեղաց երկնից, եւ արկ զնոսա
յերկիր. եւ վիշապն կայր առաջի կնոջն որ հանդեր-
ձեալ էր ծնանել, զի յորժամ ծնցի կինն զորդի իւր՝
5 կլցէ զնա վիշապն: Եւ ծնաւ կինն արու, որ հանդեր-
ձեալ է հովուել զամենայն հեթանոսս գաւազանաւ
երկաթեաւ. եւ յափշտակեցաւ որդի նորա առ Աս-
6 տուած, եւ առ աթոռ նորա: Եւ կինն փախեաւ
յանապատ՝ ուր էր տեղի նմա պատրաստեալ յԱս-
տուծոյ, զի կերակրեսցի անդ աւուրս հազար երկե-
7 րիւր եւ վաթսուն: Եւ եղեւ պատերազմ յերկինս,
Միքայէլ եւ հրեշտակք իւր կռուէին ընդ վիշապին.
8 եւ վիշապն պատերազմէր զօրօք իւրովք: Եւ ոչ կա-
րացին կալ ընդդէմ, եւ տեղի ոչ գտաւ նոցա յեր-
9 կինս: Եւ անկաւ վիշապն մեծ, օձն առաջին, որ
անուանեալ կոչի Բէեղզեբուղ եւ սատանայ, որ մո-
լորեցոյց զամենայն տիեզերս երկրի, եւ հրեշտակք
10 նորա ընդ նմա անկան: Եւ լուայ ձայն մեծ յերկնից,
որ ասէր. Արդ եղեւ զօրութիւն եւ փրկութիւն եւ
արքայութիւն Աստուծոյ մերոյ, եւ իշխանութիւն
օծելոյ նորա. զի անկաւ չարախօսն եղբարց մերոց,
որ չարախօսէր զնոցանէ առաջի Աստուծոյ զտիւ եւ
11 զգիշեր: Եւ նոքա յաղթեցին նմա արեամբ գառինն,
եւ բանիւ վկայութեան նորա, եւ ոչ հաճեցան ընդ
12 վիշապն մինչեւ ի մահ: Վասն այսորիկ ուրախ լիցին

երկինք եւ ամենայն որ բնակեալ են ի նմա: Վայ
երկրի եւ ծովու, զի անկաւ բանսարկուն առ ձեզ, որ
ունի ցասումն բազում. եւ կայցէ առ սակաւ մի
ժամանակս: Եւ յորժամ ետես վիշապն թէ անկաւ 13
յերկիր, զհետ եղեւ կնոջն՝ որ ծնաւ զմանուկն արու:
Եւ տուաւ կնոջն երկու թեւք արծուոյ մեծի, զի 14
թռիցէ յանապատ ի տեղի իւր. ուր կերակրէր անդ
ժամանակ եւ ժամանակս եւ կէս ժամանակի յերե-
սաց օձին: Եւ եհեղ օձն ի բերանոյ իւրմէ զհետ 15
կնոջն ջուր, զի ընկղմեսցէ զնա: Եւ օգնեաց երկիր 16
կնոջն, եւ եբաց երկիր զբերան իւր եւ եկուլ զջուրն
զոր եհեղ վիշապն ի բերանոյ իւրմէ: Եւ ցասեաւ 17
վիշապն ընդ կնոջն, եւ գնաց պատերազմել ընդ այլ
զաւակս նորա՝ որք պահէին զպատուիրանս Աստու-
ծոյ, եւ ունէին զվկայութիւն Յիսուսի: Եւ կայ ի 18
վերայ աւազոյ ծովու:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Եւ տեսի զի ելանէր ի ծովէն գազան, եւ ունէր 1
գլուխս եօթն եւ եղջիւրս տասն, եւ ի վերայ եղջե-
րաց նորա տասն խոյր, եւ ի վերայ գլխոյ նորա անուն
հայհոյութեան: Եւ գազանն զոր տեսի՝ նման ընձու, 2
եւ ոտք նորա իբրեւ զարջոյ, եւ բերան նորա որպէս
զառիւծու. եւ ետ նմա վիշապն զզօրութիւն իւր եւ
զաթոռ իւր եւ զիշխանութիւն մեծ: Եւ մի ի գլխոց 3
նորա վիրաւորեալ էր ի մահ. եւ վէր մահուան նորա
ողջանայր: Եւ զարմացաւ ամենայն երկիր ընդ գա-
զանն, զի ետ նմա վիշապն զթագաւորութիւն իւր:
Եւ երկիր պագին վիշապին՝ որ ետ զիշխանութիւնն 4
գազանին, եւ ասէին. Ո՞վ իցէ նման գազանիս, կամ
ո՞վ կարիցէ պատերազմել ընդ դա: Եւ տուաւ նմա 5
բերան խօսել զմեծամեծս եւ զհայհոյութիւն. եւ
տուաւ նմա իշխանութիւն զամիս քառասուն եւ
երկու: Եւ եբաց զբերան իւր հայհոյութեամբ առ 6

Աստուած, եւ հայհոյեաց զանուն նորա եւ զխորանն
7 նորա, եւ զերկնային խորանն: Եւ տուաւ նմա իշխա-
նութիւն առնել պատերազմ ընդ սուրբս, եւ յաղ-
թել նոցա. եւ տուաւ նմա իշխանութիւն ի վերայ
8 ամենայն ազգաց եւ լեզուաց եւ ժողովրդոց: Զի եր-
կիր պագցեն նմա ամենայն որ բնակեալ են ընդ երեսս
երկրի, որոց ոչ են գրեալ անուանք նոցա ի դպրու-
թիւն կենաց գառինն զենլոյ ի սկզբանէ աշխարհի:
9 Որք ունին ականջս լսելոյ՝ լուիցեն: Զի են ոմանք
10 որք ի գերութեան վարեսցին, եւ են ոմանք որ սրով
մեռցին, եւ են ոմանք որ անձամբ զանձինս սպանա-
11 նեն. աստ է համբերութիւն եւ հաւատ սրբոց: Եւ
տեսի այլ գազան զի ելանէր յերկրէ, եւ ունէր եղ-
ջիւրս երկու նման գառինն, եւ խօսէր իբրեւ զվի-
12 շապն: Եւ զիշխանութիւն զամենայն զառաջնոյ գա-
զանին գործէր առաջի նորա, եւ առնէր զերկիր եւ
զամենայն բնակիչս նորա զի երկիր պագանիցեն գա-
զանին առաջնոյ՝ մինչեւ ողջացի վէր մահու նորա:
13 Եւ առնէր նշանս բազումս, եւ տայր հրոյ իջանել
14 յերկնից յերկիր առաջի մարդկան: Եւ մոլորեցուցա-
նէր զորս բնակեալ են յերկիր, նշանօքն որ տուեալ
են ի ձեռս նորա առնել առաջի գազանին: Ասեն ցնա
բնակիչք՝ երկրի. Արա զպատկեր գազանին, որ ի վի-
15 րաց սրոյն եկեաց: Եւ տուաւ նմա իշխանութիւն, զի
տացէ հոգի պատկերի գազանին, եւ զի խօսեսցի
պատկերն, եւ երկիր պագցեն նմա ամենայն բնակիչք
երկրի. եւ որ ոչ պագցէ երկիր պատկերի գազանին,
սպանցէ զնա: Եւ արասցէ զամենայն փոքունս եւ
զմեծամեծս եւ զմեծատունս եւ զազատս եւ զաղ-
քատս եւ զծառայս, զի տացէ նոցա դրոշմ յաջոյ
16 ձեռին եւ ի վերայ ճակատու նոցա: Եւ ոչ ոք կա-
րասցէ գնել եւ վաճառել եթէ ոչ ունիցի զդրոշմ
գրոյն եւ զանուն գազանին եւ զթիւ անուան նորա:
17 Աստ է իմաստութիւն. որ ունի միտս՝ համարեսցի

զթիւ գազանին. թիւ եղեալն մարդոյ, եւ թիւ ա-
նուան նորա է այս. Վեց հարիւր վաթսուն եւ վեց:

ԳԼՈՒԽ ԺԴ.

Եւ տեսի, եւ ահա գառն կայր ի վերայ լերինն 1
Սիովնի. եւ ընդ նմա հարիւր քառասուն եւ չորս
հազարք, որ ունէին զանուն նորա, եւ անուն հօր
նորա գրեալ ի վերայ ճակատուց նոցա: Եւ լուայ 2
ձայն յերկնից որպէս զձայն ջուրց բազմաց, եւ ձայն
որոտման մեծի. եւ լուայ իբրեւ զձայն զքնարահա-
րաց, զի հարկանէին զքնարս իւրեանց: Եւ երգէին 3
զերգս նորս առաջի աթոռոյն եւ առաջի չորից կեն-
դանեացն եւ առաջի երիցանցն. եւ ոչ ոք կարէ գի-
տել զերգս նոցա, բայց միայն հարիւր քառասուն եւ
չորս հազարքն, որք ազատեալ են յերկրէ: Սոքա են, 4
որք ընդ կանայս ոչ խառնակեցան, եւ են կուսանք.
սոքա զկնի երթան գառինն՝ ուր եւ երթիցէ. սոքա
ընտրեցան ի մարդկանէ առաջի Աստուծոյ եւ գա-
ռինն: Եւ ի բերան նոցա ոչ գտաւ սուտ զի ամբիծք 5
են: Եւ տեսի այլ հրեշտակ թռուցեալ ի մէջ եր- 6
կնից, եւ ունէր աւետիս յաւիտենական՝ աւետարանել
ամենայն ազգաց եւ լեզուաց որ բնակեալ են յերկրի:
Եւ ասէր ի ձայն մեծ. Երկերուք յԱստուծոյ, եւ 7
տուք փառս նմա, զի եկն ժամ դատաստանի նորա.
եւ երկիր պագէք արարչին երկնի եւ երկրի եւ ծովու
եւ աղբերաց ջուրց: Եւ այլ հրեշտակ երկրորդ գայր 8
զհետ նորա, եւ ասէր. Անկաւ, անկաւ Բաբելոն
մեծն ի գինւոյ արբեցութենէ, ի ցասմանէ, ի պոռ-
նկութենէ իւրմէ՝ որ արբեցոյց զամենայն հեթանոս:
Եւ այլ հրեշտակ երրորդ գայր զհետ նոցա, եւ ի 9
ձայն մեծ ասէր. Ով ոք երկրպագեաց գազանին եւ
պատկերի նորա, եւ կամ զդրոշմ նշանի նորա առ ի
ճակատ իւր եւ կամ ի վերայ աջու ձեռին իւրոյ,
Այնպիսին արբցէ ի բաժակէ ցասմանն Աստուծոյ՝ 10

արկեալ յանապակէ բարկութեան բաժակին, եւ տան-
ջեսցի հրով եւ ծծմբով առաջի Աստուծոյ եւ գա-
11 ռինն: Եւ ծուխ նոցա ելցէ յաւիտեանս յաւիտենից,
եւ ոչ ունին հանգիստ՝ որք երկիր պագին գազանին
ի տուէ եւ ի գիշերի, եւ որք երկիր պագին պատկե-
12 րին, եւ առին զդրոշմ եւ զանուն նորա: Եւ համբե-
րութիւն սրբոցն աստ է. այս՝ որք պահեն զպատուի-
13 րանս Աստուծոյ եւ զհաւատս Յիսուսի: Եւ լուայ
ձայն յերկնից, որ ասէր ցիս. Գրեա, երանի մեռե-
լոցն՝ որք ի Տէր ննջեցին. այժմիկ վաղվաղակի զայս
ասէ Հոգին. քանզի հանգեան յաշխատութենէ իւ-
րեանց. բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նո-
14 ցա: Եւ տեսի, եւ ահա ամպ սպիտակ, եւ ի վերայ
ամպոյն նստէր նման որդւոյ մարդոյ, եւ ի գլուխ իւր
պսակ ոսկի, եւ ի ձեռին իւրում ունէր գերանդի
15 սրեալ: Եւ այլ հրեշտակ ելանէր յերկնից, աղաղա-
կէր ի ձայն մեծ, եւ ասէր. Որ նստիդ ի վերայ ամ-
պոյդ, առաքեա զգերանդիդ քո եւ հնձեա, զի եկն
16 ժամանակ հնձոց, եւ հասեալ են հունձք երկրի: Եւ
արկ՝ որ նստէր ի վերայ ամպոյն, զգերանդին իւր յեր-
17 կիր, եւ հնձէր զամենայն բնակիչս երկրի: Եւ այլ
հրեշտակ ելանէր ի տաճարէն՝ որ յերկինս, եւ ունէր
18 եւ սա գերանդի սրեալ: Եւ այլ հրեշտակ ելանէր
ի սեղանոյն՝ որ ունէր իշխանութիւն ի վերայ հրոյ,
եւ աղաղակեաց ի ձայն մեծ առ հրեշտակն որ ունէր
զգերանդին սրեալ, եւ ասէր. Կթեա զողկոյզս յայ-
19 գւոյ երկրէ, զի հասեալ է խաղողդ ի դմա: Եւ արկ
հրեշտակն զգերանդի իւր յերկիր, եւ կթէր զխաղող
20 նորա եւ արկանէր ի հնձանն Աստուծոյ ի մեծ: Եւ
կոխեցաւ հնձանն արտաքոյ քաղաքին, եւ ելանէր ի
հնձանէն արիւն մինչեւ ի սանձս ձիոյն, եւ երկայնու-
թիւն նորա հազար եւ վեց հարիւր ասպարէզ:

ԳԼՈՒԽ ԺԵ․

Եւ տեսի այլ նշան յերկինս մեծ եւ սքանչելի․ 1
հրեշտակս եօթն որք ունէին եօթն վէրս զկնի, զի նո-
քօք կատարէր բարկութիւն Աստուծոյ։ Եւ տեսի որ- 2
պէս ծով ապակեղէն խառնեալ հրով․ եւ որք յաղ-
թեցին գազանին եւ թուոյ անուան նորա եւ պատ-
կերի նորա եւ դրոշմի նորա․ նոքա կային ի վերայ ծո-
վուն ապակեղինի, եւ ունէին զքնարս Աստուծոյ։
Եւ երգէին զերգս Մովսեսի առաջի Աստուծոյ եւ 3
զերգս գառինն, ասելով թէ Մեծամեծ եւ սքան-
չելի են գործք քո, Տէր Աստուած ամենակալ, ար-
դար եւ ճշմարիտ են ճանապարհք քո, թագաւոր
ամենայն հեթանոսաց։ Եւ ո՞վ ոք ոչ երկիցէ եւ փա- 4
ռաւորեսցէ զսուրբ անուն քո․ զի դու միայն սուրբ,
եւ արժանի երկրպագելոյ․ զի ամենայն հեթանոսք ե-
կեսցեն եւ երկիր պագցեն առաջի քո, Տէր, յոր-
ժամ արդարութիւն քո յայտնեցի։ Եւ յետ այ- 5
սորիկ տեսի, եւ բացաւ տաճարն խորանին վկայութեան
որ էր ի յերկինս։ Եւ ելանէին եօթն հրեշտակք որք 6
ունէին եօթն հարուածս, եւ զգեցեալ էին ի տա-
ճարին կտաւս մաքուրս եւ պայծառս, եւ գօտեւո-
րեալ էին առ ստեամբք իւրեանց գօտիս ոսկեղէնս։
Եւ ի չորից կենդանեացն տուաւ եօթն հրեշտակացն 7
եօթն սկաւառակս լի ցասմամբն Աստուծոյ կենդանւոյն
յաւիտեանս յաւիտենից։ Եւ լցաւ տաճարն ծխով 8
փառացն Աստուծոյ եւ զօրութեան նորա․ եւ ոչ ոք
կարէ մտանել ի տաճարն, մինչեւ կատարեսցին եօթն
հարուածքն յեօթն հրեշտակացն։

ԳԼՈՒԽ ԺԶ․

Եւ լուայ ձայն մեծ ի տաճարէն, զի ասէր ցեօթն 1
հրեշտակսն․ Երթայք հեղէք զեօթն սկաւառակս
ցասմանն Աստուծոյ յերկիր։ Եւ գնաց առաջինն 2

հրեշտակն, եւ եհեղ զսկաւառակ իւր յերկիր, եւ
եղեւ հարուածք չարաչար ի վերայ մարդկան, որ ու-
նէին զդրոշմ գազանին, եւ երկիր պագին պատկերի
3 նորա: Եւ երկրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր
ի ծով, եւ դարձան ջուրքն յարիւն մեռելոյ. եւ ա-
մենայն շունչ կենդանի որ էր ի ծովու, սատակեցաւ:
4 Եւ երրորդ հրեշտակն եհեղ զսկաւառակ իւր ի գետս
5 եւ յաղբերս ջուրց, եւ եղեւ արիւն: Եւ լուայ ի
հրեշտակէն, զի ասէր. Արդար է որ էնն եւ է, եւ
6 սուրբ ի գործս իւր զի այսպէս դատեցաւ. Վասն զի
զարիւն սրբոց եւ զարիւն մարգարէիցն հեղին անխնա-
յելոց, վասն այնորիկ արիւն ետ ըմպել նոցա ըստ
7 արժանեացն: Եւ լուայ ի սեղանոյ անտի, զի ասէր.
Այո, Տէր Աստուած ամենակալ, արդար եւ ճշմա-
8 րիտ են դատաստանք քո: Եւ չորրորդ հրեշտակն ե-
9 հեղ ի սկաւառակէ իւրմէ ի վերայ արեգական: Եւ
տուաւ նմա խորշակահար առնել զմարդիկ հրով. եւ
տապացան մարդիկ ի տապ մեծ, եւ հայհոյեցին զԱս-
տուած՝ որ ունի իշխանութիւն ի վերայ հարուածոցս
այսոցիկ, եւ ոչ ապաշխարեցին ի փառս Աստուծոյ:
10 Եւ հինգերորդ հրեշտակն եհեղ ի սկաւառակէ իւր-
մէ ի վերայ աթոռոյ գազանին, եւ եղեւ թագաւորու-
թիւն նորա խաւարեալ. եւ ծամէին զլեզուս իւրեանց
11 յախտէ ցաւոցն, Եւ հայհոյեցին զԱստուած երկնից
ի ցաւոց իւրեանց եւ յախտէ դառնութեանն, եւ ոչ
12 ապաշխարեցին ի գործոց իւրեանց: Եւ վեցերորդ
հրեշտակն եհեղ ի սկաւառակէ իւրմէ ի վերայ գե-
տոյն մեծի Եփրատայ, եւ ցամաքեցան ջուրք նորա,
զի պատրաստեսցի ճանապարհ թագաւորի ելից արե-
13 ւու: Եւ տեսի զի ելանէր ի բերանոյ վիշապին եւ ի
բերանոյ գազանին եւ ի բերանոյ սուտ մարգարէին ո-
14 գիք երեք անսուրբք իբրեւ զգորտ: Քանզի նոքա էին
ոգիք դիւականք, որք առնէին զնշանս եւ երթային
առ թագաւորս ամենայն երկրի ժողովել զնոսա ի

պատերազմ, յօրն մեծ Տեառն ամենակալի. քանզի
այսպէս ասաց Տէր. Ահա գամ իբրեւ զգող, երանի 15
որ լինին արթունք, եւ պահեսցեն զհանդերձս իւ-
րեանց, զի մի մերկ շրջեսցին, եւ երեւեսցին ամօ-
թանք իւրեանց: Եւ ժողովեսցին զնոսա ի տեղի մի, 16
որ կոչի եբրայեցերէն Արմագեդոն: Եւ եօթներորդ 17
հրեշտակն եհեղ ի սկաւառակէ իւրմէ ի վերայ օդոյ.
եւ ել ձայն մեծ յերկնից եւ յաթոռոյն, ասելով.
Եղեւ: Եւ եղեն փայլատակմունք եւ ձայնք եւ որոտ- 18
մունք. եւ եղեւ շարժումն մեծ, որպիսի չէր եղեալ
ի սկզբանէ յորմէ հետէ եղեւ մարդ ի վերայ երկրի
այնպիսի շարժումն մեծ: Եւ եղեւ քաղաքն մեծ յե- 19
րիս մասն, եւ քաղաքք ազգացն անկան. եւ Բաբե-
լոն մեծ յիշեցաւ առաջի Աստուծոյ, տալ նմա զբա-
ժակն գինւոյ ցասման բարկութեան նորա: Եւ ամե- 20
նայն կղզիք փախեան, եւ լերինք ի միջոյ բարձան: Եւ 21
կարկուտ մեծ իբրեւ կշիռ տաղանդոյ միոյ իջանէր
յերկնից ի վերայ մարդկան. եւ հայհոյեցին մարդիկ
զԱստուած յերկինս վասն հարուածոյ կարկտին, զի
մեծ էր հարուածն եւ սաստիկ:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Եւ եկն մի ոմն յեօթն հրեշտակացն՝ որք ունէին 1
զեօթն սկաւառակսն. խօսեցաւ ընդ իս, եւ ասէ.
Եկ այսր եւ ցուցից քեզ զդատաստանս մեծ պոռ-
նկին՝ որ նստի ի վերայ ջուրց բազմաց. Ընդ որում 2
պոռնկեցան թագաւորք երկրի, եւ արբեցան բնակիչք
երկրի ի գինւոյ արբեցութեան պոռնկութեան նորա:
Եւ առ տարաւ զիս յանապատ հոգւովն. եւ տեսի 3
կին մի՝ զի նստէր ի վերայ կարմիր գազանի, եւ լի էր
անուամբք հայհոյութեան. եւ գազանն զոր տեսի՝ ու-
նէր գլուխս եօթն եւ եղջիւրս տասն: Եւ կինն զգե- 4
ցեալ էր ծիրանիս եւ կարմիրս, եւ զարդարեալ ոս-
կւով եւ մարգարտով եւ ականբք պատուականօք,

ունելով բաժակ ոսկի ի ձեռին իւրում, եւ լի էր
5 գարշելի եւ անմաքուր պոռնկութեամբ։ Եւ ի ճա-
կատն նորա գրեալ անուն՝ խորհրդով. ՄԵԾՆ ԲԱ-
6 բելոն մայր պոռնկաց եւ գարշելեաց երկրի։ Եւ տե-
սի զկինն արբեցեալ յարենէ սրբոց եւ յարենէ ա-
մենայն վկայիցն. եւ զարմացայ՝ տեսեալ զնա, զար-
7 մացումն մեծ։ Եւ ասէ ցիս հրեշտակն. Ընդէ՞ր զար-
մացար, ես ասացից քեզ զխորհուրդս կնոջն, եւ
զգազանին որ բարձեալ ունի զնա, որ ունի զեօթն
8 գլուխն եւ զտասն եղջիւր։ Եւ գազանդ զոր տեսեր՝
որ էր եւ չէր, եւ հանդերձեալ է ելանել ի դժո-
խոց եւ ի կորուստ երթալ. եւ զարմացան ամենե-
քեան՝ որ բնակեալ են ի վերայ երկրի, որոց ոչ էր
գրեալ անուանք նոցա ի գիր կենաց ի սկզբանէ աշ-
խարհի. զոր տեսանէին զգազանն, զի էր եւ չէ, եւ
9 մերձ է։ Աստ է իմաստութիւն՝ որ ունի միտս. եւ
եօթն գլուխն եօթն լերինք են, ուր կինն նստեալ էր
ի վերայ նոցա. եւ նոքին թագաւորք են եօթն. եւ
10 թագաւորք եօթն գոլով, հինգն անկան, եւ մին ե-
կաց, եւ միւսն ոչ է եկեալ. եւ յորժամ գայ, սա-
11 կաւիկ մի ժամանակ ունի։ Եւ գազանն որ էր եւ չէ,
եւ նա ութերորդ է. եւ է յեօթանց անտի, եւ ի
12 կորուստ երթալոց է։ Եւ տասն եղջիւրն՝ զոր տեսեր,
տասն թագաւորք են, որոց չեւ եւս է առեալ զթա-
գաւորութիւն, այլ առնուն եւ կան իշխանք ի մի
ժամ. եւ առնուն նոքա զիշխանութիւն ընդ գազա-
13 նին։ Սոքա մի կամս ունին, եւ զզօրութիւն եւ զիշ-
14 խանութիւն գազանին տան։ Եւ ընդ գառինն պա-
տերազմին, եւ գառնն յաղթէ նոցա. զի Տէր է նո-
ցա եւ թագաւոր թագաւորաց. եւ որք ընդ նմա կո-
15 չեցեալք են ընտրեալք եւ հաւատացեալք։ Եւ ա-
սաց ցիս. Եւ զջուրն՝ զոր տեսեր, ուր նստէր պոռ-
նիկն, ժողովուրդք են, եւ բազմութիւնք եւ ազգք եւ
16 լեզուք։ Եւ տասն եղջիւրքն՝ զոր տեսեր գազանին

նոքա ատեսցեն զպոռնիկն եւ աւերեսցեն զնա, եւ զմար-
մին նորա կերիցեն եւ այրեսցեն զնա հրով: Քանզի 17
Աստուած ետ ի սիրտս նոցա առ ի լինել նոցա մի
կամս եւ տալ զթագաւորութիւն գազանին մինչեւ
կատարեսցի բանն Աստուծոյ: Եւ կինն զոր տեսեր, 18
է քաղաքն մեծ, որ ունի զթագաւորութիւն ի վերայ
թագաւորութեանց երկրի:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Եւ յետ այսորիկ տեսի այլ հրեշտակ իջեալ 1
յերկնից՝ որ ունէր իշխանութիւն մեծ, եւ երկիր
լուսաւորեցաւ ի փառաց նորա: Եւ աղաղակեաց ի 2
ձայն մեծ, ասելով. Անկաւ Բաբելոն մեծն, որ ե-
ղեալ էր բնակութիւն դիւաց եւ արգել ամենայն այ-
սոց պղծոց, եւ բանտ պահպանութեան ամենայն ո-
գւոց անսրբից եւ ատեցելոց: Վասն զի ի բարկութենէ 3
զինւոյ պոռնկութեան նորա արբին ամենայն ազգք եւ
թագաւորք երկրի՝ որ ընդ նմա պոռնկեցան, եւ վա-
ճառականք երկրի ի նորա զօրութեանն յօրանալոյ
մեծացան: Եւ լուայ ձայն յերկնից, զի ասէր. Ելէք 4
ի միջոյ դորա, ժողովուրդ իմ, զի մի հաղորդ լիցիք
մեղաց դորա, եւ մի՛ զհարուածս դորա ընդունիցիք.
Զի հասին կցեցան մեղք դորա մինչեւ յերկինս, եւ 5
յիշեաց Աստուած զամբարշտութիւնս դորա: Եւ 6
հատուցանէք դմա՝ որպէս եւ հատոյց մեզ, եւ առցէ
դա երկպատիկ ըստ գործոց իւրոց. եւ զբաժակն ո-
րով խառնեաց՝ խառնեցէք դմա կրկին: Եւ որչափ 7
փառաւորեաց զինքն եւ խայտաց, այնչափ հատուցէք
դմա սուգ. զի ի սրտի իւրում ասէր թէ յամենայն
ժամ նստայց եւ թագուհի եւ այրի ոչ եւս եղէց:
Վասն այնորիկ ի միում աւուր եկեսցեն ի վերայ դո- 8
րա հարուածք, մահ եւ սուգ եւ սով, եւ ի հուր
այրեսցի. զի հզօր է Տէր Աստուած՝ որ դատեցաւ
դմա: Եւ լացցեն եւ կոծեսցին ի վերայ դորա թա- 9

թագաւորք երկրի, որք ընդ նմա պոռնկեցան եւ խաղա-
ցին. եւ հեծեծեսցեն՝ յորժամ տեսցեն զծուխ կիզման
10 տանջանաց դորա: Ի հեռաստանէ կայցեն վասն եր-
կիւղի տանջանաց դորա եւ ասասցեն. Վա՜յ քաղա-
քիդ մեծի Բաբելոնի, քաղաք հզօր, զի ի միում
11 ժամու եկին հասին դատաստանք քո: Եւ վաճառա-
կանք երկրի ողբասցեն եւ սգասցեն ի վերայ քո, զի
12 բեռն նոցա ոչ ոք գնէ: Եւ շահք որ ի քեն՝ ոչ եւս
իցէ ոսկւոյ եւ արծաթոյ եւ ականց պատուականաց եւ
մարգարտոյ եւ բեհեզոյ եւ ծիրանւոյ եւ ոսկեթելի եւ
որդան, եւ ամենայն փայտ խնկոյ եւ ամենայն անօթ
փղոսկրեայ, եւ ամենայն անօթ ի փայտէ պատուա-
13 կանէ եւ ի պղնձոյ եւ յերկաթոյ եւ ի կճոյ. Եւ կի-
նամոմոն եւ ամենայն խունկ եւ իւղ եւ կնդրուկ, եւ
գինի եւ ձէթ եւ նաշիհ եւ ցորեան եւ ստացուածք
ամենայն, արջառ եւ ոչխար. եւ երիվարաց եւ կա-
14 ռաց՝ որ վայել է մարմնոց եւ ոգւոց մարդկան: Եւ
ամենայն ցանկութիւն անձին քո գնաց ի քէն, եւ ա-
մենայն լուսափայլ վայելչութիւնն, պարարտն եւ գէրն
եւ սպիտակն գնաց ի քէն, եւ ոչ եւս գտցես զայդ:
15 Եւ ամենայն շահավաճառք այդքիւք մեծացեալք ի
քէն ի բաց կացցեն վասն երկիւղի տանջանաց քոց լա-
16 լով եւ սուգ առնլով: Եւ ասասցեն. Վա՜յ վա՜յ քա-
ղաք մեծ, որ զգեցեալ էիր բեհեզս եւ ծիրանիս եւ
որդան եւ ոսկեզօծս եւ քարինս պատուականս եւ
17 մարգարիտս. Զի ի միում ժամու պակասեցաւ այս-
չափ մեծութիւն քո. եւ ամենայն նաւավար եւ ա-
մենայն որ ի տեղիս տեղիս նաւէն, եւ նաւազք եւ որք
միանգամ ուռկանաւ գործեն, ի հեռաստանէ կայցեն
18 լալով, Եւ աղաղակեսցեն՝ տեսանելով զծուխ կիզ-
ման նորա, ասելով. Ո՞ նման է քաղաքիս այսմիկ մե-
19 ծի: Եւ արկցեն հող ի վերայ գլխոց իւրեանց, եւ
գոչելով ձայնիւ մեծաւ լալով եւ սգալով ասաս-
ցեն. Վա՜յ վա՜յ քաղաք մեծ, որով ամենեքեան մեծա-

նայաք, որք ունէաք զնաւս ի ծովս վասն պատուա-
կանութեան քո. զի ի միում ժամու ապականեալ
կործանեցաւ: Ուրախ լերուք ի վերայ նորա երկինք 20
եւ սուրբ առաքեալք եւ մարգարէք. զի դատեցաւ
Աստուած զդատաստան ձեր ի դմանէ: Եւ առ հրեշ- 21
տակն հզօր՝ քար մի իբրեւ զերկան մեծ, եւ ընկէց ի
ծով, ասելով. Այսպէս յարձակմամբ անկցի Բաբե-
լոնն քաղաք մեծ, եւ այլ ոչ եւս գտցի: Եւ ձայն 22
քնարերգաց եւ երաժշտականաց, արուեստականաց
եւ փողահարաց եւ թմբկի այլ ոչ եւս լուիցի ի
քեզ: Եւ լոյս ճրագի եւ ձայն երկանի այլ ոչ եւս 23
երեւեսցի ի քեզ, եւ ձայն փեսայի եւ ձայն հարսին
այլ ոչ եւս լուիցի ի քեզ. եւ ոչ վաճառականք քո՝
փառաւորք եւ մեծամեծք երկրի, որ զուարճացեալ
էին ի քեզ, վասն զի կախարդութեամբ դեղատուու-
թեան քո մոլորեցան ամենայն ազգք: Եւ ի քեզ ա- 24
մենայն արիւն մարգարէից եւ սրբոց գտաւ, եւ ամե-
նայն զենլոց յերկրին կենդանեաց:

ԳԼՈՒԽ ԺԹ.

Եւ յետ այնորիկ լուայ ձայն մեծ բազմութեան 1
յերկինս ասելով. Ալէլուիա, փրկութիւն եւ փառք
եւ պատիւ եւ զօրութիւն Աստուծոյ մերում. Զի 2
ճշմարիտ եւ արդար են դատաստանք նորա. զի դա-
տեաց զպոռնիկն մեծ ի պոռնկութեան իւրում, եւ
խնդրեաց զվրէժ արեան ծառայից իւրոց ի ձեռաց
նորա: Եւ կրկին անգամ օրհնեցին, եւ ասացին, 3
Ալէլուիա. եւ ծուխ նորա ելանէր յաւիտեանս յաւի-
տենից: Եւ անկան քսան եւ չորք երիցունքն եւ չորք 4
կենդանիքն, եւ երկիր պագին Աստուծոյ՝ որ նստէրն
յաթոռ փառաց, ասելով. Ամէն, ալէլուիա: Եւ ձայն 5
յաթոռոյն ելանէր, ասելով. Օրհնեցէք զԱստուած
մեր ամենայն ծառայք նորա, եւ որք երկնչէք ի նմա-
նէ փոքունք եւ մեծամեծք: Եւ լուայ ձայն բազմու- 6

թեան մեծի՝ իբրեւ զձայն ջուրց բազմաց, եւ իբրեւ
զձայն հզօր որոտման, ասելով դարձեալ. Ալէլուիա,
վասն զի թագաւորեաց Տէր Աստուած մեր ամենա-
7 կալ: Խնդամք եւ ցնծամք եւ տամք փառս նմա, զի
եկն հարսանիք գառինն, եւ կինն հարսն նորա պա-
8 տրաստեաց զինքն: Եւ տուաւ նմա զգենուլ բեհեզս
սպիտակս սուրբս եւ լուսափայլս, որ է բեհեզն ար-
9 դարութիւն սրբոցն: Եւ մի յերիցանցն ասէր ցիս.
Գրեա զայդ, երանելիք են ամենեքեան՝ որ կոչեցեալ
10 են յընթրիս հարսանեաց գառինն: Եւ ես անկեալ
առաջի ոտից նորա, երկիր պագի նմա: Եւ ասէ ցիս.
Անսա, մի անկանիր առաջի իմ, քանզի եւ ես ծա-
ռայակից քո եմ, եւ եղբարց քոց՝ որք ունին զվկայու-
թիւնն Յիսուսի Քրիստոսի. Տեառն Աստուծոյ միայն
երկրպագեա, քանզի հաստատութեամբ Յիսուսի է
տեսիլդ, եւ հոգի մարգարէութեանդ. զի վկայու-
թիւն Յիսուսի է Հոգւովն սրբով, որ ի մարգարէսն
11 էր: Եւ տեսի զերկինս բացեալ, եւ ահա ձի սպի-
տակ. եւ որ հեծեալն էր ի նմա՝ հաւատարիմ եւ
ճշմարիտ, եւ արդարութեամբ դատի եւ պատերազմի:
12 Եւ աչք նորա բոց հրոյ, եւ ի վերայ գլխոյ նորա
պսակս բազումս. եւ ունէր անուն գրեալ, զոր ոչ ոք
13 գիտէ՝ բայց միայն ինքն: Եւ արկեալ զիւրեաւ հան-
դերձ ներկեալ արեամբ. եւ կոչէր անուն նորա՝ բան
14 Աստուծոյ: Եւ զօրավարք երկնից եւ զօրք երկնից
զհետ երթային նորա ձիովք սպիտակօք, զգեցեալ
15 բեհեզս սուրբս եւ սպիտակս: Եւ ի բերանոյ նորա
ելանէր սուր սրեալ, զի նովաւ հարցէ զազգս. եւ նա
հովուեսցէ զնոսա գաւազանաւ երկաթեաւ, եւ նա
կոխեսցէ զհնձան գինւոյ ցասման բարկութեան Աս-
16 տուծոյ ամենակալի: Եւ ունէր ի վերայ պատմուճանի
իւրոյ, եւ ի վերայ անդամոց իւրոց գիր գրեալ.
17 Թագաւոր թագաւորաց եւ Տէր տերանց: Եւ տեսի
այլ հրեշտակ՝ որ կայր ի վերայ արեգական, զի աղա-

ղակեաց ի ձայն մեծ ամենայն հաւուց թռուցելոց
ընդ մէջ երկնից՝ ասելով. Եկայք ժողովեցարուք
յընթրիս մեծին Աստուծոյ. Եւ կերիջիք զմարմինս 18
թագաւորաց, եւ զմարմինս հզօրաց, եւ զմարմինս
երիվարաց եւ ամենայն հեծելոց ի նոսա, եւ զմարմինս
ազատաց եւ ծառայից, մեծի եւ փոքու: Եւ տեսի 19
զգազանն եւ զթագաւորս երկրի եւ զզօրս նոցա ժո-
ղովեալս առնել պատերազմ ընդ այն, որ հեծեալն
էր ի ձին սպիտակ եւ ընդ զօրս նորա: Եւ ըմբռնե- 20
ցաւ գազանն, եւ որ ընդ նմա սուտ մարգարէն՝ որ
առնէր զնշանսն առաջի նորա, եւ զորս մոլորեցոյց,
եւ ետ առնուլ զդրոշմ գազանին, եւ զերկրպագուս
պատկերի նորա. եւ կենդանւոյն արկին զնոսա ի լիճ
հրոյ այրեցելոյ ծծմբով: Եւ այլքն մեռան ի սրոյ 21
հեծելոյն ի վերայ ձիոյն, յորոյ բերանոյ ելանէր սուրն.
եւ ամենայն թռչունք յագեցան ի մարմնոց նոցա:

ԳԼՈՒԽ Ի.

Եւ տեսի այլ հրեշտակ՝ զի իջանէր յերկնից, 1
եւ ունէր զփականս դժոխոց, եւ շղթայս մեծ ի ձե-
ռին իւրում. Եւ ըմբռնեաց զվիշապն՝ զօձն զառա- 2
ջին, որ է բանսարկուն եւ սատանայ, եւ կապեաց զնա
հազար ամ, Եւ արկ զնա յանդունդս դժոխոց, եւ 3
փակեաց եւ կնքեաց զնա՝ զի այլ մի եւս մոլորեցու-
ցէ զազգս, մինչեւ կատարեսցի հազար ամն. եւ յետ
այնորիկ պարտ է լուծանել նմա սակաւ մի ժամանակ:
Եւ տեսի աթոռս, եւ նստան ի վերայ նոցա. եւ դա- 4
տաւորութիւն տուաւ նոցա, ընտրել զհոգիս չար-
չարելոցն վասն վկայութեանն Յիսուսի եւ վասն բա-
նին Աստուծոյ. եւ զորս ոչ երկրպագին գազանին եւ
ոչ առին զդրոշմ նորա ի ճակատս իւրեանց եւ ոչ ի
վերայ աջու ձեռին իւրեանց. եւ կացին եւ թագա-
ւորեցին ընդ Քրիստոսի հազար ամ: Եւ յետ այսո- 5
րիկ ի մեռելոց ոչ ոք եկաց, մինչեւ ի կատարել հա-

6 զար ամին։ Այս է յարութիւն առաջին։ Երանի
որոց, որք ունին բաժին ի յարութեան առաջնում,
ի վերայ սոցա երկրորդ մահն ոչ ունի իշխանութիւն.
այլ եղիցին քահանայք Աստուծոյ եւ Տեառն Յի-
սուսի Քրիստոսի. եւ թագաւորեսցեն ընդ նմա հա-
7 զար ամ։ Եւ յետ հազար ամին լուծցէ զսատանայ
եւ հանցէ ի բանտէ անտի. ելցէ եւ մոլորեցուսցէ
զազգս ամենայն ընդ չորս կողմանս երկրի. եւ զԳոգ
եւ զՄագոգ առցէ ի ձեռս՝ ժողովել նոքօք զամենայն
զօրս ի պատերազմ. որոյ թիւ նոցա իբրեւ զաւազ
8 ծովու։ Եւ ելեն ի լայնութիւն երկրի, եւ պատես-
ցեն շուրջ զբանակս սրբոցն եւ զքաղաքն սիրելւոյ։
9 Եւ իջցէ հուր յերկնից առ ի յԱստուծոյ եւ կերիցէ
զնոսա եւ զզօրագլուխն նոցա զսատանայ՝ որ մոլորե-
ցոյց զնոսա. եւ արկցէ զնոսա ի ծովն հրոյ եւ ծծմ-
10 բոյ, ուր էր գազանն, Եւ սուտ մարգարէն. եւ չար-
11 չարեսցին զտիւ եւ զգիշեր։ Եւ տեսի աթոռ սպի-
տակ մեծ. եւ ի վերայ նորա նստեալ՝ յորոյ երեսացն
երկնչէին եւ փախչէին երկինք եւ երկիր, եւ տեղի
12 ոչ գտաւ նոցա։ Եւ տեսի զմեռեալս մեծամեծս եւ
զփոքունս, որ կային առաջի աթոռոյն. եւ գրեանք
բանային. եւ այլ դիրք բացաւ կենաց, եւ դատեցան
13 մեռեալք ի գրեցոյն՝ ըստ գործոց իւրեանց։ Եւ ետ
ծով զմեռեալս իւր, եւ մահ եւ դժոխք զիւրեանց
մեռեալս. եւ դատեցան իւրաքանչիւր ըստ գործոց
14 իւրեանց։ Մահ եւ դժոխք մատնեցան ի լիճ հրոյն։
Այս է մահն երկրորդ։ Եւ որ ոչ ոք գտաւ ի գիրն
կենաց գրեալ՝ արկաւ ի լիճ հրոյն։

ԳԼՈՒԽ ԻԱ.

1 Եւ տեսի երկին նոր եւ երկիր նոր. քանզի ա-
ռաջինն երկինք եւ երկիր էանց. եւ ծով ոչ գոյր։
2 Եւ զքաղաքն սուրբ զնորն Երուսաղէմ տեսի, զի
իջանէր յԱստուծոյ եւ յերկնից, զարդարեալ եւ

պատրաստեալ որպէս հարսն առն իւրոյ: Եւ լուայ 3
ձայն յերկնից՝ որ ասէր. Ահաւասիկ խորանն Աստու-
ծոյ ի մէջ մարդկան, եւ բնակեսցէ ընդ նոսա. եւ
նոքա ժողովուրդ նմա, եւ սա Աստուած նոցա: Եւ 4
ջնջեսցէ զամենայն արտասուս յաչաց նոցա. եւ մահ ոչ
եւս գոյ, ոչ սուգ եւ ոչ աղաղակ, ոչ ցաւք եւ ոչ
աշխատանք ոչ եւս գոյ, զի առաջինն էանց: Եւ ա-
սաց ցիս՝ որ նստէր ի վերայ աթոռոյն. Ահաւասիկ 5
առնեմ զամենայն նոր. եւ ասէ ցիս, Գրեա. այս
բանք ճշմարիտ եւ հաւատարիմք: Եւ ասէ ցիս. Եղէ՝ 6
ես եմ Ալփա եւ Ով, սկիզբն եւ կատարած. ես ծա-
րաւելոցն տաց յաղբերէ ջրոյ կենաց ձրի: Որ յաղ- 7
թէ, ժառանգեսցէ զայս ամենայն. եւ ես եղէց նոցա
Աստուած, եւ նոքա եղիցին ինձ որդիք: Եւ ծուլացն 8
եւ անհաւատից, սպանողաց եւ պոռնկաց եւ կախար-
դաց եւ կռապաշտից եւ դեղատուաց եւ ամենայն
ստոյ ամպարշտաց, որոց բաժինն իւրեանց ի լճին այ-
րեցելոյ հրով եւ ծծմբով. որ է մահն երկրորդ:
Եւ եկն առ իս մի յեօթն հրեշտակացն, որք ունէին 9
զեօթն սկաւառակն լցեալս եօթն վախճանաւ կա-
տարածովք, խօսեցաւ ընդ իս եւ ասէ. Եկ ցուցից
քեզ զհարսն եւ զկին գառինն: Եւ առ տարաւ զիս 10
ի լեառն մի բարձր եւ մեծ հոգւովն. եւ եցոյց ինձ
զքաղաքն մեծ եւ սուրբ՝ Երուսաղէմ, զի իջեալ էր
յերկնից առ ի յԱստուծոյ, Եւ ունէր զփառս Ա- 11
տուծոյ. եւ էր ի նմա լուսաւորութիւն, նմանեալ
ականց պատուականաց՝ քար յասպիս սառնատեսակ
եւ կենդանի: Եւ էին պարիսպք նորա մեծ եւ բար- 12
ձրք, եւ ունէր դրունս երկոտասան. եւ յերկոտասան
դրունսն երկոտասան հրեշտակս, եւ անուանք իւրա-
քանչիւրոցն ի վերայ դրանցն գրեալ էին՝ ըստ երկո-
տասան ցեղիցն Իսրայէլի: Յարեւելից կողմանէ դրունք 13
երեք, եւ ի հիւսիսոյ կողմանէ դրունք երեք, եւ ի
հարաւոյ կողմանէ դրունք երեք, եւ յարեւմտից կող-

14 մանէ դրունք երեք։ Եւ պարիսպ քաղաքին ունէր
հիմունս երկոտասան, եւ ի նոսա երկոտասան ան֊
15 ուանք երկոտասան առաքելոց գառինն։ Եւ որ խօ֊
սէրն ընդ իս, ունէր եղէգն ոսկի ի ձեռին իւրում, զի
չափեսցէ զքաղաքն եւ զդրունս նորա եւ զպարիսպս
16 նորա։ Եւ էր քաղաքն քառակուսի. եւ որչափ եր֊
կայնութիւն նորա, նոյնչափ եւ լայնութիւն եւ բար֊
ձրութիւն՝ հաւասար. եւ էր չափ երկայնութեան
նորա երկոտասան հազար ասպարէզս. եւ լայնութիւն
17 նորա եւ բարձրութիւն միաչափ՝ կիմօս։ Եւ չափեաց
զպարիսպն նորա՝ հարիւր եւ քառասուն եւ չորս աս֊
18 պարէզս. չափ մարդոյ՝ որ է հրեշտակի։ Եւ էր շի֊
նուած պարսպաց քաղաքին յասպիս. եւ քաղաքն
էր ոսկի մաքուր՝ նման սուրբ եւ սպիտակ ապակւոյ։
19 Եւ հիմունք քաղաքին յամենայն ականց պատուա֊
կանաց. հիմն առաջին պարսպին յասպիս, երկրորդն
շափիղա, երրորդն պղնձադոյն, չորրորդն զմրուխտ,
20 Հինգերորդն եղեգնաքար, վեցերորդն սարդիոն,
եօթներորդն ոսկեքար, ութերորդն բիւրեղ, իննե֊
րորդն տպազիոն, տասներորդն քրիսոպրասոս, մե֊
21 տասանն յակինթ, երկոտասանն ամեթոս։ Եւ էին
երկոտասան դրունք յերկոտասան մարգարտաց՝ միա֊
ձեւ. եւ իւրաքանչիւրոցն դրունք էին մի մի դուռն ի
միոյ միոյ մարգարտէ. եւ ընդարձակութիւն քաղա֊
22 քին ոսկի մաքուր՝ որպէս զապակի պայծառ։ Եւ
տաճար ոչ տեսի ի նմա, քանզի Տէր Աստուած ամե֊
23 նակալ տաճար էր ի նմա եւ գառնն։ Եւ քաղաքին
չէին պէտք արեգական եւ լուսնի, զի լուսաւորեսցեն
զնա. քանզի փառքն Աստուծոյ լուսաւորէին զնա
24 յամենայն ժամ. եւ ճրագ ի նմա գառնն։ Եւ գնային
հեթանոսք ի լոյս նորա. եւ թագաւորք երկրի լու֊
25 սազգեացլինէին ի փառաց նորա։ Եւ դրունք նորա
ոչ փակէին ի տուէ եւ ի գիշերի, այլ բաց կային
26 հանապազորդ. եւ գիշեր ոչ եւս լինէր ի նմա. Այլ

փառք եւ պատիւ ազգաց։ Եւ ոչ մտցէ անդ ամե- 27
նայն չարակամ եւ պիղծ եւ ստութիւն, բայց միայն
որ գրեալ են ի դպրութիւն կենաց գառինն։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Եւ եցոյց ինձ մաքուր գետ կենդանի ջրոյ սառ- 1
նատեսակ, որ ելանէր յաթոռոյն Աստուծոյ եւ գա-
ռինն։ Եւ գնայր ի մէջ հրապարակաց քաղաքին. եւ 2
զեզերբ գետոյն աստի եւ անտի ծառ կենաց՝ որ բերէր
պտուղս երկոտասան. ըստ միոյ միոյ ամսոյ տային
զպտուղս իւրեանց. եւ տերեւ ծառոյն էր բժշկու-
թիւն հեթանոսաց։ Եւ նզովք անդ ոչ եւս էին. եւ 3
աթոռն Աստուծոյ եւ գառին նորա էր ի նմա. եւ
ծառայք նորա պաշտէին զնա. Տեսանէին զերեսս նո- 4
րա. եւ անուն նորա գրեալ էր ի ճակատս նոցա։ Եւ 5
գիշեր ոչ անդ, եւ չէր ինչ անդ պէտք ճրագի եւ
լուսոյ արեգական. վասն զի Տէր Աստուած լուսաւո-
րէր զնոսա. եւ թագաւորեսցեն յաւիտեանս յաւի-
տենից։ Եւ ասէ ցիս. Այս բանք հաւատարիմ է 6
եւ ճշմարիտ. եւ Տէր Աստուած մարգարէից սրբոց
առաքեաց զհրեշտակ իւր ծառայից իւրում ցուցա-
նել՝ զոր լինելոց է վաղվաղակի. Ահա գամ վաղվաղա- 7
կի. երանի որ պահէ զբան մարգարէութեանս զայս։
Եւ ես Յովհաննէս լուայ եւ տեսի զայս ամենայն. եւ 8
յորժամ լուայ եւ տեսի, անկայ եւ երկիր պագի
հրեշտակին՝ որ ցուցանէր ինձ զայս ամենայն։ Եւ ա- 9
սէ ցիս. Մի՛ անկանիր առաջի իմ եւ երկիր պագա-
ներ. քանզի եւ ես ծառայակից քո եմ եւ եղբարց
քոց որ պահեսցեն զբան մարգարէութեան գրոյս այ-
սորիկ։ Աստուծոյ երկիր պագ։ Եւ ասէ ցիս դար- 10
ձեալ. Մի՛ կնքեր զբանս մարգարէական գրոցս այ-
միկ. քանզի ժամանակս մերձ է։ Որ ամպարշտելոցն 11
է՝ ամպարշտեսցի, եւ որ աղտեղանալոցն է՝ աղտեղաս-
ցի, եւ որ արդարանալոցն է՝ արդարասցի, եւ որ

12 սրբելոցն է՝ սրբեսցի: Ահա գամ վաղվաղակի եւ վարձք
իմ ընդ իս, հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս
13 իւրեանց: Ես եմ Ալփայ եւ Ով, սկիզբն եւ կատա-
14 րած, առաջին եւ վերջին: Երանելիք են՝ որ պահեն
զպատուիրանս նորա. նոքա ունին իշխանութիւն ու-
տել ի փայտէն կենաց եւ մտանել ընդ դրունս քա-
15 ղաքին: Այլ ելցեն արտաքս շունք եւ դեղատուք եւ
սպանողք եւ կռապաշտք, եւ ամենքեան որ սիրեն
16 զստութիւն: Ես Յիսուս առաքեցի զհրեշտակ իմ
վկայել զայս ձեզ եկեղեցեացդ. ես արմատ եւ սեռ
17 ի Դաւթայ եւ աստղ պայծառ առաւօտին: Եւ հո-
գի, եւ փեսայն՝ որ գալոցն եմ. եւ որ լսէ՝ ասելով
Թէ եկ, եւ որ ծարաւի իցէ՝ եկեսցէ, եւ որ ոք կամի
18 առնուլ զջուրն կենաց ձրի: Վկայեմ եւ ես ամե-
նայնի՝ որ լսէ զբանս մարգարէութեան գրոցս այսմիկ.
Թէ ոք յաւելցէ ի սա, յաւելցէ Աստուած ի վերայ
19 նորա զեօթն հարուածսն՝ գրեալս ի գիրս յայս: Եւ
եթէ ոք պակասեցուսցէ ի բանից մարգարէութեան
գրոցս այսմիկ՝ պակասեցուսցէ եւ հատցէ Աստուած
զբաժին նորա ի ծառոյն կենաց եւ ի քաղաքէն սրբոց՝
20 որ գրեալ է ի գիրս յայս: Ասաց՝ որ վկայեացն զայս.
Գամ ես վաղվաղակի. ամէն: Եկն Տէր Յիսուս
21 Քրիստոս: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի ի վերայ ամենայն սրբոց. Ամէն:

ՎԱԽՃԱՆ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՑԱՆԿ

ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

	երես
Ա. Աւետարան ըստ Մատթէոսի	1
Բ. Աւետարան ըստ Մարկոսի	73
Գ. Աւետարան ըստ Ղուկասու	123
Դ. Աւետարան ըստ Յովհաննու	201
Ե. Գործք առաքելոց	265
Զ. Թուղթ Պաւղոսի առ Հռովմայեցիս	339
Է. Թուղթ Պաւղոսի առ Կորնթ. առաջին	370
Ը. Թուղթ Պաւղոսի առ Կորնթ. երկրորդ	399
Թ. Թուղթ Պաւղոսի առ Գաղատացիս	419
Ժ. Թուղթ Պաւղոսի առ Եփեսացիս	430
ԺԱ. Թուղթ Պաւղոսի առ Փիլիպեցիս	441
ԺԲ. Թուղթ Պաւղոսի առ Կողոսացիս	449
ԺԳ. Թուղթ Պաւղոսի առ Թեսաղոնիկ. առաջին	457
ԺԴ. Թուղթ Պաւղոսի առ Թեսաղոնիկ. երկրորդ	464
ԺԵ. Թուղթ Պաւղոսի առ Տիմոթէոս առաջին	468
ԺԶ. Թուղթ Պաւղոսի առ Տիմոթէոս երկրորդ	477
ԺԷ. Թուղթ Պաւղոսի առ Տիտոս	484
ԺԸ. Թուղթ Պաւղոսի առ Փիլիմոն	488
ԺԹ. Թուղթ Պաւղոսի առ Եբրայեցիս	490
Ի. Թուղթ Կաթողիկեայց Յակոբու	513
ԻԱ. Թուղթ Կաթողիկեայց Պետրոսի առաջին	521
ԻԲ. Թուղթ Կաթողիկեայց Պետրոսի երկրորդ	530
ԻԳ. Թուղթ Կաթողիկեայց Յովհաննու առաջին	536
ԻԴ. Թուղթ Կաթողիկեայց Յովհաննու երկրորդ	545
ԻԵ. Թուղթ Կաթողիկեայց Յովհաննու երրորդ	547
ԻԶ. Թուղթ Կաթողիկեայց Յուդայի առաքելոյ	549
ԻԷ. Յայտնութիւն Յովհաննու	552

1327

15р.

1356